ԳՐԻԳՈՐ
ԲԱԼԱՍՏԱՆՅԱՆ

ՄԻԱՅՆ ԹԵ ԼՈՒՅՍԸ ՉԱՐԱՐԻ

թվայնացրել է 1915.info կայքը

ԳՐԻԳՈՐ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

ՄԻԱՅՆ ԹԵ ԼՈՒՅՍԸ ՉՄԱՐԻ

ԵՐԵՎԱՆ «ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ» 1987

թվայնացրել է 1915.info կայքը

ՀՄԴ 84 Հ 7
Բ 202

Խմբագիր՝ Գ. ԴԵՎՐԻԿՅԱՆ

Բալասանյան, Գ. Գ.
Բ 202 *Միայն թե լույսը չմարի։* Վեպ (Գրիգոր Բալասանյան).— *Եր.։ Սովետ. գրող, 1987.— 264 էջ։*

1984-ին ընթերցողն ստացավ այս վեպի առաջին և երկրորդ գրքերը՝ «Մի՞թե հանգավ լույսը» ընդհանուր խորագրով։ Հաշվի առնելով ստացված առաջարկություններն ու ցանկությունները և համոզվելով պատումը շարունակելու անհրաժեշտության մեջ, հեղինակը գրել է երրորդ գիրքը՝ «Միայն թե լույսը չմարի», որով և ամբողջանում է վեպը։ Այստեղ նույնպես ուշադրության կենտրոնում ախրո և ընտանիքի հարցերն են, մարդու հասարակական գործունեության և բարոյական կերպարի բացահայտման բարդ ու դժվարին խնդիրները։

Բ $\frac{4702050200}{705\ (01)\ 87}$ 87 «Տ»

ԳՄԴ 84 Հ 7

© «Սովետական գրող» հրատարակչություն, 1987

թվայնացրել է 1915.info կայքը

1.

Հաճախ ինչո՞ւ տրամադրության ուսերին ծանրացած բարը տեղից շարժել չի լինում...

Գնացքի սուլոցն ու զանգի ղողանջներն իրար խառնվեցին։ Ուշացած ուղևորների հևիհև վազքին ուղեկցում էր ասես հրաժեշտի փոխկանչը, ճանապարհող-մեկնողների ծանոթ եռուզեռուր։ Ու, միևնույն է, նա մենակ էր մարդաշատ այդ կայարանում, մեն-մենակ։ Իսկ ինչո՞ւ է այդտեղ, ո՛չ գնացող ունի, ո՛չ եկող, ո՞վ նրան «բերման ենթարկեց»։ Գուցե իր տխուր մենակությո՞ւնը, կամ՝ մենակ տխրությո՞նը։ Չգիտի։ Մենակ էր մնացել տանը։ Նվարդը հիվանդ մոր մոտ շտապեց։ Մայրն էլ երեխայի հետ զբոսայգի գնաց։ Մնաց ինքն իր մտքերի հետ։ Տանջվում էր երկար, ո՛չ հեռուստացույց նայելու տրամադրություն ուներ, ո՛չ գիրք կարդալու ցանկություն։ Այս կիրակի օրն էլ մի բան չէ, մանավանդ, երբ որոշակի անելիք չունես։ Գործարանում, աշխատանքային եռուզեռի մեջ, ժամերն ավելի արագ են անցնում և, իմաստավորվում է կյանքը։ Իսկ այսպես... Իզուր չգնաց մոր ու երեխայի հետ. զբոսայգում անցուդարձողներին կնայեր, Արշակի վազվզոցին կհետևեր ու կբացվեր սիրտը։ Իսկ սրտի՞ն լինչ է եղել։ Ոչինչ, աստված վկա, սովորական օր, սովորական տրամադրություն։ Ո՛չ, հենց տրամադրության ականջներից ասես կշտաբարեր են կախել։ Պատճա՞ռը։ Ինքն էլ չգիտի, ավելի ճիշտ՝ ոչ մի պատճառ։ Այնպես, անտրամադիր օր է, ուրիշ ոչինչ։ Սկզբում մենակ մնալ էր ուզում։ Հետո ննջվեց մենակությունից։ Այնուամենայնիվ մարդկանց մեջ ավելի ուրախ է, ավելի հետաքրքիր։ Իսկ կան, Սենոյի ասած՝ քարքուշացած անհատներ, որոնք ամբողջ կյանքում մենակ են, ո՛չ ընտանիք, ո՛չ ընկեր, ո՛չ հարեվան, ասես անապատում լինեն, մարդկանց մեջ, բայց և նրան-

թվայնացրել է 1915.info կայքը

ցից հետու, նրանցից կտրված. ահավո՜ր բան է, խեղթանալ կարելի է։ Շտապ դուրս եկավ տնից, բարձրացավ հենց առաջին պատահած տրոլեյբուսը ու գնաց, չգիտեր՝ ուր։ Եվ քիչ հետո ինքն իրեն գտավ կայարանում։ Ու հիմա անիմաստ չափում է կառամատույցի երկարությունը։ Մենակ՝ այսքան մարդու մեջ։ Գոնե մի ծանոթ պատահեր, ուղերթի ջերմ խոսքեր ասեր նրան։ Դրանով գուցե պատճառաբանվեր, արդարանար իր այդտեղ լինելը։ Եվ, որ ավելի կարևոր է, սրտի թեթևություն կզգար, անմասն ժամավաճառությունը կմղվեր ետին պլան։ Ջկան, ծանոթների չի հանդիպում, ասես անծանոթ քաղաքում լինի։ Ոչ երգ, ո՛չ կարոտ, ո՛չ գեղեցիկ հանդիպման սպասում։ Այդ որտե՞ղ է կարդացել։ Այնքան անգիր ոտանավոր է հավաքել իր գլխում, որ հեղինակները խառնվել են, հաճախ դժվարանում է հիշել, թե ում գրածն է արտասանում.

Պատուհանիս տակ լալիս է կրկին
Թափառիկ երգչի երգը ցավագին,—
Տխուր այդ երգը վաղուց եմ լսել,
Կարծես թե ես եմ այդ երգը հյուսել,
Կարծես թե ես եմ լալիս այդ երգում,
Կարծես թե ինչ եմ կարոտով երգում...

Է՛հ, այսօր բանաստեղծությունն էլ է համը կորցրել։ Թե՞ իր մոտ է բթացել համի զգացումը... Ու Հրանտը քայլում է աներթարքեր, կառամատույցի մի ծայրից մյուսն է գնում, աջ ու ձախ է նայում, ո՞ւմ է փնտրում, ի՞նչ է կորցրել, ինքն էլ չգիտի։ Հանկարծ, իր համար էլ անսպասելի, հայացքը կանգ առավ դիմացի վաղոնի բաց պատուհանի վրա։ Մի կին է կանգնել, մտքերի մեջ խորասուզված։ Երևում է, ֆիզիկապես այստեղ է, վագոնում, իսկ մտքերը հեռվում են։ Տևանես՝ որտե՞ղ, մանավանդ՝ ո՞ւմ հետ։ Իսկ դա քո ի՞նչ գործն է... Գնացքը երկրորդ գծին է կանգնած, կնոջ դիմացծերը հստակ չեն երևում։ Երևի միջահասակ է, գուցե նաև՝ գեղեցիկ։ Փարթամ մազեր ունի, և առանձնապես նկատելի է ճակատից դեպի վերև ձգված ճերմակ մազերի մի շերտ, ասես արևառատ օրը նիհար ամպակ է արծաթին տալիս սև ցելերի մեջ։ Ու այդ ամպակը խոխոջում է ամոթխած, խոսում է անձայն։ Ի՞նչ է ասում, ո՞ւր է գնում, չգիտի։ Եվ զարմանալին այն է, որ այդ կինը փոքր-ինչ նման է Աշխենին. նմա՞ն է թե՞ հիշեցնում է նրան։ Ինչո՞վ. գուցե

թվայնացրել է 1915.info կայքը

ավելի շատ իր մենակությա՞մբ... Իսկ այս կի՞նն ինչու է մենակ, վերջապես քո ի՞ն, գործն էլ Ախր նրա այդ տխուր մենակությունից թախծի մի այնպիսի ժանգ է նստում իր սրտին, շնչիդ ճամփան փակող քար, ասես, շարժել, գլորել է պետք Կյանքում մենակ մնալը մեղքի նման բան է, ու շա՜տ է տխուր Այսքան մարդու մեջ՝ մենակ, իր նման։ Աշխե՞նն ինչու է մենակ. նա իրեն լավ է զգում իր Գուրգենի հետ։ Իսկ կնոջ մենակությունը դրանով կարո՞ղ է փարատվել...

Կայարանով մեկ թևածեց զանգի զգաստացնող ղողանջը։ Վերջին զանգն է։ Մեղվի փեթակում բզզոցը սաստկացավ։ Բազմապատկվեց եռուզեռը։ Իսկ Հրանտի հայացքը շարունակում էր գամված մնալ վագոնի բաց պատուհանին։ Ասես խոսում է ինքն իր հետ, լսում է ճերմակ մազափունջ-աուվակի միալար խոխոջյունը, նրա խորհրդավոր քչփչոցը։ Բարի ճանապա՜րհ, անծանոթ քույրիկ, մտքի մեջ ասում է նրան, ուր էլ գնաս, տա աստված, որ նորից ետ գաս քո բույնը. ու մենակ մի՛ մնա, մենակությունից մարդու սիրտը պայթել կարող է... Բարո՜վ մնաս, անծանոթ եղբայր, համոզված է, որ շշնջում է նա անշարժ շրթունքներով։ Ես էլ չգիտեմ, թե ուր եմ գնում, ու ետ կգա՞մ նորից։ Հավանաբար մենք այլևս չենք հանդիպի, իսկ մենակ մնալը, իսկապես որ շատ է տխուր... Ու երկար շարունակվում է նրանց անխոս երկխոսությունը։

Գնացքը պոկվեց տեղից։ Հրանտի ձեռքն ինքնաբերաբար բարձրացավ գլխից վեր. հրաժեշտ է տալիս ճերմակ աուվակին, որ հոսում է անաղմուկ, հեռանում է խոխոջալով։ Ու, զարմանք բան, բարձրանում է նաև կնոջ ձեռքը, պատասխանում է իր հրաժեշտի՞ն թե՞ թվաց միայն։ Ձեռքը դեռ կախված է օդում, իսկ հայացքը թափառում է անհայտ հեռուներում։ Ո՞ւմ է փնտրում, կգտնի՞ երբևէ... Նրա որոնող հայացքը սահեց Հրանտի հայացքի պատուհանի տակով։ Սա նորից թափահարեց ձեռքը, ավելի համարձակ։ Ու, հին սովորության համաձայն, ըմբոստացավ մի ներքին ձայն.— Իսկ դու չե՞ս զիջում քո գլխավորի դիրքերը, որքա՞ն հարմար է քեզ այս տղայությունը։ Իսկ ինչ է, գլխավոր կոչվածը դո՞ւրս է մարդկայինից... Անծանոթ կինը մեկ անգամ ևս թափահարեց աջը, ճիշտ է, թույլ ու անտարբեր, բայց ձեռքը բարձրացավ գլխից վեր, հետո էլ ասես թաթախվեց սպիտակ աուվակի ջրերում։ Ո՞ւմ էր հասցեագրված այդ թափահարումը, համոզված է, ոչ իրեն։ Բայց, միևնույն է,

թվայնացրել է 1915.info կայքը

դրանից մի տեսակ ջերմացավ սիրտը, ու այլևս ինքը մենակ չէր մարդաշատ կայարանում։ Տխրությունը նահանջում էր անշտապ։ Ու Հրանտ Ստեփանյանը ետ էր քայլում՝ մի լավ գործ կատարած մարդու ինքնավստահությամբ։

Հաճախ ինչքա՜ն քիչ բան է պետք տրամադրության ուսերին ծանրացած քարը մի կողմ շրջելու և լիաթոք շնչելու համար...

2.

Աշխենն այսօր մենակ է տանը։ Վերջին այս մի քանի տարում նա ե՞րբ է մենակ մնացել։ Եվ՝ ոչ մի օր։ Ի՞նչ միևուճար Գուրգենը կթողնի՞, որ նա ճաշակի մենակության դառնությունը։

Մի ժամ առաջ Թամարն իրենց մոտ մտավ իր անդրանիկ երեխայի հետ։ Մե՜ծ, երկու տարեկան էլ դեռ չկա։

— Սմբատը փոքրի հետ տանն է. ես դերձակուհու մոտ էի գնացել, ձմեռային վերարկու եմ կարում ինձ համար։ Այնպես լավ կտոր է, ինձ շատ է դուր գալիս։

— Դո՞ւ ես ճարել։

— Ոչ, Սմբատն է բերել Կույբիշևից. Հրանտ Ստեփանյանի հետ գործուղման գնացած ժամանակ։ Տրամադրություն չունեի կարելու։ Սմբատն էնքան է ասել, ստիպել...

— Սպրի Սմբատը, ճաշակով և ուշադիր ամուսին է։— Ու Աշխենը սևեռուն հայացքով ընկերուհուն է նայում։

Սա կախեց գլուխը և՝ ոչ մի պատասխան։

— Ինչպե՞ս է, որ կտորն ինձ ցույց չես տվել, քանի անգամ եմ ձեր տուն եկել։

— Պարզապես մոռացել եմ։ Սկզբում ջղայնացած էի Սմբատի վրա, որ հեռագիր չէր տվել ու ինձ անհանգստացրել էր, հետո էլ այդ տհաճ պատմությունը...

— Հիմա՞ ինչպես են ձեր հարաբերությունները։

— Այնպես, ապրում ենք կիսաբաժանվածի նման։

— Ամեն ինչի մեջ էլ Թերին մի բան չէ, աշխատիր կլորացնել։

— Ես ի՞նչ անեմ, ինքն է կոտրել և՛ սիրտս, և՛ տրամադրությունս...

— Եվ, այնուամենայնիվ, Սմբատը լավ տղա է, ես նրան շատ եմ հավանում։

թվայնացրել է 1915.info կայքը

— Նորից մի սկսիր քո հին երգը, խնդրում եմ։

Իսկ Աշխենը ժպտում է քթի տակ, ո՞չ, այնուամենայնիվ առաջադիմություն կա. առաջին օրերին Թամարը չէր տալիս Սմբատի անունը, ասես վտանգ կար. լեզուն կարող էր այրվել, իսկ այսօր երկու անգամ Սմբատը համ տվեց նրա բերանում, ուրեմն ապաքինման հույսը շատանում է, ժամանակ է պետք, և սոսինձը կլուծի ճոճվող աթոռի խախուտության հարցերը։ Այո, ժամանակը, ամենահուսալի բալասանը։ Իսկ իր համար այդ դաժան ժամանակը ինչո՞ւ միայն նոր վերքերի դուռ է բացում...

— Տես, երեխաներն ինչպիսի արագությամբ ընդհանուր լեզու գտան. խաղում են իրենց համար։

— Երեխաներին ի՛նչ կա, բախտավոր արարածներ են, ո՛չ ցավ ունեն, ո՛չ դարդ, գոնե նրանք...

— Աշխեն, թույլ տուր Գուրգենիդ տանեմ մեր տուն. դու էլ լվացքդ կվերջացնես, կգաս երեխայի եռևից. ինչքա՞ն ժամանակ է մեր տանը չես եղել, քո սիրելի Սմբատն էլ էր բողոքում։

— Ախր երեխաները քեզ շատ կչարչարեն։

— Ոչինչ, ես սովոր եմ... Գուրգենիկ, մոտ արի, խնդրում եմ։

Երեխան մոտ վազեց ու փարվեց Թամարի ծնկներին.

— Ի՞նչ է, մորաքույր Թամար։

— Մորաքույրը քո ցավը տանի... Ուզում եմ միասին գնանք մեր տուն, կգա՞ս, բալիկս։

— Իսկ մամա՞ն։— Ու հարցական հայացքով մորն է նայում։

— Ես հետո կգամ, բալիկս, միայն դու այնտեղ խելոք կմնաս, չէ՞։

— Լա՛վ, մամա...

Ու հիմա մենակ է տանը։ Փոքրիկ լվացք ունի, կվերջացնի. հետո իր համեստ իրերը կհավաքի, կկապկպի, շուտով տեղափոխվելու է նոր բնակարանը։ Վերջապես տան տեր է դառնալու։ Ու մտքում, մեծագույն հաճույքով կրկնում է իր նոր հասցեն... զանգված, շենք, հարկ։ Այո՛, պետք է նախապատրաստվել. մոտենում են գնալու օրերը։ Ճիշտն ասած առանձնապես կապելու բան էլ չունի, ամենաշուրջ բեռը գրքերն են. մի տաստաանհինգ կապ կստացվի։ Երկու ճամպրուկ էլ հագուստեղեն կլինի։ Հա, մի շարժական մահճակալ ունի. և ամենաթեթև ու թանկագին բեռը, երեխայի օրորոցը, որ մորաքույրն է նվի-

թվայնացրել է 1915.info կայքը

րել։ Շտապ կարգով պետք է կահույք առնել, այդ նպատակի համար ետ գցած մի թեթև գումար ունի։ Արտասահմանյանի ետևից չի ընկնի, տեղականն էլ վատը չէ, մանավանդ, որ ճաշասենյակի կամ ննջարանի կահույք առնելու միտք չունի։ Իրենց շատ բան պետք չի, մի սեղան, վեց աթոռ, երկու մահճակալ։ Իսկ ինչո՞ւ երկու։ Հիմար հարցեր ես տալիս ինքդ քեզ, չէ՞ որ Գուրգենն արդեն օրորոցում դժվար է տեղավորվում։ Միայն հեռու է տունը, և՛ մորաքրոջ տնից, և՛ թամարից։ Բայց մոտ է գործարանին, ուրեմն՝ նաև մանկապարտեզին, իսկ դա քիչ բան չէ։ Հաջորդ շաբաթ օրը պետք է լուծել կահույքի հարցը։ Սմբատը կօգնի, այսօր կպայմանավորվի նրա հետ։ Իսկ ինչո՞ւ միայն Սմբատը, լաբորատորիայի տղաներն էլ պատրաստակամություն հայտնեցին։ Բարեբախտաբար լավ մարդիկ քիչ չեն աշխարհում։ Հրանտ Ստեփանյանն էլ ասաց՝ մնքենա կտամ. ինքը չնմուշում արևց։ Իսկ ի՞նչ կլինի որ, գործարանի ավտոմեքենան է, վերջապես Հրանտն էլ օտար չէ։ Իսկ քո ի՞նչն է։ Նորի՞ց սկսեցիր...

Իսկ Անատոլիի նամակի պատասխանը գրել չկարողացավ, ա՛յ, սա բանի նման չէ։ Ի՞նչ կմտածի, և մի՞թե ինքն այդքան փոքրոգի ու ճղճիմ մարդ է։ Ռոզան էլ չի արդարացնի իր այդ լռությունը։ Այո, պետք է նամակ գրել, շնորհավորել Անատոլիի պսակը։ Ով ուզում է, գիտակցում է դրա անհրաժեշտությունը, և չի կարողանում, ինչ-որ մի կոշտություն դեմ է առել կոկորդին, ո՛չ առաջ, ո՛չ ետ. լավ է չի խեղդում... Ինչո՞ւ է այդպես դժվարանում։ Վերջապես ե՞րբ պետք է ճշմարտությանը նայես բաց աչքերով, քանի՞ անգամ ես մերժել այդ տղային։ Ով մի՞թե դու չես նրան տվել ուրիշ աղջիկ ճարելու հանճարեղ գաղափարը։ Հիմա ինչո՞ւ ես անկյունից անկյուն վազվզում, ու թպրտում ես ինքդ քո մեջ՝ ափ նետված ձկան նման։ Քանի անգամ ես ինքդ քեզ խոստովանել, որ Անատոլիին սիրել չես կարողանում. նրան էլ ես ասել, և՝ վճռական ու անտարակելի տոնով. վիրավորել, ցավ ես պատճառել նրան՝ չուզենալով, իհարկե, բայց այլ կերպ վարվելու հնարը չես ունեցել։ Հիմա փոխանակ ուրախանաս քո ընկերոջ ուշացած բախտավորությամբ, ջերմ խոսքերով շնորհավորես նրանց... Ուրախ եմ, աստված վկա։ Ստում ես, առանց անհարմար զգալու։ Թե ուրախ ես, ինչո՞ւ ես այդպես խուճապի մատնվել, ինչո՞ւ չես դրում նամակի պատասխանը։ Այդ բոլորը ճիշտ է, դժբախտաբար։ Բայց նաև ճշմարտություն է, որ իր

թվայնացրել է 1915.info կայքը

վերջին որոշմամբ սպասում էր Անատոլիի գալուն, նրան Երևան կանչելու մտքին էր հանգել Ուշացած, շա՜տ ուշացած որոշում...

Անհաջողակ մարդ դուրս եկար դու, տիկին Աշխեն, այս է տխուր իրողությունը, մեկ առաջ ես ընկնում չմտածված ու անխոհեմ քայլ, շտապում ես վայելել կյանքը, առանց դրա իրավունքն ունենալու և առանց հետևանքների մասին մտածելու, մեկ էլ ուշանում ես աններելի, երբ այդ ուշացումը քեզ համար կարող է ճակատագրական լինել... Վերջապես դու կարո՞ղ ես դոնե հիմա ասել՝ սիրո՞ւմ ես Անատոլիին, չգիտի, հաստատ ու վճռական պատասխան չկա. հավանաբար՝ և այո, և ոչ. ավելի շուտ հույսը հետագայի վրա էր, սիրո ծնունդի սպասելիքներ ոմներ, և կարծես թե դրա համար բավարար նախադրյալներ կային։ Կարծես թե... մի՞թե այդպիսի հարցերը կարծեսով են որոշում։ Այնուամենայնիվ ինչ-որ մի բան... Գուցե այդ է պատճառը, որ կարծես թե հոգու խորքում ինչ-որ չափով նախանձում է այդ Նատաշա կոչվածին։ Իսկ ուրիշների կարծիքով դու նախանձ մարդ չես։ Իսկապես որ, միայն չգիտեմ ինչու սրտիս մի անկյունում ասես չփակված վերք է մղկտում... Վատն այն է, որ դու քեզ լուրջ, վճռական ու նաև շիտակ մարդ ես համարում, և ընկերոջդ ուրախությամբ ուրախանալ չես կարողանում, պարզապես անհարմար է...

Լվացքը մնաց, իսկ օրն սպառվելու վրա էր։ Վեր կացավ թափով, սենյակի մի ծայրից մյուսը գնաց. ապա արագ մոտեցավ պատուհանի դոգին դրած պայուսակին, հանեց Անատոլիի վերջին նամակը ու նստեց գրասեղանի մոտ, մի տեսակ նյարդային շարժումներով թուղթ ու գրիչ էր փնտրում։ Եվ սկսեց գրել.

«Անատոլի Գրիգորևիչ, փոքր-ինչ ուշացումով, բայց սրտանց շնորհավորում եմ քո և Նատաշայի ամուսնությունը. ցանկանում եմ ձեզ երկար ու երջանիկ կյանք, տա աստված, որ ձեր համատեղ կյանքի ընթացքում դուք սիրո, փոխըմբռնման և փոխադարձ ներման պակաս չզգաք։ Քրոջ իրավունքով համբուրում եմ ձեզ ու մաղթում ամենայն բարիք։ Ձեր՝ Աշխեն»։

Նորից չկարդաց գրածը, վախենում էր, որ կպատռի։ Շտապ ծրարեց, գրեց հասցեն ու անցավ խոհանոց, լվացքի շարունակությանը։ Ու մտորում էր ինքն իրեն,— կյանքն էլ մի լվացքատուն չէ՞, որտեղ պարբերաբար լվանում են մարդկանց՝ հոգիները մանավանդ։

թվայնացրել է 1915.info կայքը

Իսկ մի՞շտ է, որ կարողանում ենք ճիշտ ու ժամանակին լվանալ և այդ սուրբ արարողության մեջ սրտացավության պակաս չկա՞...

3

Աշնանային կիրակի էր։ Մեղմ ու հաճելի եղանակ։ Ծառերն այնպես են դեղնել, ասես ամեն մեկի կատարին մի արև է նստած։ Իսկ ծառերի տակ, փողոցներում արևի ոսկին խամաճ տերևներ են ծիկրակում, ու թվում է, թե քայլում են դրանք ամեն մի անցնողի հետ՝ թեթև հովից թևեր առած։

Հրանտ Ստեփանյանը, հին սովորության համաձայն, կանգնել է ճաշասենյակի պատուհանի առջև ու նայում է դեպի վերին հարկերը ձգված բարդու նազանքին, որ սվսվում է թեթև քամուց, նուրբ թևերն իրար տալիս։ Ծանոթ ծառերն էլ թռչկոտում են ճյուղից-ճյուղ, ծլվլում են անհոգ, ասես մրցման մեջ են մտել, թե ով ավելի լավ կերգի ու շատ տերև կթափի։

Ճաշը նոր են ավարտել։ Նվարդը խոհանոցում զբաղված է ամաններ լվանալով, մայրիկը Արշակին այգի է տարել, զբոսանքի։ Երեք տղամարդ են մնացել ճաշասենյակում, Հրանտն է, քեռի Սամսոնի քրոջ տղա Մուշեղը և Ջինսով Սարոն։ Հրանտը նրանց, իր գործարանի երիտասարդ բանվորներին, հատուկ ճաշի է հրավիրել։ Իհարկե, միայն պատիվ չէ, որ ուզում է տալ, նաև խոսելիք ու ասելիք ունի։ Եվ տղաներն անհամբեր սպասում են այդ խոսքին։ Մանավանդ անհանդիստ է Սարիբեկը, գիտի, շատ է լսել մեծերի բարոյախոսական ճառերը,— այս չի կարելի, այն վատ է, այն մեկն էլ պարզապես անհարմար է։ Եվ համարյա չեն ասում, թե ի՛նչն է կարելի, ու ո՛րն է հարմարը։ Իսկ Հրանտը լուռ է, իր ծառերի համերգով է զբաղված։

— Հիշում եմ, մի տարի, երեխա ժամանակ, գյուղ էի գնացել, մորաքույր Սրբուհու մոտ.— Հրանտը հանգիստ ու մի տեսակ անտարբեր էր խոսում։ Իսկ Սարոն անմիջապես զգաստացավ,— ահա՛, սկսվում է, և խորամանկ է քեռի Հրանտը, հեռվից է գալիս։

— Մորաքույրս այն ժամանակ հետաքրքիր հեքիաթներ էր պատմում, երբեմն՝ ամբողջ գիշեր։

— Հիմա էլ մեկ-մեկ փորձում է, միայն լսող չկա,— Սարոյի դեմքին մի անորոշ ժպիտ է թառել։

թվայնացրել է 1915.info կայքը

— Ցավալի է, որ լսող չկա, հեքիաթը, լավ պատմությունը միտավորում է մարդու հոգին, առանց դրան դժվար է ապրել. մարդ առանց հեքիաթի ոնց որ անթև թռչուն... ինչ-որ էր հիշողությանս մեջ մնացել է մորաքույր Սրբուհու հեքիաթանման պատմություններից մեկը։ Ձեր գլխին ավետարան չեմ կարդալու, ո՞չ, ուղղակի ուզում եմ, որ դուք լսեք այդ պատմությունը, գուցե ինչ-որ չափով օգտակար կլինի ձեզ։

Սարոն ինքն իր մեջ ըմբոստացավ.— Ես այդպես էլ գիտեի, սկսվում է։ Իսկ Մուշեղն ամբողջովին ուշադրություն դարձավ. քեռի Սամսոնն այնքան է գովել այս Հրանտ Արշակովիչին, հետաքրքիր է, տեսնենք այդ ի՞նչ պատմություն է։

— Մի հարուստ մարդ երեք տղա է ունենում, արտաքինով մեկը մյուսին նման, իսկ բնավորությամբ ու շնորհքով՝ բոլորովին տարբեր։ Մեծը կրթություն է ստանում ու իրավաբան է դառնում, միջնակը զինվորական գործի է գնում, սպայի կոչում ստանում, փոքրը, որ երեխա ժամանակից հատուկ սեր ուներ արհեստների նկատմամբ, անվանի կոշկակար է դառնում։ Հայրը, իհարկե, շատ դժգոհ է մնում սրանից, երևի մտածում է, թե իր ընտանիքին պատիվ չի բերում կոշկակարությունը։ Մեծ եղբայրներն էլ են փնթփնթում, մեզ խայտառակում ես, ասում են, լսողն ի՞նչ կասի։ Փոքրը բանի տեղ չի դնում սրանց ասածը, գլուխը կախ իր գործն է անում, չուստ ու կոշիկ է կարում, և ի՞նչ շնորհքով. օր-օրի վրա սրա հաճախորդներն ավելանում են։ Սկզբում մյուս եղբայրների գործերն էլ լավ են գնում, ամուսնանում, տուն-տեղ են դառնում, բայց փոքրի մոտ գնալ-գալու սովորություն չեն ունենում, դե՛, մտածում են, ի՞նչ կասեն, իրավաբանը կամ սպան՝ կոշկակարի մոտ։ Անցնում են տարիներ։ Իրավաբան եղբորը կաշառակերության մեղադրանքով բանտ են նստեցնում, սպային էլ ծառայությունից ազատում են հարբեցողության համար։ Սրանց երեխաները մնում են անտեր։ Մոդներն էլ ծերացել են, տղաների անհաջողությունը արագացնում է սրանց մահը։ Փոքր եղբայրը սրանց թաղում է առաջատար, գերեզմանին լավ քար դնում ու դրանով արժանանում մարդկանց օրհնանքին։ Օգնում է սխալ ապրած եղբայրների երեխաներին, նրանք էլ կարգին մարդիկ են դառնում։ Մի օր էլ նամակ է ստանում եղբայրներից։ Պարզվում է, որ հարբեցող սպային էլ բանտ են տարել, ինչ-որ անկարգության համար, հիմա երկուսով միասին են։ Նամակում սրանք գրում են, թե փոքր

թվայնացրել է 1915.info կայքը

եղբայր, մեզ ներիր, եթե կարող ես։ Մենք կարծում էինք, թե մարդուս խելքն ու հաջողությունը կրթության մեջ է, շատ ուշացումով համոզվեցինք, որ քո բիլն ու ասեղն ավելի խելոք են, քան մեր դիպլոմն ու սպայի ուսադիրները։ Թեկուզ մեկի փոխարեն երկու դիպլոմ ունենաս, ի՞նչ օգուտ, եթե շնորհքդ տեղում չէ։ Մենք սխալ ճամփով գնացինք։ Հիմա ենք հասկանում, որ խելոքը դու ես, ոչ թե մենք. հաղթող դուրս կգալ աշխատանքի մարդը։ Մենք՝ անխելքներս, առաջներում ամաչում էինք, որ կոշկակար եղբայր ունենք, հիմա հպարտանում ենք քեզնով, լավ արհեստավորը տասը սուտ գիտնական արժե, այս է ճշմարտությունը։ Ամեն ինչ դու ունես, և խելք, ու շնորհք, և մարդկություն ու հարազատություն, մենք քեզ տալու բան չունենք, մենակ խնդրում ենք ընդունես մեր շնորհակալությունը և ներես մեզ...

Տղաները լուռ էին։ Հրանտը չգիտեր, թե նրանցից յուրաքանչյուրն ինչ է մտածում լսածի մասին, միայն համոզված էր, որ ինքը նշանից շատ հեռու խփած չպետք է լինի։ Եվ դա նրան ուրախացնում էր։

— Ես ձեզնից միայն երկու խնդրանք ունեմ, լավ ընկերներ լինեք և չմոռանաք, որ իմ հարազատներն եք։

— Քեռի Հրատ, հավատացեք...

— Մուշեղ, ինձ խոստումներ պետք չեն։ Դու տարիքով ավելի մեծ ես, եղել ես բանակում, ուրեմն մեծ եղբոր իրավունքը քոնն է։

— Այս քանի օրը համոզվել եմ, որ Սարիբեկն ընդունակ տղա է, լավ աչք ու լալ ձեռք ունի, հավատացեք։

Հրանտը նորից ընդհատեց Մուշեղին.

— Ես շատ կուզենայի, որ դուք ինձ երբեք անհարմար դրության մեջ չդնեք։

Սարիբեկը մինչև վերջ էլ լուռ մնաց։ Իսկ Հրանտին նախ և առաջ նրա վերաբերմունքն էր հետաքրքրում։ Ո՛չ, ծանր ջահելներից է սա, դժվար է լինելու Մի բան լավ է, որ համբակացարանում է ապրում, մորաքույր Սրբուհին չթողեց իրենց մոտ մնա, գուցե դա ճի՞շտ էր, սա էլ չհամարե՞նք մորաքրոջ երկրորդ լավ հեքիաթը...

թվայնացրել է 1915.info կայքը

4.

Բնակարան ստանալ, եղած-չեղած իրերը տեղափոխել, տա-րիների հոդհմաշ սպասումից հետո, վերջապես, սեփական անկյունն ունենալ։ Դժվար է ավելի մեծ երջանկություն երազելն անգամ։ Մի՞թե։ Իսկապես, դա այդպես է։ Ասենք թե սեփական տուն, նույնիսկ՝ հաջող կահավորված, եթե դատարկ է, մեջը սեր ու բախտավորությո՞ւն չկա։ Իսկ ինչո՞ւ է դատարկ, մի՞թե Գուրգենն ամենամեծ հարստությունը չէ, ամենաքաղցր սերն ու երջանկությունը։ Վերջապես տունն ո՞ւմ համար է ստացել, նրից Գուրգենի, նրա ապագա կնոջ ու երեխաների համար, ու տա աստված, որ ինքն արժանանա այդ օրվա տեսությանը, վայելի այդ օրերի քաղցրությունը։ Անձնական երջանկության դռները օր-օրի վրա փակվում են, վերջնականապես. մնացել է միակը, ամենամեծն ու հոգեհարազատը։ Եվ այսօր նոր տուն է տեղափոխվում իր մինուճարը, և այդ տան ստացման գործում նրա հոր օգնությունն էլ կա։ Իրերի տեղափոխման հարցում ևս. բեռնատար ավտոմեքենա է տրամադրել։ Խոսքի արանքում ասաց կամաց,— գուցե մի օր էլ ի՞նձ իրավունք կտաս քո նոր բնակարանը տեսնելու։ Լռեց ինքը, պատրաստի պատասխաններ... Օգնողներ կան, իհարկե, լաբորատորիայի տղաներից երեք հոգի, մեկը հենց դնդլիկ Հովիկն է։ Սրան ո՞վ է կանչել, նկել է իր նախաձեռնությամբ։ Լաբորատորիայի վարիչին օգնել է ուզում, ինչպիսի՞ ջենտլմենություն։ Այդպիսին են դրանք, այդ մութ ու ղռվելի հաշիվներով ապրողները։ Նրանք մինչև անգամ չեն փուշտա, եթե մեջը հաշիվ չկա։ Իսկ ջուր պղտորելու ու պղտոր ջրում ձուկ որսալու մեջ իսկական «չեմպիոններ» են։ Ափսոս, որ Դնդլիկ Հովիկի ծառայությունից հրաժարվել չկարողացավ, պարզապես անհարմար էր։ Իսկ նա, կասկած չկա, որ այսօրվա տեսած-լսածի մասին կգնա և կպատմի Անթառամին, այն էլ՝ շուտ տված գույներով։ Իսկ հաջորդ օրը լաբորատորիայում բարձրաձայն կփնթփնթա, այնպես, որ ինքը լսի,— չէ, Անթառամից հետո մեզ մոտ օրը շա՜տ է մաքրվել։ Զզվելի է։

Հիմնական գործ անող-կարգադրողը Սմբատն է, իհարկե, և ի՜նչ արտացայտությամբ է աշխատում։ Իսկ ավելի տրամաբանական և օրինաչափ չէ՞ր լինի, եթե այս ամբողջ գործը կազմակերպեր Գուրգենի հայրը, տանտիրոջ իրավունքով։ Եթե

թվայնացրել է 1915.info կայքը

Այնքան անիմաստ եթիններ կան, եթե դրանք բոլորն էլ ուշադրության առնվեին կամ իրականանալու հեռանկար ունենային։ Այո, ամբողջ կյանքը եթե-ի վրա կառուցվեց, անորոշ, հնդհեղուկ. ինչո՞ւ, ո՞ր մեղքի համար։ Իբր թե չգիտես, մոռացել ես քո անուղղելի սխալը, որի թթուն դու խմում ես ամեն օր, ամեն ժամ, որից փրկություն չունես, ու չես ունենալու, ամբողջ կյանքում, այս է սարսափելին։ Իսկ դատապարտո՞ւմ ես քո այդ քայլը, գոնե հիմա, այսքան տարի հետո, զղջո՞ւմ ես արածիդ համար, խոստովանիր ինքդ քեզ, գուցե դա կնպաստի քո հոգու թեթևացմանը։ Իսկ ո՛ւմ է պետք ուշացած կուրծք ծեծելը, դրանից ի՞նչ կարող է փոխվել։ Ոչինչ, այնուամենայնիվ, մարդիկ խոստովանահոր մոտ են գնում։ Դե, ես ի՞նչ հավատացյալ եմ։ Դու իզուր ես խուսափում կոնկրետ պատասխանից. և դա, իհարկե, քո օգտին չի խոսում... դատապարտում եմ ինձ, այո, բայց և չեմ զղջում։ Անիմաստ բառախաղ չէ՞։ Ոչ, ու նորից ոչ։ Այն ճակատագրական քայլն անխոհեմ էր, կարճամիտ, թեթևսոլիկ, ինչ որակում ուզում ես տուր, բայց արդյունքը պահում ու մխիթարում է ինձ։ Ես ինչպե՞ս կարող եմ զղջալ մի քայլի համար, որի արդյունքն է իմ Գուրգենը։ Եվ ինչպե՞ս լիաբերան դատապարտեմ այն, եթե կյանքում դա իմ միակ սերն է, ճիշտ է, ապօրինի, մեղավոր, բայց միակը, և, որ ավելի սարսափելի է, կրկնվելու հեռանկար չունեցող սերը։ Ինչո՞ւ ապօրինի. մեղավոր կարող է, սիրո ապօրինի՞ս որն է։ Իսկ սերը կարո՞ղ է կրկնվել. ինչպե՞ս են մարդիկ ամուսնանում երկրորդ, երրորդ անգամ, թե՞ ամուսնության համար սերը պարտադիր չէ։ Մորաքրոջ հարևաններից մեկը, հիսունն անց մի համեստ մարդ, որի կինը մահացել է երկու տարի առաջ, քանի անգամ է իրեն ասել, թե հարմար կնոջ տեղ գիտես, ծանոթացրու, դուցե միանանք, մենակ ապրելը շատ է դժվար։ Այո, հարմար կին, ոչ թե սիրած, միանալ, ոչ թե ամուսնանալ, շուկա գնալու նման մի բան։ Սերն այստեղ կամ չկա, կամ հետու աղգականի վիճակում է, խե՞ղճ սեր... Մի՞թե ընտանիքը կանգուն պահող ամենավճռական սյունը սիրո սուրբ թելերից չի հյուսված։ Եվ Հրանտի ընտանիքի կանգուն մնալու հարցում վճռական ձայնը սիրուն չի՞ պատկանում։ Տե՛ր աստված, նորից սկսվեց խենթ ու խելառ զգացմունքների և անզոր բանականության դաժան գոտեմարտը, ալեբախումը, իսկական փոթորիկ, որի ճիրաններից փրկվելու հույսը շատ է աղոտ ու անհեռանկար...

թվայնացրել է 1915.info կայքը

Մեքենան երկրորդ երթը կատարեց, այս անգամ՝ կահույքի խանութից։ Նախօրոք որոշել էին Սմբատի հետ, թե ինչ պիտի առնեն՝ երկու մահճակալ, սեղան, աթոռներ, խոհանոցի պարագաներ։ Եվ ոչինչ, դատարկ տունը տուն դարձավ, ապրել կարելի է։

Թամարը «մանկապարտեզի» երեխաներին էր նայում, Սմբատը իրերի դասավորման վերջնական խմբագրումն էր կատարում։ Իսկ Աշխենն ու մորաքույր Երանուհին սեղան էին պատրաստում, որի կենտրոնում փառավորապես բազմել էր Սմբատի բերած շամպայնի շիշը։

Հոգնած, բայց և խաղաղված սեղան նստեցին։ Երեխաների քնելու ժամն էր, և նրանք մեծերի գործերին չէին խառնվում։ Սմբատը պայթեցրեց շամպայնի շիշը, ու հաստաշուրթ բաժակներն սկսեցին փրփուր խմել։ Ապա ոտքի կանգնեց ու խոսք խոսեց մի տեսակ հանդիսավոր։

— Քույրիկ Աշխեն, եթե ասեմ, որ այսօր ամենաշատ ուրախացողը ես եմ, խնդրում եմ չկասկածել այդ խոսքի ճշտության վրա։ Ոնց որ հարազատ քույրս է տուն ստացել... Ախր ամեն մարդ, մանավանդ, լավ մարդը փրավունք ունի տուն-տեղ ունենալու, կյանքը կարգին դասավորելու, իսկ էդ բոլորի մեջ առաջինը տունն է, սեփական օջախը։ Շեն մնա էս օջախը, քույրիկ Աշխեն, թող էս դուռը միշտ բացվի ուրախության ու բախտավորության համար, թող այս տանը Գուրգենիդ ուրախությունը վայելես, դու էլ քո բախտը գտնես, պապիս ասած՝ ամեն— ու մի շնչով կուլ տվեց բաժակի պարունակությունը։

Թամարի աչքերում արցունքներ լճացան։ Ի՞նչ լավ ասաց Սմբատը, իսկը իր սրտից խոսեց. ափսոս, որ չի կարող բարձրաձայն միանալ նրա ասած խոսքին, «փշած փուչիկը» դեռ չի իջել, չնայած նկատելի նիհարել է։ Ըստ երևույթին բերանն այնքան էլ պինդ չի կապված։ Գուցե լավն ա՞յդ է։ Եվ այդ կապի թուլացման գործում մեծ դեր ունի Աշխենը. կարծես թե նրան ավելի շատ է մտահոգում ընկերուհու ընտանեկան վիճակը, քան իրենը։ Թամարն անխոս վեր կացավ տեղից, փաթաթվեց Աշխենին, համբուրեց նրա այտերը ու լցված նստեց տեղը։

— Ես քո բախտավորությունը տեսնեմ, ուրիշ բան չեմ ուզում,— խոսքերը շատ էին արցունքաթաց։

Մորաքույր Երանուհին հաճելի զարմացած էր, էս ջահել կանանց բան մեջ ոնց որ չպահած լինի, ոչ ուրախու-

թվայնացրել է 1915.info կայքը

Քյանն են դիմանում, ոչ՝ ախորժյանը։ Բայց ոչ, էս Թամարը լավ աղջիկ է երևում, իսկական ընկերուհի է, հավատարիմ, ճվիռլաձ։ Ամուսինն էլ լավն է, երեխաներն էլ, բախտավոր ընտանիք է, հո Աշխենի նման չեն։ Էլի խելքը նրանից բան չի կտրում։ Փառք աստծո, աստծներից մեկը ճիշտ դուրս եկավ, տուն ստացավ, լավ է, իսկ էն բանակի ուզա՞ն ինչ եղավ, վերջապես ո՞վ է նրա Գուրգենի հերը, ե՞րբ պիտի գա։ Ուզում է հարցնել, անհարմար է զգում, ախր էսօրվա խոսք չի, հետո, մի ուրիշ անգամ։

— Աշխեն, աղջիկս, ես էլ եմ շնորհավորում քո նոր օջախը, բարով վայելնք. ու տա աստված, որ դու էլի մենակ չմնաս, Գուրգենդ էլ մեղք է.— չդիմացավ, համարյա կամքից անկախ արտահայտեց իր կասկածը։ Եվ լավն այն էր, որ դա Աշխենին բոլորովին էլ չվիրավորեց, այնքան օրինաչափ ու սրտացավ ցանկություն է, ի՞նչ իրավունքով նեղանաս։ Մորաքրոջ կասկածներն էլ իրենց որոշակի հիմքերն ունեն. շատ ուշացավ Գուրգենի հայրը։ Իսկ գալու հեռանկար մնո՞ւմ է...

— Սիրելի մորաքույր, Սմբատ, Թամար, այս քաղաքում իմ ամենամեծ բարեկամները դուք եք, ես երջանիկ եմ նաև ձեզանով։ Աշխենն աշխատում էր չհուզվել, և դա նրան դժվարությամբ էր հաջողվում։— Ես ուզում եմ շնորհակալություն հայտնել նախ մորաքրոջս, նա ոչ միայն ապրելու տեղ է տվել, այլ նաև մայրություն է արել ինձ, ես ամբողջ կյանքում չեմ մոռանա... Վաղուց մի կտոր եմ առել մորաքրոջս համար, վախենում եմ տամ իրեն, շոր չկարիք։

— Ես ո՞ր օրվա նոր շոր հագնողն եմ,— մորաքույր Երանուհին թերահավատ ժպտում է, բայց և զգում ես, որ շոյված է։

— Կհագնես, մորաքույր, միասին կգնանք դերձակի մոտ, Թամարը մի լավ ծանոթ ունի, կլսատվիրենք։ Ես շատ եմ ուզում այդ շորը քո հագին տեսնել։

— Դե՛, որ ասում ես,— նահանջեց մորաքույրը և Աշխենի գլուխը սեղմեց իր կրծքին.— ես էլ քեզնից եմ շնորհակալ, աղջիկ ջան, մենակ էն եմ ասում, որ Գուրգենիդ մենակ չթողնես, մեղք է։

— Գուրգենի հայրը չուզեց գալ Երևան,— Աշխենի ձայնը նկատելի կարծրացավ.— էլ ես նրան չեմ սպասում, վե՛րջ։

— Ո՞նց թե, բա հետո՞,— խուճապահար հարցրեց Թամարը։

— Հետո ոչինչ, ես ու տղաս միասին կապրենք, մեզ ուրիշ

թվայնացրել է 1915.info կայքը

մարդ պետք չէ՝ նա ամուսնացել է արդեն, թող բախտավոր լինի— Աշխենն այնպես հանգիստ էր խոսում, ինքն էլ էր զարմացել իր վրա։

— Բա որ ես կասկածում էի,— թերահավատ մեջ ընկավ մորաքույրը։

— Այս անգամ քո կասկածները ճիշտ դուրս եկան, մորաքույր։ Վերջացավ, այդ մասին այլևս չենք խոսում։

Թամարն ուզում էր բողոքել, լաց լինել, բայց կարողացավ իրեն պահել, միայն չգիտես ինչու միտքը փախեփախ տվեց և անդրադարձավ իր վիճակին։ Սիրելի ընկերուհին մենակ է, միայնակ մայր, ահավոր իրողություն, իսկ ի՞նքը, ամուսին ունի, ճիշտ է, մեղավոր ամուսին, բայց և այնպես իր երեխաներն անհայր չեն մնացել, ինչո՞ւ է ինքն անընդհատ նրան վանում իրենից. հետո՞, որ գնաց, ո՞վ տիրություն կանի իր երեխաներին, այսպիսի դեպքերում հանցանքը ներո՞ւն է ճիշտ թե՞ մահվան դատավճիռ կայացնելը։ Գուցե իրավացի է Աշխենը, որ անընդհատ համոզում է իրեն տեր կանգնել այս որոշման առաջին կետին։ Սխոր այս անիրավ Սմբատը նաև լավն է, ինքը, ինչքան էլ փորձում է, չի կարողանում նրան չսիրել, ուր մնաց ատելը։ Ա՛խ այդ վիրավոր սերը։

— Սմբատ, տունն առանց սառնարանի չի լինի, խնդրում եմ վաղը լուծես այդ հարցը. դու կառնես, կբերես-կմիացնես։— Այնպես հանգիստ է խոսում Թամարը, վճռական և, ամենակարևորը, անքեն. վաղուց նա ամուսնու հետ այդ տոնով չի խոսել։ Ու Սմբատը երախտապարտ հայացքով Աշխենին է նայում, և միաժամանակ արձագանքում է կնոջ խնդրանքին.

— Աչքիս վրա, Թամար, բերեմ էլ, միացնեմ էլ, բա ինչպե՞ս...

5.

Հերթական խորհրդակցությունը դիրեկտորի մոտ ավարտվեց։ Քննարկում էին 6—4—10 հաստոցի մասնայական շղարկմանն անցնելու հարցը։ Նշվեցին ժամկետները։ Նոր արտադրամասի պետ նշանակվեց Սմբատ Ոսկանյանը։

— Դե՛, վարպետ Սմբատ, քեզ տեսնեմ, մեզ սևերես չանես,— դիրեկտորն էր սեղմում Սմբատի ձեռքը ու հաջողություններ մաղթում նրան։

— Կաշխատեմ, Սուրեն Մարտիրոսովիչ։

թվայնացրել է 1915.info կայքը

— Այսօր շատ ես համեստ ու քչախոս։

— Դե, մեծ-մեծ խոստումներն ո՞ւմ են պետք. կաշխատանք, կտեսնենք։

Հրանտ Ստեփանյանը ոչինչ չասաց Սմբատին, միայն գրկեց նրա ուսերը, սեղմեց կրծքին ու թափով ետ վանեց։

Այս նոր հաստոցի թողարկման հետ կապված այնքան հարցեր կան, և դրանց լուծման գործում գործարանի գլխավոր ինժեները վճռական դեր ունի։ Վերջապես, այդ հաստոցի խառնարուրի մոտ տատմոր թե՞ դայակի իրավունքով կանգնած են և՛ ինքը, և՛ Սմբատը։

Հիմա Հրանտ Ստեփանյանն իր աշխատասենյակում է։ Հին սովորության համաձայն կանգնել է պատուհանի մոտ ու նայում է գործարանի ընդարձակ բակին, այս դեպքում այնպես հեշտ ու հաջող է նա խորհում իրեն հուզող հարցերի մասին։ Կան, չէ՞, ֆուտբոլիստներ, որոնք մի որոշակի կետից համարյա անվրեպ խոցում են հակառակորդի դարպասը, սա էլ Ստեփանյանի «կետն» է. բաց պատուհանից նայել գործարանի ծառազարդ բակին, ասես ոսկեվարս արև կուլ տված ջրավազանին։ Զարմանալի է, որ այս դիրքում և մտքի գործակից է բարձր, և մի տեսակ նաև հանգստանում է, խաղաղվում։ Այնպես թեթև է զգում իրեն, ճիշտ է, աշխատանքը հոգսաշատ է, բայց հաջողություններն առկա են. պարբերաբար կատարում են պլանները, որակի հարցում էլ նկատելի առաջադիմություն կա։ Դե, տանն էլ, ինչպես ասում են, ավելի լավ դժվար է պատկերացնել։ Մեկայն նոր երևան վերցնելու, հարցը նորից բաղմել է օրակարգի առաջին կետում. մայրն առանձնապես շատ է շտապեցնում։ Ինքն էլ խոստացել է պրոֆեսոր Սավոյանին՝ հայտնել իրենց որոշման մասին, չի կարողանում զանգահարել, որովհետև մի ընդհանուր եզրակացության դեռ չեն եկել։ Զարմանալի է, որ Նվարդն էլ չի շտապում, երկրորդի հարցում շատ է դժվարանում։ Գուցեև հիմքե՞ր ունի։

Հնչեց ներքին հեռախոսի զանգը։

Ամալյան էր, ընդունարանից։

— Հրանտ Արշակովիչ, Անթառամն ուզում է ձեզ մոտ գալ։

— Ներս հրավիրիր, խնդրում եմ։

Ու գնաց դեպի իր գրասեղանը։

— Ներս եկեք, Անթառամ Քամալովնա,— բարևեց ձեռքով,— նստեցեք խնդրում եմ։

թվայնացրել է 1915.info կայքը

— Հրանտ Արշակովիչ նախ ուզում եմ շնորհակալություն հայտնել ձեզ այն ուղեգրի համար, կարգին բուժում ընդունեցի և, սատանայի ականջը խուլ, որոշակի բարելավում եմ նկատում։

— Ուրախ եմ ձեզ համար, և գոհ եմ, որ կարողացա օգտակար լինել... Ինչ-որ դիմում եմ տեսնում ձեր ձեռքին։ Հապա՞։

— Զարուհու դիմումն է, ազատման մասին. ինքը գալ չկարողացավ, գրիպով հիվանդ է. ասում է՝ վերջին օրը չգնամ էդ մարդուն վարակեմ։

Հրանտը քթի տակ ժպտում էր ու մտմտում ինքն իրեն,— եթե քեզ մոտ միայն գրիպով վարակելու վտանգը լիներ...

— Մի քանի օրից գնում է ամուսնու մոտ։ Չէ, լավ դասավորվեց Զարուհու գործը, մեղք է, թող նա էլ ընտանիքի տեր դառնա։ Եթե կարողանա նաև իր երեխաներն ունենալ, ուրեմն էլ պակաս տեղ չի մնա։ Էդպես է կյանքը։

— Ով գիտի, ասում են տարբեր երեխաների առկայությունն ընտանիքում երբեմն դժվարություններ է ստեղծում, խորթության վտանգն է մեծանում...

Հրանտն ասես ինքն իրեն էր խոսում, խորհրդածում էր բարձրաձայն։

— Ես ուզում եմ հավատալ, որ Զարուհին բախտավորվում է։ Մեղք է, գոնե նա...

Այնպես խեղճուկրակ երևաց Անթառամը, Հրանտի սիրտը կծկվեց մի տեսակ. «Գոնե նա բախտավորվի»։

— Անթառամ Քամալովնա, կներեք անհամեստ հարցիս համար, դուք ինչո՞ւ մինչև հիմա մենակ եք մնացել. մենակ տխուր է ու դժվար, չէ՞։

— Իրավացի եք, Հրանտ Արշակովիչ, և տխուր է, և դժվար է։ Ի՛նչ անեմ, իմ կյանքն էլ այսպես դասավորվեց։ Ջահել ժամանակ հետաքրքրվողներ կային, իհարկե, մի երկուսի քթին ես տվեցի, բարձր տեղից էի բռնացնում անխելքս, մեկն էլ իմ քիթը մզեց, խաբեց անամոթաբար... Ու ես հիասթափվեցի մարդկանցից, չարացա։ Կարծում եք չե՞մ գիտակցում, որ իրավացի չէի այն Աշխենի հարցում. գիտեմ, բայց չար դևը, որ մտնում է հոգուս մեջ...

Հրանտը զարմացած Անթառամին էր նայում. այս ի՞նչ տարօրինակ ու հակասական կերպար է և լաց լինելու չափ ողորմելի արարած, բայց և՛ գիշատչի հայացք, և՛ անմեղ գառ, և՛ հոշոտելու պատրաստ գազան...

թվայնացրել է 1915.info կայքը

— Իզուր եք այդպես զարմացած ինձ նայում, Հրանտ Արշակովիչ։ Միևնույն է, ես տղամարդկանց տանել չեմ կարող։ Խոսքն, ինչպես ասում են, ներկանների մասին չէ։ Տղամարդիկ և՛ կեղծ են, և՛ անհոգի, և՛ անկայուն։ Եվ, մանավանդ, կույր։ Այո, այո, թե էստի համեցեք արեցիր, գլխապատառ կվազեն կնոջ ետևից, ինչպես այդ Սմբատը, իսկ իրենք կքոռանան... Մի հետու բարեկամ ունենք. տատիս քրոջ թոռն է։ Մի երկու տարի առաջ կինը մահացել է, թողնելով չորս երեխա, մեկը մյուսից փոքր։ Հասկանալի է, որ ծանր է էդ մարդու վիճակը։ Մի անգամ նկավ մեր տուն, բարեկամի իրավունքով։ Անթառամ, ասում է, օգնիր մի կին ճարեմ, երեխաներս ձեռքից գնում են։ Ասում եմ՝ Հայկազ, ի՞նչ կին ես ուզում, քանի՞ տարեկան։ Դե, ասում է, նամուսով կին լինի, ես հիսունն անց եմ, նա էլ, ասենք թող լինի հիսունին մոտ։

Մեկ էլ չդիմացա, խնդրությունս բռնեց. ասում եմ, ընկեր Հայկազ, ես հենց քո ուզած տարիքի կին եմ, ինչո՞ւ ինձ չես ուզում, շա՞տ եմ պառաված... Վատ եղավ էս խեղճը, մի ներողություն է խնդրում, ուսկ չարեցի, ասում է, կարծում էի թե դու կմերժես, համ էլ մենք, ասում է, մի քիչ բարեկամներ ենք, չէ՞։ Ես սրան, ինչպես ասում են, քաղաքավարի տնից դուրս արեցի։ Այնքան էլ նեղացած չէի, ո՛չ, պարզապես ես ուրիշի չորս երեխան պահող չեմ, դա իմ ուժերից վեր է, երևի իմ ճակատին էլ էսպես է գրված... Շատ խոսեցի, Հրանտ Արշակովիչ, կներեք։ Թե ինչո՞ւ հանկարծ այսքան անկեղծացա, ինքս էլ չեմ հասկանում։ Գուցե դա նաև գլխավորի մարդամոտ ու սրտացավ շնորհքի՞ց է գալիս... Շնորհակալություն եմ հայտնում նաև Զարուհու կողմից։ Ցտեսություն։

Եվ Անթառամը վերցրեց մակագրված դիմումը ու շտապ դուրս եկավ գլխավոր ինժեների աշխատասենյակից։

Հրանտը երկար ժամանակ լսածի ազդեցության տակ էր։ Իսկապես որ մեղք են այդ անթառամները, մարդս թոշնում թառամում է՝ առանց ընտանիքի, ամուսնու ու զավակի քաղցրությունը վայելելու։ Նույն վիճակում չէ՞ նաև Գևորգ Անմեղիկյանը. նա էլ մյուս բանակի ներկայացուցիչն է, հակառակ բնեռի։ Եվ ինչպե՞ս է, որ այդ բևեռների հանդիպման վրա երբեմն սև խաչ է քաշվում, մյուս կողմից էլ չեն բացառվում մեղավոր հանդիպումները... Այնուամենայնիվ տխուր է միայնակ կնոջ վիճակը, այո, մանավանդ՝ կնոջ։ Սրի ինքը հոգեբան լիներ, հա-

թվայնացրել է 1915.info կայքը

տուկ կզբաղվեր այդ հարցով. այն կդարձներ դոկտորական դիսերտացիայի նյութ։ Որ ի՞նչ, արդյո՞ւնքը, կարծում ես քո դիսերտացիայով կկարողանայիր բախտավորեցնել Թեկուզև մի Անթառամի՞... Է՜, կյանքն այնքան բարդ է ու հակասական, գլուխ է պետք այդ բոլորից գլուխ հանելու համար։

Հանկարծ նրա մոտ Աշխենին տեսնելու, մանավանդ նրա հետ խոսելու մի զարմանալի ցանկություն առաջացավ։ Ներքին հեռախոսով զանգահարեց լաբորատորիա։

— Աշխեն Գուրգենովնա, ուզում էի իմանալ, թե ի՞նչ վիճակում է լաբորատորիայի հաշվետվությունը, չնայած ներկայացնելու ժամկետը վաղն է։

— Պատրաստ է, Հրանտ Արշակովիչ, ես կարող եմ հիմա բերել։

— Բերեք, խնդրում եմ։

Հիմա Հրանտ Ստեփանյանն այդ հաշվետվությունն է թերթում, իսկ Աշխեն Մարգարյանն ասես փշերի վրա է նստած, նախ՝ կհավանի՞ թե ոչ, հետո՝ ինքը մնա՞ թե՞ կարող է գնալ։ Իսկ գլխավորը ոչինչ չի ասում, և որքան նկատում է Աշխենը, նա գրածը չի էլ կարդում, այնպես նայում է։ Հետո ներքին բարձրախոսով կապվեց քարտուղարուհու հետ.

— Ամալյա, խնդրում եմ երկու սուրճ պատրաստես։

Աշխենն ասես խուճապի մատնվեց։

— Հրանտ Արշակովիչ, ես արդեն խմել եմ, ձեզ էլ, կարծեմ, խորհուրդ չեն տալիս։

— Ոչինչ, գոնե այս հարցում չափի խախտում թույլ տանք... Գիտե՞ս ինչ, Աշխեն, ես ցավով մտածում եմ, որ քեզ մի անգամ գոնե պաղպաղակով չեմ հյուրասիրել. մի հրաժարվիր սուրճից, մանավանդ, որ այն ուրիշն է պատրաստում։

— Լավ, Հրանտ Արշակովիչ, սիրով կխմեմ։ Իսկ հաշվետվությո՞ւնը...

— Հետո կկարդամ. քեզ կանչել եմ, որ ասեմ՝ այն Զարուհու դիմումը քիչ առաջ մակագրեցի, ազատվում և գնում է ոչ միայն մեր գործարանից, այլ նաև՝ Երևանից։

— Ի՞նչ լավ բան ասացիք, Հրանտ Արշակովիչ, չեք պատկերացնում, թե Թամարն ինչքան կուրախանա։

— Գիտեմ, դրա համար քեզ ասացի։ Դիմումն Անթառամն էր բերել. բավական անկեղծ խոսակցություն եղավ, պատկերացնո՞ւմ ես, նույնիսկ իրեն մեղադրում է քո հարցում։

թվայնացրել է 1915.info կայքը

— Իսկապե՞ս Ա՛յ, դա հետաքրքիր է։ Բայց հիմա իմ մտքերն ուրիշ ուղղությամբ գնացին. Անթառամն այստեղ անելիք չունի... Թամարն ուրախ է, որ իր ախոյանը հեռանում է մեր քաղաքից, ուրեմն նոր հանդիպումների, նոր գայթակղության վտանգ չկա այլևս։ Իսկ ահա, կներեք, տիկին Նվանդը իր ամուսնու սիրուհուն...

— Աշխեն, ինչե՞ր ես խոսում։

— Խնդրում եմ ինձ չընդհատել. այո, նա ինձ հեռավոր Կույբիշևից կանչեց Երևան, կանչեց, առանց վախենալու տխուր հետևանքներից։ Կանչեց, որովհետև պղտոր ծովում լողալ չէր կարող, խեղդվելու վտանգ էր տեսնում։ Ես չգիտեմ, թե ուրիշ որ կինը կարող է դիմել այդպիսի ճակատագրական քայլի։ Նա գիտեր, որ նույն քաղաքում ապրելը կարող է պատճառ դառնալ նոր հանդիպումների, ուրեմն՝ կրկնակի ստորացման և ընտանիքը քայքայվելու նոր վտանգի։ Ով, միևնույն է, կանչեց։ Ես այդ մասին այնքան եմ մտածել, հավատացնում եմ, ես ընդունակ չէի լինի այդպիսի քայլի։ Ով չեք կարող պատկերացնել, թե նա ինչքան է բարձրացել իմ աչքում։ Մեծ սրտի ու մեծ հոգու տեր կին է նա։ Ով խելոք է ու հեռատես։ Համոզված եմ, նա վստահ էր իր հաղթանակի մեջ, դրա համար կանչեց։ Ոչ ստորացավ, ո՛չ ստորացրեց։ Այդպիսի կնոջ առաջ գլուխ պիտի խոնարհել։ Ես այնպե՞ս ափսոսում եմ, որ նրա ընկերուհին լինել չեմ կարող...

— Տարօրինակ աղջիկ ես, աստված վկա, և չես պատկերացնում թե դու ինչքան լավն ես, թեկուզև՝ քո այդ անկեղծ ու բարձր խոստովանությամբ։ Դու էլ, Նվարդն էլ շատ եք լավը, և իսկապես արժե ձեր առաջ գլուխ խոնարհել, ոչ, մոմ վառել, միայն, ափսոս, որ այդ շնորհքը չունեմ, դա էլ ձեր երկուսիդ դժբախտությունն է։

Ամալյան մի գավաթ սուրճ ու մի բաժակ թեյ բերեց։

— Կներեք, Հրանտ Արշակովիչ, որ...

— Հասկանալի է, Ամալյա, շնորհակալություն։

Ամալյայի դուրս գնալուց հետո Հրանտը դիմեց Աշխենին, մի տեսակ կարծես թե անհարմար զգալով.

— Քո Անաստուի՞ն ինչ եղավ, նրա մասին ոչինչ չես ասում։

— Անաստուին երբեք էլ իմը չի եղել, հիմա՝ առավել ևս. նա ամուսնացել է արդեն։— Աշխենի ձայնն այնպես հանգիստ էր հնչում, մի՞թե նա՝ անտարբեր։

թվայնացրել է 1915.info կայքը

— Ամուսնացի՞լ է. ա՛յ, դա անսպասելի նորություն է։ Իսկ ես համոզված էի...

Հրանտն ինքն էլ չէր հասկանում, թե ինչպես հովի նման թեթև-թեթև մի բան իջավ սրտին, ու շնչելը մի տեսակ ավելի հեշտացավ։ Այս ինչ է, մի՞թե նրան անհանգստացնում է Աշխենի ամուսնության հնարավորությունը, դեմ է նրա այդ քայլի՞ն. ինչո՞ւ Ուրիշ հեռանկար տեսնո՞ւմ ես, ոչ, իհարկե, այդ դեպքում ինչո՞ւ է քեզ մտահոգում նրա հնարավոր բախտավորությունը. մի՞թե դու այդ աստիճան էգոիստ ես. իսկական խոտի վրա նստած շուն. զզվելի է պարզապես։ Բայց ես մի՞թե դեմ եմ նրա ամուսնությանը, թող ընտանիք կազմի, գտնի իր բախտը. ես էլ կուրախանամ, աստված վկա։ Միայն, չգիտեմ ինչու, նրա մենակ մնալը իմ սրտի վրա ավելի թեթև է նստում. գուցե պատճառներից մեկն էլ Գուրգենին խորթ հոր խնամքին չտեսնելու ցանկությո՞ւնն է։ Իսկ եթե հարազատ հոր խնամքը չկա՞...

— Հրանտ Արշակովիչ, ես գնամ. ուզում եմ Թամարին ուրախացնել։

— Այո, Թամարը.— Հրանտը շատ էր ցրված։— Սուրճդ սառավ, խոսքով ընկանք։

— Ոչինչ, Հրանտ, հաշվիր, թե մի անգամ ինձ մի գավաթ սուրճով հյուրասիրել ես, և ես խմել եմ հաճույքով...

6.

Կյանքում ի՜նչ զարմանալի զուգադիպություններ ասես, որ չեն լինում, հաճախ՝ այնքան անսպասելի հանդիպում կամ լուր, երևակայությունից դուրս անակնկալ։ Եթե գրքում կարդաս, կասես՝ անբնական է, կամ, պարզապես, սարքովի բան է...

Աշխենը հորը աղոտ է հիշում, և՝ շատ հազվադեպ, այն էլ՝ մոր կապակցությամբ։ Ուրիշ կերպ, երևի, չի էլ կարող. նա հորը հիշում է ավելի շատ և ավելի շուտ մոր պատմածներով։ Ջորս տարեկան երեխայի հիշողության հետ մեծ հույսեր կապել չես կարող։ Բախտ չունեցավ վայելելու հայրական քաղցրությունը։ Իսկ իր Գուրգե՞նը. հոր անունն անգամ չգիտի, և այդ մասին մորը հարցնելու գիտակցությանն էլ դեռ չի եկել, բարեբախտաբար։ Բայց մինչև ե՞րբ։ Որ եկա՞վ ծվ ինչո՞ւ հանկարծ նրա մտքի էկրանի վրա նույն գծին կանգնեցին իր ու իր տղա-

թվայնացրել է 1915.info կայքը

յի հայրերը. ի՞նչ կապ ունեն նրանք իրար հետ։ Թե՞ կապ չունենալ չեն կարող. արյունը կանչում է երևի, հենց այս գծո՞վ սլիտի հնչեր հարազատի արյան ձայնը։

Ճամպրուկի մի խուլ անկյունից հանել է մոր փոքրիկ ու նախշազարդ տուփը, բացել է կափարիչը և մի անբացատրելի երկյուղածությամբ կարդում է հոր՝ ռազմաճակատից գրած նամակները։ Դե՛, դրանք շատ չեն, ընդամենը երեք նամակ։ Հանգուցյալ մայրը քանի՜ անգամ է կարդացել, համարյա անգիր գիտեր ու ինչպիսի՜ խնամքով էր պահում այդ եռածալ, ժամանակի շնչից դեղնած թղթի պատառիկները։ Այդպես սուրբ նշխարներն է պահում մոլեռանդ հավատացյալը։ «Աստղիկ, շատ սիրելի տիկինս, գիտեմ, դժվարություններ շատ ես քաշում, մնանակ, երկու մատ երեխայի հետ... Մի կերպ դիմացեք, աշխարհ է, կխաղաղվի, տուն կգամ մի օր, Աշխենիս քույր ու եղբայր կպարգևենք, կարգին տուն-տեղ կդառնանք, դիմացիր, խնդրում եմ»...

Չնկավ, ռազմի ճամփաներին մնաց, իր մինուճար աղջկանը սիրել-փայփայելու երջանկությունը չունեցավ։ Մայրն էլ շատ էր ափսոսում, որ աղջկանը մի եղբայր ունենալու բախտին արժանացնել չկարողացավ.— «Դա և իմ, և քո հոր երազանքն էր, անկատար մնաց, քոռանա՜ աստծո աչքը»... իսկ Գուրգի՞նը, մի՞թե մենակության նույն կնիքն էլ նրա ճակատին է դրված, այսքան էլ դաժան կրկնությո՞ւն կլինի։ Թե՞ ժառանգականությունն այստեղ էլ իր սև գործն է անում... Հիմար բաներ ես մտածում. համոզված ես, որ ժառանգականություն կոչվածն այստեղ անելիք չունի, պարզապես տխուր նմանություն է, ուրիշ ոչինչ։ Մայրն ինչպե՞ս էր տանջվում ամուսնու անորոշ ճակատագրի համար, նրան այդպես էլ չհաջողվեց իմանալ, թե ամուսինը որտեղ կնքեց իր մահկանացուն։ Ահավոր լրաբերը սևերես թուղթն էր, որի մեջ արձանագրված էր տխուր փաստը միայն, վերջում էլ՝ մխիթարանքի մի քանի խոսք.— «Հայրենիքի համար, հերոսի մահով...»։ Այդ թուղթը չի մնացել, մայրը պահել չկարողացավ։ Գուցե դա այն միակ փաստաթուղթն է, որի և պահելն է դժվար, և դրա անհրաժեշտությունը, երևի, չկա էլ...

Նամակների հետ նաև հոր մի լուսանկարն է մնացել. ճմրթված հագուստ, հստակ երևում են սերժանտի տարբերանշանները։ Գլխին մորթե փափախ է, ականջակալներով, ուրեմն

թվայնացրել է 1915.info կայքը

ձմեռ է եղել, երբ նկարվել է։ Եվ մինակ չէ, առաջներում ինչ-ա՞ս ուշադրություն չի դարձրել այս փաստի վրա, կողքին մի ընկեր է կանդնած, սպա է, կրտսեր լեյտենանտ, չնայած հորից ավելի ջահել է երևում։ Տեսնես ո՞վ է, որտե՞ղ է հիմա, թե՞ նա էլ արդեն այս աշխարհից չէ։ Ինչպե՞ս է, որ հայրն այդ ընկերոջ մասին ոչինչ չի գրել նամակում։ Նկարի դարձերեսին ինչ-որ ազգանուն է գրված մատիտով. ափսոս, որ ջնջվել է, հնարավոր չէ վերծանել։ Իբր, եթե այդ ազգանունը կարդալ կարողանայիր, դրանից որևէ բա՞ն կփոխվեր. ո՛չ, իհարկե, պարզապես...

Այդ ինչ է, դռան զա՞նգն է. ապրի Սմբատը, դա էլ նրա «ստեղծագործությունն է»։ Շտապեց դուռը բացել։ Փոստատարն է, մի տարեց կին։

— Աղջիկ ջան, նամակ ունես։ Երևի էս շնքում առաջին նամակն ես ստանում։

— Ճիշտ է, առաջինն է և՝ բոլորովին անսպասելի։

— Թող անսպասելին ուրախություն լինի, դու էլ առողջ լինես, շատ ու լավ նամակներ ստանաս։

— Շնորհակալ եմ, մայրիկ։

Անծանոթ ձեռագիր, անծանոթ հասցե, ո՞վ է գրել այս նամակը։

«Նանլարի շրջան, Գետաշեն գյուղ, Սահակ Սահակյանից»։ Չի ճանաչում, այս ի՞նչ հանելուկ է, ինքն այդ կողմերից ծանոթ էլ չի ունեցել։ Միակ քաղաքը, որտեղից նամակ է սպասում, Կույբիշևն է, և գրել կարող են Ռոզան կամ Վարվառա Միխայլովնան։ Նրանք էլ վաղուց ոչինչ չեն գրում։ Մոռացա՞ն արդեն. երևի, ո՛չ։ Ռոզան պարզապես նեղացած է, վերջին նամակում իր սրտի մաղձը թաքցնել չէր կարողացել, դե, նա այդպիսի փորձեր չի էլ անում, ինչ եկավ բերանը, կասի։ «Դա դեռ քիչ է քեզ, լավ եղավ, Անատոլին աչքիս այնպե՞ս է բարձրացել. անշնորհք մարդն իր խելքից է դժբախտանում»... Իսկ դու պատասխանե՞լ ես այդ նամակին կամ Վարվառա Միխայլովնային հայտնե՞լ ես բնակարան ստանալու, լաբորատորիայի վարիչ դառնալու մասին, գիտես, որ նա շատ կուրախանա։ Չի գրել, վաղուց՝ ոչ մեկին և ոչ մի տող։ Նամակ գրելու համար էլ տրամադրություն է պետք. ախ այդ տրամադրությունը, որ նման է փուխրամիտ աղջկա, թե՞ մարտի հղանակն ավելի սազ կգար նրան...

Բացեց նամակը։ Այնպես անհամբեր էր։ Ու դառն մտո-

թվայնացրել է 1915.info կայքը

րումներից կծկված սիրտ-թուչնակն, ասես, դուրս փախավ վանդակից և սկսեց թևածել լազուր երկնակամարում։

«Աշխեն, աղջիկս, ես քո հոր մարտական ընկերն եմ, միասին ենք կռվել անարգ ոսոխի դեմ, միասին ենք կիսել մեր տխուր ու լավ օրերը, մի տարի ութ ամիս. միասին էլ դուրս ենք եկել շարքից, նույն մարտում, ես՝ ժամանակավորապես, իմ ափիղ ընկեր Գուրգենը՝ անվերադարձ... Թե բախտ ունեցա քեզ հանդիպելու, կպատմեմ հորդ մասին, դու իրավունք ունես նրանով հպարտանալու։ Հիմա ասեմ, թե ինչո՞ւ եմ այսքան լռել, ինչո՞ւ միայն հիմա եմ քեզ նամակ գրում։ Գուրգենիս հասցեն էի կորցրել. միասին նկարվել ենք մի անգամ, դա էլ չգտա։ Դե, այնպիսի օրեր էին, որ մարդ իր գլուխը կորցնել կարող էր... ընկերոջս գտնելու հույսն այդպես էլ կորավ։ Անցան տարիներ։ Մի օր, ինչպես եղավ, շքանշաններիս ու մեդալներիս վկայականներն էի ստուգում, և, հանկարծ, մի պատռված թղթի անկյունում կարդում եմ Գուրգեն Մարգարյանի հասցեն։ Ի՞նչ ուրախություն էր դա ինձ համար չես կարող պատկերացնել։ Զարմանալին այն էր, որ այդ թուղթը մի քանի անգամ է եղել ձեռքիս տակ, և ինչպե՛ս է, որ չեմ նկատել։ Անմիջապես նամակ գրեցի Ռոստով։ Երկու ամիս հետո պատասխան ստացա. հարևանն էր գրում, թե Գուրգենի կինը վախճանվել է մի քանի տարի առաջ, աղջիկը, Աշխենն էլ, որքան մեզ հայտի է, Մոսկվայում, ինստիտուտն ավարտելուց հետո, գնացել է Երևան, մորաքրոջ մոտ։ Այս է մեր իմացածը։ Նամակով շնորհակալություն հայտնեցի ձեր այդ բարեխիղճ հարևանին, Դմիտրի Իգնատովիչ են նրան կոչում, և որոնումներս շարունակեցի Երևանում։ Մեծ տղաս այդ ժամանակ սովորում էր Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի վերջին կուրսում։ Նրան հանձնարարեցի այդ գործը։ Երկար որոնումներից հետո նրան հաջողվում է իմանալ քո աշխատանքի տեղը։ Գնում է գործարան։ Կադրերի բաժնում ասում են՝ Աշխեն Մարգարյանն ազատվել է աշխատանքից, տեղափոխվել Ռուսաստան, կոնկրետ չգիտենք թե ուր։ Դե, արի Ռուսաստան աշխարհում մի կրած Աշխեն գտիր։ Նորից հույսս կորավ։ Էլի մի երկու տարի անցավ։ Մի անգամ տղաս, Երվանդը, որ արդեն ինստիտուտն ավարտել և աշխատում է մի ուրիշ գործարանում, հանդիպում է իր ինստիտուտի դասընկերներից մեկին, Ռուբեն է անունը։ Պարզվում է, որ սա էլ ձեր գործարանում է աշխատում, ին-

թվայնացրել է 1915.info կայքը

ժններ էր։ Սա տղայիս ասում է՝ գիտեմ, որ մի ժամանակ դու փնտրում էիր Աշխեն Մարգարյան աղգանունով մի աղջկա, այդ Աշխենը վերադարձել և նորից մեր գործարանում է աշխատում, ավելի ճիշտ՝ լաբորատորիայում։ Տղաս շտապում է գործարան, քեզ տեսնել չի կարողանում, բայց կադրերի բաժնից իմանում է քո նոր տան հասցեն։ Ահա թե ինչպես կարողացա քեզ գտնել, այ իմ աղեղ ընկերոջ աղջիկ։ Իսկական հեքիաթ է, լավ վերջաբանով հեքիաթ։ Ես, Կիրովաբադից ոչ շատ հեռու հայկական մի մեծ գյուղ կա, Գետաշեն է կոչվում, այդ գյուղի միջնակարգ դպրոցում լեզու և գրականություն եմ դասավանդում։ Հաճախ եմ լինում Երևանում։ Հենց որ ստացա նամակիս պատասխանը, անմիջապես կգամ Երևան, կծանոթանանք, կճանաչենք իրար։ Այնքան բան ունեմ քեզ պատմելու։ Անհամբեր սպասում եմ քո նամակին։ Խորին հարգանքներով՝ Սահակ Սահակյան»։

Աշխենն ավարտել է նամակի ընթերցումը ու մնացել է մի տեսակ քարացած վիճակում։ Նույնիսկ դժվարանում է հավատալ կարդացածին։ Գտնվել է հոր մարտական ընկերը, և ինքը նրա հետ հանդիպելու հնարավորություն ունի, այս ի՞նչ երջանկություն է. այսքան տարի հետո, այդպիսի տառապանքով գտնված ընկեր։ Իսկապես սա հեքիա՞թ է թե՞ իրողություն, ուրիշների աչքին՝ սարքովի պատմություն, իսկ իր համար՝ մի ամբողջ աշխարհ։

Ի՞նչ զարմանալի զուգադիպություններ ասես, որ չունի կյանքը։ Գուցե հենց դրանով է նա հետաքրքիր ու առինքնող, չկրկնվող ու անմոռաց։ Ո՞չ, պարզապես՝ առեղծվածային...

7.

Առավոտյան Հրանտ Ստեփանյանը նոր էր մտել իր աշխատասենյակը, երբ հեռախոսազանգը հնչեց երկար։ Ո՞վ կարող է լինել այսքան շուտ։ Մեխանիկական արտադրամասի վարպետներից էր, Գևորգ Վարդանյանը։

— Հրանտ Արշակովիչ, կներեք, առավոտը շուտ տխուր լուր եմ հայտնելու. Անմեղիկյանն է մահացել։ Քույրն առավոտյան շուտ նախաճաշ է բերել եղբոր համար և նրան գտել է անկողնում, բանը բանից անցած։ Դե՛, գիտեք, որ նրա սիրտը լավ վիճակում չէր։

— Իսկ դուք ինչպե՞ս իմացաք, վարպետ Գևորգ։

թվայնացրել է 1915.info կայքը

— Ախր մենք մի շենքում ենք ապրում, հին հարևաններ ենք Անմեղիկյանի հետ։

Հրանտն այդ տխուր լուրը հայտնեց գործարանի դիրեկտորին, հետո իր մոտ կանչեց արհկոմի նախագահին։

— Ընկեր Օհանյան, տխուր պարտականություն ունենք կատարելու, Գևորգ Անմեղիկյանն է մահացել, պետք է զբաղվել հուղարկավորության հարցերով. գիտեք, որ նա մի քույր ունի միայն, սա էլ՝ երկու աղջիկ, տղամարդ չկա, իսկ դա ծանր գործ է, դագաղ, տեղի հարց։ Հենց հիմա մեկին վերցրեք ու գնացեք նրանց տուն։ Քիչ հետո ես էլ կգամ։ Հա՛, ծաղիկները չմոռանաք։ Բայց, ո՛չ, այդ մեկը կհանձնարարեմ լաբորատորիային։ Շտապեցեք։

Ջանգահարեց լաբորատորիայի վարիչին։

— Աշխեն Գուրգենովնա, բարև ձեզ։

— Բարև, Հրանտ Արշակովիչ։

— Ինչպես էլ ճանաչեցիր ձայնս։

— Դեռ ականջներիցս բողոք չունեմ, բարեբախտաբար, և հետո...

— Վատ լուր պիտի հայտնեմ, չվախենաս։

— Ի՞նչ է պատահել, աստված իմ։

— Անմեղիկյանն է մահացել։

— Վա՛յ, ինչ մե՞ղք է, ափսո՜ս։

— Ծաղիկների հարցը վերցրեք ձեզ վրա։ Երևի հարկ կլինի, որ թաղման ժամանակ լաբորատորիայից մեկը խոսք ասի, գուցե՝ Երանոսյա՞նը։

Թաղման արարողությանը շատ մարդ էր մասնակցում, չնայած հարազատներ ու մտերիմներ քիչ ուներ հանգուցյալը։ Հիմնականում գործարանն էր տեր կանգնել իր վաստակած վետերանին։ Հրանտը նայում էր թափորին և մի տեսակ թեթևություն էր զգում։ Զարմանալի է մարդ-արարածը։ Անմեղիկյանն իր ընտանիքը չի ունեցել, ո՛չ կին, ո՛չ երեխա, այս աշխարհում նրա բաժինը իրենից փոքր քույրն է միայն։ Աղնիվ ու մաքուր մարդ, լավ աշխատող, բայց ահա, անձնական կյանք չի ունեցել, մենակ ու տխուր մարդու ճակատագիր։ Նրա միակ մխիթարությունը կոլեկտիվն է եղել, աշխատանքային ընկերները, ովքեր էլ այսօր ճանապարհում են նրան իր վերջին հանգրվանը, կամ ինչպես տարեց գյուղացիները կասեին, վերջին տունը...

թվայնացրել է 1915.info կայքը

Այնուամենայնիվ, հանգուցյալի վրա լաց լինող պիտի լինի, այլապես տխրությունը կարող է տասնապատկվել։ Քույրն է մղկտում, իսկ քրոջ աղջիկները իրենց զուսպ են պահում, երևի քեռու հետ առանձին մտերմություն չեն ունեցել։ Քրոջն ասես լուռ ձայնակցում է Աշխենը, թաշկինակն աչքերից չի կարողանում հեռացնել։ Բայց այ, զարմանալի է, որ նաև Անթառամն է լալիս, իսկ Հրանտին թվում էր, թե նա չի գա հուղարկավորությանը։ Գուցե, այնուամենայնիվ, նրա հոգու մի անկյունում էլ նուրբ լարեր կան, որոնք հնչում են, թեկուզև շատ թույլ, բայց և այնպես այդ լարերը կա՞ն։ Իսկ ի՞նչ գիտես, գուցե նա ավելի հարուստ հոգի ունի, քան ցույց է տալիս։

Իսկ Գևորգ Անմեղիկյանը հանգիստ պառկել է դագաղում, քնած լինի ասես, միայն գույնը մի քիչ կապտին է տալիս, ու չաղացած է երևում։ Հրանտը հիշում է նրա վերջին «ելույթը», անբասիր բառի մասին նրա խորհրդածությունները.— «Մեղք է «անբասիրը», մեր ծեծված ու անատամ բնութագրերում շարքային բառ է դարձել»... Բոլորի վերջն էլ սա է, վերջին այս ճանապարհը, բայց ինչքա՜ն լավ է, երբ մարդ իր ճանապարհն անցնում է մաքուր, անբիծ, և թողնում է անբասիր աշխատողի հիշատակ։ Դժվար է, ճիշտ է, բայց և անհրաժեշտ է. ու երջանիկ է նա, ով արժանանում է այդ բախտին, միակ մնայուն և անփոխարինելի երջանկությունը...

Աշխենն ու Թամարը միասին էին քայլում, ու լուռ էին ամբողջ ճանապարհին, դե՛, թաղման արարողության ժամանակ ամենաշատախոս մարդու լեզուն անգամ բնից դուրս գալու փորձեր չի անում։

Հանկարծ Թամարի աչքովն ընկավ Զարուհին. Անթառամի հետ քայլում էին Թևանցուկ, Թամարի գլխին ասես մուրճի հարված իջավ, քանի ամիս է, չի հանդիպել էդ կապը կտրածին... փորձում էր մոռանալ։ Աշխենն իսկույն նկատեց նրա անհանգիստ վիճակը ու կամաց հարցրեց.

— Քեզ ի՞նչ պատահեց, գույնդ էլ մի տեսակ...

— Էն անամոթին նայիր, էնպես էլ քայլում է, ոնց որ աշխարհի տերը լինի։

— Իսկ դու շան տեղ էլ մի դիր։ Էդպես է, դրանք ապրում են՝ աշխարհի հերն անիծելով, ո՛չ նամուս ունեն, ո՛չ սրբություն... լռեց, ու հետո անդրադարձավ իր իսկ ասած խոսքին,— «դրանք»,— ո՞ւմ նկատի ուներ, ուրիշ տղամարդ կամ կին գայ-

թվայնացրել է 1915.info կայքը

Թակղնցնողներին, ուրիշի ընտանիքի անիվի տակ քար դնողներին։ Իսկ այդ «դրանքի» մեջ կարո՞ղ են մտնել ինքը, գուցեև Հրանտը։ Ինքն, ասենք, ինչո՞վ է լավ այդ Զարուհի կոչվածից, գուցե մի բան էլ ավե՞լ է, երեխա է ունեցել ուրիշի ամուսնուց... Նորի՞ց սկսեիր քո հիմար զուգահեռներն անցկացնել, և ինչպե՞ս ես դու քեզ նրա հետ համեմատում... Թափով ետ տվեց ճակատի մազափունջը։ Մ՛հ, գրողը տանի, մարդ է գնում այս աշխարհից, անվերադարձ, հավիտենապես, և դու փոխանակ սգավորի նման պահես քեզ, անիմաստ էքսկուրսների ետևից ես վազում։ Եվ քեզ լուրջ մարդ ես համարում, հանգուցյալի պաշտոնն էլ քեզ են վստահել, պարզապես անհարմար է...

Հանկարծ Աշխենի ականջին հասավ Հրանտ Ստեփանյանի ձայնը. այս ե՞րբ հասան գերեզմանատուն.

— Գևորգ Անմեղիկյանը մաքուր ապրեց իր ոչ երկար կյանքը, և այս աշխարհից հեռանում է հանգիստ խղճով։ Անձնական երջանկություն չունեցավ նա, և ուրախությունն ու հպարտությունը գտավ աշխատանքի մեջ, գործընկերների շրջապատում։ Տխուր և անառարկելի ճշմարտություն է, ով եկել է այս աշխարհը, պետք է գնա մի օր։ Եվ երջանիկ է այն գնացողը, ով իրենից հետո թողնում է լավ ժառանգներ և բարի անուն. Անմեղիկյանը բարի անուն ու լավ հիշատակ է թողնում, միխթարվենք դրանով։ Մեր լավ ընկերոջ, անբասիր մարդու, այս բառն առանձնապես ընդգծեց Ստեփանյանը, անմոռաց հիշատակը կմնա մեր սրտերում...

Աշխենն իրենից անկախ նորից աչքերին տարավ խոնավ թաշկինակը։ Նրա սիրտն այնպես էր մղկտում, ասես բաժանվում էր շատ մոտ հարազատից։ Եվ ինչո՞ւ կենդանության ժամանակ բավարար չափով ուշադիր չեղավ նրա նկատմամբ, գուցե Անթառա՞մն էր խանգարում։ Ո՛չ, իհարկե, պարզապես ապրող մարդուն միշտ չէ, որ ուզում ենք նկատել, թյուրատեսություն այստեղ տխուր իրողություն է, և համոզվում ենք այդ բանի մեջ, երբ արդեն ուշ է լինում։ Է՛հ, ինչում ասես, որ մարդս չի ուշանում, գուցե մնայն մահից ուշանալու հնարավորությո՞ւնն է բացառվում...

թվայնացրել է 1915.info կայքը

8.

Աշխենը մի նամակ էլ ստացավ, Վարվառա Միխայլովնայից։ Այն գրված էր մորաքրոջ հասցեով։ Նորից կույբիշևյան հուշերն արթնացան ու քայլել սկսեցին նրա մտքի տեսադաշտում։ Գործարանի լաբորատորիա ու հանրակացարան, հիվանդանոց ու Անատոլի, Ռոզա և Ալլա Կուզմինիչնա, Վարվառա Միխայլովնա ու Տանյուշա... Իսկ ինչո՞ւ Անատոլիին հատկապես հիշում ես հիվանդանոցի առնչությամբ. երևի ձեր հարաբերությունները մտերմական դարձան հենց այդ օրերի՞ն, երեխայի ապաքինմանը զուգընթաց։ Մտերմակա՞ն դարձան. կես ճանապարհին մնացած մտերմություն։ Իսկ Գուրգենի հայրանունը Անատոլի է։ Այժմ արդեն ո՛չ Հրանտ, ո՛չ Անատոլի, նոր ու իսկական հայրանուն է պետք տղային. գուցե՝ հայր և ոչ թե դատարկ անո՞ւն. այդ անունները շատ չփոխվեցի՞ն...

Վարվառայի նամակը, ինչպես միշտ, փաստառատ էր ու հաճելի և, ասես լավատեսությամբ էր շնչում... Ո՞չ, մեծ հոգի ունի այդ կինը, նվնվալ չգիտի, բավարարվում է եղածով և սպասում է ավելի լավ օրերի։

«Աշխե՛ն, քույրիկս, ստիպված եմ քեզ դիտողություն անել, մեծի իրավունքով։ Ինչքան ժամանակ է նամակ չես գրում, բա եղա՞վ. ինչո՞ւ ես ինձ համար անհանգիստ վիճակ ստեղծում։ Քեզ արդարացնելու համար ասեմ, որ այդ բոլորը ծուլության արդյունք է, իսկ քեզ ծուլությունը չի սազում, ամենևին։ Ուրեմն գոնե բարի եղիր պատասխանել իմ նամակին, այլապես շատ կնեղանամ։ Կատակ եմ անում, իհարկե, ես ինչպե՞ս կարող եմ քեզնից նեղանալ... Մեզ մոտ ամեն ինչ կարգին է։ Ծգորս բնակարան է ստացել, տեղափոխվել են արդեն. մեղնից շատ են հեռու, այդ է վատը։ Իսկ որ առանձին են ապրում, այդ շատ լավ է։ Պատկերացնո՞ւմ ես, հարսիս հետ կոնֆլիկտներ ունեցանք, այն էլ՝ մի քանի անգամ։ Ջեմ ասում, թե նա՛ էր մեղավոր։ Համենայն դեպս երիտասարդ ամուսինների մենակ ու առանձին ապրելու անհրաժեշտությունը, ըստ իս, կասկած չի հարուցում։ Պատկերացնո՞ւմ ես, բաժանվելուց հետո ավելի ենք մտերմացել։ Վերջապես թող մենակ ապրելը սովորեն, թող տուն-տեղ դառնան։ Մեծը, իր կամքից անկախ, դայակի պարտականություն է վերցնում իր վրա, իսկ դա ջահելներին դուր չի գալիս. թող, ինչպես ասում են, իրենց յուղով տապակվեն,

թվայնացրել է 1915.info կայքը

ծնողն էլ, ինչքան կարողանա, իր ծնողական պարտքը կկատարի,— այս է ճշմարիտն ու օրինաչափը։ Ամուսնուս գործերն էլ լավ են, միայն սրտից լուրջ գանգատներ ունի, և դա ինձ շատ է անհանգստացնում։ Խոստացել են Կիսլովոդսկ ուղարկել, տեսնենք։ Տանյուշաս էլ սովորում է, հասել է ինստիտուտի երրորդ կուրս։ Լավ է սովորում։ Առանց քեզնից անհարմար ղգալու, ասեմ, որ Տանյան հրաշալի աղջիկ է։ Միայն գլուխս շատ է տանում, թե մի ամառ գնալու եմ Երևան, մորաքույր Աշխենի մոտ, և քաղաքը կտեսնեմ, ասում է, և կարոտս կառնեմ... Ջէ՛, չեմ թողնելու, մենակ և վախենում եմ, և, մանավանդ, քեզ համար ավելորդ անհանգստություն կլինի։ Դեռ առանձին տունտանզ էլ չունես... Տուն պիտի ստանայիր, ի՞նչ եղավ, ե՞րբ կարող ենք քեզ շնորհավորել, գոնե այդ առիթով... Ի՞նչ եղավ այն Անատոլին։ Անունը գիտեմ միայն, ոչ ծանոթ եմ, ոչ հասցեն կամ հեռախոսի համարն ունեմ։ Ընկերուհուդ, Ռոզայի հետ, կապվել չեմ կարող. նրա հետ էլ որևէ կապ չկա։ Եվ այսպես մնացել եմ անորոշ ու անհանգիստ վիճակում։ Դու Անատոլիին գտիր, թող մի անգամ մեզ մոտ անցնի։ Եթե, իհարկե, ձեր տեղրմությունը շարունակվում է, եթե դու հարմար ես գտնում։ Գրիր Գուրգենչիկիդ մասին, երևի կարգին մեծացել է, իմ Բոբյան իսկական ավազակ է... Համբուրում եմ քոլորիդ, մասնավորապես Տանյուշայի կողմից։ Անհամբեր սպասում եմ նամակիս պատասխանին։ Այնպես կուզենայի, որ այդ նամակով քո բախտավորության լուրը հասներ ինձ, և ես այլևս չանհանգստանայի, համոզված, որ իմ սիրելի քույրիկը վերջապես գտել է իր երջանկությունը... ուրիշ նորություն չկա։ Աշխատանքիս տեղում էլ ամեն ինչ կարգին է։ Ավելի լավ օրերի ու լուրթրի սպասումներով, քո Վարվառա»։

Աշխենը երկար ժամանակ կենտրոնանալ չէր կարողանում. նամակի տողերն այնպես էին տպավորվել նրա ուղեղի մեջ, որ և ցավ էին պատճառում, և միաժամանակ շոյում հարազատի սրտացավությամբ։ Տանյան ուզում է գալ Երևան, ա՛յ, դա ամենահաճելի նորությունն է։ Իսկ հնարավորություն ունե՞ս նրան բարձր մակարդակով ընդունելու և ճանապարհելու։ Ինչո՞ւ չէ. փառք աստծո, տունը կա, անկողին ունի, ուտելիքի հարցում դժվարություն չկա։ Աղջկան պետք է կարողանաս քաղաքը ցույց տալ, և՝ ոչ միայն քաղաքը։ Սևան, Գառնի, Սարդարապատ։ Առանց մեքենայի պարզապես հնարավոր չէ։ Անատոլին այս-

թվայնացրել է 1915.info կայքը

տեղ լիներ, նրա միքենան կօգտագործեին,— ժպտում է ինքն իրեն, և այնպիսի թախիծով է շաղախված այդ ժպիտը։ Իսկ եթե Հրանտից միքինա խնդրի՞։ Անհնարին բան է։ Գնդլիկ Հովիկը «ժիդուլի» ունի, ա՜յդ էր պակաս, որ նրա օգնությանը դիմի։ Գուցե Սմբա՞տը մի բան կանի, նա լավ ընկերներ ունի. կմտածենք, այսքան շուտ չարժե անհանգստանալ։ Մի բան միայն պետք է արագացնել, նամակի պատասխանը, և անպայման խոշոր տառերով գրել՝ անհամբեր սպասում եմ Տանյուշային։ Ընդհանրապես ինչ լավ է, երբ մարդ մի բանի, մանավանդ՝ մևկին սպասում է, իհարկե, եթե այդ մեկը հաճելի մարդ է, եթե նրա այցը քեզ ուրախություն կարող է պատճառել։ Հիշում է, պատերազմի ավարտից հետո անցել էր մի քանի տարի, մայր ու աղջիկ ապրում էին կիսատ-պռատ։ Ծանր տարիներ էին, ապրուստը դժվար։ Մի անգամ կորել էր հացի քարտը, մայրը մի կերպ ծայրը ծայրին էր հասցնում։ Մի երեկո ժամանակից շո՛ւտ պառկել էին քնելու, իսկ քունը սուված փորի թշնամին է։ Մևկ էլ ինքը հարցրեց կամաց.

— Մա՛մ, ի՞նչ կուզենայիր, որ հիմա մեր տուն մտներ։— Սպասում էր, որ կասի՝ ուտելիքներով լիքը սեղան։ Իսկ մայրը շատ կամաց, հազիվ լսելի ձայնով ասաց.

— Մևկ էլ մեր դուռը բացվեր ու հայրդ ներս գար, թևկուզ մի ոտանի, մի թևանի...

Երևի ինքը հիասթափվել էր այդ պատասխանից. թուխ-վուխ երեխայի գլխում ի՞նչ խելք կարող է լինել։ Հետո, շատ հետո հասկացավ մոր նվիրական երազանքի քաղցրությունը, մանավանդ այն տարիներին, երբ մայրն էլ իրեն մենակ էր թողել։ Դրանից հետո ինչքան է պատահել, որ գիշերվա մենության մեջ հանկարծ այցի է հկել մի խիստ ցանկալի, բայց անհավանական սպասում.— հանկարծ մայրս ներս մտնի... Վերջին տարիներին այդ հանկարծի մեջ իր բաժինն ուներ նաև Հրանտը, սկզբում որպես ցանկալի տանտեր, որպես իր երեխայի հայր, ուրեմն նաև՝ սիրած ամուսին, իսկ հետո առողջ բանականությունն ըմբռնեցավ ու պահակ կանգնեց դռան տակ, ո՛չ, ներս չեմ թողնի, նա իրավունք չունի... Հիմա էլ, Գետաշենից ստացված նամակից, մանավանդ պատասխանը գրելուց հետո սպասում է ասես հոր այցելությանը։ Հնարավոր բա՞ն է, այսքան տարի հետո։ Ինչո՞ւ է ուշանում քեռի Սահակը, նրա՞ն ինչ պատահեց։ Կամ գոնե նրա տղան այցելեր իրենց. ինժիներ է ինչ-

թվայնացրել է 1915.info կայքը

որ գործարանում։ Իսկ Նրա գալը ինչո՞վ է հետաքրքրում։ Ոչնչով։ Նրա ընկեր Ռուբե՞նն ով է, և մեր գործարանում է աշխատում, քեռի Սահակը նրա օգնությամբ է գտել իր հացեն։ Ռուբենն, կարո՞ղ է հանկարծ... Սա էլ հերթական անակնկալը չէ՞ր լինի։

Հակասական մտքերը մի անհաշտ հրմշտոց են սարքել Աշխենի գլխում։ Նա ձեռքը թափով ճակատին տարավ. այդ մըտքերից աղատվե՞լ էր ուզում, թե՞ հին սովորության համաձայն ճակատին թափված մաղափունջն էր ետ շպրտում։

9.

Սենոյին զանգահարելու հարցում Հրանտ Ստեփանյանը երբեք «նախահարձակ» չէր լինում. և հիշում էր միայն այն ժամանակ, երբ հեռախոսի մեջ լսում էր նրա խոպոտ ձայնը։ Ինչո՞ւ, հիասթափվե՞լ է նրանից, իսկ ե՞րբ է հիացած եղել. այնպես, կիսատ-պռատ ընկերություն է, շարունակվում է իներցիայով։ Կարո՞ղ է այդ սառնության մեջ իր բաժինն ունի նաև Սենոյենց տան վերջին հանդիպումը կնոջ՝ Քնարիկի նկատմամբ շռայլած նրա քաղցր-մեղցր խոսքերը։ Այնքան նկատելի էր նրա խոսելու կեղծ տոնը, որ տուն վերադառնալիս նվարդը դայրույթը թաքցնել չկարողացավ, նրան անհաջող դերասան կոչեց.— Ուրիշների ներկայությամբ պոչ է խաղացնում կնոջ առաջ, և չես կասկածում, որ դա միայն սուտ տպավորություն ստեղծելու համար է։ Կներես, Հրանտ, ասում է, քո ընկերոջ մասին ունեցած թուի-վուիի տպավորությունն ավելի խորացավ...

Ինչքա՜ն ժամանակ է իրար չեն տեսել ու չեն հեռախոսել։ Մի՞թե կտրվեց կապի վերջին թելը։

Հեռախոսը հնչեց զիլ ու տևական։ Ինչպե՞ս չզարմանաս. Սենո՞ն է։

— Ողջույն իմ նախկին ընկերոջը։

— Արդեն նախկի՞ն դարձա, Սենեքերիմ Կիրակոսովիչ։

— Նախկինն էլի մի բան է, ես վախենում եմ, թե քո սրտի դավթարից ջնջվածների ցուցակն եմ ընկել, վերջնականապես։ Մոռացել ես թամամ, ես որ ձայն չհանեմ, դու չես էլ հիշի։ Լավ չի, արևս վկա, դա բոլորովին էլ բանի նման չէ։

— Նույն մեղադրանքը կարող եմ քեզ ներկայացնել, Սենո։ Կարող եմ նաև արդարացնել ինձ ու քեզ, վերջապես զբաղված մարդիկ ենք։

թվայնացրել է 1915.info կայքը

— Դատարկ ու անհամոզիչ պատճառաբանություն, ինչ որ էլ ես ուզում եմ քեզ տեսնել. ընդմիջման ժամին գնում ենք մեր ծանոթ սրճարանը, չե՞ս առարկում։ Ուրեմն կսպասեմ։

Հիմա երկուսով նստել են սրճարանի ամենախուլ անկյունում, նախաճաշում են ու զրույցում։ Հրանտը կտրականապես հրաժարվեց կոնյակից. դեռ չէին անցել առաջին հանդիպման տխուր հետևանքները։ Հիշում է ցավով, երբ տանն ուշքի էր եկել, վերջապես, և դժվարությամբ ոտքի կանգնել ու գնում էր դեպի լվացարան, Արշակը մի կողմ քաշվեց ու փնթփնթաց բթի տակ.— Պա՛պ, քեզնից ինց փիս հոտ է գալիս... Ջարաբաստիկ խմիչքի հոտն էր երևի։ Մի դեպքում «փիս բեռի», մյուս դեպքում՝ «փիս հոտ», կամ պարզապես՝ հոտած քեռի, թե՞ հայր... Այդ օրվանից դեռ ոչ մի անգամ խմիչք չի առել բերանը։ Այսօր էլ Սենոյի հարկադրանքը հաջողություն չունեցավ։

— Դու ինձ մի սոխպիր, միևնույն է, բան դուրս չի գա. թե կարո՞ղ ես, ինքդ էլ հրաժարվիր խմելուց, ախր աշխատանքի ժամին դա ո՞ւմն է պետք։

— Ջեմ կարող և ինձ չի խանգարում։ Այս հարյուր գրամը տրամադրության և աշխատունակության պահում է անհրաժեշտ բարձրության վրա։ Ողջ լինես, քո տրամադրության կենացը։

— Դե պատմիր, տեսննենք ի՞նչ կա ձեզ մոտ, գործերդ ինչպե՞ս են։ Մի անգամ, չգիտեմ ով ասաց, որ ձեր սիստեմում ստուգումներ են կատարում, ինչպե՞ս անցավ։

— Հինգ ու խաչ։ Գիտես, որ ես թաց տեղ նստողը չեմ։

— Այսինքն՝ գործե՞րն էին լավ, թե՞ ստուգումն էր անհաջող։

— Երկուսն էլ լավ էին, շատ հաջող, խոսելու վրա չի՞... Այդ հանձնաժողով կոչվածին պիմավորողն ու հյուրանոցում տնղավորողը ես էի։ Լավ ժողովուրդ էին, երկու տղամարդ, մի կին։ Հենց նույն օրը սրանց տարա Սևան։ Ախթամարում, զորս դու պատվիրեցցես. մի պատիվ տվեցի, շշմել էին։ Մի կենացի ժամանակ էլ, կարծես ի միջի այլոց, ասացի, խնդրում եմ այս ուտել-խմելը չկապեք ձեր ստուգումների հետ, ինչ թերություն որ դուք կարձանագրեք, մենք շնորհակալությամբ կընդունենք և կաշխատենք վերացնել։ Այս խոսքը շատ դուր եկավ սրանց, մանավանդ Տատյանա Սերգեևնային։ Ափսոս, որ սա ոչ ջահել էր, ոչ էլ սիրուն... Հաջորդ օրը սրանք գործի անցան։ Ընդմիջմանը՝ նորից մի լավ նախաճաշ։ Չորս օր մնացին, սրանց չթո-

թվայնացրել է 1915.info կայքը

ղեցի, որ կարգին ուշքի դան։ Մի քանի խելոք բաներ ասացին, իհարկե, բանավոր, իսկ գրավոր եզրակացության մեջ ամեն ինչ տեղը տեղին էր։ Էդպես է աշխարհի բանը։ Հանգուցյալ պապս ասում էր,— հացը մարդու աչքը համ կբացի, համ էլ կհանի...

— Հիմա որ ասեմ քո արածը բանի նման չէ, կասես ճառ ես ասում։

— Գիտեմ, որ դու չես անի, դա քո խելքի բանը չի, միայն չնեղանաս, խնդրում եմ։

— Թերությունները թաքցնելուց մի՞թե գործը կարող է շահել. ախր դա պարզապես հակապետական արարք է. ո՞ւմն է պետք ջայլամի այդ զզվելի քաղաքականությունը։

— Նախ ջայլամն անխելք կենդանի է, խնդրում եմ ինձ նրա հետ չհամեմատես... ես քեզ ասացի, որ ոչինչ չեն թաքցրել. լուրջ թերությունների մասին բանավոր են ասել, թերթևներն են գրի առել։ Մենք էլ կաշխատենք վերացնել այդ բացերը։ Դու կարծում ես, որ ամեն ինչի մասին գրեին, վերադասին հասցնեին, մեր գրքի որակը դրանից փոխվելո՞ւ էր. վիակ բանը, որ կարող էինք շահել, մեր խայտառակվելն էր։ Ինչո՞ւ, հանուն ինչի՞։ Գիշեր-ցերեկ չարչարվում ենք, ինչո՞վ արժանի չենք լավ խոսքի։ Չէ, ինչպես շատ հարցերում, այս դեպքում էլ իմ ու քո փիլիսոփայությունը իրար չեն բռնում։ Թողնենք այս անիմաստ բանավեճը։ Հա, էս մեկն էլ չեմ կարող չասել. մի երեկո էս երկու տղամարդուն տարա հին ծանոթուհիներից մեկի մոտ։ Հասկանալի է, որ նախօրոք ամեն ինչ ուղարկել էի։ Տանտիրուհին էլ կանչել էր իր երկու ընկերուհիներին։ Հանճարեղ քեֆ արեցինք...

— Ուրեմն, ոչ միայն դու, խայտառակել ես նաև մեր կանանց. ամոթ է, ամոթ։

— Այ տղա, դու նորի՞ց սկսեցիր, ինչ է, քո կարծիքով մեր կանայք սրբուհինե՞ր են... Այ, թե խելք ունես, էսօր քեզ մի անտիկա տեղ տանեմ։

— Վերջ տուր, խնդրում եմ. այնքան խայտառակ բաներ լսեցի, որ սուրճն անգամ կուլ չի գնում։ Եվ դու ինչպե՞ս ես ամեն օր տուն գնում, կնոջդ աչքերին նայում, խիղճդ էլ քեզ չի տանջում, այս է սարսափելին։ Իսկ մտքում Նվարդն էր. հեռու մի ստվերի տակ էլ Աշխենն էր կուշ եկել։ Ինքն ինչո՞վ է լավ Սևնոյից...

թվայնացրել է 1915.info կայքը

— Կնոջս շատ լավ էլ նայում եմ, խիղճս էլ հանգիստ է, օյիններ մի թափիր։

— Իսկ եթե, հետու իրենից, քո ջնարիկը փորձեր վարձահատույց լինել, դու կհանդուրժեի՞ր։

— Անխելք հարցեր ես տալիս, ընկեր գլխավոր ինժեներ, ջնարիկը փորձեր, ես նրա հետն էնպե՞ս կանիժեի։ Համեմատելու բա՛ն գտավ, էդ բաները միայն տղամարդուն կարելի է, հասկացիր։

— Իսկ քո այդ ծանոթ կանայք, որոնց մոտ հաճախում ես, նույնիսկ հաճախորդներ ես տանում, նրանք ընտանիք, ամուսին չունե՞ն։

— Ազատն էլ կա, ընտանիքավորն էլ։

— Եվ այդ ընտանիքավորի ամուսինն էլ կարծում է, թե օրինավոր կին ունի։

— Հետն էլ անիծած, նրա ամուսնու դարդն է՞լ ինձ են տվել։

— Ջէ՛, Սենո, չնեղանաս, խնդրում եմ, դու ոչ միայն փչացած, այլ նաև ահավոր էգոիստ մարդ ես։

— Իսկ ես չեմ նեղանում, այդ խոսքը նույնիսկ կոմպլիմենտ եմ համարում ինձ համար։ Կյանքը մի անգամ է տրվում մարդուն, ես ինչո՞ւ պիտի ինձ զրկեմ այդ հաճույքներից։ Հա՛, մոռացել եմ քեզ ասել, թե ինչպես անցավ քեռուս տղայի հարսանիքը.

— Այն, որ երրորդ անգա՞մն էր ամուսնանում։

— Հենց նա։ Իզուր չեկար։ Մի մեծ դահլիճ էր վերցրել. երեք հարյուրից ավելի մարդ կար։ Ի՞նչ սեղան էր. էսքան տարվա սեղանին մոտ կանգնած մարդ եմ, էդպիսի բան չեմ տեսել։ Ուտելիքը, ինչ-որ սիրտդ ուզի։ Ի՞նչ փողեր շաբաշի գնացին. հնարավոր չի հաշվել։ Երեք հարյուր ռուբլի էլ իմ գրպանից գնաց. երևի ամենաժլատը ես էի, ուղղակի անհարմար էի զգում։

— Իսկ այդ քեռուդ տղան ի՞նչ գործի է։

— Մի թեթև ցեխավիկ է, իսկ կինը... Ասել եմ չէ՞, մի քանի տարով իրենից մեծ է, բայց դեռ ոչինչ, բռնելու տեղ ունի, իսկ փողին հաշիվ չկա։

— Ի՛նչ է, նա է՞լ ցեխավիկ է։

— Ո՛չ, նա ընդամենը ցեխավիկի աղջիկ է, հայրն էլ երկու տարի առաջ է մահացել, թողածը իսկական ժառանգություն է։

— Իսկակա՞ն թե՞ հարամ։

— Այ տղա, փողիս հարա՞մը որն է։

թվայնացրել է 1915.info կայքը

— Է՛, Սիմո, Սեմո, ես ցավով ու զարմանքով նտաժում եմ, թե այսքան տարի ինչպե՞ս ենք ընկերություն արել, ախր մենք բոլորովին տարբեր մարդիկ ենք։ Ջո տրամաբանությունը, քո դատողությունները...

— Բթե փոշմանել ես, կարող ենք ապահարզան տալ.— ու թափով կուլ տվեց բաժակի պարունակությունը։

— Ջգիտեմ, մենք նորից կհանդիպե՞նք թե՞ ոչ, բայց ես քեզ, նախկին ընկերոջ իրավունքով, խորհուրդ եմ տալիս ուշքի գալ, քանի դեռ շատ ուշ չէ. սրա թթուն մի օր քո բկին կմնա, և այն ժամանակ, վախենում եմ, թե փրկության դռները կփակվեն քո առաջ։ Ջգուշացիր, Սեմո, քանի ուշ չէ։

Հրանտը նկատելի հուզված էր, և չնչառությունն էր անկանոն դարձել։

Սեմոն լուռ էր, և, ասես, ի պատասխան ընկերոջ ասածի, մոտ կանչեց մատուցողին.

— Սոնյա ջան, մի շիշ հանքային ջուր...

10.

Օրեկոն դանդաղ իր փեշերն էր փռում քաղաքի վրա։ Պատուհաններում, հերթը խախտելով, սկսեցին առկայծել էլեկտրական լույսերը։ Մութը գառնում էր դրության տերը, և ստիպում որ մարդաշատ փողոցները նույնպես թարթեն իրենց լուսատու աչքերը։

Մանրացող երեկոյի հետ ավելի էր թեթևանում Լուսիկ մայրիկի վիճակը։ Եվ նա որերորդ անգամ հարսին խնդրում էր այցելության գնալ մորը, ուտելիք տանել նրա համար։

— Ասել ես՝ ճաշ չեփես, ես կբերեմ, էլ ո՞ւր ես ուշացնում։ Գնա՛, մատա՛ղ քեզ, Արշակին էլ տար, լավ եղանակ է, համ երեխան կթարմանա քնելուց առաջ, համ էլ տատին կտեսնի։ Ես արդեն լավ եմ, ինձ համար մի անհանգստանա։

— Առավոտյան դեռ ջերմություն ունեիր, որտե՞ղ մրսեցիր, բան չեմ հասկանում։

— Աղջիկ ջան, էստեղ ի՞նչ կա չհասկանալու. դե, ջահել չեմ արդեն, բա ի՞նչ ես ուզում։ Ասում են՝ պատրաստի խմորին՝ մի դդալ ջուր։

— Ջէ՛, մայրիկ, ինձ դուր չի գալիս, որ դու վերջերս հաճախակի ես հիվանդանում։

թվայնացրել է 1915.info կայքը

— Բան չկա. հին ոսկոր եմ, կդիմանամ։ Դուք գնացեք, ես էլ մի քիչ աչքս կփակեմ, մինչև կգաք։ Կարող է Հրանտի ժողովն էլ շուտ պրծնի։ Արշակ ջան, մոտ արի, մի էդ նախշուն թշերդ պաչեմ. օխա՜յ, ես քո հո՞տին մատաղ։ Դե՛, գնացեք, խնամուս իմ բարևները տար։

Հիմա Լուսիկ մայրիկը մենակ է, ինքն իր մտքերի հետ էլի, փառք աստծո, տղայի վիզը ծուռ չմնաց, տանն Արշակ է մնծանում. հոր հետ էլ շատ է կապված։ Աղջիկ վերցնելու հարցը մնաց, Գարեգինը պատասխանի է սպասում։ Կարո՞ղ է Նվարդն էլ երեխա ունենա, բոլորն էլ մի փոքր հույս տալիս են։ Ի՞նչ բախտավորություն կլիներ, մանավանդ հարսիս համար. ախր շատ լավ իսան է։ Դե՛, Հրանտս էլ մեղք է, չնայած...

Այդ ինչ է, դռան զա՞նգն է, ո՞վ կարող է լինել, երևի հարեվաններից է։

— Ներս եկ, կարծեմ դուռը բաց է։

Անհամարձակ ներս մտան երիտասարդ ու սիրունատես մի կին, մեկ էլ Արշակի հասակին մի տղա երեխա։ Անծանոթ են։

— Լուսիկ մայրիկ, տղայիս հետ եկել եմ ձեզ տեսնելու. լսեցի, որ հիվանդ եք, կարելի՞ է։— Ու կինն անհամարձակ առաջ է գալիս։

— Մոտ արի, աղջիկ ջան, նստիր, ահա, էդ աթոռին,— և ուշադիր նայում է անսպասելի այցելուին։

— Ես ոնց որ քեզ տեսել եմ, մեր դիմացի այգում։

— Ճիշտ է, մայրիկ, մի անգամ հանդիպել ենք, ձեր Արշակն ու իմ Գուրգենն էլ միասին խաղացել են։

— Հենց էդ մի անգա՞մն ենք հանդիպել,— ու քննական հայացքը հառել է երիտասարդ կնոջ դեմքին,— ախր քո աչքերը ինձ շատ են հարազատ։

— Հիվանդանոցում էլ ենք հանդիպել, մի քանի տարի առաջ.— ասես օդ չկա սենյակում, հիմա կխեղդվի։

— Աղջի, դու հո էն Աշխենը չե՞ս, ով գիտի էս երեխան էլ...

— Ճիշտ է, մայրիկ, Գուրգենս ձեր թոռն է, բերել եմ, որ գոնե մի անգամ տեսնեք։

— Վա՜յ, էս ի՞նչ խաբար էր,— ու մայրիկը թափով նստեց անկողնում. այդ ո՞վ է ասել, թե նա հիվանդ է։— Ու դարձավ մոլորված թոռանը,— մոտ եկ, բալիկ ջան, տատիկը մեռնի քու արևին...

Գրկել է երեխային ու համբուրում է, համբուրում։ Հոտ է

թվայնացրել է 1915.info կայքը

քաշում։ շոյում է այտերը, մազերը, ու նորից է համբուրում։ Գուրգենի կողմից էլ՝ ոչ մի դիմադրություն, միայն զարմացած մեկ մորն է նայում, մեկ այդ ճերմակ մազեր ունեցող տատիկին, որի աչքերում այնքան կարոտ ու արցունք կա...

Աշխենն իրեն հազիվ է զսպում։ Եվ համոզվում էր վերջնականապես, որ այս տունը գալու վերաբերյալ իր տատանումները բավարար հիմքեր չուներին

— Ասացիր երեխայի անունը...

— Գուրգեն է, մայրիկ, ռազմաճակատում զոհված հորս անունն է։

— Լավ ես արել, քո բալիկն էլ իր ծնողի հարգն իմանա։ Իմ Արշակին իր պապի անունն ենք տվել։ Ափսոս, որ տանը չի, միասին կխաղային։ Գուրգեն, բալիկս, դու հիշո՞ւմ ես Արշակին. մի անգամ միասին հեծանիվ եք քշել։

— Ես, տատիկ, ցեմ հիսում։

— Ափսո՜ս,— ու շատ կամաց ավելացրեց,— եղբայրներն իրար չեն ճանաչում։ Քոռանա՜ աստծու աչքը։ Մեղա՜ քեզ...

Տիրեց մի ճնշող լուություն։ Աշխենն ուզում էր պատմել-ասել հուսիկ մայրիկին, թե ինքն ինչպես մեղավոր է նրա առաջ, ինչպես որոշել էր Թոռանը ցույց տալ հարազատ տատիկին, բայց ամեն անգամ տատանվել ու հետաձգել է։ Դժվար բայց և ցանկալի պարտականություն էր։ Այսօր էլ նա այդ որոշումը չի ունեցել. պատահաբար այգուց տուն ճանապարհվելիս, հեռվից նկատեց տիկին Նվարդին, երեխայի հետ քայլում էին արագ։ Հասկացավ, որ տեղ են գնում ու երևի շուտ չեն վերադառնա։ Գիտեր նաև, որ այսօր ակտիվի ժողով է, ուրեմն Հրանտն էլ այնտեղ կլինի։ Գտավ, որ հարմար ժամ է։ Եվ առանց երկար մտածելու, քայլերն ուղղեց այս կողմը։ Գուրգենը զարմացած էր, հարցրեց անհանգիստ։

— Մա՛մ, ո՞ւր ենք գնում, ես տուն եմ ուզում։

— Այստեղ մի լավ տատիկ կա, բալիկս, հիվանդ է, նրան տեսնենք ու ետ գանք։

Լուությունը երկարեց։

— Ամա էն ժամանակ դու ինձ լավ ցանեցիր, սկի չէի ապասում։

— Չկարողացա, մայրիկ, ներող եղեք։

— Է՛հ, հիմա ո՛ւմն է պետք իմ ներել կամ չներելը։ Չեմ մոռանում, որ Գարեգինն էլ էր ինձ մեղադրում։

թվայնացրել է 1915.info կայքը

— Գարեգինն ո՞վ է, մայրիկ։

— Պրոֆեսոր Սավոյանն, էլի, դու նրա օգնությամբ էիր փախել... Ջնեղանաս էդ խոսքի համար։

— Ջնե՛ղանում. դե՛, իսկապես որ փախա գլխապատառ փախցրի տղային։

— Էդ Գարեգինը հանգուցյալ ամուսնուս ընկերներից է։ Բան չունեմ, լավ մարդ է։ Ես որ թոնթորացի ու կարծեմ, անիծեցի էլ քեզ, ներող կլինես։ Դե, ինչ գիտեի ո՛վ ես, ի՛նչ ես, ո՞ւմ երեխան ես տանում... Սա ասում է՝ զարմանում եմ, Լուսիկ, որ քեզ նման փորձ ու տարիք ունեցող մայրը դատապարտում է մի ջահել ու անփորձ մոր՝ իր երեխային տեր կանգնելու քայլը, բա եղա՞վ, ասում է։ Է՛հ, կյանքում ինչեր ասես, որ չեն լինում, շատ բան եմ տեսել ու լսել, բայց էս մեկը...

— Մայրի՛կ, ես միայն մի խնդրանք ունեմ ձեզ.— Աշխենի բերանում բառերը դժվար էին ճանապարհ գտնում,— դուք բոլորովին չկասկածեք, որ կարող եմ երկրորդ անգամ սխալվել, խոսքս ձեր տղայի մասին է... Ով ես ինձ մխիթարված եմ զգում միայն նրանով, որ այնուամենայնիվ, պատճառ չդարձա Հրանտի ընտանիքի քայքայման։

Լուսիկ մայրիկն անքթիթ հայացքով նայում էր Աշխենին, ու մի թույլ ժպիտ կար նրա դեմքին, երևի բավականություն արտահայտող ժպիտ։

— Երևի Նվարդա իզուր չէր ասում՝ էդ Աշխենը խելոք աղջիկ է երևում. տեսնում եմ, որ լավ էլ հոգի ունես, աստված քեզ բախտավորություն տա։

— Շնորհակալ եմ, մայրիկ։ Ով ուզում եմ ասել՝ սա վերջին անգամն էր, որ դուք տեսաք ձեր թոռանը։

— Աղջի՛, էդ վերջին բառը մի՛ ասա.— ու մայրիկը նորից իր գիրկն առավ Գուրգենին։— Բա երեխան ո՞նց կարող է առանց հոր մեծանալ. էս ի՞նչ զրույց է։

— Ես նրան նաև հայրություն կանեմ. նրա բախտի համար մի անհանգստացեք։

— Հետո՞, մինչև ե՞րբ։

— Ես հույս ունեմ, որ հետոն ավելի լավ պիտի լինի, քան մինչև այսօրն էր. արդեն տուն ենք ստացել, մեր անկյունն ունենք։— Ուզում էր ասել՝ Հրանտի օգնությամբ, հարմար չգտավ. ով գիտի, մեծ կին է, կարող է սխալ մեկնաբանել։

— Տա աստված, որ ձեզ մոտ ամեն ինչ լավ լինի։ Մենք

թվայնացրել է 1915.info կայքը

էլ տեսնենք, ուզում ենք մի աղջիկ էլ վերցնել. Արշակս թող առանց քրոջ չմեծանա։

Ու կարկամեց միանգամից. այ քեզ անխելք պատահել, էդ խո՞սքն ինչի ասացիր, սրան շատ պե՞տք էր կամ ո՞ւր ես նրա առաջ ձեր տան գաղտնիքները բացում, քո հարսի չբերությունը աշխարհով մեկ անում։ Իբր թե նա չգիտի, նորություն է նրա համար։ Է՜խ, աշխարհ, աշխարհ...

— Իսկ ինչո՞ւ ես շտապում, մայրիկ, գուցե դեռ աղջիկ կունենաք. թող Նվարդը Մոսկվա գնա, բուժման այնքան հաջող դեպքեր կան։

— Հա՞,— մայրիկը թերահավատ Աշխենին էր նայում,— լավ ես ասում, գուցե էդ մեկն էլ փորձենք... Մի բացբերան քույր ունեմ, մինչև հիմա էլ կռկռում է։

Աշխենն ուզում էր ասել՝ գիտեմ, լսել եմ այդ Սրբուհու մասին, նրա փիլիսոփայությունը ես էլ չեմ պաշտպանում, բայց խոհեմաբար լռեց, պետք չէ, որ Լուսիկ մայրիկը զարմանքով իմանա, թե իրենց տան բոլոր գաղտնիքներից տեղյակ է այս աղջիկը։

— Մայրի՛կ, դե՛, մենք գնացինք,— Աշխենը ոտքի կանգնեց.— Կներեք, որ դատարկ եկա ձեզ մոտ. այնքան անսպասելի էր մեր գալը։ Գնանք, քանի մարդ չի եկել։ Ձեզ առողջություն եմ ցանկանում։

Կռացավ Լուսիկ մայրիկի վրա, համբուրեց նրա խորշոմած այտերը.

— Մորս փոխարեն, մայրի՛կ,— ու լցված դուրս փախավ տնից։ Գուրգենը հազիվ էր հասնում մոր ետևից։

— Մա՛մ, ո՞ւր ես փախցնում, կամաց գնա։

— Շտապում եմ, բալիկս, ուշանում ենք, գոնե այս բակից հեռանանք...

— Ինցի՞ց ենք ուշանում, մա՛մ։

— Է՜, տղաս, կարծես թե մենք նո՞ր ենք ուշանում...

11.

Աշխենի պատասխան նամակը գրվել է մի ամիս առաջ, և քեռի Սահակն արդեն նրանց մոտ է։ Մեծ տղայի՝ Օրվանդի հետ են եկել։ Ու հիմա նստած թեյում են ու զրուցում։

— Քեռի Սահակ, այս օրերին շատ անհանգիստ էի, ձեր ու-

թվայնացրել է 1915.info կայքը

շանալու համար, մտածում էի՝ կարող է նամակս տեղ չի՞ հասնել։

— Ո՛չ, աղջիկս, նամակդ շուտ եմ ստացել։ Հենց պատրաստվում էի, որ գամ, մեկ էլ սրտիս մատույցներում մնացած արկի մի բեկոր կա, տեղահան եղավ, ուժեղ ցավեր սկսվեցին։ Սա էլ երկրորդ անգամն է, այսքան տարիների ընթացքում։ Ստիպված մի տասնհինգ օր պառկեցի խանլարի հիվանդանոցում։ Մի կերպ ճանապարհը փակեցին։ Ասում են՝ անհարմար տեղ է, վիրահատել չի կարելի։ Այս անգամ էլ դուրս պրծա, տեսնենք։

— Ուրեմն դուք էլ պատերազմում տառապածներից եք,— այնպիսի կարեկցական տոն կա Աշխենի ձայնի մեջ։

— Այն էլ՝ կարգին տառապածներից։

— Հայրս հինգ անգամ վիրավորվել է, խոսակցությանը միջամտում է Երվանդը։

— Գիտե՞ս, նույն արկն ինձ էլ շարքից հանեց, հորդ էլ։ Միասին ընկանք հոսպիտալ, նրան փրկել չկարողացան...

Աշխենը թաշկինակը տարավ աչքերին։

— Պետք չէ, աղջիկս, արի նրա հիշատակը հարգենք առանց լացի, Գուրգենն իմ մեջ միշտ էլ հպարտության զգացում է առաջացրել։

Աշխենն զգաստացավ միանգամից։

— Լավ, կաշխատեմ։

— Դու ավելի լավ է ինձ ցույց տուր այն լուսանկարը, որի մասին գրել էիր նամակում։

Աշխենը շտապ բերեց մոր զարդատուփը։

— Այդպես էլ գիտեի. ես ու Գուրգենն ենք։

— Վա՛յ, իսկապե՞ս, քեռի Սահակ.— Աշխենը շառագունել էր այդ անսպասելի հայտնագործումից։

— Ձեր աչքերը սուր են, մի լավ նայեցեք, տեսեք նմանությո՞ւն չկա. երեսուն տարվա նկար է։

Աշխենն ու Երվանդը փոխեփոխ նայում, ասես ուսումնասիրում էին խունացած լուսանկարը։

— Իսկապես որ դուք եք, աչքերը, ճակատը, միայն մազերի գույնն է փոխվել։

— Հայրի՛կ, կասկած չկա, որ դու ես։

— Տղա՛ս, ուրեմն կասկածո՞ւմ էիր իմ խոսքի ճշտության վրա։ Քառասուներեք թվականի դեկտեմբերին ենք նկարվել,

թվայնացրել է 1915.info կայքը

Ջանկոյի մոտ Միասին կուսակցության շարքերը ընդունվելուցինք։ Հաջորդ օրը մեզ մոտ մի լուսանկարիչ եկավ դիվիզիայի շտաբից, նկարեց կուսակցական տոմսի համար։ Հիշում եմ, սանր չունեինք, մատներով մի կերպ հարդարեցինք մեր մազերը, ես Գուրգենինը, նա՝ իմը, դե, հայելի որտեղի՞ց։ Հետո էլ Գուրգենս խնդրեց էս ջահել ֆոտոդրաֆին, որ մեզ միասին նկարի։ Լավ տղա էր, չմերժեց։ Ես էլ մեր տունն եմ ուղարկել այս նկարից, բայց նամակը տեղ չի հասել, լավ է, որ ձեզ մոտ մնում է։ Ահա՛, տեսնք, վերջում իմ անուն ազգանունն է գրել Գուրգենը, մի «ակ» է կարդացվում, մի «յան», ժամանակն ինչո՞ր ասես, որ չի անում։

— Թեյը սառից, նորից լցնե՞մ, քեռի Սահակ։

— Լցրու, աղջիկս, ամենախելոք խմիչքը թեյն է։ Այ տղա, Երվանդ, էն պայուսակի մեջ մայրդ բան-ման է դրել, խոսքով ընկանք, մոռացա. մի մեջտեղ բեր։

— Ի՞նչ նեղություն է, քեռի Սահակ,— սրտնեղեց Աշխենը, միաժամանակ ինքն իր վրա էր դառնացած, որ հյուրերի առաջ դնելու կարգին բան չունի. լավ է, գոնե մուրաբա կա։

— Նեղությունս ո՞րն է, աղջիկ ջան, մի երկու գաթա է, մեր կողմերում ընդունված է, մի քիչ էլ միրգ է, ընկույզ է, սալորի չիր է։

Երեխան բակից տուն եկավ քրտինքի մեջ կորած։ Ու զարմացած անծանոթ քեռիներին է նայում։

— Բալիկ ջան, ծանոթացիր, քեռի Սահակը քո պապիկի ընկերն է, քեռի Երվանդն էլ՝ նրա տղան է։

Երեխան մոտեցավ, մեծավարի ձեռքը մեկնեց քեռիներին ու կամաց ասաց՝ Գուրգեն է անունս։

— Գուրգե՞ն,— զարմացավ քեռի Սահակը,— ես քո անո՞ւնին մատաղ,— ու կարոտով համբուրեց երեխային,— Աշխեն, տղան քրտնած է, շորերը փոխիր, չմրսի։

Իսկ երեխայի աչքը սեղանին շարված մրգերի վրա էր։ Նվ դա չվրիպեց Սահակի ուշադրությունից։

— Էդ բոլորը ձեզ համար է, լավ տղա, քո անծանոթ տատիկն է ուղարկել, լվացվիր ու արի կեր։

Իսկ Գուրգենը զարմացած մտածում էր մեծավարի,— այս քանի՞ տատիկ ունի ինքը...

Աշխենը ներողություն խնդրեց ու երեխային տարավ խոհանոց։

թվայնացրել է 1915.info կայքը

— Երվանդ, էս ի՞նչ լավ եղավ, որ Աշխենին գտանք. քո չարչարանքն էլ կա էս գործում, ղուրանաս։

— Ինչ լավ էլ բալիկ ուներ, հայրի՛կ։

— Անունն էլ Գուրգեն է դրել, շա՜տ ապրի։

— Իսկ ամուսինն ո՞վ է, ի՞նչ է, չի երևում։

— Իսկապես։ Նամակում երեխայի մասին գրել էր, ամուսնու մասին՝ ոչ մի խոսք։ Չհարցնե՞նք։

— Անհարմար է, հայրիկ, երևի կիմանանք, կամ ինքը կասի, շտապելու բան չկա։

Ներս մտավ Աշխենը, նորից ներողություն խնդրեց։

— Երեխայի շորերը փոխեցի, ուտելու բան տվեցի։

— Միրգ ու գաթա էլ տար, թող ուտի։ Իսկ մենք հիմա գնանք, աղջիկս, տղայիս համար սառնարան պիտի առնենք։ Մի այսպիսի բնակարան էլ սա է ստացել, գործարանն է տվել, շատ գոհ ենք։ Կահավորենք, գուցե սա էլ տուն-տեղ դառնա։

— Երվանդ, իսկ դուք ո՞ր գործարանում եք աշխատում։

— Հաստոցաշինական։ Քանի տարի էր, սպասում էի, վերջապես անցած ձմեռն ստացա։ Աջափնյակում է և վատ բնակարան չէ։

— Բարով վայելեք։

— Շնորհակալություն, դուք՝ նույնպես։

Աշխենն ուզում էր նաև հարցնել՝ իսկ ուրիշ ո՞վ կա ձեր այդ նոր տանը, կին, երեխա, անհարմար զգաց, հետո, մի ուրիշ անգամ։ Իսկ այդ «տուն-տեղ դառնա՞լն» ինչ է նշանակում. մի՞թե ազատ է։ Քեռի Սահակն էլ ասում է մենք գնանք, ո՞նց կլինի։

— Ի՞նչ է, մենք այլևս չե՞նք հանդիպելու։ Աշխենի հարցի մեջ չթաքցրած երկյուղ կա։

— Ո՞նց թե չենք հանդիպելու. վաղը երեկոյան կգանք, տանը կլինե՞ք։ Կնստենք, կխոսենք կարգին։ Մեր իսկական բարեկամությունը նոր է սկսվում։ Մի անգամ տղայիդ հետ քեզ մեր գյուղն եմ տանելու, լավ անտառներ ու լճեր ունենք, պատմական գյուղ է։

— Սիրով կգամ, քեռի Սահակ։ Բայց դա հետագայի պլան է. հիմա ես այնքան կուզենայի լսել դրվագներ հորս կյանքից, ձեր մարտական կենսագրությունից։

— Կպատմեմ, բա ինչպե՞ս։ Էդ արդեն՝ վաղը։

Հիմա տանը նստած են երկուսով, Աշխենն ու Սահակ քեռին։

թվայնացրել է 1915.info կայքը

Օրվանդը ժոլով ուներ, չեկավ։ Իսկ Գուրգենը, օրվա խաղ ու վազքից հոգնած, քնել է արդեն։

— Գուրգեն Մաւգարյանի հետ ծանոթացա Կրասնոդարի հոսպիտալում.— քեռի Սահակն այսպես սկսեց իր պատմությունը։— Դա քառասուներկու թվականի մարտ ամիսն էր։ Ղրիմում էինք վիրավորվել, տարբեր զորամասերում, ու ընկել էինք նույն հոսպիտալը։ Ես ոտքից էի վիրավոր, նա՝ թևից։ Թեթև վերքեր էին։ Ծանոթացանք ու շուտ էլ մտերմացանք։ Շատ էր մտածում կնոջ ու աղջկա մասին, անընդհատ նրանց էր հիշում, հետագա պլաններ էր մշակում, էս անտեր կռիվը վերջանա, ասում էր, տուն գնանք, մի հինգ-վեց երեխա ունենանք, տունը լցվի ուրախությամբ, հարս ու փեսայի, թոռների տեր դառնանք. ա՜խ, ասում էր, երանի էդ օրվան։ Միայն մենք իրար չպիտի մոռանանք, հա՜, իրար մոտ գնալ-գալ կունենանք, մեր երիտասարդների ուրախություններին կմասնակցենք, դեռ ով գիտի, գուցե կարողանանք մեր ընկերությունը բարեկամությա՞ն վերածել... Գուրգենն սկսեց երգել։ Ճիշտ է, բարձր ձայն չուներ, բայց քաղցր էր երգում, իսկ աչքերում այնքա՜ն կարոտ կար...

Քեռի Սահակն ընդհատեց պատմությունը, ծխախոտ վառեց ու ծխում էր, և ինչպիսի՜ ագահությամբ։

— Իսկ ծխելը երևի ձեզ վնաս է, ինչո՞ւ չեք թողնում։

— Ջեմ կարողանում, բժիշկները շատ են ստիպել, չի ստացվում։ Իսկ Գուրգենը շատ քիչ էր ծխում, օրվա մեջ մի քանի հատ, բայց խմիչքի նկատմամբ անտարբեր չէր։

— Հայրս շա՞տ էր խմում, քեռի Սահակ, հիշում եմ, մեր հարևանուհիները մեկ-մեկ մորս երեսովն էին տալիս, մայրս էլ վիրավորվում, լաց էր լինում։

— Ղալաթ էին անում էդ չայչանակները։ Ես Գուրգենին հարբած չեմ տեսել, և ոչ մի անգամ, բայց անտարբեր չէր, ինչ ճիշտ է, ճիշտ է։

Կրասնոդարի հոսպիտալից մեզ միասին ուղարկեցին մի ուրիշ զորամաս, գնդացրային վաշտում էինք, ես դասակի հրամանատար, նա՝ ջոկի։ Զարմանալի բան էր, ես պաշտոնով էլ էի նրանից բարձր, կոչումով էլ, բայց մեր մեջ մեծը նա էր, նրա խոսքն էր որոշողը։ Այդպես էլ ես նրան կոչում էի՝ մեծ ախպեր, իհարկե, ոչ զինվորների ներկայությամբ։ Ծանր մարտերի շատ ենք մասնակցել, դժվարություններ շատ ենք քաշել, բայց միշտ լավատես ենք եղել, հավատացել ենք և մեր հաղ-

թվայնացրել է 1915.info կայքը

քանակին, և մեր տուն դառնալու բախտին։ Մի անգամ Ուկրաինայում մի անխելք կռվի մեջ ընկանք։ Քառասուներկուսի վերջերին էր։ Նահանջել ու դիրքեր ենք բռնել Ձորաբերանին, մի մեծ գյուղի մոտերքում։ Ուշքի ենք գալիս, որ առավոտյան հարձակման գնանք, ուզում ենք այդ գյուղը գրավել։ Մեր զորամասն էլ շատ է բզկտված, քանի օր է կռիվ տալով նահանջում ենք։ Ճիշտը որ ասենք, վրաներս հալ չկա, ի՞նչ հարձակում, բայց գնդի հրամանատարը մի ջահել ու իր ասածի փոխգնդապետ, գլուխն էր մտցրել, թե այդ գյուղը պիտի գրավենք, հո անընդհատ չե՞նք նահանջելու։ Էդ անտեր նահանջն էլ ծանր բան է, մարդուս խեղճացնում է ոչ այնքան ֆիզիկապես, որքան հոգնպես ու բարոյապես։ Մի խոսքով արդեն լույսն ուզում է բացվի։ Մեկ էլ տրվեց հարձակման ազդանշանը։ Խրամատներից դուրս պրծանք ու առաջ ենք վազում։ Ի՞նչ վազել, անձրևից հետո հողն այնպես է փափկել, որ կարգին քայլել չենք կարողանում։ Մոտենում ենք գյուղին, այդ գյուղի անունը չեմ հիշում, մեկ էլ ֆաշիստների մի զորամաս, մեզնից մի երկու անգամ ավելի, դուրս եկավ տների արանքից ու ինչ կրակ բացեց մեզ վրա, մի իսկական փոթորիկ։ Ամեն մեկի ձեռքին մի ավտոմատ, ձեռքին չէ, փորին դրած կրակում են և, համարյա, առանց ընդմիջման։ Հետո իմացանք, որ դրանք բոլորն էլ հարբած էին, ու վախը մոռացած, ամբողջ դաշտի լայնությամբ բաց շղթա կազմած, գալիս են մեզ վրա։ Մեր աչքի առաջ սրանց գորշ շինելներն են, իսկ ականջներում՝ ավտոմատների ճարճատյունն ու հարբած ֆրիցների հոհոցը։ Մեկ էլ թիկունքից կարգադրություն եկավ.— Նահանջել դեպի ձորը։ Իսկ մինչև այդ ձոր կոչվածը մի չորս հարյուր մետր կլինի։ Կրակելով նահանջում ենք։ Մեր բախտից էս ֆաշիստները կրակում են առանց նշան բռնելու, թե չէ ոչ մեկս սաղ չէինք պրծնի։ Այդ դաշտում խոտի ու մեծ դեզեր կան մնացած, երևի տեղափոխել չեն հասցրել։ Վազում ենք էս դեզից էն դեզի տակ, մի երկու անգամ կրակում ենք ու նորից վազում։ Դե՛, վազելս որն է, այդ ցնխից ոտներս, հազիվ ենք հանում։ Ու նկատում եմ, որ գնալով մեր շարքերը նոսրանում են։ Մի դեզի տակ եմ ու Գուրգենը իրար գտանք. հուզված ենք, հոգնած ենք, հազիվ ենք շնչում։ Ասացի՝ մեծ ախպեր, էստեղից որ դուրս պրծանք, էլ մեզ մահ չկա։ Ոչինչ չպատասխանեց, շտապ դուրս վազեց դեզի տակից՝ բղավելով.— Իմ եուևի՛ց, մինչև էն հետու դեզը,—

թվայնացրել է 1915.info կայքը

ինքն էր կարգադրողը, երևի մեծի իրավունքով. դե՛, Գուրգենն ինձնից մեծ էր երկու տարով։

Գնալով քայլելն էլ դժվարացավ։ Մեր ուսերին էլ պլաշչ-թիկնոցներ կան, որ վազքի ժամանակ բացվում են պարաշյուտի նման ու խանգարում են մեզ, բայց այնքան ենք շփոթված, որ խելքներս չի կտրում դեն շպրտելը։ Գուցեև դրանք օգնեցի՞ն մեզ, հակառակորդի գնդակներին շփոթեցնելու իմաստով։ Հանկարծ մենայնդեպս, երբ մի կերպ ձորը մտանք և դուրս եկանք թշնամու հարվածի ուղղությունից, իմ թիկնոցի վրա գնդակի երեք անցք կար, Գուրգենի մոտ՝ հինգ թե վեց։ Շատ զոհեր տվեցինք այդ օրը, դա իսկական սև օր էր մեր գնդի համար։ Բայց, հրաշքով ասեմ, թե ինչպես, ես ու Գուրգենը մի չնչին վերք էլ չստացանք։ Իսկ ֆրիցներն այլևս մեզ չհետապնդեցին, նորից ետ դարձան գյուղ։ Բոլորովին չեմ մոռանում Գուրգենի մի խոսքը, ավելի ճիշտ, դեղի տակ տված իմ հարցի պատասխանը, ուշացումով, բայց խելոք ու տեղին.— Հիմա ես քեզ հետ համաձայն եմ, ախպերս, մեզ այլևս մահ չկա...

Կարծես թե ընդմիջման կարիք կար և՛ պատմողի, և՛ լսողի համար։ Թեյ խմեցին։ Ու լուռ են, իսկ Սուհակը գիտի, որ Աշխենն սպասում է պատմության վերջին։

Ա՜խ, այդ չարաբաստիկ վերջը, որ այնուամենայնիվ վրա հասավ անժամանակ... Բայց ոչ, մի երկու դրվագ էլ կպատմի մինչև վերջին հասնելը, ախր ինքն այնքան բան ունի Գուրգենի մասին ասելու...

— Մի անգամ, քառասուներեքի կեսերին էր երևի, ուկրաինական մի մեծ գյուղ աղատագրեցինք։ Գյուղում մնացած կանայք ու երեխաները ի՜նչ ցնծությամբ դիմավորեցին մերոնց, լացով, համբույրներով։ Մեր դասակը հանգստանալու իրավունք ստացավ մի ընդարձակ բակում։ Տունն էլ երկհարկանի էր. երևում էր, որ ունևորի տուն է։ Գուրգենի հետ բարձրացանք երկրորդ հարկ, ուզում էինք իմանալ, թե ո՞վ կա տանը, վերջի-վերջո գերմանացիներն այդ գյուղից հեռացել էին մի ժամ առաջ, ամեն ինչ կարող էր պատահել։ Դուռը ծեծեցինք, բացող չկա, հրեցինք, դուռը բացվեց ու ներս մտանք։ Տեսնենք սիրուն-ա՜խ, լավ էլ լցոլված մի ջահել կին անկյունի սրբապատկերի առաջ կանգնած աղոթք է անում։ Այնքան՝ զարմանալի էր։ Գուրգենս թե՝ քույրի՛կ, գուցեհ աստծո հետ քո գործերը կհետաձգես մի՛ ուրիշ օրվա, իսկ հիմա մեզ, կպատասխանես։ Ու մի երկու

թվայնացրել է 1915.info կայքը

քայլ առաջ գնացինք։ Մեկ էլ այս անամոթ կինը այնպես ծղրտաց, ոնց որ հոգեբուժական հիվանդանոցից փախած.— Ջհամարձակվե՛ք ինձ մոտենալ, դուք պիղծ եք։ Գուրգենս ո՞նց կատաղեց, տո՛, աննամուս, ասում է, երևում է, դու քո ծոցում գերմանացիներ ես պահել, նրանք պիղծ չէին, մենք ենք պիղծը, հա՞, ես իմ Աստղիկի մի մազը քեզ հետ չեմ փոխի, անտեր շուն։ Հետո իմացանք, որ այդ կնոջ ամուսինը, նախկին կուլակի տղա, հավատարիմ շան նման ծառայել է գերմանացիներին, մեր պարտիզանները էլ ստիպված են եղել նրա հերն անիծելու, կախել են հենց իրենց բակի կիսաչոր ծառից։ Իսկ կինը, այս Զոսյա կոչվածն էլ, շնացել է նրանց հետ, մատնություններ է արել։ Գուրգենի այդ մի հատիկ խոսքն էլ տպավորվել մնացել է հիշողության մեջ.— Ես իմ Աստղիկի մի մազը քեզ հետ չեմ փոխի...

Աշխենն այնպե՞ս էր լցվել, հազիվ էր իրեն պահում։

— Ջեք կարող պատկերացնել, քեռի Սահակ, թե հանգույալ մայրս ի՞նչ կարոտով էր սպասում ամուսնուն։

— Հասկանում եմ, աղջիկս, դժբախտաբար անհույս սպասողները քիչ չէին, այդ տարիներին, իսկ շատերն էլ մեզնից տուն դառնալ կարողացան նաև այդ համառ սպասման շնորհիվ։ Հիշո՞ւմ ես բանաստեղծի խոսքը.

Жди меня, и я вернусь,
Только очень жди.
Жди, когда наводят грусть
Желтые дожди.

. . . . . .

Жди меня, и я вернусь
Всем смертям назло...

Էն տարիներից անգիր մնացել է հիշողության մեջ. բոլորիս սրտի հետ էր խոսում... Հա՛, այդ օրը, Գուրգենի առաջարկությամբ, մենք տեղափոխվեցինք հարևան բակը,— խոսքն առաջ տարավ քեռի Սահակը։— Էս կապը կտրածի տանը օդ չկա, ասաց, գնանք էստեղից։ Կողքին միհարկանի տուն էր, ու մի պառավ տատիկ էր ապրում այդտեղ։ Ռազմաճակատում կռվող իր երկու թոռների նման ընդունեց մեզ։ Առաջադրանք ունեինք գիշերը հանգստանալ, իսկ առավոտյան շարունակել հարձակումը։ Քնեցինք, ինչպես ընդունված է ասել, մեռածի նման, շատ էինք հոգնած ու ջարդված։ Մեկ էլ մի ուժեղ պայթյունի ար-

թվայնացրել է 1915.info կայքը

ձագանք հասավ ականջիս, նորից, նորից։ Մի՞թե գյուղը ամբակոծում են։ Բոլորս ոտքի թռանք։ Հենց այդ վայրկյանին մի հսկայական ռումբ ոռնալով իջավ մեր տան վրա, բայց պայթյուն չկա։ Գլխապատառ դուրս վազեցինք։ Մեր բթի տակ, բակում ռումբը խրվել էր հողի մեջ, միայն պոչն էր դուրս մնացել։ Ով զարմանք, չէր պայթել հրեշը, այլապես մեզնից հետք անգամ չէր մնա։ Գուրգենը փաթաթվեց ինձ ու շշնջում է.— Ախպե՛ր, բա որ ասում եմ մեզ այլևս մահ չկա...

Հնարավոր չէ մոռանալ մեր հրաժեշտի ճակատամարտը։ Դաժան կռիվ էր մի սապատավոր բարձունքի համար, իշխող դիրք ուներ այն շրջապատի վրա, մենք ուզում էինք գրավել, թշնամին պաշտպանում էր ատամներով։ Ամբողջ օրը հարձակվում ու նահանջում էինք։ Վերջապես, երեկոյան կողմ, մեծ զոհերի գնով մեզ հաջողվեց գրավել բարձունքը։ Խրամատներն էինք մաքրում սպանված ֆաշիստներից։ Հա՛, չմոռանամ ասել՝ բարձունքի կատարին մի մեծ ու ճյուղատարած ծառ կար. ո՞նց էր դիմացել այդքան ռումբ ու արկերի հարվածներին, ուղղակի հրաշք էր։ Ճիշտ է, թևաթափ էր եղել, բայց իր դիրքերը լքելու միտք չուներ ամեննին։ Ահա, խրամատները մաքրելուց ու մի մի հատ ծխելուց հետո, պառկել ենք այդ ծառի տակ, հանգստանում ենք։ Իսկ հեռվից լսվում է մեր հարևան զորամասի ուռան, նրանք շարունակում են հետապնդել թշնամուն։ Գուրգենս էլի սկսեց կռիվը վերջանալու ու մեր տուն դառնալու մասին խոսել, այնպես ոգևորված էր, այնքան լավատես։ Մեկ էլ մի մոտեցող արկի սուլոց լսեցինք։ Հասցրի միայն աչքերս փակել, անմիջապես վրա հասավ պայթյունը։ Հետահար թնդանոթի արկը ասես հատուկ նշան էր բռնել մենավոր ծառի կրծքին. բեկորները, եռացած կարկտի նման, թափվեցին մեզ վրա։ Զինվորներից մեկի «օյը» լսեցի, մյուսը զոհվեց՝ առանց ծպտուն հանելու։ Ես զգացի, որ սրտիս մոտերքը տաքացավ, բայց դեռ գլխի չեմ, թե ինչ է կատարվել ինձ հետ։ Հասցրի բղավել՝ Գուրգեն, հո բան չպատահե՞ց։ Լսեցի ընկերոջս անկապ խրխրոցը։ Ձեռքս դժվարությամբ մեկնեցի նրա կողմը, գտա Գուրգենի անօգնական ձեռքը ու նորից հարցնում եմ.— Ախպեր, ո՞նց ես։ Հազիվ լսեցի նրա պատասխան նվոցը.— Բա ասում էիր էլ մեզ մա՞հ չկա... ուժերիս վերջին լարումով սեղմեցի նրա դաստակը ու շշնջացի՝ պինդ կաց, ախպե՛ր։ Հանկարծ աչքս ընկավ գլխատված ծառին, և ես ուշագնաց եղա։

թվայնացրել է 1915.info կայքը

Հետո իմացա, որ արկի բեկորներից երկուսը մոլորվել են սըրտխա մատուցներում, իսկ մի մեծ բեկոր քրքրել է Գուրգենի լյարդն ու լեղապարկը։ Ինձ հրաշքով փրկել կարողացան, իսկ հայրդ մնացել էր վիրահատության սեղանին...

Պայթեց, բաց ընկավ Աշխենի խեղդված հեկեկոցը, ու երկար ժամանակ նրա կապը հավաքել չէր լինում։ Սահակն էլ լուռ էր, այդպիսի դեպքերում միայն առատ արցունքներն են ընդունակ թեթևացնելու տառապողի սիրտը։ Սահակն ուզում էր ասել նաև, որ իր աչքի առաջ ասես ցցված մնացել է այն մեհավոր ու բզկտված ծառը, իսկ ականջներում՝ Գուրգենի մրմնջոցը.— Բա ասում էիր... Ջասաց, Աշխենն այլևս ընդունակ չէր նոր խոսք լսելու։

Երեկոն վաղուց էր ծանրացել քաղաքի վրա։ Բնակելի այդ նոր թաղամասում մի զարմանալի լռություն էր տիրում։ Միայն չգիտես որտեղից, ասես պատուհանի քիվին թառած մի ծղրիդ իր միալար երգն էր հյուսում՝ այնքան խորհրդավոր ու անհասկանալի։

12.

Գործարանի գլխավոր ինժեները խորասուզված Տերյան է կարդում։ Նոր հրատարակություն է, շքեղ, որակյալ թղթի վրա, ապրեն հրատարակիչներն էլ, պոլիգրաֆիստներն էլ։ Այս ո՞ր տպարանի արտադրանքն է. նայեց գրքի վերջին էջը, լավ է, հաճելի է։ Ջզանգահարի՞ Սենոյին, նրա ղեկավարած ձեռնարկություններից է, արժե շնորհավորել։ Նույնիսկ ձեռքը տարավ հեռախոսին, բայց և անմիջապես ետ քաշեց, այն վերջին հանդիպումից հետո ո՛չ զանգ է եղել, ո՛չ որևէ խոսք։ Ինչ-որ լար կտրվեց այդ օրը, զանգի համար էլ տրամադրություն է պետք, այդ ցանկության վրա արդեն մամուռ բուսնելու վտանգը կա. գոնե չբորբոսնի՞։ Բոլոր դեպքերում ուրախ է լավ գրքի համար, մանավանդ, երբ այդ լավը Տերյան է, իր ամենասիրելի բանաստեղծը։ Թերթում է նորից, վերհիշում մոռացվածը։ Իսկ այստեղ անծանոթ բան կա՞ նրա համար. այնուամենայնիվ առանձին գործեր նրան նոր են թվում, կարծես թե առաջին անգամն է կարդում։ Բայց մի՞թե ավելի շատ չեն անգիր իմացածները։ Ահա այս մեկը։ Սպասիր, ինչո՞ւ մենակ կարդալ։ Ետապ հավաքեց կնոջ հեռախոսի համարը.

— Նվարդ, կարո՞ղ ես ինձ մեկ րոպե լսել։

թվայնացրել է 1915.info կայքը

— Հրանտ, իսկ ինչո՞ւ այդքան քիչ. նորի՞ց ժլատությունդ բռնեց։

— Ո՛չ, այս անգամ մեայն մի բոպե, ու կարդաց հանդիսավոր տոնով.

Սարի ետևում շողերը մեռան.
Անուշ դաշտերը կապեց կապույտ մեգ.
Տխուր երեկոն զարկել է վրան.
— Սիրտըս կարոտով կանչում է քեզ՝ ե՛կ։

Հեռախոսի մյուս ծայրից լսվեց.

— Եվ շատ լավ է անում, որ կանչում է, միայն ինչպե՞ս գամ, երբ ես վաղուց եմ ակել։ Նորից գալու համար նախ գնալ է պետք, իսկ ես գնալ չեմ կարող, սիրելի՞ս, չեմ ուզում։

— Ախ դու խորամանկ ճամփորդս։ Լա՛վ, ինձ մոտ մարդ մտավ։

Ամալյան էր, մի ծրար ձեռքին։

— Արտադրամասի պետ Սմբատ Ոսկանյանն է ուղարկել, ասացին՝ դուք եք ուզել։

Ծրարը դրեց սեղանին ու դուրս գնաց։ Նոր արտադրամասի հաշվետվությունն էր, առաջին երեք ամիսների աշխատանքի մասին։ Տերյանը «մի կողմ քաշվեց» և ամբիոնը տրամադրեց Սմբատի հաշվետվությանը։ Խորասուզված կարդում էր։ Առաջին ամսին պլանի կատարումը կազմել է ութսունհինգ տոկոս, երկրորդին՝ իննսունյոթ, երրորդում՝ նույնիսկ մի փոքր գերակատարում կա։ Որակական ցուցանիշներն էլ բավարար են։ Կարելի է ասել, որ սկզբի համար վատ չէ, բայց դեռ այնքա՜ն անելիքներ կան, հույս ունի, որ Սմբատն իրենց սևերես չի անի։

Հնչեց ներքին հեռախոսի զանգը։ Սմբատն էր, իսկ ինչո՞ւ անհանգիստ է ձայնը։

— Սմբատ, քո հաշվետվությունն եմ կարդում, ընդհանուր առմամբ գոհ եմ, մանրամասնությունների մասին հետո կխոսենք։

— Հրանտ Արշակովիչ, ես դրա համար չեմ զանգել։ Տխուր լուր պիտի հաղորդեմ, այդ Սարո կոչվածը փախել է աշխատանքից։

— Ինչպե՞ս թե փախել է, ո՞ւր է կորել։

— Ջգիտենք։ Ընդմիջման ժամանակ կողքի աշխատողի մոտ փնթփնթացել է.— Ես էստեղ ութը ժամ գործ անող չեմ, սա ի՞նչ կյանք է։ Սա էլ բանի տեղ չի դրել. հիմա է ասում, երբ բանը բանից անցել է։

թվայնացրել է 1915.info կայքը

— Իսկ գործարանի տարածքից դո՞ւրս է նկիլ։

— Այո՛, պահակն էլ է վկայում, իր անձնական փաստաթուղթն էլ թողել է պահակատանը, ասելով, թե ինձ այլևս պետք չէ։

— Ա՛յ քեզ խայտառակություն... Սմբատ, իսկ Մուշեղն է՞լ ոչինչ չդիտի։

— Նրան բան չի ասել։ Շատ վատ եղավ տղան։ Ախր, չդիտեմ ասել եմ թե չէ, Մուշեղը շատ համով ջահել է, լավ մարդ կդառնա։ Իսկը իր քեռուն է քաշել։

Հրանտն ուզում էր ավելացնել՝ ես էլ ոչ բարով, այդ Ջինոսով Սարոյի քեռին եմ, բա նա՞ ումն է քաշել։ Միայն կարողացավ ասել.

— Գուցե Մուշեղին կուղարկեիր նրաետևի՞ց։

— Արդեն գնացել է։ Ինքը խնդրեց։ Ասացի՝ բա որտե՞ղ ես նրան փնտրելու, ուսերը շարժեց, գուցե, ասում է, գյուղ գնամ։ Ճիշտն ասած, Հրանտ Արշակովիչ, ձեզ չէի ուզում անհանգստացնել, մեկ էլ մտածեցի, թե բա դուք ինձ ի՞նչ կասեք։

— Ճիշտ ես արել, դա թաքցնելու բան չէր։ Մուշեղը հենց որ երևա, կուղարկես ինձ մոտ։

Հրանտը երկար ժամանակ կենտրոնանալ չէր կարողանում. այնպես վիրավորված էր զգում իրեն, մի՞թե ինքն այդքան հարգանք չուներ նրա մոտ. հատուկ էլ խնդրեց, որ իրեն անհարմար դրության մեջ չդնեն։ Հիմա ի՞նչ անի։ Նորից Ռուսաստան վախած չլինի՞ այդ անխելքը։ Ետապ զանգահարեց Նվարդին։ Կինը նախահարձակ եղավ։

— Հրանտ, տիրյանական օրերը շարունակվո՞ւմ են։

— Դժբախտաբար, ոչ, անճաշակ պրոզան խեղդում է մեզ էլ, Տերյանին էլ։

— Վատ բա՞ն է պատահել, Հրանտ։— Նվարդի ձայնի մեջ տագնապ կար։

— Անհանգստանալու կարիք չկա։ Ուզում էի իմանալ այս քանի օրը Սարոն քեզ չի՞ հանդիպել, տանը կամ աշխատանքի տեղը։

— Նախանցյալ օրը եկավ հիմնարկ, հիսուն ռուբլի խնդրեց, լավ էր, մոտս փող կար։

— Իսկ դու չհարցրի՞ր թե ինչի համար է։

— Դե՛, անհարմար էր, Հրանտ, ինչպե՞ս հարցնեի, արդեն հասունացած մարդ է։

թվայնացրել է 1915.info կայքը

— Ճիշտ է, հասունացել է արդեն, դրա համար էլ աշխատանքը լքել ու փախել է գործարանից։

— Վա՛յ, ո՞ւր, Հրանտ, ինչե՞ր ես ասում։

— Չգիտենք ուր է կորել, բայց որ գնացել է, դա փաստ է։

— Ա՛յ քեզ անշնորհք տղա։

— Գուցե նաև կավելացնեիր՝ անշնորհակա՞լ... Առայժմ մայրիկին բան չասես, մինչև տեսնենք։

Աշխատանքային օրվա վերջին Հրանտի աշխատասենյակը մտավ Մուշեղը՝ հոգնած, քրտինքի մեջ մտած։ Ու արագ վրա տվեց.

— Քեռի Հրանտ, պարզվում է, որ էդ անշնորհքը գյուղ է գնացել, իրենց տուն։

— Դու եղա՞ր այնտեղ։

— Բա ինչպե՞ս։ Հիմար տղա է, արևս վկա։ Ես, ասում է, չսիրեցի էդ գործը, ութը ժամ պիտի ստանոկի մոտ կանգնեմ, ինչ է, թե հարյուր ռուբլի եմ ստանալու։ Իսկ մի ջինսի շալվարը երկու հարյուր ռուբլով են ծախում։ Ես որ շուկա գնամ, ասում է, էդքան փող մի օրում կաշխատեմ։ Շատ խոսեցի, է՛, նրան կարո՞ղ ես համոզել։ Հորաքույր Սրբուհին էնքան անիծեց, դու, ասում է, նամուս չունես, քրոջս տղային էլ էնտեղ ես խայտառակել. վատ է, որ մայրը պաշտպան կանգնեց, ինչ է, ասում է, որ տղայի սրտով չի, ի՞նչ կարող ենք անել։

— Դժբախտաբար այդպես է, երեխային փչացնողը, հաճախ ծնողական անիմաստ սերն է... Իսկ հա՞յրն ինչ էր ասում։

— Հայրը տանը չէր։ Քեռի Հրանտ, նա մի անգամ էլ էր գործը թողնել, ձեզ չասացինք։ Իմացա, որ շուկա է գնացել։ Էլի թուլլտվություն խնդրեցի, գնացի դրան գտա։ Տեսնեմ իրենց գյուղացիների հետ կանգնած խաղող է ծախում, իբր թե օգնում է նրանց։ Ինձ որ տեսավ, մի տեսակ եղավ։ Ասացի՝ ամոթ է, արի գնանք աշխատանքի։ Սա թե՝ իսկական աշխատանքը սա է, նա ի՞նչ գործ է։ Էլ չդիմացա, ասացի՝ Սարո, առաջ ընկիր, գնա, թե չէ ես հիմա քո մռութը կջարդեմ, գլուխը քարը թե երկուսիս էլ կտանեն միլիցիայի բաժանմունք։ Երևի վախեցավ։ Սուսուփուս դուրս եկավ շուկայից։

Հրանտը նայում էր Մուշեղի առնական բազուկներին, ու մտածում էր,— Հարությունի նման սա էլ է աժդահա, երևի դա էլ ցեղական է։ Միայն ափսոս, որ մի լավ չի դնքստել այդ Սարո կոչվածին, նա լրիվ վաստակել էր այդ «պատիվը»...

թվայնացրել է 1915.info կայքը

— Ով երևի այդ օրը նորից խոստացավ, թե այլևս չեմ անի, վերջ։

— Չէ՛, հենց վատն էն է, որ չխոստացավ։ Գլուխը կախ եկավ գործարան ու անցավ իր գործին։ Իսկ գործից գլուխ հանում էր, քեռի Հրանտ, որ մտքում դներ, ուղածդ բանը կսարքեր էն վանեցու ասած, խասյաթն է փիս, ու ծույլ է, այս է վատը։

— Հիմա ի՞նչ ես կարծում, Մուշեղ, ինչպե՞ս վարվենք նրա հետ. դու լինեիր իմ տեղը, ի՞նչ կանեիր,— ու սևեռուն հայացքով նայում է Մուշեղին. չի հարցաքննում, ո՛չ, անկեղծորեն նրանից խելոք խորհուրդ է ակնկալում.

— Դժվար հարց եք տալիս, քեռի Հրանտ Հա՛, չմոռանամ ասել, որ մի անգամ էլ, հենց էդ շուկայի օրը սրան ասացի՝ Սարիբեկ, գուցե հանրակացարանում վատ է տեղդ, կամ լավ ընկերներ չունես, ուզո՞ւմ ես, ես էլ տեղափոխվեմ ձեղ մոտ, մի սենյակում կապրենք, միշտ միասին կլինենք։ Ես զարմացա, որ իմ այս խոսքն էլ սրա սրտով չէր, պետք չի, ասում է, ձերոնց մոտ քեզ համար լավ է, ինչո՞ւ դու էլ հանրակացարան ընկնես... իսկ ձեր հարցին, քեռի Հրանտ, ի՞նչ ասեմ, իմ կարծիքով ետ պիտի բերենք ու փորձենք դաստիարակել. հո չե՞նք թողնի, որ տղան կորչի։

— Համաձայն եմ քեզ հետ, պետք է դաստիարակել, բայց ոչ ետ բերելով։ Նրա տեղն այլևս մեր գործարանի բակում չպիտի երևա,— գնալով Հրանտ Ստեփանյանի ձայնը կոշտանում էր ու անզիջում երանգ ստանում։— Ես կխոսեմ նրա հետ, նոր կորոշենք։ Դու հիմա ազատ ես, գնա։ Ես շատ գոհ եմ քեզնից։ Բարևիր Հարությունին, տիկին Աշխենին։ Ինչպե՞ս են, վաղուց չեմ հանդիպել։

— Շատ լավ են. Հարությունը հեռակայում է, էս տարի կավարտի, իսկ Աշխենը, հալալ լինի նրա կերած կաթը, քեռուս ասած՝ շատ լավ օղլուշաղ է, խելոք, համեստ, մաքրասեր ու աշխատասեր։ Մեր բարեկամությունը շատ գոհ է նրանից։ Բա որ տեսնեք, թե ինչպես է երեխաներին պահում.— մեծացնում։ Չէ՞, մեր Հարությունը բախտավոր մարդ դուրս եկավ։

— Ես էլ ուրախ եմ, իմ տպավորությունն էլ լավն է։ Դե, հիմա գնա, արտադրամասում կասես, որ Սարոն մեզ մոտ աշխատել չի ուզում, երևի ուրիշ տեղ է ճարել իր համար։

Մուշեղը տարակուսանքով նայում էր գլխավոր ինժեներին.

թվայնացրել է 1915.info կայքը

— Բա հետո՞, քեռի Հրանտ։

— Հետոն հետո քեզ կասեմ։ Միայն դու մի կասկածի, որ ես էլ եմ ուզում նրան տեսնել կարգին մարդ դարձած։

Եվ անմիջապես զանգահարեց գյուղ։ Տանը մորաքույր Սըրբուհին էր։

— Բարև, մորաքույր, Հրանտն է. հույս ունեմ, որ դեռ չես մոռացել։

— Ես էդքան էլ մոռացկոտ չեմ, քրոջ տղա, ամա քեզ հետ թունդ կռվելու եմ։ Բա դու քո գլխավոր տեղով չես կարողա՞ նում մի լակոտ խելքի բերել էս աննամուսը վեր է կացել, եկել գյուղ, սրա բանը ո՞նց է լինելու։

— Ի՞նչ անեմ, դուք այնքան լավ եք դաստիարակել դրան, որ ինձ անելու բան չի մնում... Մի անհանգստացիր, մորաքույր, մի բան կանենք։ Այդ Սարոյի հորը առավոտյան ուղարկիր ինձ մոտ, գործարան, ես նրան սպասելու եմ։

Հետո կապվեց իրենց շրջանի գինվորական կոմիսարի հետ. ծանոթ են, ակտիվի նիստերում շատ են միասին նստել։

— Ընկեր փոխգնդապետ, մեր գործարանում մի ջահել է աշխատում, իմ էլ բարեկամի տղան է, շրջանից է եկել. այնտեղ նրան տարկետում են տվել, և, իմ կարծիքով, սխալվել են։ Նա արդեն հաշվառման մեջ է ձեզ մոտ. հույս ունեմ, որ նրան միայն բանակը կարող է դաստիարակել ու մարդ դարձնել. առաջիկայում զորահավաք չունե՞ք, նրան էլ ընդառաջենք։

— Ունենք, Հրանտ Արշակովիչ. հաջորդ ամսին և խոստովանում եմ, որ դա ինձ համար ամենահեշտ ու հաճելի խնդրանքն է...

Առավոտյան Հրանտը նոր էր մտել իր աշխատասենյակը, մեկ էլ հեռախոսը ներս ընկավ Սարիբեկի հայրը։ Անցագրի հարցը նախորդ օրն էր լուծված։

— Հրա՛նտ, էս ի՞նչ կրակ է, որի մեջ էդ լակոտն ինձ գցում է. մի բան արա, հորդ ողորմի, կինս ձեռքից գնում է։

— Թե կարգին տղա ունեք, թող մոր մասին նա մտածի, ես ի՞նչ անեմ։

Վահանն անակնկալի եկավ. այդպիսի չոր պատասխան անսպասելի էր նրա համար։ Մեկ էլ մտածեց, թե բա ուրիշ ի՞նչ էիր ուզում, սրան էլ է խայտառակել։ Ու խեղճացավ մեկանգամից։

— Բա ինչ՞ անենք, Հրանտ։ Ասում է՝ ես էլ գործարան գնացողը չեմ։

թվայնացրել է 1915.info կայքը

— Ուրնմն թող մնա գյուղում, հողի վրա քրտինք թափի. ավելի ճիշտ՝ թող դնա շուկա, նրա իսկական տեղը դա է։

Վահանը գլխի չի ընկնում՝ հեգնա՞նք կա Հրանտի խոսքի մեջ, թե՞ անկեղծ է խոսում։

— Այ մարդ, գնա շուկա, ի՞նչ անի։

— Առևտուր շուկայում, կարծեմ, ուրիշ գործ չկա։

— Հետո՞, դրա վերջն ի՞նչ է լինելու։

— Չգիտեմ, այ, այդ հարցին պատասխանել ես չեմ կարող։

— Է՜, Հրանտ, լավ չես անում։

Հրանտը միանգամից փշոտվեց։

— Դուք բոլորդ լավ եք անում, միայն ես եմ, որ լավ չեմ անում. այդպես է աշխարհի բանը, երևի միակ մեղավորը ես եմ։

— Այ մարդ, ես հո չասացի՞ դու ես մեղավոր, ուղղակի խորհուրդ եմ հարցնում։

— Մինչև խորհուրդ տալը ուզում եմ քեզ հարցնել, թե անցյալ տարի ինչո՞ւ ես տղայիդ բանակից ազատել. մայրն իր փեշի տակ առնի, հայրը թևերը փռի վրան, հետո էլ զարմանան, թե այս տղան ինչո՞ւ է ճանապարհից դուրս եկել։

— Դե՛, ծնող ենք, էլի. տեսնում ես ուրիշներն անում են, ում ձեռքից գալիս է, ես ո՞նց թողնեի։

— Բայց նրան տանը թողնելը ի՞նչ նպատակ էր հետապընդում. ուսո՞ւմն է շարունակելու, արհե՞ստն է կիսատ մնում, թե՞ շուկան կփախչեր։ Ա՛յ, Մանվելը կարգին տղա է, ինստիտուտ ընդունվեց, սովորում է.

— Է՜, Հրանտ, շատ ես չարացած, էսօր քեզ հետ խոսել չի լինում։

— Ջեմ թաքցնում, շատ-շատ եմ չարացած և, առաջին հերթին, քեզ վրա։

— Ես ի՞նչ, անեմ, մայրը հոգիս կերել է։

Հետո, երևի ղգաց, որ շատ խեղճացավ, ըմբոստությունը բոնեց մխանգամից.— Վերջապես ես կռիվ եմ գնացել, արյուն եմ թափել, որ իմ տղան է՞լ դրա համն առնի։

— Ա՛յ, ես քո այդ խոսքին էի սպասում, կոլխոզի բրիգադավար ընկեր Վահան Ճշմարիտյան, դու արյուն ես թափել խաղաղ կյանքի համար, դու կռվել ես կռվի դեմ, կռվել ես, որ քո և իմ զավակներն այլևս կռիվ չտեսնեն, իսկ առանց լավ բանակի ինչպե՞ս կփակես դեպի կռվի դուռը տանող ճամփան։ Ես զարմանում ու զայրանում եմ, որ նախկին զինվորն ու հայ-

թվայնացրել է 1915.info կայքը

րենիքի պաշտպանը այսօր մտածում է հետին քաղքենու նման, և պատահական չէ, որ տղադ էլ, մորաքույր Սրբուհու ասած, պորտաբույծ է դուրս եկել։

— Է՛, մորաքրոջ տղա, շան լավը թափում ես իմ գլխին, կարծես թե ես... Ախր մայրն ինձ քուն ու հանգիստ չի տալիս։

— Դե՛, ուրեմն, եկեք մեր կյանքը կատուցենք մայրերի խնդճ ու կրակ սրտի թելադրանքով. անխոս կատարենք այն, ինչ երեխաներն իրենք են ուզում, ճիշտ է թե սխալ, օգուտ է թե վնաս, դա ի՞նչ կարևոր է, թող մեր գլխում խելք դնեն անխելք երեխաները։

Տիրեց մի ճնշող լռություն։

Ներքին հետախոսով գործարանի դիրեկտորը կապվեց Հրանտ Ստեփանյանի հետ. շրջկոմում ժողով կա, ասաց, ժամը երեքին, խնդրում եմ կուսկազմակերպության քարտուղարի հետ միասին ներկա լինեք։

— Լսում եմ, Սուրեն Մարտիրոսովիչ։

Վահանը մտմտում էր ինքն իրեն, ախր ամեն ինչի մեջ էլ կարգ ու կանոն պիտի լինի, պետը կարգադրեց, սա էլ՝ թե՝ լսում եմ. տա՞նն ինչու այդպես չէ. ժառանգը պարտավո՞ր է իր ծնողին լսել, թե՞ոչ, կապրող ձիու նման որ հանդն ուզում են, մրտնում են, հետո՞։

— Տղածը եղել է, Հրանտ, հիմա ի՞նչ ես ասում։

— Տղային ուզում են բանակ տանել, և դու չպետք է խանգարես, ահա իմ միակ խորհուրդը։

— Մայրն իրեն կսպանի, արևս վկա։

— Այդպիսի վտանգ ոչ եղել է, ոչ էլ կլինի, եթե, իհարկե, դու տղամարդավարի կանգնես։

— Ծանր խորհուրդ է, Հրանտ։

— Ծանրից թեթև ոչինչ չկա։ Սարոյի համար փրկության ուրիշ ճանապարհ ես չեմ տեսնում։ Մի խորհուրդ էլ պիտի տամ. եթե նույնիսկ շատ մոտիկ տեղ էլ տաննն, ետևից չպիտի դնաք և՝ ոչ մի անգամ։ Փող էլ չուղարկեք, թող, ինչպես ասում են, տապակվի իր յուղով։ Ես ուրիշ ասելիք չունեմ։

— Դե՛, գնամ տուն, տեսնեմ.— այնպես անվստահ է խոսում Վահանը։

— Այդ «տեսննենք» զզվելի բառը հանիր օրակարգից։ Հավատացնում եմ, մի քանի տարի հետո դու ինձ շնորհակալություն ես հայտնելու, Սարոն էլ ի վերջո դառնալու է մեր գոր-

թվայնացրել է 1915.info կայքը

ծարանի լավ բանվորներից մեկը։ Արի այս հույսով էլ բաժանվենք, իսկ ճաշին տանը կսպասեմ քեզ։

— Այ մարդ, ի՞նչ ճաշ, հիմա ես շտապ գյուղ եմ գնում։ Ես էդ Սարո կոչվածի հերն եմ անիծել, մորն էլ հետը...

13.

Նվարդի մոտ առավոտվանից մի մարդ է սպասում, իսկ ինքը ոչ մի կերպ ժամանակ չի գտնում նրան ընդունելու։ Երկու անգամ մինիստրը կանչեց, մի անգամ՝ տեղակալը, մի ժամ էլ բյուրոյի նիստում կորցրեց, հրատապ հարց էին քննում։ Ամեն անգամ ներս ու դուրս անելիս ներողություն էր խնդրում, վախենում էր, որ կարող է թողնել ու գնալ, այն մի այցելուի նման, որի ազգանունն էլ չի հիշում։ Կարո՞ղ է սա այդ նույն մարդն է. բայց ո՞չ, երևի, համբերատար նստել ու սպասում է, և, ասես թե գնալու տեղ էլ չունի։ Վերջապես կարողացավ ներս հրավիրել այդ քաղաքացուն։ Վաթսունն անց, բարձրահասակ ու ճաղատ գլխով մարդ է, այնքան էլ անհամարձակն է. սա ինչպե՞ս է ապրել կյանքում...

— Ներեցեք, ձեր ազգանո՞ւնը։

— Շմավոնյան է, Մանուկ Շմավոնյան։

— Ես ձեզ լսում եմ։

— Ձեզ մոտ եմ եկել, ընկեր Ստեփանյան, մի խնդրանքով։

Նվարդն սկզբում զարմացավ, իր ազգանո՞ւնը որտեղից գիտի, հետո հիշեց, որ դռան վրա գրված է, ու թեթև ժպտաց քթի տակ։

— Ի՞նչ խնդրանք է, եթե կարողացա...

— Շատ դռներ եմ ծեծել, բան չի դուրս եկել. որոշեցի ձեզ մոտ էլ փորձել։ Կներեք, խնդիրքս ներկայացնելուց առաջ մի երկու խոսքով պիտի պատմեմ ձեզ իմ վիճակը. ժամանակ կունենա՞ք լսելու։

— Հույս ունեմ, որ ինձ այլևս վերև չեն կանչի. ասացիք, լսում եմ։

— Ես շատ հասարակ մարդ եմ. ամբողջ կյանքում շինարար բանվոր եմ աշխատել։ Վեց երեխա ենք ունեցել, կինս հազիվ դրանց է մեծացրել։ Անհարմար չլինի ասելը, դժվար ենք ապրել, մինչև մեծ տղայիս մեծանալը։ Սա որ աշխատանքի հասավ, տան հոգսը թեթևացավ մի քիչ։ Հետո ամուսնացավ,

թվայնացրել է 1915.info կայքը

իր տուն-տեղն ունի։ Մենակ բախտ չունեցանք հարսի կողմից, տղայիս բուռը հավաքեց, մեր տան ճանապարհը մոռացան։ Մյուս տղաս վատ շրջապատի մեջ ընկավ. ամաչում եմ ասել, դողությանհամար սրան բանտ նստեցրին։ Դեռ էնտեղ է... դրանից փոքր եղբայրը մի կերպ տեխնիկում ավարտեց, ու հիմա պարապ մանէ գալիս։ Առողջություն լավ չի արդեն, թոշակի եմ անցել։ Էլի դժվար ենք յոլա գնում, բայց ինձ վախեցնողը էդ երեխայի առաջը պահված օրն է. բա որ նա էլ ճամփան ծռի՞։ Էդ ջահելին, որ կարողանաք մի տեղ աշխատանքի դնել, ես ձեզնից շատ շնորհակալ կլինեմ։ Էս է իմ խնդրանքը։

— Իսկ տեխնիկումը նրան նշանակում չի՞ տվել, հայրիկ։

— Ջէ՛, աղջիկս, ազատ դիպլոմ են տվել։ Դա էլ, ինչպես ասում են, մի կտոր հաց չի դառնում։ Համ էլ նրա ընկերներից մի երկուսն ինձ դուր չեն գալիս, շատը դրանից եմ վախենում. ախր պարապ ջահելից ամեն բան էլ կարելի է սպասել։

— Հայրի՛կ, ես խնդրում եմ վաղը ժամը տասին ձեր տղայի հետ ինձ մոտ գաք. նրա դիպլոմն էլ կվերցնեք ձեզ հետ։ Հաստատ բան չեմ կարող խոստանալ, բայց կաշխատեմ օգտակար լինել։

— Շնորհակալ եմ, աղջիկ ջան, որ ոչ մի բան էլ չանեք, էլի էսքանից շատ գոհ եմ։

Նվարդը մենակ մնաց, ու երկար ժամանակ մտածում էր այդ «հայրիկին» օգնելու հնարավորության մասին։ Ներքին հեռախոսով թուլտվություն խնդրեց ու գնաց մինիստրի տեղակալի մոտ։

— Անդրանիկ Սարգիսովիչ, մի երիտասարդի աշխատանքի տեղավորման անհրաժեշտություն կա, չգիտեմ ինչպես խնդրեմ, որ այդ հարցը դրական լուծեք։

— Ձեր ծանո՞թն է, բարեկա՞մն է։

— Ոչ մեկը, ոչ էլ մյուսը։

— Ես ձեզ չեմ հասկանում, Նվարդ Օգանեսովնա։

— Ես նույնիսկ այդ տղային չեմ տեսել. քիչ առաջ նրա հայրն էր ինձ մոտ, և համոզվեցի, որ նրա տղային աշխատանքի ընդունելով՝ մենք մարդասիրական և դաստիարակչական լուրջ քայլ կատարած կլիննենք։ Վաղն այդ տղան ինձ մոտ է գալու, գուցե նրան կկարողանայինք տեղավորել մեր տպարանո՞ւմ, թեկուզև աշակերտ. ես ձեզ շատ եմ խնդրում։

թվայնացրել է 1915.info կայքը

— Այդ դեպքում գոնե վաղը ծանոթացեք այդ տղայի հետ, հետո՞ որոշենք. սխալ ընտրությունն էլ մի բան չէ։

— Համաձայն եմ, ու շնորհակալ եմ, Անդրանիկ Սարգիսովիչ։ Ես ձեզ մի ասիթով կպատմեմ այդ ընտանիքի մասին...

Իջել է ներքև, իր աշխատասենյակը ու զարմացել է ինքն իր վրա։ Իսկապես, ո՞վ է այդ տղան, ինչպե՞ս ես երաշխավորում նրա համար, իսկ եթե նա էլ գող է։ Չի կարող պատահել, հայրն այնքան մաքուր հայացք ուներ։ Բայց այդ հայացքը ձմռանգարե՞ց, որ մի տղան բանտի «ուղեգիր» վաստակի։ Գրո՞ղը տանի, և մարդուն չհավատալ չես կարող, և հավատալն է դժվար։ Իսկ ինչո՞ւ Հրանտին չխնդրեց. թող գործարան գնար այդ տղան, թեկուզև Սարոյի տեղը, գուցեև նրանից ավելի լավ մարդ դուրս գար։ Բայց ոչ, այստեղ ավելի լավ է, ինքը հնարավորություն կունենա նրանով զբաղվելու, նրա վարքագծին հետևելու, վերջապես այդ Շմավոնյանին հայրիկ կոչից, ինչո՞ւ, ինքն էլ չի հասկանում, նա էլ իրեն աղջիկս անվանեց, դա ինչ որ բան նշանակո՞ւմ է թե ոչ։ Զարմանալի է և կյանքը, և մարդ արարածը՝ մանավանդ։ Այդ քեռի Մանուկին չգիտեր, նրա մասին գաղափար անգամ չուներ, իսկ հիմա մի շատ լուրջ պարտավորություն է ծանրացել իր սրտի վրա, որի կատարումը նրան թվում է մարդասիրական քայլ։ Իսկ եթե չհաջողվի՞, կամ ինքդ համոզվես, որ այդ տղան, անունը գոնե չիմացավ, արժանի չէ՞ քո ուշադրությանը։ Այդ դեպքում հորը կասի ճըշմարտությունը և կհրաժարվի իր առաջարկած ծառայությունից։ Ծղբայրը գողություն է արել ու կալանավորվել, ինքն էլ վատ ընկերներ ունի։ Իսկ այդ Մանուկ քեռու մյուս երեխանե՞րն ինչով են զբաղվում. ասաց վեցն են. ա՛յ, հարուստ ընտանիք, բայց այդ շատությունը կարո՞ղ ես երջանկության ապացույց համարել, դժբախտաբար, ոչ։ Միևնույն է, մարդիկ այնքան երեխա են ունենում, որքան ուզում են, իսկ իր բախտը քոռացել է վերջնականապես։ Այլևս ո՛չ բժշկի է դիմում, ո՛չ նրանց առաջարկած դեղերն է ընդունում։ Անհույս սպասում։ Իսկ Հրանտը նորից լռել է, նորից երեխա վերցնելու հարցը մնում է չլուծված, մինչև ե՞րբ։

Առանց դուռը ծեծելու ներս մտավ Սարիբեկը, և, բարևը մոռացած, հիսուն ռուբլի պարտքը դրեց սեղանին։

— Մյուս շաբաթ բանակ եմ գնում, մորաքույր Նվարդ, եկել եմ մնաս բարով ասելու։

թվայնացրել է 1915.info կայքը

— Այդքան շո՞ւտ, Սարո. իսկ տրամադրությո՞ւնդ ինչպես է։

— Հարմար է։ Մի գնանք, տեսնենք էդ բանակ կոչվածն ինչ բան է։ Ես անհարմար եմ զգում քեռի Հրանտի մոտ գնալ, լավ չստացվեց։ Խնդրում եմ իմ անունից նրան էլ ցտեսություն ասեք։ Ու թող ների ինձ, եթե կարող է։

— Անպայման կների, միայն թե բանակից վատ լուրեր չհասնեն նրան։

— Տեսնենք, կաշխատեմ...

— Իսկ այդ փողը թող մնա քեզ մոտ, պետք կգա։

— Չե, չեմ վերցնի, շնորհակալ եմ։ Դե, ես գնացի։ Ու ձեռքը մեկնեց Նվարդին։

— Լուսիկ մայրիկի, Հրանտի և իմ անունից քեզ բարի ճանապարհ եմ մաղթում ու բարի վերադարձ։ Մոտեցավ, ճակատը համբուրեց.— Դե՛, քեզ տեսնեմ, նորաթուխ զինվոր Սարիբեկ ճշմարիտյան։ Նամակ կգրես, ես սիրով կպատասխանեմ։

— Շնորհակալ եմ, մորաքույր Նվարդ։ Ես էլ խնդրում եմ, որ այստեղ, քաղաքում էլ մեր Մանվելին տիրություն անեք. նա լավ տղա է, շատ էլ ամաչկոտ է։

— Հաճելի խնդրանք է, Սարո, Մանվելն ինձ էլ է դուր գալիս։

— Դե՛, ես գնացի...

Նվարդը հիմա էլ երկար ժամանակ Սարոյին մոռանալ չի կարողանում։ Այնուամենայնիվ այդ տղայի մեջ լավ բաներ կան, չնայած Հրանտը ժխտում է այդ լավը։ Գուցե, իսկապես, բանակը կօգնե՞ր նրա ապաքինմանը։ Ի՞նչ գիտես, նայած թե ում հետ ընկերություն կանի, «բուժման կուրսը» ի՞նչ ընթացք կստանա։

Զանգահարեց Հրանտին։ —

— Սարիբեկն էր ինձ մոտ, եկել էր մնաս բարով ասելու։

— Դե՛, ասա կարգին տղա է, էլի... իսկ քիչ առաջ նրա հայրն ինձ զանգահարեց. կիրակի օրը տղայի բանակ մեկնելու առիթով քեֆ են կազմակերպում, մեզ էլ էր հրավիրում։ Ես, իհարկե, հրաժարվեցի։

— Գուցեև ճիշտ չե՞ս վարվել։

— Ես այդ լակոտի հետ սեղան չեմ նստի... Ճիշտն ասած՝ խորհուրդ տվեցի մարդաշատ ուրախություն չկազմակերպել, դա էլ ավելորդ եմ համարում, բայց, որքան գլխի ընկա, այդ հարցում նրան համոզել չկարողացա։ Ես գիտեմ, ամբողջ

թվայնացրել է 1915.info կայքը

գյուղը գվխներին կհավաքեն, մի իսկական հարսանիք։ Հա՜ Նվարդ, մեզ մոտ Մոսկվայի գեղարվեստական թատրոնն է գա՜ լիս, առաջին ներկայացումը շաբաթ օրն է, տոմս եմ վերցրել։

— Շատ էլ լավ ես արել, Հրանտ։ Իսկ ես վաղը մի կարևոր հարց ունեմ լուծելու։ Այսօր մի մարդ էր եկել ինձ մոտ, երեկոյան կպատմեմ։

— Հո քո ցնդած բանաստեղծը չէ՞ր։

— Ո՛չ, դժբախտաբար, իմ բանաստեղծը ցնդել—վերացել է, վաղուց չի երևում։

— Նվարդ, այդ որտե՞ղ կարդացինք.

«Ես քեզ այնպես եմ սիրում,
Կարծես չեմ սիրում...»։

— Իսկ դա հնարավո՞ր բան է, Հրանտ, ինչպես փիլիսոփաները կասեին, հակասությունների միասնությո՞ւն։

— Հանուն այդ միասնության՝ մինչ Երեկո...

Առավոտյան ժամը տասին Մանուկ Շմավոնյանը տղայի հետ միասին, անաղմուկ մտան Նվարդի աշխատասենյակը։

— Բարև ձեզ, նստեցեք, խնդրում եմ։

Ու Նվարդն ուշադիր նայում է խոշոր քթով ու գանգուր մազերով պատանուն։ Առաջին տպավորությունը վատ չէ։ Երևում է շատ ամաչկոտն է. լրիվ չհասունացած խմոր, ինչպես Լուսիկ մայրիկը կասեր, ուզենաս դրանից սովորական հաց կթխես, ուզենաս՝ գաթա։ Կարող է նաև կո՞ւտ գնալ, նայած հացթուխի վարպետությանը։ Ուրեմն այս ջահելին և լավ խորհրդատու է պետք, և լավ ընկեր. գուցե ինքը խորհրդատուի դե՞ր կստանձներ, իսկ որպես ի՞նչ, հանուն ինչի՞, մարդասիրության, հանուն բարության։

— Երիտասարդ Շմավոնյան, ձեր դիպլոմը կարելի՞ է նայել։

— Խնդրեմ, ընկեր Ստեփանյան։

Ահա՛, ուրեմն անունը Սուքիաս է. որտեղից էլ ճարե՞լ են այս անունը։ Տղան ինչպե՞ս զգաց այդ տարակուսանքը, Նվարդը ղարմացած էր, նրբանկատությա՞ն արդյունք է, թե՞ այդ մասին այնքան խոսք ու զրույց է եղել, որ...

— Գիտեմ, անհաջող անուն է, բայց ի՞նչ կարող եմ անել. ծնողներս են այդ ընտրությունը կատարել։

— Հորս անունն է, տղա ջան, ասել եմ քեզ, ուզում էի, որ

թվայնացրել է 1915.info կայքը

չկորչի.— այնպես մեղավոր տոնով է խոսում, ասես արդարա-
նալ է ուզում։

— Բոլոր անուններն էլ լավն են, սիրելի Սուքիաս, շատ էլ լավ հնչում է։ Անունը դրսի կեղևն է, մեջը բան լինի. որևէ մե-
կին հարգե՞լ են կամ մարդկանց հիշողության մեջ մնացե՞լ է մե-
կը իր լավ անվան համար. մարդս մարդ լինի, անունը երկրոր-
դական բան է։

— Դե՛, ինչո՞ւ, լավ անունն էլ իր հարգը ունի.— անհար-
մարության զգացումից շատագունած՝ խոսնց Սուքիասը։

Ո՜չ, կարգին տղա է երևում, արժե սրան տեր կանգնել։ Ինքն իրեն մտմտում էր Նվարդը։ Ասենք դու արդեն փորձ ունես ու-
րիշի երեխային տեր կանգնելու... Պետք չէ այդքան դաժան լի-
նել սեփական անձի նկատմամբ։ Եվ դրանում ոչ մի վատ բան էլ չկա։

— Տեսնենք գնահատականնե՞րդ ինչպիսին են.— ու դիպ-
լոմն է նայում։— Ահա, և՛ միջակ, և՛ լավ, և՛ գերազանց։ Ուրեմն կարող էիր ավելի լավ սովորել։

— Ճիշտ է, ընկեր Ստեփանյան, մեր կուրսում մի երկուսը կային, ծույլ ու կռվարար տղաներ էին. հա ծիծաղում էին լավ սովորողների վրա, ձեռ էին առնում, մանավանդ՝ տղաներին։ Երևի դա էլ էր խանգարում։

— Իսկ աշխատել ուզո՞ւմ ես, միայն անկեղծ ասա։

— Ուզում եմ։ Արդեն փոքր չեմ, մի բանով հորս պիտի օգ-
նե՞մ թե չէ։

— Ավարտել ես կոոպերատիվ տեխնիկումը, ինչո՞ւ քո մաս-
նագիտությամբ չես աշխատում։

— Տեղ չկա և հայրս չի ուզում։

— Էդ առևտրից ու առևտրականներից ես վախենում եմ, ինչ ճիշտ է, ճիշտ է։ Դրանց դուռը ես ոչ մի անգամ էլ չեմ գնա-
ցել, դուք մի բան արեք, աղջիկս։

— Մենք մի փոքրիկ տպարան ունենք, ես քեզ կարող եմ այնտեղ տեղավորել. գուցե գրաշարությո՞ւն կսովորեիր։ Տես-
նեմ, ահա, հայերենից լավ գնահատական ունես։ Իսկ գիրք կարդալ սիրո՞ւմ ես։

— Շատ եմ սիրում։ Ճիշտ է, տանը քիչ գրքեր ունենք, բայց գրադարանից միշտ վերցնում եմ։

— Լավ է, լավ է, հիմա։

Ու ներքին հեռախոսով կապվեց տպարանի դիրեկտորի հետ։

թվայնացրել է 1915.info կայքը

— Ընկեր Սեդրակյան, դուք ժամանակ կունենա՞ք վերև բարձրանալու։ Խնդրում եմ... Ահա, ծանոթացեք, սա այն տղան է, որն ուզում է ձեզ մոտ աշխատելու խնդրում եմ ուշադիր և արտացավ վերաբերմունք։

— Ներեցեք, Նվարդ Օգանեսովնա, իսկ տղան ո՞վ է, այսինքն...

Անպայման ուզում է իմանալ՝ բարեկա՞մ է, ծանո՞թ է. առանց դրան չեն պատկերացնում։

— Իմ մի լավ բարեկամի տղան է, սա էլ հայրն է, քեռի Մանուկը։

— Հասկանալի է։ Գնացինք, երիտասարդ։

— Շնորհակալություն, ընկեր Ստեփանյան։

— Ինձ այսուհետև մորաքույր Նվարդ կասես։

— Սղավ, ավելի լավ։

Աշխատասենյակում երկուսով մնացին, քեռի Մանուկի հետ։ Սա ոտքի կանգնեց։ Նկատելի հուզված էր։

— Աղջիկ ջան, էդ ի՞նչ սիրտ ունես դու... Ջորանա՞ս, էս լավ արարմունքդ քո բալիկների առաջ պահած լինի։ Ուրեմն ինձ ճիշտ էին խորհուրդ տվել, որ քեզ մոտ գամ. ձեր մինիստրությունում աշխատող մի ծանոթ ունեմ, նա ասաց, նրա մինն էլ հազար դառնա։ Մենակ ես ո՞նց պիտի քո լավության տակից դուրս գամ...

— Քեռի Մանուկ, եթե այդ խոսքը մեկ էլ լսել եմ, ձեզնից շատ կնեղանամ և, երդվում եմ, Սուքիասին էլ տիրության չեմ անի։

— Աղջիկ ջան, ի՞նչ ասեմ, հիմա, առանց վերաբերմունքի...

— Այո, դժբախտաբար լավությունն ուրիշ կերպ չեն պատկերացնում։

Ու Նվարդի մտքում թպրտաց մի սրամիտ, բայց և դառն խոսք.— Հիմա կինը իր ամուսնուն անգամ ապրանք չի բաց թողնում, եթե մեջը հաշիվ չկա... Ումի՞ց է լսել այդ խոսքը. հա, ուրիշ էլ ո՞վ կասի, Սենոն էր, այն պատմական երեկոյին «թողարկած» նրա սրամտություններից մեկն էր, գուցեև միակը, որ մնացել է իր հիշողության մեջ։

Գնացին բոլորը. Նվարդը մենակ է մնացել։ Ով այնպես թեթև է զգում իրեն, ասես մի լուրջ ճակատամարտ է շահել, չնայած դիտի, համոզված է, որ իր արածը շատ չնչին բան է։

թվայնացրել է 1915.info կայքը

Բայց, միևնույն է, լավութիւն է։ Միայն մի բան չի կարողանում մինչև վերջ պարզել.— Նա այսպես կվարվեր նաև Արշակից առաջ, թե՞ մայրական զգացումն է նրան կարգին մարդ դարձրել...

Շտապ զանգահարեց ամուսնուն. լավ է, տեղում էր։

— Հրանտ, որդի Արշակի, և՝ հայր Արշակի, քեզ մի շատ լուրջ հարց պիտի տամ.— Բարութիւն կամ լավութիւն անելուց ավելի լավ ի՞նչ կա աշխարհում։

— Լավութիւնից լավը, իմ կարծիքով, մեկ էլ լավութիւնն է, սիրելի տիկին։ Միայն մի պայմանով, որ քո արածը գնահատվի, անհասկացողի և ապիկարի համար արած լավութիւնը անիմաստ շռայլութիւն է։

— Համաձայն եմ քեզ հետ, իմ գլխավոր։ Միայն շատ կուզենայի այդ մասին մի քառատող լսել։ Գուցե դու կբարեհաճեիր քրքրել քո հիշողութիւնը և ինձ համար մի գեղեցիկ բանաստեղծութի՞ւն կարտասանեիր։

— Հոգիս, ստիպված եմ մերժել քո հանճարեղ առաջարկութիւնը, որովհետև ինձ մոտ հիմա խորհրդակցութիւն է սկսվելու, արդեն հավաքվել են ընդունարանում։ Քեզ մոտ Համո Սահյանի վերջին գիրքը կա, կարծեմ, բաց արա այսինչ էջը և կարդա, միայն՝ իմ ձայնով, խնդրում եմ։

Նվարդն անմիջապես գտավ ու կարդաց, ինչպես Հրանտը կարտասաներ.

Աշխարհում միշտ բաց է եղել
Դռներս կրկնի վրա...
Ելնողին չեմ ասել՝ արի,
Մտնողին չեմ ասել՝ դնա։
Իմ ձեռքին ինչ-որ ունեցել,
Բոլորը բաշխել եմ ձրի,—
Նվ հացի պատառը վերջին,
Եվ վերջին կաթիլը ջրի։

Հետո կամաց խոսեց ինքն իրեն.

— Շնորհակալ եմ, Հրանտ, իսկապես որ շա՜տ էր լավը։

Հետո թերթեց գիրքը ու որոշեց, որ երեկոյան այս մեկն էլ ինքը կկարդա Հրանտի համար.

Որ աշխարհը նույնն էր մնալու,
Որ քո ջանքից
Նրա բեռը չէր թեթևանալու,

թվայնացրել է 1915.info կայքը

Էլ ո՞վ էր ասում,
Որ այնքան ծանր հոգսերը նրա
Առնիր քո թույլ ուսերի վրա։

Օթե, իսկապես, ամեն մեկը փորձեր աշխարհի բեռը թեթևացնել...

14.

Ամեն մի նոր ծանոթություն հարստացնում է մարդուն, նրա կյանքը դարձնում ավելի բազմազան ու հաճելի։ Տեսնես մարդն իր անցնելիք ճանապարհին քանի՞ ծանոթություն է ունենում և դրա ո՞ր տոկոսն է դրական զգացմունքների աղբյուր հանդիսանում...

Օրվանդն արդեն երկրորդ օրն է, ուղում է հեռախոսել Աշխենի հետ, մի տեսակ անհարմար է զգում։ Ինչո՞ւ. հեռախոսի համարն ինքը տվեց, չէ՞, և ասաց, որ հույս ունեմ, մեկ-մեկ կզանգահարեք։ Հոր նամակի պատասխանը պիտի գրի, ինչպե՞ս կարող է Աշխենի մասին ոչինչ չասել, երբ նա երկու անգամ հիշում է իր ընկերոջ աղջկա անունը։ Զանգահարեց, վերջապես։ Հեռախոսափողում լսվեց մի կնոջ ձայն. դժվարանում է որոշել՝ նա՞ է։ Ախր ընդամենը մի անգամ են հանդիպել, ձայնն էլ կարգին չի հիշում։

— Աշխեն Գուրգե՞նովնա։

— Ես եմ։ Իսկ ո՞վ է հարցնում։

— Օրվանդն է, բարև ձեզ։

— Բարև։ Ո՞ր Օրվանդը։

Տղան հենց դրանից էլ վախենում էր։ Ու ինքն էլ չիմացավ, թե ինչու փշրտվեց։

— Ես հորս, Սահակ Սահակյանին կխնդրեմ, որ գյուղից գա և մեզ նորից ծանոթացնի։

— Վա՛յ, Օրվանդ, կներեք, խնդրում եմ. հավանաբար ինձ հայրանունով դիմելը շփոթեցրեց։ Բայց, միևնույն է, պետք է, վճռականորեն դատապարտել իմ անշնորհքությունը։ Մեր հանդիպման հաջորդ օրը քեռի Սահակն ասաց՝ աղջիկ ջան, հաշվիր, թե դու Օրևանում եղբայր ունես. և ահա անխելք քույրը, այդքան շուտ, մոռացել է նորահայտ եղբորը, աններելի հանցագործություն։

— Աշխեն, ես բավարարված եմ, և հաշվեցեք, որ ներումն արդեն ստացել եք։

թվայնացրել է 1915.info կայքը

— Շնորհակալ եմ, Երվանդ։ Հիմա ասացիք տեսնեմ ձերոնք ինչպե՞ս են, ի՞նչ նորություններ կան, ինչո՞ւ մի անգամ չինք երևում. հույս ունեմ, որ մեր տան տեղը չեք մոռացել։

— Բարեբախտաբար շուտ ու հեշտ մոռացողներից չեմ... Մերոնք լավ են, նամակ եմ ստացել, ջերմորեն բարևում են ձեզ։

— Շնորհակալ եմ, Երվանդ։ Անկեղծորեն պետք է խոստովանեմ, որ քեռի Սահակի հայտնվելուց ու մեր ծանոթությունից հետո կյանքն ինձ համար բոլորովին նոր երանգներ է ստացել, նոր իմաստ, և ես ուղղակի երախտապարտ եմ։

— Հաճելի է լսել։ Եվ որպեսզի ձեր կյանքը հարստանա մի նոր երանգով ևս, արժեր, որ մեր հանդիպումները շարունակվեին, թե չէ քույր ու եղբայր նորից կարող են իրար մոռանալ։

— Ես լրիվ համաձայն եմ ձեզ հետ. գուցե երեկոյան կբարեհաճե՞ք մեզ մոտ գալ, Երվանդ Սահակովիչ։

— Ես, իսկապես, ուզում եմ, որ մենք հանդիպենք, միայն ոչ ձեր տանը։ Լեհական էստրադային համերգ կա այսօր, մեծ դահլիճում, գուցե միասին կգնայի՞նք։

— Հաճելի առաջարկություն է, միայն երեխային մեկի մոտ թողնելու հարցը պիտի լուծել։ Լավ, ընկերուհուս, թամարինց տուն կտանեմ։ Հիմա խնդրում եմ ժամադրությունը դնել կոնկրետ հողի վրա, ե՞րբ, որտե՞ղ։ Հա՛, իսկ տոմսեր կա՞ն, մեզ մոտ տալիս էին, չվերցրի, մտածելով թե ո՞ւմ հետ պիտի գնամ։

— Մեզ մոտ էլ էին տալիս, ես էլ վերցրի, մտածելով, թե աշխանի հետ կգնամ։

— Ո՛չ, դուք բավական հեռատես տղա եք երևում, միայն չեմ հասկանում, թե ինչո՞ւ մինչև հիմա մենակ եք։ Կներեք անհամեստ հարցիս համար։

— Բոլորովին էլ անհամեստ չէ. վերջիվերջո քույրը պարտավո՞ր է հետաքրքրվելու իր եղբոր ճակատագրով... Աշխեն, չմոռանամ ասել, որ հայրս խնդրել է այն պատմական լուսանկարը, երկուսով, ձեր հոր հետ միասին։ Ծանոթ լուսանկարիչ ունեմ, պետք է բազմացնեմ և ուղարկեմ հորս։

— Երվանդ, գիտե՞ք, դա հորս միակ լուսանկարն է, հանկարծ...

— Կարող եք չանհանգստանալ. խոստանում եմ մեկի վոխարեն երեքը վերադարձնել, և, հույս ունեմ, ավելի լավ վիճակում։

թվայնացրել է 1915.info կայքը

— Իսկ դա հնարավո՞ր է։

— Ասում են՝ ոմանց հաջողվել է նույնիսկ արհեստական մարդ պատրաստել... Նկարը չմոռանաք, խնդրում եմ։

Հանդիպեցին օպերայի այգում։ Դեռ կես ժամի չափ ժամանակ կա՝ մինչև համերգի սկիզբը. քայլում են ծառուղիներում ու զրուցում։ Բայց ինչ-որ չի ստացվում. հեռախոսով ավելի ադատ ու անկաշկանդ էր նրանց փոխկրակոցը, ինչո՞ւ Երևի խոսքն էլ իր տրամադրությունն ունի, թափ առնելու ու հարմար ժամանակ է պետք։ Այնքան ճնճղուկներ կան ծառերին. նստել են անշարժ ու երգում են ոլ ինչպես ուզում է. բաղաձայն համերգ, գուցե պատճառը դիրիժորի բացակայությո՞ւնն է... Այդպես մեկ էլ իրենց նուրբ թևերին ծանր բեռ են առնում խնձորենին, տանձենին, և դրանից ինչքա՜ն գեղեցիկ է դառնում ծառը՝ բերքառատ, ծանրակշիռ։

Իսկ նրանց խոսակցության ընդմիջումը երկարեց, գուցե ավելի երկար, քան պետք էր։

— Երվանդ, գիտե՞ք, թե ինչու երկուսիս խոսքը մի տուվով դժվար է գնում. հավանաբար պատճառը հոգնակիով իրար դիմելու պաշտոնական ու սառը տոնն է։

— Երդվում եմ, Աշխեն, որ իմ մտքում էլ նույն ըմբոստացող պատճառաբանությունն էր։

— Ուրեմն համաբենք, որ սառույցը կոտրվեց։ Հիմա, խնդրում եմ, պատմիր քո մասին, ամենայն մանրամասնությամբ. ես այդ պահանջում եմ քեղնից քրոջ իրավունքով։

— Մանրամասն պատմելը մեզ կարող է համերգից զրկել։ Որ ինժեներ եմ աշխատում, այդ գիտես։ Երեսունչորս տարեկան եմ, բայց դեռ ընտանիք կազմելու երջանկությունը չեմ ունեցել։ Պատճառները շատ են, միայն մեկն ասեմ։ Քսան տարեկանում խենթի նման սիրահարվեցի մեր կուրսից մի աղջկա։ Սա էլ կարծես թե անտարբեր չէր իմ նկատմամբ։ Շատ փակ աղջիկ էր։ Մեկ էլ մի օր լսեցի, որ այս Սուսանն ամուսնացել է մի կոշկակար վարպետի հետ։ Ասում էին՝ շատ փող ունի... Իմ այդ հիասթափությունը տարիների կյանք ունեցավ։ Մինչև ուշքի կգայի, համոզվեցի, որ արդեն ծերացել եմ, դարձել չամահավան, փնթփնթան։ Ու մնացի մենակ։ Ծնողներիս ամենամեծ հոգսը սա է. երկու փեսա ունեն, բայց, ահա, հարս տեսնելու բախտին չեն արժանանում։ Այնքա՜ն է խոսվել այդ մասին մեր տանը։ Ճար չունեմ, ըմբոստանում եմ, բայց նաև ծնողներիս չվշճալ չեմ կարող, մանավանդ՝ մորս։

թվայնացրել է 1915.info կայքը

— Այժմ նաև՝ նորահայտ քյոջդ։ Նվ հավանաբար իմ սուրբ պարտականությունը պիտի լինի լրջորեն զբաղվել եղբոր ամուսնացնելու հարցով։ Ընդունո՞ւմ ես, ուշացած փեսացու։

— Վախենում եմ, թե բան չի դուրս գա, քույրիկս, եղբայրդ շատ է մեծացել։ Դե՛, ներս գնանք, ես տեսնում եմ, որ այս խոսքը երկար շարունակություն է ունենալու։

— Այո՛, ինչպես ամսագրերում են գրում, շարունակությունը հաջորդ համարում...

Համերգը վատը չէր, միայն ինչո՞ւ կենտրոնանալ չէին կարողանում։ Մանավանդ անհանգիստ էր Աշխենը։ Երվանդը նրբանկատություն է ցուցաբերում ու չի հարցնում Գուրգենի հոր մասին, իսկ ինքը պարտավո՞ր է ասել։ Վերջապես դա ի՞նչ թաքցնելու բան է։ Միայն չգիտի, չի որոշել իր ասելիքի մանրամասնությունը։ Իսկ ավելի ազնիվն ու հեշտը մերկապարանոց ճշմարտությունն ասելը չէ՞։ Ախր դրա մեջ էլ մերկ երևալու անհարմարություն է սարսափեցնում...

Ընդմիջմանը դուրս եկան ճեմասրահ։ Ու դեմառդեմ հանդիպեցին այն Ռուբենին։ Երվանդը բարևեց սիրով ու նրանց իրար ներկայացրեց.

— Ռուբեն Սուրենյան, իմ դասընկերներից, Աշխեն Մարգարյան, հորս ընկերոջ աղջիկը։

Ռուբենը սեղմեց Աշխենի ձեռքը ու կամաց ասաց.

— Մենք ծանոթ ենք, բարեբախտաբար։

Աշխենը լրացրեց նրա խոսքը.

— Միայն կարգին ծանոթներ չենք, դժբախտաբար։

Քիչ հեռվում Ռուբենին մի կին էր սպասում. մի՞թե սա էլ արդեն լուծել է իր հարցերը, անցավ Աշխենի մտքով։ Իսկ դա քո ի՞նչ գործն է, ըմբոստացավ ներքին ընդդիմախոսը։ Ո՛չ, ես պարզապես նկատում եմ զարմանքով, որ իմ թեկնածուները հերթով դուրս են գալիս շարքից, մինչև այլևս քեզնով հետաքրքրվող չի լինի։ Ե՞րբ վրա կհասնի այդ «այլևսը...», իսկ մի՞թե դու չես նրանց շարքից հանում, շարքից դուրս ընկած միայնակ մայր, այս է տխուր ճշմարտությունը... Քեռի Սահակի նամակում խոսք կար ինչ-որ ինժեներ Ռուբենի մասին, որին դիմել է Երվանդը իմ հասցեն փնտրելու օրերին. ուրեմն մեր այս նոր ծանոթության ու բարեկամության մեջ կա նաև Ռուբենի օգնությունը, գոնե այդքա՞ն երախտապարտ լինեմ նրան... Ուրեմն Երվանդը ոչինչ չգիտի այդ Ռուբենի մտադրության մասին,

թվայնացրել է 1915.info կայքը

ավելի ճիշտ՝ նախկին մտադրության։ Իսկ դա լա՞վ է թե՞ վատ։ Իսկ միևնույն չէ՞, նրա իմանալ-չիմանալուց ի՞նչ կարող է փոխվել։

Վերջացել է համերգը. դուրս են եկել մեծ դահլիճից ու քայլում են դանդաղ։

— Աշխե՛ն, ես հույս ունեմ, որ այս երեկոն կորած չես համարում։

— Ո՛չ, Սրվանդ, և համերգն էր լավ, և մեր ընույցն էր հաճելի։

— Իսկ մենք ե՞րբ ընուցեցինք. ինձ մի փոքր հարցաքննեցիր, և վերջ։

— Իսկ դու ինձ հարցաքննելու մտադրություն չունե՞ս, Երվանդ՝ որդի Սահակի. սիրում եմ հայրանվան այս ձևը, ափսոս, որ բավարար տարածում չի գտնում։

— Ես կարծում եմ, որ հղբոր իրավունքների մեջ դա չի մտնում։

— Շնորհակալ եմ նրբանկատության համար, Երվանդ։ Ես էլ գտնում եմ, որ քույրն իրավունք չունի իր հղբորից թաքնվելու... Ահա՛, նստենք այստեղ, մեր ծանոթ նստարանին։ Դժբախտաբար բնկ տհաճ բաներ պիտի ասեմ։ Գուցե տհաճը ճիշտ բառ չէր, համենայնդեպս, տխուր ճշմարտությունն այն է, որ իմ կյանքը էն գլխից սխալ դասավորվեց։

Երվանդը ծխախոտ վառեց ու ծխում էր անհամբեր։ Ծառերի վրա ճնճղուկների երամն էր թառել-մնացել, միայն այլևս չէին երգում. կուչ էին եկել կողք-կողքի, և ոչ մի շարժում. մի՞թե քնել են։ Եվ, հետաքրքիր է, թռչունն էլ երազ տեսնո՞ւմ է, նրանք էլ երազանքներ ունե՞ն, սիրո ու դավաճանության հարցե՞րը նրանց մոտ ինչպես են լուծվում...

— Հինդ-վեց տարի առաջ մտերմական կապի մեջ եմ եղել մի ամուսնացած տղամարդու հետ, խենթի նման սիրում էի նրան... Իմ Գուրգենն այդ կապի արդյունքն է.— Աշխենը խոսում է զարմանալի հանգիստ և, ասես, ոչ իր ձայնով։ Կարծես թե խոսքն ուրիշի մասին է, ինքը միայն պատմող է։ Ու հաճախակի ետ է շպրտում ճակատի մազերը։ Իսկ Երվանդի ծխախոտը հանգել է, քրքրում է գրպանները, լուցկի չի գտնում նորից վառելու համար։

— Հիմա ես ու իմ տղան ենք մնացել այս աշխարհում, և Գուրգենս հայր չունի...

թվայնացրել է 1915.info կայքը

Լուցկին գտնվեց, վերջապես, վառեց ծխախոտը ու ծխում էր մի խեղճ ագահությամբ։

Լռությունը երկարեց, ծանրացավ։

— Ես շնորհակալ եմ, որ ինձ ավելորդ հարցեր չես տալիս.— ձեռքը դրեց տղայի ոսկին.— իսկ այդքան շատ ծխել պետք չէ, Երվանդ, դառնությունը ծխով չես հանգցնի... Գնացինք։

— Իսկ ո՞ւր, տո՞ւն։ Ձայնը հազիվ է լսվում։

— Ո՛չ, ընկերուհուս մոտ, երեխայի ետևից։

— Տաքսի կվերցնենք ու միասին կգնանք։ Իսկ ո՞ւ վիճակը, Աշխեն, նախանձելի չէ, իհարկե, կյանքն այնքան բարդ է։ Կարո՞ղ ես պատկերացնել, մինչև հիմա էլ չեմ կարողանում մոռանալ այն առաջինին, կոշկակարի կնոջը..., իսկ քեզ, եթե իրավունք էլ ունենայի, միևնույն է, չէի դատապարտի։

— Շնորհակալ եմ, Երվանդ,— ու նորից ձեռքը բարձրացավ վեր՝ ճակատի մազերը ետ տալու համար։

15.

Մինիստրության կոլեգիայի քննարկմանը ներկայացվող հարցերն ուսումնասիրված էին, ինչպես ասում են, լայնքով ու խորությամբ. Նվարդին մնում էր միայն պատրաստել որոշման նախագծերը։ Առավոտվանից դրա վրա էր աշխատում։ Գրեց, արտագրեց, մեքենագրեց իր ձեռքով ու նոր միայն իրեն իրավունք վերապահեց սուրճ պատրաստելու։ Ասել են՝ ճնշումդ ցածր է, իրավունք ունես, ո՞չ, նույնիսկ լավ կլինի օրվա ընթացքում երկու անգամ սուրճ խմես։ Հրանտի ճնշումը բարձր է, նրան սուրճը վնասել կարող է։ Ինքն անտարբեր է սուրճի նկատմամբ, իսկ Հրանտը շատ է սիրում։ Հաճելին վնասակար է, տհաճը՝ օգտակար։ Բնության տարօրինակություններից մեկն էլ այս չէ՞։ Այդպես է, մեկին փլավն է տալիս, մյուսին՝ ախորժակը։ Մինիստրության պլանբաժնի աղջիկներից Սահականույշը չորս երեխա ունի, որոշել էին «վերջակետ դնել». հինգերորդի «վտանգն» էր առաջացել։ Ի՞նչ ողբերգություն էր ապրում այդ անխելքը. ի վերջո գնաց բժշկի մոտ, աղաչվեց սպասվող երեխայից։ Իսկ իր նվիրական սպասումների վրա արդեն մամուռ է նստել...

Սուրճը խմել է ու գավաթի հատակն է ուսումնասիրում։ Ոչինչ չի տեսնում, ավելի ճիշտ՝ ոչինչ չի հասկանում, իսկ նույն

թվայնացրել է 1915.info կայքը

պլանբաժնի Սահականույշը կես ժամ կխոսի ամեն մի գավաթի շուրջ, և ի՞նչ անգիր արած վարպետությամբ.— Ահա, տեսնո՞ւմ ես, քո առաջ երկու ճանապարհ է պահված, մեկը տանում է դեպի անդունդը. այն մութ խոռոչը նկատո՞ւմ ես, մյուսը դուրս է բերում լուսավոր աշխարհ: Բարեբախտաբար դու գնում ես երկրորդ ճանապարհով, և մենակ չես, գիտե՞ս, մի լուրջ հենարան ունես կողքիդ. ահա, գլխաբաց ու սիրուն տղամարդ է, տեսնո՞ւմ ես... Գավաթի տերն անհարմար է զգում ասելու, որ ինքը ոչինչ չի տեսնում, որ այդ հենարան կոչվածն այդպես էլ չկա: Գուցե դեռ ուշ չէ, դեռ կգա՞ այդ սիրուն տղամարդը, հույսով ապրելն էլ մի բան է: Բաժակ նայողի ամբողջ արվեստի մեջ թերևս գնահատության արժանին դա է, հույսի առկայծումը: «Հույսը վշտերի քույրն հավատարիմ». լավ է ասել բանաստեղծը:

Անաղմուկ ներս մտավ պատանի ցրիչը, մի նամակ դրեց գրասեղանին ու դուրս գնաց: Սարոյից է: Վերջապե՞ս: Ոչ, դեռ հույս կա, որ սա մարդ է դառնալու... Նամակն էլ, ինչպես ասում են, ոչինչ, և մխիթք կա մեջը, և զգացմունք, և, մանավանդ մարդ, այս է ուրախալին: Զղանգի՞ Հրանտին: Իսկ ինչո՞ւ շտապել, նախ պետք է նորից կարդալ:

«Շատ հարգելի մորաքույր Նվարդ, առաջին նամակը մոռս եմ գրել, երկրորդը՝ թեկուզև ուշացումով, ձերն է: Ես, կարելի է ասել, լավ եմ, քիչ-քիչ վարժվում եմ այս կյանքին: Ճիշտ է, խստությունները շատ են, չարչարանքն էլ՝ անպակաս, բայց հույս կա, որ կհարմարվեմ: Անկարդության համար մի անգամ երկու օրով հասպտավախտ եմ նստել, ի՞նչ էլ մուտտաո բառ է. չեմ նեղանում, տեղին էր: (Այս մասին, իհարկե, մորս չեմ գրել): Ու չեմ մոռանում, որ այդ նստածս ժամանակ ընկերներիցս մեկը, ռուս տղա է, Դմիտրի անունով, ինձ համար թաքուն ուտելիք բերեց: Ջէ՛, լավ տղաներ կան այստեղ, նրանց հետ կարելի է և դժոխք գնալ... Ոչ մի հայ չկա մեր զորամասում. ուզբեկ տղաներից մեկը, Ակբարն ասում է՝ սա ռուսական հա-
մալսարան է մեզ համար, և ճիշտ է ասում. հույս կա, որ ռուսերեն կարգին կսովորենք, դա ինձ շատ է ուրախացնում: Մի անգամ, հիշում եմ, դպրոցից մեզ տարել էին էքսկուրսիա, Կիև: Այնտեղ ծանոթացա մի ռուս աղջկա հետ. շատ սիրուն էր, (ներեցեք անամոթ Սարոյին), և ես սրա հետ կարգին խոսել չէի կարողանում: Նա կարկտի նման վրա էր տալիս, ես բան չէի հասկանում, ու ծիծաղում էր անխիղճ: Այնպես վիրավո-

թվայնացրել է 1915.info կայքը

րական էր, մոռանալ չեմ կարող։ Հիմա ամբողջ օրը պարապում եմ ռուսերեն, գրքեր եմ կարդում. հենց միայն սրա համար արժե բանակ գալ։ Ես շնորհակալ եմ քեռի Հրանտից, գոնե այս անգամ հավատացեք իմ անկեղծությանը... Բարևներս հաղորդեք Լուսիկ տատիկին։ Ձեզ բարևում են նաև իմ ընկերներ Դմիտրին ու Ակբարը։ Մնամ ձեր նամակին սպասող՝ Սարիբեկ Ճշմարիտյան (նախկին՝ ջինսով Սարո...)։ Առաջներում այդ արտահայտությունն ինձ դուր էր գալիս, հիմա եմ հասկանում, թե ինչքան անխելք եմ եղել։ Մի խոսքով, ուզում եմ մարդ դառնալ, տեսնենք կհաջողվի՞։ Եվ որպեսզի մինչև վերջ անկեղծ լինեմ, ձեզ պետք է պատմեմ իմ մի «հերոսության» մասին, որ հիշում եմ, ականջներս կարմրում են... Մի գիշեր տրամադրություն շատ վատ էր, քունը մոտ չէր գալիս։ Աչքիս առաջ էն անտեր շուկան է, իմ ազատ ու անխելք թրև գալը։ Հողի վրա աշխատելու մասին չեմ մտածում, ես դրա հետ գործ չունեմ, իմը պատրաստի ապրանքը ծախելն է։ Մեքենան բարձած տանում ես խաղող, տանձ ու խնձոր կամ դեղձ, երեկոյան տուն ես դառնում՝ գրպաններդ փողով լիքը...

Մեկ էլ որոշեցի վեր կենալ և ուղիղ գալ Հայաստան. մտածում եմ, ինչ է, գնացքով հազիվ երկու օրվա ճանապարհ է։ Բոլորը քնած են. արթունը միայն ես եմ։ Վեր կացա շտապ, հագնվեցի թաքուն ու դուրս եկա զորամասից։ Հերթապահը Ակբարն էր։ Սրան խաբեցի, թե ծանոթի տուն եմ գնում, շատ չէ, մի ժամով։ Սա չեմուչում արեց, կիմանան, երկուսիս էլ կպատժեն։ Սրան մի կերպ համոզեցի ու պոկվեցի դեպի կայարան։ Դու մի ասա այս Ակբարը գնում, վեր է կացնում Դմիտրուն, թե այսպես-այսպես, ես, ասում է, վատ բան եմ տեսնում սրա մեջ, տղայի հետ մի բան չպատահի՞... Հասա կայարան, գնացքի գալուն մնում էր տաս րոպե։ Մեկ էլ Դմիտրին թևս բռնեց։ Ախպե՛ր, ասում է, հարցնելն ամոթ չլինի, ես ի՞նչ քամի է մտել քո գլուխը։ Թաքցնել չէի կարող, սրան ասացի իմ խելառ մտադրության մասին։ Իսկ դու, ասում է, մտածե՞լ ես դրա հետևանքների մասին, պատկերացնո՞ւմ ես, թե ինչ անհարմար դրության կարող ես ստեղծել քո ծնողների ու հարազատների համար, ինքդ էլ դեզերտիրի անուն կվաստակես, ա՞յդ ես ուզում»։ Դե՛, ճիշտն ասած, մինչև Դմիտրու գալն էլ սրդեն փոշմանել էի, բայց, ինչպես ասում են, իներցիայով գնում էի։ Հակաճառեցի ընկերոջս, ասացի՝ դու մի խառնվի, ես, միևնույն

թվայնացրել է 1915.info կայքը

է, պիտի գնամ։ Հենց այդ ժամանակ գնացքը կանգ առավ կառամատույցում։ Դմիտրին թևս բռնեց, մի լավ ոլորեց ու ասում է՝ նթե դու փորձես վազոն բարձրանալ, ես քո մռութը կջարդեմ։ Դե՛, Մուշեղի նման մի աժդահա էլ սա է... Ինձ քարշ տվեց, տարավ զորանոց, տատիս ասած՝ օղորմի նրա պապին...

Այդ գիշեր ու հաջորդ օրերին ես շատ մտածեցի իմ այդ քայլի մասին, տվի, առա, տեսա, որ դեռ շատ եմ խակ ու անխելք։ Ախր խակ միրգը ոչ միայն չի վաճառվում, առնողի զահլան էլ գնում է... Հիշեցի մեր գյուղացիներից մեկին, Հովհաննես քեռուն։ Պատերազմից տուն էր եկել երկու ոտքը կորցրած. պրոտեզի ու հենակների օգնությամբ մի կերպ քայլում էր։ Ամեն շուտ նա իր ճանապարհն անցնում էր էշի վրա նստած։ Նիհար ու փոքրամարմին կենդանի էր, քեռի Հովհաննեսի ոտքերը համարյա գետնին էին հասնում։ Գյուղի մի ծայրից մյուսն էր գնում, իր փոքրիկ կրպակը, որտեղ միրգ էր ծախում, մեկմեկ էլ՝ ծխախոտ։ Դրանով էր տունը պահում, իսկ տանը ծեր մայրն էր ու տանը մնացած քույրը։ Նրա կրպակում մեծ մասամբ անհաջող միրգ էր լինում, խակ ու կարկուտ ծեծած, բայց շատերն էին առնում, ինչպես ասում են՝ խաթրի համար։ Իր մոխրոտի վրա նստած գյուղով անցնելիս մեկ էլ կտեսնեիր շները վրա տվեցին։ Մի երկու համարձակը մոտենում էին, նրա ոտքերը կծելու փորձեր էին անում ու վնգստալով ետ փախչում. դե՛, նրանց ատամներն էլ անզոր են փայտի ու կաշվի նկատմամբ։ Այդ պահերին մենք, երեխաներս, ծիծաղում էինք խեղճ ու խելառ, իսկ քեռի Հովհաննեսի դեմքին մի տխուր ժպիտ էր թառում... Տարիներ հետո միայն, երբ արդեն չկար զույգ ոտքը հաղթանակին զոհ տված քեռին, ես հասկացա այդ սիրտ մաշող ժպիտի իմաստը։ Ես այստեղ էլ այդ մասին երկար եմ մտածել ու ամեն անգամ կուլի մեջ եմ մտնում խղճիս հետ. ինչպե՞ս է, որ մարդիկ էն ծանր տարիներին իրենց արյունն ու կյանքն են տվել մեծ գործի համար, իսկ դու այս խաղաղ օրերին քեզ նեղություն տալ չես ուզում, քա որ հանկարծ մի նոր կռիվ պատահի, ո՞վ պիտի թշնամու առաջն առնի... Մորաքույր Նվարդ, այս բոլորը ձեզ պատմեցի, որպեսզի համոզվեք, որ այն խեղճ քամիներից վերջնականապես դեռ չեմ ազատվել, բայց, երդվում եմ, որ այն օրը կայարանի ճանապարհին էլ, ես հիշել եմ ձեզ, տեսել եմ ձեր դատապարտող հայացքը։ Մի խոսքով, կյանքում դժվար ու անհասկանալի բաներ շատ կան,

թվայնացրել է 1915.info կայքը

և, երևի, դրանց մեջ ամենադժվարը կարդին մարդ լինելն է։ Ներեցեք, եթե դատարկախոսությամբ համը հանեցի։ Ձեր՝ Սարիբեկ»։

Նվարդը, երկրորդ անգամ էլ նամակը կարդալուց հետո, մի տեսակ դժվարանում էր հավատալ, որ դա Սարոն է գրել. այսքան զգացմունք ու առողջ դատողություն որտեղի՞ց նրա մոտ, ինչպե՞ս է, որ նրա այստեղ եղած ժամանակ չի նկատել։ Ընդհանրապես գուցե ջահելների նկատմամբ մեծերի մոտ այդ ավելորդ թյուրատեսությո՞ւնը կա, այստեղից էլ՝ անտեղի, հաճախ չպատճառաբանված վոխթինթո՞ցը, մեղադրանքի հեղե՞ղը։ Ով մի՞թե մենք ճիշտ ենք վարվում, երբ ջահելի ամեն մի մեղադուր չեկող արարքի ետևում անպայման ուզում ենք տեսնել և՛ անխելքություն, և՛ անշնորհքություն, և՛ բոլոր բացասական «ություններըը»։ Այո, երիտասարդին հասկանալը հեշտ բան չէ, այստեղից էլ՝ նրա դաստիարակությունը ճիշտ հունի մեջ դնելու դժվարությունը։ Ո՛չ, ինքը մի լավ նամակ կգրի Սարիբեկին, իսկական մորաքրոջ նամակ, իհարկե, առանց ավելորդ ճառախոսության ու բարոյագիտական էքսկուրսների։ Շնորհակալություն կհայտնի նրան վստահության համար. համոզված է, տուն փախչելու ցանկության մասին ուրիշ ոչ մեկին չի գրել ու չի էլ պատմի։ Միայն կգրի,— սիրելի Սարո, ես ուզում եմ համոզված լինել, որ կայարանի այն չարաբաստիկ դեպքը քո վերջին վրիպակն է, այսքան միայն, նա կհասկանա։ Օ՛, բանից դուրս է գալիս, որ նա շատ ավելի հասկացող տղա է, քան ինքը կարծում էր։ Իսկ հիմա պետք է զանգել և ուրախացնել Լուսիկ մայրիկին։

— Մայրիկ, ես եմ, երեխան, երևի, քնել է. մի բան կերա՞վ, գոնե... Սարոյից մի այնպիսի՛ նամակ եմ ստացել, զարմանալի խելոք։

— Նվարդ ջան, էդ ի՞նչ լավ բան ասացիր, թող քո բերանը միշտ բացվի խեր խաբարի համար։

Ջանգահարեց Հրանտին, տեղում չէր. հանկարծ հիշեց Սուքիաս Շամավոնյանին։ Ինչո՞ւ, ի՞նչ կապ կա։ Ով ոչ մի։ Հիշեց ու վերջ։ Ու խիզճն սկսեց կաղալ մի կողմի վրա, երկու ամիսն անցել է, ինչ այդ տղան աշխատում է ձեզ մոտ, մի անգամ հետաքրքրվե՞լ ես նրա վիճակով։ Իսկապես, ոնց էլ մոռացել է։ Գուցե դրան նպաստել է քեռի Մանուկի այն պոչատ խո՞սքը.— քա ես էս լավության տակից ո՞նց պիտի դուրս գամ... Դժվար

թվայնացրել է 1915.info կայքը

թե. նա չի հիշել նաև ա՛յդ խոսքը։ Իսկ, այ, հիշողության մեջ մնացել է Սեննոյի մի սրամտությունը— լավություն արա ու գցիր ջուրը, մի օր դուրս կգա «Արմենիա» ռեստորանում...

Շտապ իջավ նկուղային հարկ, տպարան։ Սեդրակյանը Սուքիասին ինչ-որ բան էր բացատրում, բայց խոսելու տոնը բարեկամական չէր, ձայնի մեջ չորություն շատ կար.

— Քանի անգամ եմ ասել՝ դու միայն ինձ լսիր, իմ ասածն արա, ով ինչ ասում է, գործդ թողած վազում ես, բա եղա՞վ։

— Ընկեր Սեդրակյան, դի՛, ինձնից մեծ են տարիքով, որ խնդրում են, ինչպե՞ս մերժեմ։

— Խնդրո՞ւմ են. հասկացիր, սա բարեգործական ընկերություն չի... Վայ, Նվարդ Օգանեսովնա, բարև ձեզ, հղկում եմ, այսպես ասած, Սուքիասի ծուռն ու թերին։ Գնանք ինձ մոտ, խնդրում եմ։

Նվարդը դարձավ գլխիկոր կանգնած Սուքիասին.

— Օրվա վերջին, տուն գնալուց առաջ, ինձ մոտ կմտնես։— Ու Սեդրակյանի ետևից քայլեց դեպի նրա առանձնասենյակը։

— Ասեմ թե կամակոր տղա է, ճիշտ չի լինի. մի քիչ շատ է խեղճ, հասկանո՞ւմ եք, Նվարդ Օգանեսովնա, շատ է սրանանրան լսում։

— Մի՞թե դա ավելի լավ չէ հլսող ջահելից։

Նվարդի ձայնի մեջ ընդծված սառնություն կար, ինքն էլ չէր հասկանում թե ինչու։

— Դե՛, ինչ համեմատություն, Նվարդ Օգանեսովնա, աստված հեռու տանի այդպիսի աշխատողից։ Սա ուղղակի շատ է ինքնուրույնությունից դուրկ։

— Ջե՞ք գտնում, որ դրա համար էլ ժամանակ է պետք։ Միայն բացատրելու, հասկացնելու ճիշտ եղանակը պիտի գըտնել. հարգելի ընկեր Սեդրակյան, ձայնի բարձրացումով նրա մոտ ինքնուրույնություն չեք պատվաստի, և այդ բաները ես չէ, որ ձեզ պիտի բացատրեմ։

— Համաձայն եմ։ Ընդհանուր տպավորությունս վատ չէ, այս է կարևորը։ Իհարկե, ընդունակություններով չի փայլում, բայց աշխատասիրությամբ կարող է մի բանի հասնել։

— Եվ այդ հարցում ես խնդրում եմ ձեր օգնությունը... Ուզում էր նաև ասել, որ այնպիսի մի կամակոր տղայի, ինչպիսին Մարոն է, բանակում կարող են դարձի բերել, իսկ մենք այստեղ... Մի՞թե տպարանն էլ մի փոքրիկ զորամաս չէ. վեր-

թվայնացրել է 1915.info կայքը

ջիվերջո մարդուս դաստիարակության երեք օջախներից մեկն է հիմնարկ-ձեռնարկությունը, ընտանիք, դպրոց, աշխատավայր։ Ջասաց, և կարիք էլ չկար. Սեդրակյանն իրենից էլ մեծ է մի քանի տարով։ Թե՞ ճիշտ բանը հասկանալու համար երբեք ուշ չէ։

Օրվա վերջին Սուքիասը ճեղք արեց դուռը ու կամաց հարցրեց,— կարելի՞ է։

— Ներս արի, նստիր ու պատմիր քո գործերի մասին, առանց որևէ բան թաքցնելու։

— Ի՞նչ պատմեմ, մորաքույր Նվարդ, կարծես թե վատ չի, կամաց-կամաց վարժվում եմ։ Գրաշարություն եմ սովորում, հետո էլ բանվորություն եմ անում, հարմար է։ Այսօր հինգ էջ շարել եմ ինքնուրույն, և ընդամենը չորս սխալ էի թույլ տվել։

— Իսկ Սեդրակյանի դժգոհության պատճա՞ռն ինչ էր. քեզ լա՞վ չի նայում։

— Ո՛չ, ինչ եք ասում, բարի մարդ է։ Միայն մեկ-մեկ տղաները բան են խնդրում. մի անգամ ընդմիջման ժամանակ ուղարկեցին երշիկ բերելու։ Դրա համար այնքան խոսեց ինձ վրա։

— Քո կարծիքով նրա դիտողությունը ճի՞շտ է, թե՞ ոչ։

— Երևի ճիշտ է, դե, ի՞նչ անեմ, ինձնից մեծը, որ խընդրում է...

— Իհարկե, մեծի խնդրանքը կատարելը մարդկային բարձր հատկություն է, բայց այնքան թույլ չգտնվես, որ քեզ ցրիչի տիղ օգտագործեն, ու երբեք չմոռանաս, որ դու էլ քո անմիջական պարտականություններն ունես և առաջին հերթին պատասխանատու ես դրանց կատարման համար։

— Ճիշտ է, մորաքույր Նվարդ, հասկանում եմ։ Ես այդքան էլ կորած-մոլորած տղա չեմ, որքան ընկեր Սեդրակյանն է կարծում։ Տեղս որ ամրանա, գործն էլ կարգին սովորեմ, այդքան էլ չեմ խեղճանա։ Մի երկու օր առաջ մեր կուրսի տղաներից երկուսը եկան մեր տուն, ինձ դուրս կանչեցին ու առաջարկում էին մի տեղ գնալ։ Ինչքան սոխակեցի, չասացին, հետո կիմանաս, ասում են ու չես փոշմանի։ Մի քիչ տատանվեցի, քիչ էր մնում համաձայնվեի, մեկ էլ հիշեցի մեծ եղբորս, այսինքն՝ ինձնից մեծին. մայրս ասում էր, որ նա ընկերների ջրերն է ընկել... Հետո ձեզ հիշեցի, մորաքույր Նվարդ, և անմիջապես պատկերացրի ձեր դեմքի դժգոհությունը և հրաժարվեցի։ Նրանք լավ տղաներ չեն և ինձ լավ տեղ տանել չէին կարող։

թվայնացրել է 1915.info կայքը

— Ապրես, Սուքիաս, ես գոհ եմ քեզնից, և շնորհակալ, որ այդ վճռական պահին հիշել ես ինձ։ Հիմա գնա տուն։ Կբարեվես քեռի Մանուկին, մորդ։

— Մայրս ինչքա՜ն է աղոթել ձեզ համար...

Եթե մենք կարողանայինք միայն լավին ծառայել ու լավի համար աղոթել։ Ու եթե բոլորն ընտրեին այդ ճանապարհը, այդ դեպքում Սուքիասի եղբայրն էլ հիմա բանտում չէր լինի։ Իսկ հնարավո՞ր է դա, կգա՞ այդ օրը, ե՞րբ։

16.

Երվանդը գործարանի կուսակազմակերպության երկրորդ քարտուղարն է, բայց փաստորեն կուսակցական աշխատանքի ամբողջ ծանրությունը նրա ուսերին է դրված. առաջին քարտուղարը վատառողջ է, սրտի հետ ինչ-որ տխուր բաներ են կատարվում, և նա շատ քիչ է լինում գործարանում։ Հաշվետու-ընտրական ժողովներն սկսվել են արդեն, մի ամսից էլ պակաս ժամանակ է մնում, այդ ընթացքում պետք է գրվի հաշվետու ղեկուցումը, որոշման նախագիծը։ Այն ո՞վ էր ասում, հա՛, իրենց նախորդ քարտուղարը.— Խնդրք ու լուրջ հաշվետու ղեկուցումը դա մի թեկնածուական դիսերտացիա արժե... Իսկապես հոգսաշատ է, աշխատատար։ Մի քանի-երեսուն էջի մեջ պիտի կարողանաս ներկայացնել գործարանի հստակ պատկերը, նրա մեկ տարվա անցած ուղին, լավն ու վատը, մանավանդ՝ չլուծված հարցերը, դրանց հաղթահարման ուղիները։ Գնահատականի խոսք պիտի ասես ամեն մի օղակի, արտադրամասի, նաև դիրեկցիայի աշխատանքի վերաբերյալ, և այդ խոսքը պիտի լինի միևնույն ժամանակ և՛ սկզբունքային, և՛ շիտակ, անաչառ ու գործին օգնող։ Իսկ քո՞ր հաշվետու ղեկուցումներն են այդպես գրվում։ Ո՛չ, դրժբախտաբար, այստեղ էլ, մեր բնութագրերի նման, հաճախ անպիսաս են շաբլոնն ու ջուրտուքշին։ Իսկ ինքն ուզում է ժողովին ներկայանալ բարեխիղճ հաշվետվությամբ, ոչ տիպային, այլ սեփական նախագծով, տեսնենք ի՛նչ կստացվի։ Ամբողջ օրը արտադրամասերում է, զրուցում է, գրավոր ու բանավոր տվյալներ է հավաքում, կոմերիտական ու արհմիութենական ժողովներին է մասնակցում։ Հետո, գիշերները մանավանդ, գրամջնջում է, մշակում-մաքրագրում է։ Գործը դանդաղ, բայց անհրաժեշտ քայլերով առաջ է գնում։ Արդեն ղեկուցման առաջին կեսը տվել է մեքենագրման։

թվայնացրել է 1915.info կայքը

Իսկ քանի՞ օր է Աշխենի մոտ գնալու պլաններ է մշակում։ Լուսանկարի բազմացման հարցը դրական լուծում է ստացել. ավելի լավ արտատպվեց, քան կարծում էր։ Գիտի, Աշխենն սպասում է, այլևս ուշացնել չի կարելի։ Միայն ինչպե՞ս դատարկ գնա նրանց տուն։ Իսկ ինչո՞ւ ես դատարկ, հապա լուսանկարնե՞րը։ Փոքր երեխա կա տանը, որին նկարները չէ, որ կարող են հետաքրքրել։ Ավելի խելոք որոշման հանգել չկարողացավ, մի տորթ կտանի, գուցե այդ այնքան էլ անհամ չի՞ հնչի։

Լավ էր, տանն էին, մայր ու տղա։ Հաղվանաբար սրանց մոտ ուրիշ եկող էլ չի լինում, անցավ Երվանդի մտքով, տեսնես մոտաքրոջից ու ընկերուհի Թամարից բացի ուրիշ ո՞վ կա սրանց հետ մոտ են ու մտերիմ։ Ցավալի է, որ ընտանքն էլ կիսատ-պռատ է, առանց ամուսնու և հոր շատ դժվար, մանավանդ՝ տխուր կլինի։

— Երվանդ, կներես, դու ուշացար, իսկ ես նկարի համար շատ էի անհանգստանում։

— Ուրեմն դեռ լրիվ վստահություն չունեմ այս տանը... Մեկի փոխարեն երեք նկար եմ բերել։ Ահա՛, այս քո ոսնձոգած բնապիրը, թող մնա իր նախկին տեղում, այս փոքրը դրա վերամբարձված պատճենն է. այս մեկն էլ քեռի Գուրգենի նկարն առանձին մեծացնել եմ տվել, շրջանակի մեջ պատրաստել, եթե հարմար կգտնես, կկախես պատից։

Աշխենը ապահ հայացքով նայում էր մեկ բնապիր, մեկ մեծադիր նկարին ու կամաց-կամաց հիացմունքի ժպիտ երեվաց նրա դեմքին.

— Երվա՛նդ, սիրելի եղբա՛յրս, այս ի՛նչ լավ բան է ստացվել, ինչքա՛ն էլ նման է։ Ոտքի ելավ, սեղմեց տղայի ձեռքը. ուզում էր համբուրել ճակատը, համարձակությունը դավաճանեց,— այնքան շնորհակալ եմ քեզնից։ Ու ճակատի մազերը ետ տվեց։

Երվանդն ավելի գոհ էր, քան Աշխենը՝ ուրախ։

— Ինչպե՞ս ես չեմ մտածել այս մասին. այ քեզ անշնորհք աղջիկ... Իսկ այս շրջանակով նկարը, խնդրում եմ, հենց հիմա կախես պատից, այ, այստեղ, երկու մահճակալի արանքում, քիչ վերև։ Այդպես, հրաշալի է։ Գուրգենս, քո պապիկն է, լավ ճանաչիր, նրա անունն էլ Գուրգեն էր։

թվայնացրել է 1915.info կայքը

Երևան ուշադիր նայում է պատից կախված լուսանկարին, չի հիշում, չի տեսել.

— Իմ պապի՞կն է, իսկ ինչո՞ւ չի գալիս։

— Նա հեռու տեղ է գնացել, որ մեծանաս, քեզ կպատմեմ նրա մասին։

— Նա մեռե՞լ է, մա՛մ։

Աշխենն ու Երվանդը հայացքներ են փոխանակում, նրանց դեմքերին թույլ ժպիտ է առկայծում. հիմա մի մատ երեխան էլ հասկանում է ամեն բան, նրանից ոչինչ թաքցնել չես կարող։

— Մի մեծ ու դաժան պատերազմ է եղել, բալիկս, ու քո պապիկը զոհվել է այնտեղ... Երվանդ, ես հիմա քեզ կպատրաստեմ,— ու Աշխենը շտապ անցավ խոհանոց։

Սենյակում մնացին Երվանդն ու երեխան։

— Գուրգեն, ուզում եմ իմանալ, դու ինձ հիշո՞ւմ ես, թե՞ մոռացել ես արդեն. գուցե կարիք կա նորի՞ց ծանոթանալու։

— Հիշում եմ, քեռի Երվանդ, դու Սահակ պապիկի տղան ես, և լավ քեռի ես, դու ինձ դուր ես գալիս։ Լռեց մի պահ, հետո շարունակեց իր խոսքը.— Ա՛յ, Գուրգեն պապիկի նկարը բերեցիր, և մամաս շատ ուրախացավ, ես էլ շնորհակալ եմ քեզնից։— Մոտեցավ, փաթաթվեց Երվանդի վզով ու համբուրեց այտը։

Հենց այդ պահին ներս մտավ Աշխենը ու զարմացած տղային է նայում։

Երվանդն շտապեց բացատրություն տալ.

— Պատկերացնո՞ւմ ես, Աշխեն, Գուրգենն էլ իր հերթին է շնորհակալություն հայտնում նկարի համար։

— Իսկապե՞ս. մեռնե՞մ ջանին, և նկատո՞ւմ ես, նա մորից ավելի շնորհքով է...

Ինչո՞ւ շառագունեց Աշխենի դեմքը, իսկ Երվանդի այտերի վրայով, ասես, մի հաճելի հով անցավ...

Լուռ թևյ էին խմում. տորթն էլ իր համն ունեցավ։ Ու Երվանդի մտքում անընդհատ մի հարց էր թպրտում.— Հաջորդ անգամ որ գա, ի՞նչ պիտի բերի։ Իսկ ինչո՞վ ես համոզված, որ նորից պիտի գաս այս տունը։ Այո, համոզված եմ, և պարտավոր եմ։ Դե, ուրեմն, նվերի հարցն էլ դժվար չի լինի լուծել. երեխայի համար մի բան կբերես, խաղալիք, գուցե հեծանիվ, եթե չունի, կոշիկ կամ շոր։ Թող գործը հասնի մյուս անգամ գալուն, հեշտ է։ Վերջապես քրոջ տուն գալը ինչո՞ւ պետք է

թվայնացրել է 1915.info կայքը

դժվարությունների հետ կապված լինի։ Այնուամենայնիվ այդ քույրը փաստորեն քույր չէ, այլ ընդամենը՝ հոր ընկերոջ աղջիկ։ Միևնույն է, նա քեզ եղբայր է կոչում... Հանկարծ ինչո՞ւ հիշեց Ռուբեն Սուրենյանին, երբ ծանոթացնում էր Աշխենի հետ, նա ասաց՝ ծանոթ ենք։ Իսկ ի՞նչ կա այստեղ զարմանալու, մի գործարանում են աշխատում։ Բայց նրանց այդ «բարեբախտաբարի» ու «դժբախտաբարի» տակ ինչ-որ բան կար թաքնված։ Հետո՞, քե՞զ ինչ։ Դե, եթե ես նրա եղբայրը կոչվելու պատիվն ունեմ, ուրեմն նաև ինչ-որ պարտավորություններ և իրավունքնե՞ր կան։

— Երվա՛նդ, մոռացա հարցնել՝ ինչպե՞ս է քեռի Սահակի առողջությունը։

— Ոչինչ, դեռ դիմանում է, բայց ցավերով ու տանջանքով, այս է վատը։

— Քանի տարի հետո, գնդակը համարյա սրտում. դաժա՞ն պատերազմ։

— Սվ դեռ կան մարդիկ, որոնք պատրաստ են աշխարհը նոր հրդեհի մեջ քաշելու։

— Մորաքույրս այսպիսի դեպքերի համար մի ուժեղ անեծք ունի.— Աստված դրանց տունն էնպես քանդի, որ էլ քարը քա-ի վրա չգա...

— Աստծո վրա հույս դնելն էլ մի բան չէ։

— Մանավանդ, երբ այդ արնախումներն իրենք են ուզում աշխարհի տունը քանդել։ Գնդակը նրանց սրտին պիտի դիպչի, ոչ թե քեռի Սահակին։

— Եթե մեր ուզելով լիներ...

Հանկարծ Գուրգենը մեջ ընկավ և լուրջ-լուրջ ասում է.

— Ես որ մեծանամ, կռիվ կգնամ այդ պատերազմի դեմ ու կոչնչացնեմ նրան։

— Շատ էլ լավ կանես, Գուրգեն, դե, հիմա թեյդ խմիր, որ շուտ մեծանաս։

Աշխենի դեմքին մի հուզված ժպիտ էր ծվարել։

17.

Տանը չհասցրեց Սարոյի նամակը կարդալ. քեռի Սամսոնն էր Մուշեղի հետ իրենց մոտ եկել։ Ընթրեցին միասին, թեյ խմեցին։

թվայնացրել է 1915.info կայքը

— Հարս ջան, ինձ մի բաժակ էլ թեյ տուր, խնդրում եմ,— և քեռի Սամսոնը չմոռացավ իր օրհնանքի խոսքն ասել այդ անմահական ըմպելիքի հասցեին,— Ա՛յ, օրհնվեն սրա հնարողի ապուպապերը...

— Իսկ սուրճի մասի՞ն ինչ կարծիքի եք, քեռի Սամսոն,— Նվարդն էր հարցնողը,— դա հիմա թեյի լուրջ մրցակիցն է դարձել։

— Չէ՛, հարս ջան, ես էդ պղտոր հեղուկից բան չեմ հասկանում. թեյն ուրիշ է։ Բայց նաև նկատել եմ, որ էդ սուրճ կոչվածի համար գժվողներ կան, ինչպես ասում են՝ ճաշակի հարց է։

— Ես էլ անտարբեր չեմ սուրճի նկատմամբ,— խոսակցությանը միջամտեց Հրանտը։

Մինչդեռ քեռի Սամսոնին ավելի լուրջ հարցեր էին հետաքրքրում։

— Հրանտ ջան, ես Սմբատի հետ էլ եմ խոսել, գոհ է Մուշեղից, և դա ինձ շատ է ուրախացնում։ Որքան գիտեմ, դու էլ...

— Ես գոհ չեմ,— և Հրանտը դիտմամբ խստության բոց առավ դեմքին։

— Վա՛յ, էդ ի՞նչ ասացիր։

— Ես ոչ թե գոհ, այլ շատ գոհ եմ, քեռի Սամսոն, իսկական իմ ու ձեր ուզած տղան է։

— Ա՛յ օրհնվի քո ապուպապը, մի քիչ վախեցրիր... Էս լավ խոսքերը, ճիշտ է, իրա երեսին ենք ասում, բայց հավատում եմ, որ քեղ ճիշտ կհասկանա, քիթը չի ցցի։

— Է՛, քեռի, ինչի՞ր ես ասում,— սրտնեղեց տղան,— ես հո երեխա չեմ։

— Ես էլ էդ եմ ասում, էլի, որ սխալ չեմ իմ կարծիքի մեջ։ Ոչ թե երեխա չես, այլ պսակվելուդ վախտն է, մի հալալ կաթնակեր էլ քեզ համար պիտի ճարենք։

— Երբ որ տուն կունենամ, նոր դրա մասին կմտածենք, հիմա շուտ է։

Մուշեղն այնպես հանգիստ է խոսում, հավաստարակշռված։ Հրանտին դա շատ է դուր գալիս։

— Իսկ ի՞նչ հույս կա տան համար։

— Հրանտ ջան, էլի հույսս քեզ վրա է, ուզում եմ էդ հարցում էլ մեզ օգնես, փողը կճարվի, որ կարողանայիր կոոպերատիվ տուն հաջողացնել, իմ շնորհակալությանը չափ չէր լինի։ Հարությունիս Աշխենն էլ, շատ ապրի, արդեն երրորդ երե-

թվայնացրել է 1915.info կայքը

խան է ունենալու։ Նրանց մոտ նեղվածք կլինի. Մուշեղի տան հարցը պիտի լուծենք։

— Հաստատ չեմ խոստանում, քեռի Սամսոն, բայց կաշխատեմ, տեսնենք, կոոպերատիվ գրվելն այնքան էլ դժվար չի լինի։

— Սմբատն էլ խոստացավ օգնել։ Ապրի, նա էլ լավ տղա է, Մուշեղը նրան շատ է հավանում։

Հրանտի հարցական հայացքը մոլորվեց Մուշեղի դեմքին։

— Ընկեր Սմբատ Ոսկանյանն, իսկապես որ լավ դեկավար է, և գործն է լավ հասկանում, և խիստ է, նույնիսկ՝ շատ խիստ։

— Կոպտության հասնող խստություն։

— Մեկ-մեկ, առանց դրան չի լինում։ Ախր մեր արտադրամասում էլ աշխատողներ կան, ովքեր բաղաքավարի խոսքը դժվար են հասկանում. կոշտությունն ու կոպտությունը նրանց հալալ գինն է։

— Այնուամենայնիվ պլանների կատարման հարցում ձեզ մոտ դեռ ամեն ինչ չէ, որ կարգին է։ Հաջորդ շաբաթ կուսակցական բյուրոյում լսելու ենք Սմբատի հաշվետվությունը... Ի դեպ, Մուշեղ, շուտով վարպետ ես դառնալու, կուսակցության շարքերն ընդունվելու մտադրություն չունե՞ս։

— Ունեմ, քեռի Հրանտ, արդեն դիմում եմ տվել, տեսնենք հերթս երբ կհասնի։

— Էդ մեկն էլ ավելի լավ,— քեռի Սամսոնը ոտքի կանգնեց։— Դե, հոգնած շնորհակալ ենք։ Անուշ մայրիկ ունես, Հրանտ ջան, քաղցր բալա ու գոզալ կին, աստված բոլորին էլ պինդ պահի, քեզ էլ՝ նրանց հետ ու նրանց համար։ Մենք գնացինք։ Շեն մնա ձեր օջախը։

— Քեռի Սամսոն, մի ուրախ լուր էլ Մուշեղին հայտնեմ, նոր,— Հրանտը հանկարծ հիշեց Սարոյի նամակի մասին. ախր դա չի կարող Մուշեղին չհետաքրքրել։— Կինս նամակ է ստացել Սարոյից, մի խելոք ու լավ նամակ։

— Իսկապե՞ս, ա՛յ, դա լավ է.— Մուշեղն իրոք որ ուրախ էր։— Որտե՞ղ է ծառայում, եթե հասցեն տաք, ես էլ նրան նամակ կգրեմ։

— Խարկովի կողմերում է, ահա հասցեն...

Դիրեկտորի մոտ կայացած արտադրական թուցիկ խորհրդակցությունից հետո, Հրանտը վերջապես ժամանակ գտավ կարդալու Սարոյի նամակը։ Իսկապես որ զարմանալի է, մի՞թե

թվայնացրել է 1915.info կայքը

ինքն այդքան անճարակ է մարդուն ճանաչելու գործում. ախր այս նամակը բոլորովին նման չէ իր ճանաչած Սարոյին, այս ի՞նչ բան է, մարդն իրեն կարո՞ղ է այս աստիճան կեղծել, թե՞ իսկապես մարդուն հասկանալն է դժվար։ Գուցե դերասանությո՞ւն է արել, ինչպես ասում են, մեր աչքերին թոզ փչելու համար, իսկ նպատա՞կը, մախաթը պարկի մեջ ինչքա՞ն ժամանակ կարող ես թաքցնել։ Ճիշտ է, ինքը մեծ հույսեր ուներ, ուզում էր հավատալ, որ Սարոյի նման երիտասարդին գուցե բանակը կարողանա դաստիարակել, բայց այսքան արագ, ընդամենը երեք ամիս է անցել. այս ի՞նչ հանելուկ է։ Գուցե մորաքույր Սրբուհին ճի՞շտ էր ասում.— էլ ի՞նչ գլխավոր ես, որ մի լակոտի դաստիարակել չես կարողանում... Եթե նորից գործարան բերեինք, թեկուզև իր կամքին հակառակ, դրանից բան կստացվե՞ր. գուցե դա է՞լ ճիշտ ելք էր, և ինքը չէր արժանանա մորաքրոջ այդ կծու մեղադրանքին։ Բայց նամակում Սարոն նաև գրում է իր գլխում դեռևս պտտվող ինչ-որ քամիների մասին. գոնե դրանք այլևս իրենց ցույց չտային, այս է կարևորը, թե չէ մորաքրոջ թթու հաբերը մի կերպ մարսել կարելի է։

Շտապ հավաքեց կնոջ հեռախոսի համարը, և առաջ ներածականի վրա տվեց.

— Նվարդ, միևնույն է, ես չեմ հավատում։

— Ինչի՞ն չես հավատում, Հրանտ,— անհանգստացավ Նվարդը։

— Քո այդ Սարոյի գրածներին, սրա մեջ ավելի շատ դերասանությո՞ւն կա, քան անկեղծ խոսք։

— Հրանտ, պետք չէ այդքան անհավատ լինել. տղան լավ բաներ է գրել, ուրախանանք դրանով։ Քիչ առաջ Մանվելն ինձ զանգեց, ասացի այդ նամակի մասին, այնպե՞ս ուրախացավ չես կարող պատկերացնել։ Ասաց, որ վաղը, օրվա վերջին, գյուղ է գնում. կասի, գյուղում կիմանան, կարող է քեզ կզանգահարեն, հանկարծ նրանց ուրախության վրա սառը ջուր լցնես, ես քեզ խնդրում եմ։

— Անսահման բարի տիկինս, ինձ մնում է միայն ողջունել քեզ։

— Սիրով ու հավելումով ընդունում եմ այդ ողջույնը։ Եվ արի, սիրելի ամուսնյակս, մեր սովորության համաձայն, ուրախանանք լավ լուրով, մայրիկի ասած՝ խեր խաբարով։

թվայնացրել է 1915.info կայքը

— Համաձայն եմ, տիկինս, և կարող ես չկասկածել, որ ամենամեծ ուրախացողը ես կլինեմ, եթե Սարոյի ապաքինումը վերջնական լինի։

— Հավատում եմ։ Հենց նոր մի գրքում կարդացի.

«Կա մի թուլություն,
Որ ինձնից վանել
Ջեմ կարողանում։
Քո չարության դեմ
Բարություն չանել,
Ջեմ կարողանում»։

Շարունակությունը հետո, լա՞վ։

— Ես հույս ունեմ, որ հետո ինձ կասես, թե ում գրածն է դա։

— Եթե շատ խնդրես... Իսկ ես Սարոյի նամակի պատասխանն եմ գրում. մի քիչ թափս կոտրեցիր, բայց ոչինչ, տակից դուրս կգամ։ Իրավունք տալի՞ս ես քո անունից էլ բարևներ ուղարկել։

— Անպայման։ Նաև՝ լավագույն ցանկություններ։

— Շնորհակալ եմ, սիրելիս, քո առատաձեռնության համար։

— Ա՛խ, դու իմ ժլատ անպիտան...

18.

Աշխանը տուն մտավ ու միանգամից փլվեց աթոռին։ Շատ էր հոգնած։ Իսկ ինչի՞ց է դա, այս էլ ո՞ր բան է։ Առավոտվանից վազքի մեջ է։ Միայն այսօ՞ր։ Ո՛չ, իհարկե, ամեն օր, կիրակին չհաշված։ Առավոտյան շուտ՝ մանկապարտեզ, հետո՝ գործարան, այստեղ վաղվզոցը շատ չէ, բայց լարվածության պակաս էլ չկա։ Ընդմիջմանը՝ նախաճաշ ոտքի վրա, որովհետև պետք է կարողանա նաև մթերային խանութ մտնել, տան համար անհրաժեշտ գնումներ կատարել։ Օրվա վերջին՝ համարյա վազքով մանկապարտեզ ու երեխայի հետ՝ տուն։ Հոգնեցուցիչ է։ Իսկ այդ վազքը ո՞ր է սկսվում, մի՞թե դա քո ամենօրյա «վացուցակը» չէ։ Այո, նոր չէ, տարիների հեռվից է գալիս, բայց առաջ այսքան չէր հոգնում։ Մի՞թե ծերանում է, դեռ երեսուն տարեկան էլ չկա։ Իսկ երեսունը քի՞չ է, դա համարյա կես կյանք է, լավագույն դեպքում։ Գուցե հոգնեցնում է նաև կյանքի միապաղաղությո՞ւնը. շատ են նեղ շրջանակները, հետաքրքրու-

թվայնացրել է 1915.info կայքը

թյանները՝ քիչ, ուրախությունը՝ հաղվադեպ։ Գարնանային անձրևի նման տխուր պարտեզին նոր շունչ տվեց քեռի Սահակի հայտնվելը, իհարկե, նաև՝ Սրվանդի։ Ու դրանով վերջացա՛վ ամեն ինչ, տխրության փուշին նորի՞ց նստեց կանաչների վրա։ Ոչ, անարդար կլինի այդպես մտածելն անդամ, այնուամենայնիվ զովացնող ցողը կա, և ամեն անգամ հիշելիս, այգու կանաչներն ասես ավելի են պայծառանում, ու սոսափյունն է քաղցրանում... Քեռի Սահակն ասաց, որ ինքը օրագրի պատառիկներ ունի այն օրերից, և խոստացավ ուղարկել, եթե ուշադրության արժանի բան գտնի դրանց մեջ։ Մի՞թե ոչինչ չի ստանալու։ Իսկ Սրվանդը, ընորհակալ է, սրբությամբ կատարեց իր խոստումը։ Ահա, պատից, անքթիթ հայացքով իրեն է նայում հայրը. ասես անխոս զրուցում է իր հետ։ Ի՞նչ է ասում, չդիտի, նրա ձայնն անգամ չի հիշում, բայց հաստատ համոզված է, որ բախտավոր օրեր է մաղթում իր աղջկանն ու թոռանը։ Միայն ափսոս, որ չի կարողանում ասել, թե ինչպե՞ս հասնեն այդ բախտի դռանը։ Այո, դժվարն այդ դուռը գտնելն է, ներս մտնելու հնար կլինի հավանաբար...

Լաբորատորիայի աշխատանքներում, ինչպես մի անգամ Հրանտ Արշակովիչն ասաց, թարմ շունչ է նկատվում. առաջադրանքները կատարվում են ժամանակին և ավելի անթերի, քան առաջ էր. այսինքն՝ հանգուցյալ Անմեղիկյանի ժամանակ։ Իսկ նրա վերջին տարիների աշխատանքային ընկերը չէի՞ր դու, այն էլ՝ տեղակալի իրավունքով. այս բեկումն այն ժամանակ թող նկատելի դառնար։ Դե, այնուամենայնիվ, վճռական ձայնի իրավունքն իրենը չէր, ղեկավարի դերը շատ մեծ է, իզուր չի դրվում առաջին դեմքի անձնական պատասխանատվության հարցը։ Գուցե ինչ-որ չափով գործին խանգարում էին նաև երբեք չթառամող անթառամնե՞րը... Ինչ-որ է, կարևորն այն է, որ ինքը կարողանում է ծայրը ծայրին հասցնել, իր աշխատանքից ոչ միայն դժգոհ չեն, այլև՝ գոհ են։ Իսկ այդ գոհունակության խոսքը ումի՞ց ես լսել. գործարանի գլխավոր ինժեներից։ Իսկ եթե նա այս հարցում բավարար չափով անաչառ չէ՞։ Ինչո՞ւ, հանուն ինչի՞։ Հանուն այն բանի, որ նա քո երեխայի հայրն է։ Բայց նա այդիսիի մարդ չէ, ինչպե՞ս կարող է իրեն թույլ տալ։ Եվ, այնուամենայնիվ, նա շատ ավելի լուրջ բաներ է իրեն թույլ տվել, և դու իզուր ես հիմա կեղծ դատապաշտպանի դիմակ հագնում։ Բայց ես նրան չէ, որ ուզում եմ պաշտ-

թվայնացրել է 1915.info կայքը

սանել, այլ՝ ինձ։ Իսկ մի՞թե դու չգիտես, որ պաշտպանվում են միայն մեղավորները...

— Այդ ինչ է, դուռն զա՞նգն էր։

— Գուրգենս, կարո՞ղ ես դուռը բացել։

Հասարակ բան է, չէ՞, մի դուռն զանգ, բայց դրանից էլ մարդ իրեն լավ է զգում։ Օրվանդը դրեց, լուսանկարները բերելու օրը։

Մորաքույր Օրանուհին էր. ա՛յ, քեզ անակնկալ ու հաճելի այցելություն։ Ննակարանամուտի օրվանից սա առաջին այցն էր։

Ողջագուրվեցին։ Առանձնապես ջերմ համբույրներ տեղաց Գուրգենի այտերին։

— Ջնեղանաս, քեզ էնքան չէ, բայց երեխային շատ էլ կարոտել։

— Իսկ ինչո՞ւ աղջկանդ էլ չես բերել, ախր ես էլ նրան եմ կարոտել։

— Դասերն է սովորում, չգիտե՞ս, նա տնաբույս ծաղիկ է։ Դու քեզնից պատմիր։

— Լավ ենք, առանձին նորություն չկա։

Մորաքրոջ աչքն ընկավ պատից կախված լուսանկարին. նա զարմացած էր։

— Վա՛յ, Գուրգենի նկարն է։ Ինչքան էլ նման է. էս որտեղի՞ց ես ճարել, աղջի՛։

— Փոքր նկարից մեծացրել ենք։ Հիշո՞ւմ ես, հայրս մի նկար ուներ ռազմաճակատից ուղարկված, երկուսով են, իր ընկերոջ հետ։ Ահա այդ ընկերը վերջերս գրել է ինձ, նկել է, ծանոթացել ենք։ Շատ լավ մարդ է, միայն առողջությունն է վատ, սրտում գնդակ կա։

— Սրտում գնդա՞կ, էսքան տարի, էդ լինելու բա՞ն է։

— Նղել է, ապրում է։ Այս լուսանկարն էլ նրա տղան է տարել-մեծացնել տվել։ Մի խոսքով՝ լավ մարդիկ են։

— Բա ասում ես՝ նորություն չկա՞, իսկ տղան ո՞վ է, ինչացո՞ւ է։ Մորաքույր Օրանուհին, իբր թե, այնպես, ի միջի այլոց է հարցնում, բայց Աշխենը նրան լավ է հասկանում։

— Լավ տղա է, ինժեներ է, Երևանում է աշխատում։

— Աղջի, քանի՞ տարեկան է, ընտանիք ունի՞, դու էդ ասա։

— Է՛, մորաքույր, ներիր, բայց ավելորդ հարցեր ես տալիս։ Նա իմ հոր ընկերոջ տղան է, համարյա իմ եղբայրը, հասկանո՞ւմ ես։

թվայնացրել է 1915.info կայքը

— Ոչ մի բան էլ չեմ հասկանում. հոր ընկերոջ տղան ի՞նչ գործ ունի եղբոր հետ, դու էլ բա՞ն ասացիր։

Նորից հնչեց դռան զանգը։ Այս ինչ է, օրերով ոչ մի ձայն, այսօր անհասկանալի ակտիվությո՞ւն։ Ո՞վ կարող է լինել։

Սրվանդն է, թևի տակ էլ՝ ոչ մեծ մի փաթեթ։

— Մորաքույր, ահա հորս ընկերոջ տղան, ծանոթացիր։ Սրվանդ, մորաքույր Սրանուհին է, դու գիտես նրան։

Ծանոթությունը կայացավ, ճիշտ է, մի քիչ շատ էր չոր ու պաշտոնական, բայց ոչինչ, հետո կվերանան ավելորդ սահմանները։

— Իսկ դո՞ւ ինչպես ես, Գուրգեն, սիրելի.— մեծավարի սեղմեց երեխայի ձեռքը, գիտի, որ դա առանձնապես դուր է գալիս փոքրիկներին։

— Լավ եմ, քեռի Սրվանդ։ Էս ինչքան ժամանակ է չես գալիս, մամաս էլ անհանգստանում էր։

Աշխենն շտապ անցավ խոհանոց։

— Գնամ, թեյ պատրաստեմ։

Մորաքույր Սրանուհին փորձում էր իրեն հուզող հարցի պատասխանը կռահել, չէր ստացվում։ Ինչո՞ւ, գլխի գցող բաներ կան, «մամաս էլ անհանգստանում էր», բա որ ասում է՝ «ինչքան ժամանակ է, չես գալիս», մեջտեղը որ բան լինի, էգոիս կուշանա՞... Բայց էնքան էլ ջահել չէ, սա անպայման կին ու երեխա կունենա, ափսո՜ս... Ի՞նչը ափսոս, որ տուն տեղ ունի, ամա դու էլ անպետք կին ես, հա... Դե՛, ինչ անեմ, ես իմի մասին եմ մտածում, մենակ մնաց անխելքը...

— Տղա ջան, Աշխենը քանի տարի ինձ մոտ էր ապրում, նրա միակ հարազատն եմ էս քաղաքում։

— Գիտեմ, մորաքույր, Աշխենն ինձ պատմել է. նա ձեզնից շա՜տ գոհ ու շնորհակալ է։

— Հա՞, դե, լավ է... Իսկ դու ի՞նչ ունես, տուն-տեղ, կին, երեխա։

— Տուն-տեղ կա, կինն ու երեխան՝ դեռ ոչ։ Դե, ճիշտն ասած, չեմ էլ շտապում։

— Իզուր, տղա ջան, ամեն բան իր ժամանակն ունի, մարդը կեսը թափլել է... լոից ու նույնիսկ կարմրեց անհարմարության զգացումից. այ քեզ անխելք պատռավ, բա դա ասելու խո՞սք էր։

Իսկ Սրվանգը բարեհոգի ժպտում էր քթի տակ։

թվայնացրել է 1915.info կայքը

Գուրգենը խաղով էր զբաղված, Երվանդը մոտիցավ հետաքրքրությամբ, ալիքը փոխեց, սպորտային հաղորդում կար, ուզում էր նայել Մորաքույր Երանուհու աչքն ընկավ Երվանդի բերած կապոցին, որ դրված էր երեխայի մահճակալի վրա։ Հետաքրքիր է, թե ի՛նչ կա մեջը։ Իսկ դա ի՞նչ կարևոր է, մի՛ներքին ձայն հարցրեց նրան, դե, ինչո՞ւ ես ասում, շատ էլ կարևոր է, նայած թե ինչ է բերել, դրանով և տղայի գրպանի հունարը կարող ես որոշել, և՝ նրա արտաքինությունը. իսկ, եթե նվերը Աշխենի համա՞ր լինի, ուրեմն կարելի է և ավելի լուրջ բանների մասին մտածել։

Աշխենը ներս մտավ՝ սկուտեղը ձեռքին, ու մորաքրոջ օգնությամբ թեյի սեղան էին պատրաստում։

Երվանդը դեռ հետաքրքրության մոտ էր. գտել էր իր փնտրած ալիքը։ Մեկ էլ դարձավ խաղով տարված երեխային.

— Գուրգեն, մի րոպե կարո՞ղ ես թողնել քո խաղը,— ու մոտիցավ մահճակալի վրա դրված կապոցին։

— Կարող եմ, քեռի Երվանդ,— ու մոտեցավ քեռուն։

— Ես քեզ համար մի փոքրիկ նվեր եմ բերել, հույս ունեմ, որ չես մերժի ընդունել։

— Իսկ ի՞նց նվեր է, քեռի Երվանդ,— երեխան չկարողացավ թաքցնել իր հետաքրքրությունը, բայց միաժամանակ մոր կողմն էր նայում։

— Կոստյում է, լավ տղա. ուզում եմ, որ դու բոլորի աչքին իսկական տղամարդ երևաս։

Ու բացեց կապոցը։ Այո, կոստյում էր, շագանակագույն, հաստ կտորից կարված։ Ինչ էլ աստա՞ռ ունի։ Կարն էլ անթերի է։

Աշխենն անհարմար վիճակի մեջ էր, մանավանդ՝ մորաքրոջ ներկայությամբ։

— Ի՞նչ կարիք կար, Երվանդ։ Նորից այդ ճակատին փուված մաղափունջը։

— Այնքան դուր եկավ ինձ, որ անտարբեր մնալ չկարողացա. դե, վերջապես, ի՞նչ կա դրանում, մենք հո օտարներ չենք։

Մորաքույր Երանուհին լիզուն կծեց, իհարկե, օտարներ չեք...

— Մա՛մ, դու Երվանդ քեռուն նվերայր ես ասում, հիմա էլ...

— Ճիշտ եմ ասում, բալիկս, հագիր տեսնենք վրադ ինչպե՞ս է,— կարող է մորաքրոջ դեմքի արտահայտությունը դո՞ւր չեկավ Աշխենին, դրա համար նա միանգամից փոխվեց։

թվայնացրել է 1915.info կայքը

Կոստյումն այնպես լավ նստեց երեխայի վրա, միայն շալվարն էր մի փոքր երկար։

— Դա հասարակ բան է, կկարճացնեմ։ Բարով մաշես, բալիկս։ Դե, շնորհակալություն հայտնիր քեռի Երվանդին։

Երեխան մոտեցավ, մեծավարի երկարեց ձեռքը ու բարձր ասաց.

— Սատ անորհակալ եմ, քեռի Երվանդ։ Հետո դարձավ մորը.— Մամ, հիսո՞ւմ ես, մի անգամ էլ ինձ համար կոստյում քներեց քեռի Անաստուին։

Ինչո՞ւ Աշխենի ականջները կարմրեցին։ Ախ այդ՝ խոսքի տեղը չիմացող երեխաները...

— Դե՛, լավ, մոտ նստեցեք, հիմա թեյ ենք խմելու։

Անաստուի անունը մեխվեց Երվանդի հիշողության մեջ. ո՞վ է, ինքը նրան չգիտի։ Իսկ դու ընդհանրապես ի՞նչ գիտես այս միայնակ մոր մասին։ Եվ ի՞նչ անհրաժեշտություն կա, որ իմանաս։ Դե՛, այնուամենայնիվ, նա ինձ եղբայր է կոչում...

— Երվանդ, թեյդ սառչում է։ Մտքերդ ուրիշ տե՞ղ գնացին, պետք չէ, հավատա։

Մորաքույր Երանուհու աչքը նորից կանգ առավ դիմացի պատից կախված լուսանկարի վրա։

— Հավ նկար է, ապրի Երվանդը. մենակ ինչի՞ չես մորդ նկարն էլ մեծացնում։

— Վա՛յ, իսկապես, ինչ լա՞վ ասացիր, մորաքույր։

— Համ դու կնայես, սիրտդ կփառավորվի, համ էլ երկուսով, իրար կողքի, մենակ չեն մնա, չեն տխրի...

Մորաքույր Երանուհու ամենասրտառուչ խոսքը այս ամբողջ երեկոյի ընթացքում՝ անցավ Երվանդի մտքով։ Ուրեմն մի նոր առիթ էլ կունենա այս տունը գալու։ Իսկ ինչո՞ւ ես քո գալը առիթների հետ կապում։ Գիտի. մի բան պարզ է, որ առայժմ դժվարությամբ է սեղմում այս տան զանգի կոճակը։

19.

Հերթական խորհրդակցություն էր գործարանի դիրեկտորի աշխատասենյակում՝ արտադրամասերի, տեղամասերի ու բաժինների պետերի մասնակցությամբ։ Երկար ու բարակ խոսք չկա, եղածը գործնական առաջադրանք է ու խոստում։ Սուրեն Մարտիրոսովի՞ն ինչու է այդքան ժպտածիծաղ ու միաժամա-

թվայնացրել է 1915.info կայքը

նակ՝ դյուրագրգիռ։ Վերջին անգամ ե՞րբ են նրան տեսել այսքան բարձր տրամադրությամբ։ Սրամտում է, ձեռ է առնում մեկ սրան, մեկ նրան, բայց այնպիսի մտերմական տոնով, որ վիրավորանքի հետքն անգամ չկա։

— Գործարանի բախտի հաղարան բլբուլը Բաբկեն Սիմոնյանի ձեռքին է. կատարեց նաև եկող ամսվա առաջադրանքները, ուրեմն բոլորիս պարզերես է անում, այն աստիճան, որ կարող է այդ հազարյան բլբուլը մեր փոխանցիկ դրոշի վրա երգել։

— Սուրեն Մարտիրոսովիչ, փոխանցիկն արդեն ստացել ենք, մնում է երգե՞լը.— վարպետ Սմբատն է հարցնում, ու ձայնի մեջ տարակուսանք ու կասկած կա։

— Հինգ ամսվա պլանների կատարման վիճակը ինձ իրավունք է տալիս լավատես լինելու, ընկեր Սմբատ Ոսկանյան, եթե վեցերորդ ամիսն էլ փակենք թեկուզ երկու տոկոսի գերակատարումով, հաշվիր թե փոխանցիկն իր ուրթով է գալու մեզ մոտ. վերևներում էլ գոհ են մեր աշխատանքից։ Հիմա խնդրում եմ ասեք, թե ի՞նչ չլուծված հարցեր ու խանգարող հանգամանքներ կան։

— Ես միայն մի խնդրանք ունեմ։

— Եթե բողոք չէ, վարպետ Սմբատ, ուրեմն էժան ենք պրծնում։

Աշխատասենյակն ավելի աշխուժացավ։

— Ես խնդրում եմ բոլորիս անունից.— ամսվա վերջին կիրակին համարել աշխատանքային օր։

— Ճիշտ է ասում, լավ առաջարկություն է,— լսվեցին ռեպլիկներ։

— Դուք նորից ինձ ստիպում եք արհմիութենական կոմիտեի ուրքը գնալ... պայմանավորվենք այսպես, ամսվա վերջին կիրակի նախօրյակին ծանր ու թեթև կաննենք, գուցե կկարողանանք յոլա գնալ առանց դրա՞ն։ Եթե հարկ եղավ, ես կլուծեմ, այդ հարցը։ Դե, ձեզ տեսնեմ, ամեն առավոտ, ժամը իննից տասը, ինձ զեկուցում եք նախորդ օրվա արդյունքների մասին, անձամբ ինձ։ Երկու տարի է, մենք փոխանցիկ դրոշ չենք շահում, իսկ ումի՞ց ենք պակաս։ Անկեղծ ասած՝ ես անհարմար եմ զգում։

— Մենք էլ, Սուրեն Մարտիրոսովիչ։

— Ես հույս ունեմ, որ այս անգամ էլ Սմբատը խոսում է

թվայնացրել է 1915.info կայքը

բոլորիդ անունից։ Դե՛, հաջողություն եմ մաղթում։ Վերադասին խոստացել եմ, ինձ կոտր չգցեք։ Թերացողներն էլ թող աչքիս չերևան...

Հրանտը երկար ժամանակ այդ խորհրդակցության աղեցության տակ էր. և կարճ էր, և լոնկրետ էր։ Բայց դիրեկտորին ինչպե՞ս ոգևորել էր փոխանցիկ դրոշին արժանանալու հեռանկարը. սովորաբար, նա կարողանում է ի ցույց չդնել իր խոհերն ու զգացմունքները, փակ մարդու համբավ ունի Սուրեն Մարտիրոսովիչը, և պարզվում է, որ նա էլ բացվել կարող է, և ինչպե՞ս։

Իսկ ինքը կարծում էր, թե վաթսունն անց մարդ է, ինչ-որ տեղ և ինչ-որ չափով կարող է անտարբեր դառնալ կյանքի նկատմամբ։ Թե՞ ընդհակառակն է լինում, տարիների հետ բարձրանում է և մարդու պատասխանատվությո՞ւնը։ Գուցե ճիշտ կլինի ասել՝ նայած մարդուն. դժվար թե այս հարցում վճռական ձայնը տարիքին պատկանի։

Ամալյան թեյ բերեց ու մի կտոր թխվածք։ Շատ է նիհարել աղջիկը, տեսնես ի՞նչն է պատճառը։ Մոր մահից մի տարի հետո ամուսնացավ, առանց նվագ-աղմուկի։ Ասում են՝ վատ տղա չէ ամուսինը, համենայնդեպս ինքը դժգոհ չէ. մի անգամ առիթ է եղել, խոսել են այդ մասին։ Ասենք Ամալյան էլ այնքան հեշտ բացվողներից չէ, կարող է և ճշմարտությունը չասել. այնքան տխուր փաստեր կան կյանքում։ Միայն վատ է, որ առաջին երեխան անհաջողության մատնվեց... Վիժել էր։ Դրանից հետո հատկապես աղջիկն իրեն հավաքել չի կարողանում, հիվանդանում է հաճախակի, ախորժակն է վատ, նիհարել է նկատելի։

— Շնորհակալություն, Ամալյա։

— Հրանտ Արշակովիչ, հեռախոսափողը վերցրեք, խնդրում եմ, ձեր ընկերներից մեկն է հարցնում։

Ցատոնով Անդրեն էր։ Զարմանալի է, առաջին անգամ բարևհաճել է զանգահարել, ի՞նչ առիթով։

— Հրանտ, բարև, շնորհք չունեցա լավ բանի համար զանգելու, կներես։ Երևի դեռ չես լսել, լավ չեն Սենոյի գործերը։

— Ոչինչ չգիտեմ, Անդրե, վազուց չեմ հանդիպել նրան։ Ճիշտն ասած՝ մի թեթև նեղացել էինք իրարից։

— Գիտեմ, լսել եմ, ինքն էլ մի տեղ տակից-գլխից դուրս էր տվել քո հասցեին... ինչ-որ է։ Կուրջ թերություններ են հայտ-

թվայնացրել է 1915.info կայքը

նաբերնել նրա հին ու նոր գործերում. հավելագրումների, պատվիրատուներից երկու-երեք անգամ ավելի փող գանձելու փաստեր։ Դատական գործ կարող է բացվել։

— Խուր բան ասացիր, Անդրե. բայց հույս ունեմ, որ դու ընկերոջ դժբախտությամբ ուրախացողներից չես։

— Չէ, հորս արևը, ես էդքան էլ աննամուս մարդ չեմ, բայց որ Սենոն էլ մի բարի պտուղ չէ, չես ժխտի երևի, աչքածակ, աչքը դուրս, աչքակապուկ։

— Այդ վերջին բառն էլ նո՞ր հնարեցիր։ Իսկ դու որտեղի՞ց իմացար, Անդրե։

— Մի ծանոթ ունեմ, վերահսկողության կոմիտեում է աշխատում, նա ասաց։ Լուրջ գործ է, ասում է, դժվար թե դուրս պրծնի։

— Համենայնդեպս հաճելի բան չէ։ Դե, լավ, Անդրե, ողջ եղիր, ցտեսություն։

Սեններիմ Կիրակոսովիչը դատարանում, մեղադրյալի աթոռին, սարսափես հնարավոր չէ պատկերացնել։ Ինչո՞ւ, նա ընդունակ չէ՞ հանցանք կատարելու, ո՛չ, խոսքն այդ մասին չէ. նա այնքան շրջահայաց ու խորամանկ մարդ է, այնպիսի շրջապատ ունի։ Հետո՞ ինչ, բայց նաև գիտես, որ անսպառ ախորժակ ունի, իսկ լավ ախորժակը միշտ չէ, որ առողջության գրավական է։ Վերջապես քի՞չ է պատահում, որ խորամանկ աղվեսը երկու ոտքով է թակարդն ընկնում։ Համենայնդեպս նրա նմաններն մեծ մասամբ գլուխն աղատելու ընդունակություն են ունենում։

Ջանգահարեց Սենոյին։ Այնուամենայնիվ հին ընկերներ են, նեղ օրը լքել չի կարելի։ Իսկ ի՞նչ պիտի ասես կամ ի՞նչ կարող ես անել։ Ոչինչ, գոնե իսկությունը կիմանա, Անդրեի տվյալների վրա հույս դնել չի կարելի։ Տիղում չէր Սեններիմ Կիրակոսովիչը, քարտուղարուհին ասաց՝ գնացել է խորհրդակցության։

— Իսկ որ գա, չե՞ք մոռանա նրան հայտնել, որ ինձ զանգահարի,— հակառակի պես քարտուղարուհու անունն էլ չգիտես։

— Կասեմ, բայց նա, հավանաբար, այսօր չի լինի։

Ահա ժամը տասնմեկն է, գնացել է խորհրդակցության, և այսօր չի լինի։ Մի՞թե Անդրեի լսածը հավաստի լուր է։ Նայեց ժամացույցին, ուշանում է, արտադրամասեր պիտի գնան Վահանյանի հետ. ուզում են Սիմոնյանի մոտ մի թուղթ հա-

թվայնացրել է 1915.info կայքը

վաք անցկացնել, պատրաստի արտադրանքի առաքումն ստուգել, հումքով լի վագոնների դատարկումը. այնքան գործ կա, հնարավոր լիներ օրվա ընթացքում մի քանի կտոր դառնալ։ Դե, արի ու ժամանակ գտիր Սենոյի համար։ Քանի անգամ է իրեն մեղադրել.— այ տղա, մարդս մի անգամ է էս աշխարհը գալիս մարդավարի ապրիր, «նա շիրոկույս նոգու», կուչ եկած գլխավորն ո՞ւմ է պետք։ Դե՛, գնա, ապրիր, Սենո տղա, և աշխատիր այնպես քայլել, որ լայն կոշիկի մեջ ոտքդ խեղդվելու փորձեր չանի...

Բաբկեն Սիմոնյանի մոտ թուղթ խորհրդակցությունը հաջող անցավ. կոնկրետ ժամկետներ մշակեցին։ Եվ այդ տեղամասի շեֆությունն իր վրա վերցրեց գործարանի գլխավոր ինժեները։

Հետո Հրանտ Ստեփանյանը գնաց Սմբատ Ոսկանյանի արտադրամասը։ Ե—Կ—10 հաստոցի շահագործման հետ կապված որոշ հարցեր լրացուցիչ ուսումնասիրության ու լուծման կարիք ունեն. այստեղ էլ Սմբատին մենակ թողնել չի կարելի։ Մանավանդ, առաջիկայում Կույբիշևից մասնագետներ են գալու, պետք է նախապատրաստվել համատեղ աշխատանքի։ Բայց հիմնականն, իհարկե, կիսամյակի պլանի կատարումն է, օրակարգի առաջին հարցը, ինչպես գործարանի դիրեկտորը որակեց։

Արտադրամասում, ինչպես միշտ, մի զարմանալի մաքրություն էր տիրում, խաղաղ ու լարված աշխատանք։ Բայց այս ինչ է, արտադրամասի պետը բավական կոշտ խոսակցություն է սկսել մի նորեկ բանվորի հետ.

— Ես չգիտեմ, Գևորգ, ձեր տան կարգուկանոնի մասին, բայց այստեղ փնթիությունը ես չեմ հանդուրժի, հասկացիր, այս ի՞նչ փոշի է քո հաստոցի վրա, ի՞նչ թղթեր են այստեղ թափված, չեղա՞վ։

— Ընկեր Ոսկանյան, ժամանակս սուղ էր, չհասցրի, նկատի կունենամ։

— Այդ ի՞նչ խոսելաձև է, նկատի կունենամ։ Երե չե՞ս կարող ժամանակի մեջ տեղավորվել, ընդմիջումդ օգտագործիր ծուռն ու թերին շտկելու համար։ Մուշեղ, մոտ արի, խնդրում եմ։ Մենք, կարծեմ, պայմանավորվել էինք, որ հետևես այս ելրիտասարդի աշխատանքին։ Դու է՞լ ես թերանում, բա եղա՞վ։ Դե, լավ, ահա և Հրանտ Արշակովիչը, այս խոսակցությանը հետո կանդրադառնանք։

թվայնացրել է 1915.info կայքը

— Ընկեր Ոսկանյան, ես համոզված եմ, որ այլևս առիթ չի լինի այս մասին խոսելու, Գևորգն էլ համաձայն է ինձ հետ։— Հրանտը նկատեց, որ շառագունել է Մուշեղի դեմքը։

Սմբատը թեք հայացքով նայեց Գևորգին, սա կախել էր գլուխը. գուցե դա էլ համաձայնության նշա՞ն է։ Գլխավոր ինժեների հետ անցան արտադրամասի պետի առանձնասենյակը։

— Այս ինչ է, Սմբատ, պարզվում է, որ Մուշեղն է՞լ է թերանում մեկ-մեկ։

— Սա թերացում չէ, Հրանտ Արշակովիչ, չնչին վրիպում է։ Եթե բոլոր աշխատողները Մուշեղի բարեխղճությունն ունենային, Հրաշալի տղա է, կարգն էլի եմ բարձրացնելու։ Գիտե՞ք, ամուսնանալու միտք ունի, ինձ էլ խնդրեց, որ քավոր լինեմ։

— Հույս ունեմ, որ չես հրաժարվել։

— Ո՞չ, սիրով համաձայնվեցի։ Ես ինչքան մտածում եմ, վերջում էս տղան է ինձ փոխարինելու։

— Շատ չե՞ս հեռուն մտածում, վարպետ Սմբատ. իսկական հեռանկարային պլան։

— Առանց հեռանկարի դժվար է ապրելը, Հրանտ Արշակովիչ։ Իսկ կիսամյակի պլանը կգերակատարենք, կարող եք չկասկածել։ Կույբիշևի ընկերների համար էլ անհրաժեշտ փաստաթղթեր ու զեկուցագրեր եմ պատրաստում, սևերես չենք մնա։

— Դու Մուշեղի համար էիր ասում, ես էլ՝ քեզ համար,— եթե բոլորը քեզ նման աշխատեին։

— Շնորհակալ եմ, Հրանտ Արշակովիչ... Աշխենի մոտ նորություններ կան, իմացե՞լ եք։

— Տեղեկություն չունեմ։

— Իր հոր մարտական ընկերն է հայտնվել. մի ինժեներ էլ տղա ունի, բարեկամություն են անում։

— Իսկ դու որտեղի՞ց իմացար։

— Թամարն ինձ պատմեց, Աշխենից է իմացել։ Ասում է՝ քույր ու եղբոր նման են, սա էլ նոր բան է։

— Դե, դա մեր գործը չէ... իսկ Թամա՞րն ինչպես է։

— Բարկեն Սիմոնյանի պլանի նման. թերակատարման վերտանգն անպակաս է... իսկ երեխաները մեծանում են, սա՛ է կարևորը, և անպիտանն ինչպե՜ս է նայում նրան, իսկական մայր է։

— Նա՝ իսկական կին. դու խախտեցիր նրա հավատը։

թվայնացրել է 1915.info կայքը

— Չեմ խախտել, սպանել եմ։

— Ուրեմն բարի եղիր հարություն տալ այդ դավաճանին։

Սմբատն ուզում էր ասել՝ ինքն էլ շատ է ուզում, գիշերցերեկ այդ մասին է մտածում, բայց առաջադիմությունը շատ է աննշան։ Գոհացուցիչ արդյունքի հասնելու համար դեռ ինչքան ճանապարհ կա անցնելու Գիշերը, պատահում է, մոտ է թողնում ամուսնուն, բայց այնպես սառն է, չի հիշում, թե վերջին անգամ նա երբ է պատասխանել իր փաղաքշանքին։ Ջասաց, դե դա ասելու էլ բան չէ։ Միայն, չգիտես ինչու, նորից փոխեց խոսակցության թեման։

— Բոլոր դեպքերում Աշխենի մենակ մնալը շատ է անարդար։

— Արդարն ու անարդարը այնքան դժվար է իրարից ջոկելը...

20.

Առավոտվանից անձրև է գալիս, առատ, անընդմեջ։ Ու այնպես հով է, և օդն է մաքուր, խոնավ ու մի տեսակ հաճելի։ Հրանտը հիշում է՝ պապն այսպիսի եղանակին նստում էր տանը, և ընկեր էր ճարում անպայման, հաճախ մոտիկ հարևանների մեջ, ու քեֆ էին անում մանր-մանր, և սեղանին լուրջ բաներ չէին լինում, միայն պարտադիր էր թթուն ու կարմիր գինին, կենաց էլ չէին ասում, լուռ ուտում-խմում էին. մեկ-մեկ պատուհանից դուրս նայելով՝ նետում էին գոհունակ.— Չէ՛, անձրևային տարի է, լավ բերք կլինի, մի բաժակ էլ լցրու...

Հիմա տարին անձրևային է թե չորային, դա ինչո՞ւ իրեն առանձնապես չի անհանգստացնում. հողի հետ կապ չունի, դրա՞ համար։ Իսկ հանգուցյալ պապը քաղաքում չէ՞ր ապրում։ Դե, նա հոգով ու սրտով գյուղացի էր մնացել։ Իսկ դո՞ւ, հետո՞ ինչ, որ ծնվել ու մեծացել ես քաղաքում, գիտես, որ մեզ սնողն ու պահողը հողն է, ինչպես պապը կասեր՝ մենք հողի հաշվին ենք ապրում։ Իսկ թե հողին ինչքա՞ն խոնավություն է պետք, մենք չգիտենք, ու չենք հետքրքրվում, այս է վատը։ Քիչ է պատահում, որ գյուղացին դժգոհում է երկարատև անձրևներից, անհամուս եղանակ է, ասում է, բերքին շատ վնաս տվեց, իսկ քաղաքաբնակներիս ուրախացնում է անձրևների առատությունը, որովհետև հով օրեր են, փրկարար անձրևը փակել է շոգի գալստյան ճանապարհը։ Կյանքն էլ, իր ամբողջության մեջ,

թվայնացրել է 1915.info կայքը

ասպիսի հակասություն, վնր ու վարումների տարօրինակ միասնության չէ՞։

Մայրն առավոտյան աղջկա մոտ գնաց. մեծ թոռը բանակ է մեկնում, սեղան պատրաստելուն օգնելու անհրաժեշտությունը կար։ Իհարկե, հետը տարավ նաև Արշակին։ Լավ էր շուտ գնացին, անձրևի «բերանը» չընկան։

Հիմա տանը ինքն ու Նվարդն են։ Սևակի բանաստեղծությունների նոր հրատարակությունն է ընկել ձեռքը, կարդում է հաճույքով, մեկ-մեկ էլ՝ բարձրաձայն, Նվարդի համար։

— Հապա տիկինս, խնդրում եմ լսես այս հատվածը։

Դու ասում ես, թե սառել եմ,
Բոլոր-բոլոր կրակներս ես վառել եմ
Ու հիմա էլ... մթան մեջ եմ ես խարխափում։
Իսկ ես կասեմ, ես քայլել եմ,
Երբ որ մութ էր՝ ես փայլել եմ,
Բայց չեմ խաբել ես ոչ ոքի ու չեմ խաբում։

Նվարդը լուռ է, ու մի տեսակ ցրված է երևում, ի՞նչ է պատահել այս աղջկան։ Թեյի սեղանն էր հավաքում. հանկարծ բաժակն ընկավ ձեռքից և ադմկաշատ գլորումով հասավ մինչև Հրանտի, ոտքերի մոտ։ Եվ չկոտրվեց, ուրեմն ամուր բաժակ է։ Նվարդը ցրված նայում է մեկ Հրանտին, մեկ կողի վրա ընկած բաժակին։

— Նվարդ, քեզ ի՞նչ է պատահել, այսօր այնպես ցրված ես երևում։

— Այդ ոչինչ, Հրանտ, միայն խնդրում եմ ասես՝ լա՞վ էր, որ չկոտրվեց բաժակը, թե՞...

— Ես ի՞նչ գիտեմ։ Իսկ դա ի՞նչ մի կարևոր բան է, Նվարդ։

— Ես այնքան արդեն կասկածամիտն եմ, որ վախենում եմ սուտ հավատացյալ էլ դառնամ...

— Նվարդ, հապա ինձ մոտ արի, նստիր կողքիս, խնդրում եմ.— համբուրեց կնոջ ճակատը, շոյեց նրա փարթամ մազափունջը,— դե, հիմա ասա տեսնեմ, քեզ ի՞նչն է անհանգստացնում։

Նվարդը լուռ էր, ու Հրանտը չէր կարող չնկատել, որ նրա շնչառությունն արագացել է հևալու աստիճան։

— Դուցե ինչ-որ ցա՞վ ունես, Նվարդ։

— Բավական է ինչքան ցավեր ունեցանք.— Նվարդի ձայնի

թվայնացրել է 1915.info կայքը

մեջ և տագնապ կա, և մի անսովոր ուրախության սպասում։

Հրանտը զարմացած է և իր տարակուսանքը թաքցնել չի կարող։

— Նվարդ, մի՞թե անպայման ուզում ես ինձ անհանգստացնել։

Նվարդը մի ձեռքով գրկեց ամուսնու վիզը, մյուս ձեռքը տարավ դեպի իր կուրծքը. ասես ուզում էր կարգի հրավիրել իր խանթացող սրտին։

— Հրանտ, քեզ մի շատ լավ բան պիտի ասեմ, խնդրում եմ չհուզվես ու շատ չուրախանաս, ես դրանից էլ եմ վախենում... Թվում է թե կնոջ շունչը հիմա կկտրվի։

— Նվարդ, անխիղճ բանես ես անում,— կնոջ «վարակն» անցավ ամուսնուն. հիմա էլ արագացավ սրա շնչառությունը։

— Չհուզվես, խնդրում եմ, ինձ թվում է, թե մենք... երեխա ենք ունենալու։

Հրանտը մոլորված հայացքով կնոջն է նայում. երևի տեղ չհասավ խոսքը։

— Այսինքն, ինչպե՞ս թե, Նվարդ, ինչի՞ մասին ես խոսում.— և կնոջ գլուխն ավելի է մոտեցնում դեմքին, ասես վախենում է լավ չլսել նրա խոսքը։

— Երեք օր է, ես կրծքիս տակ ինչ-որ շարժում եմ զգում, Հրանտ, ինձ թվում է թե...

Հրանտը լուռ է, երևի ո՛չ անելիքը գիտի, ո՛չ ասելիքը, միայն մի տեսակ վերացած հայացքով կնոջն է նայում, և ընդչակատուր լինելու վտանգն ասես պահմտոցի է խաղում նրա շուրջը։ Հետո կնոջ գլուխը թափով իջեցրեց իր կրծքին ու համբուրում էր նրա այտերը, աչքերը, նորից, նորից։

— Նվարդ, դու հասկանո՞ւմ ես, թե ինչ ես ասում. հոգի՛ս, հարազա՛տս. քանի տարի է մենք սպասում ենք դրան, մի՞թե տեղ են հասել մորս աղոթքները։

Նվարդը լալիս էր ու ծիծաղում։ Իսկապես որ խենթանալ կարելի է։

— Իսկ մայրս գիտի՞, նրան ասե՞լ ես։

— Դեռ՝ ոչ մեկին, առաջինը դու ես իմանում։ Հապա գլուխդ դիր ահա, այստեղ, կրծքիս չէ, մի քիչ ներքև, փորձիր լսել. ես զգում եմ։

— Նվարդ, ես կամ խլացել եմ կամ գժվելու վրա եմ։

թվայնացրել է 1915.info կայքը

— Ոչինչ, Հրանտ, հանգստացիր։ Դեռ ժամանակ կունենաս լսելու։

— Անխիղճ, և երեք օր է դու լռո՞ւմ ես։

— Համոզված չէի, Հրանտ, հիմա էլ կասկածն ինձ հանգիստ չի տալիս։

— Գնանք Գարեգին Վահանիչի մոտ, նա սխալվել չի կարող։

— Վախենում եմ, Հրանտ, հանկարծ ժխտի, ես այդ հարվածին չեմ դիմանա...

— Մայրս որ տուն գա, նրան ասա, փորձված կին է, չի սխալվի։

— Նրան էլ չեմ ասի, դեռ շուտ է. պատկերացնո՞ւմ ես թե ինչ հիասթափություն կապրի, եթե հանկարծ...

Լռեցին մի պահ։ Հրանտին նորից չհաջողվեց լսել «հեռավոր աշխարհի» այնքան սպասվող արձագանքները։

— Գուցե ես իսկապես խլացե՞լ եմ, Նվարդ։

— Ոչ, իհարկե, պարզապես չարաճճի զավակդ դեռ քեզ հետ զրուցելու ցանկություն չունի։

— Մի՞թե ես նրա առաջ էլ մեղավոր եմ։

— Պետք չէ, Հրանտ. հին դարմանը քամուն չեն տալիս... Ջնայած, որ առիթը ներկայացավ, քեզ մի ուշացած խոստովանություն պիտի անեմ։ Հիշո՞ւմ ես այն չարաբաստիկ օրը, երբ Աշխենի նամակը տվեցիր ինձ, երբ ուշացումով բացվեցին իմ կուրացած աչքերը... Երեք օր դու տուն չէիր գալիս, իսկ ես տառապում էի իմ որոշման վրա։ «Ինչ անելը» այդ օրերի իմ կենաց ու մահու հարցն էր։ Քանի՛ որոշում ծնվեց ու խեղդամահ եղավ ուղեղիս ծալքերում, մեկը մյուսից դաժան, մեկը մյուսին հակասող։ Եվ առաջին որոշումն էր՝ թողնել ու հեռանալ այս տնից։

— Այդ օրերին իմ ամբողջ հույսը քո խելոք որոշման վրա էր. ես քեզ հավատում ու վստահում էի, Նվարդ։

— Իսկ դու սպանել էիր և իմ հավատը, և վստահությունը... Մի խոսքով, խնդրում եմ չընդհատես ինձ։ Այդ օրերին, մանավանդ գիշերվա ժամերին, մի ահավոր մենամարտ էր սկսվում խաբված ու դավաճանված Նվարդի և նրա անտեսանելի երկվորյակի միջև։ Մեկն ասում էր՝ դու այլևս իրավունք չունես մնալու այս տանը, մյուսը՝ բայց ես սիրում եմ նրան։ Իսկ նա արդեն ուրիշին է սիրում և նույնիսկ երեխա ունի նրանից,

թվայնացրել է 1915.info կայքը

մի հարց, որի լուծումը քո ուժերից վեր էր։ Մի՞թե դու այնքան եսասերն ես, որ չես կարող աղատել քո սիրած մարդու ճանապարհը։ Իսկ եթե ես առանց նրան ապրել չե՞մ կարող, կարող ես. դավաճանված, ուրեմն նաև ստորացված կնոջ կյանքն ինչի՞ պետք է, հեռացիր ճանապարհից, թող գոնե նրանք երջանկանան։ Իսկ դու մինչև վերջ համոզվա՞ծ ես, որ քո հեռացումը երջանկություն կպարգևի այդ նոր ընտանիքին։ Կարծում եմ՝ այո, սիրող ամուսիններ ու սպասված երեխա, ուրիշ ի՞նչ է հարկավոր։ Բայց Հրանտը սիրում է քեզ, դու հո այդ գիտես։ Գիտեի, իսկ հիմա՞։ Մի մոռացիր նաև Լուսիկ մայրիկին. ախր նա քեզ համար սկեսուր չէ միայն, մորից ինչպե՞ս կարող ես անդարձ հեռանալ։ Հենց այդ օրն էր, Լուսիկ մայրիկը, իմանալով իր տղայի ապօրինի կապի մասին, առարկություն չվերցնող տոնով ասաց.— Միևնույն է, իմ հարսը դու ես, իմ թոռը՝ Արշակը, ես ձեր ցա՜վը տանեմ... դե փորձիր ցավի տակ դնել այդպիսի կնոջը։

Նվարդը լուռ էր մի որոշ ժամանակ, հուզմունքի կապը հավաքել էր պետք։ Գնաց խոհանոց, ջուր խմեց մի ամբողջ բաժակ. եկավ, նորից նստեց իր տեղը։ Ու շարունակեց ավելի խաղաղված ձայնով։

— Ամբողջ երեք օր ես տանջվեցի, օ՜, դրանք ահավոր ժամեր էին։ Արշակին վերցնելու ու տնից հեռանալու որոշմանը խոչընդոտեց նաև քեզ խայտառակված չտեսնելու ցանկությունը։ Իմ ուղեղում մեխվել էր քո մի մեղայականը,— ների՛ր, եթե կարող ես։ Ես ինչպե՞ս քայքայեմ հրաշալի ընտանիքս, որտեղ արդեն երեխա է մեծանում, և ինչո՞ւ Հրանտը ներում էր խընդրում. եթե նոր ու ողբալոր սեր կա այդ մտերմության մեջ, նա չէ՞ր կարող ասել՝ վերջացավ, Նվարդ, այսուհետև դու քեզ համար, ես... Եվ, վերջապես, ինչո՞ւ պիտի ես այդքան հեշտությամբ ջնջեմ իմ դիրքերը, մի՞թե այդ աստիճան թուլամորթ ու ողորմելի կին եմ։ Եվ շրջապատի կողմից դա ինչպե՞ս կգնահատվի, քաջություն ու շիտակությո՞ւն թե՞ անիմաստ նահատակություն։ Ես ինչո՞ւ պիտի թույլ տամ, որ ընտանիքիս ավերակների վրա ինչ-որ մեկը կառուցի իր ընտանեկան երջանկությունը։ Անքուն գիշերների տեղատվություններից հետո էր, որ որոշեցի նամակ գրել այդ Աշխենին։ Եվ գրեցի։

— Ես հավատում էի, Նվարդ, ավելին, համոզված էի, որ դու կհանգես խելոք որոշման։

թվայնացրել է 1915.info կայքը

— Ա՛յն ժամանակ համոզված չէի դրանում, հիմա եմ համոզված, որ իմ մեծահոգի քայլն այսօր ինձ ափսոսալու հիմքեր չի տալիս, բարեբախտաբար, և դրա համար շնորհակալ եմ քեզնից, Հրանտ։

Գրկեց ամուսնու գլուխը, համբուրեց այտերը, միայն ինքն էլ չգիտեր թե ինչու՝ մի տեսակ ամաչելով։

— Ամեն անգամ քո հոգու ծալքերում ազնիվ մեծահոգության նոր շերտեր եմ հայտնաբերում, Նվարդ, իսկապես որ զարմանալի մարդ ես դու. իմ փոխարեն դու ես շնորհակալություն հայտնում.— գլուխը թեթև հննել էր կնոջ ուսին, շրթունքները հպել նրա բաց թևին։— Պատկերացնո՞ւմ ես, թե ի՜նչ ողբերգություն կլիներ, եթե իմ անխելք քայլը պատճառ դառնար մեր հրաշալի ընտանիքի քայքայման։ Եվ եթե երեխա ունենալու հարցում էլ ռեալ են քո սպասումները...

— Ես համոզված եմ, Հրանտ. չնայած կասկածի բաժինն էլ քիչ չէ։ Համբերենք, մի քանի օր հետո բժշկի մոտ կգնամ։

Լռեցին։ Էլ ի՞նչ խոսեն. մնում է մեծացնել համբերության բաժակը։ Եթե, իսկապես...

— Հրանտ, չնեղանաս, խնդրում եմ, ինձ անհանգստացնում է նաև Աշխենի վիճակը, նրա տղայի ճակատագիրը։ Շատ կուզենայի, որ այդ աղջիկն էլ իր բախտը գտներ, իր ընտանիքն ունենար։

— Իմ զարմանքը թաքցնել չեմ կարող, Նվարդ. դու իսկապես որ անուղղելի խեղճ ես, միայն անսահման բարի, ազնիվ ու մեծահոգի խեղճ...

21.

Աշխենն այդ երեկո ոչ մեկին չէր սպասում։ Դե՛, նրանց տունը այնքան քիչ գնացող-եկողներ կան։ Թամարը մրսել է, ջերմություն ունի, տնից դուրս գալ չի կարող. մորաքրոջ այցը երկու-երեք ամիսը մեկ հազիվ է լինում։ Մնում է Սրվանդը. նա էլ մի շաբաթ առաջ էր իրենց մոտ, այնքան շուտ նրան չի սպասում։ Մոր նկարը պիտի մեծացներ, դրա համար ժամանակ է պետք։ Ու նորից նայում է հոր լուսանկարին, և զգում է, որ մենակ տխուր է նրա համար, մոր, այսինքն իր կնոջ կարոտն է քաշում...

Դռան զանգի հետ տուն մտավ Սրվանդը։ Աշխենը փոքր-

թվայնացրել է 1915.info կայքը

ինչ խուճապի մատնվեց, մի տեսակ իրեն մեղավոր էր զգում նրա առաջ. գուցե պատճառն այն էր, որ այսքան շուտ չէ՞ր սպասում, թե՞ քրոջ իրավունքով խոստացել է զբաղվել Երվանդի ամուսնության հարցերով, ու մինչև այժմ ոչինչ չի արել։ Դրժ-բախտաբար չգիտի էլ, թե ինչ պիտի անի. հարմար ընկերուհի չկա, որ ծանոթացնի ու խորհուրդ տա՝ «Դոնեդուս» ընկնելու սովորություն չունի։ Երվանդին, հավանաբար, քսանութ-երեսուն տարեկան աղջիկ է պետք, և՛ գեղեցիկ, և՛ խելոք, և՛ չամուս-նացած, դե, փորձիր ճարել։ Շատ է մտածել այդ մասին, վեր-հիշել ծանոթ-բարեկամ-հարևաններին, բան դուրս չի եկել. հարմար թեկնածուի որոնումները շարունակվում են։ Հետո՞, դու ինչո՞վ ես մեղավոր այս տղայի առաջ, և մի՞թե նա այն-քան անճարակն է, որ ամենակենսական հարցը ինքնուրույն լու-ծել չի կարողանում։ Դու ես մնացել նրա միակ հույսը, խե՜ղճ ողորմելի, մեկը լինի քո հարցերը որոշի...

Իսկ Երվանդն արդեն զրույցի է բռնվել Գուրգենի հետ, շատ հին ծանոթների նման։ Նորից խաղալիք է բերել նրա համար, ինքնաթիռ է, հավաքում են միասին։ Եվ ինչպե՜ս երեխան սի-րով ընդունում է Երվանդի նվերը, իսկ հոր բերածը նրա ոտքի հարվածին արժանացավ։ Այս զարմանալի իրողության մասին չասի՞ Երվանդին։ Իմաստ չունի, մանավանդ՝ երեխայի ներկա-յությամբ։ Բայց չի կարող դիտողություն չանել։

— Երվա՛նդ, պետք չէ ամեն անգամ...

— Ես, կարծեմ, մի անգամ խնդրել եմ, որ այդ մասին ինձ բան չասես, Աշխեն, եթե երեխային դա ուրախացնում է, ինձ համար էլ հաճելի է... Գուրգեն, ահա այս գեկն էլ ամրացրու, և ինքնաթիռդ պատրաստ է. միայն չգիտեմ ուր ես թռչելու, ինձ էլ կվերցնե՞ս քեզ հետ։

— Անպայման, քեռի Երվանդ, երեքով Մոսկվա ենք թռչե-լու, ես, մաման ու դու. օդաչուն էլ ես եմ, չէ՞, քեռի Երվանդ։

— Դե, իհարկե դու ես, ընկե՛ր կապիտան։ Գուրգեն Մար-գարյան, միայն համաձայնվիր թռիչքը հետաձգել վատ եղանա-կի պատճառով, տես, դրսում անձրև է սկսվել։ Իսկ հիմա արի մի քիչ էլ մամայիդ ուրախացնենք։— Բացեց շրջանակի թղթե ծածկոցը.— Սա մամայիդ մաման է, նայի՛ր, Գուրգեն, տես ի՜նչ լավ տատիկ է։

Մի քանի րոպե հետո նկարն իր տեղը գրավեց պատին, հոր լուսանկարի կողքին։ Նույն չափսը, նույն ոճը. միայն դեմքի

թվայնացրել է 1915.info կայքը

արտահայտություններն են տարբեր, այնարհի մի թախիծ կա մոր դեմքին։

Աշխենը վերացած նայում էր ծնողներին, վայելում նրանց կենդանի ներկայությունը։ Անշտապ մոտեցավ, համբուրեց երվանդի այտը.

— Շնորհակալ եմ, եղբա՛յրս։

Լավ էր, զսպեց իրեն։

Հիմա նստած թեյ են խմում, իսկ Գուրգենը խոհանոցում իր ինքնաթիռի հետ է, պատրաստվում է մեծ թռիչքի...

Երվանդը նորից ու նորից համոզվում է, որ Աշխենի պատրաստած թեյը զարմանալի համով է։ Մեկ ուզում էր խոսել այդ մասին, մեկ էլ մտածեց, կարող է վատ ընդունվել, Աշխենը կմտածի, թե ակնարկում է ամեն անգամ մյայն թեյով հյուրասիրելու փաստը։ Իսկ ինչո՞ւ հյուրասիրելու, ախր իրար քույր ու եղբայր եք կոչում։ Հետո՞ ինչ...

Աշխենը աչքը նորից հառեց ծնողների լուսանկարների քիվին, ու մնաց երկար ժամանակ։

— Հորս անունից խոսել չեմ կարող, բայց մայրս շատ էր սիրում ամուսնուն. ի՞նչ գեղեցիկ ու նվիրական սեր էր, ես էլ, անխելքս, կարծում էի թե այդպես միայն գրքերում է լինում։

— Իսկ հիմա փոխվե՞լ է կարծիքդ.— Երվանդի հարցի մեջ հետին նպատակ չկար, իհարկե, բայց ինչո՞ւ Աշխենի դեմքը շառագունեց միանգամից։

— Այո՛, փոխվել է, մանավանդ այն բանից հետո, երբ ես էլ սիրո զոհը դարձա և մինչև հիմա էլ ուշքի գալ չեմ կարողանում։

— Ների՛ր, Աշխեն, բոլորովին նպատակ չունեի քո հին վերքը փորփրելու։

— Գիտեմ, չփակված վերքը միշտ էլ մխում է... Իսկ դու, Երվանդ, հավատդ մի կորցնի սիրո նկատմամբ, այդպես դժվար կլինի ապրել։

— Հավատ ոչ ունեցել եմ, ոչ էլ՝ կորցրել, բայց միևնույն է, ես հավատում եմ սիրո ուժին, և սա անիմաստ հակասություն չհամարես, խնդրում եմ։

Թեյի բաժակները նորից լցվեցին։ Այս վարդի մուրաբան էլ մի արտակարգ համայք է տալիս թեյին։ Է, վարդը ո՞ր զգացմունքի մեջ է, որ համը տեղը չի բերում. սիրո այդ հին ուան-

թվայնացրել է 1915.info կայքը

դավաճան վկան։ Միայն ինչո՞ւ է այդքան փշոտ. խակ սերն ինքը փշատո՞ւրկ է...

— Սիրո մի ռոմանտիկ պատմություն մեխվել-մնացել է հիշողության մեջ, եթե պատմեմ, հո չե՞ս ձանձրանա։

— Սիրելու իսկական բախտ դեռ չեմ ունեցել, Աշխեն, բայց սիրային պատմություն հաճույքով կլսեմ։ Մանավանդ, եթե թույլ տաս նաև ծխել. պատուհանը բաց է, ես էլ կաշխատեմ կարճ կապել։

— Իսկ դու գիտե՞ս, որ ծուխն ինձ դուր է գալիս։ Նույնիսկ ուսանող ժամանակ մի անգամ փորձեցի. ճիշտ է, ահավոր հիասթափություն ապրեցի ու երդվեցի այլևս այդ հիմարությունը չանել, բայց և այնպես ինձ դուր է գալիս, երբ տղամարդիկ ծխում են։ Ահա քեղ լուցկի, մոխրաման։ Իսկ այդ պատմությունն ինձ արել է հանդուցյալ հորաքույրս, որն իմ ուսանողական տարիներին ապրում էր Մոսկվայում։ Ես հաճախակի նրանց տանն էի լինում, և մի անգամ նա պատմեց իր գլխով անցած մի դեպք։ Հորաքույրս մի երեք տարվա ամուսնացած, երիտասարդ ու հետաքրքիր կին է լինում. տանն էլ երկու տարեկան մի երեխա է ուննում։ Մի շաբաթ օր, երբ ինքը մենակ է լինում երեխայի հետ, հնչում է սրանց դռան զանգը։ Հա, չմոռանամ ասել, որ այդ ժամանակ նա Ռոստովում էր ապրում։ Դուռը բացում է. մուտքի մոտ մի տաս-տասներկու տարեկան տղա է կանգնած, ձեռքին մեծ ու սպիտակ թղթով փաթաթած մի զամբյուղ։

— Խնդրեցին ձեզ տալ,— ասում է տղան։

— Ո՞վ խնդրեց,— հարցնում է հորաքույրս։

— Մի քեռի, անունը չասաց, ինձ էլ խոստացավ հինգ ռուբլի տալ, եթե նրա հանձնարարությունը ճիշտ կատարեմ։

— Իսկ ինչպիսի՞ մարդ էր։

— Մի սիրուն քեռի էր, այնքան էլ բարի աչքեր ուներ։

— Իսկ ի՞նչ է կողովի մեջ։

— Չգիտեմ, մորաքույր, անցնում էի փողոցով, նա կանգնած էր այս կողովը ձեռքին։ Եթե թույլ կտաք, ես կբացեմ։

Կողովն ազատեցին թղթե ծածկոցից, ու սննյակը լցվեց վարդի բուրմունքով։ Ի՜նչ վարդեր էին, կարմիր, դեղին, սպիտակ, քսանից ավելի, իսկ փնջի մեջ մի խոշոր ու սև վարդ էր թաղված։ Անկեղծ ասած ես էլ չգիտեի, որ սև գույնի վարդ կա աշխարհում։ Հորաքույրս դրա վրա զարմանալու ժամանակ չի

թվայնացրել է 1915.info կայքը

ուննում. նրան տանջում է այդ կողովի «հեղինակի» հարցը։ Ո՞վ կարող է լինել, և մի՞թե նա չգիտի, որ ինքը ամուսին ու երեխա ունի, ո՞ւմն է պետք այս ուշացած «կրակոցը»։ Ճանապարհում է երեխային. «պարտքի տակ չմնալու» համար ինքն էլ հինգ ռուբլի է տալիս նրան։ Ու նորից է նայում, տնտղում կողովը, գուցե նամա՞կ կա մեջը։ Ոչ մի թուղթ, ոչ մի տող։ Միակ երկտողը երևի վարդի այն քաղցր բուրմունքն էր, որ բռնել էր ամբողջ բնակարանը։ Տեսնես ո՞վ է, ի՞նչ է ակնարկում, այդ սև վարդի ներկայությո՞ւնն ինչի համար է։ Երեկոյան տուն է գալիս ամուսինը, զարմացած նայում է վարդի անուշահոտ փնջին ու հարցնում.

— Այս գեղեցիկ նվերն ումի՞ց ես ստացել, ճաշակով մարդու գործ է սա։ Կինն ասում է՝ ընկերուհիս է բերել։ Դե, մտածում է՝ ինչ կարիք կա ավելորդ կասկած գցել ամուսնու սիրտը։

— Իսկ այդ սև վա՞րդն ինչի համար է։

— Ամուսինը մահացած կին է, դու նրան չես ճանաչում, երևի այդ է ուզում ակնարկել...

— Բարեբախտաբար քո ամուսինը դեռ ապրում է։

Հորաքույրս շտապ անցնում է խոհանոց՝ լսելու տալով ամուսնու վերջին խոսքը։

Անցնում են ամիսներ, տարիներ։ Ծաղկահանդեսի և ոչ մի նոր փորձ։ Գուցե այն տղան հասցեն է շփոթել. ինչպե՞ս կարող է այսպիսի արարքը կրկնություն չունենալ։ Աստիճանաբար մոռացության փիրկն է անցնում վարդի փունջը, չնայած սևասիրտ վարդը շարունակում է մխալ նրա սրտում։ Մի օր, ինչպես է լինում, ծածկած շուկայի դռանը հանդիպում է ամուսնու հեռու բարեկամներից մեկին, ընտանիքի ու երեխաների տեր Մերուժանին։ Կանգնում, խոսում են, բայց խոսակցությունն ինչ-որ չի ստացվում, յուրաքանչյուրն աշխատում է շուտ բաժանվել իր զրուցակցից։ Նրանցից ոչ հեռու ծաղկավաճառներ են լինում կանդնած ու վաճառքի հնթակա ապրանքը հատկապես վարդն է։ Հորաքույրս չնայել չի կարող։

— Ես տեսնում եմ, որ դուք վարդ շատ եք սիրում, եթե իրավունք տայիք, ձեզ համար մի ծաղկեփունջ կպատրաստեի, միայն ափսոս, որ սև վարդ չունեն։

— Մերուժան, իսկ ինչո՞ւ սև վարդ։ Հորաքույրս քիչ է մնում շնչահեղձ լինի, այնքան հուզվում է դժվար կռահումներից ու հակասական մտքերից։

թվայնացրել է 1915.info կայքը

— Որովհետև սև վարդը խորտակված, բայց դեռևս հոգեվարք ապրող սիրո խորհրդանիշն է, խնդրացնող բույր ունի, միայն հույսի շողերն են թևաթափ...

— Մերուժան, երեք տարի առաջ ես մի կողով էլ ստացել՝ վարդերով լի, և առաջին անգամ սև վարդ տեսա, կարո՞ղ է...

— Ներող կլինեք, ես էլ, ամեն ինչում ուշացող խնդրուկս ուշացող ու լռող: Սրևի ավելորդ էր նաև ա՛յս խոստովանությունը, վեց-յոթ տարի հետո, բայց երբեմն վիակ մնալուց պայթելու վտանգ է առաջանում:

— Վեց-յոթ տարի՞ ասացիք:

— Այո, ձեր նշանվելու տարվանից: Ես գործուղումից վերադարձա և իմացա, որ հորս հորեղբոր տղան նշանվել է արդեն: Ձեզ առաջին անգամ տեսա հարսանիքի օրը, և մի այնպիսի խեղճություն եկավ վրաս, որ ուրախության կեսից տուն փախա: Այդ ի՜նչ տառապած գիշեր էր... Հետո ամուսնացա, հույս ունենալով ապատվել ինձ գիշեր-ցերեկ հետապնդող անխնդիր մտքերից: Կինս լավ անձնավորություն է, ինձ երեք հրաշալի ժառանգ է պարգևել, և, միևնույն է, ձեզ մոռանալ չհաջողվեց: Ընդհակառակը, տարիների հետ մեծանում ու խորանում էր վերքը: Աշխատում էի ձեզ չհանդիպել, այսօր էլ պատահաբար տեսա ձեզ և լցված բաժակն այլևս իրեն «խելոք» պահել չկարողացավ: Կներեք, խնդրում եմ, ու չդատապարտեք նաև, հույս ունեմ, որ ինձ անլուրջ մարդ չեք կոչի. այս խոստովանությունը գուցե մի քիչ կթեթևացնի՞ սրտիս ցավը. ինչ ֆարկտ տարած սիրտ է, սրտացավ վերաբերմունքի կարոտ:

— Մերուժան, ինձ անհարմար դրության մեջ եք դնում Պատճառ եմ դարձել ձեր տառապանքի. հիմա ինչո՞վ կարող եմ քավել իմ մեղքերը:

— Ոչ մեղք կա այստեղ, ոչ քավելու անհրաժեշտություն: Ձեզանից միայն մի խնդրանք ունեմ. ապրեցեք երկար ու լավ, երջանիկ եղեք և իմացեք, որ ձեր երջանկությամբ տաքացնում եք մի մրսած հոգի, իր մրսածությամբ բախտավոր մի սիրտ, որը, թեկուզև գիտի, որ անտարբեր եք իր նկատմամբ, նաև համոզված է, որ եթե մահվան ստվերի տակ էլ դուք ժպտաք նրան մի թեթև, հարություն կառնի: Օ՜, անսահման է սիրո ուժը...

Նորից մի քանի տարի է անցնում. այլևս ոչ մի հանդիպում: Հորաքույրս մի անգամ թաղման է գնում, ընկերուհու

թվայնացրել է 1915.info կայքը

հայրն է լինում մահացած։ Գնրեղմաններում, նույն ծառուղիով, երկու թափոր է առաջ շարժվում։ Հորաքույրս նայում է մյուս հանգուցյալին և ցավով համոզվում է, որ դա Մնրուժանն է։ Բոլորովին չի փոխվել, միայն չափից ավելի գունատ է, ու քեղերն են փոքր-ինչ փարթամացել։ Շեղվում է ճանապարհից ու քայլում մյուս թափորի հետ, և աչքը հանգուցյալից կտրել չի կարողանում։ Բա, ասում էիր, եթե ինձ ժպտաս, հարության կառնեմ, ինչպե՞ս ժպտամ քեզ, երբ սիրտս կտոր-կտոր է լինում։ Վա՛յ, կարծես թե շարժվեց Մնրուժանի բեղը, հավանաբար իրեն թվաց միայն։ Հանգուցյալները, դժբախտաբար, հարության չեն առնում, և իրենց հետ ի՞նչ սիրտ ու զգացմունքներ են տանում այն աշխարհը...

Այլևս ոչ մի խոսք։ Աշխենն ու Սրվանդը լուռ իրար էին նայում. ամեն մեկը խարխափում էր իր մտքերի մշուշապատ ծովում։

22.

Հրանտն ու Նվարդը նոր էին խաղաղվել «հնամաշ» զրույցից հետո, թեթև նախաճաշի էին նստել, երբ դուռը բացվեց կրնկի վրա, ներս խուժեց Սրբուհի մորաքույրը ու միանգամից վրա տվեց.

— Տունս քանդվեց, ա՛յ ժողովուրդ և էլի էդ աննամուս լուկոտի պատճառով։— Գլխաշորը նետեց աթոռին ու կամաց ասաց.— Հարս ջան, մի բաժակ ջուր տուր։

Նվարդը գունատվեց միանգամից ու տեղից վեր կենալ չի կարողանում։

Հրանտն շտապ անցավ խոհանոց, ջուր բերեց.

— Մորաքույր, կարգին ասա, ի՞նչ է պատահել։

— Ասելու բան է, որ ասեմ,— ջուրը խմեց թափով, բայց ի՛նչ ջուր կարող էր հովացնել նրա վառված սիրտը։ Հևում էր, ու գունատ էր նկատելի։ Ով ինչպե՞ս էր նիհարել։

— Մորաքույր, դե ասա, իմանանք,— Նվարդն այլևս չդիմացավ պահի լարվածությանը։

— Էն ախմախ Սարիբեկը փախել է բանակից, բռնել են, պիտի դատեն։ Ասում է, դեզի նման մի խոսք կա, էն ո՞նց է։

— Դեզերտի՞ր։

— Հենց էդ է, Հրանտ. սև լինի նրա ծնված օրը. գերեզմա-

թվայնացրել է 1915.info կայքը

նում էլ հանգիստ չդտնի նրա պապը, մեր հարսի հերը, թամամ նրան է քաշել, ուտող-ուրացող՝ թե ձիուքս կընկնի...

— Մորաքույր, իսկ դուք ինչպե՞ս իմացաք.— Նվարդը զարմացած է, որ Հրանտն այդքան հանգիստ է խոսում։ Իսկ Հրանտը, եթե անհարմար չզգար, հենց Նվարդի երեսին կնետեր.— ես քեզ ի՞նչ էի ասում։ Ջարախանդալու տրամադրություն չունի, ո՛չ, պարզապես, անհարմար չլինի ասել, գոհ է ինքն իրենից. ուրեմն դեռ վերջնականապես չի կորցրել մարդկանց ճանաչելու շնորհքը։

— Հեռագիր ենք ստացել, իրա զորամասից։ Օրեկվանից մեր տանը սուգ է։

Տիրեց մի ճնշող լռություն։

Հրանտը հասկանում է, եթե մորաքույրը եկել է իրենց մոտ, ուրեմն ինչ-որ օգնություն է ակնկալում, իսկ ինքն ի՞նչ կարող է անել։

— Հրանտ, գիտեմ, ես հարցում դու ոչ մի բան անել չես կարող, էնպես, միխիթարվելու համար եմ եկել։ Համ էլ լսել էի, որ քո խորհրդով են նրան բանակ տարել... Ջէ՛, քեզանից նեղացած չեմ, աստված վկա, մնար էստեղ, կարող էր մի ավելի մեծ ցավի դար. աննամուս լակոտից ամեն բան սպասելի է։ Մենակ, եթե հնարավոր է, Հրանտ, մի կարգին թուղթ տուր, բնութագիր եք ասում. ձեզ մոտ աշխատել է, ասում են՝ գործարանի թուղթը կարող է օգնել։

Հրանտը ոչ միայն զարմացավ, այլ նաև զայրացավ, տես ի՞նչ առաջարկությամբ է մորաքույրն իր մոտ եկել, իրեն ինչի՞ տնող է դնում։ Բայց լավ էր, կարողացավ զսպել բարկությունը, կանխել զայրույթի պոռթկումը։ Դե՛, վերջապես, ի՞նչ կա զարմանալու. մեծ կին է, նեղ տեղից դուրս գալ է ուզում, նրանից ինչպե՞ս կարող ես նրբանկատություն պահանջել։ Ու զարմանալի հանգիստ տոնով ասաց.

— Սիրելի մորաքույր, դու շատ լավ գիտես, որ այդ Սարոն փախել էր նաև մեր գործարանից, ուրեմն նա կրկնակի դեզերտիր է. նրան ինչպե՞ս կարող եմ դրական բնութագիր տալ, գործարանի ընկերներն ինձ ի՞նչ կասեն։

— Դե՛, հասկանում եմ, Հրանտ, էդքան էլ անխելք չեմ, բայց մտածեցի, թե կարող է մի բան անես. մե՞ղք են ծնողները։

թվայնացրել է 1915.info կայքը

— Ջնմ կարող, դա անհնարին բան էւ Հետո, չեմ թաքցնում, Սարոն արժանի էլ չէ նման վերաբերմունքիւ

— Հենց ցավն էլ նրանում է, որ դու ճիշտ ես։ Գյուրբադյուռ լինի Սարոյի պապը... Ես չէի գալու, տղաս էլ ասաց՝ Հրանտն էդ բանը չի անի։ Հարսս շատ խնդրեց, ասում է՝ ով գիտի, նա էլ արդեն երեխայի հայր է, գուցե կվազճա՞ մեղ... Դե, ես էլ մտածում եմ, որ էդ թուղթը գրեիր, հո աշխարհը չէ՞ր քանդվի. ուրիշները որ իմանաս ինչեր են անում...

Նվարդն ուղղակի ցնցված էր, և իր անելիքը չէր գտնում։ Հրանտին խնդրել չի կարող, գիտի, որ նա իրավացի է, չի ղիջի։ Շատ էր ուզում մխիթարել Սրբուհի մորաքրոջը, բայց ինչպե՞ս, ի՞նչ ասի։ Այն խելոք նամակի հեղինակը ինչպե՞ս կարող էր այդպիսի անխելք քայլ կատարել, սա ի՞նչ հանելուկ է։ Բայց հիշո՞ւմ ես, այնտեղ նա գրել էր նաև իր մի այդպիսի փորձի մասին, ընկերներն էին խանգարել, ո՛չ, կանխել էին։ Ինչպե՞ս նա դիմաց այդ քայլին և մի՞թե չի մտածել տխուր հետևանքների մասին։ Թե, իսկապես, հիմար տղա լիներ։ Իսկ ինչ է, քո կարծիքով նա խելո՞ք է...

Մի շաբաթ հետո Նվարդը նամակ ստացավ Սարիբեկից։ Գրել էր հիմնարկի հասցեով, կարճ նամակ էր, բայց ինչպե՞ս այն տակնուվրա արեց Նվարդի հոգին։

«Սիրելի մորաքույր (ինձ նման աննամուսն իրավունք ունի՞ ձեզ այդպես կոչելու, չգիտեմ), մի մեծ հիմարություն եմ արել և դրա թթուն խմում եմ այժմ. հանգուցյալ պապս կասեր՝ դա հալա քիչ է քեզ... Մի ծանր գիշեր հիմարությունը տարավ ունեցածս խելքը. սիրտս այնպես էր ուզում մեր հանդերն ու ձորերը, էն անտեր շուկան (ծիծաղելի է, չէ՞)։ Առանց հետևանքների մասին մտածելու, հասա կայարան ու գնացք նստեցի։ Ընկերներս չիմացան, որ դեզերտիրի ճանապարհը փակեն։ Ով գործը հասավ անծանոթ մարդկանց. Հայաստանի սահմանին չհասած՝ բռնվեցի։ Դատել են, աչքս էլ էն հանել, երկու տարվա կալանք են որոշել։ Հիմա իմ եփած ճաշի վրա եմ և չէի ասի, թե համով է այն... Ասեմ թե փոշմանել եմ, քիչ կլինի, վատոն բարձրանալու պահին զգացի հիմարությունս, բայց ետ կանդնել չկարողացա։ Դատի ժամանակ ընկերս՝ Դմիտրին, աչքովս ընկավ, այնպե՞ս էր խեղճացել, նրա երեսին նայել չկարողացա։ Ինչո՞ւ եմ գրում այս բոլորը, մորաքույր Նվարդ, ախր դուք իրավունք ունեք իմ նամակը, առանց ծրարը բացելու, մի կողմ

թվայնացրել է 1915.info կայքը

շպրտել։ Ես խղճում եմ մորս, անհարմար եմ զգում ձեզնից, ապերախտ գոնվեցի, շա՞տ։ Մեկ էլ կուզենայի այլևս Դմիտրուն չհանդիպել։ Ի՞նչ երեսով կարող եմ նրա աչքերին նայել... Ձեզնից ներողություն խնդրելու իրավունք էլ չեմ վերապահում ինձ, և եթե փորձեք ինձ ներել, դա կլինի ավելորդ շռայլություն։ Այնուամենայնիվ, հույս ունեմ, որ երբևէ ձեր բարի աչքերին նայելու համարձակությունը պիտի ունենամ։ Պատկերացնում եմ, թե ինչքան դառնացած կլինի քեռի Հրանտը. նա ինձ երբեք չի ների, համոզված եմ դրանում։ Մինչև անգամ ինձ իրավունք չեմ վերապահում բարևներ ուղարկելու ձեզ ու քեռի Հրանտին։ Պապս կասեր՝ աննամուս մարդն ես ախարհում ապրելու իրավունք չունի... Ինչո՞ւ գործարանից փախա, ախր լավ աշխատանք էր, լավ մարդկանց մեջ էի։ Հենց միայն Մուշեղի համար արժեր մնալ. նրան էլ բեդամադ արեցի։ Ո՛չ, իսկապես որ անշնորհակալ մարդ եմ, քեռի Հրանտի արած լավությունն էլ ջուրը գցեցի։ Հիմա գիտեմ, որ շատ եք զարմացած, և քիչ թե շատ խելոք բաներ եմ գրում, և խելքից դուրս հիմարություններ եմ անում, ինչպես ընդունված է ասել, խոսքի և գործի հակասություն։ Եվ ամբողջ դժբախտությունը կայանում է նրանում, որ հասկանալով հանդերձ՝ ընդառաջ եմ գնում այդ ահավոր անխելքությանը։ Մեկը լինի ասի՝ տո հիմար, էդ ո՞ւր էիր գնում և՝ ի՞նչ իրավունքով... Մորս միայն մի քանի տողից բաղկացած նամակ եմ գրել, խնդրել եմ, որ չանհանգստանա (իսկ դա հնարավո՞ր է)։ Երկար տատանվելուց հետո որոշեցի ձեզ էլ գրել։ Ախր, ինչպե՞ս կարող եմ մոռանալ ձեր լավ վերաբերմունքը։ Դուք ինձ իրավունք էիք տալիս ձեր տանն ապրելու (ձեր անկեղծության վրա երբեք չեմ կասկածել)։ Ո՞ր հարազատն այդ քայլին կդիմի։ Մեր գյուղի ընկերներից մեկը Երևան գնաց սովորելու, և եղբոր կինը նրան անկյուն չտվեց իր ընդարձակ տանը։ Ձեր այդ մեծահոդի արարքը ինչպե՞ս կարող եմ մոռանալ։ Եթե ի վերջո կարողանամ մարդ դառնալ, ապա ձեր շնորհիվ միայն, Նվարդ մորաքույր. դրա համար էլ ձեզնից շա՞տ եմ շնորհակալ։ Մի խոսքով՝ ձեր անարժան Սարիբեկ»։

Նվարդը սուրճ պատրաստեց, բայց խմել չկարողացավ, ինչո՞ւ է այսքան դառը, կարող է շաքա՞րն է մոռացել։ Նորից կարդաց նամակը՝ Իսկ արցունքնե՞րն ինչի են գլորվում աչքերից, որ ընկան ու ջրեցին նամակի տողերը, դրանից մեղմանալու ց

թվայնացրել է 1915.info կայքը

պատճառած դառնությո՞ւնը։ Եվ, վերջապես, ինչո՞ւ է սրտին մոտ ընդունում մի, իսկապես որ, անարժան զավակի արժանի ճակատագիրը։ Բա եղա՞վ.— ըմբոստացավ ներքին ընդդիմախոսը, դու անտարբեր չես կարող անցնել բոլորովին օտար ու անծանոթ մարդու ողբերգության կողքով անգամ, իսկ այստեղ քո բարեկամն է, քո հարազատը. դու մի ժամանակ նույնիսկ պատրաստ էիր նրան պատսպարելու, մայրությունն անելու։ Իսկ եթե նա ոտնահարել է ամեն մի սրբություն, եթե թքել է քո հոգատարության ու անհանգստության վրա էլ։ Միևնույն է, դա ինձ իրավունք չի տալիս նրանից հրաժարվելու, նա ինձ հարգում ու հավատում է, ինչպե՞ս կարող եմ սպանել նրա մեջ այդ հավատը, մի՞թե պարտավոր չեմ զբաղվելու նրան ճիշտ ճանապարհի բերելու հարցով, և մի՞թե նա հիմա ավելի շատ կարիք չունի իմ բարոյական օգնությանը։ Ո՞չ, ես նրան մենակ չեմ թողնի դժբախտության պահին, կգրեմ նրա նամակի պատասխանը, սիրտ կտամ. գուցե կարողանամ համոզել Հրանտին, որ նա՛ էլ գրի։ Տղային մենակ չպետք է թողնել, նա փրկարար ձեռքի կարիք ունի։

23.

Հանգուցյալ պապը նշանավոր դարբին էր, կացին ու բահ էր պատրաստում, գերանդի ու մանգաղ։ Եվ ինչպե՞ս էր աշխատում, առավոտից մինչև երեկո, մի փոքրիկ ընդմիջումով։ Հոգնել չգիտեր։ Զարմանում էր, երբ խոսք էր լինում այդ մասին.

— Մարդս մենակ պարապմունքից կհոգնի, բա աշխատանքից կբեզարե՞ն։

Հիշում է, մի անգամ ինքը խնդրեց, որ ծերունին հանգստանա փոքր-ինչ։

— Պա՛պ, մի քիչ շունչ քաշիր, թող քրտինքդ անցնի, մեղք ես, չէ՞։

Պապը զարմացած իրեն նայեց.

— Սմբատ ջան, առանց քրտինքի ապրե՞լն ինչի է պետք։ Մարդուս ճակատին բողբոջած քրտնքից էլ սուրբ բան չկա աշխարհում. ես էդ քրտինքի աղի համին ու կծու հոտին մատաղ։ Թոռ ջան, էդպես է աշխարհի բանը. թամբալ մարդու հերը շուն դառնա... Ուզենամ օրական երեք կացին ու մի քանի մանր

թվայնացրել է 1915.info կայքը

բաներ կպատրաստեմ, թե քրտինքից փախեփախ արեցի, մի կացին հաղիվ սարքեմ. բա խելքը գլխին մարդը ժամերը քոռ ու վո՞ւչ կանի...

Երկրորդ տարին է, հեռակայում է պոլիտեխնիկական ինստիտուտին, և ոչինչ, հունի մեջ է մտել, գործն առաջ է գնում։ Իսկ սկզբում ինչքան ծանր էր թվում, նույնիսկ մի արանքում աչքը վախեցավ. հրաժարվել էր ուզում։ Թամարը սիրտ տվեց, ոգևորեց։

— Սմբատ, հոգի՛ս, բա դու դժվարություններից վախեցո՞ղ տղա ես։ Այնպես եմ ուզում, որ ամուսինս բարձրագույն կրթություն ունենա. քո դիպլոմ ստացած օրը իմ կյանքի ամենաերջանիկ օրերից մեկը կլինի։ Այդ միտքը հանիր գլխիցդ, խնդրում եմ.— գրկեց, համբուրեց ամուսնուն, աչքերում արցունքներ կային ու կարոտի սպասումներ։ Մի տաս օր էլ չէր անցել, հանդիպեց էն գրողի տարած Ջարուհուն... Մի առիթով Հրանտ Արշակովիչն ինչքա՜ն տեղին մեջ բերեց Թումանյանի խոսքը.

Մոլորվեցավ խավար ծովում
Լողորդ տղան սիրահար,
Ու բերում է հողմը, բերում
Հառաչանքներ «Ա՜խ, Թամա՜րա»...

Այո՛, լավ մոլորվեց, ու թթուն էլ խմեց, ինչպես պետքն է... Եվ, այնուամենայնիվ, վիրավորված կնոջ խնդրանք-ցանկությունը ետ պահեց նրան սխալ նոր քայլից։ Մնաց ինստիտուտում, համառեց, և արդյունքը գոհացուցիչ է։ Փոխադրվել է երկրորդ կուրս։ Հաճելի չարչարանք է։ Վերջապես արտադրամասի պետ է, մասնակցել է նոր հաստոցի ստեղծման աշխատանքներին։ Հիշում է, Կույբիշևի ընկերներից մեկը, կարծեմ Ռոզա Պավլովնան էր, մի անգամ հարցրեց՝ ե՞րբ եք ինստիտուտն ավարտել։ Կատակի տվեց, նոր պիտի ավարտեմ, ասաց։ Ջհալատացին։ Եվ լավ արեցին, ինքն ումի՞ց է պակաս, իրեն վստահված պաշտոնն էլ այդ է պահանջում։ Պետք է սովորել, հաղթահարել բոլոր դժվարությունները։ Պապի ասած՝ թող ճակատից երբեք չպակասեն քրտինքի կաթիլները, սո՜ւրբ կաթիլները։

Առավոտյան Աշխենի հետ միասին օդանավակայան էին գնացել, Կույբիշևից եկող ընկերներին դիմավորելու։ Հներից միայն Ռոզա Պավլովնան էր։ Ի՜նչ սրտառուչ հանդիպում էր, ընկերուհիներն իրարից պոկվել չէին կարողանում... Գլխավոր

թվայնացրել է 1915.info կայքը

ինժեների ավտոմեքենայով էին գնացել Բերեցին հյուրանոց, տեղավորեցին առանձին համարներում։ Հիմա հյուր են Աշխենի տանը։ Կիրակի է, ուրիշ աննելիք չունեն։ Առավոտյան շուկա են գնացել Աշխենի հետ, բերել են ինչ պետք է։

Թամարը շատ էր ուզում օգնել ընկերուհուն, բայց «մանկապարտեզը» չէր թողնում։ Գուրգենին իր մոտ տարավ, գոնե այս ձևով թեթևացնի Աշխենի հոգսը։ Հրավիրեցին նաև Հրանտ Արշակովիչին. ինչպես ասում են, քաղաքավարի հրաժարվեց.— Քրոջս տուն պիտի գնանք, նրանց տղայի ծնունդն է։ Գուցեև ճիշտ է, ինչո՞ւ չհավատալ Աշխենը, սակայն, համոզված է, որ Հրանտը սարդապես խուսափում է իր տունը գալուց։ Չի եղել ոչ մի անգամ։ Գուցե իրավացին նա՞ է...

Այնպես խաղաղ ու հավաք է Աշխենի տանը. սեղանն էլ հիմք չունի իր թերբեռնվածությունից բողոքելու։ Երեք տղամարդուն հաճույքով սպասարկում են Աշխենն ու Ռոզա Պավլովնան։ Ու միաժամանակ խոսում են իրենց գալու նպատակի, 6—4—10 հաստոցը կատարելագործելու մասին։ Տեղերից դիտողություններ ու առաջարկություններ են ստացել, և Կույբիշևում, և Երևանում։ Հանդիպման նպատակը այդ դիտողությունների քննարկումն է, նկատված թերությունների վերացումը։ Ուտել-խմելուց հետո, ինչպես և սպասվում էր, խումբը երկու մասի բաժանվեց, տղամարդիկ մնացին ճաշասենյակում, տաքացած գլուխներով փորձում էին ճշմարիտ եզրակացության հանգել, իսկ կանայք խոհանոցում զբաղված էին մտերմիկ խոսակցությամբ. այնքան բան ունեին իրար պատմելու, իրարից հարցնելու։

— Ռո՛զա, դե պատմիր ինձ հետաքրքրող բոլոր նորությունների մասին։ Ոչինչ չմոռանաս, խնդրում եմ։

— Մեր տանը ոչ մի նորություն չկա. մորս մահից հետո ինձ համար նոր հարված եղավ եղբորս բաժանվելը կնոջից։ Ճիշտը որ ասենք, դա ընտանիք էլ չէր. մինչև վերջ իրար հասկանալ չկարողացան։ Իմ աշխատանքից դժգոհ չեմ։ Գործարանում առանձին նորություններ չկան։ Անատոլին շատ էր ուրախացել, երբ ստացավ քո շնորհավորական նամակը. կինն էլ լավ աղջիկ է, միայն, որքան նկատում եմ, միշտ չէ, որ իրար ճիշտ են հասկանում։ Մի անգամ այդ Նատաշան ինձ մոտ բացվեց, Անատոլին, ասում է, աչքը դուրս տղա է երևում, և թող չկարծի, թե ամեն ինչ կհանդուրժեմ, նա դեռ ինձ լավ չի ճա-

թվայնացրել է 1915.info կայքը

նաչում։ Ես էլ մի առիթով տղայի «ականջը քաշեցի», ասացի՝ եթե քեզ վատ պահես, Աշխենին կգրեմ և նրա մոտ քեզ խայտառակ կանեմ։ Ժպտաց քթի տակ, մի հոգոց հանեց ու ինչ ասի, որ լավ լինի.

— Աշխենն ինձ սաղ-սաղ մորթեց. օ՜, նա այնպես դաժան վարվեց ինձ հետ, նրան ոչ մի կերպ ներել չեմ կարողանում... Ավ զարմանալին այն է, որ այդ տղան նորից նախկին թուխվռին դարձավ, քո ժամանակվա լջուխյունից քիչ բան է մնացել նրա մոտ։

— Ուրեմն ես այստեղ էլ մեղավոր եմ։

Այնքան ափսոսանք կա Աշխենի ձայնի մեջ։

— Չէ՛, անմե՛ղ ես,— ըմբոստացավ Ռոզան,— և շարունակիր քո ճգնավորի կյանքը, չգիտեմ մինչև երբ։

— Ավ, այնուամենայնիվ, հույս ունեմ, որ վերջը լավ կլինի, Ռոզա, հավատա։

— Այո, ձեռքերի վրա են տանում մարդուն և ետևից էլ նվաղն է մղկտում, այս է լավ վերջը։

— Մի չարանա, քույրիկս, պետք չէ։ Իսկ Անատոլիի մոտ այդ նկատելի փոփոխությունը, ընդունիր որ նրա օգտին չի խոսում, ուրեմն նա երբեք էլ վստահելի մարդ չի եղել։

— Հասկացիր, նայած թե ում համար։

— Լավ, թողնենք այս խոսակցությունը։ Միայն խնդրում եմ ես անունից ասես Անատոլիին, երկու խոսք միայն։— Լուռ, դժվարանում էր ձևակերպել այդ երկու խոսքը։ Իսկ Ռոզան սպասում էր։ Լռությունը երկարեց։ Աշխենի դեմքն այնպե՞ս էր լարվել։

— Իսկ ի՞նչ պիտի ասեմ. գուցե դու նամա՞կ կգրեիր։

— Ո՛չ, նամակ պետք չէ։ Կասես, որ շատ կդառնանամ, եթե իմանամ նրա ընտանեկան անհաջողության մասին։

— Բարոյախոսի թիկնոցը որի՞ց ուսերիդ առար։

— Կասես, ինչ-որ խնդրեցի, նա ինձ ճիշտ կհասկանա։ Այս ինչքան բարդ ու հակասական է կյանքը, տե՛ր աստված...

— Ոչ այնքան բարդ, որքան ուզում ենք ներկայացնել։

Աշխենն անցավ այդ խոսքի կողքով.

— Գիտե՞ս, Ռոզա, մի անկեղծ խոստովանություն պիտի անեմ։ Համարյա արդեն հաշտվել էի այն մտքի հետ, որ Անատոլին իմ ուշացած բախտն է։ Պատրաստվում էի նրան նամակ գրել,

թվայնացրել է 1915.info կայքը

կանչել Երևան, հայտնել իմ համաձայնության մասին։ Եվ հենց այդ օրը ստացա նրա նամակը՝ ամուսնության լուրով։ Ջեմ թաքցնում, ծանր հարված էր։

Ռոզան լսածին չէր հավատում։

— Լսիր, դու հո խե՞նթ չես։ Եվ լուրջի՞ր։

— Իսկ ի՞նչ պիտի անեի, խանգարեի՞ նրանց։

— Այդ մասին նրան անպայման կասեմ, չասել չեմ կարող։

— Ջես ասի, Ռոզա, դա մեծ անտակտություն կլինի քո կողմից և կարող է ճակատագրական լինել նրա ընտանիքի համար։ Ու պետք չէ, որովհետև այս ժամանակահատվածում համոզվել եմ վերջնականապես իմ կյանքը Անատոլիի հետ չկապելու իրավացիության մեջ։ Չկա այդ սեր կոչվածը, հասկանո՞ւմ ես, ամիսներով նրան չեմ հիշում և ուրախ եմ հարցի նմանօրինակ լուծումից։ Ես նրան, մանավանդ նա ինձ երջանկացնել չէր կարող, այս է տխուր ճշմարտությունը։

— Ուրիշները, կարծում ես, այդ սեր կոչվածից խելքահա՞ն են լինում։

— Ուրիշները, չգիտեմ ինչպես, ես առանց դրան չեմ կարող, դա իմ ուժերից վեր է։

— Իսկ Գրա՞նտը, նա դեռ տեղ ունի՞ քո սրտում։

Այս Ռոզան էլ ինչ սովորություն ունի մտնելու դիմացինի սրտի ամենաթաքուն անկյունները։

— Չգիտեմ, հավանաբար՝ ոչ։ Գուցե ճիշտ կլինի ասել՝ համարյա ոչ։

— Այդպես էլ քո ամբողջ կյանքը կառուցեցիր հավանաբարի ու համարյայի վրա, արդյունքն էլ, ինչպես տեսնում եմ, շա՜տ է գոհացուցիչ։

— Դաժան մի՛ եղիր, Ռոզա։— Աշխենի ձայնի մեջ խնդրանք չկա, այլ՝ պահանջ։ Ու նա թափով ետ տվեց ճակատի մազերը։

— Ո՛չ, կլինեմ, որովհետև դու ուրիշ բանի արժանի չես։

Լռությունը երկարեց։

— Լսիր, Աշխեն, մի բան ասեմ, չնեղանաս, խնդրում եմ։— Այս ինչ է, Ռոզան միանգամից նահա՞նջ կատարեց. այս պերասանական շնորհքն էլ նո՞ր բան է։

— Ես քեզ լսում եմ։

— Ասացի, որ եղբայրս բաժանվել է կնոջից, շուտով վերադառնալու է Մոսկվա։ Արժե՞ ձեզ ծանոթացնել, գուցե դուք իրար ավելի լա՞վ կհասկանայիք։

թվայնացրել է 1915.info կայքը

Աշխենի ականջներից ատես քաշեցին. մի տաք, բայց և տհաճ հոսանք անցավ ամբողջ մարմնով։ Մեկ ուզում էր բղավել ընկերուհու վրա, կարգի հրավիրել նրան, մեկ էլ ժամանակին կարողացավ ետ կանգնել այդ մտքից, քույր է, մտածում է եղբոր մասին, միաժամանակ ընկերուհու լալն է ուզում, ի՞նչ կարիք կա նեղանալու կամ ինչո՞ւ նեղացնել նրան։ Իսկ ի՞նչ պատասխանի։

— Գիտես ինչ, Ռոզա, ուշացել եմ նաև այդ հարցում. այսինքն՝ մեկը կա այստեղ, ինձ առաջարկություն է արել, ես էլ, տեսնենք, երևի...

— Իսկապե՞ս, իսկ ոչինչ չես ասում։ Դե՛, հաջողություն քեզ, գոնե այս անգամ։ Ջմռռանաս ինձ գրել։

Իսկ ինչո՞ւ Աշխենը չի կարողանում նայել ընկերուհու աչքերին. վախենում է, թե նա հասկացավ ու ըստ արժանվույն գնահատեց իր սո՞ւտը։ Արդեն սուտ խոսելն էլ է սովորում։

— Իսկ ո՞վ է նա, գոնե ծանոթացնեիր։

— Դեռ շուտ է, հետո, խնդրում եմ, երևի առիթ կլինի...

24.

Տեսնես մարդ իր կյանքում քանի՞ անգամ է գերեզմանատուն գնում, քանիսի՞ն է ուղեկցում, մինչև հասնում է իր հերթը։ Այո, մենք ամենքս հյուր ենք կյանքում... Բայց ինչ-որ օրինաչափություն պիտի լինի՞ թե ոչ։ Զկա, դժբախտաբար, մեկն ապրում է հարյուր տարի, հոգնում ու ձանձրանում է կյանքից, այս աշխարհից գնալ է ուզում, չի հաջողվում, ապրում է ճակատի զոռով։ Մյուսը հեռանում է անժամանակ, աչքը հազար մուրազի։ Հեռանում է՝ կյանքի քաղցրությունը չվայելած, կյանքից բան չհասկացած։ Շա՜տ է անարդար։

Այսօր էլ հերթական հուղարկավորություն էր. անարդար ու վիրավորական մահ։ Հարևանի քսանհինգ տարեկան տղան խեղդվել էր Սևանում, նրա թաղմանն էր մասնակցում։ Ջահել ու գեղեցիկ կինը մնաց իր մինուճար տղայի հետ, որի տարին չի լրացել։ Իսկ հանգուցյալի պապը, իննսուն տարիների բեռն ուսերին, դեռ ապրում է։ Դաժա՜ն բնություն...

Կարմիր բլուրի գերեզմանատնից տուն էր գալիս Հրանտ Ստեփանյանը, անտրամադիր, հոգնած։ Այդ հոգեհաց կոչվածին չի գնա, տանել չի կարող։ Եվ այնքան ավելորդ ու անի-

թվայնացրել է 1915.info կայքը

մաստ է համարում դա։ Ինքը երդվել է, ոչինչ չի անի, եթե հանկարծ մայրը... Հիմար բաներ ես մտածում, փառք աստծո, մայրիկդ դեռ նոր թոռանը պահելու սուրբ հոգսերով է տարված։ Նվարդն ասել էր իր կասկածների ու սպասումների մասին. այդ ի՞նչ արցունքաթաց ոգևորություն էր։ Երբ տուն մտավ, հարս ու սկեսուր իրար փարված լալիս էին։ Այնպե՞ս վախեցավ. այս ի՞նչ է պատահել, Արշակն էլ չի երևում։ Հետո Նվարդի խոնավ աչքերում ժպիտ տեսավ ու հասկացավ ամեն ինչ։ Մայրը տղայի գլուխը սեղմեց կրծքին ու շշնջաց աղոթքի նման.

— Ես ձեր երկուսի ցավն էլ տանեմ։ Իմացեք, էդ մի թոռս էլ որ էս տուն մտավ, էլ ինձ մեռնել չկա, նրա եկած ճամփին մատաղ... Բա ասում եք աստված չկա. իմ աղոթքների հալալ գինն է դա, թող ոչ մեկի մուրազն իր փորում չմնա, տե՛ր աստված...

Գերեզմաններից հեռացել էր բավական, մեքենան անցնում էր ծանոթ սրճարանի մոտով։ Սենոյի սրճարանը, ինչպես կատակով կոչում էր ինքը։ Ներս չմտնի՞, գուցե Սենոն էլ այստեղ է։ Նայեց ժամացույցին, չորսն անց կես է. հիմա ի՞նչ սուրճի ժամ է։ Իսկ Սենոյի համար ժամ-պատարագ կա՞։ Բայց հանդիպել կուզենար, այնուամենայնիվ անհանգիստ է, լսածն ստուգել չկարողացավ։ Վարորդին խնդրեց կանգնել սրճարանի մոտ. ով գիտի, ինչպես ասում են՝ փորձը փորձանք չէ։ Սրճարանում քիչ մարդ կար, մի քանի զույգ ջահելներ միայն։ Իսկ անկյունի պատի տակ Սենոն է նստած։ Մենակ է, անտրամադիր։ Սեղանին և կոնյակով լի բաժակ կա, և սուրճի գավաթ, երկուսին էլ ձեռք չի տվել։ Թե՞ սրանք կրկնություն են։ Հրանտը դիմեց վարորդին։

— Դու տեղ ունեիր գնալու, հիմա ազատ ես, երևի ուշանամ այստեղ,— և անշտապ մոտեցավ Սենոյի սեղանին։ Հեռվից նկատեց ընկերը ու զարմացած իրեն է նայում.

— Երևի չէիր կարծում, թե այստեղ ինձ կհանդիպես, այլապես ներս չէիր գա։

— Իսկ եթե եկել եմ հենց քեզ հանդիպելո՞ւ համար,— մոտեցավ, սեղմեց ձեռքը։

— Եթե ասեմ հավատս չի գալիս, հո չե՞ս նեղանա։

— Ուզում ես ինձ մեղադրել սուտ խոսելու կամ կեղծավորության մե՞ջ։

— Այդպիսի բան չեմ անի, որովհետև դա անարդար կլինի։

թվայնացրել է 1915.info կայքը

— Մի երկու անգամ զանգահարել եմ։

— Քարտուղարուհիս ասաց, նույն օրը զանգեցի, տեղում չէիր։ Ո՞ւմն է պետք այս դատարկ կրակոցը, նստիր ինչ բերանն քեզ, սո՞ւրճ։

— Նաև մի բաժակ շամպայն։

— Օհո՜, առաջադիմում ես, ախպեր։

— Դժվար թե։ Տխուր տեղից եմ գալիս, մի բաժակ խմելու ցանկություն ունեմ։

Շուտով գրույցը լրջացավ։

— Դե՛, հիմա մանրամասն պատմիր, թե ի՞նչ է պատահել քեզ, այդ ինչ փորձանքի ես եկել։

Սենոն այնքան էլ զարմացած չէր, որ Հրանտը գիտի, երևի հենց դրա համար էլ փնտրել է իրեն, անհանգստացել է, այնուամենայնիվ քանի տարվա ընկերներ են։ Եվ Հրատի այդ անհանգստությունը իր սրտովն էր, բայց ինքն էլ չգիտի, թե ինչու այդ մասին խոսել չկարողացավ։ Միայն հարցրեց անվստահ.

— Իսկ դու ինչպե՞ս իմացար։

— Մեր ընդհանուր բարեկամ Անդրեն ասաց, և, գոնե, ցույց տվեց, որ ցավում է։

— Ցասոնով Անդրե՞ն, հետաքրքիր է։ Այդ լավ չէ, որ նրա բերանն էլ եմ ընկել։

— Ես ուզում եմ իսկությունն իմանալ, իսկ դու կալար Անդրեի պոչից։

— Իսկությո՞ւնը։— Սենոն լռեց մի պահ, նոր ծխախոտ վառեց, ու ծխում էր անտրամադիր։— Ասում են՝ առանց կրակի ծուխ չի լինում... տխուր փաստեր կան, դժբախտաբար. ես էլ անմեղ չեմ, իհարկե։

— Որ ասում էի անզգույշ ես։

— Անհարմար մի զգա, ասա նաև քյալլագյոզ։— Հետո Սենոն միանգամից դեն նետեց իր ուսերին ծանրացած խեղճության թիկնոցը ու տաք-տաք վրա տվեց.— Մանր-մունր խախտումներ կան, իհարկե, ֆինանսական գործերում էլ ինչ-որ բաներ են արձանագրել, բայց որ մտածում եմ, անունդ վարչության պետ է, իսկ ի՞նչ կարող ես անել, իրավունքների այդ աստիճան սահմանափակո՞ւմ։ Այս մեկին ինչո՞ւ ես արձակուրդից ետ կանչել և աշխատավարձ տվել, այն մեկն ինչո՞ւ է պարգևհալվելում ստացել, եթե պլանները չի կատարել, այս գիրքը, դեռ տպարանի պահեստում, ինչո՞ւ եք մոցրել կատա-

թվայնացրել է 1915.info կայքը

րոզականի մեջ, իսկ «Հայգրքի» պահեստում կարող է հինգ ամիս մնալ, և ոչինչ, դա պլանի թերակատարում չէ։ Ի՞նչ տարբերություն, գիրքն ընթերցողին չի հասնել, չէ։ Այս ձևական մոտեցումն է, որ հաճախ մեզ թևաթափ է անում։

— Ամեն մի բովանդակության մեջ ձև էլ կա անշուշտ, և եթե գիտես, որ դա խախտում է, ինչո՞ւ ես թույլ տալիս։ Այդ բոլորը դիրեկտոր եղած ժամանակվա՞ թերություններ են, թե՝ նաև վարչության։

— Երկուսին էլ բաժին է հասնում, գրո՞ղը տանի։ Այդ ուսուցողական կոչվածները ժամանակին ստուգել են, ոչինչ չեն հայտնաբերել, հիմա մի կողմ են քաշվել ու պոչ են խաղացնում։

— Քեզ քանի՞ անգամ ասած կլինեմ՝ Սենո, տնավարի ես աշխատում և անտեղի ծախսեր ես անում, տպարանի գրպանը մի շփոթիր քոնի հետ, գլխացավանքի մեջ կընկնես, մե՞ղք ես, բանի տեղ չէիր դնում ընկերոջդ խորհուրդը։

— Իրավունք ունես, հիմա էլ դո՛ւ մեղադրիր.— դարձավ մատուցող աղջկան.— Սոնյա ջան, մի բաժակ էլ։

— Պետք չէ, չբերե՛ք,— այնպես բարձր հնչեց Հրանտի ձայնը, իսկական կարգադրություն։

Սենոն փորձեց ըմբոստանալ.

— Բա եղա՞վ, ախպերս, ո՞ւմն է պետք էդ խաստությունը, Սոնյա...

— Ասացի վերջ տուր, այլևս չենք խմելու, մի անգամ գոնե ինձ պետք է լսե՞ս թե ոչ։

— Դե՛, որ ասում ես,— խեղճացավ Սենոն։

Տիրեց տևական լռություն։

— Հո դատական գործ չկա՞,— հարցրեց Հրանտը.— նա լրջորեն անհանգստացած էր, և դա շոյում էր Սենոյի ինքնասիրությունը։ Այնուամենայնիվ լավ է, երբ մենակ չես, ցավակցող ընկեր ունես։ Իսկ որտե՞ղ են քո իսկական ընկերները, նրանք, որոնց հետ միասին եք անցել այդ խախտման կածաններով։ Մեծ մասը մի կողմ է քաշվել.— մենք տեղյակ չենք, մեզ կարգադրել է, մենք էլ... Այդ իսկական ընկերնե՞րը թե՞ իսկական բաժակակիցները։

— Դատական հարցի առաջը կարողացա փակել, շարունակությունը տեսանենք։ Հետո նորից ըմբոստացավ,— ոչինչ էլ չեն կարող անել, Սենոն թաց տեղ նստողներից չի, շատ ջղայնացնեն, դրանց բոլորի հերն էլ կանիծեմ...

թվայնացրել է 1915.info կայքը

— Էլի մեծ-մեծ բաղում ես. չդիտեմ ե՛րբ պիտի խելքի գաս, Սենո տղա։

— Տեսնենք, էն մուլա Նասրեդինի ասած՝ ձայնը հետո դուրս կգա, մի երկու գայկա կա, էդ էլ ձգեմ...

— Վերջ տուր և լրջացիր, գոնե այս բոլորից հետո, անհարմար է, մեծ երեխաներ ունես, կինդ էլ մեղք է։

— Տեսնենք, առաջիկա մի տաս օրում ամեն ինչ կպարզվի։ Մի-մի հատ էլ խմենք ու հաջողություն մաղթենք էս գործին, չէ՞ որ, խնդրում եմ, Սո՛նյա..

25.

Հետաքրքիր է չէ՞, ամբողջ օրը միտքդ զբաղված է մի հարցով,— ինչո՞ւ այսինչը չերևաց, ինչպե՞ս է, որ նրան չես հանդիպում, և՝ արդեն քանի օր է։ Ու հանկարծ, հենց նույն օրը, կատարվում է քո ցանկությունը։ Այդ գիշեր Աշխենը երազում նամակ էր ստացել քեռի Սահակից, մի հաստ ծրար, չհասցրեց բացել, արթնացավ երևույթի բարձր ճչոցից,— մա-մա՛...

— Ջանա՛... երևի Գուրգենն էլ երազ է տեսնում, ու վախեցած է ինչ-որ բանից, մորն օգնության է կանչում։ Այդ ո՞վ է նրան վախեցնում, ի՞նչ իրավունքով... Օրվա ընթացքում էլ մի քանի անգամ հիշեց այդ «չաղլիկ» ծրարը։ Ու երբ երեկոյան երեխայի հետ տուն գարձան, փոստարկղում ծվարած նրանց էր սպասում քեռի Սահակի նամակը։ Ծրարն էլ հաստ էր, միայն գույնը չէր համապատասխանում երազում տեսածին. այնտեղ բազմագույն էր, ասես ծիածանի մի կտոր, ու գերակշռողը դեղինն էր։ Իսկ սա սպիտակ գույնի սովորական ծրար է։ Ինչո՞ւ սովորական, գուցե մեջը արտակարգ բանե՞ր կան։

— Բալիկս, շա՞տ ես քաղցած, որ այս նամակը կարդում, նոր քեզ կերակրեմ, ուշի՞նչ, կդիմանա՞ս։

— Իհարկե, կդիմանամ, մա՛մ, ես արդեն մեծ եմ, չէ՞, շուտ-շուտ դպրոց եմ գնալու։

— Ես քո մեծ բոյի՞ն մատաղ...

Լավ նամակ էր. Աշխենը նոր հնարավորություն էր ստանում հորը մոտիկից ճանաչելու։

«Սիրելի Աշխեն, նախ ընդունիր իմ և տիկնոջս ջերմ բարևներն ու լավագույն ցանկությունները։ Շտապում եմ կատարել քո խնդրանքը։ Ինչ-որ պատառիկներ դատ հիշողության ծալքերում, նաև՝ օրագրի հրաշքով փրկված էջերում։ Ահա դրանք

թվայնացրել է 1915.info կայքը

սիրով հանձնում եմ քո ուշադրությանը։ Ինձ համար այս դեպ-
վագները վերհիշելը և՛ ծանր է, և՛ հաճելի։

... Նահանջի ծանր օրերին էր։ Մեր զորամասն ամրացել էր
ուկրաինական մի մեծ գյուղի ծայրամասում (գյուղի անունը հի-
շել չեմ կարողանում)։ Անհավասար մարտ ենք մղում, գիտենք,
որ էլի պիտի նահանջենք։ Մեկ էլ մեր գլխավերևում ֆաշիստա-
կան ինքնաթիռներ երևացին, չորս թե հինգ հատ։ Սկսեցին ռմ-
բակոծել մեր դիրքերը, ուզում են հեշտացնել իրենց հետևակի
առաջխաղացումը։ Ինքնաթիռներն էլ այնպես ցածր են թռչում,
դե, երևի գիտեն, որ այդ հատվածում հակաօդային պաշտպա-
նություն չունենք, զրության տերն են համարում իրենց։ Մեկ
էլ տեսնեմ Գուրգենս ձեռքի գնդացիրը հարմարեցնում է խրա-
մատի կողին, ինքնաթիռների վրա կրակել է ուզում։ Ասացի՝
բան չի դուրս գա, ախպե՛ր, իզուր ես չարչարվում։ Սա թե՝
գոնե սրտի մխիթարություն կլինի։ Մինչև գնդացիրը կգործեր,
ինքնաթիռներն անցան մեր գլխավերևով։ Թափած ռումբերը
շարունակում էին պայթել մեկ այստեղ, մեկ այնտեղ։ Մի քանի
րոպեից հետո ռմբակոծիչները ետ եկան, էլի ռումբեր են նե-
տում, ուրեմն դեռ չեն սպառել ունեցած պաշարը։ Գուրգենի
գնդացիրն սկսեց տկտկալ։ Անցան, նորից ետ եկան, ավելի
ճիշտ, երկուսը ետ դարձան. էլի ռումբեր նետեցին։ Իսկ Գուր-
գենի գնդացիրը հա փռշտում է խեննթի նման, առանց ընդմիջ-
ման։ Մեկ էլ մի ինքնաթիռի պոչատակից սկսեց ծուխ ելնել։
Սա էլ խոյահարման է եկել, հիմա զգում ենք, որ նորից բարձ-
րանալ չի կարողանում։ Ծուխն առատացավ, բոնեց ամբողջ ինք-
նաթիռը։ Նայեցի Գուրգենի աչքերին, այնպե՛ս գոհ ժպտում
էր.— Ոնց որ էս մեկի հերն անիծեցինք, ախպերս, ասում է։
Մեկ էլ էս թանձր ծխի միջից մի սարաշյուտ անջատվեց. ուրեմն
օդաչուն է, ուզում է փրկվել։ Ինքնաթիռն այդպես էլ խոյահա-
րումից դուրս գալ չկարողացավ, գնաց-ընկավ մոտակա ձորը։
Լսվեց մի ահռելի պայթյուն, ու երկինքն ասես խաղաղվեց։ Իսկ
այդ պարաշյուտը հա իջնում է։ Գուրգենս թռավ խրամատից
հանած հողակույտի վրա ու գոռաց դաշտով մեկ.— Չկրակել,
էդ սրիկային գերի ենք վերցնելու։ Պարաշյուտն իջավ-իջավ,
երևի մի տասը մետր է մնացել մինչև գետնին հասնի։ Գուր-
գենս հրացանով նշան բոնեց ու կրակեց։ Պարաշյուտը ծալվե-
ծալ եղավ ու թպրատց գետնի վրա։ Մեզնից երևի մի երկու
հարյուր մետր է հեռու վազեցինք գլխապատառ։ Օդաչուն ու-

թվայնացրել է 1915.info կայքը

շաթափվել էր հարվածի ուժից, ուրևմն Գուրգենի հաշիվներն այս անգամ էլ ճիշտ դուրս եկան։ Էդ ֆրիցի մոտ ավտոմատ կար, ուշքը վրան լիներ, մեզ կվնասեր։ Սրան տարանք գնդի հրամանատարի մոտ։ Արդեն ուշքի է եկել, մի լիքը բաժակ էլ ջուր խմել։ Ու ինչպե՞ս է պահում իրեն, ամբարտավան, մեծամիտ։ Դուք ո՞վ եք, ասում է, որ ես ձեր հարցերին պատասխանեմ։ Ես գերմանական անպարտ բանակի զինվոր եմ. միևնույն է, ասում է, ձեր երդը երգված է, իզուր եք դիմադրում։ Մեկ էլ Գուրգենս մի քայլ առաջ գնաց ու դիմից գնդի հրամանատարին.— ընկեր փոխգնդապետ, ասում է, խնդրում եմ իրավունք տաք, ես անասունին վախեցնեմ։ Գնդի հրամանատարը ժպտաց, ուրևմն համաձայն է։ Գուրգենը հրացանի սվինը դեմ տվեց գետու կրծքին ու ասում է.— Հիմա ես աղիքներդ կխառնեմ իրար, կեղտոտ խոզ, դու նոր կհասկանաս քո ֆյուրերի անպարտելիությունը։ Գներին գույն տվեց, գույն առավ։ Էն հնդուհավի փըքվածությունից ոչինչ չէր մնացել։ Մեկ էլ սա թափով չոքեց փոխգնդապետի առաջ ու ո՞նց է խնդրում.— Ինձ չսպանիք, աղաչում եմ, մայր ունեմ ու երկու երեխա, նրանց մի որբացրեք։ Ինչ-որ գիտեմ, կասեմ ձեզ։ Գուրգենս թե՝ իսկ էն ռումբերը, որ թափում ես մեր գլխին, կարծում ես մեզ մայր չի՞ ծնել, մենք ընտանի՞ք չունենք։ Գերին բլբլացնում է գունատված՝ ինչ անեմ, ասում է, զինվոր եմ, ինչ կարդադրում են, այն էլ պարտավոր եմ կատարել. ձեր թշնամին, ասում է, Հիտլերն է, ես անմեղ եմ։ Ու չոքած տեղից վեր կենալ չի համարձակվում։ Գուրգենս թե՝ ընկեր փոխգնդապետ, եթե այսօր էլ սպանվեմ, էլ հոգս չէ. ես ֆաշիստ անասունին որ ծնկաչոք տեսա մեր առաջ ընկած, էլ դարդ չունեմ, սա մի իսկական հաղթանակ էր։ Հետո դարձավ Թարգմանչին.— Էդ ճիվաղին ասա՝ քո խելագար ֆյուրերի զինվորներից ով կենդանի մնաց, էսպես չոքացնելու ենք...

... Մի գիշեր խրամատում նատած ենք Գուրգենի հետ։ Ցուրտ է։ Ծխում ենք, որ տաքանանք։ Մի սերժանտ ունենք Սավելև ազգանունով, նա էլ է մեզ հետ, լավ տղա էր, բանաստեղծական հոգու տեր մի ջահել։ Գրում էր ոտանավորներ և վատը չէին. մեկ-մեկ կարդում էր ամոթխած։ Գրել էր մի ամբողջ տետր։ Վախենում էր կորցնելուց։ Խորհուրդ տվեցինք՝ տուն ուղարկել։ Պարզվեց, որ սա Արևմտյան Ուկրաինայից է, որտեղ այդ ժամանակ գերմանացիներն էին տնօրինում. ոչ մի տեղե-

թվայնացրել է 1915.info կայքը

կության չաներ ոչ մարից, ոչ սիրած աղջկանից՝ Լյուսյից, որին ձոնում էր իր բանաստեղծությունների մեծ մասը։ Հենց այդ օրը Սերաֆիմը նամակ էր ստացել Լյուսյից։ Այնքան անսպասելի ուրախություն էր դա բոլորիս համար։ Պարզվում էր, որ աղջիկն էլ բանակում է, Լենինգրադի ռազմաճակատում։ Հիմա արդեն չեմ հիշում, թե ինչպես է իմացել սիրած տղայի հասցեն և նամակ է գրել նրան։ Հետաքրքիր նամակ էր։ Տվեց, կարդացինք և ես, և Գուրգենը։ Անկեղծ ղգացմունքների մի իսկական հեղեղ էր դա։ Հիմա Սավելևը ծնկի վրա հակված գրում էր նամակի պատասխանը։ Որոշել էր, որ բանաստեղծությունների տետրն էլ ուղարկի Լյուսյին, եթե հետագայում կորչի էլ այն, գոնե սիրած աղջիկը կկարդա։ Նրա սիրային բանաստեղծություններից մի քառատող է մնացել թղթերի մեջ, և, հետաքրքիր է, որ բնագիրը չկա. իմ թարգմանած հայերենն է պահպանվել, ռազմաճակատից ուղարկած իմ մի նամակում։

Թող, որ ես անցնեմ ձեր դռան մոտով,
Կանաչ ցող իջնի ոտնահետքերիս.
Ու ես ըմբոշխնեմ ցողն այդ կարոտով,
Համ ու հոտ առնի տողը երգերիս...

Սերաֆիմը գրեց, գրեց մի քանի էջ։ Երևի կարոտները շատ էին կուտակվել ու խտացել, պոռթկում էին անզուսպ։ Մեկ էլ Գուրգենը դարձավ սերժանտին.— Սավելև, ասում է, իրավունք ուր ես էլ նամակ գրեմ քո աղջկանը. և՝ մի պայմանով, որ իմ գրածը չկարդաս։ Տղան իսկույն հասկացավ մեծ ընկերոջը,— ուզում եք լավ բաներ գրել և վախենում եք, որ չե՞մ ուղարկի։ Գրեցեք, ինձ համար հաճելի կլինի, Լյուդան էլ կուրախանա։ Գրեց Գուրգենը իմ ու իր անունից։ Ջերմ խոսքեր, մեծի խորհուրդ, լավ ընտանիք կազմելու բարեմաղթություններ։ Պետք էր մի թեթև աչք փակել, երկու ժամ հետո հարձակման սիրտ գնայինք։ Դաժան օր էր, թշնամու քիթը լավ տրորեցինք, բայց քիչ չէին և մեր կորուստները։ Այդ մարտում իր մահկանացուն կնքեց նաև Սերաֆիմ Սավելևը։ Գուրգենի հետ ծանր ու հոգեմաշ ժամեր ապրեցինք, ինչպե՞ս վարվել Սերաֆիմի նամակի ու տետրի հետ. աղջկան գրե՞լ այդ կորստի մասին։ Դժվարացանք մեր ուսերին վերցնել մի այդպիսի ծանրություն։ Թող աղջիկն ապրի ու սպասի նոր հանդիպման։ Միայն Գուրգենը նամակի վերջում երկու տող ավելացրեց.— Սիրելի քույրիկ այս գիշեր Սերաֆիմը վիրավորվեց ոտքից, ծանր չէ, չանհանգստանաք։

թվայնացրել է 1915.info կայքը

Նա, հավանաբար, հոսպիտալից ձնով կդրի, սպասեք նրա նոր նամակին...

Հնարավոր լիներ իմանալինք՝ ապրո՞ւմ է այդ Լյուդան, և ինչպե՞ս է դասավորվել նրա կյանքը:

...Քառասուներեք թվականը դեռ կես ժամական է. նոր ենք խմել մեր բաժին սպիրտը, շնորհավորում ենք իրար, պատերազմին մոտալուտ ավարտ ենք մաղթում: Մեկ էլ դումարտակի հրամանատար կապիտան Սալույանովը դուրս թռավ գետնափոր տնակից ու վազեց դեպի մոտակա ձորակում դրված ականանետը: Վազում է ու գոռում.— Ես էդ սրիկաների տոնն էլ պիտի շնորհավորեմ, բա ինչպե՞ս: Գուրգենը շտապեց նրա ետևից, գիտի, երբ նրա գլուխը տաք է, մենակ չպիտի թողնել: Հասան ականանետին: Կապիտանն սկսեց կրակել. մի զինվոր օգնում էր նրան, ականներն էր տալիս: Կապիտանը կրակում էր ոգևորված ու գոռում,— սալյո՜ւտ, ահա ձեր նոր տարվա պարգևը, սրիկանե՜ր, դե՛, ստացեք, սալյո՜ւտ: Ոգևորության պահին, ինչպես է լինում, մեծ մի ականը ականանետի փողում, մյուս ականն է խցկում ներս: Մեկ էլ փոքրիկ բացատը թնդաց մի խլացուցիչ պայթյունից: Ականանետն էր պայթել, ու հենց ֆեղնուտեղը զոհվել էր կապիտան Սալույանովը. ծանր վիրավորվել էր նրան օգնող զինվորը: Գուրգենը թևթև վերք էր ստացել: Բայց ինչպե՞ս էր մղկտում.— Բա նոր տարվա օրը մարդ էլ ուրախությունից իրեն սպանի՞...

...Գարնանային մի օր մեր զորամասը մնացել է, այսպես կոչված, թիկունքում. ծանր մարտերից ու լուրջ կորուստներից հետո համալրման ենք սպասում: Արևառատ օր է, երկնքում՝ ոչ մի կտոր ամպ: Իսկ մեր սրտերը ամպախեղդ են լինում. ղոհված ընկերներ ունենք, խոսելու տրամադրություն անգամ չի մնացել: Գուրգենի հետ նստել ենք մի տապալված ծառի տակ ու լուռ ծխում ենք: Հատուկենտ ծառեր ունեցող բացատի հենց այդ հատվածում հակառակորդի արկերն են պայթել, և՝ քանի՜-սը: Ծառ չի մնացել արդեն, կամ գլխատված են, կամ կողի վրա պառկած, ասես իրենց կխսամեռ արմատները արևի տակ չորացնել են ուղում: Ուսերից կտրված մի ծառ հենց մեր կողքին է, հազիվ երկու քայլի վրա: Բարակիրան է, հաստության դռանը չհասած, երևի նոր է ոտքի կանգնել: Ու չի դիմացել արհավիրքին: Գլխատված ծառի ոտքերի մոտ երկու կանաչ շյուղ են ընձյուղվել. հազիվ են գլուխները գետնից բարձ-

թվայնացրել է 1915.info կայքը

բացրել ու ժպտում են մահահոտ աշխարհին։ Գուրգենը մոտեցավ, շոյեց հրաշքով փրկված այդ կանաչ գլխիկները, այդպես սիրած աղջկա վարսերն են շոյում, ու խոսում է ինքն իրեն,— մի սպանված ծառի փոխարեն՝ երկու մատղաշ ծառացու Ո՛չ, սև ուժերը կյանքն սպանել չեն կարողւ Այս շիվերը բոյ կքաշեն, ծառ ու ծառաստան կդառնան։ Հենց միայն այս կանաչ ժպիտը փրկելու համար կարելի է և զոհվել...

Սիրելի Աշխեն, նամակս երկարեց, բայց ոչինչ, համոզված եմ, որ քեզ չեմ ձանձրացնում։ Հույս ունեմ, որ էլի կհանդիպենք, կխոսենք, կվերհիշենք։ Լավ է, Գուրգենի նկարն արդեն ինձ մոտ է, ապրի Երվանդը, բաղմացրել է ու ուղարկել։ Հա, ամառն սպասում ենք քեզ փոքրիկ Գուրգենի հետ միասին. արձակուրդդ կձևակերպես ու Երվանդի հետ կգաք։ Սպասում ենք սիրով։

Դե՛, մնա խաղաղությամբ...»։

26.

Գործարանի բակն այսօր առանձնապես մարդաշատ է, չնայած ընդմիջման ժամը դեռ վրա չի հասել։ Մեքենաշինական տեխնիկումի վերջին կուրսի ուսանողներն են էքսկուրսիայի եկել, և այնպիսի հետաքրքրությամբ են աջ ու ձախ նայում, արհկոմի նախագահ Զավեն Օհանյանին լսում, որը բացատրություններ է տալիս, ուղղակի հարցակոխ են անում՝ ինչքա՞ն, ե՞րբ, ո՞վ։ Ամեն ինչ նրանց հետաքրքրում է, պայմաններ, աշխատավարձ. ինչ գիտես, թե նրանց մի մասն այստեղ աշխատանքի չի գալու։

Գործարանի համառոտ պատմությանը ծանոթանալուց հետո, սկսվեց շրջագայությունը արտադրամասում։ Ուսանողների վրա առանձնապես լավ տպավորություն էր թողնում արտադրության ռիթմիկ եռուզեռը, մանավանդ տեղամասերում ու մի-ջանցքներում տիրող մաքրությունը։

— Իսկական լաբորատորիա է. սիրով կգայի այստեղ աշխատելու,— ընկերոջ ականջին շշնջաց տղաներից մեկը։

— Դու եկար, քեզ էլ ընդունեցին,— թերահավատ ձգնց ընկերը։

— Ահա և մեր քիմիական լաբորատորիան,— լսվեց Օհանյանի ձայնը.— Աշխեն Գուրգենովնա, ընդունիր այս լավ ջահելներին, պատմիր ձեր աշխատանքի մասին. ով գիտի, գուցե այս աղջիկների մեջ քո ապագա օգնականների՞ն կգտնես։

թվայնացրել է 1915.info կայքը

Աշխենը պատմում ու բացատրում էր սիրով, աշխատանքի բնույթը, լաբորատորիայի դերն ու նշանակությունը գործարանի կյանքում։ Պատմում էր հանգիստ, համոզիչ, առանց կեղծ ոգևորության։

— Շուտով մեզ մոտ երկու տեղ կաղատվի. մեկը տեղափոխվում է այլ աշխատանքի, մյուսը թոշակի է անցնում. եթե ցանկություն ունեք, համեցեք, սիրով կընդունենք։

Աղջիկները ժպտում են քթի տակ ու փսփսում իրար անջի։

— Տես ինչքան նման է լավ հիվանդանոցի, բոլորը խալաթներով, սպիտակ գլխարկներով։

— Չէ՛, սա առողջների հիվանդանոց է, ավելի ճիշտ՝ առողջանոց։

— Վարիչն էլ տես ինչ լավ աղջիկ է։

— Մի երեսուն տարեկան կլինի, ի՞նչ աղջիկ։

— Համենայնդեպս սիրուն է, ինձ դուր է գալիս։

— Անխելք, դու էլ փոխանակ տղաներին հավանես, կանանց ես հավանում։

Լավից մի խեղդված փոթկոց։ Աշխենը շուռ եկավ այդ ձայնի վրա ու բարեհոգի ժպտաց։

Մտան Սմբատ Ոսկանյանի արտադրամասը, ընդարձակ, լուսավոր։ Բայց այս ինչ միալար աղմուկ է, և ոտքիդ տակ գետինն ասես երերում է համաչափ։

Օհանյանը կանգ առավ Մուշեղի կողքին. Սմբատը խորհրդակցության էր գնացել։

— Ահա այս երիտասարդը, չմոռանաք ազգանունը, Մուշեղ Բարոյան, այս արտադրամասի թեկուզև նոր, բայց արդեն լավ անուն հանած վարպետներից է։

— Լավ, էլի՛, ընկեր Օհանյան.— նեղսրտեց Բարոյանը։

— Դու լուր, Մուշեղ, ես գիտեմ, թե ինչ եմ ասում։— Հետո նորից դարձավ ուսանողներին.— Ավարտել է միջնակարգ դպրոցը, գնացել է բանակ, ծառայել է նամուսով, եկել, ընդունվել է մեզ մոտ աշխատանքի, և, խնդրեմ, վայելում է բոլորիս սերն ու հարգանքը, շուտով կուսակցության շարքերը կընդունվի։ Հետևաբար՝ արտադրամասի պետի տեղակալ, հետո էլ՝ պետ։

— Ընկեր Օհանյան, խնդրում եմ...

— Ասացի՝ դու լուր, ես հո քեզ համար չե՞մ ասում։— Նո-

թվայնացրել է 1915.info կայքը

րից դարձավ ուսանողներին.— Ջմռանամ ասել, որ նաև մտադիր է հեռակայել պոլիտեխնիկ ինստիտուտին։ Մի խոսքով, սիրելի ջահելներ, ձեր մեջ եթե կան Մուշեղի նման խելոք, ընդունակ ու պարտաճանաչ ընկերներ, համեցեք մեր գործարանը, սիրով կընդունենք։

Ուսանողներն անկեղծ հիացմունքով էին նայում Մուշեղին, մանավադ աղջիկները. ախր շատ է ջահել, իրենցից երևի մի չորս-հինգ տարով մեծ. ինչ էլ բոյ ունի, լայն թիկունք ու զորավոր բազուկներ, սրա հետ մարդ կյանքում չի կորչի։

Աղջիկներից առանձնապես մեկը՝ Սոնան, երկար ժամանակ հայացքը չէր կարողանում կտրել Մուշեղից։ Վարպետն էլ, օգտվելով Օհանյանի կարճատև դադարից, համարձակվեց գլուխը բարձրացնել ու մի տեսակ մեղավոր հայացքով նայել ուսանողներին։ Եվ նրա ու Սոնայի հայացքները կես ճանապարհին հանդիպեցին իրար։

Աղջիկը շտապ կախեց գլուխը. հիմա էլ Մուշեղն է քարացել և աչքը թարթել չի կարողանում։ Դա ինչպե՞ս կարող էր աննկատ մնալ «սատանա» Սուսանի աչքից։

— Վարպետ Մուշեղ, եթե խնդրեք, ձեզ կծանոթացնեմ մեր Սոնայի հետ, ու նաև կասեմ, որ շատ լավ աղջիկ է, գերազանց սովորող։

— Սուսան, վերջ տուր, էլի՞ խեղթությունդ բռնեց.— Սոնան այնպես էր կարմրել և շնչառությունն էր արագացել. այս ինչ հիմար սովորություն է. իսկական գեղացի աղջիկ։ Իսկ շառագունելու ընդունակությունը կորցրած քաղաքի աղջի՞կն ում է պետք։ Լավ է ասել չէ՞, Հակոբ Պարոնյանը,— աղջիկ մը, որ դադրած է կարմրելե, գեղեցկության ամենամեծ հրապույրը կորուսած է...

— Ես արդեն հաշվում եմ, որ Սոնայի հետ հին ծանոթներ ենք։— Մուշեղն ինքն էլ զարմացած էր իր հանգիստ խոսելու վրա, խուճապի և ոչ մի հետք։ Իսկ ինչո՞ւ պիտի անհարմար զգա այս երեխաների մոտ։ Թե երեխաներ են, ո՞ւր ես աչքերդ չռել...

— Մեր տեխնիկումի տեղը գիտեք, չէ՞, վարպետ Մուշեղ. հանրակացարանն էլ հետու չէ։ Ես ու Սոնան մի սենյակում ենք ապրում։ Եթե բարեհաճեք ժամադրության գալ, նախ ինձ կգտնեք, հետո ես ամեն ինչ կկազմակերպեմ։ Միայն շատ չուշանաք, հա, բավարար չափով փեսացուներ կան...

Ախ այդ Սուսանը, որի մոտ փակ դուռ չկա, որի լեզուն ա-

թվայնացրել է 1915.info կայքը

զատ է կապանքներից, որի զարմանալի մաքուր սիրտը բարախում է ասես միայն ընկերուհիների բախտավորությանը ծառայելու համար։ Ամեն ինչ ունի Սուսանը, գեղեցիկ արտաքինից բացի։ Դաժա՞ն բնություն...

— Դրքերում, թերթերում, գիտեք, չէ՞, լինում են տառասխալներ, խառնված տողեր։ Քեռուս տղան խմբագրությունում է աշխատում։ Դա նրանց մոտ կոչվում է վրիպակ։ Ես էլ բնության վրիպակներից եմ. և երևի տխուր կլինի կյանքն առանց այդ վրիպակների։

Մեկ էլ, բոլորովին անսպասելի, արտադրամաս մտավ գործարանի գլխավոր ինժեները։ Իսկ ինչու՞ անսպասելի, այդպիսի օր կա՞, որ նա չանցնի գործարանի մի ծայրից մյուսը, չկանգնի, չխոսի, խորհուրդներ ու հանձնարարություններ չտա։ Իսկ հիմա, արտադրամասի պետը բացակայում է, պրակտիկանտներն էլ ևն այստեղ։ Գուցե հենց դրա համար է եկել, համոզել ու օգնե՞լ է պետք։

— Մեր գլխավոր ինժեներն է, Հրանտ Ստեփանյան,— խոսքի արանքում ասաց Մուշեղը. և հարգանքի ու ակնածանքի ի՞նչ նրանգ կար նրա այդ մի հատիկ նախադասության մեջ։ Հետո Մուշեղը նաև ավելացրեց,— քեռուս մոտ ընկերն է։— Այս մե՞կն էլ ինչու ասաց. ինքն էլ էր զարմացել իր վրա։ Ով տարօրինակն այն էր, որ այս խոսքն ասելիս հատուկ նայեց Սոնային, ասես նրա՛ն էր դիմում միայն, նրա՛ համար էր այդ պարզաբանումը։

Ստեփանյանին մոտեցավ Ջավեն Օհանյանը, ու կանգնած խոսում են ցածրաձայն, այնպես, որ չխանգարեն Մուշեղին, թող հարպետը անկաշկանդ խոսի ուսանողների հետ, բացատրի նրանց։ Հրանտ Արշակովիչը նաև չի կարող ականջի պոչով չլսել Մուշեղի բացատրությունները, ո՛չ, տղայի մոտ նաև խոսելու շնորհք կա, և ամեն մի խոսքն իր կշիռն ունի, կարող է ոգևորվե՛լ է աղջիկների ներկայությունից. այն մեկն էլ բավական սիրունիկն է...

Այնուամենայնիվ երկրորդ հանդիպումը տեղի ունեցավ։ Չէր կարող չկայանալ։ Հիմա երեքով քայլում են Աբովյաննի վեր՝ Մուշեղն ու Սոնան՝ կողքերից, Սուսանը՝ մեջտեղը։ Մի՞թե նա է կապող օղակը։ Հասան «Մոսկվա» կինոթատրոնի մոտ։ Խոսողը միայն Սուսանն է. մյուս երկուսը լսողի դերում են։ Մեկ էլ Սուսանը կանգ առավ և շատ լուրջ ասում է.

— Ես հույս ունեմ, որ ձեզ նորից ծանոթացնելու անհրաժեշ-

թվայնացրել է 1915.info կայքը

տություն չկա։ Քնում ես տղայի մոտ պիտի գնամ, ինձ կներթք. ձեզ մննակ եմ թողնում։

Սոնան գիտի, որ Սուսանը պարզապես ուզում է ծլկել, որպեսզի չխանգարի նրանց։ Այդ խելոք քայլի մեջ համոզված է նաև Մուշեղը։ Չէ՛, Սուսանն իսկապես որ լավ մարդ է, գեղեցիկ հոգի ունի։

Հիմա երկուսով են մնացել. քայլում են լուռ։ Եվ ինչպե՞ս զգում են Սուսանի բացակայությունը. չէ որ նա կապող օղակ էր։ Իսկ կարիք կա՞ օտար օղակի, գուցե կկարողանան յոլա գնալ առանց դրա՞ն։

Լռությունը երկարեց։ Դե, մինե ինքն այդքան անճարակ է, աղջկան մի երկու հարմար խոսք ասել չի կարող։ Հիշում է, բանակում ծառայելու օրերին մեկ-մեկ հաջողվում էր պարի հրապարակ գնալ։ Եվ ոչինչ, այնքան չէր դժվարանում. պարել սովորեց, երբեմն ուղեկցում էր իր պարընկերուհուն. խոսում, ծիծաղում էին, նույնիսկ, մի անգամ հյուր գնաց մեկի մոտ։ Այսօր ինչու՞ է այսպես պապանձվել։ Գոնե Սոնան խոսեր։ Մի ծանոթ տղա պատահեց, բարևեց ու անցավ, և ծպիտ կար անիրավի դեմքին։

— Մեր գործարանի տղաներից է.— վերջապես նյութ գտար խոսելու, է՛խ, դու... Հետո միանգամից վրա տվեց.

— Սո՛նա, ես այդպես էլ չիմացա՝ միտք ունե՞ք մեզ մոտ գալու թե՞ ոչ։

— Ջեմ որոշել, դեռ քանի ամիս կա. և հետո, առանց ծնողների հետ խորհրդակցելու... Մայրս շատ է ուզում, որ ավարտելուց հետո, գյուղ վերադառնում. իսկ գյուղում ի՞նչ պիտի անեմ, չգիտեմ։ Գյուղն էլ այնքան հեռու է, Շամշադինում։

— Անհարմար չլինի հարցնելը՝ իսկ ինչու՞ մեքենաշինական տեխնիկում ընդունվեցիք։

— Ես այնպես էի ուզում բժշկական տեխնիկում գնալ, ասացին կոնկուրսը շատ մեծ է, բան դուրս չի գա, իսկ մեքենաշինականում հորս ընկերն է աշխատում... Այսպես եղավ։

Իսկ Սոնան ինչո՞ւ է խոսում մեղավորի պես, ո՞րն է նրա մեղքը։ Այն, որ իր ուզած մասնագիտությունը չի՞ ընտրել. ուրիշները երկու-երեք տարի փորձում են և, ի վերջո, հասնում են իրենց նպատակին։ Իսկ ինքն ահա այդ համառությունը չունեցավ։ Գուցեև լավն ա՞յդ էր, ուրիշ տեղ լիներ, ինչպես՝ կհանդիպեր Մուշեղին...

թվայնացրել է 1915.info կայքը

— Եթե հաշտվել եք արդեն այդ մտքի հետ և անտարբեր չեք ձեր ընտրած մասնագիտության նկատմամբ, ուրեմն ափսոսալու ոչինչ չկա։

— Ոչ միայն հաշտվել, այլ արդեն սիրում եմ այս գործը. ախր ես դպրոցում շատ ուժեղ էի մաթեմատիկայից, մեր դիրեկտորը խորհուրդ էր տալիս պոլիտեխնիկական գնալ։

— Կարևորն այդ է, որ սերը կա, ուրեմն ամեն ինչ կարգին է։ Առանց սիրո դժվար է ապրել...

Ինչու՞ երկուսն էլ կարմրեցին։

— Սոնա, այս կինոնկարն, ասում են, շատ լավն է, գուցե միասին կինո՞ կգնայինք։

— Դե, եթե ասում եք... Իսկ ինչի՞ մասին է։

— Մի գեղեցիկ սիրո պատմություն է։

Հաջորդ հանդիպմանը խոսելն այնպես հեշտ էր, անկաշկանդ։ Եվ արդեն Սուսանի ներկայության կարիքը չկար. վերացել էր կապող օղակի անհրաժեշտությունը։ Զգվեցին օրերը նոր հանդիպումների հաճելի բեռն իրենց ուսերին։ Գործը հասավ «դուի», և այնպես օրինաչափ էր այդ անցումը։

— Սոնա, մի բան ասեմ, չզարմանաս։

— Ի՞նչ, Մուշեղ։

— Ես չեմ հասկանում թե ինչպե՞ս եմ մինչև հիմա ապրել՝ առանց քեզ ճանաչելու։

— Դու ոնց որ իմ սրտից էլ ես խոսում։

— Գիտե՞ս, հենց առաջին անգամ քեզ տեսա, ոնց որ էլեկտրական հոսանքը խփեր։

— Հույս ունեմ, որ ցավոտ չէր այդ հարվածը։

— Ես այդ հարվածի քնքուշ հզորությա՞նը մատաղ... Աղջկա փոքրիկ ձեռքն առել է իր խոշոր ափի մեջ ու շոյում է կամաց։ Այդ ի՞նչ խենթ ու հոգեհարազատ հոսանք է անցնում մեկից մյուսին։ Ձեռքերի շփում միայն, ուրիշ ոչինչ։ Այնպես համբուրվել կուզենային, մանավանդ տղան. այդ երանությանը մի անգամ է միայն արժանացել։ Իսկ այս այդու մեջ, գնացող-եկողների ներկայությամբ. ո՛չ, դա սրբապղծություն կլինի։

Իսկ դիմացի ծառին մի ծիտ է մղկտում։ Մենակ է ու այնպես թախծոտ է նրա երգը։ Ինչու՞ է մենակ. ախր մենակ շա՞տ է տխուր...

— Սոնա, ես ե՞րբ պիտի ձեզ մոտ գամ։

— Հանրակացարա՞ն,— ու աղջիկը խորամանկ ժպտում է։

թվայնացրել է 1915.info կայքը

— Ի՞նչ հանրակացարան, խոսքս Շամշադինի մասին է, ծնողներիդ մոտ։ Ես գալու եմ հորս, քեռի Սամսոնի, դու նրան գիտես արդեն, և իմ արտադրամասի պետ Սմբատ Ոսկանյանի հետ. ասել եմ, սիրով համաձայնվել է։ Իսկ հարսանիքին Հրանտ Արշակովիչն էլ կգա իր կնոջ հետ։ Օ՜, տիկին Նվարդը հոյակապ մարդ է. դու նրան շատ կսիրես։

— Ուրեմն արդեն հարսանիքի պլանն էլ ես դծել. չե՞ս շտապում, սիրելի վարպետ։

— Ես ինչ անեմ, ջանս, սերն է շտապեցնում...

27.

Ասում են՝ սիրո համար փակ դուռ չկա. մի՞թե իրոք այդպես է, կա նաև մի ուրիշ զորավոր խոսք՝ սերն աթարին կպավ, չըպոկվեց։ Ով լավ է, որ չպոկվեց։ Իսկապե՞ս լավ է։

Ինձ ու իմ սիրեկան յարին մի տարի բերած գիդենաք.
Ախ քաշելիս սըրտիս մեջը արունը մերած գիդենաք.
Գիշեր-ցերեկ յարի խաթրու չիգարըս էրած գիդենաք։
Աճկըս թաց, բերանս ցամաք, լիզուս յիդ քերած գիտենաք։

Ի՞նչ զորություն ունի այդ սեր կոչվածը, և ի՞նչ տևականություն ունի այդ սերը, սիրտ փառավորող ու սիրտ մաշող, ամենախնչոք և միաժամանակ անխելք քայլի մղելու ընդունակ։ Ու եթե բուն դրեց սրտիդ գաղտնարաններում, միայն քո վերջին շնչի հետ կարող է դուրս գալ։ Ամբողջ կյանքում նրանից փրկություն չկա. և ո՞ւմն է պետք այդպիսի փրկությունը։ Իսկ ինչպե՞ս է պատահում, որ սիրո պարտեզում բույն են դնում հիասթափության կամ խանդի մոլախոտերը. ուրեմն այդտեղ սեր չի եղել, կամ հիվանդ սեր է, բուժման հետաքրքրից զուրկ։ Ով ճիշտ կլինի այս դեպքում չխոսել սիրո անունից, չվիրավորել սիրո սուրբ զգացումը։

Քանի տարի է Աշխենին չի հաջողվում իր սիրտն ու զգացմունքը մի հայտարարի բերել. ձգում են տարբեր կողմերի վրա, ոչ մեկին կարող ես հետևել, ոչ՝ մյուսին։ Փոխեփոխ, անընդհատ իրար հակասող, փսփսում են ականջի տակ՝ դու իրավունք չունես, նա իր ընտանիքն ունի՝ կին, երեխա։ Իսկ քո երեխա՞ն, որ նաև նրա՞նն է։ Միևնույն է, նա քո ամուսինը, քո երեխայի հայրը լինել չի կարող, իրավունք չունի։ Իսկ ո՞վ է որոշել այդ իրավունքի սահմանները,— սրտի չգրված օրենքը, զգացմունքի բարոյական շունչը։ Ա՜խ այդ բարոյականությունը, որի մեջ ձե-

թվայնացրել է 1915.info կայքը

վականության և անբարոյականության հասնող այնքան սահմանափակում կա, ա՛յս չի կարելի, ա՛յն վատ է։ Գոնե զգացմունքն էլ այդքանը գիտակցելու կարողություն ունենար, թե չէ կույր ու անխնայ խարխափում է...

Կարծում էր թե վտանգն անցել է. գիտակցությանը հաջողվել է սրտի ականջները քաշել։ Վերջիվերջո վճռական ձայնը բանականությանն է պատկանում, օրենքի ուժ պիտի ունենա սրա՛ ասածը, սրա՛ որոշումը։ Բայց մի՞շտ է այդպես, ո՞վ կարող է սանձահարել զգացմունքի ըմբոստ ոգին։ Համոզված էր թե ինքն անցել է մազե կամրջով, զգացմունքի գլխին սառը ջուր է լցրել, մարել է կրակը, վերջնականապես։ Եվ պարզվում է, որ սխալվել է իր հաշիվների մեջ։ Ավելի ճիշտ չի՞ լինի ասել՝ հաշիվն այստեղ անելիք չունի։ Թեև նույնիսկ մարել է կրակը, միևնույն է, նա կենդանի է մնացել, թեկուզև մոխրի տակ թաղված։ Ու մխում է, մխում։ Իսկ ինքը համոզված էր, որ մարում է վերջին կայծը և ուրախ էր դրանով։ Ե՞ր աշխատում էր ինքն իրեն համոզել, որ վերջնականապես փակված են սիրո դուռ-պատուհանները։ Մինչդեռ պարզվում է, որ օդանցք է մնացել բաց, և այն սպառնում է ջարդել բոլոր ապակիները։ Այդ հողմի ուժին ինչպե՞ս դիմանաս...

Գուրգենը քնած է հանգիստ, անխռով։ Մայրը կարող է ժամերով նայել նրա մահճակալի մոտ ու նայել, նայել. հագեցում չկա։ Ինչու՞ իրեն թվում է, թե Գուրգենը շատ է նման Հրանտին, քիթը, աչքերը, նույնիսկ քնած ժամանակ։ Եվ ինչպե՞ս կարող է Գուրգենի մեջ Հրանտին սիրելու բաժինը չլինել։ Քանի անգամ է երազում հանդիպել նրան, և համարյա միշտ ներկա է նաև Գուրգենը։ Կամ քնած է, կամ խաղում է իր համար։ Մոտենում են իրար, հաճբուրվել են ուզում, իսկ երեխան խանգարում է, կախվում մոր փեշից ու լաց է լինում՝ գնա՛նք այստեղից, ես այս փիս քեռուն ցեմ ուզում... Երազում անգամ այդ իրավունքը չունի։ Իսկ ինչպե՞ս է կարոտել նրա համբույրին. գոնե համբույրին, այսքան էլ դաժան կլանք։ Ահա այս գիշեր էլ, ինքն ու Հրանտը մի խիտ անտառում են, հսկայական կաղնու տակ նըստած խոսում են. ասես առաջին անգամ սեր են բացատրվում։ Իսկ չորս կողմը թռչունների համերգն է թևածում, մի իսկական երգչախոմբ, որի երգ-երաժշտությունը թառել է ծառերի վրա ու սպիտակ փաթիլներով իջնում է սիրահարների սրտերին։ Հրանտն ասում է՝ Աշխե՛ն, այլևս անզոր եմ առանց քեզ ապրե-

թվայնացրել է 1915.info կայքը

լու, պարզապես ուժ չունեմ, և գիտե՞ս նվարդն ինձ ազատություն է տվել, մայրս օրհնել է մեր սերը՝ հանուն երեխայի։ Արգելքները վերացված են արդեն, Աշխենը, Հրանտի կրծքին փարված, շշնջում է ինքնամոռաց.— Ես կխնդրեմ երջանկությունից, Հրա՛նտ. տա՛ր ինձ վերջապես, ես քոնն եմ, ես շա՛տ եմ սպասել, ես շա՛տ եմ տանջվել մենակ։ Ու նրանց կարոտած շուրթերը փնտրում են իրար, փնտրում են ու չեն գտնում։ Վերջապես մոտեցել են կույր-կույր, միանան պիտի. հանկարծ կաղնու կատարից լսվում է Գուրգենի լացախառն ձայնը.— «Ցեմ ուզում»։

Ու փակվում է շուրթերի միացման ճանապարհը...

Աշխենը նայում է Գուրգենի խաղաղ դիմագծերին. իսկական Հրանտն է։ Թե՞ իրեն է միայն թվում։ Եթե նման է, ինչպե՞ս է, որ ուրիշները չեն նկատում.այդ մասին ոչ մեկից ոչինչ չի լսել, նույնիսկ Թամարից։ Իսկ եթե նկատեն ու խոսե՞ն, պատկերացնո՞ւմ ես քո վիճակը, Հրանտի վիճակը։ Նորից մոռացա՞ր Նվարդին։ Եթե կարողանար ինքն իրեն մոռանալ։

Սիրո համար փակ դուռ չկա,
Ներս մտնելու շնորհք է պետք.
Սիրո երգին վախճան չկա,
Միայն խելոք ականջ է պետք։

Գուցե երգն իսկապես անվախճան է, իսկ ահա դուռը փակ չէ, բայց և բացել չես կարող։ Ինչու՞. որովհետև դու ինքդ ես քեզ զրկել այդ իրավունքից։ Եվ աշխատիր չզիջել դիրքերը...

Տարիներ առաջ, մի անգամ Թամարն ասաց իրեն.— Ջնեղանաս, ոնց որ Գուրգենը մի քիչ Հրանտ Արշակովիչի նման լինի։ Ես, ասում է, այդ մասին խոսեցի Սմբատի հետ, նա ծիծաղեց, պարզապես անխելքի տեղ դրեց ինձ։ Եվ ճիշտ է վարվել Սմբատը,— ասաց, բայց համոզված էր, որ ականջները կարմրեցին։ Այդ մասին այլևս ոչ մի խոսք. Թամա՞րը նրբանկատ դարձավ, թե՞ այդ նմանությունը գնալով նվազեց։ Եվ, տեսնես, մի բան մնացե՞լ է, թե՞ ջնջվել են նմանության հետքերն անգամ։ Իսկ այդպես կարո՞ղ է լինել։ Ինչու չէ, մի՞թե բոլոր երեխաներն են նման իրենց ծնողներին։ Այնուամենայնիվ, թող Գուրգենը նման լինի Հրանտին, գոնե մի քիչ, այնքան, որ միայն ինքը նկատի, Հրանտի կարոտն էլ իր Գուրգենից առնել կարողանա։ Ա՛հ, գրողը տանի, դե եկ ու պնդիր, թե սիրո համար փակ դուռ չկա...

Ու նրա հոգու ծալքերում լեռնանում էր մի խենթ որոշում.— վաղն ևեթ կգնամ Հրանտի մոտ և կասեմ։ Իսկ ինչ կասես։ Ինչ

թվայնացրել է 1915.info կայքը

պետք է։ Ավելի կոնկրե՞տ։ Կասեմ՝ ես այլևս չեմ կարող, ես խեղդվում եմ, փրկիր, խնդրում եմ։ Հետո՞։ Չգիտեմ, այդ հետոյի մասին թող ինքը մտածի։ Հետո՞։ Ասացի չգիտեմ։ Դու իսկապես որ խենթանալու ճանապարհի վրա ես կամ կհասնես դրան...

Դռան զանգը հնչեց կարճ, անհամարձակ։ Գուցե Երվա՞նդն է. կփրկեր իրեն այս մաշող հոգսերից։ Դուրը բացեց ու գունատվեց միանգամից։ Հրանտն էր կանգնած դռան հետևը։ Եվ մի մեղավոր ժպիտ կար դեմքին, ա՛յս էր զարմանալին։

— Անցնում էի այս կողմերով, մտածեցի թե տանը կլինես, կիրակի է... վերջապես ես իրավունք ունե՞մ մի անգամ գոնե քո կացարանը տեսնելու։ Փորձում է ժպտալ, չի հաջողվում։

— Ներս արի, խնդրում եմ. միայն առանց աղմուկի, երեխան քնած է։

Երկար ժամանակ կանգնել է Գուրգենի մահճակալի մոտ ու նայում է, նայում։ Համբուրել չի կարող, ո՛չ, «փիս քեռուն» ղրկել են այդ իրավունքից։

— Կներես, դատարկաձեռն եմ, վախեցա, որ նորից չի ընդունի իմ նվերը։ Արդեն մեծ տղա է դարձել։

— Շուտով դպրոց է գնալու։ Աշխենի ձայնը հազիվ է լսվում։ Շունչը կտրվելու վրա է։ Հետո՞։ Մի՞թե սա իր երազի շարունակությունն է։ Հետո ինքն էլ չիմացավ, թե ինչպես բռնեց Հրանտի ձեռքը ու նրան տարավ խոհանոց։ Հրանտը դեռ ուշքի չէր եկել, փարվեց նրա կրծքին ու համբուրում է խենթի նման. համբուրում է ու լալիս։ Ու շշնջում է արցունքների միջից.

— Ես այսպես չեմ կարող, վերջապես ես էլ մարդ եմ, Հրա՛նտ. համբուրիր ինձ, խնդրում եմ... Սիրիր ինձ, գոնե մի քիչ. անխի՛ղճ, անհոգի՛. որտեղի՞ց դու հայտնվեցիր իմ կյանքի ճանապարհին... նորից է համբուրում, ու լալիս է։

— Հանգստացիր, Աշխեն, ի՞նչ պատահեց քեզ.— Հրանտն այնպես անակնկալի էր եկել. և Աշխենի խենթ փաղաքշանքները նրան ոչ այնքան հաճույք էին պատճառում, որքան վախեցնում էին.— Դե՛, պետք չէ լաց լինել, լսո՞ւմ ես, ախր քեզ ի՞նչ պատահեց։

— Ինչ որ պատահել է, վաղուց է եղել. դժբախտաբար նոր բանի վտանգ չկա... Աշխենն աստիճանաբար փորձում է իրեն տիրապետել. լացի կապն է քաշում։ Բայց Հրանտից պոկվել չի կարողանում։

— Ես այնպես մեղավոր եմ քո առաջ, և ոչ մի կերպ իմ մեղքը քավել չեմ կարող։

թվայնացրել է 1915.info կայքը

— Անմեղ-մեղավորի հարց չկա այստեղ... Մի անգամ էլ համբուրիր ինձ, պի՛նդ, պի՛նդ։— Հետո պոկվեց Հրանտից, մաղերի փունջը մի կողմ շպրտեց ու փլվեց մոտիկ աթոռին։ Այնպե՞ս էր հևում։

Այդ ինչ է, Գուրգենի ձա՞յնը լսվեց, արթնացե՞լ է, ի՞նչ է ասում։ Մայրն շտապեց երեխայի մոտ։ Քնած է հանգիստ, ոչ մի շարժում. միայն շուռ է եկել մյուս կողքի վրա։ Գուցե երազո՞ւմ է խոսել, թե՞ ոչինչ էլ չի ասել... Ծտ եկավ խոհանոց։ Հրանտը դեռ ոտքի վրա է, երևի փշերի վրա ավելի հանգիստ են կանգնում։ Լռեցին։ Բավական երկար։ Հետո խոսեց Աշխենը՝ առանց Հրանտին նայելու, ասես ամաչում էր նրանից։

— Ներիր ինձ այս խեղճ պոռթկման համար։ Ես խնդրում եմ փմ այս խեղճությունը վերագրես այն օրվան. այն գիշերվա համբույրների շարունակությունն էր սա. լսո՞ւմ ես, նոր ոչինչ չի եղել։ Ես ուզում եմ իմ խոսքի տեղը մնալ, ինքս իմ աչքում չքաստորանալ, որպեսզի, թեկուզև պատահական հանդիպման ժամանակ, կարողանամ նայել տիկին Նվարդի աչքերին...

— Զարմանալի մարդ ես դու, Աշխեն։

— Դե, ուրեմն փորձեմ զարմանալի էլ մնալ մինչև վերջ։ Իսկ դու հիմա դնա, խնդրում եմ։

Հրանտը վերջին խոսքը չսելու տվեց։ Հետո դարձավ Աշխենին ու կամաց ասաց.

— Քեզ կյանքի ընկեր է պետք, Աշխեն. փորձիր ամուսնանալ։

— Այդ քո ասած ընկերը որ պատահեց, կամուսնանամ։

— Շատ ես բծախնդիր, այդպես դժվար կլինի։

— Ինձ համար ամենամեծ դժվարությունը քեզնից պատվելն է, այսինքն՝ քո կապանքներից...

— Ես ինչպե՞ս օգնեմ քեզ այդ հարցում։

— Քո ավելի ընդգծված անուշադրությամբ։ Եվ այլևս այստեղ չգաս։

— Մեկ-մեկ շատ ես անխղճանում։

— Երանի չէ՞ր խղճի մասին գաղափար իսկ չունենայի։

— Ասում եմ երևիան այս տարի դպրո՞ց է գնալու։ Սանենք Արշակն էլ նույն ճանապարհի վրա է, թղթերն են պատրաստում։

— Այո՛, հիշում եմ, իմ մանկության տարիներին, որ ուզում էին ընդգծել մեկի մեծ լինելը, ասում էին՝ արդեն դպրոցահասակ երեխա ունի։

թվայնացրել է 1915.info կայքը

— Եվ այդ երեխան համարյա հայր չունի...

— Պետք չէ, Հրանտ։

— Իսկ չի՞ հարցնում։

— Մի անգամ միայն. ասացի՝ հեռու տեղ է գնացել, նա արդեն ուրիշի հայր է։ Զարմացած նայեց ինձ ու կամաց ասաց.— Ուրեմն փիս հայր է, որ ինձ չի ուզում տեսնել... ես ինձ պահել չկարողացա. լաց եղա անդուսպ։ Նա փաթաթվեց վզովս ու փորձում էր մխիթարել ինձ.— Նա որ քեզանից էլ է գնացել, ուրեմն փիս մարդ է։ Լաց մի լինի, մամ, խնդրում եմ...

28.

Ընդմիջման ժամ է։ Ուտելու կարիք չի զգում։ Սուրճ է պատրաստել, թող այսօր սա՛ լինի իր նախաճաշը։ Հիշում է, առավոտյան էլ ախորժակ չուներ. մի բաժակ թեյ խմեց միայն։ Իսկ պատճա՞ռը։ Գիշերը վատ քնեց, դա արդեն փաստ է։ Իսկ վատ քնելն իր պատճառը չունե՞ր։ Ուներ, իհարկե։ Սկեսուրն է հիվանդ։ Ոչ մի տեղը չի ցավում. լուրջ բան չկա, բայց վատ է զգում, անհանգիստ է, բժիշկներից մեկը կատակով իրեն ասաց՝ ծերության հիվանդություն է. գուցե ճշմարտության բաժի՞ն կա մեջը։ Ինքն էլ, Հրանտն էլ շատ են անհանգստանում. օրվա մեջ մի քանի անգամ զանգահարում են տուն, հարցում են, խնդրում ու պարտադրում են բան ուտել։ Ախորժակն ասես փակել են կողպեքով, ա՛յս է ամենից շատ անհանգստացնողը։ Հիմա էլ զանգահարեց.

— Մայրի՛կ, մի լավ բան ասա քո մասին, ինչպե՞ս ես հիմա։

— Շատ լավ եմ, ինձ ի՞նչ է եղել, որ անհանգստանում ես, աղջիկ ջան։ Արշակիս ոտ-գլուխն եմ նայում, շուտով դպրոց պիտի գնա, չէ՞։ Ես նրա դպրոցի էլ, դասագրքերի էլ ցավը տանեմ... լավ եմ, հանգիստ մնա։

Է՛, լուսիկ մայրիկը թույլ կտա՞, որ տնեցիներն իր պատճառով անհանգիստ լինեն։ Ոչ նրա տնքոցն է լսել, ոչ բողոք-դժգոհությունները. զարմանալի զուսպ կին է։ Եվ ի՛նչ անհամբերությամբ է սպասում երկրորդ թոռանը։ Քանի անգամ է ասել՝ ես նրա գալիք ճա՛մփին մատաղ...

Դուռը կամաց ծեծեցին։ Ներս մտան քեռի Մանուկն ու Սուքիասը։ Անսպասելի այց։ Տղայի ձեռքին մի փայլուն ծաղկեփունջ է, սլիտակ ու կարմիր մեխակների գեղեցիկ հավաքա-

թվայնացրել է 1915.info կայքը

ծուռ Հոր բեռն ավելի ծանր է։ Ստվարաթղթի տուփ է, մի ոչ մեծ ճամպրուկի չափ. երևի քաշն էլ տեղն է, քրտնել է քեռին։

Բարևել ու մնացել են կանգնած։ Իսկ Նվարդի շնչառությունը գնալով արագանում է, և աչքն այդ արկղից կտրել չի կարողանում։ Քեռի Մանուկն ղգաց երևի, առանց դրան էլ վախվխելով է ներս մտել, ավելի ճիշտ՝ անհարմար զգալուվ։ Ու քրտինքով ողողվեց ճակատը։ Եվ մեղավոր տոնով ասաց.

— Աղջիկ ջան, չնեղանաս, խնդրում եմ, մանր-մունր բաններ են, մի քիչ մեղր է մեր փեթակից, կոնյակ է, շիր է։ Քո լավության դիմաց սա հնչ բան է։

— Իսկ ես ի՞նչ էի խնդրել, քեռի Մանուկ, թե՞ կարծում էիք՝ հենց այնպես, ձևի համար եմ ասում։

— Չէ, աղջիկ ջան, իհարկե, հալատացի քո խոսքին, բայց դե, մեղքս ինչ թաքցնեմ, մտածեցի՝ ախր հիմա ո՞վ է հենց էնպես լավություն անում կամ ո՞վ է լավությունն անպատասխան թողնում։ Վերջապես, տղաս ձեզ մոտ է, մտածեցի... Ես ի՞նչ իմանամ. կինս է շատ ստիպել, ամոթ է, ասում է, բա մենք մարդ չե՞նք, բա դու ինչպե՞ս պիտի էդ լավ կնոջ աչքերին նայես... Աշխարհը շատ է փոխվել, ի՞նչ ասեմ, հիմա առանց հաշվի լավություն չեն անում, երևի ես էլ եմ փոխվել...

Ու չի հասցնում սրբել ճակատի քրտինքը։

— Ես նեղանում եմ հատկապես Սուքիասից, նա չափազանց է թույլ տար։

— Մորաքույր Նվարդ, աղնիվ խոսք, չկարողացա իմ խոսքն անցկացնել. ներեցեք խնդրում եմ։

Նվարդն ուզում է շատ խիստ լինել, նույնիսկ՝ վիրավորական խոսքեր ասել, բայց չի կարողանում. դժվար է իր հոր հասակի մարդու հետ այդպես խոսել։ Եվ, միևնույն է, ձայնի հոր տոնը փոխել չի կարող.

— Ծաղիկների համար շնորհակալություն, իսկ արկղը հենց հիմա դուրս տարեք, քեռի Մանուկ։

— Աղջիկ ջան, ինձ սպանում ես։

— Ասացի՝ տարեք արկղը, եթե չեք ուզում, որ սրտիս հետ տխուր բան կատարվի...

— Ինչե՞ր ես ասում, էդ էր պակաս... Հաղար, հազա՞ր ներողություն, աղջիկ ջան, հաշվիր, թե էս անխելքությունը ես չեմ արել։ Բարով մնաս։

Շտապ ճանկեց չարաբաստիկ արկղն ու դուրս թռավ։

թվայնացրել է 1915.info կայքը

Սուքիասը մնացել էր ոտքի վրա, և դուրս փախչել էր ուզում, և համարձակությունը չէր ներում։

— Ընդմիջման ժամդ վերջանում է, գնա գործիդ. օրվա վերջին ինձ կհանդիպես, ես քո ականջները պիտի քաշեմ։

Վերջին խոսքն իբր թե կատակով ասվեց, բայց Սուքիասի համար դա ականջը կտրելուց էլ ծանր էր։ Իսկ օրվա վերջի՞ն ինչու է կանչում։ Պետք է անպայման խոսել տղայի հետ, բացատրել լավության ու փոխհատուցման դրդապատճառները. ջահել ու անփորձ տղա է, դա կյանքում նրան պետք կլինի։ Է, բա՞ն ունես ասելու, հիմա ասիր, ինչո՞ւ ես հետաձգում։ Հիմա պարզապես չի կարող, հոգեպես պատրաստ չէ այդ խոսակցությանը. պետք է ճառից վերանալ, խոսքի համոզչականությունն ապահովել, մեղադրական ճառով ցանկացած արդյունքի չես հասնի։ Բայց զարմանալի է, որ ոչ մի կերպ չէր հանգստանում վիրավորված ինքնասիրությունը։ Իսկ ինչո՞ւ է զարմանալի։ Ախր իրեն ինչի՞ կամ ո՞ւմ տեղն են դրել։ Հիշում է, Լուսիկ մայրիկից է լսել։ Նրա ամուսին Արշակը մի առիթով ասել է՝ կաշառքից հարամ բան աշխարհում չկա։ Իսկ քեռի Մանուկի բերածը կաշա՞ռք էր թե՞ հարգանքի տուրք։ Կաշառքը պոզ ու պոչով չի լինում. շուն դառնա դրա հնարողի հերը, ինչպես Լուսիկ մայրիկը կասեր...

Մեկ էլ Հրանտը զանգահարեց.

— Մեր տան հեռախոսը չի պատասխանում, մայրիկից տեղեկություն չունե՞ս։

— Անհանգստանալու կարիք չկա, երևի թոռանը զբոսայգի է տարել։ Իսկ մայրիկի հետ քիչ առաջ եմ խոսել, լավ է։

— Հեռախոսով նա միշտ լավ է... Գիտե՞ս, որ մեր Մուշեղը նշանվել է, և քավորը Սմբատն է։

— Ի՞նչ լավ բան ասացիր, իսկ լա՞վ աղջիկ է, Հրանտ, դու ծանո՞թ ես։

— Ես չեմ տեսել, ասում են լավիկն է և այս անգամ քեռի Սամսոնին չի հաջողվել ճիպոտն իր քոլից կտրել։ Աղջիկը Շամշադինից է։ Նկատի ունեցիր, հարսանիքին մենք էլ պիտի դնանք։

— Եթե կարողացա, սիրուն։ Մուշեղը լավ տղա է, նրա ուրախությամբ արժե ուրախանալ։

— Իսկ ի՞նչ է նշանակում՝ եթե կարողացա։

— Դե՛, նայած թե հարսանիքը երբ է, և այդ ժամանակ ես որտե՞ղ կլինեմ. մոռացե՞լ ես, սիրելիս։

թվայնացրել է 1915.info կայքը

— Վա՛յ, իսկապես Ես քեռի Սամսոնին հատուկ կխնդրեմ, որ հարսանիքը հարմարեցնի քո...

— Կատակում ես, բայց ես չեմ նեղանում։

— Դե՛, մի՞թե ես քեզ նեղացնել եմ ուզում, Նվարդ։ Ինչպե՞ս է վիճակդ։

— Սրտխառնոց այլևս չունեմ, այս է լավը։ Լսիր, Հրանտ, քիչ տաք ինձ ուզում էին կաշառք տալ, և ես մեծահոգաբար մերժեցի։

— Կատակում ես, իհարկե։

— Միանգամայն լուրջ։

— Ով ո՞վ էր տակտից զուրկ այդ խեղճը, որ ցանկանում էր վիրավորել քեզ։

— Մի ծանոթ, նույնիսկ՝ հարգելի մարդ։

— Հարգելի մարդն այդպիսի քայլի չէր դիմի։ Համոզված եմ, շշպռել ես ինչպես պետքն է։ Դե՛, լավ, ես գնում եմ շրջկոմ։ Հույս ունեմ, որ ստացածդ կաշառքից ինձ էլ բաժին կհանես։

— Անպայման։ Հրանտ, ափսոս, որ դու ժամանակ չունես, թե չէ քեզ մի հարց էլ կտայի։

— Այդքան ժամանակ կունենամ։

— Ինչպե՞ս է ուտվում կաշառքը, Հրանտ, և ինչպե՞ս են կառողանում մարդիկ մարսել այդ արճիճը։

— Եթե այդ հարցը տրվեր կաշառակերին, համոզված եմ նա կասեր՝ ես ժամանակ ու հավես չունեմ անխելք հարցերի պատասխանելու...

— Իսկ ծաղ՛կը կաշառք չի, չէ՞, Հրանտ։

— Ո՛չ, չպետք է վիրավորել ծաղկի ինքնասիրությունը, մե՛ղք է։

— Իսկ, իմ կարծիքով, Հրանտ, ամենաշատը մեղք են հենց իրենք, կաշառք տվողն ու վերցնողը. դրանք ամենատռամալի մարդիկ են։

— Արի այդ դիպուկ չևակերպումով էլ սահմանափակենք մեր հաճելի զրույցը։ Ու նաև մի տեղեկանք, որը, համոզված եմ, չի կարող չհետաքրքրել կաշառքից սարսափող իմ տիկնոջը,— Սինոյի գործերը լավ են, հարցը փակված է։

Նվարդը նորից անակնկալի եկավ։

— Ինչպե՞ս, Հրանտ, այնպիսի բանե՞ր էին ասում, մի՞թե այդ հնարավոր է։

— Աշխարհում անհնարին ոչինչ չկա։ Ես էլ եմ զարմացած,

թվայնացրել է 1915.info կայքը

բայց չեմ թաքցնում, նաև ուրախ եմ Սենոյի համար։ Ասացի, չէ՞, նա թաց տեղ նստողներից չէ...

Նվարդը երկար ժամանակ խորհում, մտմտում է ինքն իրեն. Սենոյի գործերը լավ են, բա ասում էին դատական գործի հո՞տ է գալիս։ Ծ՛ալ ուրախ է ամուսնու ընկերոջ համար, և՛ իր տարակուսանքը թաքցնել չի կարող, մեղավորն անմեղ է ճանաչվել, ուրախանա՞ս, զարմանա՞ս, թե՞ արդարության երեսին ծիծաղել ուզենաս։ Դե՛, վերջապես, ի՞նչ գիտես, մանրամասնություններին մեջ չես խորացել, միայն լսածին հավատալն էլ մի բան չէ, գուցե, իսկապես... Երևի Հրանտն իզուր չէր ասում, թե Սենոն թաց տեղ նստողներից չէ, ուրեմն ի՛նչ, թաց տեղ միայն անճարնե՞րն են նստում։ Ով ինչպե՞ս է, որ Սենոյի նմաններն ամեն ինչ մարսում են, բա որտե՞ղ է այն իմաստուն խոսքի զորությունը, թե խորամանկ աղվեսը զույգ ոտքով... Գուցե, իսկապես, անմե՞ղ է, ինչ իմանաս։

29.

Անապահովի, նաև շատ հաճելի հեռագիր.— «Մորաքույր Աշխեն, դիմավորիք օգոստոսի հինգին, համբուրում եմ, Տանյա»։

Ծիլ սպասում էր, բայց և համոզված չէր, թե կգա։ Հիմա, խնդրեմ, ինքը երջանիկ առիթ ունի Տանյային Երևանում դիմավորելու։ Հոգսաշատ գործ է, բայց և ինչքա՜ն հաճելի է։ Իր սրբելի Տանյուշան. տեսնես շա՞տ է փոխվել։ Քանի՞ տարի է չի տեսել նրան, չո՞րս թե՞ հինգ։ Մեծացած կլինի, իսկական օրիորդ։ Հնարավոր է, որ արդեն սիրած տղա էլ ունի. սիրած տղա։ Երեխաները հասունանում ու կյանք են մտնում, իսկ մեծերն ավելի են մեծանում, և կյանքի ընկեր ունենալու հարցը վերջնականապես կանգնում է փակուղու առաջ։ Արդե՞ն, և՝ ոչ մի հո՞ւյս։ Համարյա՝ ոչ մի։ Այնքան աղոտ է այդ հույսը, ինչպես Սմբատը կասեր այսպիսի դեպքերում՝ սառույցի վրա գրված։ Հնարավո՞ր է հույս դնել այդպիսի հույսի վրա, և դրանով ապրել կլինի՞...

Իսկ ինքնաթիռն ուշանում է, ամբողջ երկու ժամ, և Աշխենը Գուրգենի հետ, ետուառաջ քայլելով, ժամանակ են սպանում։ Լալ է երեխան չի դժգոհում, ընդհակառակը, հետաքրքրությամբ աչք ու ձախ է դառնում, երկար նայում իջնող ու բարձրացող ինքնաթիռների ետևից։

թվայնացրել է 1915.info կայքը

— Մա՛մ, ես այնպես թռչել եմ ուզում, ե՞րբ ինձ ինքնաթիռ կնստեցնես։

— Բալիկս, մենք քեզ հետ միասին Մոսկվա ու Կույբիշև ենք թռել, ինքնաթիռով ես ենք եկել, դու մեր գալը չի՞ս հիշում։

— Ջեմ հիշում, մա՛մ։ Երևի շատ փոքր եմ եղել։ Ե՞րբ նորից ինքնաթիռ կնստենք։

— Տանյային ընդունենք-ճանապարհենք, հետո, երևի, գնանք քեռի Սահակենց մոտ։

— Ինքնաթիռո՞վ, մամ։

— Ըհը։

— Քեռի Երվանդի հե՞տ։

— Այո։

— Ուռա՛, ինչ լավ է... Ես քեռի Երվանդին շատ եմ սիրում, մա՛մ։

— Սիրիր, բալիկս, քեզ ո՞վ է արգելում։

Իսկ մտքում թպրտում է մի տխուր միտք,— բոլորին սիրում է, հարազատ հորից բացի. և ո՞վ է մեղավոր այդ տարօրինակ երևույթի մեջ։ Դու էլ ժամանակ գտար մեղավոր փնտրելու...

Վերջապես լսվեց այնքան ցանկալի հայտարարությունը— Կույբիշևից եկող ինքնաթիռը վայրէջք կատարեց։ Ինչ անհամբերությամբ էր սպասում ուղևորների հոսանքին ու մի տարօրինակ կասկած մտավ սիրտը.— հանկարծ ու չճանաչի Տանյային. դա հնարավոր բա՞ն է։ Ո՛չ, նա փակ աչքերով կտեսնի իր Տանյուշային։ Վերջապես, ասենք թե ինքն է կուրացել, բա Տանյա՞ն։ Իսկ դու քի՞չ ես փոխվել։ Համենայնդեպս...

Նրանք անմիջապես իրար գտան, և աղջիկը նետվեց Աշխենի գիրկը.

— Թանկագին իմ տյոտյա Աշխեն, սիրելի՞ս, ձեզ այնքա՞ն եմ կարոտել,— ու համբուրում է, այտը սեղմում է նրա այտին։

— Աղջի՛կս, փոքրիկ քույրի՛կս,— Աշխենն այնպես է լցվել, ուրիշ բան շշնջալ չի կարողանում, համբուրում է, շոյում է աղջկա գանգուրները։

Իսկ Գուրգենը, զարմանքից քարացած, մեկ մորն է նայում, մեկ այդ Տանյային։ Հետո աղջիկը պոկվեց Աշխենից ու երեխային առավ իր գիրկը։

— Գուրգենչիկ, թանկագի՛նս, մի՞թե դու ինձ չես հիշում. ախր ես քեզ շատ եմ գրկել, համբուրել։ Ինչպե՞ս է մեծացել

թվայնացրել է 1915.info կայքը

Իսկ Գուրգենը լուռ է, փորձում է հիշել այս լավ աղջկան, չի կարողանում. այդ ե՞րբ է նա իրեն համբուրել Երևի շատ վաղուց է եղել։ Բայց ինքն էլ է զարմանում, թե ինչու հիմա լուռ թյամբ ընդունում է նրա փաղաքշանքները, ոչ մի դիմադրություն։ Դե՛, մայրն այնքան կարոտով գրկեց նրան, այնպես էր սիրում, ուրեմն մոտ մարդ է, հարազատ է։ Միայն ինչո՞ւ երեվանում չի ապրում։ Կույբիշև են ասում. մի քիչ հիշում է, այնտեղ մի Սյոմա կար, լալկան երեխա էր, մեկ էլ Ռոզա մորաքրոջն է հիշում, այնպես կոշտ էր համբուրում։ Այս Տանյան փափուկ աղջիկ է, համբույրն էլ տանելի է։ Այս մեծերն էլ այնքան են համբուրում, որ ուղղակի համը հանում են...

Տուն հասան, երբ օրն արդեն կիսվել էր։ Լավ էր, ուտելու բան ունեին, Աշխենը նախորդ օրն էր պատրաստել։ Արձակուրդի հարցն էր լուծել, շուկա էր գնացել, մորաքրոջն էր այցելել, և այդ ամբողջը մի օրում։ Առանձնապես տպավորվել է Հրանտի հետ փոր հանդիպումը։ Արձակուրդի հարցը պետք է լուծեր գլխավոր ինժեների հետ։ Դիմումը տարավ նրան։ Այն խեղճ կիրակիից հետո առաջին անգամն էր նրա մոտ լինում։ Լավ էր, մենակ չէր։ Ստորագրեց անմիջապես։ Հետո ուշացումով հարցրեց.

— Որևէ տեղ գնալո՞ւ եք, թե՞ քաղաքում եք մնալու։

— Կույբիշևից ընկերուհուս աղջիկն է գալիս, մի տաս օր նրա հետ կլինեմ, հետո տեսնենք։

— Եթե մեքենայի կարիք ունենաք, խնդրեմ։

— Շնորհակալ եմ, տաքսին ավելի հուսալի է, ձեզ նեղություն չեմ տա։

Իսկ մտքում փորձում էր արդարացնել, ավելի ճիշտ՝ հիմնավորել իր մերժումը.— Ի՞նչ իրավունք ունեմ ձեր մեքենան նատելու, ի՞նչ կասեն, վարորդն ի՞նչ կմտածի։ Դե՛, Գուրգենն էլ, միևնույն է, այդ քայլն ըստ արժանվույն գնահատել չի կարող։ Հիշում է նաև, այդ պահին Հրանտի շուրթերից կախվել էր մի ցավատանջ ժպիտ, երևի նա էլ մտածում է, թե փոր տղան գոնե մի անգամ իրավունք չունի՞ հոր մեքենան նատելու, իր տղան՝ Գուրգեն Անատոլիի Մարգարյանը...

Ճաշն այնքան խաղաղ անցավ, փոխադարձ սիրո ու նվիրվածության մթնոլորտում. ուտելիքի համն ասես բարձրացել էր մի քանի աստիճանով։

— Տանյո՛ւշա, դե կարգին պատմիր ձերոնց մասին, ինչպե՞ս են, ի՞նչ նորություններ կան։

թվայնացրել է 1915.info կայքը

— Բոլորն էլ լավ են, ձեզ շատ-շատ բարևում են։ Երևի դիտեք արդեն, որ նրբայրս երեխա ունեցավ, մի աննման հրեշտակ։ Մեր հարսը մի քիչ պոզ ու պոչով է... Հա՛, քիչ էր մնում մոռանայի, մայրս մի սեղանի լամպ է ուղարկել, ասում է՝ նոր բնակարան է, պետք կգա, հորս նվերն էլ մի հախճապակե մոխրաման է։ Դե, ծխողի համար դա ամենալուրջ նվերն է։ Անշնորհքը ես եմ, ոչինչ չեմ բերել իմ կողմից։

— Հարապա՛տս, մի՞թե չգիտես, որ ինձ համար ամենամեծ նվերը դու ինքդ ես։ Այդ մասին այլևս ոչ մի խոսք։ Իսկ պապայիդ ու մամայիդ իմ շնորհակալությունը կհայտնես։ Ե՞րբ ես ավարտում ինստիտուտը և ո՞ւր կարող է գնաս աշխատանքի, իմ ապագա բժշկուհի... Ես այնքան եմ սիրում այդ մասնագիտությունը, մինչև հիմա էլ ինձ ներել չեմ կարողանում, որ ուրիշ բնագավառ եմ ընտրել։

— Մորաքույր Աշխեն, կներեք, խնդրում եմ, ինչ ես ուրախ եմ, որ դուք ինժեներ եք դարձել։

Աշխենը զարմանքը թաքցնել չկարողացավ։ Ինչպե՞ս թե։

— Այո՛, այո՛, այն ժամանակ ո՛չ մենք ձեզ կճանաչեինք, ո՛չ էլ ես հիմա այստեղ կլինեի։

Աշխենը ծիծաղը զսպել չկարողացավ։

— Դու իրավացի ես, Տանյուշա, և մխիթարեցիր ինձ, ազնիվ խոսք։ Միայն չասացիր թե ե՞րբ ես ավարտում և ի՞նչ պլաններ ունես։

— Կավարտեմ եկող տարի և հնարավոր է, որ ինձ ուղարկեն չորրորդ հիվանդանոց, մեր տնից այնքան էլ հեռու չէ։ Մենք այնտեղ պրակտիկայի ենք գնում, անհամեստության մեջ ինձ չմեղադրեք, շատ են հավանել, ուզում են իրենց մոտ պահել։

— Շատ լավ է, ախր քեզ ինչպե՞ս կարելի է չհավանել, աղավնյա՛կս... Միայն չասացիր, մտերիմ ընկեր ունե՞ս, թե դեռ շուտ է։

Տանյայի դեմքը միանգամից շառագունեց, և դա հարցի ամենապերճախոս պատասխանն էր։

— Մեկը կա, հենց առաջին կուրսից ենք մտերմացել։ Տեսնենք։

— Գիտե՞ս ինչ, Տանյուշա, ես համոզվել եմ, որ համեմատաբար հաջող ընտրությունների մեծ մասը բաժին է ընկնում բուհերին, ուսանողական տարիներին։ Քեզ մեծ, շատ մեծ բախտավորություն եմ ցանկանում։ Ես հավատում եմ քեզ, աղջիկս,

թվայնացրել է 1915.info կայքը

հավատում եմ քո ճաշակին, քո ընտրությանը։ Իմ կողմից հատուկ կբարևես այդ լավ տղային։ Անունը չասացիր։

— Լեոնիդ է, մորաքույր.— մոտեցավ, փաթաթվեց Աշխենին։— Ձեր բարի ցանկությունները ինձ համար այնքան թանկ են ու հարազատ։ Շնորհակա՛լ եմ...

Մեկ էլ Գուրգենը մեծ-մեծ ասաց.

— Ես էլ եմ շնորհավորում, մորաքույր Տանյա։

Մեծերն այնպես էին զարմացել։

— Իսկ դու ի՞նչն ես շնորհավորում, Գուրգենչիկ, ես քեզ լավ չեմ հասկանում։

Լուրջ է հարցնում Տանյան։ Այս մեծերն էլ մեկ-մեկ այնպես անհասկացող են դառնում, որ զարմանալ կարելի է։

— Շնորհավորում եմ քո և այդ Լեոնիդի ընկերությունը, ի՞նչ կա չհասկանալու։

— Շնորհակալ եմ, մեծ մարդ։ է, դու էլ որ քո կնիքը դրեցիր, էլ այդ դաշինքին տատանում չկա։

Աշխենը լուռ էր, մի կորուկ շարժումով ետ տարավ մաղերի փունջը։ Նրա աչքերում սպասումի կրակներ էին բոցկլտում։ Կգա՞ այդ օրը, երբ վրա կհասնի իր Գուրգենի՝ սիրո տեր դառնալու տարիքը, երբա՞նի այդ օրվան։ Իսկ իր բաժին տարի՞ն երբ է գալու։ Եկել-անցել է, արդեն, ուշացե՞լ ես վերջնականապես։ Ուշացած հարսնացու։ Հարս լինելու քաղցրությունն էլ չվայելեց... Չհասունացած կին, չամուսնացած մայր, ի՞նչ իրավունքով է ապրում այս աշխարհում։ Հիշում է, երբ մեկին ուզում էին վատ բնութագրել, ավելի ճիշտ, երբ մեկի վատ վիճակն էին ուզում ընդգծել, ասում էին՝ տանը մնացած աղջկա նման է։ Իսկ տանը մնալը, կամ ամուսնանալ չկարողանալը աղջկա մե՞ղքն է, թե՞ դժբախտությունը։ Հիմա դու ամուսնացածնե՞րի ցուցակում ես, թե՞ տանը մնացածների։ Ո՛չ մեկը, ո՛չ մյուսը։ Իսկ ուրիշ ցուցակ լինո՞ւմ է։ Հավանաբար՝ այդ էլ միայնակ մայրերի ջոկատն է թե՞ բանակը... Մայրն ասում էր՝ անմարդ կինն ու առանց երեխայի տունը ինչի՞ է պետք։ Մխիթարվիր նրանով, որ քո տանը երեխա է մեծանում, մի ամբողջ աշխարհ։ Այդ ե՞րբ նա դպրոցահասակ դարձավ. ինչպե՞ս արագ են անցնում տարիները։ Մարդուս կյանքն էլ մի ակնթարթ չէ՞, և ինչքան ցավ ու տառապանք կա այդ ակնթարթի մեջ։ Իհարկե, նաև՝ ուրախություն ու հաճույք, մի բան, որից բնությունն իրեն այնքան քիչ բաժին է հանել... Նորից

թվայնացրել է 1915.info կայքը

դատարկ մտածումների գիրկն ընկավ, քանի անգամ է ներքուստ դատապարտել այդ հիմար սովորությունը, միևնույն է, բան չի ստացվում, շարունակվում է անիմաստ բռնցքամարտը իր մտքի ռինգում։ Վերջ, այսօր գոնե։ Պետք է մտածել Տանյայի շրջագայության մասին. ցույց կտա Սևանն ու Գառնին, Սարդարապատն ու Զվարթնոցը, Միծեռնակաբերդ կտանի, Մատենադարան, Էրեբունի։ Այնքան տեղ կա, և ժամանակ ունեն, այս է կարևորը. ժամանակին ձևակերպեց արձակուրդը։ Ամենադժվարը մեքենայի հարցն է։ Միևնույն է, Հրանտին չի դիմի։ Ափսոս որ Երվանդը մեքենա չունի։ Հավանաբար պետք է դիմի Սմբատի օգնությանը, կօգտագործեն նրա մտերիմ ընկերոջ մեքենան։ Այնպե՞ս է ուզում, որ Տանյան գոհ գնա Երևանից, ինչո՞ւ գոհ, հիացած թող գնա։ Արդեն տոմսի մասին պետք է մտածել։ Եվ, իհարկե, դատարկ չի ճանապարհի։ Իսկ ի՞նչ ես դնելու աղջկա հետ։ Տանյայի համար մի զույգ կոշիկ կառնի, երևանյան կոշիկները հարգի են. վարվառա Միխայլովնայի նորածին թոռան համար պետք է հարմար նվեր ճարել։ Մի կողով միրգ կգնի։ Եվ, իհարկե, կոնյակ՝ վասիլի Ստեպանովիչի համար, տանը մի շիշ «Ախթամար» ունի։ Ինչո՞ւ ամեն անգամ այդ շիշը տեսնելիս նրան թվում է, թե դժբախտ թամարի արցունքներով է լցված։ Իսկ ինքն ինչո՞վ է լավ Թամարից կամ նա ո՞ր օրվա դժբախտն է։ Այնուամենայնիվ... Սմբատի նման ամուսին ունի, որը տմարդի ձևով դավաճանել է նրան։ Իսկ Հրանտի դավաճանությունը տմարդության բարձրագույն աստիճանը չէ՞։ Գուցե, իսկապես, մեղավորն իրենք են, հլու հնազանդ կանայք, որ վարձահատույց չեն լինում. այդ դեպքում սրբապղծությունն իր վերջնական հաղթանակը չէ՞ր տոնի... Իսկ քեռի Սահակենց մոտ երևի չգնան, հետո՛ ինչ, որ հրավիրել են, քանի անգամ հիշեցրել են, բոլոր հրավերներին չէ, որ արձագանքում են։ Չի գնա։ Առանձնապես դժվարանում է հանդիպել քեռի Սահակի կնոջը, որի հետ դեռ ծանոթ էլ չէ։ Գյուղացի կին է, առանց ավելորդ նրբանկատության անպայման կհարցնի.— Բա էս երեխայի հո՞րն ուր է։ Ի՞նչ պիտի պատասխանի, բաժանվե՞լ է, չկա՞, ոչ ճշմարտությունն ասել կարող է, ո՛չ սուտ խոսելու շնորհք ունի։ Ասի՝ ապօրինի ծնու՞նդ է։ Ինչո՞ւ ապօրինի, եթե Գուրգենն իր համար ամենաօրինական զավակն է։ Հետո զարմանալի է նաև, որ Երվանդի հետ խախտվել է նախկին անբռնազբոս փոխհարաբերությունը, հիմա և քիչ են

թվայնացրել է 1915.info կայքը

հանդիպում, և առաջվա անկաշկանդ ելումուտը չկա։ Ինչո՞ւ, դադարեցի՞ն քույր ու եղբայր լինելուց, և՝ այդքան շո՞ւտ, առանց լուրջ պատճառի՞։ Քանի անգամ է Գուրգենը հարցրել.

— Մա՛մ, ինչո՞ւ քեռի Օրվանդն էլ մեր տուն չի գալիս, չէ՞, ուշ-ուշ է գալիս։

— Իրենն հարցրու, բալիկս, նրևի շատ է զբաղված, ժամանակ չունի։

— Իմ ի՞նչ գործն է, ժամանակ ունի-չունի. թող գա, ինձ տիկնիկային թատրոն տանի, խոստացել է, չէ՞։

— Դե՛, որ խոստացել է, անպայման կգա, միայն դու մի շտապիր։

Մինչդեռ ինքն էլ է շտապում, ու նաև զարմացած է։ Առաջ թևանցուկ քայլում էր նրա հետ և անհարմարության զգացում չկար, հիմա նրա թևը բռնել չի կարող, ինչո՞ւ այդպես անհամարձակ դարձավ, նրանց հարաբերությունների մեջ որտեղի՞ց մտավ այդ սառը քամին։ Ով գյուղ գնալուց հրաժարվելու որոշման մեջ այդ սառնությունն իր վճռական բաժինը չունի՞ արդյոք։ Հակասական մտածում-որոշումների մի ամբողջ շարան, որից փրկություն չկա...

30.

Հերթական գործուղում, այս անգամ՝ Սարատով։ Հետաքրքիր քիչ քաղաք է, յուրահատուկ դիմագծերով։ Իսկ ո՞ր քաղաքում բավարար չափով հետաքրքրություններ չկան, ո՞ր բնակավայրը իր դիմագիծը չունի, եթե, իհարկե, այն կառուցված չէ տիպային նախագծով։ Սարատովին մի առանձին հմայք է տալիս փառահեղ Վոլգան, լայնահուն, ջրառատ, իր ժողովրդի նման սրտաբաց ու մեծահոգի։ Հյուրանոցի պատուհանից երևում է գետի մի ընդարձակ հատվածը։ Գուցե կես ժամ կլինի, ինչ նա ակնդետ նայում է դանդաղահոս ջրերին, այնպես հանդիսավոր է նրանց երթը. հոսում են, իրենց գրկում տանելով արևի ոսկեզօծ գունդը։ Լավ է ասել բանաստեղծը.

«Հանգչում էր բորբ արևն այնտեղ, բլուրների ետևում,
Վոլգայի ջուրը համրահոս՝ հալած ոսկի էր թվում»։

Այսօր կիրակի է, հիմնական գործով կզբաղվի վաղը։ Իսկ հիմա՞ ինչ անի։ Օրկու ժամի չափ թափառեց քաղաքում։ Մի անգամ էլ է եղել այստեղ, տարիներ առաջ, և մեկ օրով միայն,

թվայնացրել է 1915.info կայքը

Համարյա բան չի տեսել։ Հիմա ուզում է պակասը լրացնել։ Մի տնղ կարգին ճաշեց, նույնիսկ մի շիշ գարեջուր խմեց։ Հիմա եկել է հյուրանոց։ Մենակ է և ինչո՞ւ է այսքան տխուր։ Երանի Նվարդն էլ իր հետ լիներ, երկար կնստեին ռեստորանում, երեկոյան կողմ էլ կինոթատրոն կգնային. մի ազդ ընկավ իր աչքով, լավ նկար են ցուցադրում։ Ջեկավ Նվարդը, չէր կարող գալ, եթե նույնիսկ իր մինիստրությունից գործուղում ունենար։ Հոգեկան ու բարոյական ի՜նչ տառապանքներից հետո մայրանալու հեռանկար է բացվել, վերջապե՞ս, և վախենում է ինքնաթիռ նստելուց, ընդհանրապես՝ երկար ուղերթներից։ Մայրն էլ խորհուրդ չի տալիս, օրվա մեջ մի քանի անգամ կլսես,— զգույշ մնա, աղջիկ ջան...

Վերջապես երեխա պիտի ունենան, ամուսնական կյանքի տասներկուերորդ տարում։ Օրական քանի՜ անգամ է մայրն աղոթքի նման մրմնջում.

— Բարով-խերով գա մեր սպասած բալիկը, ես նրա անջնելիք ճա՜մփին մատաղ։

Մեր սպասած բալիկը, երևի այսպիսի դեպքերում են ասում՝ աչքներս ջուր դառավ... Արշակը եղբա՞յր պիտի ունենա, թե՝ քույր։ Սրբուհի մորաքույրը մի անգամ աչքերով չափեց Նվարդին և հանեց իր անառարկելի վճիռը.— աղջիկ է։ Իսկ դու ի՞նչ կուզենայիր, մի անգամ հարցրեց Նվարդը. ինչ էլ բերնիս, իմ ուզածն է։ Կինն ինչպե՞ս էր փաթաթվել իրեն ու լաց էր լինում։

— Թող Արշակս մենակ չմնա։ Վերջապես ես էլ մայր կոչվելու իրավունք կունենամ։

— Նվարդ, ինչո՞ր ես ասում, ախր դու վաղուց ես մայրացել։

— Հիմա կլինի իսկականը, Հրանտ, հասկանո՞ւմ ես...

Ով իսկական երեխա կունենան։ Հոգուդ վրա մեղք մի վերցնի, Հրանտ, մի՞թե Արշակը... Ո՛չ, ո՛չ, եթե կուզեք, իսկականը հենց նա՛ է. ափսոս, մայրիկի նման չի կարողանում ասել՝ ես նրա ցավը տանեմ։ Իսկ Գուրգե՞նը, նա ի՞նչ փոխհարաբերության մեջ է այդ իսկական կոչվածի հետ։ Երեք «սորտի» երեխա, սա էլ Սրբուհի մորաքրոջ խոսքն է՝ ուրիշի առիթով ասված, և մի՞թե իրենց չի վերաբերվում։ Այս ի՞նչ խառն ու անհասկանալի թվաբանություն է։ Շատ էլ հասկանալի, միայն խնդիրն է բարդ ու անլուծելի։ Երեք երեխա, փրարից անկախ, իրարից հետու, բայց հոգու նույն թելերով կապված։ Իսկ եթե

թվայնացրել է 1915.info կայքը

Նվարդը «բարեհաճի» զո՞ւյգ ունեննալ. գուցե քաւյակի հնարավորությո՞ն կաւ Որտե՞ղ է կարդացել, որ Բրազիլիայում մի կին տասն անգամ զույգ երեխա է ունեցել. մի իսկական բանակ, մի անգին հարստություն... Հիշում է Աշխենի ազատման օրը. ի՜նչ երկյուղածությամբ էր թափառում ծննդատան պատերի տակ։ Նվարդի հիվանդանոց գնա՞լն ինչպես կընդունի։ Դեռ չի պատկերացնում, ժամանակ շատ կա, կմտածի, կհաշտվի այդ փաստի հետ։ Բայց հիմա արդեն մի տարօրինակ անհանգստություն է մտել սիրտը ու սեղմում է կոկորդը...

Տխուր է անծանոթ հյուրանոցում. մենակ է, գուցե դրանի՞ց է։ Ափսոս, որ Նվարդն իր հետ չէ։ Նախապատրաստվում է իր երազած ճակատամարտին։ Իսկ որ ժամանակը գա, ո՞ւր է տանելու, ո՞ր ծննդատունը։ Դե՛, իհարկե, Սավոյանի մոտ։ Սա՛ էլ շատ էր ուրախացել այդ լուրով, նույնիսկ իր անհարմարության ղդացումը թաքցնել չկարողացավ,— սատանան տանի, ասում է, այդ կնոջ երեխա ունենալու հնարավորությունները անախալ որոշել չկարողացանք. բնությունը շատ ավելի խելոք է ու հեռատես... Պրոֆեսոր Սավոյանի մոտ նաև իր Գուրգենն է լույս աշխարհ եկել։ Ինչո՞վ է իրենը, մի գիշերվա հաճույքի իրավունքո՞վ... Հիշում է, այդ օրը Սենոյի հետ միասին էին, և ինչպես նա չէր հասկանում իր անհանգիստ տատապանքների դրդապատճառը։ Չէր հասկանում, որովհետև ոչինչ չգիտեր։ Դե, իմանար էլ, դժվար թե արդարացում գտներ ընկերոջ ծանր ապրումներին։ Նա այնքան թեթև է տանում ամեն մի հոգս ու բեռ. այդպիսի մարդիկ հեշտ են ապրում։ Եթե չի սխալվում, հենց այդ օրն էր, ինքը կատակով հարցրեց Սենոյին.

— Կարո՞ղ ես անկեղծորեն ասել, թե քանի կնոջ հետ ես ղալաթներ արել։

Սենոն այնպե՞ս էր ղարմացել։

— Իսկ ո՞վ է քեզ ասել, որ ուրիշ կնոջ հետ լինելը ղալաթ անել է նշանակում։

— Դա իմ կարծիքն է։

— Այ տղա, հասկացիր, դա ամենաքաղցր պտուղն է... Բիլիարդ խաղացել ես, չէ՞։

— Մեկ-մեկ պատահում է։

— Ահա, խաղացող կա, որ տարվելիս սկսում է թոնթորալ՝ դա ինչ տանել է, անընդհատ պատավկա ես գցում։ Իսկ ես,

թվայնացրել է 1915.info կայքը

հավատա, մի առանձին հաճույք եմ ստանում այդպիսի շար խփելուց, որովհետև այս դեպքում վրիպել չկա։ Իմ գիրկը նկող ուրիշի կինը ինձ նման է թվում ահա այդ պատավկային, դա ամենաանվրեպ և հաճելի հարվածն է... Այս է Սենոյի փիլիսոփայության աղը, և նրան հակառակի մեջ համոզել չես կարող։ Հիմա էլ այստեղ լիներ, մենակությունից կտխրե՞ր իր նման կամ կնո՞ջը կհիշեր։ Մենակ մնալու շնորհք չունի նա, ավելի ճիշտ՝ ամենաարագ կերպով ընկերուհի ճարելու զարմանալի տաղանդ ունի։ Եվ, այնուամենայնիվ, չի ափսոսում, ընդհակառակը, գոհ է, որ ինքը զուրկ է այդ տաղանդից։

Իրենց գործարանի երկվորյակն այստեղ է ապրում, այս քաղաքում. ավելի ճիշտ՝ սա մեծ եղբայրն է։ Վաղը կարգին կծանոթանա նրա հետ, կուսումնասիրի, ե. կ.—10 հաստոցի մասին սրանց կարծիքը կիմանա։ Անպայման այստեղ էլ ուսանելի բաներ կան։ Դիրեկտորի հանձնարարությամբ մի խումբ ընկերների կհրավիրի իրենց մոտ։ Իսկ քաղաքին մոտիկից ծանոթանալու համար դեռ ժամանակ կունենա։ Լավ է անծանոթ քաղաք, առավել ևս՝ անծանոթ երկիր տեսնելը։ Երկրորդի հնարավորությունը դեռ չի ունեցել։ Հոկտեմբերի համար Հարավսլավիայի ուղեգրեր կային, Նվարդի հետ միասին պիտի գնային, ապագա քաղաքացին ձախողեց նաև ա՛յդ մի։ջոցառումը... Մարքսն է ասել, չէ՞, թե քանի լեզու գիտես, այնքան մարդ ես։ Իսկ քանի երկիր տեսնե՞լը. հոգեկան ու մտավոր հարստության ի՞նչ աղբյուր է դա։ Հայրը, զենքը ձեռքին անցել էր քանի՜ երկրով, Ռումինիա, Բուլղարիա, Հունգարիա, Հարավսլավիա, իր բաժին պատերազմն ավարտել էր Սալոնիկից այն կողմ՝ Ավստրիայում։ Թեկուզև ծանր ժամանակներ են եղել, բայց ինչքա՜ն գոհ էր հայրը, ինչպե՜ս իրեն հարուստ էր համարում այդ ժողովուրդների հետ ունեցած շփումով, նրանց վարք ու բարքին ծանոթանալով։ Ուրեմն այլ երկրներ տեսնելու հնարավորությունը համարենք հեռանկարային պլանի գլուխ։ Առայժմ բավարարվենք Սարատովի ու նրա մի գործարանի հետ ծանոթանալու հաճելի առիթով։ Առանձնապես ուղում է լինել գործարանի գլխավոր կոնստրուկտորի բաժնում։ Իրենց նոր հաստոցի մասին անհրաժեշտ է նաև սրանց եղրակացությունը։ Բնութագիրը շատ է խոստումնալից. քաշը պակաս է տասնութ կիլոգրամով, փոքրացել է տեղադրման մակերեսը, բարձրացել է աշխատանքի արտադրողականությունը։ Տեխնիկական փաս-

թվայնացրել է 1915.info կայքը

տաթղթերն են պատրաստում, ուզում են ներկայացնել կառավարական հանձնաժողովին՝ պետական որականիշ շնորհելու համար։ Այդ քննությունն էլ որ բռնեց, ուրեմն ապահովված է հաղթանակը։ Այո, կգնա գլխավոր կոնստրուկտորի մոտ. նախօրոք գրել են, նրանք գիտեն, սպասում են։ Իսկ իրենց գլխավոր կոնստրուկտորը մի նորաստեղծ գործարանի դիրեկտոր է նշանակվել։ Թափուր է այդ տեղը։ Երկու օր առաջ խորհրդակցում էին Սուրեն Մարտիրոսովիչի հետ, թեկնածու էին փնտրում։ Հանկարծ մտքում առկայծեց Աշխեն Մարգարյանի անունը, հավատացած է, հարմար թեկնածու է, լավ կաշխատի։ Բայց տատանվեց, տատանվեց ու ոչինչ չասաց այդ մասին։ Ինչո՞ւ ինքն էլ չի հասկանում թե ինչու անհարմար զգաց, ի՞նչ կմտածեն։ Իսկ ո՞վ գիտի ձեր փոխհարաբերության մասին։ Հետո՞ ինչ, ինքը հո գիտի՞։ Իսկ եթե, իսկապես, հարմար թեկնածու է,եթե դրանից աշխատանքը կշահի, ինչո՞ւ չասել, վճռականորեն տեր չկանգնել այդ առաջարկությանը։ Չկարողացավ։ Եվ սա եղավ սկզբունքային մոտեցո՞ւմ։ Հիշում է, մի ժամանակ ինչ մեղադրական խոսքերով էին որակում մի մինիստրի, այսպես կոչված, կադրային քաղաքականությունը։ Ասում էին՝ ղեկավար աշխատանքի է նշանակում ծանոթներին, ընկերներին ու բարեկամներին։ Երբ հարցնում էիր, թե կոնկրետ ո՞ր նշանակումն եք սխալ կամ անարդար համարում, դժվարանում էին օրինակ բերել։ Մարդն ընտրություն է կատարում իր ծանոթ միջավայրում, սկզբունք ունենալով ելնել միայն գործի շահերից, ի՞նչ վատ է։ Այո, գործի շահը, այս է կարեվորը. եթե իմ ընկերն արժանի է այդ պաշտոնին, այդ գործի իսկական տերն է, ինչո՞ւ խուսափեմ նշանակելուց, որովհետև որոշ քաղքենիներ կարող են վայրահաչե՞լ։ Հերն անիծած, թող ասեն ինչ ուզում են, կարևորն այն է, որ գործն առաջ գնա։ Այդ դեպքում ինչո՞ւ ես խուսափում Աշխենի թեկնածությունն առաջադրելուց։ Գիտի, բայց դժվարանում է։ Ա՛յ, եթե դիրեկտորն առաջարկեր, ինքն անպայման կպաշտպաներ։ Իսկ եթե դիրեկտորը բավարար չափով չի ճանաչում Աշխենին, նրա կարողությունների մասին աղոտ պատկերացո՞ւմ ունի։ Ցավալի է, պարզապես, բայց միևնույն է ինքը նախահարձակ լինել չի կարող։ Ուրեմն կարելի է և փուշտալ քո այդ կիսատ-պռատ սկզբունքայնության վրա...

Նորից քանդվեց հիշողությունների կծիկը։ Ինքը կանգնած է

թվայնացրել է 1915.info կայքը

ծննդատան փակ պատուհաններին տակ ու չդիտի, թե ինչ պիտի անի. կամ՝ ի՞նչ կարելի է անել։ Նորմալ ծննդի դեպքում ուրախ լուր բերողին աչքալուսանք են տալիս, մաղարիչ են անում, կնոջն ու նորածնին դիմավորում են գրկաբաց, հանդիսավոր արարողությամբ տուն են տանում։ Ինքը զրկված էր բոլոր այդ հնարավորություններից։ Ինչո՞ւ միայն այդ, իսկ հետագա պարտադիր պասխիվությո՞ւնն ում հաշվին կարելի է գրանցել։ Ոչինչ չի արել այդ երեխայի համար, ալիմենտ (զբզվելի բառ է) տալու իրավունք էլ չունի, օգնության ձեռք մեկնել չի կարող, Աշխենն այնպես կվիրավորվի։ Ել քեզ էլ իրավունք ես վերապահում այդ երեխայի հայրը կոչվելու։ Հետաքրքիր է, որ Արշակն էլ այս նույն շենքում է ծնվել, Նվարդն էլ այստեղ կգա. երեքն էլ նույն ծննդատան սաներ։ Հետո՞ ինչ, դու երեքին մի հայտարարի բերող ընդհանրությունից խոսիր։ Դե, մի՞թե այն չկա, երկու հայր, երեք մայր ու երեք երեխա, որքան իրար հետ կապված, նույնքան էլ՝ իրարից անջատ, իսկական հակադրությունների միասնություն, թե միասնությունների հակադրությո՞ւն... Կյանքում ինչեր ասես, որ չեն լինում, միայն ինչո՞ւ իր բաժին կյանքն այսքան խայտաբղետ ստացվեց։

31.

Աշխենը մենակ է լաբորատորիայում։ Բոլորն ընդմիջման են դուրս եկել։ Իսկ ինքը մի բաժակ թեյ է խմել և բավարարված է դրանով։ Ընդհանրապես վերջերս իրեն այնքան էլ լավ չի զգում, մրսել է երևի։ Անցյալ օրը Թամարի մոտ էր. ընկերուհին անմիջապես նկատեց, նիհարել ես, ասում է, գույնդ էլ այն չէ։ Ջերմաչափը զոռով դրեց թևի տակ. երեսունյոթից մի երկու գիծ էլ ավել էր։ Դե՛, դա ի՞նչ ջերմություն է, կանցնի։ Բոլոր դեպքերում պետք է զգույշ լինել։ Հիմա դուրս կգա և բակի վերջին նստարանին կնստի, թիկունքը դեմ կտա արևին. տաքը շատ է դուր գալիս։ Լաբորատորիայի գործերն էլ այնպես չեն առաջադիմում, ինչպես ինքը կուզենար։ Նոամսյակի պլանով նախատեսված հարցի ուսումնասիրումը պետք է ավարտեին նախորդ ամսին, դեռ վերջը չի երևում։ Ինչո՞ւ ուշացան, սահմանված ժամկե՞տն էր կարճ թե՞ բավարար պահանջկոտությունն ու վերահսկողությունն էր պակաս։ Հավանաբար և՛ մեկը, և՛ մյուսը։ Ել, իհարկե, ավելի շատ վերջինը։ Թերա-

թվայնացրել է 1915.info կայքը

ցողներ կան, դժբախտաբար, մեկը հենց այդ գնդլիկ Հովիկը, որի կլորացումը նոր չափեր է ընդունել։ Այդ ի՞նչ հանգիստ բնավորություն է, ուզում ես պայթիր, իր քայլը չի փոխի։ Սպառնացել է քանի անգամ, ասել է՝ զեկուցագիր կգրեմ և քո ազատման հարցը կդնեմ, ոչ մի տեղաշարժ, երևի գիրուկ, որ մեզ մոտ այնքան էլ հեշտ չի մարդ հեռացնելը. արհկոմը սպաշտպան կկանգնի, նոր տեղ փնտրելու հարց կծագի։ Դե՛, ճիշտը որ ասենք, այդ Հովիկը մինչև վերջ կորած մարդ չէ, գործը դանդաղ է տեղից շարժում, բայց կատարածի որակը տանելի է։ Հանգուցյալ Անմեղիկյանն էլ գտնում էր, որ դրա համար կարելի է հանդուրժել այդ գնդլիկին։ Գլուխը քարը, որ նաև բամբասկոտ է այն աստիճան, որ նրա ոչ մի խոսքն այլևս հավաստիության արժեք չունի։ Ուշացման մեղքն, իհարկե, միայն Հովիկի ուսերին չի ծանրացած. գուցե ավելի մեծ է մեղքի իր բաժինը. ի վերջո ի՛նքն է առաջին պատասխանատուն։ Թող մի կերպ ծայրը-ծայրին հասցնեն, հաջորդ հոդվի ուսումնասիրման գործն այնպես կկազմակերպի, որ բացատրի ուշացումը։ Դա ավելի ծանր, բայց և հետաքրքիր հարց է և մեծ առնչություն ունի նոր հաստոցի կատարելագործման հետ։ Պատահական չէ, որ մի անգամ Հրանտն առանձնապես շեշտեց այդ խնդրի կարևորությունը։ Իսկ հիմա գոնե մի կես ժամով պետք է բակ դուրս գալ, արևի «լոգանք» ընդունել։

Գործարանի բակը, ինչպես միշտ, այս ժամերին մարդաշատ էր. շատերն էին կանգնած զրուցում, ոտքի վրա նախաճաշողներ էլ կային։ Նրան ընդառաջ քայլում էին երկու հոգի, երկու հաղթամարմին տղամարդ։ Աջ կողմինը վարպետ Հարությունը չէ՞։ Մյուսին էլ տեսել է մի քանի անգամ, հավանաբար իրենց գործարանում է աշխատում, բայց ծանոթ չէ։ Թեքեց ճանապարհը. Հարությունի հետ հանդիպելու ոչ մի ցանկություն չունի, անտակտ տղա է, կարող է նորից կոպտել։ Անցավ, գնաց դեպի իր ցանկացած նստարանը։ Ու հեռվից լսեց Հարությունի ձայնը, որը, հավանաբար դիմում էր իր խոսակցին.

— Պայմանավորվեցինք, վաղը երեկոյան գյուղ ենք գնում, Սոնային էլ ղգուշացրու...

Աշխենը նստել է արևահայաց նստարանին, և այստեղ էլ նրան անհանգստացնողը պլանների թերակատարման վտանգն է։ Ելք է փնտրում, դեռ չի գտել։ Գուցե դիմի գլխավոր ինժեներին և ժամկետի երկարացո՞ւմ խնդրի, գոնե տասնհինգ օրով։

թվայնացրել է 1915.info կայքը

Զարժե, ավելի ճիշտ՝ չի կարող։ Ա՛յ, եթե գլխավորը Հրանտ Ստեփանյանը լիներ...

Մեկ էլ իրեն մոտեցող մի ստվեր տեսավ։ Դեռ գլուխը չէր թեքել, երբ լսեց մի ծանոթ ձայն.

— Բարև ձեզ, Աշխեն Գուրգենովնա։

Հարությունն էր, և ժպտում է անքեն. ո՞վ սրա լեզվի տակ փափուկ բարձ դրեց։

— Բարև, վարպետ Հարություն։

— Լավ է, ուրեմն դեռ անունս չեք մոռացել։

— Դուք ձեր «քաղցր» խոսքերով այդ իրավունքն ինձ կա-ըո՞ղ էիք տալ։

— Հիշաչար մի եղեք, խնդրում եմ և եթե կարող եք, մոռացեք իմ անտակտությունը։

Հարությունը դեռ ոտքի վրա է և այնպես խաղաղ հայացքով է նայում Աշխենին։

— Նստի՛ր, Հարություն,— ինքն էլ չիմացավ, թե ինչպես դու-ով դիմեց նրան,— տեսնում եմ, որ դու այս անգամ ինձ հետ կռվելու մտադրություն չունես, և, չեմ թաքցնում, դա ինձ դուր է գալիս։

Հարությունը նստեց Աշխենի կողքին, ու ինքն իր մեջ զարմանքի կապերը հազիվ էր հավաքում.— այս աղջիկը հիմա ավելի սիրուն է, քան տարիներ առաջ էր, մի՞թե մայրանալուց էր։ Իսկ քե՞զ ինչ լավացել է նա թե՞ վատացել, դու մտքիդ տեսադաշտում քո Աշխենին պահիր միայն... դե՛, ես ոչինչ, հո չդավաճանեցի՞ իմ Աշխենին, պարզապես ուրախ եմ, որ տարիներ առաջ իմ հրապուրվելը այս Աշխենով այնքան էլ վատ չի խոսում իմ ճաշակի մասին...

Լռությունը շատ չերկարե՞ց։

— Ես անկեղծորեն ուրախ եմ, որ ձեզ առաջվա նման առողջ ու, կներեք, նաև գեղեցիկ եմ տեսնում։

Զարմանքից Աշխենի աչքերը ճակատին թռան, սա ի՞նչ է, լո՞ւրջ է խոսում, թե՞ ծիծաղում է իր վրա։ Բայց ոչ, Հարությունի հայացքի մեջ չարության հետքն անգամ չկա։ Հապա ինչի՞ կարելի է վերագրել այս արմատական շրջադարձը։

— Ես ինձ շատ եմ դատապարտել ձեզ կոպտելու համար, խնդրում եմ մեծահոգաբար ներեք։

Աշխենն զգում էր, որ դեմքը կարմրում է, և դա հաճույքի գիտակցումից էր։ Ուրեմն չար ու կոպիտ մարդ չէ այս Հարու-

թվայնացրել է 1915.info կայքը

թյունը. այն ժամանակ նրա մեջ ըմբոստացել և ափերից դուրս էր եկել վիրավորված սիրտը։ Հետո՞, ի՞նչ իրավունքով։ Միևնույն է, նրան ներել չի կարողանում։ Օ՜, վիրավորված ինքնասիրությանը ծնկի բերելը հեշտ գործ չէ։ Բայց և այնպես տղան պատասխանի է սպասում, և նրա մեղայականն էլ անկեղծ շեշտ ունի։

— Դե՛, ես համոզված եմ, որ քեզ համար մի առանձին նշանակություն չունի իմ ներել-չներելը։

— Ուրեմն չեք ներում և իրավունք ունեք։

— Աշխենն շտապեց տղային հանել անհարմար վիճակից։

— Դու չասացիր, թե ինչո՞ւ ես եկել մեզ մոտ և ո՞վ էր այն տղան, որի հետ քիչ առաջ խոսում էիր։

— Մորաքրոջս տղան է, Մուշեղը, ձեր նոր արտադրամասում է աշխատում։ Նշանվել է. հարսին առաջին անգամ գյուղ ենք տանում, մերոնց հետ ծանոթացնելու։

— Թող բախտավոր լինեն։

— Շնորհակալ եմ։ Հարսանիքին Հրանտ Արշակովիչն էլ է գալու կնոջ հետ։ Ձեր գլխավորը Մուշեղին շատ է հավանում։ Հարությունն ինքն էլ էր զարմացել իր վրա, այս մանրամասն հաշվետվությո՞ւնը ինչի համար է։ Իսկ Աշխենի մտքում ուրիշ հովեր էին թևածում.— նորից այդ Հրանտը, հասնում է բոլորի ուրախությանն ու տխրությանը, իսկական գլխավոր է նաև բարեկամական-ընկերական փոխհարաբերությունների մեջ, միայն...

— Այդ Մուշեղի մասին ես մի անգամ, եթե չեմ սխալվում, Սմբատ Ոսկանյանից շատ լավ կարծիք եմ լսել, այնպե՞ս էր գովում։

— Հենց դա է որ կա։ Մուշեղի արտադրամասի պետն է ու նաև՝ նրա հարսանիքի քավորը։

— Նույնիսկ քավո՞րը, այդ մեկը չգիտեի։ Իսկ Մուշեղն ինչպե՞ս եկավ մեր գործարանը։

— Քեռի Սամսոնի խնդրանքով Հրանտ Արշակովիչն ընդունեց, մի երեք տարի առաջ։

— Քեռի Սամսո՞նն ինչպես է, կբարևես, եթե դեռ չի մոռացել։

— Անպայման, Դե, ես գնացի, մնացեք խաղաղությամբ։ Այնուամենայնիվ ես կուզենայի, որ ինձ վատ չհիշեիք։

թվայնացրել է 1915.info կայքը

Աշխենը ոտքի կանգնեց ու ձեռքը մեկնեց տղային.

— Ծտեսության, Հարության, ես կաշխատեմ իմ հիշողության մեջ պահել միայն այն լավը, ինչ եղել է մեր միջև։

— Շնորհակալ եմ, Աշխեն, և բավարարված եմ դրանով։ Վաղուց չեմ հանդիպել տիկին Թամարին, խնդրում եմ բարևներս հաղորդեք նրան։

— Սիրով։

— Դե՛, մնացեք խաղաղությամբ։

Նվարդի համար օրն ասես տարի էր դարձել։ Այնպես դանդաղ էին անցնում ժամերը, իսկը՝ կրիայի քայլերով։ Սպասվող ժառանգը դեռ երեք ամսական է. ե՞րբ կհասնի նրա լույս աշխարհ գալու երջանկահիշատակ օրը։ Ինչո՞ւ այս ամիսներն ավելի դժվար են անցնում, քան համառ սպասումների այն տասից ավելի տարիները։ Եվ այդ՝ հաճախակի կրկնվող սրտխառնոցները, և խանգարված քունը, և, մանավանդ, ախորժակի սխուր բացակայությունը. ոչ մի կերպ սրանց առաջն առնել չի կարողանում։ Եվ նիհարում է օր-օրի վրա, ինչպես սարսափով արձանագրում է Լուսիկ մայրիկը։

— Աղջիկ ջան, դու պիտի իմանաս, որ առողջ հրեխան ծնվում է միայն առողջ մորից, քեզ կարգին պահիր, էդ ի՞նչ է քո կերածը, բա ամոթ չի՞։

— Ախորժակ չունեմ, մայրիկ, ի՞նչ անեմ, չի ստացվում։

— Ջոռով կեր, բա՛ն է գտել, չի ստացվում։ Իսկ օդով ապրելու ժամանակները դեռ չեն եկել։ Ախր դու հասկացող աղջիկ ես, մա՛տաղ քեզ...

Հիմա լավ է, դեռ աշխատանքի մեջ է, դնում է մինիստրության, օրվա մեջ մի քանի անգամ «ոտնաուտակ» է տալիս չորս հարկանի շենքը. բա որ արձակուրդը ձևակերպի ու նստի տա՛նը, անշարժությունից բոլորովին չի՞ «լճանա»։ Լավ է, Հրանտը պարտադրում է երեկոներն զբոսանքի դուրս գալ, մեկ-մեկ Սրշակին էլ են տանում. այնպես լավ է Կարապի լճի ափին։ Իսկ այն սպիտակ կարապն ինչքան մաքուր է ու սիրուն, հպարտ էլ կեցվածք ունի, իսկը իր սպասվող բալիկի նման...

Հուշիկ քայլերով ներս մտավ ցրիչը ու մի ծրար դրեց իր սեղանին։ Սարոյից է, ա՛յ, քեզ հաճելի անակնկալ։ Հետաքըր-

թվայնացրել է 1915.info կայքը

քիր է, որ Սարոն իր նամակները գրում է մինիստրության հաշվով, ինչո՞ւ, գուցե չի ուզում, որ այն Հրանտի ձե՞ռքն ընկնի, իսկ նա մի՞թե կասկածում է, որ միևնույն է, Հրանտը կարդում է դրանք։ Գոնե մի լավ նորություն լիներ այս նամակում, ժամկետից շուտ ազատվելու հույս. ի՞նչ հաճույքով ինքը կզանգահարեր Լուսիկ մայրիկին և «աչքալուսանք» կուզեր նրանից։

Իսկ նամա՞կը. երանի ստացած չլիներ։

«Մորաքույր Նվարդ, ձեզ նորից անհանգստացնում է կրաճ ու մոլորված Սարիբեկը. այնքան մոլորված, որ նրա իսկական կոչելը «հալալ գնի» նման մի բան կլիներ...

Ձեր նամակը վաղուց եմ ստացել. «երեսատեղ» չունեի պատասխանելու։ Դուք այնքան լավ բաներ եք գրում, այնքան սիրտ ու հոգի կա ձեր տողերում, ձեր ամեն մի խոսքի մեջ, որ ինձ նման մեկի համար պարզապես շռայլություն է թվում։ Այո, ես արժանի չեմ այդպիսի սրտացավ վերաբերմունքի, և ահա թե ինչու։ Դուք խորհուրդ եք տալիս, նույնիսկ համոզմունք եք հայտնում, որ, ինձ լավ պահելով, կարժանանամ ժամկետից շուտ ազատվելու բախտին։ Իսկ ես, դժբախտաբար, խելոք մտածում, անխելք բաներ եմ անում։ Խելքը չգիտեմ, բայց որ իմ այդ քայլի մեջ նամուսն իր բաժինն ունի, ես դրանում համոզված եմ։ Տխուր իրողությունն այն է, որ իմ կալանքի ժամկետին գումարվել է մեկ տարի ևս... Այստեղ իմ «ախպեր տղաների» մեջ մի վազգեն կա, խեղճուկրակ մի ջահել։ Ուսանող է եղել, չգիտեմ որ ինստիտուտում։ Երկրորդ կուրս է հասել. վատ ընկերների ազդեցության տակ ընկնելով, մի ոչ մեծ հիմարություն է կատարել։ Դատել են, մի տարի գործ տվել։ Հիմա մեզ հետ է։ Իսկ այստեղի ղոչիներին վազգենի նման «թրջված» մարդ է պետք, որ ձեռ առնեն, ծիծաղեն վրան, դրանից հաճույք են ստանում։ Անունը պրոֆեսոր են դրել։

— Մեկ էլ կլսես,— պրոֆեսոր, վազիր ջրի կամ քո բաժին շիլան ինձ տուր, քեզ վայել չի այդպիսի ճաշ ուտելը... Այս ողորմելի վազգենն էլ, վախենալուց, կատարում է սրանց կարգադրությունները, բայց նաև զգում եմ, թե հոգեկան ի՞նչ նվաստացում է ապրում տղան։ Մի անգամ էլ այդ ղոչիներից մեկը, անունը Սխտոր են դրել, պատկեց թախտի վրա, ոտքերը տնկեց վեր ու ասում է.

— Հարգելի պրոֆեսոր, բարի եղեք կոշիկներս հանել։

Վազգենս գույն տվեց, գույն առավ, բայց տեղից չշարժվեց,

թվայնացրել է 1915.info կայքը

ու խեղճացած չորս կողմն է նայում, երևի օգնություն է խընդրում։ Մեկ էլ էս Սխտորի աքացին ուժգին հարվածով իջավ վազգենի փորին.

— Շուն-շան որդի, ասում է, ինչպե՞ս ես համարձակվում իմ կարգադրությունը չկատարել։

Վազգենս գոնդուկծիկ թավալվեց գետնին։ Իսկ ես, էլ չեմ հիշում ինչպես, էս Սխտորին ձախ ձեռքով բարձրացրի թախտից ու աջ բունցքով նախշեցի սրա մռութը։ Կռիվ սկսվեց, մի իսկական տուրուդմփոց։ Իմ ստացած բաժինն էլ քիչ չէր։ Այդ պզվելի օրվանից հիշողության մեջ մնացել է առանձնապես մի փոքրիկ պահ— Վազգենը, չգիտեմ որտեղից ճարած մի փալասի կտորով սրբում է դեմքիս արյունն ու կամաց շշնջում.

— Ես քո ցավը տանեմ...

Այդ դեպքի համար նորից դատ եղավ. իմ լուծը, որպես կռիվ հրահրողի, մի տարով ծանրացրին։ Ուրեմն շուտ տուն գալու մասին խոսք լինել չի կարող։ Ով երևի դրա անհրաժեշտությունը չկա էլ, ի՞նչ տուն, եթե դեռ կարգին մարդ դառնալ չեմ կարողանում։ Ով վատն այն է, որ այս պատմության մեջ ես ինձ մեղադրել չեմ կարողանում։ Ճիշտ է, կռիվ եմ սարքել, բայց նպատակը չարին պատժելն է, չէ՞։ Մի բան լավ է, որ այդ սխտորահոտը վերացավ մեր կացարանից... Ուրիշ ի՞նչ գրեմ. ասեմ թե տրամադրությունս վատ չէ, համոզված եմ, չեք հավատա, և իրավացի կլինեք։ Ապրում եմ՝ իմ բաժին թթուն խմելով։ Միակ ուրախությունն ինձ համար ստացածս նամակներն են, դրանք էլ, ավա՜ղ, շատ քիչ են, հազվադեպ։ Մի ամիս առաջ նամակ ստացա իմ զորամասի տղաներից. Դմիտրին էր գրել՝ բոլորի անունից։ Մի նախադասություն թրի նման ցցվել է սրտիս մեջ, հանգիստ չի տալիս.— «Այդ ի՞նչ արևցիր, անխիղճ, բա մարդ էլ իր պատվո պարտքից կփախչի՞...»։ Ամեն օր համոզվում եմ, որ իսկապես անխելք ու անպետք մարդ եմ։ Հիմարաբար դավաճանեցի ծնողներիս, հարազատներիս (որոնց թվում առաջինը դուք եք) ընկերներիս։ Հայրենիք կոչվածն էլ դրանցով չի՞ պայմանավորվում, Գուցե դեռ ուշ չէ՞ խելքի գալու համար։ Վախենում եմ այդ մի տարվա լրացուցիչ բեռը բոլորովին համը հանի, ախր նոր «Սխտորի» հանդիպելու վտանգը վերացված չի կարելի համարել։ Մորս նամակը ինձ շատ է հուսահատեցնում. այնքան ախ ու վախ, այնքան արցունք կա մեջը, իսկապես որ փուչ զավակ եմ ես։ Բայց անիմաստ կուրծք

թվայնացրել է 1915.info կայքը

ծեծելն էլ մի բան չէ. դուցե դեռ գործով կկարողանամ ապացուցել, որ մայրս ինձ իզո՞ւր չէ լույս աշխարհ բերել։ Համենայնդեպս լավ կլիներ, որ մեկ-մեկ զանգահարեիք գյուղ, խոսեիք մորս հետ, սիրտ տայիք նրան։ Ահա իմ միակ խնդրանքը։ Դե, ուրիշ ի՛նչ գրեմ։ Այստեղ ամեն տեսակ մարդ էլ կա և լավ է, որ լավերն էլ քիչ չեն։ Սա մի իսկական խառնարան է, լաբիրինթոս, պիտի կարողանաս ճիշտ կողմնորոշվել, այլապես կկորցնես ելքի դուռը։ Ես էլ աշխատում եմ, մտածում եմ այդ ուղղությամբ, ծանրութեթև եմ անում. տեսնենք, փրկության դուռը գտնելու հույսս չեմ կորցրել...

Դե՛, մնացեք խաղաղությամբ։ Խնդրում եմ բարևներս հղղորդեք Լուսիկ մայրիկին, Հրանտ քեռուն, ձեր լավ բալիկ մեծն Արշակին։

Ձեզ հարգող, ձեզ մոտ սևերես՝ Սարիբեկ»։

Ինչո՛ւ է նվարդն իրեն այսքան վատ զգում, հոգնած է, ծեծվածի նման, միայն մարմինը չէ, հոգին է նվում։ Ինչո՛ւ և ուրախ է նամակի համար, և միաժամանակ գոհ կլիներ, եթե այն ստացված չլիներ։ Սխատրահո՞ն է այդքան տհաճ, թե՝ մի տարվա անսպասելի հավելումը իր սրտի վրա էլ ծանրացավ։ Իսկ ինքն ուզում էր ուրախացնել Լուսիկ մայրիկին, կամ Սարոյի մորը զանգի, ի՞նչ ասի, ինչպե՞ս միխիթարի, ախր սիրտ տալու համար էլ սիրտ է պետք։

33.

Բարակ անձրև է մաղում, անձրև չէ, ասես անձրևափոշի է։ Ամպամած չնչի նման իջնում է տանիքներին, մայթերին, մարդկանց ուսերին։ Ու դրանից չեն նեղվում աշխատանքի շտապողները, ընդհակառակը, մի հաճելի զովություն են զգում։ Անձրևն այնքան աննշան ու խնամքով է մաղվում, որ կանայք անհրաժեշտ չեն համարում հովանոցները բացելու։ Միայն սովորականից փոքր-ինչ արագ են քայլում. այնուամենայնիվ անձրևը կարող է և ոգևորվել ու ավելորդ շռայլություն թույլ տալ։ Իսկ Աշխենն շտապելու կարիք չունի, նա գործարան կհասնի մի տասը րոպե էլ շուտ։ Այս երբահյուս անձրևն այնպես հաճելի է. անհարմար չզգար և ժամանակ ուննար, մի կողմ կքաշվեր ու կկանգներ երկար, թող հովացնի այրվող ճակատը։ Իսկ սրտի հովության համա՞ր ինչ է պետք։ Այնպես վատ քնեց գիշերը,

թվայնացրել է 1915.info կայքը

ու ինչքան խաղը երազներ այցելեցին նրան. վիսատ-պռատ, մնկը մյուսին հակասող։ Համեմատաբար կայունն ու հիշողության մեջ մնացածը մի կարճ հատված է, մեղավոր երազի մի բեկոր։ Ինչ-որ անտառում են Հրանտի հետ, մի հսկայական կաղնու փշակում։ Նեղվածք է, ազատ շարժվել չեն կարող և տեղավորվելու համար իրար գրկել են, դարձել մի մարմին։ Ու համբուրվում են կարոտով։ Արթնացավ խենթ հաճույքից։ Իր բաժին Հրանտը միայն երազին է բաժին մնացել. դաժա՜ն աշխարհ... Քունն այլևս մոտ չեկավ նրա աչքին։ Առավոտյան դժվարությամբ լքեց անկողինը. գլուխը նվում էր մի բութ ցավից։ Ու հիմա անձրևն իջնում է նրա այրվող ճակատին՝ հովություն պարգևող սպեղանու նման։

Գործարանի դարպասներից ներս անցավ։ Լաբորատորիան բակի մյուս ծայրին է։ Կարո՞ղ է այստեղ Հրանտին պատահել. նա սովորություն ունի առավոտները բակում շրջելու, կոնկրետ ու շտապ հանձնարարություններ տալու։ Իսկ դու ինչ է, հանձնարարությա՞ն ես սպասում, թե՞ գիշերվա երազի շարունակությունն է քեզ հուզում... Ինչքան փորձում է մոռանալ, ջնջել նրան իր «սրտի դավթարից», չի ստացվում։ Այս ի՞նչ երկակցաց հիվանդություն է։ Իսկ դուցե քո մեջ առողջը հենց միայն դա՞ է, ի՞նչ իրավունքով ես նրան հիվանդանոց ուղարկում։ Ախ, այդ իրավազուրկ իրավունքը, որի ձայնին ոչ ունկընդիր լինել կարող ես, ոչ «ձայնը կտրելու» պահանջդ է իրավական ուժ ստանում...

Դիմացից Անթառամ Քամալովնան է գալիս. իսկապես որ Թող «չարը խափանվի»։ Դեռ հեռվից ժպիտ տեսավ նրա դեմքին։ Հետո էլ լսից մի առույգ ձայն.

— Բարև ձեզ, գեղեցկուհի Աշխեն Գուրգենովնա։

Այս ինչ է, ուսող-խմողների առավոտյան մի բաժակ օղի՞ն է, որ իրեն մատուցվում է Անթառամի ձեռքով։

Չպատասխանեց, կարողացավ ձևն տալ։ Ու լուռ անցավ նրա կողքով։ Մեկ էլ թիկունքից լսեց Անթառամի ձայնը.

— Համենայնդեպս ես ձեզ վիրավորելու միտք չունեի։

Անցան, հեռանում են իրարից։ Մնում է մոռանալ այդ հաբի պառնահամ աղդեցությունը։ Ո՞չ, Անթառամի մոտ ավելի շատ անթառամ է անսպառ չարությունը։

Ահա և Հրանտ Ստեփանյանը, միայն հեռու է իրենից. Սրմբատի և էլի մեկի հետ կանգնած խոսում էր։ Լավ է, իրեն չի

թվայնացրել է 1915.info կայքը

տևանում, մեջքով է կանգնած, իսկ ինչո՞ւ է լավ, մի՞թե նրան բարևել չէիր ուզենա։ Ախր օրվա մեջ քեզ քանի անգամ խնդրամատ է անում նրան տեսնելու ցանկությունը. ի՞նչ վատ է, աշխատանքային օրդ սկսիր նրա տեսությամբ, վերջիվերջո ա՛յդ է քո մխիթարանքի միակ բաժինը։ Մինչև ե՞րբ։ Մինչև քո օրերի վերջը։ Այդ աստիճան էլ դաժանությո՞ւն։ Ուրիշ ելք չկա, փակված են փրկության բոլոր դռները։ Գոնե հանուն Գուրգենի, ախր նա մենակ է մեծանում և, հավանաբար, ինքը երես է տալիս նրան։ Վերջերս եսասիրության ու կամակորության առանձին դրսևորումներ է նկատում նրա մոտ։ Հիշում է, մայրն ասում էր՝ մի երեխայով տունը ինչ տուն է. եղբայրը քույր, քույրը եղբայր պիտի ունենա։ Ի՞նչ անի, գնա Հրանտի մոտ և ասի՝ տղային համար քույրիկ եմ ուզում, օգնի՞ր... Մի՞թե իսկապես փակ են երջանկության բոլոր դռները. ախր ինքն է, մեղք է, ի՞նչ է տեսել, կամ ի՞նչ է տանելու այս աշխարհից. Տանելու բան չկա, իհարկե, ամեն ինչ մնում է ապրողներին։ Իսկ ինքն ինչով ու ինչպե՞ս է ապրում, դա ի՞նչ ապրել է։ Ինչո՞ւ այսպես դաժանվրվեց կյանքը, որտեղի՞ց եկավ ու իր կյանքի խաչմերուկում կանգնեց այդ Հրանտը. հիմա ինքը մոլորվա՞ չգիտի ո՞ր կողմի վրա քայլի, ո՞ր ճանապարհին հյուսի իր օրերի շղթան։ Այդպես տարիներ շարունակ կանգնել է իր դիմաց, և միշտ՝ թիկունքով, ու իրեն միայն տեղում դուխել է թույլատրել... Մի օրվա, ո՞չ, մի ժամվա կյանք միայն։ Իսկ դա կյա՞նք է թե՞ հաճույք։ Դե, հաճույքից զուրկ կյանքն այնքան տխուր է։ Տարիներն անցնում են, ճակատին արդեն կնճիռների տխուր սովերներ են հայտնաբերվել, մազերին էլ հրևի շուտով եղյամ կնստի։ Հետո՞։ Այնքան անորոշ է այդ հետոն։

Առավոտվանից տխուր ամպ է նստել Աշխենի տրամադրության վրա, չգիտի դա Անթառամի «Գեղեցկուհու» ջանքերո՞վ, թե՞ Հրանտի թիկունքով կանգնելու համառությունից է...

Լաբորատորիայում էլ մի տեսակ տխուր է, և ցուրտ է կարծես. իսկ ջերմաչափի սյաքը կանգնել է քսաներկուսի վրա։ Ուրեմն հոգին է մրսում և տաքացնելու ոչ մի հեռանկար, ոչ մի հույս։ Փորձեր եղել են, իհարկե, ինքը չի ընդունել. ուրիշի վառարանի մոտ տաքանալու և ոչ մի հույս։ Ռուբենն իսկապես որ վատ մարդ չէր, բայց ինքը նրա հետ նույն սովով գնացող ջուր չուներ։ Ավ ամուսնացել է, ասում են։ Թող բախտավոր լինի։ Անատոլի՞ն ինչպես, կարող է փոշմանո՞ւմ ես։

թվայնացրել է 1915.info կայքը

Ամեննին. նույնիսկ պարմանում է, որ մի պահ թուլացել էր, հարցի դրական լուծման հեռանկար էր տեսնում՝ լավ էր, ժամանակին ամեն ինչ իր տեղը գտավ. պատահական ուշացումը մեկի կողմից և ավելորդ շտապողականությունը մյուսի մոտ, հավանաբար, ավելի խելոք գտնվեցին։ Տեսնես ինչպե՞ս է Անատոլին, կարգին ընտանիք կարողացա՞վ կազմել։ Թող նա էլ իր նատաշայի հետ բախտավոր լինի, ինչպես հանգուցյալ մայրը կասեր։ Ուրիշներն էլ են եղել, իհարկե, իր ոչ երկար կյանքում. ոչ մեկին աոիթ չի տվել՝ ուսանողական տարիների Սերգեյից բացի, նա էլ դավաճան դուրս եկավ։ Այսպես ապրում է անընկեր։ Եվ ո՞ւմն է պետք այդ ավելորդ ժլատությունը։ Իսկ եթե առատաձեռն լինելու շնորհ չունի՞...

Հեռախոսի զանգը կտրեց մտորումների թելը, և նա դժվարությամբ վերցրեց լսափողը։

— Բարև, Աշխեն, Երվանդն է, եթե դեռ չես մոռացել։

— Խելոք կասկած է, Երվանդ, այնքան ուշ-ուշ ես երևում, որ մեծանում է մոռանալու վտանգը։

— Որպեսզի այդ վտանգը համարձակություն չունենա ավելի մեծանալու, առաջարկում եմ այսօր հանդիպել։

— Համաձայն եմ, որտե՞ղ։

— Երբի և որտեղի իրավունքը քոնն է։

— Ես ժամը յոթին Գուրգենիս հետ կլինեմ մեր ծանոթ այգում, հարմա՞ր է։

— Միանգամայն։

Հիմա նստած են ծառաշատ այգու ծանոթ նստարանին։ Ու լուռ են։ Այս էլ նոր բան է. զրույցի կծիկը քանդվել, ծայրը ծայրին չի գալիս։ Գուցե Գուրգենի ներկայությո՞ւնն է խանգարում։ Դժվար թե, մանավանդ նա իրենց մոտ չի էլ մնում, հեծանվով շափչփում է ծառուղին։

— Այսօր քեզ ի՞նչ է պատահել, Երվանդ, խոովածի նման ես։

— Դու կարծում ես՝ ես հասկանո՞ւմ եմ։

— Գուցե ծտերի ծլվլոց չկա, դրանի՞ց ես չխոսկան դարձել։

— Չէ, ինչո՞ւ, մի որբ ծտի ձայն, այնուամենայնիվ, լսվում է. և զգո՞ւմ ես՝ թե այդ ձայնն ինչքան տխուր է, մայրս կասեր՝ կտրվի մենակ մարդու օրը...

— Այո՛, ես իսկապես որ մեղավոր եմ, չկարողացա մի կարգին աղջիկ ճարել քեզ համար, անշնորհք քույր։

թվայնացրել է 1915.info կայքը

— Պետք չէ, Աշխեն, ինքդ էլ գիտես, որ այն չես ասում ինչ պետք է։

— Իսկ եթե չգիտեմ, թե որն է պետքականը։

— Ավելի վատ ինձ համար։

Երվանդի շնչառությունը նոր արագություն վերցրեց. ականջներն էլ սկսեցին այրվել, ու նա Աշխենի կողմը նայել չի կարողանում։

Գուրգենի հեծանիվը խարխափ նետեց մոր ոտքերի մոտ։

— Մա՛մ, թող հեծանիվս մնա, ես մի քիչ էլ ոտքով կգամ։

— Միայն հեռու չգնաս, խնդրում եմ։

— Լավ, մա՛մ,— հետո դարձավ Երվանդին ու լուրջ-լուրջ հարցնում է,— քեռի Երվանդ, այսօր ինչո՞ւ այդքան տխուր ես,— ու պոկվեց տեղից՝ առանց պատասխանի սպասելու։

Հանկարծ անհանգստացավ նաև Աշխենը։

— Իսկապես, այսօր քեզ ի՞նչ է պատահել, հո վատ չե՞ս զգում։

— Վատ եմ զգում, հատկապես քո ներկայությամբ.— Երվանդի ձայնի մեջ և բողոք կա, և ափսոսանք։

Աշխենը զարմացած նրան է նայում։

— Գիտեի, որ իմ ներկայությունը կարող է քեզ այդքան տհաճություն պատճառել։

— Նորից այն չես ասում, Աշխեն, ինչ պետք է։

— Գուցե դո՞ւ կասեիր պետքականի մասին։

— Աշխեն, վերջապես մի անգամ մենք լուրջ պիտի խոսե՞նք թե չէ։

— Իսկ մինչև հիմա մենք այդքան անլո՞ւրջ էինք,— Աշխենը փորձում էր խոսքին կատակի երանգ տալ։

— Մի շեղիր, խնդրում եմ, հազիվ եմ դժվար խոսքի տուտը բռնել։ Դու անընդհատ քեզ մեղավոր ես զգում, որ ինձ համար չես կարողանում ընկերուհի ճարել, իսկ քո մտքով գոնե մի անգամ չի՞ անցել, որ այդ փնտրած ընկերուհին հենց դու ես որ կաս։

Հիմա էլ մոլորվեց Աշխենի շնչառությունը։

— Երվանդ, դու ինձ քո՞ւյր ես կոչել։

— Ես խոնարհաբար խնդրում եմ ինձ ազատել եղբոր շատ շնորհակալ, բայց այս դեպքում կաշկանդող պարտականություններից։

թվայնացրել է 1915.info կայքը

— Երվա՜նդ։— Աշխենի ձայնի մեջ մի այնպիսի թախանձանք կար։

— Լուի՛ր, խնդրում եմ, հիմա պետք չէ պատասխանել։

Այգու այդ հատվածի վրա ծանրացավ մի ճնշող լուություն։ Գուրգենը հոգնած ու քրտնած մոտ վազեց ու փլվեց երկուսի միջտեղը։ Ինչ էլ ժամանակին էր։ Մայրը պայուսակից հանեց թաշկինակը ու սկսեց սրբել տղայի ճակատը, ծոծրակը։

— Բալիկս, բա այսպես կարելի՞ է քրտնել։

— Ոչի՛նչ, մա՛մ, կանցնի։ Մի լավ տղա կար, մխասին վազվզինք. այնպես լա՜վ էր։ Նա՛ էլ է այս տարի դպրոց գնալու, միայն աիտոս, նրա դպրոցն ուրիշ է։ Ով գիտե՞ս, մա՛մ, նա արդեն դասագրքեր ունի, հայրն է ճարել։

— Դպրոցում դու կստանաս բոլոր դասագրքերը, ինչո՞ւ ես անհանգստանում։

— Է՛, ով գիտի երբ են տալու։

— Ես քո դասագրքերը կբերեմ, Գուրգեն։

— Ե՞րբ, քեռի Երվանդ։

— Այս երկու օրը։

— Ջա՜ն, ինչ լավ է։ Քեռի Երվանդ, դու այնքան լավ քեռի ես։

Երեխան փաթաթվեց Երվանդի վզով, համբուրեց նրա այտը ու նորից վազեց դեպի հեռվում սպասող իր ընկերը։

Երվանդն շտապ ծխախոտ վառեց ու փորձում էր ծխախեղդ անել իր հոգին ալեկոծող հուզմունքը։ Իսկ Աշխենի կոկորդում լավել-մնացել էր մի բռնցքաչափ խցան, որը ոչ միայն խոսել, այլ ազատ շնչել անգամ չէր թողնում։ «Նոր դասագրքերը հայրն է ճարել». մտքում թևին տվեց Գուրգենի հենց նոր ասած խոսքը։ Հնար լիներ նախ հայր ճարել նրա համար։ Իսկ հայրը լինո՞ւմ է, թե՞ ճարում են։ Ով երեխ ճարողն էլ անճարա՞կ է...

34.

Խորհրդակցությունը կարճ տևեց, տասը րոպեից էլ պակաս։ Մասնակիցներն էլ շատ չէին, արտադրամասի պետեր, մի քանի վարպետ, լաբորատորիայի վարիչ, կուսկազմակերպության քարտուղար ու արհկոմի նախագահ։ Կարճ էր նաև գլխավոր ինժեների խոսքը։

— Այս թռուցիկ հավաքի հաճելի շարժառիթը մեր «Ե—10—Կ»

թվայնացրել է 1915.info կայքը

հաստոցի՝ սերիական թողարկման թույլտվությունից հետո որականիշի ստացումն է։

Հրանտ Ստեփանյանը, ինքն էլ չէր հասկանում, թե ինչու իր խոսքի մեջ հուզմունքի ջերմաստիճանը չափից ավելի բարձր է։ Գուցե պատճառը իր կրկնակի «մեղավոր» լինե՞լն է. գլխավոր ինժեների պարտականությունից բացի նա իր ուսերի վրա նաև հեղինակներից մեկի հաճելի բեռն է կրում։

— Այո, ընկերներ, պաշտոնապես ստացել ենք նոր հաստոցի որականիշի հաստատումը. գործարանի դիրեկտորի (գիտեք, նա գործուղման մեջ է), կուսկազմակերպության և արհկոմի անունից շնորհավորում եմ ձեզ, բոլորիս՝ այս լուրջ հաղթանակի առիթով։ Սա իսկապես որ մեր և Կույբիշևի եղբայր գործարանի նոր ու մեծ նվաճումն է։ Հաճույքով հայտնում եմ նաև, որ Կույբիշևի մեր ընկերներից ստացվել է շնորհավորական հեռագիր, որին մենք կպատասխանենք նույնպիսի ջերմությամբ։ Մեզ մնում է և պլանների կատարումն ապահովել, և թերացումներ թույլ չտալ որակի հարցում։ Հաջողություն եմ ցանկանում։ Ազատ եք։ Բնակելի շենքի կառուցման հարցով կանչված ընկերներին խնդրում եմ մնալ։

Աշխենը Սմբատի կողքին էր նստած և հարմար պահի էր սպասում նրա հետ ղրուցելու։ Ոտքի կանգնեց ու ասաց.

— Սմբատ, ես քեզ հետ խոսելիք ունեմ։

— Պետք է մասնակցեմ նաև երկրորդ հարցի քննարկմանը, Աշխեն. ես հետո կգամ քեզ մոտ։

Աշխենը շտապ դուրս եկավ գլխավոր ինժեների առանձնասենյակից ու քայլեց դեպի լաբորատորիա։ Գնում էր ու մտածում ափսոսանքով.— Ինչո՞ւ Հրանտն իրեն էլ մասնակից չի արել այդ կենսական հարցի լուծմանը։ Բնակելի մեծ շենք են կառուցելու բանվոր-ծառայողների համար. հանձնաժողով են կազմել, այդ գործի ընթացքին պիտի հետևեն։ Ինչ է, ինքը վա՞տ կաշխատեր։ Թե՞ Հրանտը դիտմամբ է իրեն «մոռացել», որ առիթ չլիներ հաճախակի հանդիպելու։ Գուցե իրավացին նա՞ է։ Իսկապես, ավելի ճիշտ չի՞ լինի վերջ տալ նույնիսկ պատահական հանդիպումներին։ Այնուամենայնիվ, իրենց ծանոթության «մեղքը» ծանրանում է մուր-մանկապարտեզի շինարարության հետևող հանձնաժողովի ուսերին, որի քարտուղարն ինքն էր, ոչ բարուվ։ Ո՛չ, հենց բարուվ-խերով ինքն էր, մի՞թե այդ ծանոթության արմատների սուրբ ծնունդը չէ իր Գուրգենը..

թվայնացրել է 1915.info կայքը

Իսկ գլխավոր ինժեների աշխատասենյակում աշխատանքի բաժանում են կատարում, կոնկրետ ժամանակներ են սահմանում։

— Հրանտ Արշակովիչ, ինձ առանձնապես հետաքրքրում է շինարարների հարցը, ո՞ր տրեստն է կառուցելու, ո՞ւմ հետ պիտի գործ ունենանք.

— Ես հասկանում եմ քո հարցի իմաստը, վարպետ Սմբատ. քեզ նման ես էլ հույս ունեի, թե նորից մեր հավատարիմ դաշնակիցը կդառնա վարպետ Սամսոնը։ Ցատացվեց, դժբախտաբար, նրա տրեստը գործ չունի քնակարանային շինարարության հետ։ Բայց ոչինչ, ամեն տեղ էլ մի քեռի Սամսոն կճարվի· աշխարհում, փառք աստծո, լավ մարդու սով չկա։

— Ես վախենում եմ դրան էլ հասնենք,— խոսակցությանը միջամտեց արհկոմի նորընտիր նախագահ Սուրենյանը.— Հանգուցյալ հայրս ասում էր՝ բա առաջվա մարդիկ էսպե՞ս էին. չէ, մարդկայնությունը սև աղվես է դառնում, դժվար է բռնելը։

— Իսկ մեր արևմտահայ բարեկամները կասեին՝ ով, ով, բայց արհկոմի նախագահը «լավատես ըլլալու է»։

— Միանգամայն ճիշտ պահանջ։ Սմբատ, պլանավորման և նախագծերի հաստատման հարցերով դու ես զբաղվում։

— Վաղը ես կլինեմ պետպլանում և նախագծային ինստիտուտում, արդյունքների մասին ձեզ կհայտնեմ։

— Այսպես, ես համոզված եմ, որ երկու տարի հետո մենք պատրաստի կունենանք յոթանասուներկու բնակարան, ընկեր Սուրենյան, խնդրում եմ ճշտել նախնական ցուցակները։

— Լավ բան է, արևս վկա, միանգամից լուծվելու է յոթանասուներկու ընտանիքի բնակարանային հարցը. դա իսկապես որ մեծ գործ է, և մենք ջանք ու եռանդ չպիտի խնայենք այդ մարդկանց ուրախության օրը հնարավորին չափ մոտեցնելու համար։

— Սմբատ Ոսկանյանի այս բարի ցանկությամբ էլ եզրափակենք մեր խոսքը։ Շնորհակալություն։

Հիմա Հրանտ Ստեփանյանը մենակ է իր աշխատասենյակում։ Ինչպես քարտուղարուհի Ամալյան է ասում՝ թեյի ժամ է՝ տաս րոպե տևողությամբ։ Ով ասես իր մտքի աչքերով տեսնում է բնակարանամուտի աշխույժ հոգսերով տարված բանվոր-ծառայողների աչքերի ուրախ փայլատակումը։ Ով տեղն են հաջող ընտրել՝ գործարանից ոչ շատ հեռու խոպան մի հողակտոր, իրացման հոգսեր էլ չկան, ա՛յս է լավը։ Բնակարան ստացող-

թվայնացրել է 1915.info կայքը

Ներքի ցուցակում անպայման կլինեն Բաբկեն Սիմոնյանը. նրա հարցը վաղուց պիտի լուծվեր, Մուշեղը, Սմբատը քանի անգամ խոսել է այդ մասին։ Սպասիր, սպասիր, իսկ Սմբատի հո՞րցն ինչպես. չորս հոգով մի սենյակում։ Կարելի է նրա բնակարանը տալ Մուշեղին, իսկ Սմբատին տրամադրել... Տեսնենք, դեռ մտածելու, ծանր ու թեթև անելու ժամանակ կա։ Այսօր Աշխենը շատ էր տխուր ու անտրամադիր. տեսնես լուրջ պատճառ կա՞։ Միայն թե երեխան հիվանդ չլինի։ Իսկ նրա կյանքում երեխայից դուրս քեզ ուրիշ ոչինչ չի՞ հետաքրքրում։ Դե, ինչու չէ, նա էլ մեղք է, ինչքա՞ն կարելի է մենակ մնալ։ Է՛, թող ընկեր ճարի, ամուսնանա, մի՞թե ինքը խանգարում է նրան։ Իսկ խանգարել չէ, ի՞նչ զահրումար է, կանգնել ես նրա ճանապարհին, ինչպես շունը խոտի վրա, ոչ ինքդ ես վայելում, ոչ ուրիշին ես թողնում։ Իսկ Աշխենի գեղեցկությունն արդեն նման է ծառի վրա հասած ծիրանի, եթե ժամանակին չքաղես, կամ կթափվի ու հարվածի ուժից քերծվածքներ ստացած կընկնի գետնին, կամ ծառի վրա կամքի-կչորանա, լավագույն դեպքում ծտերի կեր կդառնա։ Այդպիսի բախտի է արժանանում անտերության մատնված ծառը, այստեղ նաև անպակաս են քարկոծողները... իսկ Նվարդի ազատվելու ժամանակն արդեն մոտենում է, այս քանի օրը արձակուրդ կձևակերպի։ Մեծին՝ առաջին անգամ դպրոց, փոքրի լույս աշխարհ գալու անվտանգությունն ապահովելու համար՝ ծննդատուն։ Եվ ուրախությունն իրենց տան շեմին կկանգնի զույգ ոտքի վրա, լիարժեք ու լիաբերան։ Միայն ափսոս որ մայրն սկսել է իր դիրքերը զիջել, նկատելի տկարացել է, օրվա կեսը պառկած է լինում, և, միևնույն է, անհամբեր սպասում է նոր թոռան ժամանելուն, օրվա մեջ քանի անգամ մատաղ է լինում նրա անցնելիք ճամփին... Իսկ Աշխենը շարունակում է մենակ մնալ, և որքան մե՛ծ է մեղքի իր բաժինը։

Այդ մեղքին տեր կանգնել չես կարող, ոչ էլ հետու օրերում իսկ այդ մեղքը քավելու հնարավորություն ես տեսնում, ա՛յս է սարսափելին, այդ անկարողության ու անճարակության ճիրաններում տառապելը։ Ինչքան ժամանակ է չի տեսել իր տղային։ Մի անգամ որոշեց մանկապարտեզ գնալ, իբր թե գործերի վիճակին ծանոթանալ է ուզում, գլխավոր ինժեների իրավունքով ու պարտավորությամբ։ Հույս չուներ թե կճանաչի Գուրգենին։ Զգնաց։ Բոլոր դեպքերում պետք է խոսել Աշխենի հետ, խորհուրդ տալ, որ նա ամուսնանա, նրա այդ անորոշ վիճակը ծանր

թվայնացրել է 1915.info կայքը

քարի նման նատած է նաև իր արտի վրա։ Իսկ ո՞ւմ հետ ամուսնանա, կամ քո ինչ գործն է, քո՞ւյր ես ամուսնացնում, թե՞ սիրուհի, գրո՞ղը տանի...

35.

Նոր անակնկալ, այս անգամ էլ կապված Անատոլիի հետ։ Նրանից նամակ ստանալու հույսը վաղուց էր կորցրել. ոչ դրա անհրաժեշտությունը կար, ոչ էլ ինքը սպասում էր, թեկուզ երկուղի՝ ինչ պիտի գրի և ի՞նչ կարիք կա. նա արդեն իր ընտանիքն ունի, իր Նատաշան. գուցե նաև երեխայի լա՞ցն է թևածում նրանց հարկի տակ։ Հազիվ է ազատվել քո անորոշ ու անգութ մերժումներից· ինչո՞ւ գրի։ Նա այլևս խոսելիք չունի քեզ հետ, ձեր ճանապարհները շեղվեցին ու գնում են հակառակ կողմերի վրա։ Վերջին խոսքը քոնն էր. ժամանակին շնորհավորե՞լ ես հեռագրով, լավ է, մարդկային է ու ընկերական. վերջ, էլ ի՞նչ պատասխան։ Բայց ահա իր ձեռքին է Անատոլիի նոր նամակը, և սա պատասխան չէ, այլ ասես նախկինում գրած նամակների շարունակությունն է, միայն ոգին արդեն այն չէ, և տրամադրությունն է ուրիշ։

«Աշխեն Գուրգենովնա, քեզ նորից անհանգստացնում է քո ոչ շատ հին և, հույս ունեմ, դեռևս վերջնականապես չմոռացված ընկեր Անատոլին։ Ջերմորեն բարևում եմ քեզ, սեղմում եմ քո ձեռքը, համբուրում եմ Անատոլիի որդի Գուրգենին... Զգիտեմ, կհավատա՞ս, և, մանավանդ, հարմա՞ր է ասել, որ ձեզ շատ եմ կարոտել։ Զարմանալի տարընթացություններ ու տեղատվություններ ունի կյանքը։ Բավարար չափով քո ուշադրությանն արժանանալ չկարողացա, դժբախտաբար, և դա ինձ ստիպեց վճռական քայլերի դիմել։ Ներիր, մի տեսակ վրեժ լուծել էի ուզում. ումի՞ց։ Գնալով համոզվում եմ, որ իմ հապճեպ որոշման հիմքում ավելի շատ անխելքություն կար, քան... Հիմա էլ դու իրավունք ունես ասելու, թե այս անխելք խոստովանությո՞ւնն ինչի համար է։ Հոգու թեթևության, ուրիշ բան չկա։ Եղածը եղել է և բոլոր սխալները չէ, որ հնարավոր է ուղղել. մանավանդ երբ ուղղելու իրավունքը քեզ չի վերապահվում միայն։

Ինչպես արդեն գիտես՝ կին ունեմ. երեխայի ենք սպասում։ Լավ աղջիկ է Նատաշան, և՛ արտաքինով, և՛ բնավորությամբ,

թվայնացրել է 1915.info կայքը

և՛ մեծի նկատմամբ ունեցած հարգանքով։ Նրա և ծնողներիս ջուրն էլ մարմանդ հոսում է մի աովով, և դա ինձ շատ է ուրա֊խացնում։ Միասին ենք գնում աշխատանքի, միասին՝ տուն գալիս։ Ուզում եմ ասել՝ գիշեր-ցերեկ իրարից անբաժան ենք։ Վեճն ու դժգոհությունը բացառիկ հյուր են մեր տանը, կարծես թե իրար վատ չենք հասկանում։ Նատաշայի մայրն էլ լավ կին է. հայրը երկու տարի առաջ է մահացել։ Շատ լուրջ եղբայր ունի, երիտասարդ դիտնական է։ Մի խոսքով արտաքին և ներ-քին հանգամանքների տեսակետից ամեն ինչ կարգին է, տեղը-տեղին։ Բայց և այնպես հոգեկան բավարարվածության նկա-տելի պակաս կա, ա՛յս է տխուր իրողությունը։ Մեր միջև տար-բերությունն ավելի շատ է, քան միացնող կապը։ Ինչպե՞ս ասեմ, որ ինձ ճիշտ հասկանաս, հոգեհարազատության սուլ կա, իսկ այդ քաղցը հագեցնելու՝ ոչ մի հույս։ Անհարմար չէինի ասելը՝ մենք իրար հասկանում էինք կես խոսքից, միայն մինչև վերջ հասկանալ չկարողացանք, իսկ հիմա երբեմն լրիվ խոսքն էլ չի օգնում։ Ով ձգողական ուժի պակաս կա, այս է սարսափելին։ Այն աստիճան, որ երբ գործուղման են ուղարկում, ափսոսում եմ, օրերը շուտ անցան, մոտենում է տուն դառնալու, ուրեմն և՝ հանդիպման անխուսափելիությունը։ Սխր անպիտանն իս-կապես որ լավ մարդ է, անխղճություն կլինի նրան նեղացնելը, բանականության պահանջն է այս, իսկ զգացմունքներս այլ կարծիքի են, այլ ցանկություններ են առաջադրում։ Ինչքա՞ն կշարունակվի այս վիճակը, չգիտեմ, գուցե սպասվող երեխան անհրաժեշտ բեկո՞ւմ կմտցնի մեր հազիվ պեծ-պեծին տվող հա-րաբերությունների մեջ, նորից չգիտեմ։ Մի անգամ, երեկոյան նստել էինք տանը միասին, բայց և օտարի նման, կինս ասաց.— Ես ցավով նկատում եմ, որ դու ինձ չես սիրում. ինչո՞վ եմ մե-ղավոր քո առաջ։ Ես համոզված եմ, ասում է, որ Աշխենի հետ (ես պատմել եմ, գիտի) դու քեզ այսպես մենակ չէիր զգա։ Ի՞նչ պիտի լինի սրա վերջը, չգիտեմ... Այնպես մե՞ղք էր։ Ջարձագան-քեցի, ոչ հաստատել կարող էի, ոչ՝ ժխտել։ Ջասես թե ո՞ւմն է պետք այս ուշացած կուրծք ծեծելը։ Գիտեմ, դատարկ կրակոց է, և, ինչպես ընդունված է ասել, հոգու մխիթարության համար է։ Ք֊ո առաջ այսպես անմնացորդ բացում եմ սիրտս՝ աշխատե-լով քեզ դնել քրոջ տեղ։ Ավա՜ղ, դաժան քույր... վերջերս լսել եմ մի իրական պատմություն.— Երիտասարդ տղան ու աղջիկը սիրում են իրար, ամուսնության են նախապատրաստվում։ Սա-

թվայնացրել է 1915.info կայքը

կայն պատերազմը սև հրեշի նման ցցվում է նրանց ճանապարհին։ Տղան մեկնում է ռազմաճակատ։ Նրանց սերն սկսում է իր արտացոլումը գտնել գնացող-եկող նամակներում։ Որոշ ժամանակ անց ընդհատվում է տղայի նամակը։ Աղջիկն սպասում է հույսով ու կարոտով։ Երկու տարի հետո ստացվում է տղայի մահվան թուղթը։ Միևնույն է, աղջիկը շարունակում է սպասել։ Վերջանում է պատերազմը։ Տարիներ հետո միայն աղջիկը կարողանում է ամուսնանալ և ընտանիք կազմել։ Մեկը մյուսի նոսից երեք աղջիկ են ծնվում, ուրախությամբ լցնում ծնողների սիրտը։ Բայց ընտանիքի հայրը հիվանդանում է ծանր ու անհույս կինն արտակարգ նվիրումով խնամում է նրան։ Ու միևնույն է, իր առաջին սերը մոռանալ չի կարողանում։ Մահանում է ամուսինը։ Մայրը մեծ դժվարությամբ ամուսնացնում է իր երկու աղջիկներին։ Եվ մի օր, այնքան անսպասելի, հանդիպում է պատերազմ գնացած իր սիրածին։ Պարզվում է, որ նա չի սպանվել, փրկվել է հրաշքով։ Սա էլ իր ընտանիքն ունի, բայց կինը վաղուց է իրեն լքել, և ինքն ապրում է ամուսնացած տղայի հետ։ Այսպես, հաղթանակից քսանհինգ տարի հետո սրանք նորից գտնում են իրար։ Եվ մոխրի տակ ծվարած ու մարելու փորձ անգամ չարած սիրո կրակը հարություն է առնում ու նրանց սիրտը լցնում ուշացած բերկրանքով։ Իհարկե, ինչ-որ տեղ նման է հեքիաթի, իսկ հեքիաթը մի՞թե միայն փոքրերի համար է։ Ինչո՞ւ արեցի քեզ հոգեվարքից կյանքի կոչված այս սիրո պատմությունը, ինքս էլ չգիտեմ։ Կյանքն այնպես արձադանքել գիտի անակնկալ առեղծվածներին։ Համենայնդեպս, ուզում եմ հավատաս, որ ես լուրջ ջանքեր կթափեմ իմ ընտանիքի սյուներն ամրացնելու համար և շատ կուզենայի, որ այդ ջանքերը ցանկալի արդյունքի հասցնեին ինձ։ Ուրիշ բան չմտածես, խնդրում եմ, վերադարձի բոլոր կամուրջներն այրված են։ Ուզում էի, որ դու իմանաս այս մասին, գոնե քո անմեղ մեղքի չափով... Հիմա եմ հասկանում, թե ինչպես դու չէիր կարողանում ազատվել նախկին, ոչ, սիրո իսկական կապանքներից։ Օ՜, դրանց զորության առաջ դժվար է զգաստ կանգնելը։ Այս անկեղծ և անխմաստ խոստովանությունից հետո թեթևացա ինչ-որ չափով, որի համար շնորհակալ եմ քեզնից։ Հասկանալի է, որ պատասխան նամակի չեմ սպասում։ Այս իմ գրածն էլ պատռիր՝ կարդալուց հետո։ Հին օրերի քաղցրությամբ՝

Անաստուհ»։

թվայնացրել է 1915.info կայքը

Աշխենն ասես քարացել էր մի հղոր ու անսպասելի հարվածի ուժից։ Այս ի՞նչ լվացքաջուր է թափում կյանքը մարդկանց գլխին։ Մայրը լիներ, կըմբոստանար անպայման իր աստծո դեմ.— Էս ի՞նչ չար կատակներ ես անում քո ստեղծածի հետ, բա մարդը մեղք չի՞... Նորից կարդաց նամակը, իսկապես որ մարդուն դժվար է ճանաչելը. Անատուին իսկական առեղծված է, գրողը տանի, ինչպես Հրանտը կասեր։ Թուխ-վուխ, թեթև ժանրին պատկանող տղայի համբավ ուներ, երբ առաջին անգամ հանդիպեց նրան։ Հետո նա ասես օր օրի վրա լրջացավ, ավելի ծանրախոհ դարձավ։ Եվ, այնուամենայնիվ, այն թուխ-վուխության հետքերը դեռ կային, մնում էին։ Իսկ ահա այս նամակը չափից ավելի լուրջ չէ՞, և ինչպես Անատուին աշխատում է չհասնել ընտանիքի քայքայման դուռը։ Ու այն սխալ կարծիքը կա, թե մեծ քաղաքներում ամուսնուց կամ կնոջից բաժանվելը դժվարություն չներկայացնող մի հարց է։ Տեսնես Անատուին կդիմանա՞ իր որոշման ծանրությանը։ Եվ դիմանա՞լն է ճիշտ, թե՞ ոչ հաճելի բեռը ժամանակին ուսերից թոթափելը։ Այնքան դժվար է այս հարցերում խելոք եզրակացության հանգելը։ Իսկական ընտանիքն այնքան նման է ծառաշատ ու ծաղկազարդ պարտեզի, ամեն մի թուփ ու ծաղիկ իր տեղում, իր շենք ու շնորհքով, յուրահատուկ բույրով. ամբողջության մեջ մի հաճելի համակարգ, մի ամբողջ աշխարհ։ Անխուսափելի են, իհարկե, կլինեն նաև թառամող ծաղիկներ ու չորանալու վտանգի ենթակա թփուտներ։ Բայց այգու միջով հոսող ջուրը նորից շունչ կտա, կյանքի կկոչի դրանց, և այգին կխշշա հանդարտ՝ առվակի խաղաղ ու հոգնհարթատ քչփչոցին ձայնակից։ Իսկ եթե արևն ու ջուրն անզոր են կյանք ներարկելու, եթե այգու չորացումն անխուսափելի իրողությո՞ւն է։ Ի՞նչ համ ու հոտ պիտի ունենան ճյուղակոտոր ծառն ու արմատի վրա թոշնած ծաղիկը։ Այդպիսի այգում մնալն անիմաստ է այլևս, եթե չես ուզում, որ վերջնականապես չորանան նաև քո արմատները... Այո՛, հենակների վրա ծվարած ընտանիքից որքան շուտ ազատես գլուխդ, այնքան լավ։ Նախուտ ընտանիքն էլ նման է հենց այդպիսի տան. փլվելու վտանգն աչքիդ առաջ է... Իսկ եթե այդ տանը երեխա՞ է մեծանում, առավել ևս՝ երեխանո՞ր։ Այստեղ է, որ հմուտ այգեպանը, երբեմն նաև իր կամքին հակառակ, գլուխ ու ողնաշար է ջարդում, այգին փրկելու վճռականություն է ցուցաբերում։ Ու

թվայնացրել է 1915.info կայքը

թափած ջանքերը հաճախ ցանկալի արդյունքի են հասցնում։ Օ՜, այգեպանի համառությունից ու համառությունից շատ բան է կախված...

36.

Ծովը։ Հոյակապ ու անընդգրկելի աշխարհ, ոչ աչքդ է հագենում, ոչ սիրտդ։ Նստիր ափին ու ժամերով նայիր ջրերի անսահմանությանը, հոգնելու կամ ձանձրանալու ոչ մի վտանգ։ Առաջին հայացքից միօրինակ ու միապաղաղ թվացող ծովն անընդհատ փոխվում է ու նորանում։ Երանգների ի՜նչ հարուստ դրսևորումներ։ Մեկ վնասվատում է խաղաղ, քչփչում ամոթխած, մեկ թեթև քամուց փշաքաղված մարմնին ասես նորածիլ հասկերի գլխիկներն են բողբոջում։ Իսկ երբ երկնքում սև ամպերն են խտանում, համբերությունից դուրս եկած ալիքներն սկսում են իրենց թեթև խոսքակռիվը։ Հետո գործը կարող է հասնել տուրուդմփոցի, նթե ծովը փոթորկվի և պար բռնած խեներ ալիքների հզորո՛ջյամբ սկսի հարձակվել ու լուտանքներ թափել ափին կուչ եկած ավազների, մեծ ու փոքր քարերի վրա։ Այդ պահերին ծովը մռնչում է ամեհի գազանի պես, ծառս լինում սանձը կրծող մատակի նման, դոփում գետինը ու փրփուր ցանում չորս-բոլորը։ Հեռվից նայողին թվում է, թե խրտնած ուղտերի քարավան է գլխապատառ փախչում դեպի ափ։ Հետո թիզ առ թիզ հանդարտվում է ծովը, սանձերը կտրտվում ու լուծվում են խեներ, շապիկները հանած ալիքների մեջ, ջրերի անկապ փնթփնթոցը աստիճանաբար վեր է ածվում հանգիստ խոսք ու զրույցի, և շնչելը դառնում է ավելի հեշտ ու հաճելի։ Իսկ երբ արևն էլ, վերջապես, պատռում է ամպ-սավանների վարագույրը և իր ոսկե վարսերն է թափում ջրերի ու մարդկանց վրա, տեսարանը դառնում է ավելի կատարյալ ու հոգեհարազատ։ Եվ լողի սիրահարներն շտապում են ծովափ՝ խոնավ ավազների վրա իրենց թիկունքը չորացնելու համար։

Ծովը։ Մի անբացատրելի աշխարհ, անընդգրկելի հնքխաթ, խորհրդավոր հրաշք, մի խեներ գեղեցկություն։ Առանձնապես անմոռաց են արևածագի ու մայրամուտի պահերը, երբ հրդեհվում է ծովը հեռու հորիզոնում, և ջրերն ու նրանց վրա կախված երկինքը մուգ նարնջագույն թիկնոց են առնում իրենց ուսերին։ Հնար լիներ՝ տևական դարձնել այդ պահը։

Սևանի ափին ծնված ու մեծացած, ծովի համայքն ու կարոտն

թվայնացրել է 1915.info կայքը

իր սրտում պահած Սմբատը ժամերով նստում էր ափամերձ քարե նստարանին ու նայում էր ծովի անսահմանությանը։ Մեկ էլ շտապ նետվում էր ջուրը, լողանում մի երկու «բերան» կամ երեխաներին էր լողացնում հաճույքով, հետո նորից գալիս, նստում էր իր տեղը ու նայում ալիքների խայտանքին, հեռվում ջրերն ակոսող նավերին, ջրերի վրա թևածող փրփուր ճայերին։ Թամարը քիչ էր լողանում, օրվա մեջ մեկ-երկու անգամ միայն. վախենում էր մրսելուց ու հիվանդանալուց։ Իր համար չէ, ո՛չ, երեխաներին առողջ ու անվտանգ խնամելու հոգսն էր նրան կաշկանդում։ Նվ ի՛նչ մեծ դժվարությամբ ընդունեց Սմբատի առաջարկը ծովափ գալու մասին։ Սմբատի հետ տեղ գնալու ոչ սիրտ ուներ, որ էլ տրամադրություն։ Մի տանը որ ամուսնական քաղցրություն չինի, դա ի՛նչ ընտանիք է, և ինչ արտով ճամփա ելնես այդպիսի ամուսնու հետ։

Աշխեհն այնքան սղոցեց, մինչև կարողացավ կտրել իր ծոռի համառության ճյուղը։ Դե՛, վճռական դեր խաղաց նաև Սմբատի մի խոսքը.— արևն ու ծովը կկոփեն երեխաների մարմինը, նրանց մի գրկիր այդ հաճույքից։ Նկել են, մոտիկ տուն են վարձել և ամեն օր ծովափին են։ Ու, չնայած ամուսնու հետ նույն կխափոով հարաբերություններն են, միևնույն է, չի փոշմանել, որովհետև երեխաների ուրախությանը չափ չկա։ Նվ լավ են ուտում, և ուրախ ժպիտն ու խաղն է անպակաս նրանց դեմքից։ Իսկ հոր հետ նրանց գզվռտոցը մի անմոռաց ներկայացում է, այն աստիճան գրավիչ, որ մեկ-մեկ, իր կամքից անկախ, ինքն էլ է խառնվում-մասնակից դառնում։ Նվ զգում է, թե այդ պահերին ինչպիսի ուրախություն է ծովանում Սմբատի աչքերում։ Նվ, օձից խայթվածի նման, ինքն անմիջապես դուրս է գալիս «խաղից»՝ ցավի ու ափսոսանքի թիկնոցն իր ուսերին առած։ Սմբատի այտին ասես անսպասելի ապտակ էր իջնում, անմիջապես շառագունում էր դեմքը, և ինքն էլ շարժվում էր դեպի քարե նստարանը՝ երեխաներին ասելով.

— Բավական է, բալիկներս, մի քիչ էլ հանգստանանք։ Իսկ Թամարին՝ ոչ մի խոսք։ Մի անգամ միայն չհամբերեց ու կնոջ կողքով անցնելիս կամաց ասաց.

— Լավ չես անում, էդքան անխիղճ չի կարելի լինել...

Թամարն այնքան է մտածել այդ մասին, խեղթանալ կարելի է։ Ուզում է ներել ամուսնուն, վերջապես փակել այդ չարաբաստիկ հարցը, եթե ոչ հանուն իրենց աղճատված սիրո, գոնե

թվայնացրել է 1915.info կայքը

երեխաների համար։ Չի կարողանում։ Շարունակվում է գիտակցության դեմ սրտի հակամարտությունը։ Չի փակվում վիրավորված ինքնասիրության վերքը։ Փոքրացել է, ճիշտ է, բայց չի սպիանում։ Հիշում է իր դպրոցական ընկերուհիներից մեկի ամոթից զուրկ պատմությունը։ Ուսուցչուհի է շրջկենտրոնի դպրոցում, գրագետ աղջիկ է, լավ մանկավարժ։ Իսկ նրա ընտանեկան պատմությունը ի՞նչ օրինակ կարող է ծառայել ուրիշների համար։ Ամուսին ունի ու երկու երեխա։ Ամուսինը խանութի վարիչ է. տունը լավ է պահում։ Բայց հայտնի է նաև, որ այդ «հոգատար» ամուսինը երկրորդ կինն ունի, նույն բնակավայրում. սա էլ գործակատար է։ Երկու երեխա էլ ա՛յս հարկի տակ են մեծանում։ Իրար գիտեն ուսուցչուհին ու գործակատարը, ծանոթ են։ Բայ, ինչպես ասում են, ոչինչ, դա չի խանգարում երկու «ճակատում» գործող ամուսնուն։ Նույնիսկ մտերմություն կա այդ կանանց միջև, երբ մեկն շտապ տեղ ունի գնալու, երեխաներին բերում և պահ է տալիս մյուսին։ Ինչպիսի վհհանձնություն... Թամարը հատկապես մոռանալ չի կարող ուսուցչուհի քնկերուհուն իր տված տարակուսանքով լի հարցի պատասխանը։

— Իսկ ինձ բոլորովին էլ չի անհանգստացնում, որ նա շաբաթվա մեջ մեկ-երկու անգամ էլ մյուս կնոջ մոտ է գնում։ Ես հաստատ գիտեմ, որ իմ ամուսինը, ինձնից բացի, մի ուրիշն էլ ունի, իսկ դու և քեզ նմաններդ գոհ եք ձեր վիճակից, որովհետև չգիտեք ձեր ամուսինների արկածների իսկական պատմությունը. գուցե նրանք մեկից ավելի «օբյեկտնե՞ր» ունեն։ Ուրեմն, կարող եք մխիթարվել ձեր անտեղյակությամբ... Թամարը ցավով մտածում էր, որ ինքը մի բան էլ պարտք մնաց։ Իսկ մի՞թե նրա ասածի մեջ ճշմարտություն չկա։ Ցավալին այն է, որ այդ հանդիպումից հետո Սմբատն իր աչքում նորից ցածրացավ։ «Իմ ամուսինը, ես գիտեմ հաստատ, մեկի հետ է, իսկ քո՞նը, քո անտեղյակությամբ ես հպարտանում»։ Կարո՞ղ է այդ անպիտանն ուրիշ բան գիտեր, ստոր ակնարկ չէ՞ր դա։ Օ՜, ոչ, այնուամենայնիվ, Սմբատն այդքան էլ աննամուսներից չէ։ Այս ավելորդ կասկածամտությո՞ւնը որտեղից բուն դրեց իր սրտում։ Եվ մեր օրերում ո՞վ է այսքան բանի տեղ դնում ամուսնու դավաճանությունը։ Ավելի վատ մեր օրերի համար։ Ասում են՝ խանդը բուն է դնում ցածր մակարդակի տեր մարդկանց սրտերում։ Հնարավոր է։ Ջնայած հայտնի է նաև, որ կիսավայրենի ցեղերից շատերի մոտ բացակայում է այդ խանդ կոչվածը։ Երեխա է ծնվել, կարևոր

թվայնացրել է 1915.info կայքը

չէ, թե ով է նրա հայրը, նրանց մոտ դա ոչ մեկին չի հետաքրքրում, նաև՝ այդ կնոջ ամուսին կոչվածին։ Գուցե մեզ մոտ էլ ամանց չի անհանգստացնում այս կարգի իրողությունը, իր ի՞նչ գործն է։ Բաղում կապերի մեջ խեղդվող կանայք էլ կան, հետո՞։ Ավ որքան ինքը գլխի է ընկել, իր մեջ ափերից դուրս եկողը խանդի ղպացումը չէ, ո՛չ, այլ «դավաճանին» ներելու անկարողությունը։ Դավաճան։ Ա՜հավո՛ր բառ է։ Տես ինչպե՞ս է գզվում իր երեխաներին, ի՞նչ հոգեհարազատություն կա նրանց միջև. ինչպե՞ս կարող ես քանդել նրանց սրտերում ծիածանված կամուրջը։ Դա էլ մի նոր կարգի դավաճանություն չի՞ կոչվի։

Նայեց ամուսնու կողմը։ Նա հիմա մենակ է, քարին նստած, ծանր մտքերի բեռն ուսերին։ Ու խղճարհարության նման մի բան սողոսկեց կնոջ սրտի մեջ։ Ինքն էլ չիմացավ թե ինչպես վեր կացավ տեղից, գնաց-նստեց ամուսնու կողքին ու կամաց հարցրեց.

— Մի անհելք հարց պիտի տամ, Սմբատ, եթե քեզ դավաճանեի, դու ինձ կներեի՞ր թե՞ ոչ։

Երեխաները փոքր-ինչ հեռու են, զբաղված իրենց ավազե տների շինարարությամբ, ուրեմն ծնողների խոսքուզրույցին արգելք լինել չեն կարող։

Իր իսկ անսպասելի հարցից շառագունել էր Թամարի դեմքը։ Սմբատի մոտ, ընդհակառակը, գերակշռողը գունատությունն էր։ Շնչառությունն էլ հևոցի հասնելու փորձեր էր անում։ Լռությունը երկարեց. բոլոր հարցերը չէ, որ արագ պատասխանի են արժանանում։

— Ամենամեծ հանցագործի ականջներն անգամ ամեն օր սղոցելը, մեղմ ասած, անխղճություն է.— Սմբատի ձայնը հազիվ էր լսվում, և նա Թամարին նայել չէր կարողանում։

— Ես ուզում եմ, թեկուզև ուշացումով, գաղափար կազմել անխղճության չափերի մասին։

— Վե՛րջ տուր, խնդրում եմ, դու ընդունակ չես այդպիսի ստորության։

— Իսկ ստորությունը ներելու ընդունակ եմ։

— Այդքան չար մի լինի, Թամար. քեզ ավելի սազական է մեծահոգությունը։

— Բոլոր դեպքերում կուզենայի, որ դու պատասխաներ իմ հիմնական հարցին։

թվայնացրել է 1915.info կայքը

Սմբատը վրա տվեց շուտասելուկի նման.

— Ո՛չ, քո դավաճանությունը նևրել չէի կարողանա, երբե՛ք։

— Շնորհակալ եմ անկեղծ խոսքիդ համար...Այդպես է, նեռը՝ միայն կինը կարող է լինել, տղամարդու մոտ այդ մասին խոսք անգամ լինել չի կարող, դա նրա արժանապատվությունից ցածր է։

— Հանուն երեխաների, հասկացիր։

— Այդ հանուն էլ միայն կնոջ լաժինն է։

Հանկարծ ծանոթ լացը բռնեց Թամարի կոկորդից ու սկսեց խեղդել։ Երեխաները հետու չեն. վերջապես մոտիկ ղույգեր կան հովանոցների տակ պատսպած, անհարմար է, պետք է փակել արցունքի ճանապարհը։ Ջուսպ ու խեղդված հեծկլտոցներ էին լսվում, միայն ուսերի ցնցումն ավելի ուժեղ էր։ Սմբատը թեթև հպումով Թամարի գլուխը թևքից իր ծնկանը, ու կամաց, ասես աննկատ շոյում էր նրա փարթամ մազերը։ Եվ Թամարը չէր դիմադրում։ Իսկ Սմբատն իր մերկ ծնկան վրա զգում էր կնոջ արցունքների թաց ջերմությունը։ Ասես արցունքներ չէին, այլ անողոք կրակներ, այնպե՞ս էին այրում...

Իսկ ծովը ժպտում էր խաղաղ։

37.

Հիշում է, աշխատանքային ընկերներից մեկը, քառասունն անց Սատուրը, երբեմն կատակով ասում է՝ ամուսնությունը նման է մի հզոր ամրոցի, դրսի մարդիկ ուզում են անպայման գրավել այն, ներսիններն էլ մտածում են դուրս փախչելու մասին։ Ու ինքը՝ Սատուրը, մնացել է դրսում, իր ասելով՝ երբեք փորձ էլ չի արել ներս խցկվելու։ Դրա համար էլ վաստակել է «քարթուացած խալաստոյի» մականունը։ Ծերացած մորը թաղելուց հետո էլ մենակ է մնացել։ Այս աշխարհում միայն մի քույր ունի, նա էլ Կիրովականում է ապրում։ Այնպես մե՞ղք է Սատուրը, մենակ, անօգնական, անձնական կյանքից զուրկ։ Եվ թառամել է ժամանակից շուտ. առնվազն տասը տարով մեծ է երևում։ Ու երբ խոսք է լինում ամուսնության մասին, նա պաշտպանական դիրքեր է գրավում այդ չարաբաստիկ ամրոցի պատմությամբ։ Նույնիսկ փորձում է հարձակման անցնել.

— Ջանըմ, ամուսնության մե՞ջ ինչ կա. ազատությունը ոչ մի բանի հետ չեմ փոխի։

թվայնացրել է 1915.info կայքը

Բայց այդ պահերին չես կարող նրա դեմքին չնկատել մենակ ու տխուր մարդու անօգնական ժպիտը։

Ամուսնություն-ամրոցից դուրս փախչողներ կան, իհարկե, և քիչ չեն դրանք։ Դուրս են գալիս դլխապատառ, նորից խցկվում մի ուրիշ ամրոց, մշտական, իսկ հաճախ էլ՝ ժամանակավոր գրանցումով։ Ոմանք էլ խուսափում են երկրորդ կամ երրորդ փորձից, անդամագրվում են մենակյացների բանակին և մի կերպ գլորում են իրենց կյանքի երկրորդ ու տխուր կեսը։ Իսկ ավելի շատ չե՞ն ամրոցում մշտական բնակություն հաստատողները։ Ճնշող մեծամասնությունը։ Սրանք կյանքն ուրիշ կերպ պատկերացնել չեն կարող. կին, երեխաներ, թոռ ու ծոռ, հոգսաշատ, բայց և ուրախությամբ լի օրեր, տարիներ։ Մինչև հասնում է այս աշխարհին հրաժեշտ տալու իրենց պահը։ Ու գնում են վաստակած, հանգիստ խղճով, և նրանց ճանապարհողներն են շատ, լաց ու մղկտոցի էլ պակաս չկա։ Այս է օրինական և ընդունելի ճանապարհը։ Ամրոցից դուրսը կիսատ-պռատ կյանք է։ Նվ՝ շատ է տխուր։

Քանի անգամ է հայրն ասել.

— Ա՛յ տղա, ինձ խայտառակ մի՛ անի, ուրիշներն էլ կարծում են, թե հիվանդ ես, անճարակ ես, մի լուրջ պակասություն ունես։

Իսկ մա՞յրն ինչ է գրում հենց նոր ստացված նամակում.— «Ի՞նչ ասեմ, Երվանդ տղա, երևի ուզում ես, որ մայրդ մեռնի՝ առանց հարսի երես տեսնելու։ Դու ե՞րբ այդքան անխիղճ ու անշնորհք դարձար...»։

Ուզում է ամուսնանալ, աստված վկա. մանավանդ ծնողներին դառնացնելու. ոչ մի ցանկություն չունի։ Բայց ինչպե՞ս կարող է այդ ճակատագրական հարցին գլխապատառ որոշում տալ։ Իսկ քեզնից ո՞վ է թեթևսոլիկ մոտեցում պահանջում, տասն անգամ չափիր ու նոր միայն կտրիր։ Տասը տարուց ավելի այդ հարցը ցցված է քո աչքի առաջ, և դու ոչ մի կերպ դրա լուծման բանալին գտնել չես կարողանում։ Մինչև ե՞րբ, ախր ամեն ինչ իր ժամանակն ունի։ Իսկ եթե հարմար թեկնածու չկա՞։ Նո՞ր է ծրնվելու։ Ո՛չ, իհարկե, պարզապես քմահաճ սրտի հախից գալ չի կարողանում, իր սիրտ-ամրոցը տիրուհու իրավունքով ներս խուժող չկա։ Իսկ ինքն այնպե՞ս ուզում է։ Բայց հո չի՞ կարող սրտի դռները կրնկի վրա բաց թողնել. իջևանատո՞ւն է, ինչ է... Հարմար թեկնածու ճարելու հարցով Աշխենն էր զբաղվում,

թվայնացրել է 1915.info կայքը

իր նախաձեռնությամբ. անշնորհակա՞լ զբաղմունք։ Եվ մի՞թե նրա մտքով չէր անցել կարծեցյալ թևկնածուների ցուցակի առաջին համարի տակ իր անունը գրելու հնարավորությունը։ Ինչպե՞ս զարմացավ, երբ խնդրեց իրեն ազատել եղբոր պարտականություններից։ Զարմանալը ոչինչ, ստացած տպավորությո՞ւնն ինչպիսին էր։ Այս օրերին նա անպայման մտածել է իր անսպասելի հարձակման մասին. տեսնես պաշտպանական դիրք բռնողը նրա սի՞րտն է լինելու թե՝ բանականությունը, ինքը, որի՞ պատասխանին կարող է արժանանալ։ Մի շաբաթ է, սպասում է այդ վճռին։ Ծանր, սպասողական օրեր։ Դիտմամբ է ուշացնում նոր հանդիպումը· թող ծանր ու թեթև անի, կողմնորոշվի վերջնականապես։ Իսկ քո որոշումը վերջնակա՞ն է, համոզված ես, որ վերջապես հանդիպել ես նրան, որին փնտրում էիր այսքան երկար տարիներ։ Այո՛, գնալով այդ հավատն ամրանում է, և տատանում չկա, ինքն էլ է զարմացել իր վճռականության վրա. այդ ինչպե՛ս է, որ իր աչքերից հանեցին մութ ակնոցները. մի՞թե կույր է եղել մինչև հիմա։ Եվ առաջին հանդիպմանն էլ չճանաչեց Աշխենին, ավելի ճիշտ՝ չնկատեց նրան, հետո, օր-օրի վրա կաթոցն ուժեղացավ, վերածվեց դուլալ առվակի, ու հիմա հոսում է խաղաղ, քչփչում է աշխույժ, և ի՞նչ հոգեզմայլ մեղեդի կա նրա այդ քչփչոցի մեջ։ Ինչպե՞ս է երազել այս պահը, մի՞թե իր չորացող ծառին վերջապես հազարան բլբուլն է թառել...

Ու հանկարծ զգաց, որ այլևս համբերել չի կարող. նույնիսկ զարմացավ իր այդ համառ լռության վրա, քանի օր է չեն հանդիպել, ինչ իրավունքով։ Ու զանգահարեց անհամբեր.

— Աշխեն, մենք, վերջապես, կարո՞ղ ենք հանդիպել։

— Այդ վերջապեսի մեջ, Երվանդ, ես մեղադրանքի նման մի բան եմ տեսնում. դու փորձել ես, ես խանգարե՞լ եմ քեզ։

— Դու իրավացի ես. ուշացրի, դիտմամբ, ջրերի պարզեցման համար ժամանակ է պետք, չէ՞։

— Իսկ այդ ե՞րբ պղտորվեցին մեր ջրերը...

Ի՞նչ էր ուզում ասել. իր համար ամեն ինչ պա՞րզ է, թե՞ պղտորվելու վտանգ չի էլ տեսնում։

Հանդիպեցին։ Ու հիմա երեքով գնում են թամարենց տուն։

— Ծովափից եկել են երկու օր առաջ. բարի գալուստ կասենք, գուրգենին էլ կթողնենք նրանց մոտ, համերգից հետո տուն կտանենք։ Ընդունո՞ւմ ես այս առաջարկը։

թվայնացրել է 1915.info կայքը

— Սիրով, եթե, իհարկե, Գուրգենը չի առարկում։

— Ես մորաքույր Թամարենց տունը շատ եմ սիրում. այնքան լավ երեխաներ ունի. կխաղանք մեզ համար։

Երվանդն առաջին անգամն էր այդ տանը լինում. նա ծանոթ չէր ոչ Սմբատի, ոչ էլ Թամարի հետ, չնայած բավարար չափով գիտեր նրանց՝ Աշխենի պատմածներով։

Սմբատը տանը չէր, ընկերոջ մոտ էր գնացել։ Աշխենն ու Թամարը իրենց կարոտները առան համբույրների օգնությամբ։ Իհարկե, մեծ բաժինը հասավ երեխաներին։

— Այս ինչպե՞ս են սևացել բալիկներդ, և թարմացել են, հրաշալի է։

— Իսկ ինձ ծով չես տանում,— նեղսրտեց Գուրգենը,— ես լողալ շատ եմ սիրում։

— Մյուս տարի էլ մենք կգնանք ծովափ, Գուրգենս· դպրոց գնալու հարցերդ լուծենք, նոր կմտածենք այդ մասին։

— Քեռի Երվանդն արդեն բերել է դասագրքերս, էլ ի՞նչ հարց կա, մա՛մ։

Երվանդը մնացել էր դռան մոտ կանգնած և չէր նեղանում, որ իրեն մոռացել են։

Թամարն ասես նոր նկատեց նրան ու խուճապահար վրա տվեց.

— Վա՛յ, այս ինչ անշնորհք տանտիկին եմ. ներս եկեք խընդրում եմ և թույլ տվեք ձեզ հետ ծանոթանալ։

— Երվանդն է, Թամար, ես էլ եմ խնդրս կորցրել, ծանոթացիր։

— Ես արդեն իմացա,— մոտեցավ, սեղմեց ձեռքը։— Ուրախ եմ, նստեցեք, խնդրում եմ։ Հիմա սուրճ կպատրաստեմ։

— Թամա՛ր, մենք շտապում ենք։ Իզուր ես անհանգստանում։

— Ինչպե՞ս թե, Աշխեն, չեք մնալու մինչև Սմբատը գա՞, շատ կնեղանա։

— Ոչի՛նչ, ես նրան կբացատրեմ վաղը։ Համբրգից ուշանում ենք. դու բարի եղիր տիրություն անել Գուրգենիս։ Համբրգից հետո նորից կգանք, այն ժամանակ երևի Սմբատն էլ տանը կլինի։ Դե՛, Գուրգենիկ...

— Մա՛մ, հանգիստ գնացեք, ես խելոք կմնամ։

— Հա՛, մատաղ քեզ։— Այդ արտահայտությունն ումի՞ց է լսել. հա՛, Լուսիկ մայրիկից, այսինքն՝ Գուրգենի տատիկից...

Դուրս եկան երկուսով։ Տաքի պատահեց, նստեցին, ու քիչ

թվայնացրել է 1915.info կայքը

հետո ծանոթ այգում էին, հաղթահասակ ծառի տակ։ Լուռ են, նստել են կողք կողքի, խռոված երեխաների նման։ Ի՞նչ խոով, պարզապես խոսակցության տուտը բռնել չեն կարողանում։

— Գուցե դնանք համերգասրա՞հ, այնտեղ մննակությունից չենք տխրի։— Աշխենի ձայնի մեջ ցավի նման մի բան կա։

— Ես անհամբեր սպասում եմ վերջին հանդիպմանը տված իմ հարցի, ո՛չ, իմ ցանկության ասեմ, թե առաջարկության պատասխանին։ Իսկ դու լռում ես, Աշխեն։

— Անկեղծ ասած, այս օրերին շատ եմ մտածել այդ մասին։ Ներիր, Օրվանդ, վերջնականապես չեմ համոզվել քո ասածների լրջության ու զգաստության մեջ։

— Ես չգիտեի, որ դու ինձ անլուրջ մարդ ես համարում։

— Դու իզուր ես նեղանում. գիտես, որ ես քեզ վիրավորելու մտադրություն անգամ չունեմ։

— Այդ դեպքում ի՞նչ հիմք ունեն քո կասկածները։

— Ես պարզապես հարմար թեկնածու չեմ քեզ համար, ա՛յս է իմ ճշմարտությունը։

— Դա ի՞նչ է, մերժելու քաղաքավարի ձև՞։ Շնորհակալ եմ։

— Շտապում ես, Օրվանդ, թող կարգին բացատրեմ իմ միտքը։

— Ուզում ես մերժո՞ւմդ հիմնավորել։

— Դե՛, վերջ տուր, խնդրում եմ. քեզ ավելի շրջահայաց ու զուսպ մարդ եմ համարում։ Աշխենի ձայնի մեջ լացի երանգներ են նկատվում։

Մի ճնշող լռություն ծանրացավ նրանց սրտի վրա։ Շնչելն ասես դժվարացավ։ Այս ինչ է, այսօր ծառերի ծլվլոց անգամ չկա. նրա՞նք ինչու են պապանձվել։ Նրանց մոտով մի երիտասարդ զույգ էր անցնում, թևանցուկ, ո՛չ, գրկախառն։ Բարձրահասակ տղան իր երկար թևի տակ էր առել փոքրամարմին աղջկա ուսերը, գլուխը թեքում ու քաղցր փսփսում էր նրա ականջին. մեկ-մեկ էլ թռուցիկ համբույր էր փախցնում։ Իսկ աղջիկը կըլկըլում էր անփույթ, և՝ դիմադրության ոչ մի փորձ։ Անհարմարության զգացումը խորթ էր նրանց, ասես չէին էլ նկատում ծառուղիներում նստած կամ զբոսնող մարդկանց։ Երջանիկ հասակ, սրտեր կամրջող մտերմություն. միայն թե խախուտ չլինե՞ն այդ կամրջի հիմքերը։ Տասնութ տարեկան էլ չեն լինի, իրենցից երկու անգամ փոքր, բայց տես ի՞նչ համարձակն են, ամեն մի պայմանականություն արհամարհող։ Նրանց համար

թվայնացրել է 1915.info կայքը

երևի անլուծելի հարցեր չկան, ոչ մի տատանում։ Իսկ դա լա՞վ է թե՞ վատ է՞, դու հա մազը կխսիր, Թրջոց դիր ամեն մի լուրջ հարց, ծանրութեթև արա հարյուր անգամ. կարծում ես դա կօգնի քեզ հանճարեղ պատասխանի հասնելու։ Շնորհքով շամամատիստի մոտ հաճախ հաղթանակն ապահովում է արագ ու անսպասելի մի քայլը։ Տարիների մտերմական կապերն անհաջող ամուսնության հասցրած այնքան տխուր զուգեր կան, և հնկատառակը...

— Ջամուսնացած տղայի ամուսնությունը երեխա ունեցող կնոջ հետ. դու հո գիտես, թե սա ինչպես կարող է ընդունվել մեր շրջապատում, ընդհանրապես՝ հայերիս մոտ։

— Մենք հաշվեհա՞ր ենք նրանց։

— Հասարակությունից փախչել չես կարող։

— Եվ պետք էլ չէ։ Այդ հասարակության կյանքը հո քանոնով գծված ուղիների հանրագումար չէ՞։

— Այնուամենայնիվ...

— Գուցե ավելի լուրջ պատճառների մասի՞ն կխոսեինք, եթե, իհարկե, դրանք կան։

— Կան, դժբախտաբար, և քիչ չեն։ Իսկ մենք համերգից չե՞նք ուշանում։

— Վաղուց ենք ուշացել. մեր բաժին համերգասրահը թող այս ծառուղին լինի։

— Ինչպիսի՞ դժվարությամբ ես տոմսեր ճարել։

— Շնորհակալ եմ, որ իմ անհանգստությունը գոնե գնահատել կարողացար։

Սշխենը պոռթկաց միանգամից.

— Գիտե՞ս ինչ, ես տանել չեմ կարող սուտ նեղանալու համար կեղծ պատճառներ հորինողներին։

— Եվ սուտ նեղացող դարձա, և կեղծ հորինող.— Երվանդի ձայնի մեջ այնքա՞ն ափսոսանք կար։

— Վերջացնենք, այս խոսակցությունը շարունակել չեմ ուզում։

— Իսկ ես պահանջում եմ, հասկանո՞ւմ ես։

— Ինչ իրավունքով, կարելի՞ է իմանալ։

— Նախկին եղբոր, սատանան տանի։ Երվանդի ձայնը հատիվ էր լսվում. այնքան ընկճված էր, թևաթափ։

Սշխենի սրտում գլուխ բարձրացրեց խղճահարության աղավնին։

թվայնացրել է 1915.info կայքը

— Գուցե քույր ու եղբայր մնալն ավելի հեռանկարային է և ընդունելի՞։

— Ո՛չ։

Այնպես պայթեց այս մի հատիկ բառը, որ գրավեց նաև մոտիկ անցորդների ուշադրությունը։ Մեկը նույնիսկ ժպտաց քթի տակ. երևի մտածեց՝ այս ինչ լուրջ հարցեր ունեն, որ ուզում են լուծել «ոչի» օգնությամբ։ Սրվանդն էլ զգաց, որ չափի զգացման խախտում տեղի ունեցավ։ Ու բոլորովին փոխված ձայնով շարունակեց։

— Տասը տարուց ավելի է, ես փնտրում եմ քեզ, հասկանո՞ւմ ես, գտել եմ վերջապես։ Սիվ քեզ շատ եմ խնդրում, մի կարծիր, թե սա ոտքի վրա կայացված որոշում է։ Հազար անգամ ոչ, իսկ դու շարունակում ես հին տոմարով խոսել։

— Իսկ եթե նորին անցնել չե՞մ կարողանում։

Սրվանդի դեմքն ասես կրակով ներկեցին. և ինչպիսի՜ փութկոտությամբ քրտինքի կաթիլներ բողբոջեցին նրա ճակատին, իսկական ուլունքներ։ Զարմանալի էր հատկապես, որ նրա մոտ նահանջի ճանապարհը բռնեց նաև խոսելու տրամադրությունը։ Այլևս ի՞նչ ասի, ի՞նչ մնաց ասելու։ Արմատահան եղավ, սղոցեց, կտոր-կտոր արեց հույսի ծառը, արժե՞ խոսել նրա փրկության մասին. խոսքը կարո՞ղ է հարություն տալ անհույս խեղվածին։

Նորից երկարից լռություն։ Աշխենի տառապանքի բեռն ավելի թեթև չէր, բայց նա մտածում էր Սրվանդի վերքի վրա սպեղանի դնելու մասին միայն։

— Հասարակական կարծիքը քեզ չի կաշկանդում, գուցեև լավն այդ է, իսկ կարելի՞ է իմանալ, թե ծնողներդ ինչ են ասում։

Սրվանդը, որ ծխում էր գլուխը կախ, զարմացած Աշխենին նայեց։

— Առանց քո համաձայնությունն առնելու ինչպե՞ս կարող էի խոսել ծնողներիս հետ։

— Իսկ եթե ես ընդունեմ քո առաջարկությունը, ծնողներդ չուզենան։

— Այդպիսի բան չի լինի, երբե՛ք։ Քանի անգամ է մայրս ասել՝ ում ուզում ես, միայն թե հարս բեր մեր տուն։

— Բայց, համոզված եմ, մորդ մտքով անգամ չի անցել, թե իր տղային կարող է բաժին հասնել դպրոցահասակ երեխա ունեցող մի մայր։

թվայնացրել է 1915.info կայքը

— Դաժան բաներ ես ասում, Աշխեն։

— Ճշմարտությունը հաճախ ավելի դաժան է լինում... Քեռի Սահակի վերաբերմունքի մասին դատել չեմ կարող, նա գուցեև հանդուրժի հանուն իր ընկերոջ հիշատակի, իսկ մայրդ չի կարող հաշտվել այդ մտքի հետ։ Եվ դու չկարծես, թե ես նրան մեղադրում եմ. ե՛ս էլ այդպես կվարվեի, եթե նման հարցի լուծման առաջ կանգնած լինեի։ Տուն եկող հարսը պետք է մաքուր ու պայծառ լինի՝ նոր ծագող արևի նման, համեղ ու բուրումնավետ, ինչպես նոր թխած հացը, ինչպես նոր լցրած ճաշը. թերմացքն ու կրճոնը ումն են պետք...

— Լռի՛ր, խնդրում եմ, անխելք բաներ ես խոսում։

— Համենայնդեպս դու խոսիր ձերոնց հետ և, առանց թաքցընելու, ինձ ասա նրանց կարծիքը։

— Չե՞ս ընդունում, որ այս հարցում վճռական ձայնն ինձ է պատկանում։

— Ընդունում եմ, իհարկե, բայց և այնպես կատարիր իմ խնդրանքը, խոսիր ձերոնց հետ։

— Հետո՞։

— Հետոյի մասին ես հետո կասեմ։ Կա նաև մի շատ լուրջ պատնեշ, այդ մեկի հաղթահարումն արդեն իմ խնդիրն է, և սա ամենալուրջ խոչընդոտն է, տեսնենք...

— Ես ցավով նկատում եմ, որ մեր ճանապարհին միայն պատնեշներ ու խոչընդոտներ են կանգնած։ Ավելի շիտակ չէ՞ր լինի, եթե ասեիր՝ քո մուրճն ինձ դուր չի գալիս, և, ընդհանրապես...

— Բարեբախտաբար այս հարցում դու սխալվում ես։ Ես չեմ հիշում, թե որ տղամարդու մոտ եմ ինձ այսքան լավ զգացել. իհարկե, բացի մեկից... Դու լավն ես ամեն ինչով, եթե անհարմար չզգայի, քեզ կհամբուրեի։ Տեսնո՞ւմ ես, թե ինչ անամոթ աղջիկա ես դու հավանել...

Սրվանդը թերահավատ ժպտում էր։ Հիշեց քիչ առաջ իրենց մոտով անցնող և «ոտքի վրա» համբուրվող այն երիտասարդ զույգին։ Ի՞նչ գիտես, սիրո համբո՞ւյր էր դա, թե՞ էժանագին, անիմաստ շռայլվող մանր դրամ։ Ոտնից Աշխենի թևը. էլեկտրական հոսանք անցավ սրտի միջով՝ ցնցող, բայց նաև հաճելի։

Աշխենը ոտքի կանգնեց։

— Գնանք, մեր բաժին համերգը վերջացավ։ Ու մտավ ծր-

թվայնացրել է 1915.info կայքը

վանդի թևը։ Երկար քայլում էին լուռ Աշխենը մեկ-մեկ սեղմվում էր տղայի թևին ու կամաց շշնջում.

— Միայն թե դու ինձ չմեղադրես, Երվանդ. եթե ինձնից նեղանաս, ես շա՜տ կտխրեմ, լսո՞ւմ ես...

38.

Բոլոր ժողովներից ամենահարգին Անդրեի համար՝ ակտիվի ժողովն էր։ Ե՛վ անունն է հաճելի, և՛ մարդամեջ ես դուրս գալիս։ Լավ է նաև, որ հանդիպում ես ընկեր-ծանոթների, խոսում-զրուցում եք, հին դարման եք քամուն տալիս։ Ով եթե ամիսներ առաջ Հրանտ Ստեփանյանին ու Սենեքերիմ Կիրակոսյանին նորից հանդիպելու ոչ մի ցանկություն չուներ, այսօր ուրախ էր և ինքն ընդառաջ գնաց նրանց՝ չմոռանալով դեմքին տալ մտերիմ ընկերներին հանդիպելու ուրախության արտահայտություն։ Նախ թող իմանան, որ ինքն էլ է մտել ակտիվի ցուցակի մեջ, վերջապե՜ս, և հետո լավ առիթ է Սենոյի վիճակի մասին ճըշմարտությունն իմանալու։ Բա ասում էին ականջները քաշել են, ինչպե՞ս է, որ թույլ են տվել մասնակցելու ակտիվի ժողովին։ Թե՞ Սենոն պասսիվների ցուցակն ընկնողներից չէ...

— Ես սիրով ողջունում եմ իմ հին ու լավ ընկերներին. ուրախ եմ հանդիպման համար,— ու թափով սեղմեց տղաների ձեռքը։ Հետո կատակախառն վրա տվեց.— Ճիշտ է, դուք ինձ տիրություն չարիք, բայց աշխարհում, այնուամենայնիվ, լավ մարդիկ կան, նրանց օգնությամբ ես էլ, ահա, ինչպես տեսնում եք...

— Բախտ ունեցա ակտիվի ժողովին մասնակից դառնալու,— առանց թունոտ ակնարկի նրա խոսքը լրացրեց Սենեքերիմը։

— Մենք էլ ուրախ ենք, Անդրե, քո «ակտիվացման» համար.— ընդհանուր զրույցին իր բաժին խոսքը բերեց Հրանտը։

— Հիմա մնում է, որ դու պատմես քո հաջողությունների մասին, որտե՞ղ, ի՞նչ ես անում, այ տղա, գուցե մեզ է՞լ քեզ մոտ կտանեիր։

— Սենո տղա, դու նորից սկսում ես ձեռ առնելու քո հունարը բանեցնել, վերջ տուր, խնդրում եմ։

— Ընդունում եմ, և հաշվիր, որ արդեն դրա վերջը տրված է։ Հիմա լսում ենք քեզ, Անդրե, պատմիր, միայն առանց ֆաոնի։

թվայնացրել է 1915.info կայքը

— Սենո, բավակա՛ն է,— սրտնեղեց Հրանտը,— Անդրե, լսում ենք քեզ։

— Ես նախ կուզենայի լսել Սենոյի գործերի մասին։ Ցխուր բաներ եմ լսել, հո ճիշտ չէ՞։

— Ես չգիտեմ, թե ինչ համեմունքների ուղեկցությամբ է այդ լուրը հասել քո ականջին, բայց չեմ կարող չտխրեցնել քեզ, սիրելի ընկեր, որ ամեն ինչ հաջող է վերջացել։ Ինդրում եմ նորից հարություն չտալ այդ տճաճ պատմությանը։— Սենոյի ձայնը, իր կամքից էլ անկախ, կոշտացավ։

— Իսկ դու իզուր ես վրդովվում, ես ուրախ եմ քեզ համար, ազնիվ խոսք։

— Այդ դեպքում թույլ տուր քեզ ավելի ուրախացնել այդ անցած, բայց և տհաճ պատմությունը թող մի փոքր հնանա, ես տեղափոխվելու եմ մի ուրիշ աշխատանքի։

— Ավելի բա՞րձր։

— Միամիտ հարցեր ես տալիս, Անդրե, անհարմար է։

Էլեկտրական դանգը բարբառեց երկար։ Ժողովականներին դահլիճ էր հրավիրում։

— Գնացինք։ Ընդմիջմանը կշարունակենք մեր զրույցը։— Ելավ Հրանտն առաջ անցավ։

Հետաքրքիր ժողով էր, և հաջողությունների համառոտ նկարագիրը կար, և եղած թերությունների բացահայտումը։ Ու բոլորը՝ կոնկրետ, համոզիչ։ Ուշադրությունը շեղելու հնարավորություն չկար համարյա. դահլիճի լարվածությունը նորմալ ջերմաստիճանի վրա էր։ Ջիմացյան էլ թե ինչպես անցավ երկու ժամը։ Եթե մեր բոլոր ժողովներն այսպես զուրկ լինեին ձանձրույթ պատճառելու շնորհքից...

Ընդմիջմանը շարունակվեց երեքի զրույցը։ Հիմա հանգիստ էին խոսում, ավելի գործնական։

— Ինձ մոտ էլ լավն ու վատն իրար են խառնվել։ Դժվարանում եմ գլուխ հանել։— Անդրեի ձայնի մեջ նկատելի ընկճվածություն կա։

— Դե, մարդուս կյանքը մի՞թե լավի և վատի մի հանրագումար չէ։ Գուցե կկոնկրետացնե՞ր, Անդրե։

— Դրսում լավ եմ, տանը՝ վատ, այս է տխուր իրողությունը։ Մինիստրությունում բաժնի պետ եմ, հարգանք ու պատիվ կա, գոհ եմ աշխատավարձից, և՝ եղած հնարավորություններից, լայն շրջապատ, ճյուղավորվող կապեր, դժգոհելու բան չունեմ։ Իսկ

թվայնացրել է 1915.info կայքը

տանը գործերս շատ վատ են, կինս երեք օր առաջ հեռացավ տնից, գնացել է մոր մոտ։

— Այդ ի՞նչ է, բաժանվե՞լ է ուզում։

— Հենց էդ է, որ կա. ես այլևս, ասում է, քեզ հետ նույն հարկի տակ չեմ ապրի։

Սենոն, որ լուռ էր երկար ժամանակ, պոռթկաց միանգամից.

— Իսկ պատճա՞ռը. հիմնականը չես ասում։

— Կարծում ես հե՞շտ է պատճառների մասին խոսելը, մանավանդ երբ համոզված ես, որ մեղավորը դու ես։

— Գուցե ուշքդ տվել ես հարբեցողությա՞ն։

— Չէ, ջանըմ, ինձնից խմող դուրս չի գա. հիմա էլ ճնշում ունեմ։

— Ուրեմն կնոջ հաշիվ կա մեջը։

— Անմիջապես գլխի ընկար, Սենո, խրվել եմ մի անհամ պատմության մեջ։

— Այ տղա, բանից դուրս է գալիս, որ դու համաուեղությամբ էլ ես աշխատո՞ւմ. ուրեմն կարգին տղամարդ ես։

— Է՛, Սենո, կատակում ես, իսկ իմ սրտից արյուն է կաթում։

— Բա մարդ այդպիսի սուրբ գործի համար կտրանեղվի՞։ Կինդ կփնթփնթա էլ, կլռի էլ։

— Չի լռում. դիմել է դատարան, բաժանվել է ուզում։ Երեխաներիս մոտ լրիվ սևերես եմ մնացել, արդեն փոքր չեն, ամեն բան հասկանում են։

— Իսկ այդ օբյեկտդ ինչպե՞ս ճարեցիր, ջահե՞լ է, սիրո՞ւն է։

— Սենո, անհամ հարցեր ես տալիս, արևս վկա,— սրտնեղեց Հրանտը,— այս մարդու տունը քանդվում է, իսկ դու...

— Քանդվում է, որովհետև երկու լուրջ սխալ է թույլ տվել այս ընկերը, երկու բացթողում։

— Ավելի կոնկրե՞տ,— լրջացավ Հրանտը։

— Նախ ընդհատակում աշխատելու փորձի պակաս է հանդես բերել. կինն ինչո՞ւ պիտի իմանար այդ մասին։

— Մի ջահել աղջկա հետ գործուղման էի գնացել անցյալ տարի. հարմար պայմաններ էին, բանը բանից անցավ։ Հետո անխնայություն արեցի, այստեղ շարունակվեցին հանդիպումները, և մեր աշխատողներից մեկը, մի ջադու պառավ, խաբարը հասցրել է կնոջս։ Ի՞նչ աղմուկ-աղաղակ, ի՞նչ լաց ու կոծ, որ հիշում եմ, հիմա էլ մազերս բիզ-բիզ կանգնում են։

թվայնացրել է 1915.info կայքը

— Քո երկրորդ և հիմնական սխալը դաստիարակչական աշխատանքի պակասն է։

— Դու էլ բա՞ն ասացիր,— թերահավատ ժպտաց Անդրեն։

— Խոսքիս մեջ կատակի երանգ անգամ չկա. ժամանակին դու այնպես պիտի ձգեիր կնոջդ գայկաները, որ այդպիսի բան լսելուց հետո էլ չհամարձակվեր աղմուկ բարձրացնել։

— Այսինքն ինչպե՞ս,— Անդրեն իր տարակուսանքը թաքցնել չէր կարողանում։

— Տղամարդու ազատությունն անսահման է, կինն իրավունք չունի նրան կաշկանդելու, նրա հետ ուռք գցելու։ Եթե մի բան էլ լսում է, բանի տեղ չպետք է դնի, ականջի ետևը պիտի գցի։ Վերջիվերջո, ընտանիք քայքայելը կնոջ վրա շատ ավելի ծանր է նստում, այստեղից էլ նրա լեզվի կարճությունը։ Ամուսինը պարտավոր է խելացիորեն օգտվել այդ, շախմատիստի լեզվով ասած, դիրքային առավելությունից։

— Սենոն նորից սկսեց իր տհաճ փիլիսոփայությունը։ Տհաճ է լսելն անգամ։

— Տհաճ է, որովհետև ճշմարիտ է, տհաճ է, որովհետև քո խելքի բանը չէ, ընկեր Հրանտ։ Անճարակ ընկերներ ունեմ, ահա իմ ամբողջ դժբախտությունը...

Հրանտն անուշադրության մատնեց Սենոյի խոսքը, դարձավ Անդրեին.

— Դժբախտաբար, ես ծանոթ չեմ քո կնոջը, թե չէ կխոսեի հետը, գուցեև կկարողանայի՞ համոզել, որ ետ կանգնի իր որոշումից։

— Միևնույն է, բան չէր դուրս գա, նա այնքան իր ասածի է։

— Իսկ դու անկեղծորեն խոստովանիր քո մեղքը և ներողություն խնդրիր, դա ավելի ազնիվ ճանապարհ է։

— Կարծում ես նա կգնահատի՞ այդ ուշացած ազնվությունը։— Անդրեի «ֆասոնից» հետք անգամ չէր մնացել։

— Իսկ ես քեզ հակառակ խորհուրդը կտայի,— կանգնել ամուր ու անզիջում դիրքի վրա։

— Այսի՞նքն։— Անդրեն նայում էր Սենոյին և թերահավատ, և մի ժամանակ ինչ-որ աղոտ հույսի առկայծումով։

— Ասում ես՝ լավ եմ արել, բա էլ ի՞նչ տղամարդ, որ դրսում հետաքրքրություն չունենա։ Ուզում ես բաժանվե՞լ, քո ձեռքը բռնող չկա, քեզնից էլ լավին կճարեմ։ Միայն նկատի ունեցիր, որ հետո փոշմանես, էլ չեմ ների...

թվայնացրել է 1915.info կայքը

— Անուղղելի էգոիստ ես, Սենո տղա, և շատ եմ զարմանում, որ Քնարիկը դիմացել է այսքան տարի։

— Որ չդիմանար, ի՞նչ պիտի աներ։ Հետո դու մի մոռացիր, որ ես բավարար չափով ուշադիր եմ ընտանիքիս նկատմամբ, ամեն ինչ հասցնում եմ տեղը տեղին, ոչ մի պակաս բան։

— Դու, այսպես ասած, նյութականը նկատի ունես։

— Իսկ դա քի՞չ բան է։ Մոռացե՞լ ես, որ ժամանակին ինչպես ևն ասում՝ բազիսն է որոշում...

— Վերջ տուր, խնդրում եմ։ Ով վատը գիտես որն է, Սենո, անհարմար չես զգում գոնե քո նրեխաներից։

— Նրանց ի՞նչ գործն է կամ նրանք ի՞նչ գիտեն։

— Իզուր ես կարծում, թե չգիտեն։ Միևնույն է, մի օր կիմանան, և ինչպե՞ս պիտի նայես նրանց աչքերին, ախր նրեխան ամենաանաչառ, նաև՝ ամենաահեղ դատավորն է։

— Այդ մեկը շատ ճիշտ է, ես էլ եմ հաստատում։—Անդրեն իր բաժին խոսքը բերեց, բայց Սենոն մի կոշտ ճիմ գցեց նաև նրա խոսքի ճանապարհին։

— Գայկանների պատմությունը նորի՞ց անեմ։ Միևնույն է, բան դուրս չի գա, երկուսդ էլ անհամ սեխ եք... Եկեք վերջ տանք այս պասսիվների ժողովին, գնանք բուֆետ, գոնե սուրճ խմենք, հիմա ներս կկանչեն։

Հրանտը մտածում էր. բուֆետ որ գնան, ինքը սուրճ չէ, մի բաժակ հանքային ջուր կխմի։ Մի տեսակ այրոց է զգում սրտի շրջանում։ Մի՞թե Անդրեի տխուր վիճակից է։ Կինն ուզում է բաժանվել, և պատճառը ամուսնու դավաճանական քայլն է։ Իսկ Նվարդն իրեն ներեց, չնայած իր հանցանքն ավելի մեծ էր, և մեջտեղն էլ երեխաներ չկային։ Բաժանությունը մարդուս կյանքում, երևի, ամենածանր քայլն է, լավ է ասել բանաստեղծը.

«Բաժանվածներից առաջինը չեմ, բայց կուզենայի վերջինը լինեմ»։

Եթե հնարավոր լիներ հասնել դրա վերջին։ Բայց ոչ, երևի պետք էլ չէ. անխուսափելին կանխել չես կարող։ Պարզապես հնարավորության սահմաններում պետք է կրճատել ապահարզանների թիվը, հասցնել նվազագույնի։ Այս բանաստեղծական խոսքի մասին չարժե ասել ոչ Սենոյին, ոչ էլ Անդրեին. նրանց ականջին դա չի հնչի անհրաժեշտ ուժգնությամբ։ Ջնայած Անդրեն խուճապի է մատնվել, վախենում է մենակ մնալուց։ Իսկ երեխանե՞րը։

թվայնացրել է 1915.info կայքը

— Անդրե, քանի՞ երեխա ունես. ներող կլինես, որ չգիտեմ։

— Մի տղա, մի աղջիկ. չորրորդ և հինգերորդ դասարանի աշակերտներ են։ Դե՛, հասկանալի է, ավելի շատ մոր հետ են կապված և արդեն ուրիշ աչքով են նայում ինձ։ Իմ խայտառակվելը գլուխը քարը, վախենում են երեխաներիս կորցնելուց։

Լսվեց զանգի ձայնը. ներս էին հրավիրում։ Սենոն իր դժգոհությունը չարտահայտել չէր կարող։

— Գոնե սուրճ խմել չկարողացանք։ Ձեզ հետ մարդ իր գլուխը էլ կկորցնի։ Է՜հ, ինչ անեմ, ամբողջ կյանքում դուք ետ եք մնում կյանքից, ո՞նց պիտի լինի ձեր ճարը...

39.

Այդ գիշեր այնքան անհանգիստ էր Աշխենը. քունն ասես պահմտոցի էր խաղում նրա հետ, դժվար հայտնվում ու շուտ էլ փախուստի էր դիմում։ Իսկ ի՞նչ է եղել վերջապես, ինչո՞ւ է այդպես տառապում։ Վաղը սեպտեմբերի մեկն է։ Հետո՞։ Գուրգենն առաջին անգամ դպրոց պիտի գնա։ Ուսումնական կյանքի առաջին օրը, դասի կանչող առաջին զանգը։ Ինչպե՞ս չհուզվես։ Այնպես լավ է հիշում իր առաջին զանգը։ Քանի տարի է անցել։ Հայրը չկար արդեն, և ինքը դպրոց գնաց մոր ուղեկցությամբ։ Ծանր տարիներ էին, պատերազմը նոր էր ավարտվել։ Հացի խնդիրը մնում էր որպես օրակարգի առաջին հարց։ Ծաղիկ որտեղի՞ց, որ դպրոց տաներ։ Իսկ հիմա ուսումնական տարվա առաջին օրը ամեն մի դպրոց վեր է ածվում ծաղկանոցի։ Հիշում է նաև, մայրն առանձնապես հուզված չէր, ոչ ժպիտ, ոչ լաց ու կոծ։ Միայն մի անգամ կամաց շշնջաց.— Ափսոս, որ հայրդ չտեսավ,— ու թաշկինակը տարավ խոնավացող աչքերին։ Այդ ժամանակ ոչ ինքն էր մենակ, ոչ մայրը։ Նույն բակից միաժամանակ առաջին դասարան էին գնում վեց երեխա, իր խաղընկերները։ Մայրն էլ սրանց մայրիկների հետ էր, գործնական ղրույց էր վարում։ Մինչև որ հնչեց զանգի բեկբեկուն ձայնը, ապա՝ մի դեռահաս ջոկատավարի ծղրտոց,— ուշա-դրությո՜ւն...

Դպրոցի դիրեկտորը, որ պատկառելի արտաքինով մի կին էր, սկսեց խոսել։ Սկզբում տպավորություն չէր թողնում. բայց գնալով և նրա ձայնն էր առնականանում, և ունկնդիրներն էին զգաստանում։ Առանձնապես տպավորվել են այս խոսքերը.— Մեր մեծ հաղթանակը ձեռք է բերվել շատ ծանր գնով։ Միլիոնա-

թվայնացրել է 1915.info կայքը

վոր նահատակներ են մնացել ազգի ճամփաներին, նրանց մեջ՝ շատերիս ամուսինները, եղբայրներն ու հայրերը։ Նրանք զոհվեցին, որ աղատ ու խաղաղ կյանքով ապրի մեր երկիրը, որ զպրոցի սրբազան ճամփան երբեք չփակվի մեր երեխաների առաջ։ Ձեր հայրերից շատերն էլ տուն դառնալ չկարողացան. ձեր մեջ, գիտեմ, կան երեխաներ, որոնք ծնվել են իրենց հոր բանակ մեկնելուց հետո, ուրեմն նրանք իրար տեսնելու բախտը չեն ունեցել, ու չեն հանդիպելու։ Բայց զոհված հերոսների արյունը, լույսի փոխարինված, շարունակում է լուսավորել ձեր անցնելիք ճանապարհը։ Ուրեմն, արժանի լինենք նրանց սուրբ հիշատակը վառ ու անմոռաց պահելու պատվին...

Մայրն ու մի քանի ուրիշ կանայք արտասվում էին լուռ։ Մի ձևքով փխրուն աղջկա ուսին, մյուսով՝ սև հենափայտին ապավինած միոտանի զինվորական կար մոտիկ կանգնած, սա ծխում էր լուռ, և այնքան կարոտ ու ցավ կար նրա ծխախոտի աչքերում։ Թեկուզև անդամալույծ, բայց և այնպես տուն է եկել և իր մինուճարին դպրոց բերելու երջանկությունն է վայելում...

Իսկ վաղը իր Գուրգենին ինքն է դպրոց տանելու, և ինչպե՞ս է սպասել այդ օրվան։

Դպրոցի ընդարձակ բակն այնքան մարդաշատ է։ Նվ դժվար է որոշել, ծնողներն ու ուսուցիչնե՞րն են շատ թե՞՝ երեխաները։ Քիչ չեն նաև պապիկներն ու տատիկները, որոնց շարժուձևի մեջ մի զուսպ հպարտություն կա, մի անշտապ հանդիսավորություն։ Առանձնապես խանդավառ ժպիտն է թևածում երեխաների շառագունած դեմքերին, և դժվար է որոշել այդ շառագույնը ներքին հուզմունքի՞, թե՞ վարդ ու մեխակի շռայլ բուրմունքի արտացոլումն է։ Գուրգենին դպրոց է բերել ինքը, մայրը, ոչ հայր, ոչ պապ ու տատիկ։ Ծնողական ժողովներին էլ միայն ինքն է մասնակցելու, ուրիշը չկա։ Ու չի՞ լինելու... Այսօր մի ուրիշ դպրոցի բակում այսպես մոլոր ու խանդավառ կանգնած է նաև Արշակը, Հրանտի ու Նվարդի տղան։ Տեսնես ո՞վ կա նրա կողքին, մա՞յրը թե՞ տատը։ Իսկ Հրանտի ներկայությունը մի՞թե բացառվում է։ Ո՛չ, իհարկե, բայց նա այնքան զբաղված մարդ է։ Անհամ բացատրություններ ես հնարում։ Դե՛, վերջապես, այս գործի տերը հիմնականում մայրերն են։ Իսկ հայրեր ու պապիկներ քի՞չ կան այս բակում։ Ահա այն նիհար ու չոր-չոր Վարազդատը. իրենց գործարանում է աշխատում, և լսել է, ժողովներում հաճախ են նրան գովել։ Այնպես է բռնել իր թմբլիկ աղջկա ձեռքից, ասես

թվայնացրել է 1915.info կայքը

վախենում է նրան կորցնելուց։ Ուրախության հետ միասին նաև թախիծն է ակոսում նրա դեմքը։ Կինը մահացավ անցյալ տարի, հիմա ինքը նաև մայրություն է անում իր երկու բալիկներին։ Իսկ Հրանտը, համոզված է, դպրոց չի գնացել, երևի նրա համար էլ հեշտ չէ, մեկին անտեսել բոլորովին, մյուսին դպրոց տանել։ Հիմար բաներ ես մտածում, այդ հակասական երկվությունը երևի նրա սրտում իր չնչին բաժինն իսկ չունի... Այդ ով ասաց, թե տիկին Նվարդը վերջապես երեխայի է սպասում։ Այո՛, թամա-րից է լսել։ Իսկապես որ բնության ու մարդկային կյանքի առեղծ-վածները չես կարող վերծանել մինչև վերջ։ Այսքան տարի հետո, ուղղակի հրաշքի նման բան է։ Եվ ինքն ուրախ է, աստված վկա։ Միայն չի կարող նաև չխոստովանել, որ սրտի մի թաքուն ան-կյունում ինչ-որ մղկտացող լարեր են կտրվել... Երկու օր առաջ Սրվանդն իրենց մոտ էր, ցանկություն հայտնեց մասնակցելու Գուրգենի այս դպրոցամուտի արարողությանը։ Վաղուց չեմ եղել, ասաց, պարզապես հետու անցյալի մի քաղցր օրվա անմոռաց պատկերը վերականգնել եմ ուզում։ Ինքը մհրժեց կտրականա-պես, ի՞նչ կմտածեն մարդիկ, թեկուզ հենց Գուրգենը, դու որպես ի՞նչ ես գալիս։ Որպես Գուրգենի ապադա... լեզուն կապ ըն-կավ, նախադասությունը տեղ հասցնել չկարողացավ։ Իսկ որ գար, ի՞նչ կլիներ. անընդհատ վանում ես, սա էլ քո հերթական անխելքություններից չէ՞։ Ջգիտի, վերջնականապես կողմնորոշ-վել չի կարողանում։ Մի բան միայն կասկածից դուրս է, որ Գուրգենի բոլոր ուրախություններն ու դառնությունները բացա-ռապես ծանրացած են իր ուսերին։ Եվ ինքը սիրով կտանի այդ սրբազան բեռը մինչև իր օրերի վերջը։ Իսկ հոր բացակայու-թյունը Գուրգենն առայժմ չի զգում, համենայնդեպս, այդ մասին լուրջ խոսք չի եղել։ Մեկ-երկու անգամ Անատոլիին է հիշել։ Առանձնապես հիվանդագին է ընդունում Սրվանդի ուշանալը.— այսօր էլ չեկավ քեռի Սրվանդը,— դժգոհում է հաճախ։ Դե՛, այդ ոչինչ, քեռու ուշանալն այնքան էլ վտանգավոր չէ։ Բայց մի օր ամենայն լրջությամբ կհարցնի, չէ՞, թե ո՞ւր է իր հայրը, ո՞վ է նա, ես ուզում եմ նրան տեսնել։ Ի՞նչ պիտի ասի, ոչ մի կերպ չի գտնում այդ հարցի խելոք պատասխանը։ Կամ՝ հնարավո՞ր է գտնել։ Հիշում է, երբ, ի պատասխան տղայի միամիտ հարցի, ինքն ասաց, թե քո հայրը գնացել է ուրիշ տեղ, դարձել է ուրիշի հայր, երեխան անակնկալի եկավ, ու կամաց ասաց՝ նա ինձ պետք չի։ Ու շուտ էլ մոռացավ այդ խոսակցությունը։ Բայց տա-

թվայնացրել է 1915.info կայքը

րիների հետ նրա հիշողությունը նոր պահանջներ կառաջադրի, ճշմարտության երեսի ծածկոցը դեն նետելու փորձեր կանի։ Ինչպե՞ս պիտի լուծի այս կնճռոտ հարցը։ Մոլորվել է մութ բավիղներում, կորցրել է ելքի դուռը։ Հիմա ահա նրան իր ձեռքն է մեկնում Երվանդը, օգնել է ուզում։ Իսկ միայն օգնությամբ կարելի՞ է լուծել այդ հարցը։ Օգնությունը տկարի և անճարի բաժինն է, ինքը հավասար իրավունքի ակնկալություն ունի, ստացածի չափ տալու պատրաստակամություն, այլապես միտանի սերն ո՞ւմ է պետք. հենակներն այստեղ աննվիք չունեն... իսկ կյանքը գնում է, դժվարամարս, բայց և հրաշալի կյանքը, որը մի անգամ է տրվում մարդուն։ Անիմաստ ու հեռանկարից զուրկ քո սիրուց ի՞նչ ես սպասում կամ ի՞նչ ես ստանում։ Մանավանդ տալիք չունես։ Ծառի ամենաբարձր ճյուղից կախված խնձոր ասես, ճիշտ է, կարմիր է ու նաև համով, բայց այդ ճյուղին մոտեցող ու խնձորը պոկող-վայելող չկա։ Մինչև ե՞րբ։ Մինչև խնձորը կվխկի ծառի վրա կամ քամու և հողմի շնչից ծառատակ կնետվի ու խոզի բաժին կդառնա։ Մի՞թե գիտակից մարդը չպետք է կանխի այդ պրոցեսը, փորձել գոնե պարտավո՞ր է նա։ Սիրը երջանկություն անցնում է անկանգ հոսող ջրի նման, առաջ վազել չկարողացար, գոնե ինքդ քեզ մի դատապարտիր անհուսությեն ետ մնալու վտանգին։ Է՞, ուզում է չդատապարտել, որ չի՞ կարողանում։ Մինչև ե՞րբ։ Ջգիտի, այդ հարցի պատասխանն այնպես դժվար է գտնել։ Իսկ Երվանդը սպասում է, այդ ուշացած ճնձորի ետևից ծառը բարձրանալու փորձեր է անում։ Ուզենաս, հենարան կդառնաս նրա համար, չուզենաս՝ աստիճանները կհանես ոտքի տակից ու իրեն գետնովը կտաս... Ուզենաս, չուզենաս, այն տերևախաղի նման՝ սիրում է, չի սիրում...

Արդեն կարդում են երեխաների ազգանունները, բաժանում են ըստ դասարանների։ Աշխեհը սթափվեց արագ, մտորումների երազային աշխարհից վերադարձավ դպրոցի բակ, որտեղ թվում է թե շուրջպար են բռնել ժպտածիծաղ երեխաներն ու բազմագույն ծաղիկները։ Ու հանկարծ նրա ականջին հասավ.— Մարգարյան Գուրգեն։ Սիրտն ասես խենթացավ միանգամից, շնչառությունն էլ ընդհատվելու փորձեր էր անում։ Կռացավ, գրկեց տղայի ուսերը, սեղմեց իր կրծքին ու կամաց շշնջաց.

— Դե՛ գնա՛, բալիկս.— հիշեց մոր մի խոսքը և ավելացրեց, ասես՝ նրա անունից,— Թող քո դպրոցի ճամփին միշտ կանաչ լույս վառվի... ծաղիկները մոռացար, Գուրգե՛ն։

թվայնացրել է 1915.info կայքը

40.

Հրանտը տանը չէ. Կիրուվական է գնացել երկու օրով, առաջավոր փորձին նվիրված խորհրդակցությանը մասնակցելու։ Տանը երևքով են մնացել, սկեսուր, հարս ու թոռ։ Իսկ ե՞րբ թոռը թոռնիկներ կդառնան։ Բան չմնաց, հա՞...

Արշակը հոր գրասեղանի մոտ նստած դասերն է պատրաստում։ Այնպես լուրջ է, խորասուզված։ Առաջին տառերն է գրում, և ի՞նչ ջանասիրությամբ, ասես նկարում է դարերի համար։ Մայրը հեռվից հետևում է տղայի տառապանքին ու սիրտը կծկվում է մի անորոշ ցավից. ինչո՞ւ Տանջվում է երեխան։ Դե՛, դա ի՞նչ տանջանք է, սովորում է, և դա նրան պետք կլինի ամբողջ կյանքում։ Այնուամենայնիվ... Չհամբերաց, մոտեցավ գրասեղանին։

— Ինչ է, դժվարանո՞ւմ ես, օգնե՞մ, բալիկս։

— Գ-ն այնքան սիրուն չի ստացվում, մա՛մ, ձեռքս էլ ոնց որ դողում է։

— Ոչինչ, կանցնի։ Իսկ Գ-ն ահա այսպես պիտի գրել, տե՞ս։

Լսվեց սկեսուրի փոքր ինչ կոշտ ձայնը.

— Նվարդ, ինձ մի բաժակ ջուր չէի՞ր տա։

— Հիմա՛, մայրիկ։— Նվարդն շտապ անցավ խոհանոց։ Բայց գիտի, ջուրը պատրվակ է. մայրիկն ուզում է, որ ինքը շատ չխառնվի երեխայի գործերին, ինքնուրույնությունից չզրկի նրան։

— Հենց առաջին օրվանից Արշակս պետք է իմանա, որ ամենափոքրիկ գործին անգամ կարելի է հասնել ինքնուրույն աշխատանքով։ Ջեմ սիրում, երբ երեխային տված խնդիրը մայրն է լուծում, շարադրությունը հայրն է գրում։ Էդպես են անում, որ երեխան հենց սկզբից ծուլություն է սովորում։ Նվարդը համաձայն է, գտնում է, որ ճիշտ է մայրիկի պահանջը, բայց մեկ-մեկ չի կարող չխառնվել, ավր այս մի մատ երեխայի ուսերին միանգամից այդքան բեռ դնել։ Միաժամանակ իր զարմանքը թաքցնել չի կարող.

— Մայրիկ, չնեղանաս, խնդրում եմ, ընդամենը հինգ դասարանի կրթություն ունես, այդ ճիշտ բանները որտեղի՞ց գիտես։

— Դե, դրա համար ոչ մեծ խելք է պետք, ոչ էլ մեծ կրթություն։

Հեռախոսը զանգահարեց երկար։ Հրանտն էր, Կիրուվականից էր խոսում. միայն ինչո՞ւ այսպես վատ է լսվում։

թվայնացրել է 1915.info կայքը

— Ես լավ եմ, տեղ եմ հասել, տեղավորվել հյուրանոցում, ձեղնից եմ անհանգիստ։

Զարմանալի մարդ է այս Հրանտը. առավոտյան է դուրս եկել տնից, անհանգի՞ստ եմ, հավանաբար իր վիճակն է ուղում իմանալ։ Էլ ինչ միանգամից, ինչ-որ բունցք դեմ առավ կոկորդին, ու հասցրեց միայն շշնջալ.

— Ամեն ինչ կարգին է, Հրանտ։— Քիչ հետո կարողացավ ավելացնել,— մայրիկն ասում է՝ զգույշ եղիր, այդտեղ խոնավ է...

Լուսիկ մայրը գոհ ժպտում էր քթի տակ։

— Քեզ կարգին պահիր, Նվարդ։

— Լավ, դե, որ ասում ես...

— Իսկ Արշա՞կն ինչ է անում։

— Իր դասերն է պարապում։ Գիտե՞ս, Հրանտ, այնպես լավ է գրում Գ-տառը, հետո կգրի Գրանտ, ինչպես այն Ռոզա Պավլովնան էր ասում, հիշո՞ւմ ես, Գրանտ Արշակովիչ, Արշակ Գրանտովիչ...

Սրնկոն երկարել-հասել է գիշերվա դռանը։ Խաղաղվել է քաղաքը։ Դրսից եկող ձայներն ու աուլոցները աստիճանաբար խլանում ու խավարի ծոցն են անցնում։ Արշակը քնել է խաղաղ։ Երևի երազ է տեսնում, գունագեղ մի հրաշք. այնպիսի հիացական ժպիտ է ծաղկել նրա դեմքին։ Հարս ու սկեսուր, իրարից թաքուն, երեխայի մահճակալի կողմն են նայում ու ժպտում են թաշկինակի մեջ։

— Աղջիկ ջան, դու չասացիր, թե ինչո՞ւ էր տրամադրությունդ ընկած, հենց որ դպրոցից եկար, բա՞ն էր պատահել։

— Այդ ինչպե՞ս նկատեցիր. ախր ես աշխատում էի ցույց չտալ... Է՞, մայրիկ, հաճախ ինչո՞ւ են մարդիկ այդքան դաժան, մի՞թե չարությունից հաճույք են ստանում։

— Կան էդպիսի մարդիկ, ջուր պղտորող, տուն քանդող. հողս նրանց գլխին։ Իսկ մեզ հե՞տ ինչ գործ ունեն, այդ ո՞վ է քո սիրտը պղտորել։

— Մորս հասակի մի ամոթ չունեցող կին, հարևան բակում է ապրում։

— Հետո՞, ինչ հաշիվ ունի մեզ հետ։

— Հաշիվ չունի, չարության թույն ունի, չգիտի որտեղ թափի։

— Դե, կարգին ասա, բան հասկանամ։

— Գիտես, որ գնացի դպրոց՝ Արշակին բերելու։ Մի փոքր

թվայնացրել է 1915.info կայքը

ուշացա, զանգը տվել էին ու երեխաները բակ էին դուրս եկել։ Տեսնում Արշակս մի անկյուն քաշված լաց է լինում։ Հենց այդ րոպեին մի տղա նրա մոտից շտապ հեռացավ։ Մոտածում եմ, երեխաներ են, երևի վիճել կամ կռվել են թեթև։ Մոտեցա, թաշկինակով աչքերն եմ սրբում ու նաև խոսում եմ, ինչպես մեծի հետ. դու արդեն պատրոցական ես, ասում եմ, բա քեզ սպո՞ւմ է լաց լինելը։ Իրեն հավաքից ու ի՞նչ հարցնի, որ լավ լինի,— մա՛մ, ասում են դու իմ մաման չես, ճի՞շտ է... Սիրտս համարյա կանգնելու վրա էր. հազիվ մնացի ոտքի վրա։ Այդ հիմար խոսքն, ասում եմ, դու ումի՞ց ես լսել։ Գլխով ցույց տվեց հեռվում տատի հետ կանգնած մի տղայի. իր մոտից հեռացած այն երեխան էր, իր դասագիրքը կորցրել է, ասում է, իմն ուզեց, չտվեցի, կատաղեց, իսկ դու, ասում է, ուրիշի երեխա ես, քո մաման խորթ է։ Ասուշ, ասացի նրան, նա էլ թե՝ ասուշը դու ես, տատիկս է ասում, որ դու վերցնողի ես, քեզ ուրիշ հիվանդանոցից են բռնել...

Նվարդն այլևս խոսել չէր կարող, փլվեց մոտիկ աթոռին ու լուռ արտասվում էր։

— Դու էլ էդ հիմար խոսքը սրտիդ մոտ ես ընդունում, Նվարդ, բա ամոթ չի՞, դու հո երեխա չե՞ս։— Լուսիկ մայրիկը փորձում է մխիթարել հարսին, բայց ինքն էլ է լցված, խոսքը դժվար է ելք գտնում նրա շուրթերից։

— Ես էլ ես, որ նայեցի այդ կնոջ կողմը, ինձ թվաց թե նրա դեմքին ժպիտ կար. ուրեմն գոհ է իր արածից, վայելում է իր չարության պտուղները։ Ես նա մայր է, թոռ է մեծացնում, ինչո՞վ է տարբերվում օձից։

— Էդպիսիների մոտ օձն անմեղ կենդանի է. գրողը տանի նրան։ Դե լավ, բանի տեղ մի դիր, նրա հերն էլ անիծած։

— Եթե գործը վերջանար մեր բանի տեղ չդնելով։ Երեխայի սիրտն են թունավորում, ես սրանից եմ վախենում։

— Դու հանգիստ մնա, աղջիկ ջան. էսա որ երեխա էլ ունեցար, էդ չար լեզուներն իրենց բունն են մտնելու. դրանց ինչքան բանի տեղ չդնես, էնքան հաղթողը դու կդառնաս, էդպես է, չար լեզուն կամ պետք է հիմքից կտրես, կամ էլ նրա ասածը չլսելուն տաս. ինքն իրեն կհոգնի, կհոգնի ու ձենը կկտրի։ Այ կտըրվի՛ դրանց քոքը...

Նվարդը լուռ մոտեցավ երեխայի մահճակալին ու ծածկեց

թվայնացրել է 1915.info կայքը

նրա բացված ուսը։ Պետք է վերջացնել այս տհաճ խոսակցությունը, առանց դրան էլ հոգսի պակասություն չկա։

— Արշակս համ մեծանում, համ էլ խելոքանում է, արևին մատաղ.— Նվարդի ցանկության ջրաղացին ջուր է լցնում Հուսիկ մայրիկը։

Հարսը սիրում է մեկ-մեկ խաղալ սկեսուրի հոգու հետ, չնայած այսօր իր տրամադրության վրա սև ամպ կա նստած, հո չի՞ թողնելու, որ չարը տոնի իր հաղթանակը։ Ու կատակով ասաց.

— Աչքիդ է երևում, մայրիկ։

— Աղջի, բերանդ կարգին բաց արա։

Ու ծիծաղում են միասին։ Այդ անկոչ արցունքներին պետք է պատասխանել ծիծաղով։ Եվ չթուլանալ, երբե՛ք։

— Ասում ես ինչքան մնա՞ց,— հանգիստ հարցնում է Հուսիկ մայրիկը։

— Երևի մի ամիս։

— Բարով-խերով գա էդ օրը։ Աղջիկ ջան, հո չե՞ս վախենում։

— Ջէ՛, մայրիկ, ուղղակի շտապում եմ. մի տեսակ անհամբեր եմ դարձել։

— Շտապելու բան չկա, ջա՛նս, օրը կգա, բարին հետը։ Ծանր, բայց և հաճելի ցավ է, չվախենաս։ Առաջին երեխայով ես էլ էի մի քիչ դռնեդուռ ընկել. վատ էի քնում, ախորժակիս դռները զոռով էին բացվում։ Եվ ես ղգում էի, որ էդ բոլորը շատ մտածելուց է, անհանգիստ վիճակից։ Հետո համոզվեցի, որ դա ամենաքաղցր ցավն է։

— Այս տարիքում երևի դժվար կլինի։

— Երեսունդ նոր է անցել,— ա՛յս տարիքում։ Արշակիս քույր կամ եղբայր պարգևիր։ Հա՛, քեզ մի բան էլ եմ խնդրելու. աստծո տվածից չհրաժարվես, երբե՛ք. ինչքան կարողանաս, կբերես, երեխան մարդուս ամենամեծ հարստությունն է։ Ես կարող է չլինեմ, բայց դու, մատաղ քեզ...

— Մայրիկ, ինչե՞ր ես ասում,— ընդոստացավ Նվարդը,— ու չմոռանաս, խնդրում եմ, որ խոստացել ես պահել իմ բոլոր երեխաներին։

— Աչքիս վրա, աղջիկ ջան, բա ես հրաժարվո՞ւմ եմ։ Դե, կյանք է, արդեն ջահել չեմ, մեկ էլ տեսար...

— Արի լավ բաներից խոսանք, մայրիկ։

— Ճիշտ ես ասում, աղջիկս, լավ բանից լավ՝ էլ ի՞նչ կա... Գիտե՞ս, երևի չեմ ասել, էս մեր Արշակի պապ Արշակը իր մոր

թվայնացրել է 1915.info կայքը

տասնմեկերորդ երեխան է եղել։ Սվ ես, որ ամուսնացա, սկեսուրս դեռ ապրում էր. ընդգան կին էր։ Ասում էի, այ մեր, էդքան երեխա ո՞նց ես բերել ու պահել, բա քեզ հոգնել չկա՞։ Զարմանում էր, հոգնե՞լա որն է, աղջի, ասում էր, բա իսանը կհոգնի՞, էն էլ երեխա պահելուց։ Ամեն մի երեխա մորը ջահելացնում է, էս բանը դու լավ իմացիր, ասում էր, ինչքան կարողանաս, էնքան կբերես, աստծո աչքին քարով չտաս.. Դե՞, գիտես, որ ուժս երկուսին պատեց միայն։ Իսկ սկեսուրս երեսունից ավելի թոռ ու ծոռ ուներ։ Իր ամուսնուց էլ տաս տարի ավել ապրեց։ Ու մի տեսնեիր, թե հարս ու աղջիկ, թոռ ու ծոռ ինչպես էին ողբում նրա մահը, բախտավոր կին էր։ Հա՛, հիշում եմ, մեռնելու գիշերը ես էլ նրա մոտ էի։ Մինչև վերջին շունչը խելքը տեղն էր, քաղցր խոսքը բերանում։ Ասում էր՝ էնպես հեշտ եմ գնում էս աշխարհից, պարտք չունեմ, խիղճս էլ հանգիստ է։ Մարդս պետք է իր բաժին կյանքը նամուսով ապրի ու նամուսով էլ գնա։ Մեռնակ ափսոս, ասում է, որ փոքր աղջկաս փոքր տղայի պսակը չտեսա։ Լռեց երկար ժամանակ, շունչը տեղը բերեց ու կամաց ասաց՝ ոչինչ, նրան էլ իմ օրհնանքն եմ թողնում ու հարսանեկան մատանիս։ Ձեռքը մեկնեց, որ մատանին հանենք մատից։ Ոչ մեկս ուժ չարեցինք ձեռք տալ նրան։ Աչքերը ոլորեց, էդ դուք ե՞րբ եք իմ խոսքը գետնովը տվել։ Ես մատանին կհագցնենք իմ ապագա հարսի մատին. աստված նրան շնորհք ու նամուս տա և շատ երեխաներ... Դե, մնացեք բարով, այ իմ լավ բալաներ,— սա էր նրա վերջին խոսքը։ Ու հանգավ՝ նավթը պրծած լամպի նման։ Աստված նրա հոգին լուսավորի, լավ կին էր։

— Էլի տխուր խոսքի անցանք, մայրիկ,— անհամարձակ բողոքեց Նվարդը։

— Չէ, հարս ջան, սա տխուր խոսք չի. լավ մարդուն հիշելը լավ լինելու ցանկություն է նաև։ Ես նրա չափ երեխաներ, մանավանդ՝ թոռներ չունեցա, ճիշտ է, բայց տա աստված, որ իմ առաջ էլ պահված լինի էս աշխարհից գնալու նրա խաղաղ բախտը։

Նվարդը նորից ըմբոստացավ։

— Մայրի՛կ, դու նորից գնալու մասին ես խոսում, իսկ մենք հիմա միայն պիտի մտածենք գալու, եկողի մասին։

— Համաձայն եմ, աղջիկս, միայն մի շոկում պիտի անեմ, արի մտածենք եկողների մասին, ես նրանց ցա՛վը տանեմ։

թվայնացրել է 1915.info կայքը

42.

Հերթական շրջագայությունից հետո իր աշխատասենյակն էր վերադառնում գործարանի գլխավոր ինժեները։ Տրամադրության ծառն ասես նոր էին ջրել, արևն էլ իր ոսկեծուփ վարսերն էր փռել նրա ծաղկահանդերձ տերևների վրա։ Այնպես թեթև էր շնչում և այնպես առույգ էր քայլում։ Բոլոր արտադրամասե-րում՝ անհրաժեշտ կարգ ու կանոն, մաքրություն, լարված աշ-խատանք։ Միայն վարպետներից մեկը, դազգահի մոտ կանգնած, ննջում էր անօգնական։ Ստիպված էր դիտողություն անել և՝ բա-վական խիստ։ Վարպետը ժպտում էր մեղավոր.

— Հարսանքահար եմ, ընկեր գլխավոր, ամբողջ գիշեր չեմ քնել, ներող կլինեք։

Տհաճ միջադեպ էր, փոքր-ինչ թունավորեց նրա տրամադրու-թյունը, բայց, բարեբախտաբար, լավի դռները փակել չկարողա-ցավ։ Ու հիմա շտապում էր իր աշխատասենյակը և միաժամանակ մտածում էր, թե ինչ հսկայական գործարանում է աշխատում ինքը։ Մեծ ու ուրույն մի աշխարհ, իր ուրախություններով ու դառնություններով, հոգս ու ցավերով։ Եվ այդ մեծ աշխարհում ինքը երկրորդական դեմք չի։ Երկրորդն է, դիրեկտորից հետո, ուրեմն՝ նաև երկրորդ պատասխանատուն։ Եվ որքա՞ն հաջող է կրում այդ մեծ պատասխանատվության բեռը։ Ուրիշները, չգիտի, իսկ ինքը լրի՞վ գոհ է իրենից, իր աշխատանքային գործունեու-թյունից։ Ոչ, իհարկե, անելիքներն այնքան շատ են, հաճախ չի հասցնում, պարզապես ժամանակը չի հերիքում· վատ շախմա-տիստի նման երբեմն ցայտնոտի մեջ է ընկնում։ Իսկ քի՞չ է պատահում, որ այդ ցայտնոտ կոչվածը ուղտի նման չոքում է նաև բարձրակարգ շախմատիստի դռանը։ Համենայն դեպս լավ է, որ գլխավորի նկատմամբ բավարար չափով հարգանք կա, և դա մի առանձին հպարտությամբ է լցնում իր սիրտը։ Բայց նաև պարտավորեցնում է, և՝ շատ։ Շտապ մտավ իր աշխատասեն-յակը։ Ու դեռ չէր հասել դրասեղանին, երբ հպարտ հնչեց ավ-տոմատ հեռախոսը։ Սենոն էր, իր սովորության համաձայն՝ վատ տրամադրությամբ։

— Ընդունիր նախկին ընկերոջդ ջերմ բարևներն ու լավա-գույն ցանկությունները։

— Նորի՞ց նախկինացար, Սենո տղա։ Գործե՞րդ ինչպես են։

— Պակաս տհղ չկա։

թվայնացրել է 1915.info կայքը

— Կարծեմ գործդ փոխելու, այսինքն՝ պաշտոնավարության աստիճանների վրա մի քայլ առաջ գնալու ցանկություն ունեիր, ի՞նչ դառավ։

— Կլինի, ախպերս, միայն երկու բան է պետք դրա համար, Հավատ ու համբերություն։ Երկուսից էլ ինձ մոտ «դեֆիցիտ» չկա։ Երկար չի տևի, և դու կլսես իմ նոր թռիչքի մասին։

— Այ տղա, զգույշ ոտքդ կամ թևդ չկոտրես։

— Հանգիստ մնա, և այդքան թյուր կարծիք մի ունեցիր Կիրակոսի որդի Սեննեքերիմի մասին... Լավ, շարունակությունը հետո. վերադաս կանչում է ինձ, գնում եմ նրա հավարին։

— Ուրեմն քեզ նաև կանչո՞ւմ են. ես էլ կարծել եմ, թե քեզ մոտ են գալիս։

— Համով խոսք է, բան չունեմ ասելու Բայց դու իզուր ես կարծում, թե ես լրիվ իմ գլխի տերն եմ. կանչողը նաև կանչվում է, այդպես է կարգն աշխարհի...

Դիրեկտորը ներքին հեռախոսով կապվեց գլխավոր ինժեների հետ.

— Հրանտ Արշակովիչ, հիշո՞ւմ ես, նախնական ցուցականեր պիտի կազմենք հնգամյա պլանների կատարման առիթով, ժամանակ կունենա՞ս։

— Հիմա գալիս եմ, Սուրեն Մարտիրոսովիչ։ Գուցե Սվետան էլ մի-մի սո՞ւրճ կպատրաստեր։

Հիմա, դիրեկտորի առանձնասենյակում նստած, և սուրճ են խմում, և հարմար թեկնածուներ են ընտրում՝ պարգևատրման ներկայացնելու համար։

— Մենք առայժմ անդրադառնանք միայն ինժեներատեխնիկական անձնակազմին. բանվոր-ծառայողերի ցուցակները կպահանջենք արտադրամասերի ու բաժինների պետերից։

— Ես էլ այդպես եմ մտածում, Սուրեն Մարտիրոսովիչ. միայն, կարծում եմ, վատ չէր լինի, եթե մեկ-մեկ մենք էլ խելոք հուշարարի դերում հանդես գայինք։

— Հասկանալի է, եթե ճանաչում ենք, գտնում ենք, որ արժանի է, իրավունք էլ չունենք լռելու Օրինակ, Սմբատի մոտի այն Մուշեղին ես սիրով կդնեի ցուցակի գլխին. հենց արտադրամասի պետ Սմբատ Ոսկանյանի կողքին։

— Ես սիրով կպաշտպանեմ այդ առաջարկությունը, չնայած Մուշեղին բաժին է հասնում հնգամյակի կեսը միայն։ Այնուա-

թվայնացրել է 1915.info կայքը

մննայնիվ, իմ կարծիքով, ճիշտ կլիներ առաջին հերթին նկատի ունենալ հին աշխատողներին, վերջիվերջո պարգևը հնգամյակի պլանները կատարելու համար է տրվում։

— Համաձայն եմ, շեշտը դնել հների վրա, չմոռանալով նորերին։ Արտադրամասի պետ Բաբկենն էլ հներից է, մի քանի հնգամյակ է գլորել, բայց թույլ աշխատող է, չնայած, համաձայն եմ քեզ հետ, որ լավ մարդ է։ Ել գիտե՞ս ինչ, ես կարծում եմ, թե մի երկու-երեք տարի հետո Բաբկենին կարելի կլինի ջոշակի ուղարկել, իսկ նրա տեղն առաջ քաշել այդ Մուշեղին։ Համոզված եմ, որ լավ կաշխատի։ Կուսակցական է, չէ՞։

— Այո, արդեն մի տարվա էլ ստաժ ունի։ Ի միջի այլոց, Սուրեն Մարտիրոսովիչ, շուտով Մուշեղի հարսանիքն է լինելու, և գիտե՞ք որտեղ, Սպիտակում։

— Լավ է։ Իսկ մեզ չի՞ կանչի այդ հարսանիքին։

— Արդեն հրավերը կա. կարո՞ղ ենք մասնակցել։

— Իսկ ինչո՞ւ չէ։ Գիտե՞ս, ես չեմ հիշում, թե վերջին անգամ երբ եմ հարսանիք գնացել։ Այսքան ետ մնալն էլ մի բան չի։ Սրի պայման կապենք.— գնում ենք։ Միայն մի երկու օր շուտ իմաց կտաս։

— Հրաշալի է։ Այնքա՞ն կուրախանա։

— Ախր կոլեկտիվի հետ կապերի ամրապնդման լավագույն ձևերից մեկն էլ անձնական հանդիպումներն են, միասին ուսվող աղուհացը։ Դու, իհարկե, Մուշեղին դեռ չասես մեր համաձայնության մասին. ով գիտի, մեկ էլ տեսար մի բան խանգարեց։

— Բոլոր դեպքերում մենք կաշխատենք չկոտրել տղայի սիրտը։ Այնքան էլ լավ հարսնացու ունի։

— Դու նրան է՞լ գիտես։ Ո՞չ, այդ կապերի ամրապնդման հարցում ես քեզնից սովորելու շատ բան ունեմ։

Ցուցակի հերթը հասավ քիմիական լաբորատորիային։ Ել դիրեկտորը զարմանքով նկատեց, որ գլխավոր ինժեների ակտիվությունից հետք անգամ չմնաց։

— Այստեղ ես ցուցակը կսկսեի լաբորատորիայի վարիչ Աշխեն Մարգարյանից— ու դիրեկտորը մի քննախույզ հայացքով նայեց գլխավորին։

— Առանձնապես հներից չէ. գուցե դեռ շո՞ւտ է նրա համար։

— Ա՛յ, այս հարցում ես քեզ բոլորովին չեմ հասկանում։ Ել, կներես, չասել չեմ կարող, ուրիշ անգամ էլ նկատել եմ, որ Աշխե-

թվայնացրել է 1915.info կայքը

նի նկատմամբ դու լավ չես տրամադրված, մի՞թե իսկապես վատ կարծիքի ես նրա մասին։

Հրանտն այնպե՞ս էր կարմրել. երևի մարդ կարող է այդպիսի անհարմար վիճակ ապրել գողության մեջ բռնվելու դեպքում։ Դիրեկտորն էլ մի սևեռուն հայացքով նայում է Ստեփանյանին. թվում է, թե հիմա կասի՝ գիտեմ, դու մեղավոր ես նրա առաջ, այս նոր մե՞ղքն ինչու ես գործում, մի՞թե չես հասկանում, որ դա անհաջող քողարկում է...

Ստեփանյանն արագ ոտքի կանգնեց ու մոտեցավ ջրամանին։ Իսկապես խմե՞լ էր ուզում, թե՞ «հետքերը քողարկելու» փորձ էր։ Համոզված է, դիրեկտորը ոչինչ չգիտե, ննջադրություն է անում՝ առանց ետին մտքի։ Ուրեմն ի՞նչ կարիք կա խուճապի մատնվելու։ Թե՞ այսպիսի դեպքերում են ասում՝ դող, սիրտը դող...

— Աշխեն Մարգարյանն իսկապես որ լավ աշխատող է, եթե դուք հարմար եք գտնում, ես չեմ առարկում։ Միայն նրա հնգամյակն էլ դեռ չի լրացել։ Ով հետո, ես նրա նկատմամբ, հավատացեք, հարգանքից բացի, ոչինչ չունեմ։

— Ավելի լավ։ Իսկ ես մտածում էի, գուցե օրիորդ Անթառա՞մն է պատճառ դարձել, որ թառամեն Աշխեն Մարգարյանի նկատմամբ ունեցած քո վերաբերմունքի ծաղիկները... Անցնենք առաջ։

— Ցուցակը չի՞ մեծանում, Սուրեն Մարտիրոսովիչ. մեզ այդքան տեղ կտա՞ն։

— Ոչինչ, չի խանգարում։ Մի մոռացիր, որ այստեղ են նաև պատվոգրերի թեկնածուները։ Ես դեռ թաքուն պահած մի ընկեր էլ ունեմ։

— Եթե դա գաղտնիք է...

— Ինչ կարող եմ վստահել այդ գաղտնիքը։ Ի՞նչ ես կարծում, ճի՞շտ կլինի մոռանալ գործարանի գլխավոր ինժեներին, առանց գլխավորի ցուցակ տեսե՞լ ես։

Ծիծաղեցին անկաշկանդ։ Առաջինը լրջացավ Հրանտ Ստեփանյանը։

— Դիրեկտորի և գլխավորի հարցը թողնենք վիրապահի հայեցողությանը. մեզ հարմա՞ր է ծառից խնձոր պոկել՝ առանց այգեպանի համաձայնության ստանալու։

— Դե, մենք լուրջ պոկողներից ենք...

Լռեցին։ Կատակախառն տրամադրությունից հետք անգամ

թվայնացրել է 1915.info կայքը

չմնաց։ Դիրեկտորը տուն զանգահարեց, և ինչ-որ անկապ բաներ էր ասում.— երևի, այո, նկատի ունեցիր, կբերեմ, կգանք։

Իսկ Հրանտը մտքով նորից Աշխենի հետ էր. մի՞թե մեղքի բնույթը շարունակում է ծանրանալ իր ուսերին, այն աստիճան, որ ուրիշներին անգամ նկատելի է դառնում։ Ինչպե՞ս է, որ հասել է անաչառության սահմաններին խախտելու գայթակղությանը, և դա հույժ անկողմնակալ երևալու մարմաջից չէ՞, թե՞ այստեղ իր տխուր բաժինն ունի նաև վախկոտ-մեղավորի ողորմելի զգացումը։

— Հրանտ, արի մի պահ վերանանք այս ցուցակներից,— հեռախոսափողը դնելով՝ Ստեփանյանին դիմեց դիրեկտորը.— Զգարմանաս և չվախենաս, ուրախ ու տխուր բաներից պիտի խոսեմ։

— Այս ներածականն արդեն շատ էր զգաստացնող, Սուրեն Մարտիրոսովիչ։

— Զգաստությունը երբեք էլ գործին չի խանգարել... Գիտես, չէ՞, Հրանտ, իմ վաթսունն արդեն մոտենում է, ուրեմն ես իրավունք ունեմ մտածելու թոշակի անցնելու մասին։

— Ես կտրականապես բողոքում եմ։ Վաթսունն ի՞նչ տարիք է, մանավանդ առողջ մարդու համար։

— Լա՞վ առողջ եմ, չհաշված պատերազմից բերած արկի բեկորները, որ բուն են դրել թոքերիս մատույցներում... Մի խոսքով, մոտենում է այդ օրը, և բոլորովին էլ չի հարցնում մեր համաձայնությունը։ Մի քիչ ուշ, մի քիչ շուտ, լինելիքը պիտի լինի։ Եվ ես ինձ բախտավոր կզգամ եթե հասնեմ այդ օրվան։ Թոշակառու լինելն էլ երևի իր համն ու հոտն ունի։

— Համենայնդեպս, ես որքան նկատել եմ, մարդիկ ձգտում են ուշացնել այդ օրվա գալուստը, իսկ դուք, չգիտեմ ինչու, շտապում եք։

— Ոչ շտապելն է լավ, ոչ էլ ուշանալը։ Ես այս խոստակցությունն սկսեցի բոլորովին ուրիշ նպատակով։ Խնդրում եմ նկատի ունենաս, ընկեր Ստեփանյան, որ երբ էլ ես գնամ, դու պետք է ինձ փոխարինես. ավելի ճիշտ, ես առաջարկելու եմ քո թեկնածությունը և հույս ունեմ, որ կանցնի։

Գլխավոր ինժեները լրջորեն անհանգստացավ.

— Է՛, Սուրեն Մարտիրոսովիչ, ես վախենում եմ, որ ինձնից դիրեկտոր դուրս չի գա։ Շա՛տ եմ փափուկ, իսկ դիրեկտորին, ասում են, նաև բռունցք է պետք։

թվայնացրել է 1915.info կայքը

— Կոլեկտիվ ղեկավարելու շնորհքը, ճիշտն ասած, բոլոր-քի մեջ չեմ տեսնում, ինչ որ է. ես այս մասին ասացի, որ դու նկատի ունենաս, հոգեբանորեն նախապատրաստվես, հանկարծ որ առաջարկեն, անակնկալի չգաս։ Ու նաև այսօրվանից մտածես քեզ փոխարինողի մասին, դա էլ շատ կարևոր է։

Դռների մեջ երևաց քարտուղարուհին.

— Ներեցեք, Սուրեն Մարտիրոսովիչ, ես կարո՞ղ եմ գնալ. աշխատանքային օրը վերջացել է։ Շտապ էլ գործ ունեմ։

— Ախատ ես, Սվետա։— Նայեց ժամացույցին.— իսկապես որ ուշանում ենք, այս անգամ՝ տուն գնալուց։ Մարդ նաև կեն-ցաղում պետք է կարգապահ լինի։ Գնացինք, և՝ ուղիղ մեր տուն։ Այ տղա, քանի տարի է միասին ենք աշխատում, ոչ դու ես մեր տունը ոտք դրել, ոչ ես՝ ձեղ մոտ։ Սա իսկապես որ բանի նման չէ։

— Միանգամայն ճիշտ դիտողություն է, Սուրեն Մարտիրո-սովիչ. ես սիրով ընդունում եմ ձեր այս առաջարկությունը։

Հիմա միասին դիրեկտորի տուն են գնում։ Ու լուռ են, այլևս ասելիք չունե՞ն։ Հրանտ Ստեփանյանը զարմանքով մտածում է մարդուն լրիվ ճանաչելու դժվարությունների մասին։ Գիտեր, որ Սուրեն Մարտիրոսովիչը պատերազմի մասնակիցներից է, բայց որ դեռ արկի բեկորներ է կրում իր մարմնի մեջ, առաջին անգամն է լսում։ Ընդհանրապես խուսափում է պատերազմի մասին խոսելուց, ուրիշների նման գլուխ գովելու սովորություն չունի. չնայած մի լուսանկարում տեսել է, լուրջ շքանշանների արժեք է, ուրեմն լավ է կռվել։ Այ, մոտենում է մեծ հաղթանակի օրը, կարելի է կոլեկտիվի հանդիպումը կազմակերպել պատերազմի վետերան դիրեկտորի հետ. թող պատմի իր տեսածի ու ապրածի, իր մարտական ընկերների մասին, երիտասարդներին այն շատ է պետք։ Իսկ կհամաձայնվի՞։ Պետք է համոզել, ծայրահեղ դեպքում՝ պարտադրել։ Ինչ է, ապագա դիրեկտորի իրա-վունքո՞վ։ Սատանան տանի. այդ մի՞տքն ինչպես մտավ իր գլու-խը։ Ո՛չ, կխնդրի, կհամոզի դիրեկտորին, թող նա իր կոլեկտի-վին երևա նաև մարտական սխրանքի տեսանկյունից։ Եվ կպա-հանջի, որ նա այդ միջոցառմանը գա իր շքանշաններով լրիվ կոմպլեկտով։ Երևի այդ մեկը չհաջողվի, օգնության կկանչի կուսակազմակերպության քարտուղարին ու արհկոմի նախագա-հին։ Հենց վաղվանից պետք է գբաղվել այդ հարցով։ Իսկ ե՞րբ ե դիրեկտորդ տեսնելու քո տունը։ Հիմա հարմար չէ, Նվարդին

թվայնացրել է 1915.info կայքը

Նեղություն տալ չի կարող։ Թող բարով-խաղով ազատվի, հենց այդ առիթով էլ կհավաքվենք։ Իսկ հիմա, ահա, առաջին անգամ գնում է իր դիրեկտորի տուն, և՝ դատարկաձեռն։ Լավ չէ, բայց և ոչինչ անել չի կարող. հո չի՞ կանգնեցնի նրա մեքենան՝ սպասենք, ես ուզում եմ նվեր առնել... Կարևորն այն աղուհացն է, որ այսօր պիտի ուտեն միասին։ Եվ ինչո՞ւ միայն այսօր, մի՞թե աղուհացի զորությունն օրերով է չափվում։

42.

Ջյան է գալիս, խոշոր փաթիլներով։ Եվ ինչպիսի՜ արագությամբ. ասես երկնքում լարած բյուր մարտկոցներից բամբակի կնգուղներ են կրակում։ Ու շտապում են կրակողները, մեծ պլան ունեն, կատարել են ուզում։ Փաթիլներն իջնում են շտապ, համբուրվում խոնավ փողոցների հետ ու հաճույքից հալումաշ են լինում։ Միայն տանիքների ու ծառերի վրա է, որ կարողանում են «դիրքեր գրավել»։ Ջյան ճերմակ շուրթերն աստիճանաբար հաստանում ու առնականանում են, և համբուրվելու ցանկության վրա սառը ջուր է մաղվում։

Իսկ ամենաառատ ձյունն անգամ ի՞նչ կարող է անել Սրբուհի մորաքրոջը, ոչինչ։ Գլխաշորը քամու վզին փաթաթած՝ քայլում է անշտապ, ու որքան ծանրանում է ձյան շերտը նրա գլխին ու ուսերին, այնքան թեթև է քայլում՝ մայթերին ծվարած լճակների գոյությունն իսկ անտեսելով։ Դատարկ էլ չէ, ձեռքին մի կաշվե պայուսակ կա՝ պատկառելի չափսերով։ Ծանրությունից երևի քիչ թեքվել է մի կողքի վրա։ Քայլում է ու թեթև ժպտում քթի տակ. գիտի, քույրն անպայման կասի՝ աղջի, դու հո խելառ չե՞ս, էսքան շալակն ո՞ւր ես վրադ առել։ Իսկ քրոջ հա՞րսն ինչ կասի.— Մորաքույր, ինչի՞ համար է այս նեղությունը. հիմա թեյ կդնեմ, մի լավ կտաքանաք... իհարկե, ճիշտ չարեց, աղջկա տնից պետք է տաքսիով գար, ոչ թե տրոլեյբուսով։ Ինչ որ է. արդեն տեղ հասավ, մնում է երեք հարկ բարձրանալը։ Այստեղ արդեն պետք է դադար տա։ Սա սար բարձրանալու նման է, շտապեցիր, կարող է կես ճանապարհին մնաս։ Կանգնեց մի պահ, շունչը տեղը բերեց, հետո սեղմեց զանգի կոճակը։ Դուռն ուշ բացեցին, միայն Լուսիկն էր տանը։

— Բարև, քույրիկ. մի էս պայուսակը բռնիր, շորերս թափ տամ։

թվայնացրել է 1915.info կայքը

— Աղջի, էս դու իսկական ձմեռ պապի ես դառել։ Ներս Ելի։ Ինչ էլ ծանր է պայուսակդ, հո աղ չե՞ս բերել էս եղանակին, անխիղճ։

— Ինչի՞, դուք էնքան անհամ եք, որ ձեզ համար ա՞ղ բերեմ... Մի քիչ միրգ է ու գոմշի մածուն, Հրանտը շատ է սիրում էս ո՞նց է, մենակ ես։

— Նվարդը գնաց դպրոց, երեխային բերելու, հիմա կգան։ Նստիր, տաքացիր։ Ի՞նչ կա գյուղում։

— Ապրում ենք, հիվանդ չունենք. մեր դարդը մենակ Սաթիբեկն է։

Դուռը թեթև չխկաց. տուն մտան Նվարդն ու Արշակը։

— Ինչ լավ հյո՞ւր ունենք այսօր,— ուրախ բացականչեց Նվարդը ու փաթաթվեց մորաքույր Սրբուհուն.— ինչքան ժամանակ է մեզ մոտ չեք գալիս... Արշակ, մոտեցիր մորաքրոջը, թող քեզ սիրի։

Արշակը քայլ արեց հանգիստ ու բարձր ասաց.

— Բարև, մորաքույր։

— Բարին արևիդ, ախպե՞ր ջան,— գրկեց, համբուրեց կուշտ-կուշտ։— Գիտե՞ս, քո Արշակ պապին էի ախպեր ասում, աստված հոգին լուսավորի...

Նվարդը նախ դարձավ Արշակին.

— Դե՛, լվացվիր ու անցիր խոհանոց, մի բան կուտես, հետո դասերդ կպարապես·— ապա շտապ տնային մաշիկներ բերեց մորաքրոջ համար.

— Ձեր կոշիկները խոնավացել են, հագիր, մինչև դրանք կչորանան։

— Ապրես, հարս ջան։ Աիր շատ ես է ուշադիր, զորանա՞ս։

— Հիմա թեյ կդնեմ, լավ էլ տոլմա ունենք։

— Չէ, սոված չեմ, աղջկաս տանը հաց կերա. թեյից չեմ հրաժարվի... Մի թող տեսնեմ աչքիս ոնց ես երևում, հարս ջան.— ու «մուշտարու» աչքով նայեց Նվարդին, տնտղեց հայացքով, և առարկություն չվերցնող եղրակացությունը պատրաստ էր.— Աղջիկ ես ունենալու. դե, ոչինչ...

— Իսկ աղջիկը վա՞տ է, մորաքույր.— անհանգստացավ Նվարդը,— ես էլ ուզում էի...

— Աղջիկն էլ ոչինչ, ամա տղայի բանն ուրիշ է։

— Ի՞նչ ես աղջկա սիրտը կոտրում քո էդ պառավական խոսքերով,— ըմբոստացավ հուսիկ մայրիկը,— ժառանգը լավը լի-

թվայնացրել է 1915.info կայքը

նի, տղա թե աղջիկ, ի՞նչ տարբերություն. քո Սարոն էլ տղա է...

Սրբուհի մորաքույրը միանգամից խեղճացավ.

— Դե, ես ի՞նչ ասացի, այ Լուսիկ, որ դու հերսոտվում ես։ Սարոյի աչքն էլ էնտեղ դուրս գա· գյուղով մեկ մեղ խայտառակ արեցե։

Խոսակցությանը միջամտեց Նվարդը։

— Մորաքույր, Սարոն լավ սիրտ ունի, և ես համոզված եմ, որ նա կարգին մարդ է դառնալու. հիմա դեռ խակ է, աջ ու ձախ է ընկնում, կյանքում իր տեղը գտնել չի կարողանում, վերջը կկանգնի ճիշտ ճանապարհի վրա, նրան պետք չէ այդքան քարկոծելե։

— Լավ ես ասում, հարս ջան, տա աստված՝ տեղ հասնի քո որնանքը։ Վերջին նամակում մորը գրել էր քո մասին. ես, ասում է, որքան քեզ սիրում եմ, էնքան էլ հարգում եմ Նվարդ մորաքրոջը, որ իմանաք, ասում է, թե ի՞նչ նամակներ է ինձ գրում. ես մարդ չեմ լինի, եթե նրա սիրտը նորից դառնացնեմ... Աղջի, Նվարդ, էդ ի՞նչ սիրտ ունես դու, որ ապրում է բոլորի համարե։

— Մորաքույր, մեկնակ իր մասին մտածող սիրտն ինչի՞ է պետքե։

— Ախլոր ես ասում, հարս ջան, ու քո սրտովն էլ քեզ տալիս է. շուտով իսկական մայր ես դառնալու, ես էնքան ուրախ եմ, որ էլ ասել չեմ կարողե։

— Հավատում եմ, մորաքույր, ու շատ եմ շնորհակալե։

— Ախր ես, գիտե՞ս, չար ու բարի կնիկ եմ. մի ժամանակ շատ եմ կռկռացել քո հասցեին, ներող կլինես։ Դե՛, հարսը որ երեխա չբերի, էլ ի՞նչ տուն, ի՞նչ ընտանիքե Մեղքս ինչ թաքցընեմ, ուզում էի, որ Հրանտը բաժանվի քեզանից, ուրիշին առնի, չեղավ, չլսեց ինձ, դե՛, քույրս էլ քո կողմից էր։ Հիմա, փառք աստծո, ուրախ եմ, որ սխալվել եմե

— Գիտեմ մորաքույր, ես ձեր վերաբերմունքից ամեն ինչ հասկանում էիե

— Աղջի, գիտեիր ու լռո՞ւմ էիր. ուրեմն ճիշտ է, որ աստվածքո սրտովն էլ քեզ տալիս էե Բարով-խերով ապատվես, շատ երեխաներ ունենաս. Արշակն էլ թող առողջ ու բախտավոր լինի, էս քաղցր հաջողությունը նա բերեց էս տունը, թեթև ոտք ունի, մեռնեմ նրա բոյինե

Նվարդը շտապեց խոհանոց՝ թեյ բերելու, իսկ Լուսիկ մայրիկը թաշկինակը տարավ խոնավացած աչքերինե

թվայնացրել է 1915.info կայքը

— Բա որ ասում եմ գնալով խելոքանում ես, քույրիկս, չէ՞, բարին ու լավը աչքերդ կարգին բացել են։

— Ուրեմն մինչև հիմա համ խելառ եմ եղել, համ էլ կո՞ւյր. լավ ես ասում։

— Չէ, դու խելոք-խելառ ես։

Նվարդը ներս մտավ՝ սկուտեղը ձեռքին։ Պետք է փակել այս խոսակցությունը։

— Լավ, քո ասածը լինի, քույրիկ, մենակ Թող Թեյս խմեմ, Նվարդիս սարքած Թեյը համով է լինում։

Տիրեց մի տևական լռություն։ Դե, հիմնական խոսողը Սրբուհի մորաքույրն է, նա էլ զբաղված է Թեյ խմելով։ Բայց նա ինչպե՞ս կարող է երկար ժամանակ լուռ մնալ։ Սկսեց խոսք խառնել Թեյի ամեն մի կումին, դրանից և խոսքի շորությունն էր վերանում, և Թեյն էր ավելի համով դառնում։

— Մի բան ասեմ, չնեղանաք. քանի անգամ եմ զարմանքով մտածել, Թե էսքան էլ սերով հարս ու սկեսուր կլինե՞ն, ձեր մեջ ակի խոսք ու զրույց լինո՞ւմ է, իրարից նեղացած կա՞ք, ախր մերն աղջկա հետ միշտ չէ, որ կարողանում է ընդհանուր լեզու գտնել։ Ջնայած խոսք կա, ասում են, ոչ վատ աղջիկ կա, ոչ՝ լավ հարս։ Դե, սա չար ու սխալ խոսք է։

— Ես էլ զարմանում եմ քո զարմանքի վրա, քույրիկս, հարսն ինչո՞վ է պակաս աղջկանից. իմ Սիրուշին շաբաթը մեկ անգամ էլ չեմ տեսնում, իսկ Նվարդիս հետ գիշեր-ցերեկ միասին ենք. բա որ մենք իրար չսիրենք, չպահենք ու շահենք, մեր օրն ու արևը չի՞ խավարի։

— Հենց դժվարն էլ դա է, էլի, որ ամբողջ օրը միասին եք ու իրարից չեք ձանձրանում. ձեր ջուրն էլ գնում է մի առվով։ Հո չի՞ կարող պատահել, որ բոլոր հարցերում երկուսդ էլ մի խոսքի լինեք, իրար չհասկանալ կա, իրարից նեղանալ կա։

Խոսակցությանը միջամտում է Նվարդը.

— Դե՛, իհարկե, առանց դրան չի լինում. պատահում է, որ իրար դժվար ենք հասկանում, ասենք՝ երեխայի դաստիարակության հարցում միշտ չէ, որ նույն ձևով ենք մտածում, կյանք է, ընտանիք է, առանց դրան ո՞նց կլինի։

— Ու էդ իրար չհասկանալը ոչ կռվի է հասնում, ոչ էլ իրարից նեղանալո՞ւն։

— Հենց էդպես է, որ կաս Իրար ղիջում ու խնայում ենք.

թվայնացրել է 1915.info կայքը

հենց առաջին օրվանից։ Ով սա՞ է լավ, թե՞ իրար կատարից բըռնող հարսն ու սկեսուրը, աստված հեռու տանի մեր տնից։

— Ճիշտ ես ասում, դա լավ բան է, ամա պիտի կարողանաս, չէ՞, դիմանալ. մի բան որ ինձ դուր չգա, ես ինչպե՞ս կլռեմ. կպայթե՞մ, աստված վկա։

— Սրբուհի մորաքույր, ուրեմն ինչպե՞ս եք յոլա գնում ձեր հարսների հետ. խոսք ու զրույց շա՞տ է լինում։

— Առանց դրան չի լինում. իմ խոսքից դուրս եկավ, էնպես պորտը տնղը կդնեմ, որ հոր հարսանիքը միտը կգա։

— Հետո՞, նա էլ ձեզ կպատասխանի, իրարից կենդանաք, գուցեև կխոովեք, դա ինչի՞ նման է։

— Կարծում ես՝ ասում եմ դա լա՞վ է։ Ամա ձեր բանն ուրիշ է, իսկական մայր ու աղջիկ։ Մենակ չկարծեք, թե էլ ձեզ նմանը չկա։ Աղջկաս հարևանը մի լավ ընտանիք էր, ապրում էին սիրով։ Մեկ էլ լսեցինք, որ տան տղամարդը մի ուրիշ կնիկ է ճարել, ուզում է նրա հետ ամուսնանալ։ Մայրը տղային ասում է՝ էդպիսի բան չանես, քո կարգին ընտանիքը մի քայքայի, տղայիդ ու աղջկադ մի որբացրու։ Տղան չի լսում, գնում է էն նոր կնոջ մոտ։ Ով գիտե՞ք թե մայրն ինչ է անում, մնում է իր հարսի ու թոռների հետ, միևուճար տղան ինչքան խնդրում, բան դուրս չի գալիս. դու, ասում է, քո կնոջը դավաճանեցիր, ես իմ լավ հարսին չեմ դավաճանի։ Ու մինչև հիմա էլ միասին են ապրում, մոր ու աղջկա նման։ Ջարմանք բան է։

— Տեսնո՞ւմ եք, մորաքույր, թե ինչպիսի սկեսուրներ կան. Լուսիկ մայրիկն էլ ինձ համար իսկական մայրիկ է, ես նրանից դեռ ոչ մի վատ բան չեմ տեսել։ Ինչպե՞ս կարող եմ այդ բոլորը մոռանալ.— մոտեցավ, փաթաթվեց սկեսուրին, համբուրեց նրա այտն ու փախավ խոհանոց.

Լուսիկ մայրիկը շշնջաց խանդաղատանքով։

— Ես քո եկած ճա՜մփին մատաղ...

Իսկ դրսում դեռ ձյուն է մաղում՝ հանդարտ, անշտապ։ Պատուհանի առաջ պահակ կանգնած ծառն այնքա՜ն ձյուն է առել իր ուսերին, իսկական ձմեռ պապի է։

48.

Այդ ե՞րբ էր, որ ինքն ու Թամարը ոչ մի նոր կինոնկար բաց չէին թողնում։ Դեռ ազատ էին, իրենց գլխի տերը. և՛ ժամանակն

թվայնացրել է 1915.info կայքը

էր շատ, և՛ տրամադրությունն էր տնղուն Հիշում է, երկար հնարք կանգնեցին տոմսերի համար։ Թամարն ասում էր՝ հետաձգենք մի ուրիշ օրվա, ինքը չէր համաձայնվում.— Հասկանո՞ւմ ես, ասում էր, կինոնկարը կոչվում է «Սիրո հասակ». մենք ինչպե՞ս կարող ենք ուշանալ, բա որ անցնի՞ մեր սիրո ժամը... Լավ կինոնկար էր. հաճելի էր մանավանդ երգչուհին՝ իր առինքնող երգով։ Հիշում է նաև, Թամարը միանգամայն լուրջ հարցրեց.— Իսկ սիրո հասակին ո՞ր տարիքն է սազում։ Ինքն էլ մեջբերում արեց ռուսական մի արտահայտություն, ոչ, բանաստեղծի տողը.

Любви все возрасты покорны...

Թամարն սկսեց վիճել.— Ուշացած սերն ո՞ւմ է պետք, իսկական սերն, ասում էր, մինչև երեսուն տարեկանին է վայել, հետո կիսատ-պռատ է, ավելի շուտ բանականություն, քան զգացմունք։ Այդպես էլ մի ընդհանուր հայտարարի գալ չկարողացան։ Թամարն իր խոսքն ու տերը եղավ. ամուսնացավ քսանչորսում, իսկ ահա ինքը սահմանախախտ է եղել և վայելում է իր թաքուն սիրո փշրանքները միայն...

Երվանդը, համոզված է, այսօր կգա իրենց մոտ, կգա՝ վճռական պատասխան լսելու ակնկալությամբ։ Իսկ պատասխանը դեռ պատրաստ չէ։ Մի՞թե. ասելիքը կա, մերժումը որոշված է, միայն այն տեղ հասցնելն է դժվար, շա՜տ է դժվար։ Իսկ ինչո՞ւ ես մերժում, վերջապես մինչև ե՞րբ և ինչքա՞ն կարելի է ապրել անորոշության մեջ, ինչ-որ սուտ սպասումներով։ Իսկ մի՞թե որևէ ռեալ սպասում կա։ Ուրեմն, առավել ևս։ Կանգնել ես խենթ գետի ափին, ոչ նետվում ես նրա ամենակուլ ալքինների գիրկը՝ վերջնական հանգիստ գտնելու հույսով, ոչ հեռանում ես ափից՝ սրտիդ փակ դռները ուրիշի առաջ բացելու խելոք ակնկալությամբ։

Այդ ինչ է, Գուրգե՞նն է խոսում, ի՞նչ է ասում.

— Մամ, դասերս պատրաստեցի, գնա՞մ բակ խաղալու, ընկերներս սպասում են։

— Իսկ ես չպիտի՞ ստուգեմ, թե ինչպես ես սովորել դասերդ։

— Հետո, մա՛մ, երեկոյան, քնելուց առաջ։

— Դե, լավ, գնա, միայն չքրտնես, հա՛։

— Լավ, մամ, ես թռա, ջա՛ն...

Նորից մենակ մնաց։ Իբր թե մինչ այդ ընկեր ուներ։ Ամբողջ

թվայնացրել է 1915.info կայքը

կյանքում է մենակ, և տղայի ներկայությունը չի կարող փարատել նրա տխուր մենակությունը։ Իսկ Օրվանդը դալուս է։ Այդ ինչ է, գա՞նդն է։ Շտապեց բացել դուռը։ Օրվա՞նդն է, նոր կոստյում հագած. իսկական նորափեսա։ Միայն թե հարսը գտնվեր... Ներս մտավ. ծածկեցին դուռը ու մնացել են դեմ-դիմաց կանգնած։ Աշխանի ձեռքը դեռ Օրվանդի ափի մեջ է։ Կարկամել են, խոսել չեն կարող։ Հանկարծ, իր համար էլ անսպասելի, Օրվանդն Աշխանին դեպի իրեն ձգեց։ Աղջիկն անզոր էր դիմադրելու։ Գրկախառնվեցին, գարձան մի մարմին, մի հոգի։ Հետո նրանց շուրթերը գտան իրար, ու կարոտած համբույրը ծվարեց փակ դռան նաևը։ Քանի՞ տարի է, ինքը զուրկ է այս բավականությունից։ Իսկ ո՞վ է զրկել, ինքը, ո՞ւմ, իրեն։ Մոռացե՞լ է։ Իսկ համբուրվելը մոռանալ կլինի՞։ Անմիջապես «մատը վերքին» է դրվում, մանավանդ, երբ դու գտնվում ես հաճելի մարդու գրկում։ Հաճելին քիչ չէ՞։ Դե՛, սթե դրա կողքին կարողանար ծվարել նաև սիրելի բառը... Իսկ Օրվանդը խենթանում էր ափերից դուրս նկող համբույրներից։ Ավար ինքն էլ մաշող կարոտ ունի, ծարավը հագեցնելու խնդիր պահանջ... Աշխենը ուժ գտավ իր մեջ ու կարողացավ փակել գայթակղության դուռը։ Դուրս պրծավ Օրվանդի գրկից, հետևանքով՝ փլվեց տան միակ բազկաթոռին։ Ու խոսեց շնչակտուր լինելով։

— Պետք չէր, Օրվանդ։

— Ինչո՞ւ պետք չէր, մի՞թե մեզ միայն ճգնավորի կյանքն է սազում։— Այնքան դառնություն կա տղայի խոսքի մեջ, միաժամանակ՝ հուսախաբ չլինելու սպասում։ Ու մնացել է դռան տակ կանգնած, քայլ անել չի կարող։

— Նստիր Օրվանդ, խոսենք, իրար հասկանանք.— Աշխանի ձայնն արդեն խաղաղ երանգ ստանալու ճանապարհն է բռնել։

— Ամբողջ դժբախտությունն էլ նրանում է, որ իրար հասկանալու միակ միջոցը խոսքն է մնացել. ուրեմն սիրտն այստեղ աննելիք չունի.— Օրվանդն առաջ եկավ ու նստեց սեղանի մոտ դրված աթոռին, Աշխենից փոքր-ինչ հեռու։

Երկուսի արանքում մի պահ ծվարեց անօգնական լռությունը։ Օրվանդը գլանակ վառեց ու ծխում էր ագահորեն։ Աշխենը չի զարմանում ու նաև վիրավորված չէ, որ այս անգամ Օրվանդը սկսեց ծխել՝ առանց թույլտվություն խնդրելու։ Գուցե ծուխը կօգնի՞, թող փոքր-ինչ գոնե մարի սրտի կրակը։ Իսկ իր սրտում բացատրո՞ւմ է նման կրակի գոյությունը. չգիտի, վերջնական

թվայնացրել է 1915.info կայքը

պատասխան տալ չի կարողւ Հետո՞ւ Ջգիտի։ Բայց ինքն ամենից առաջ սպասում է Սրվանդի խոսքին, նրա ծնողների վերաբերմունքն է ուզում իմանալւ Գիտի, որ վերջերս գյուղ էր գնացել, անպայման խոսել են, հանգել են ինչ-որ որոշման։ Իսկ եթե դրակա՞ն է այդ որոշումը։ Սրևի կուզենայիր, որ հակառակը լիներ, ճի՞շտ է...

— Հիմա պատմիր. Թե ինչպե՞ս էին ձերոնք, ի՞նչ կար գյուղում։

— Գյուղը շարունակում է մնալ իր տեղում, ծնողներս բարեվում էին։

— Շնորհակալ եմ, բարով մնան։ Ուրի՞շ։

Սրվանդը նոր գլանակ վառեց ու, միևնույն է, խոսքը շարունակել չի կարողւ Սհավոր ծանր է այդ խոսքը, բայց և չասել չի կարողւ. խոստացել է Աշխենին։

— Հայրս, ճիշտ է, շատ զարմացավ. երևի իմ այդ որոշումն անսպասելի էր նրա համար, բայց շուտ էլ համակերպվեց.— շատ էլ լավ կլինի, ասում է, իմ ընկերոջ աղջիկն է, Թող հիմա էլ դառնա մի՛ր աղջիկը...

— Իսկ մա՞յրդ, նրա խոսքն եմ ուզում լսել։

— Դե՛, մայրս հին հայացքների տեր կին է, նրան մեկ- մեկ դժվար է լինում բան հասկացնել։

— Ջեղավ, դու իրավունք չունես մորդ բամբասելու... Այնուամենայնիվ ուզում եմ իմանալ, Թե կոնկրետ ի՞նչ ասաց մայրդ։

— Առանձնապես բան չասաց, միայն...

— Լաց եղավ, իհարկե։

— Ճիշտ է։ Դե՛, ամենափոքր առիթի դեպքում անգամ նրա լացը պատրաստ է։

— Եվ անպայման ասաց՝ քոռանա՛մ ես, տղաս մարդաթող կնիկ է ուզում մեր տուն բերի, էս ի՞նչ ղուլում է, որ եկավ մեր գլուխը։ Էսքան ուշանալու գինն էլ սա՛ էր... Բա մեր հարևանբարեկամնե՞րն ինչ կասեն. խայտառակ կլինենք ամբողջ գյուղում։ Ես չե՛մ ուզում, Թող նա ոտք չդնի իմ տունը...

Սրվանդն այնպե՛ս էր կարմրել. խոսք չէր գտնում ասելու։ Հանգած ծխախոտը նորից վառեց։ Ինչո՞ւ է այսքան դառը. ծխելն անգամ տհաճություն է պատճառում նրան։

— Ես իրավունք ունե՞մ մտածելու, որ քո լռությամբ դու հաստատում ես իմ ասածները։ Շատ է անողոք Աշխենի հարցը։

թվայնացրել է 1915.info կայքը

— Դու այնպես ես խոսում, ասես նորից ես եղել մեր տան խոսակցությանը...

— Տեսնում ես, մորդ ուրախացնելու փոխարեն ողբերգությանդ դուռ ես բացել նրա համար, և դա, իհարկե, քեզ պատիվ չի բերում։

— Դե, գիտե՞ս ինչ,— նա ջղայնացած մոխրամանի մեջ խեղդեց հանգած գլանակը,— քեզ էլ պատիվ չի բերում քրքրել իմ վերքերը... Ես երեխա չեմ, կյանքի ընկեր ճարելու հարցը բացառապես ինձ է վերաբերվում. ծնողը ծնող, բայց ընտրության իրավունքը իմն է։ Ես այդպես էլ ասացի իմ մորը։

— Նա էլ պատասխանեց.— Տղա ջան, ես դեմ եմ քո ընտրությանը, իսկ դու որոշիր, ինչպես ուզում ես, ու նորից լաց եղավ։

— Մոտավորապես այդպես։

— Հայրդ էլ լուռ էր այդ ամբողջ ժամանակ։

Երվանդն անօգնական թափ տվեց ձեռքը, երևի ուզում էր ասել՝ թե այդ մեկն էլ ճիշտ է։

— Միևնույն է, ես նրանց լսել չեմ կարող, և՛ դա թող լինի իմ անհնազանդության առաջին փաստը։

— Բոլոր դեպքերում ես կուզենայի, որ դու չկոտրնիր քո ծնողների սիրտը. լավ չէ, և պետք չէ։

— Ինձ պայթեցնում է քո այդ հանգիստ ու անտարբեր տոնը. թե՞ դու էլ նրանց հետ խոսքներդ մեկ եք արել...

— Լսիր թե ինչ եմ ասում, Երվանդ. այս հարցում, և մանավանդ մեր տարիքում, շրջահայաց լինելն ավելի հարգի է։

— Դու ինչ է, ուզում ես բարոյախոսական ճա՞ռ կարդալ գլխիս։

— Ամենևին։ Ես ուզում եմ քեզ մի տխուր, բայց և անառարկելի ճշմարտությունն ասել, խնդրում եմ խուճապի չմատնվես։ Ես էլ չեմ կարող իմ համաձայնությունը տալ, որովհետև ազատ չեմ։

Երվանդի աչքերը զարմանքից խեղդվել կարող էին։ Նոր գլանակ վառեց ու լուռ ծխում էր. և առաջ ծուխն ասես աղ էր ցանում նրա աչքերին։

— Ավելի ճիշտ՝ ազատ չէ իմ սիրտը։ Հասկանո՞ւմ ես, գուրգենիս հորը մոռանալ չեմ կարողանում, նրան իմ սրտից դուրս մղելու կարողություն չունեմ։

թվայնացրել է 1915.info կայքը

— Հետո՞։ Իսկ դու ասում էիր, թե ոչ մի հեռանկար էլ չկա։ Հիմա ի՞նչ պատահեց։

— Հեռանկարից զուրկ նույն անհույս սպասումն է։ Նա իր ընտանիքն ունի, իր սիրելի կինը, որից բաժանվել չի կարող, ոչ էլ ես կհանդուրժեմ այդպիսի մի դավաճանական քայլ։

— Եվ, այնուամենայնիվ, սպասո՞ւմ ես։

— Հասկացիր, ես սպասելիք չունեմ. սիրտս չի հաշտվում կատարվածի հետ, շարունակում է թպրտալ՝ բազեի ճանկն ընկած ծտի նման, սրտիս հախից գալ չեմ կարողանում։

— Եթե ավելի պարզ խոսենք՝ դեռ սիրո՞ւմ ես։

— Սիրո կապանքներից ազատվել չեմ կարողանում, ա՛յս է ճշմարտությունը. իսկ որ սրտիդ տունը չազատես մեկից, մյուսին ինչպե՞ս կարող ես տեղ տալ։

— Երջանիկ տնվոր ունես, որ կարողանում է իրեն չպատկանող տունն անգամ զբաղված պահել։

— Եվ, այնուամենայնիվ, ես արժանի չեմ քո հեգնանքին։

— Չեմ հեգնում, պարզապես նախանձում եմ նրան։

— Մեկ-մեկ մտածում եմ, թե իզուր էլ ես երևան վերադարձա, կարծում էի թե մոտ լինելը կօգնի մոռանալուն...

— Ուրեմն նա այստե՞ղ է ապրում։

— Դե՛, դա ի՞նչ կարևոր է... Ես միայն մի խորհուրդ եմ ուզում քեզ տալ, եթե կարող ես, սպասիր. դուցե այդ արանքում մորդ կհաջողվի հաշտվել քո ընտրության հետ, և ամենակարևորը, ես կաշխատեմ վերջնականապես ազատվել ինձ կաշկանդող անիմաստ կապանքներից։ Հավատա, ես քեզ հավանում ու հավատում եմ, ներիր, մի փոքր էլ սիրում եմ,— ոտքի կանգնեց, մոտեցավ Երվանդին, նրա գլուխը սեղմեց իր կրծքին, համբուրեց այտերը, ճակատը,— բայց դեռ պատրաստ չեմ քո առաջարկությունն ընդունելու։ Ինձ դեռ ժամանակ է պետք նրան իմ սրտից վերջնականապես դուրս մղելու համար. հենց որ այդ բանն ինձ հաջողվեց, այս անգամ ես ինքս քեզ առաջարկություն կանեմ, եթե, իհարկե, քո սիրտն էլ արդեն զբաղված չի լինի ուրիշ «տնվորով»։ Դե, խնդրում եմ, քամուն տուր տրամադրության վրա նստած սև ամպերը։

— Եթե դա այդքան հեշտ լիներ... իսկ ասենք, թե մայրս շարունակեց մնալ իր կարծիքին, այն ժամանա՞կ ինչ կասես։

— Դու այդ հարցը տվեցիր, որովհետև կարծում ես, թե իմ անհամաձայնության հիմքում ընկած է մորդ մնրժումը. իրավա-

թվայնացրել է 1915.info կայքը

ցի չնայ— Նայեց պատից կախված լուսանկարներին.— Ա՛յ, թող ծնողներս վկա լինեն ու հաստատեն, որ ես իմ խոսքի տերը կլինեմ, եթե կարողանամ հաղթահարել երկրորդ արգելքը, իսկ մորը համոզելը միշտ էլ կարելի է, և այդ հարցում ես քեզ կօգնեմ...

Երվանդը փորձում էր ժպտալ, գոնե մի թեթև, չէր ստացվում։ Ջղաձգվող դեմքին ժպիտ չի ծաղկում։

Դուռը ծնծղաց, մի քանի անգամ, անհամբեր։ Գուրգենն էր. ներս ընկավ՝ շառագունած դեմքին մի ինքնատիտ արտահայտություն։

— Մա՛մ, այնքան լավ էր... Վա՛յ, քեռի Երվանդն էլ այստեղ է,— մոտեցավ, մեկնեց ձեռքը,— բարև, քեռի,— փաթաթվեց համբուրեց Երվանդի այտը,— վերջերս ուշ-ուշ ես գալիս մեր տուն, այնքան կարոտում եմ։ Հետո աանս լրջացավ միանգամից ու դարձավ մորը.— Մա՛մ, ինչո՞ւ է քեռի Երվանդն այսքան տխուր, դու նեղացրե՞լ ես նրան։

— Գուրգենս, ինչե՞ր ես ասում, ես ինչո՞ւ պիտի նեղացնեմ քեռի Երվանդին։

— Եթե նեղացնես, ես քեզնից կնեղանամ, մամ, շա՜տ կնեղանամ։

Աշխենի կոկորդին դեմ առավ ծանոթ բունցքը. աչք-ականջներից լույս աշխարհ դուրս եկան արցունքի լալկան կաթիլներ, եթե ուշանար, անխուսափելի կդառնար նիհար առվակների ծնունդը՝ շառագունած այտերին։ Հասցրեց ճակատից ետ տալ անհնազանդ մազափունջը և շտապ անցնել խոհանոց։ Երեխայի «սպառնալիքը» մնաց անպատասխան։

Գուրգենի զարմացած հայացքը մեխվել էր խոհանոցի բաց դռանը։ Խեղճացած գլանակի այրող շնչից ծխախեղդ էր լինում Երվանդը։

44.

Առավոտվանից անձրև է մաղում. մեկ խեղթանում է, վրա տալիս շտապ-շտապ, մեկ էլ այնքան է բարակում, որ թվում է, թե խոնավ փոշի է իջնում վերևից ու հանդարտ նստում է տանիքներին, մարդկանց ուսերին և թրջելու մտադրություն չունի, ո՛չ, միայն հովացնել է ուզում։

Իսկ Հրանտն, իսկապես, հովանալու կարիք ուներ։ Գիշերը նվարդին բերել են ծննդատուն, մայրն էլ տանն է պառկած, իրեն

թվայնացրել է 1915.info կայքը

լավ չի ղգում, և չթողեց բժիշկ կանչել։ Սրեխայլին ինքն է պարոց տարել։ Հիմա էլ եկել, թրև է գալիս ծննդատան պատերի տակ։ Պայմանավորվել է, պրոֆեսոր Սավոյանի մոտ պիտի գնա. չհամբերեց, կես ժամ շուտ է եկել ու սպասում է իր հերթին։ Դժվար գիշեր էր։ Քունը նոր էր մտել իր իրավունքների մեջ, երբ կնոջ անհանգստությունը դուրս եկավ ափերից։ Մայրը խորհուրդ տվեց անմիջապես տանել ծննդատուն։

— Շուտ գնալուց վնաս չկա, աղջիկ ջան. էլի՛ եմ ասում, չվախենաս։

— Վախենալու բան չկա, մայրիկ, պարզապես շուտ գնալն էլ մի բան չէ, դու էլ հիվանդ ես...

— Հանգիստ գնա, մատաղ քեզ, ինձ հետ բան չի պատահի։ Հրա՛նտ, շտապեցեք։

Եկան, տեղավորեցին։ Լավ էր, երկու օր առաջ պրոֆեսորի մակագրությունն էր վերցրել։ Սուավոտյան էլ զանգահարեց ու ժամադրվեց Գարեգին վահանիչի հետ։ Հիմա սպասում է և շատ է անհանգիստ։ Կարող է Նվարդի մտավախությո՞ւնն է իրեն փոխանցվել։ Այնպես դժվար էր շնչում ու գունատվել էր նկատելիւ

— Նվա՛րդ, իսկապես որ պետք չէ վախենալ։ Ի՞նչ անհամբերությամբ ես սպասել այս օրվան. համարձակ եղիր, գոնե մի քիչ։

— Այդ մի քիչը, երևի, կարողանամ... Գիտե՞ս, իմ տարիքում դա այնքան էլ հեշտ բան չէ։ Տեսնենք։

Հասել էին ծննդատան դռանը։ Հրանտը ձեռքը տարավ կանգին։ Նվարդը կանխեց նրան.

— Հրա՛նտ, մի բան ասեմ, չջղայնանաս, խնդրում եմ,— սեղմվեց ամուսնուն, համբուրեց այտը։— Եթե հանկարծ ինչ-որ բան պատահի ինձ հետ, շատ չտխրես ու...

Հրանտն իր աղատ ափով փակեց կնոջ բերանը։

— Լռի՛ր, խնդրում եմ, զառանցում ես առանց անհարմար ղդալու...

Փակեց նրա խոսքի ճանապարհը, տեսնես ի՞նչ պիտի ասեր, «շատ չտխրես ու...»։ Անխելք աղջիկ, հիմար բաներ է խոսում։ Ախր նա երբեք այդքան վախկոտ չի եղել, ինչո՞ւ է սիրտն այդպես բարակել։

Անձրևափոշին շարունակում էր նստել նրա ուսերին, գլխին, և դա օգնում էր տխուր մտքերը հեռու վանելուն։ Թող բարովխերով ազատվի Նվարդը, մայրն էլ առողջանա, իսկական ընտանիք կդառնան։.

թվայնացրել է 1915.info կայքը

Տասը րոպե էր մնում մինչև պայմանավորված ժամը. մի երկու պտույտ էլ ու կգնա Սավոյանի մոտ։ Իսկ պտույտի հետ նաև միտքն է պտույտներ կատարում։ Այս նույն ծննդատանն են լույս աշխարհ եկել և Գուրգենը, և Արշակը, հիմա էլ ահա... ճակատագրի խաղ է. ինչո՞ւ, գուցե ավելի շուտ բարեհաջող ավարտի նրաշխի՞ք է։ Իրար անծանոթ երկու եղբայր, տարբեր ծնողներից սերած, ու մի նորածին քույր կամ եղբայր՝ այն երկուսին և խորթ, և հարազատ։ Ու չգիտես ինչ ճակատագիր կունենան։ Ո՞վ. ամեն մեկն առանձին, մանավանդ՝ Գուրգենը։ Անցած գիշեր, նվարդին ծննդատուն տանելուց հետո, երկար խոսում էր մոր հետ։ Քնելու հարցը հանված էր օրակարգից։ Եվ նոր մանրամասնություններ իմացավ։ Ինչպես էլ մայրը լռել էր այդքան երկար ժամանակ։ Չդիմացավ այլևս։

— Դու չգիտես, իհարկե, որ ես քո տղային տեսել եմ։

Հրանտը զարմացած մորն է նայում։

— Ո՞ր տղայի մասին է խոսքը, մա՛մ։

— Էն մյուսի, իսկականի, քոռանա՛մ ես...

— Գուրգենի՞ն ես տեսել, որտե՞ղ։ Ինչքան աշխատում է հանգիստ խոսել, չի ստացվում։

— Հա՛, Գուրգենին ու իր մորը. մեր տուն էին եկել։ Հարմար ժամ էր, ես մենակ էի տանը։

— Դո՞ւ էիր կանչել, մա՛մ։

— Չէ, իմ մտքով շատ էր անցել, ոխակ չարեցի։ Ինքը, Աշխենը բերեց տղային, ասում է՝ ուզում եմ գոնե մի անգամ տեսնեք ձեր թոռանը... Աննման բալիկ էր, շա՛տ սիրեցի։ Եվ, գիտե՞ս, թողնում էր, որ իրեն համբուրեմ. մայրն էլ էր ղարմացել ասում էր՝ սովորաբար խուսափում է անծանոթ մարդկանցից։ Ուրեմն ես ծանոթ եմ, հարազա՛տ եմ։ Չէ՞, էս աշխարհում ես էլ ապրելու իրավունք չունեմ... Ու գոգնոցի ծայրը տարավ աչքերին։

Հրանտն ըմբոստացավ միանգամից.

— Մա՛մ, ինչե՞ր ես ասում, անհարմար է։

— Կյանք է, սարիները գնում են, բա ի՞նչ ես ուզում... Էդ Աշխենն էլ կարգին աղջիկ է երևում... Նվարդա իզուր չէր նրա մասին լավ խոսում. ես նրա սրտի՞ն մատաղ։

Հրանտը փորձեց կատակի տալ. ծանր տրամադրությունը ցրել էր ուզում.

— Մա՛մ, երևի ուզում ես ասել՝ տղադ էլ այնքան անխելք չէր։

թվայնացրել է 1915.info կայքը

— Ձև՞նդ... պապանձվի լեզուս... նելոք մարդն էդպիսի սխալ չի անի· դու իզուր ես գլուխդ գովում և իզուր ես կարծում, թե ես քեզ ներել եմ։ Նվարդի նման կնոջը դու իրավունք չունեիր բնդամատ աննլուս։

— Լա՛վ, մամ, թողնենք այս խոսակցությունը, եղածը եղել է։

— Էդ Աշխենն էլ ճեղք է, բախտից խռռված ..

Այլևս չխոսեցին, չանդրադարձան այդ հարցին, դե, ասելու բան էլ չկար։

Հրանտը նայեց ժամացույցին ու շտապ մտավ ծննդատուն։ Պրոֆեսոր Սալոյանն իր առանձնասենյակում չէր։ Ուրեմն երկարում են անորոշ սպասումները։ Անհանգստության պարանը գնալով՝ ձգվում էր։ Առավոտյան իմացել է, որ դեռ ոչինչ չկա, ցավերն էլ մեղմացել են։ Գուցե իսկապես շտապեցի՞ն։ Թե՞ դրանից վնաս չկա. գոնե մայրը ոտքի վրա լիներ։

Ներս մտավ պրոֆեսորը՝ հուզված, փոքր-ինչ այլայլված։

— Է՛հ, բժշկի գործն էլ մի բան չէ, արևս վկա. բոլորի հետ տառապում, բոլորի ցավին մասնակից ես դառնում, ինչպես էլ դիմանո՞ւմ է այդ սիրտ կոչվածը։

Հրանտի սրտին ասես քարով խփեցին։

— Գարեգին վահանիչ, ինչ է, վատ բա՞ն կա։

— Հանգստացիր, քեզ հետ կապ չունի։ Մի երիտասարդ կնոջ առաջին երեխային փրկել չկարողացանք. տեսնիր թե ի՞նչ լացուկոծ էին դրել հարազատները։

Ծխախոտ վառեց ու լուռ ծխում էր։

— Իսկ Նվարդի մոտ նոր բան չկա՞։— Ինչո՞ւ այսպես վախով է տալիս այդ հարցը. գուցե այն անծանոթ կնոջ անհաջող ծննդաբերությո՞ւնն է պատճառը։

— Նվարդի մոտ էլ ուրիշ բան կա. չվախենաս. գործը հասնելու է կեսարյան հատումի։ Լսե՞լ ես այդ մասին.

— Լսել եմ, բայց կարգին չեմ պատկերացնում։ Իսկ դա շա՞տ վտանգավոր է.

— Ամենահասարակ վիրահատության մեջ էլ վտանգի բաժին կա·.. Հասկանո՞ւմ ես, պտուղը շրջված է մոր արգանդում. մի՛ակ ելքը կեսարյան հատումն է։ Ով, այնուամենայնիվ, վախենալու բան չկա։ Մի տասնհինգ-քսան տարի առաջ կարողանում էին միայն մորը փրկել, իսկ հիմա երաշխավորվում է և մոր, և նորածնի կյանքը։ Ջպետք է ուշացնել, ա՛յս է կարևորը, որպեսզի պտղի համար թթվածնային սով կամ մեր լեզվով ասած՝ գի-

թվայնացրել է 1915.info կայքը

պոկսիյա չառաջանաւ Հատումը ես եմ կատարելու և՝ այսօր, երեք ժամ հետո։ Սթեն ինձ վատահում ես, ուրեմն...

— Գարեգին վահանի՛չ.— ըմբոստացավ Հրանտը, բայց և չարունակել չկարողացավ։

— Ուրիշ հանձնարարություն չունե՞ս,— խոսքին կատակի երանգ տվեց պրոֆեսորը, հավանաբար նաև այդ ձևով էր ուզում ցրել Հրանտի անհանգստությունը։

— Ունեմ։ Խնդրում եմ թույլ տաք հեռախոսել Նվարդի հետ։

— Այդ կարելի է։ Նույնիսկ՝ անհրաժեշտ։ Նվարդին մի թեթև նախապատրաստիր, նա դեռ ոչինչ չգիտի։

— Ես այդ մասին նրան նամակով կհայտնեմ, հիմա՝ երկու խոսք միայն։

— Այդպես էլ կարելի է։ Հիմա։ Ջանգահարից ներքին հեռախոսով.— Արշալույս, դո՞ւ ես. ինձ հետ միացրու յոթերորդ պալատի Նվարդ Սահփանյանին. շնորհակալություն։

Մի այնպիսի հուզմունք իջավ Հրանտի վրա, ասես վաղուց չի լսել կնոջ ձայնը և այնպե՞ս է կարոտել նրան։

Պրոֆեսորն շտապ դուրս եկավ սենյակից.

— Դու խոսիր, ես հիմա կգամ։

— Նվա՛րդ, բարև, հոգի՛ս, ինչպե՞ս ես։

— Լավ եմ, Հրանտ, չանհանգստանաս խնդրում եմ։ Պրոֆեսորն այնքան ուշադիր է, բոլորն էլ լավն են։

— Նվարդ, ես պրոֆեսորի մոտից եմ խոսում։ Ինչ որ նա կասի, լսիր և հավատա նրան։ Ես քեզ կգրեմ ամեն ինչի մասին։ Մայրիկը լավ է և հանձնարարել է քեզ ասեմ, որ ղոչաղ կենաս... Արշակը համբույրներ է ուղարկել, փոխանցում եմ՝ իմ բաժինն էլ ավելացրած...

— Հրանտ, ընդունում եմ սիրով ու շնորհակալությամբ... Գիտե՞ս, առավոտյան կողմ աչքս փակեցի մի կերպ, ու երազ տեսա. իբր թե ես ու դու կանգնած ենք մի սարի գագաթին, մեր առաջ մի ծաղկուն հովիտ է փռված, որի միջով ջրառատ գետ է հոսում, և ջրերի վրա էլ սպիտակաթև ճայեր են սավառնում։ Գետի երկու ափին խիտ անտառ է ձգված, ու ծառերի վրա թռչունների բազմալար համերգն է թևածում։ Բայց ինձ համար ամենալավ երաժշտությունը քո արտասանությունն է. ոգևորված բանաստեղծական կտորներ ես կարդում սիրո, հավատարմության և ուրիշ լավ բաների մասին։ Այնքան լավ երազ էր· ափսոս, որ շուտ պրծավ։

թվայնացրել է 1915.info կայքը

— Նվարդ, իսկական բանաստեղծը դու ես։ Սիլ հետո դու հիվանդասենյակում մենակ չես, իհարկե, հարևանուհիներդ չծիծաղե՞ն քեզ վրա։

— Չեն ծիծաղի, ես նրանց արդեն պատմել եմ. այնքան լավ աղջիկներ են... Հրանտ, մոռացա նաև ասել, որ մի կտոր էլ ես արտասանեցի, ճիշտ է, մի քիչ տխուր է... Հրանտը փորձեց ըմբռտանալ, Նվարդը նրան այդ հնարավորությունը չտվեց.

— Նամակիդ մեջ ինձ մի քառատող կգրես, Հրանտ, ինչ կուզենաս։ Դե՛, մնամ նամակիդ սպասող...

Ներս մտավ պրոֆեսորը։ Նորից ծխախոտ կա ձեռքին. մի՞շտ է այսքան շատ ծխում։

— Գարեգին վահանիչ, ուրիշներին կհամոզեք թողնել ծխելը, իսկ ինքներդ...

— Այդպես է, բարեկամս, միշտ էլ խորհուրդ տալն ավելի հեշտ է։ Ինչպիսի՞ն էր տիկնոջդ տրամադրությունը։

— Վատ չէր, նույնիսկ կարելի է ասել՝ լավ էր։ Միայն չբավարարվեց բանավոր խոսքով, նամակ է ուզում, ձեզ մոտ թուղթ կճարվի՞։

— Խնդրեմ. նստիր, ահա, այն սեղանի մոտ և գրիր, չշտապես, դու ինձ չես խանգարում։

Հրանտը խորասուզվեց թղթերի մեջ։ Ջարմանալի բան է, դժվար է գրվում. նույնիսկ իրեն թվում է, թե ձեռքը դողում է մի թեթև, սառնան տանի...

«...Ինչպես արդեն հեռախոսով ասացի, ամեն ինչ կարգին է։ Միայն, առանց վախենալու, իմացիր, որ բարեհաջող ելքը կնայարյան հատումն է. պատկերացրու, որ ցավից էլ ես ազատվում։ Ուրեմն՝ քեզ բարի ապառում, մեղ էլ՝ համառ համբերություն։

Նվարդ, սիրելիս, ընդունիր այս քառատողը.

«Շնորհակալ եմ աշխարհից, երբ որ դու կաս աշխարհում,
Թեկուզ ինձնից հավետ հեռու, հավետ անհաս աշխարհում,
Անցնեմ միայն ձեր տան մոտով, տեսնեմ ստվերդ պատին,
Թող իմ դիմաց միշտ փակ մնա ամեն դարպաս աշխարհում»։

Մնամ քեզ ու մեր նոր բալիկին սպասող...»

Հրանտը գրում էր խորասուզված, բայց միաժամանակ չէր կարող լսել պրոֆեսոր Սամուելի հեռախոսային խոսակցութ-

թվայնացրել է 1915.info կայքը

ները, նրա նրբանկատ կարգադրությունները գործով նեղ մըտնողներին։— Դոնարա Կարպովնա, խնդրում եմ անցնել չորրորդ պալատը, այնտեղ ձեր օգնության կարիքն են զգում... Սահակ, ժամանակը չէ՞ զբաղվել մեր ջեռուցման սիստեմի նախապատրաստման հարցով. խնդրում եմ, եթե իմ օգնության կարիքը լինի... Դայակ Մելքոնյանին ինձ մոտ ուղարկեք. տիկին Օվսաննա, այսօր մեր հիվանդներից երկուսը մեծ զոհունակությամբ էին խոսում ձեր ուշադիր ու սրտացավ վերաբերմունքի մասին. ես հատուկ շնորհակալություն եմ հայտնում ձեզ...

— Գարնգին վահանիչ,— նամակը ծրարելուց հետո խոսեց Հրանտը,— կներեք, մի անհամեստ հարց պիտի տամ։ Այս նյարդային աշխատանքի մեջ ինչպե՞ս եք կարողանում տակտը, չափն ու ձևը տեղը պահել. նույնիսկ թերացողի վրա ձայն չեք բարձրացնում, վիրավորական խոսք չեք ասում։ Դժվար չէ՞։

— Իսկ դու, ի՛նչ է, զոռո՞ւմ ես քո ենթակաների վրա, նույնիսկ՝ վիրավորո՞ւմ։

— Այդ վերջինը, երևի չկա, բայց գոռալու, ավելի ճիշտ՝ ձայնը բարձրացնելու փաստեր եղել են։

— Պետք չէ, բարեկամս. դիմացինին չհարգելը ղեկավարի թուլության նշան է։ Իսկ անձնական վիրավորանքն արդեն ցածր կուլտուրայի արտահայտություն է։ Հետո՞ ինչ, որ մենք ղեկավարներ ենք, նրանք՝ ենթականեր. հո սա ճորտատիրական հասարակությո՞ւն չէ։ Մեկը կար մեզ մոտ, կոպիտ, աչքածակ։ Հիվանդներից փող էր պոկում։ Զգուշացրել էի երկու անգամ։ Իմացա, որ շարունակում է նույնը։ Անցյալ օրը կանչեցի ինձ մոտ, թուղթ ու գրիչ տվեցի ձեռքը, ասացի՝ դիմում գրիր։ Եվ աղատեցի առանց խղճի խայթի։ Ոչ մի ավելորդ խոսք։ Իսկ հիշում եմ, մի տասնհինգ տարի առաջ նման մի դիրեկտոր ունեինք. սիրում էր, երբ աշխատողներն իրենից վախենում էին։ Մի տեղ այդպես էլ ասել էր.— ենթակայի աչքը հանած պիտի պահես։ Եվ ես ցավով նկատում էի, որ սա մեծ ու փոքր չի հարցնում, իր աշխատողն ես, վերջացավ։ Ինձնից հինգ տարով փոքր էր։ Մի երկու անգամ էլ ինձ էր վիրավորել։ Ինչպես ընդունված է ասել՝ դանակը ոսկորին էր հասել։ Մի թռուցիկ հավաքի ժամանակ սա էլի անվայել արտահայտություններ թույլ տվեց մի ուրիշի և իմ հասցեին։ Էլ չհամբերեցի.— Իսկ դուք ի՞նչ իրավունք ունեք, ասում եմ, մարդկանց վիրավորելու, ձեզ ո՞վ է տվել այդ արտոնությունը և ինչպե՞ս չեք հասկանում, որ դրանով դուք առաջին հերթին

թվայնացրել է 1915.info կայքը

ձեզ եք վիրավորում, ձեր ցածրությունն եք ընդգծում։ Սա դուրս էր, ես՝ իրենից բարձր։ Հավաքված ընկերներն էլ սարսափահար ինձ էին նայում։ Մեկ էլ սա ծղրտաց հիստերիկ ձայնով.

— Ես ձեզ դո՛ւրս կվռնդեմ այս հիվանդանոցից։

— Նախ դուք բուժման կարիք ունեք, արժե ձեզ մի լուրջ հիվանդանոց ուղարկել, և հետո՝ ես ձեզ այդ հնարավորությունը չեմ տա, ձեր ուժերից վեր է ինձ դուրս անելը,— ասացի ու, դուռը երեսին շրխկացնելով, դուրս եկա նրա առանձնասենյակից։ Եվ ուղիղ գնացի մինիստրություն։ Մինիստրի մի տեղակալն իմ դասընկերն էր. պատմեցի սրան և խնդրեցի տեղափոխել ուրիշ հիվանդանոց։ Շնորհակալ եմ, խնդրանքս կատարեց։ Հա՛, մոռացա ասել, որ մեր այդ դիրեկտոր կոչվածը զարմանալի ղգույշ ու նրբանկատ էր վերադասի նկատմամբ. բավական էր մեկը, թեկուզև տեսուչ, զանգահարեր մինիստրությունից, անմիջապես օտքի էր կանգնում և այդպես զգաստ էլ խոսում էր նրա հետ.— լսում եմ, սիրով, աչքիս վրա... Ու այդ պահերին էլ մի զզվելի ժպիտ էր խաղում նրա դեմքին, նայելն անգամ տհաճ էր։

— Իսկ այն դիրեկտորը դեռ շարունակում է կոլեկտիվ ղեկավարել, լհարկե։

— Ո՛չ, մի տարի հետո նրա պոչը խուզեցին, ուղարկեցին շարքային աշխատանքի։ Մի օր, տարիներ հետո, հանդիպեց փողոցում. ես ուզում էի անցնել՝ առանց բարև տալու ինքը մոտեցավ, սեղմեց ձեռքս. դե, ասում է, ինչ եղել է, եղել է, քեն պահելը լավ բան չէ, մոռանանք։ Ասում եմ՝ քեն չեմ պահում, բայց մոռանալ չեմ կարող։ Գիտե՞ք, ասում է, վատն այն է, որ իմ նախկին ենթականերից ոչ մեկը աչքով աչք չունի ինձ հետ, բարևել անգամ չեն ուզում. իսկ մի քանիսը նույնիսկ փորձում են մայթը փոխել։ Մի՞թե ես այդքան անպետք դիրեկտոր եմ եղել... Եվ ցավալին այն էր, ասում է, որ վերադասը գոհ էր իմ աշխատանքից։ Հիմա եմ հասկանում, որ ամենակարևոր բանը մարդ մնալն է... Ասացի, որ կարողացել եք ճիշտ ախտորոշել ձեր հիվանդությունը, ուրեմն բուժման հեռանկար կա։ Այնպե՞ս էր խեղճացել, որ մեղքս եկավ։ Ինչ որ է։ Վերջացնենք։ Նամակդ ես հիմա կուղարկեմ Նվարդին։ Դու էլ, կարծեմ գործարան պիտի գնայիր։ Գործերդ կվերջացնես ու ինձ կզանգես մի երեք ժամից։

— Երևի չհամբերեմ։ Մի հանձնարարություն կա, տամ, նորից կգամ։

թվայնացրել է 1915.info կայքը

— Ինչ է, ոտիշների նման դու է՞լ ես ուզում մեր պատերի տակ թրև գալ։

— Բարի գործի համար կարելի է և մազլցելով պատը բարձրանալ, եթե, իհարկե, դա կօգնի հարցի բարեհաջող լուծմանը։

— Կարծում եմ դրա կարիքը չի լինի. հույս ունեմ, որ գործը անսխալ ընթացք կունենա։ Մորդ բարևիր։ Ես վաղը երեկոյան կաշխատեմ ձեզ մոտ գալ, և Լուսիկի վիճակից կտեղեկանամ, և աչքալուսանք կտամ նրան։ Դե՛, հաջողություն քեզ էլ, ինձ էլ, մանավանդ՝ Նվարդին։

45.

Զարմանալի չէ՞, որ մտերիմ մարդիկ ամեն օր հանդիպում են, խոսում են ժամերով, և ասելիքն ու լսելիքը չի սպառվում։ Իսկ ամուսինների մո՞տ դա ինչպես է ստացվում. երեսուն, մինչև հիսուն տարվա համատեղ կյանք, և ամեն օր խոսելիք ունեն. այդ ի՞նչ շտեմարան է, որին դատարկվելու վտանգը չի սպառնում... Եվ այդ խոսքն էլ հեռու է ձանձրույթ պատճառելուց, ա՛յս է հաճելին։ Անսպառ բավականություն։

Ճիշտ է, հիմա Թամարի հետ ուշ-ուշ են հանդիպում, գուցե այդ է պատճառը, որ ժամերով խոսում են, խոսում են, և ոչ սպառում կա, ոչ հագեցում։ Իսկ ինչի՞ մասին են խոսում։ Ամեն ինչի, ընտանիք, կոլեկտիվ, հարևան, ընկեր։ Ավելի շատ, իհարկե, ամուսին ու երեխա։ Առանձնապես խոսքի կարոտ է Թամարը։ Չի աշխատում։ Ինքն էլ, Սմբատն էլ գտել են, որ ամենամեծ աշխատանքը մոր համար երեխաներին պահել-դաստիարակելն է։ Մանավանդ երրորդին են սպասում, ուրեմն բազմազավակ ընտանիք դառնալու շեմին են կանգնած։ Ամուսնու աշխատավարձով ապրում են, ոչ առանձնապես լավ, ոչ էլ վատ։ Երեխաները կմեծանան, կհասունանան, նոր կարելի կլինի մտածել աշխատելու մասին։ Իսկ այդպիսի ժամանակ կգա՞։ Սմբատին թողնես, նա երեխաների թիվը կհասցնի կես դյուժինի. սիրում է ասել՝ աստծո աչքին քարով չեն տա, տվածից ինչո՞ւ պիտի հրաժարվենք։ Գուցե իրավացին նա՞ է. երեխայից ավելի բարձր ոչինչ չկա։

Եվ ամբողջ օրը երեխաները խաղում են իրենց համար, իսկ ընկերուհիները զրուցում են անշտապ։ Իրենց տրամադրության տակ մի լրիվ կիրակի կա։ Ու հետաքրքիր է, որ այդ ամբողջ

թվայնացրել է 1915.info կայքը

ժամանակ ոչ մի անգամ չանդրադարձան Թամարի ու Սմբատի փոխհարաբերության հարցին։ Թամարն առիթ չի տալիս, Աշխենն ինչո՞ւ խոսի այդ մասին։ Եվ, վերջապես, պրույցի ոլորտից այդ թեման հանելը հիվանդության բարենպաստ բուժում չի՞ նշանակում։ Մի անգամ միայն Թամարն ասաց.

— Այս քանի ամիս է Սմբատը գործուղման չի գնում. այս անգամ էլ ես ստիպեցի, կիև թռավ, թող մի քիչ ցրվի...

Ուրեմն ինքն արդեն «ցրվել էր», և այդ գործում Աշխենի ակտիվ մասնակցությունը կա։

— Այնուամենայնիվ Սմբատը վատ մարդ, մանավանդ՝ վատ հայր չէ. դու իրավացի էիր, քույրիկս.— փաթաթվեց, համբուրեց Աշխենի այտերը։ Դրանով էլ փակվեց պրույցի այդ հատվածը։ Ու այլևս չանդրադարձան դրան։ Թամարը մի անգամ էլ փորձեց Աշխենի «ցավ ու դարդի» մեջ մտնել, ակնարկեց նրա տխուր մենակությունը։ Ընկերուհին ըմբռնացավ, ճիշտ է, առանց կիրք դնելու իր խոսքի մեջ.

— Իմ Դուրգենի հետ ես ինձ մենակ չեմ զգում. այդ հարցը փակված է։

Ուզում էր խոսել Երվանդի մասին, մեկ էլ որոշեց հետաձգել. Թամարն իրեն էլ օր ու արև չի տա, այնքան կսղոցի։ Թող պաղեն ջրերը, հետո հեշտ է։ Ախ այդ անհնազանդ ջրերը, որ, իր բախտից, ավելի շատ պղտոր են մնում...

Երեկոյան կողմ տուն հասան՝ հոգնած, բայց նաև գոհ։ Փոստարկղում, օրվա թերթերի հետ, նաև երկու նամակ կար. քեռի Սահակից ու Անաստուհից։ Տեսնես այս անգամ ինչ են գրել։ Եվ ինչո՞ւ մի անհանգիստ դող մտավ սիրտը։ Մի՞թե Երվանդի հետ կիսատ մնացած այն տհաճ խոսքի շարունակությունն է լսելու քեռի Սահակից։ Իսկ Անաստուհ՞ն ինչ ունի ասելու։ Ջհամբերեց, նույնիսկ վերարկուն հանել չկարողացավ. ոտքի վրա սկսեց կարդալ նախ Անաստուհի նամակը, սա ավելի սակավախոս է երևում, կես էջ էլ չկա. մի՞թե նա դեռ չի հրաժարվել հեռագրային իր ոճից...

«Աշխեն Դուրգենովնա, նորից առիթ է ներկայացել քեզ նամակ գրելու, միայն ափսոս, որ տխուր առիթով է։ Նատաշայի հետ մեր համատեղ կյանքը չստացվեց, դժբախտաբար. երեխայի ներկայությունն էլ չօգնեց։ Բաժանվեցինք՝ առանց ավելորդ խոսակցության։ Կինս, երեխայի հետ, գնացել է ծնողների մոտ։ Դու ինձ չես սիրում, ասում է և հենց չսիրելուց էլ խմում ես

թվայնացրել է 1915.info կայքը

(այս հարցում ավելորդ ակտիվություն կա ինձ մոտ, դժբախտաբար).— ա՛յս է հիմնական պատճառը։ Գուցե և չի՞ սխալվում Նատաշան... Թե ինչո՞ւ եմ գրում քեզ այս նամակը, չգիտեմ։ Համենայնդեպս տխուր ճշմարտություն է, որ քո ընկերը կարզին ընտանիք կազմել չկարողացավ։ Դո՞ւք ինչպես եք ապրում, նորություն չկա՞։ Գոնե դուք լավ եղեք։ Համբուրում եմ Գուրգենին։ Միշտ ձեր լավը ցանկացող՝ Անատոլի»։

Ինչպե՞ս դժվար է մի նամակից մյուսին անցնելը։ Մանավանդ երբ այս մեկի մեջ սիրտ մորմոքող տողեր կան։ Ընտանիք է քայքայվել, և այդ դժբախտությունը ծեծել է քո ընկերոջ դուռը։ Ցավից բացի ինչո՞ւ նաև մեղավորության ինչ-որ զգացում էլ է կրծում քո սիրտը։ Մի՞թե դու էլ բաժին ունես այդ տխուր վիճակի մեջ։ Ինչո՞վ և ի՞նչ չափով։ Գուցե հենց դրա համար էլ Անատոլին գրե՞լ է այս նամակը։ Իսկ ինչո՞վ է համոզված, որ եթե այն ժամանակ ինքը չուշանար կամ Անատոլին չշտապեր, ավելի խելոք ելք կունենար իրենց փոխհարաբերությունը, կայուն ընտանիքի հեռանկար կա՞ր, ի՞նչ իմանաս։ Բոլոր դեպքերում խղճի անհանգստության առիթ ինքը չունի, բայց ընկերոջ ընտանիքի փլուզումն իր սրտին ցավ չպատճառել չի կարող։ Ահա մի հոգս ևս։ Թամարից հետո՝ հիմա էլ Անատոլին։ Իսկ մի՞թե ավելի կոնկրետ և ավելի անհանգստացնող չէ Երվանդի հոգսը։ Եվ այդ մասին չէ՞ Սահակի նամակը։ Ինչո՞ւ է նեղվում շոգից, մի՞թե սենյակում այդքան տաք է։ Ա՜, վերարկուն դեռ հագին է։ Հանվեց ու նստեց դռան մոտի աթոռին։ Դա, ինչպես Գուրգենն ասաց մի անգամ, քեռի Երվանդի աթոռն է։ Այո, նա հաճախ այստեղ է նստում, դռան մոտ։ Իսկ ե՞րբ իրավունք կունենա լիարժեք ներս մտնելու. տանտիրոջ իրավունքից օգտվելու հնարավորություն երբևէ կտրվի՞ նրան, չգիտի։ Գուրգենը հեքիաթների գիրք է կարդում, Թամարը տվեց նրան։ Եվ ինչպե՞ս մոռացել է շրջապատը։ Հեքիաթների աշխարհ, լուսատատ, հոգևարազատ։ Իսկ իր հեքիաթն այդպես էլ չհյուսվեց։ Մի՞թե դեռ հեռանկար կա։ Եվ քեռի Սահակի նամակում այդ հեքիաթի շարշոփները չկա՞ն։ Տեսնենք։

«Սիրելի Աշխեն, վերջերս Երվանդը գյուղ նկավ մի երկու օրով. անսպասելի, չեմ թաքցնում, նաև տհաճ խոսակցություն ունեցանք տանը։ Տարիներ շարունակ ծեծվող, վերջապես իր լուծումը գտնող մի հարց, և՝ լուրջ առարկություններ։ Ծանր է և հիշելը, և գրելն այդ մասին։ Բայց ես լռել չեմ կարող։ Բացի

թվայնացրել է 1915.info կայքը

այդ, համոզված եմ նաև, որ Երվանդը քեզ պատմած կլինի այդ բոլորի մասին. նա՛ էլ իր հոր տղան է, պահմտոցի խաղալ չի սիրում... Մի անկեղծ խոստովանություն ևս։ Առաջին անգամ, երբ քեզ հանդիպեցի, իմ գլխում անմիջապես առկայծեց մի թերահավատ միտք.— Ափսո՞ս, ասացի ինքս ինձ, որ այս լավ աղջիկը ազատ չէ։ Երեխայի ներկայությունը ես համարում էի ոչ ազատ լինելու արտահայտություն։ Ով հիմա, խոստովանում եմ, երկար ծանր ու թեթև անելուց հետո, աստիճանաբար գալիս եմ այն համոզման, որ իմ այդ տեսակետը շատ է հնացած ու հնաբույր։ Ես այդ եզրակացությանը եկա հատկապես Երվանդի վճռական խոսքից հետո. դու պիտի տեսնեիր, թե նա ինչպես էր պաշտպանում իր վճիռը... Դե՛, մարդս էլ զարմանալի արարած է. անմիջապես ըմբոստանում ես մի անսպասելի խոսքի կամ երևույթի դեմ. քեզ թվում է դա անհնարին մի բան։ Անցնում է որոշ ժամանակ, և դու զարմանքով նկատում ես, որ արտառոցը օր-օրի վրա դառնում է սովորական, տանելի, նույնիսկ՝ անհրաժեշտ։ Հավատա, աղջիկս, որ ես էլ եմ ըմբոստացել, ճիշտ է, ավելի շատ իմ մտքում, ոչ բարձրաձայն, բայց ի՛նչ տարբերություն։ Ով, ես, անխելքս, իմ պասիվ լռությամբ երևի ավելի մեծ ցավ պատճառեցի տղային։ Անհաշտ առարկողը կինս էր, և դու այնքան խելոք ես, որ, գիտեմ, նրան չես դատապարտի. դե, ո՞ր մայրը կուզենա... Ներիր, խնդրում եմ, ոչ մեկը մեզնից զուրկ չէ մարդկային թուլություններից։ Ով, եթե կարող ես, հավատա, որ կինս էլ այս քանի օրը այլևս նախկին անկոտրում դիրքերից չի խոսում. ինքն իր մեջ այդ հարցում հաշտության եզրեր է որոնում. ո՞ր մայրը կուզենա կոտրել իր տղայի սիրտը։ Երվանդն այս անգամ ծանր տրամադրությամբ հեռացավ գյուղից, և դա ուղղակի սպանում է մորը. հարյուր անգամ ասած կլինի՝ քոռանա՞մ ես... Աշխեն, աղջիկս, չեմ կարող չասել, որ նաև զարմանալի է հարցի այս միակողմանի քննարկումը. մենք մեր ջուրն ենք ծեծում՝ առանց լրջորեն խորանալու՝ իսկ մյուս կողմի ջուրը կուզենա՞ հոսել քո առվի մեջ։ Հիշում եմ, որ Երվանդն էլ մինչև վերջ համոզված չէր խոսում այդ մասին։ Ուրեմն, լսիր, խնդրում եմ, իմ հայրական խորհուրդը։— Դուք երկուսով լուծեցեք այդ կենսական խնդիրը. ես իմ ու Գուրգենի անունից կօրհնեմ այդ միությունը, իսկ մոր սիրտը շատ է փափուկ, կնահանջի անպայման... Հիշում եմ, մի աստղազարդ գիշեր խրամատում պրուցում ենք Գուրգենի հետ։ Չգիտեմ ինչ առի-

թվայնացրել է 1915.info կայքը

Ով ևս պատմեցի գրքում կարդացած մի արտառոց դնպքի մասին. երիտասարդ տղան իր համար հարմարացու է ընտրում հասարակաց տան աղջիկներից մեկին։ Գուրգենս այնպե՞ս էր զայրացել. չէ, ասում էր, դա աննամուս մարդ է եղել։ Մեկ էլ տղաներից մեկը, որ լսել էր այս պատմությունը, կողքից վրա բևեցե։— Իսկ եթե սիրո՞ւմ է։ Գուրգենս մի քիչ խեղճացավ. սերն, ասում է, զորավոր բան է, դրա հետ վիճել չի լինի... Ես խնդրում եմ քո մտքում պահես այս պատմության վերջին հնչերանգը միայն, վերջնականը սիրո դատավճիռն է։ Այդ հույսով էլ ես համբուրում եմ և՛ քեզ, և՛ քո բալիկին»։

Մեկ էլ լսվեց Գուրգենի խանդավառ ձայնը.

— Մա՛մ, ինչ լավ հեքիաթ էր. նկարներն էլ սիրուն են։ Ինձ համար այսպիսի գրքեր կառնե՞ս, մամ։

— Կառնեմ, բալիկս։

— Քևռի Երվանդն էլ է խոստացել։

— Իսկ ինչի՞ մասին էր հեքիաթը, կարո՞ղ ես պատմել։

— Չար պառավն ուզում է խեղդել աղջկան, տղան ձիու վրա դալիս ու փրկում է նրան. ուժեղ ու սիրուն տղա է։ Մամ, որ մեծանամ ես էլ չար պառավներին կպատժեմ։

— Շատ էլ լավ կանես, տղաս։ Իսկ ազատած աղջկա՞ն ուր կտաննես։

— Կասեմ՝ գնա ձեր տուն... Մա՛մ, գիտե՞ս, այս հեքիաթի տղան այնքան նման է քեռի Երվանդին. ճիշտ է, նկարն ուրիշ է, բայց խելքը, քաջությունը...

— Այդպես է, տղա ջան, բոլորս էլ մեր հեքիաթի հերոսն ունենք ու փնտրում ենք նրան. երբեմն և հաջողվում է գտնել։

— Ես արդեն գտել եմ իմ հերոսին, մամ։

— Ո՞վ է, անունն ի՞նչ է։

— Հեքիաթի այն ուժեղ տղան, որ նման է քեռի Երվանդին։

— Իսկ դու մի շտապիր, բալիկս, էլի հեքիաթներ կարդա. կարող է քո սիրած հերոսն էլի փոխվի։

— Չէ, մամ, մեկին որ սիրեցիր, վերջացավ. հո սերը կոշիկ չէ, որ փոխես։ Այ, մեր ուսուցչուհի Անահիտին ես շատ եմ սիրում ու միշտ կսիրեմ։

— Շատ էլ լավ կանես։ Դու իրավացի ես, տղաս. սերը կոշիկ չէ. չնայած մեկ-մեկ, կոշիկից էլ վատ, սեղմում է սիրտդ, և հագնելն է դժվար, և հրաժարվել չես կարող... Մի բաժակ ջուր կտա՞ս, բալիկս։

թվայնացրել է 1915.info կայքը

— Հիմա, մա՛մ։

Այդ ինչպես էր պրել քեռի Սահակը.— Մենք մեր ջուրն ենք ծնծում՝ առանց լրջորեն մտածելու մյուս կողմի մասին։ Մյուս կողմն ինքն է, իր խնդիրը կորցրած, իր հունը չդանող առվով։ Լավ է, գոնե չի լճանում, հոսում է դեռ, միայն՝ դեպի ծով, թե անապատ, այս հնարավորության անորոշությունն է, որ թպրտում է մորթվող հավի նման. փրկություն կլինի՞։

— Մա՛մ, ահա ջուրը, խմիր։

Խմից մի շնչով, մի՞թե այդքան ծարավ էր։ Հետո կրծքին սեղմեց տղայի գլուխը ու համբուրում էր խնձրի նման, մի տեսակ վերացած։ Գուրգենը չէր դիմադրում, ո՛չ, բայց այնպես զարմացած էր.

— Մա՛մ, դու լա՞ց ես լինում, պետք չի, մա՛մ...

46.

Հրանտն այնպես հոգնած էր, այնպես ջարդված. դուցե գիշերվա քնին պարտք մնա՞լն է պատճառը, թե՞ մեղքի մեծ բաժինը ծանրացած է անհանգիստ հոգեվիճակի ուսերին։

Միանգամից արտադրամասեր գնաց, ստուգեց, ինչ պետք էր իրեն, անհրաժեշտ հանձնարարություններ տվեց։ Անցնում էր լաբորատորիայի մոտով. այստեղ էլ ասելիք ուներ։ Ներս մտավ։ Լավ էր, Աշխենը մենակ չէր։ Իսկ ինչո՞ւ է լավ։ Զգիտի, բայց կասկածից վեր է, որ նրա հետ մենակ մնալ չի կարողանում։ Ուրիշի ներկայությունն ասես փրկության օղակ լինի։ Տեսնես Աշխենի համար է՞լ այդպես է։

— Բարև ձեզ, ընկերներ։ Աշխեն Գուրգենովնա, ձեր վերջին տվյալները լաքապատման նյութերի քիմիական վերլուծության վերաբերյալ գոհացուցիչ են. խնդրում եմ արագացնել էմուլսիայի որակի ստուգման հետ կապված հարցերի լուծումը։

— Լսում եմ, Հրանտ Արշակովիչ։

Գլխավոր ինժեները շտապ դուրս եկավ լաբորատորիայից ու արագ քայլեց դեպի իր աշխատասենյակը։ Իսկ ինչո՞ւ նրան թվաց, թե իր անսպասելի մուտքից Աշխենի դեմքին շառագույնի նման մի բան իջավ։ Անխելք ու ավելորդ մտահոգություն է. պետք է շտապել հիվանդանոց, նվարդն այնտեղ մենակ է...

Աշխատասենյակում կենտրոնանալ չէր կարողանում։ Քայլում էր ընդարձակ սենյակի մի անկյունից մյուսը. ուժ չուներ

թվայնացրել է 1915.info կայքը

նստելու Ջանդահարեց դիրեկտորին, տեղում չէր. ասացին՝ գնացել է քաղաքային կոմիտե, խորհրդակցության։ Ուրեմն արժեր, որ գոնե գլխավոր ինժեները տեղում մնար։ Իսկ ի՛նչ մի պարտադիր բան է դա. ինչ է, արտադրությունը կա՞նգ կառնի առանց իրենց։ Այդ ո՞ր գործարանում է եղել, վաղուց է լսել։ Նոր դիրեկտոր են նշանակել, և սա իր գործունեությունն սկսում է շատ հետաքրքիր ձևով։ Հենց առաջին օրը հրամանով արձակուրդ է տալիս բոլոր արտադրամասերի պետերին։ Եվ սրանց բացակայության ժամանակ որ օղակում աշխատանքը լավ է գնում, այդ պետին էլ պահում է իր պաշտոնում։ Շատ խիստ չէ՞։ Բայց նաև մեծ տրամաբանություն կա դրա մեջ. իսկական նվագախումբը առանց դիրիժորական փայտի էլ լավ է նվագում։ Բոլոր դեպքերում լավ չէ առանց ղեկավարի։ Եթե հնարավոր լիներ մնալ։ Ինչպե՞ս մնա, երբ ինքն այստեղ է, իսկ միտքը... Մի գավաթ սուրճ խնդրեց Ամալյայից, չնայած ոչ մի բանի ախորժակ չուներ։

— Հրանտ Արշակովիչ, գոնատ եք երևում ու մի տեսակ անհանգիստ՝ հո լուրջ պատճառ չկա՞։

— Ոչինչ, Ամալյա, կանցնի։ Դու վարորդին ասա, թող ինձ սպասի։

Ուզում էր ասել՝ ծննդատուն պիտի գնանք. լավ էր, կարողացավ արգելակել։ Դե, ի՛նչ կարիք կա, որ ժամանակից շուտ իմանան այդ մասին. բարեհաջող ավարտից հետո, խնդրեմ։ Աշխենին էլ ոչինչ չասաց և ճիշտ արեց։ Իսկ ինչո՞ւ պիտի պահեր. դու հաշվետո՞ւ ես նրա առաջ։ Դե, այնուամենայնիվ...

Հնչեց հեռախոսի զանգը։ Թամարն է, հուզված, անհամբեր։

— Հրանտ Արշակովիչ, ես այնպես անհանգիստ եմ։ Սմբատն ասաց, որ գիշերը տիկին Նվարդին տարել եք ծննդատուն, դեռ ոչինչ չկա՞։

— Դեռ ոչ, Թամար։ Հուսանք, որ լավ կլինի։ Ինձ մի քիչ վախեցնում է այդ կեսարյան հատում կոչվածը, տեսնենք։

Ու ինքն էլ զարմանում է, թե ինչո՞ւ այսպես մանրացավ, Թամարին շա՞տ է հետաքրքրում քո այդ կեսարը... Դե, ինչո՞ւ, նա այնքան բարի ու նրբանկատ աղջիկ է։

Սուրճը խմում էր շտապ։ Իսկ ինչո՞ւ է այսպես անհամ, գուցե Ամալյան մոռացե՞լ է շաքարը։

Նորից հեռախոսի զանգ։ Այդպես է, երբ խոսելու տրամադրություն չունես, զանգերը շատանում են։ Այդպիսի դեպքերում

թվայնացրել է 1915.info կայքը

քիչ է մնում անիծես հեռախոս ստեղծողին։ Բայց այս ո՞ւմ ձայնն է, մի՞թե պրոֆեսոր Սավոյանն է, տե՛ր աստված...

— Հրա՛նտ, շնորհավորում եմ, աղջիկ ունեցար, և ամեն ինչ կարգին է։

— Գարեգին Վահանիչ, սիրելի՛ս...— ու խոսքը շարունակել չի կարողանում։

— Հասկանալի է, Հրանտ. դու միայն երեկոյան կեռևաս մեր կողմերում, մինչ այդ Նվարդն իրեն կհավաքի։

— Ախր ձեր ասած երեք ժամը դեռ չի լրացել, Գարեգին Վահանիչ։

— Իսկ ես, մեղմ ասած, քեզ խաբել էի, որ շատ չանհանգըստանաս։ Դե՛, երեկոյան կհանդիպենք, կխոսենք։ Հա, Նվարդը ոչինչ, այնքան էլ վախկոտ չէր....

Խոսակցությունը վաղուց է ավարտվել, իսկ Հրանտը դեռ ցած չի դրել հեռախոսափողը, մոռացել է երևի։ Մի՞թե հեռախոս հնարողն արժանի չէ հատուկ օրհնանքի։ Իսկ միտքը գործում է զարմանալի արագությամբ. գործարանից՝ տուն, այնտեղից ծննդատուն։ Այո, պետք է շտապել. ամենամեծ աչքալուսանքը մորն է, ու դա նաև նրա բուժման ամենահզոր ազդակը կարող է հանդիսանալ։

Երբ տուն մտավ, մոր հարցական հայացքն ընկավ տղայի դեմքին։ Ու ինքը չհասցրեց բերանը բացել։

— Մատա՛ղ լինեմ ես իմ հարսին էլ, նրա նորածին բալիկին էլ. էս ի՛նչ բախտավորություն է։ Շնորհավորում եմ, տղա՛ս։

Գրկել է Հրանտի գլուխը, համբուրում է ու լաց լինում. լացն էլ ասես ուրախ անձրև լինի, թափվում է պապակված հողին։

— Մա՛մ, ախր ես դեռ ոչինչ չեմ ասել, դու ինչպե՞ս իմացար։

— Աչքերդ ասացին, տղաս։ Գարեգինի հոր հոգին էլ լույս դառնա... Իսկ այս խեր խաբարն ումի՞ց իմացար, աչքալուսանքդ տվեցի՞ր, կարգ է, Հրանտ ջան։

— Հեռախոսով հայտնեցին, մա՛մ, Գարեգին Վահանիչը զանգեց։

— Ջորանա Գարեգինը։ Ավելի լավ. նրան մի կարգին նվեր կտաս, ասենք՝ մի լավ կոստյում։

— Աչքիս վրա, մամ։

— Աչքդ լույս լինի, տղաս... Տեսնո՞ւմ ես, հիվանդությունս էլ

թվայնացրել է 1915.info կայքը

փախավ, արդեն առողջ տատիկ եմ, ես իմ թոռների արևի՞ն մատաղ։

— Մա՛մ, ոնց է, որ չես հարցնում՝ տղա՞ է ծնվել, թե՞ աղջիկ։

— Ժառանգը բարի լինի, տղաս, ինձ համար երկուսն էլ լավ են։ Մենակ նվարդս շատ էր ուզում, որ աղջիկ ծնվի. թե իմ աչքն էլ չի խաբում, ուրեմն...

— Աղջիկ է, մամ։

— Շատ լավ է, փառք աստծո, Արշակս քույր ունեցավ։ Տղայիդ կանչիր տուն, բակում խաղում է։

— Հիմա կկանչեմ։ Ուրեմն այսպես, սիրելի Հուսիկ Բարեղամովնա, հիմա մենք միասին կճաշենք, նոր ես ծննդատուն կգնամ, առարկություն չկա՞...

Հիմա ծննդատան պատերի թակ թրև է գալիս։ Ի՞նչ անի։ Դեռ ժամը հինգն էլ չկա։ Պրոֆեսոր Սավոյանը տեղում չէ, ասացին՝ մինիստրություն է գնացել։ Ավելի լավ է սպասի նրա վերադարձին։ Իսկ դա ինչքա՞ն կտևի։ Գուցե հնարավոր է տեղեկություն իմանալ ուրիշի միջոցո՞վ։ Դիմաց մի բավական գեր, տարիքով կնոջ։ Քեզ կարգին չի էլ լսում. դե, նրան չի կարելի մեղադրել, այնքան վազվզոցի մեջ է։

— Ասում եք, ո՞ր պալատում է. անունը Նվարդ, էն, որ կեսարյան հատումո՞վ... Վատ չէ, կարծեմ քնած էր, ես նոր եկա այդ պալատից։

Կարծեմ վատ չէ. դա լա՞վ է, թե՞ վատ։ Ո՞չ, առանց պրոֆեսորի բան չի ստացվի։ Ա՛յ, հիմա ինքը մի անկյուն կգտնի և նամակ կգրի Նվարդին։ Իսկ ի՞նչ ես գրելու. նա հիմա այնպիսի վիճակում է, որ քո գրածը կարդա՞լ կարողանա։ Բոլոր դեպքերում պետք է գրել, դա կօգնի նաև ժամանակ սպանելուն։ Իսկ ի՞նչ ես գրելու։ Ջարմանալի է, նորից դժվարանում է նամակ գրել կնոջը։ Ախր սա սովորական նամակ չէ։ Սա տարիների թերահավատ ապաստամներից ծնված ուրախության ճիչ է, սրտերի փոխկանչ... Իսկ Նվարդը հնարավորություն կունենա՞ պատասխանելու. այդպիսի լուրջ վիրահատությունից հետո, երևի ջերմություն ու ցավեր ունի։ Դե, այս դեպքում ի՞նչ կարևոր է պատասխանը. գոնե ջերմ խոսքերով ոգևորիր նրան, թեթևացրու նրա ցավը, այս է կարևորը, միայն այս է գալիս քո ձեռքից։ Իսկապես, պետք է գրել և կարգին նամակ, ցավ մեղմացնող, տրամադրություն բարձրացնող նամակ։

թվայնացրել է 1915.info կայքը

«Նվարդ, սիրելիս... Ես քեզ քանի՞ անգամ կլինեմ նամակ գրած, չգիտեմ, բայց հավատա՝ սա իմ ամենահաճելի և, միաժամանակ, ամենադժվար նամակն է։ Ես համոզված եմ, դու կհավատաս ինձ, եթե ասեմ՝ հիմա ամենաերջանիկ մարդն եմ ամբողջ աշխարհում։ Իսկ ինչո՞ւ միայն ես. մենք երկուսով, չէ որ ես ու դու մի մարմին ենք, մի հոգի... վերջապես դու կատարյալ մայր ես, քո սուրբ կրծքով պիտի կերակրես մեր նորածին բալիկին։ Ինչքա՜ն ենք սպասել այս օրվան։ Մեզ համար՝ երջանիկ ու պատմական օր։ Ինչպես մայրս է ասում՝ բարովխերով նկած էդ օրը։ Շնորհավորում եմ քո բարի ազատումը, հոգի՛ս, շնորհավորում եմ մեր լուսածին օրիորդի բարի ժամանումը այս մեղավոր ու անմեղ աշխարհը։ Ու, շնորհակալության հետ միասին, ես ուզում եմ նաև իմ հիացմունքն արտահայտել։ Պարզվում է, որ քեզ համար սարսափելի չէ կեսարն անգամ... Գարեգին վահանիչն ասաց, թե դու ինչպիսի խիզախությամբ ես տարել այդ վիրահատում-ազատումը. իսկական հերոս, և ես, ուղտի ականջում քնած ամուսինս, պարզվում է, որ բավարար չափով չեմ ճանաչել իմ կողակցուհուն, ավելի ճիշտ՝ չեմ իմացել նրա էության այդ հերոսական հնչերանգը։ Ապրես, շա՛տ ապրես. դու իսկական մայր ես, և քո ամուսինը դեռ ինչքա՜ն թիթու պիտի խմի՝ քեզ արժանի լինելու համար... Համբուրում եմ քեզ էլ, քո նորածին բալիկին էլ։ Մաման ու Արշակն էլ իրենց բաժին համբույրներն են ուղարկում։ Գրիր ձեր վիճակի մասին։ Ի՞նչ կարելի է բերել քեզ համար, խրատիր, խնդրում եմ, անփորձ ամուսնուդ։ Անհամբեր սպասում եմ քո պատասխանին։ Ջանգյուհարել եմ ձեր տուն, մայրդ լավ է արդեն, բայց դեռ պառկած է, ջերմությունը լրիվ չի անցել։ Բարևում էր և ասում, որ իր մասին չմտածես։ Դե, նորից ու նորից... քո՝ Հրանտ»։

Ծննդատան դուռը հանդիպեց պրոֆեսոր Սավոյանին։

— Տուն էի գնացել, մի կտոր հաց կերա, ու շտապեցի իմ այս տունը. այսօր Նվարդի նման երեք հիվանդ ունենք, ուզում եմ ստուգել, համոզվել, որ ամեն ինչ կարգին է։

— Եվ այդպես բոլորի հետ և բոլորի համար տանջվում եք։

— Սա, տանջանք լինելուց առաջ, ուրախություն է, հոգու թեթևություն. մարդուն օգնելուց բարձր ուրիշ ի՞նչ կա։

— Գարեգին վահանիչ, ես պարզապես չգիտեմ, թե ինչպես արտահայտեմ իմ ուրախությունն ու գոհունակությունը, իմ շնորհակալությունը։

թվայնացրել է 1915.info կայքը

Հրանտը հուզված է, և այն չի կարող աննկատ մնալ պրոֆեսորի աչքից ու սրտից։

— Նախ այստեղ կանգնելը մի բանի նման չէ։ Բարձրանանք ինձ մոտ։

Երբ մտել էին պրոֆեսորի առանձնասենյակը, Հրանտը, հարցի պատասխանը չիմացող ուսանողի նման, մնացել էր դռան մոտ կանգնած։ Ոչ ասելիքը գիտի, ոչ անելիքը։

Պրոֆեսոր Սավոյանը հանեց վերարկուն, նետեց մոտիկ բազկաթոռին, մոտեցավ Հրանտին, երկու ձեռքով գրկեց նրա ուսերը ու փոքր-ինչ հանդիսավոր ասաց.

— Ես քո հոր մտերիմ ընկերն էի, ուրեմն իրավունք ունեմ հոր իրավունքով շնորհավորել քեզ։— Մոտ քաշեց Հրանտի գլուխը, համբուրեց ճակատը,— դե՛, մաղթում եմ քեզ բախտավոր հոր ապագա։

Հրանտը հազիվ կարողացավ շշնջալ.

— Շնորհակալ եմ, լա՛վ մարդ...

— Հիմա դու այստեղ կնստես, ես կգնամ շրջապայուքյան. կտեսնեմ նաև քո Նվարդին ու նորածին բալիկիդ, և լավ լուրեր կբերեմ քեզ։ Եղա՞վ։

— Եղավ, Գարեգին Վահանիչ։ Միայն ես պետք է խնդրեմ, որ այս նամակը տաք Նվարդին։ Իհարկե, եթե դա հարմար է։

— Իսկ ինչո՞ւ չէ, ես ինչո՞վ եմ պակաս մի սրտացավ նամակատարից...

Հրանտը մենակ մնաց այդ ընդարձակ առանձնասենյակում։ Ով իրեն այնպես կաշկանդված է զգում։ Հիվանդանոցում է գտնվում, որտեղ բոլոր հիվանդները կանայք են, գուցե ա՞յդ է պատճառը։ Իսկ Գարեգին Վահանիչն ինչպե՞ս է դիմանում այս «ճնշմանը», և՝ քանի տարի, թե՞ այստեղ նա ավելի շատ հանդես է գալիս «ճնշողի» դերո՞ւմ...

Ներս մտավ մի փոքրամարմին տիկին.

— Ներեցեք, ես պրոֆեսորին էի ուզում։

— Նա գնաց շրջապայուքյան։

Հետո հեռախոսը սկսեց աղմկել, և այնքան երկար. այս ինչ համառ մարդ է զանգողը։ Ստիպված վերցրեց հեռախոսափողը.

— Պրոֆեսոր Սավոյանը տեղում չէ, երևի կլինի մի կես ժամից։

Հետո հուշիկ քայլերով ներս մտավ ամոթխած լուրյունը ու ծանրացավ հեռախոսի վրա։ Իսկ Հրանտի մտքերը, պատեպատ

թվայնացրել է 1915.info կայքը

խփվելով, դուրս նետվեցին սենյակից ու սկսեցին իրենց անսանձ շրջապայուքթյունը։ Եվ զարմանալի արագությամբ հասան Կույբիշև, Ռոզա Պավլովնայենց տուն։ Դագաղում պառկած է Ալլա Կուզմինիչնան. ինչ էլ ճերմակ մազեր ունի, ասես նոր իջնող ձյան փաթիլներից են հյուսված։ Ռոզան էլ հանգիստ կանդնել է մոր կողքին ու լաց չի լինում... Որտեղի՞ց իր ղուխը մտավ այս տխուր պատկերը, այ քեզ թափառաշրջիկ միտք, պետք է շտապ հեռանալ այդ տնից։ Բայց Կույբիշևից փախչել չկարողացավ։ Հիմա էլ անհամարձակ մտավ հանրակացարանի այն սենյակը, որտեղ Աշխենն ու իր տղան էին ապրում։ Գուրգենը ոտքով խփում է իր տարած խաղալիքին ու գոռում է՝ «Ցեմ ուղում, փիս քեռի...» Բայց դու տեղերը չե՞ս շփոթում, այդ «փիս քեռին» կարծեմ Երեվանում ծնվեց։ Դե, դա ինչ կարևոր է. անմոռացը ճիշտ ու դիպուկ գնահատականն է... Տեսնես «փիս քեռին» կարո՞ղ է լավ հայր լինել։ Իսկ ինչո՞ւ չէ, այդ թեզը, առանց վերապահության, կհաստատի Արշակը. կասկած չկա, նաև՝ այս նորածին օրիորդը։ Իսկ Գուրգե՞նը։ Ա՛յ, այստեղ արդեն լեզուն շատ է կարճ, և առանձնապես վատ է, որ չգիտի, թե մեղքի որ բաժինն է իր ուսերին ծանրանում։ Գուցեև՝ ամբողջությա՞մբ... Անպիտան Աշխենն էլ տես ինչ խելոք, գուցե նաև խորամանկ քայլ է կատարել. տղային տարել է տատի մոտ, թող տեսնի իր թոռանը, գոնե մի անգամ։ Այո, հորը վանում, տատին տաքացնում է թոռան վրա։ Ախ այդ առեղծվածային Աշխենը, որի եփած փլավին չես կարող մի պտղունց աղ իսկ ավելացնել, բայց նաև ճաշակելն է դժվար... Հետո միտքը նորից ոստոստաց ու հասավ Սարոյի նոր «բնակավայրը»։ Վաղուց է, ինչ տղան նամակ չի գրում. տնեցիները շատ են անհանգստացած, մանավանդ՝ Սրբուհի մորաքույրը։ Նոր բա՞ն է պատահել, թե՞ իր մի նամակում գրած մտքին է հետամուտ.— Երկար ժամանակ լռելու եմ, որ խելոքանամ, կարգին մարդ դառնամ, նոր ձեզ հետ նամակով խոսելու իրավունքը կունենամ. այս խցի բնակիչը ի՞նչ լավ բան կարող է գրել, որ արժանի լինի մորաքույր Նվարդին... Վաղուց չի խոսել Սենոյի հետ, տեսնես նրա գործե՞րն ինչպես են, առաջքաշման հեռանկարը մնո՞ւմ է։ Պետք է զանգահարել, հայտնել այս ուրախ լուրը, թե չէ կնեղանա, կասի՞ երբ պետք չի, ինձ տանում ես ծննդատան պատերի տակ, իսկ հիմա, ահա... Սմբատն ի՞նչ պատասխանեց քո հարցին, երբ ուզում էիր իմանալ նրա և Թամարի փոխհարաբերության մասին.— Օր-օրի վրա ես գալիս եմ այն համոզման, որ

թվայնացրել է 1915.info կայքը

կանայք շատ ավելի ղուսպ են ու մարդկային, շատ ավելի արժանի են սիրո ու հարգանքի, քան մենք, տղամարդիկս։ Ինքը կատակի տվեց,— ես կարո՞ղ եմ հուսալ, որ կանանց խմբի մեջ դու նկատի չունես նաև Զարուհուն ու Անթառամին...

Հեռախոսը ծլնգաց բարձր։ Հրանտն ասես ինչ-որ հևռավոր տեղից վերադարձավ ծննդատուն։ Ինչ է, մոռացե՞լ ես, թե որտեղ ես դու գտնվում։ Մի շատ կիրթ ու հաճելի տիկնոջ ձայն էր. պրոֆեսորին էր խնդրում։

— Ես շատ շնորհակալ կլինեի, եթե դուք բարի գտնվեիք Գարեգին Վահանիչին հայտնելու, որ զանգահարել է Սվետլանա Սամվելովնան. խորապես զգացված եմ...

Հետո նորից զանգ, նորից, նորից։ Այս ինչ է, ինքը քարտուղարի պաշտո՞ն է ստանձնել։ Իսկ ինչո՞ւ չէ. այդ ինչպե՞ս է, որ պրոֆեսորը քեզ համար կարող է ցրիչի պարտականություն կատարել... Միայն թե չմոռանա այդ տիկնոջ խնդրանքը հայտնել պոֆեսորին, անհարմար է։

Վերջապես ներս մտավ Գարեգին Վահանիչը։ Հրանտի անհանգստության ջերմաստիճանն անմիջապես բարձրացավ։ Ինքն անհամբեր բարի լուրի է սպասում, իսկ պրոֆեսորը լուռ է. ինչ է իր համբերության կարողությո՞ւնն է փորձում։

— Նվարդի վիճակը բավարար է. մի թեթև ջերմություն, թույլ ցավեր, օրինաչափ է։

Ով անմիջապես հարձակվեց ծխախոտատուփի վրա, այնպես էլ ադահորեն է ծուխը ներս տանում, ասես կրակ կա այնտեղ, հանգցնել է ուզում։

— Գարեգին Վահանիչ, գուցե մի քիչ ավելի հանգամանորեն...

— Մանրամասնությունները կիմանաս նամակից։ Դանդաղ ու դժվար է գրում, հիմա կբերեն։

Վերջապես կնոջ նամակն իր ձեռքին է. վրա պրծավ անհամբեր ու կարդում է՝ շրջապատից վերացած։ Իսկ պրոֆեսոր Սավոյանը ծխում է լուռ ու ժպտում է քթի տակ։

«Հրանտ, հոգի՛ս, ափսոս, որ երկար նամակ գրել չեմ կարող. այնքան բան ունեմ քեզ ասելու։ Ես վատ չեմ, երեխան լավ է. արդեն մի անգամ կերակրել եմ, այդ ի՜նչ երջանկություն է... Մեր պայմանի համաձայն անունը հուսիկ ենք դնում. շնորհավորիր մայրիկին ու համբուրիր իմ կողմից։ Հոգնեցի. ներիր, շարունակությունը հետո...»

թվայնացրել է 1915.info կայքը

Դանդաղ իջնում էր աստիճաններով, ինչո՞ւ այսպես դժվար է բաժանվում այս շենքից։ Շտապիր տուն, մայրդ սպասում է անհամբեր, Արշակի դասերը պիտի ստուգես։ Հենց ելքի մոտ հանդիպեց վարպետ Հարությանին։

Հրանտ Արշակովի՞չ, խնդրեմ, կարո՞ղ եմ ձեզ շնորհավորել. լսել էի, որ երեխայի եք սպասում։

— Կարող ես շնորհավորել, սիրելի Հարություն. աղջիկ է ծնվել, ուրեմն տղաս քույր ունեցավ։

— Շատ ուրախ եմ։ Ես էլ մի երկու ժամ առաջ կնոջս եմ բերել այստեղ. երրորդ երեխային ենք սպասում. ասացին՝ գիշերը կծնվի։

— Ես էլ ուրախ եմ քեզ համար, թող բարի ազատում լինի։ Ուրիշ ի՞նչ կա, քեռի Սամսո՞նն ինչպես է. ինչքան ժամանակ է, չենք հանդիպել։

— Մի թեթև հիվանդացել է քեռիս, մրսել էր, ջերմություն ուներ, հիմա լավ է։ Նախապատրաստվում ենք Մուշեղի հարսանիքին. խնդրում եմ նկատի ունենաք։

— Գալու եմ և մենակ չէ, մեր գործարանի դիրեկտորի հետ։ Մուշեղին մենք շատ ենք սիրում։ Դե՛, բարևիր բոլորին։ Առայժմ...

47.

Ջանգվի ձորն էլ իր առանձնահատուկ հմայքն ունի, մանավանդ աշնանային այս օրերին։ Դարերի հեռվում ջրառատ ու սրընթաց գետն ասես օր-օրի վրա, թիզ առ թիզ քանդել-խորացրել է հունը ու խենթ ջրերը կախարդական թրի նման ճեղքել են ժայռերի կուրծքը և պատճառ դարձել հսկայական ձորի առաջացման։ Ու հիմա, երբ գետի ափին կանգնած նայում ես աջ ու ձախ ձգվող ժայռ պատնեշներին, այստեղ-այնտեղ հպարտ կանգնած ցից քարերը քեզ թվում են աչալուրջ պահակներ, որ հսկում են ձորի ու ջրերի անդորրը։ Գետափին շորորող ծառերն ու լանջերին թառած թփուտները դեղնավարս ու բոցակեզ թիկնոցներ են առել իրենց ուսերին, և ձորը թվում է մայրամուտի արևով ավելի հարստացած։ Իսկ հանդիպակաց ափերն իրար միացնող կամուրջը ձորի մատին հագցրած մատանի ասես, անվտանգ սեղմում է ձորի կոկորդը ու կարգի հրավիրում դանդաղահոս ջրերին, պարտադրում է նրանց սահմանախախտ չլինել։ Ձորի միջով էլ, դեղին շապիկներ հագած, աշնան շունչն

թվայնացրել է 1915.info կայքը

է թևածում։ Ով այնպես հաճելի է, ոչ ցուրտ, ոչ տաք։ Ով օդն է մաքուր, և շնչելն է հեշտ։

Իսկ ինչո՞ւ խոսելն այսպես դժվար է. ախր այս շքեղ բնությունը փակ լեզուն անգամ բացել կարող է։ Կես ժամից ավելի է քայլում են վերև, ներքև՝ ջրերի ամոթխած քչփչոցին ունկնդիր։ Իսկ իրար խոսք ասել չեն կարողւ Ինչո՞ւ։ Գուցե Գուրգենի ներկայությո՞ւնն է խանգարում։ Ամենևին։ Երեխան խաղում-վազվզում է իր համար, դեղնակարմիր տերևներ է հավաքում, մի հինգ-տասը քայլ էլ հեռու է շրջում Աշխենից ու Երվանդից։ Ուրեմն խոսքի ճանապարհը փակող ուրիշ պատճառներ կան։ Ախ այդ լուծման սպասող և խելոք լուծում չգտնող հարցերը...

Նստեցին՝ թեկունքն արևին տված մի սալ քարի վրա։ Երեխայի շրջագայության շառավիղը երկարեց։ Մայրն ստիպված էր գոռալ.

— Գուրգե՛ն, մեքենաներ են անցնում, ղգույշ եղիր։

— Ես վերջերս մի հետաքրքիր վեպ եմ կարդացել, Աշխեն, գուցե դրա բովանդակությո՞ւնը կպատմեի։— Երվանդի ձայնի մեջ տխուր հեգնանքի շեշտ կա։

— Ուզում ես ասել՝ քանի որ մենք ասելիք չունենք, գոնե ուրիշների կյանքի՞ց խոսենք։

— Մոտավորապես այդպես։

— Իսկ մի՞թե կնոջը զբաղեցնելը տղամարդու սուրբ պարտականություններից չէ։

— Իսկ եթե տղամարդն անշնորհք է, և կնոջը մարդավարի զբաղեցնել չի՞ կարող։

— Ով, այնուամենայնիվ, ես այդ տղամարդու մասին ավելի լավ կարծիքի եմ, քան դու կարծում ես։

— Ուրեմն մխիթարվեմ-դրանով։

— Գիտե՞ս ինչ, Երվանդ, արի մենք իղուր տեղը փուչիկներ չպայթեցնենք, այդ տարիքից վաղուց ենք դուրս եկել։ Ջեմ կարող չասել, որ հորիցդ նամակ եմ ստացել վերջերս, և ուզում եմ, որ դու էլ կարդաս։

Պայուսակից հանեց ծրարը ու մեկնեց Երվանդին։ Սա լուռ կարդում էր։ Վերջացրեց ընթերցումը, ու նորից լուռ է։ Գլանակ վառեց, ծխում էր անտրամադիր։

— Գուցե պե՞տք չէր, որ դու կարդայիր այդ նամակը. տրամադրությունդ ավելի վատացավ։

— Ոչ, պետք էր, և շնորհակալ եմ, որ վստահեցիր... Այս-

թվայնացրել է 1915.info կայքը

տևղ ինձ առանձնապես ճիշտ է թվում հորս մի խոսքը, մի նկատումը,— քո զբաղված կամ քո ազատ չինելու փաստը։

— Երևույթիս ներկայության մասի՞ն է։

— Ո՛չ, երեխան պատճառ չէ։ Քո սիրտն է զբաղված. հանենայն դեպս՝ ազատ չէ։

— Երվանդ, դու երևի այսօր ուզում ես ինձ անպայման վիրավորել. մենք այդ մասին խոսել ենք, չէ՞, ես քեզնից ժամանակ եմ խնդրել։

— Եթե դու այդ հիվանդությունից, ներիր, որ այդպես եմ կոչում, ազատվել չես կարողացել այսքան տարի, երբ երեխադ դպրոց է գնում արդեն...

— Ասել եմ, որ կրակը վաղուց է մարել, միայն մոխրի տակ դեռ մլմլացող պճձեր կան։ Ինչո՞ւ ես հին խոսքը նորից բորբոքում։

— Ես այդ կրակի նոր բորբոքումից եմ վախենում, խոսքն այս մասին է։

— Իզուր, աստված վկա, դա լինելու բան չէ,— ձեռքը դրեց Երվանդի ծնկանը,— այդքան անհավատ չի կարելի լինել...

— Միամիտ հայրս էլ կարծում է, թե խնդրի լուծումը միայն ինձնից է կախված, կամ՝ մորս համաձայնությունն է կարևորը։

— Դու մոռանում ես քեռի Սահակի մի խելոք նկատառումը,— մենք, ասում է, իրավունք չունենք անտեսելու հակառակ կողմի կարծիքն ու վերաբերմունքը։ Այդ հակառակ կողմը ես եմ։

— Քո հակառակությամբ...

— Պետք չէ, Երվանդ։ Ես քեզ խնդրեցի, որ ինձ հնարավորություն տաս մարելու այդ մոխրաթաղ կրակի վերջին պճձերը։

— Ես պետք է համբերատար սպասեմ, մինչև դու կդադրես այն մեկին սիրելուց, զուցե դրանից հետո՞ միայն հերթը ինձ հասնի։

— Դու իզուր ես վիրավորում և քեզ, և ինձ։

— Իսկ իմ այս անորոշ վիճակը դու վիրավորական չես համարում, սա՛ է զարմանալին։

Երվանդը վերցրեց Աշխենի ձեռքը իր ծնկից, դրեց նրա փեշին, ոտքի կանգնեց, գլանակ վառեց, ու ծխելով ետ ու առաջ էր քայլում։

— Դու իզուր ես կարծում, թե ես չեմ հասկանում իմ և քո վիճակի փափկությունը։ Հավատա, ես անհարմար եմ զգում, ես մեղավոր եմ քո առաջ, բայց չեմ կարող անապնիվ լինել քո

թվայնացրել է 1915.info կայքը

նկատմամբ, մեր մեջ նոյած փոխադարձ... զգացումն այդ իրա-
վունքը ինձ չի տալիս, հասկացիր, վերջապես։ Իսկ քո վիճակը,
ընդունում եմ, մեղմ ասած, փայլուններից չէ։ Միայն չեմ կարող
չասել, որ քո վիրավորված կեցվածքը իմ սիրտը շատ է դառ-
նացնում։ Ասում են՝ վիրավորական է այն, ինչ արվում կամ
ասվում է վիրավորելու նպատակով. մի՞թե դու ինձ մոտ այդ-
պիսի չար ու անմարդկային նպատակներ ես տեսնում, և մի՞թե
մեր՝ օր-օրի վրա ջերմացող փոխհարաբերությունները հակառա-
կը չեն ապացուցում։ Ես քեզ խնդրում եմ՝ թեկուզև հրաժարվիր
մեր մտերմությունից, բայց մի վիրավորվիր, դա ինձ շատ է
մտահոգում։

Ոտքի կանգնեց նաև Աշխենը։ Երկար ժամանակ լուռ քայլում
էին, ասես՝ և միասին, և իրարից անջատ։

Հանկարծ Երվանդը կանգ առավ, բռնեց Աշխենի թևից ու
շատ վճռական ասաց.

— Ես քեզ խնդրում եմ, տուր ինձ այդ երջանիկ ընկերոջ
հասցեն, ես կգնամ նրա մոտ ու կասեմ՝ այդ ի՞նչ անխիղճ մարդ
եք դուք, ի՞նչ իրավունքով եք սպանում սերը...

Աշխենն անզոր էր պատասխանելու, նրա աչքերը լիքն էին
արցունքներով։

Հենց այդ պահին վազելով նրանց մոտեցավ Գուրգենը։ Այն-
պես էր կարմրել ու քրտնել։ Մոր մտահոգությունները մղվեցին
ետին պլանի վրա, ու նա անհանգիստ վրա տվեց.

— Այս ի՞նչ է քո հալը, այ բալիկ, բա որ մրսե՞ս. քանի
անգամ ասացի, որ շատ չվազվզես։

— Ոչինչ, մամ, կանցնի։ Միայն ես սոված եմ, ուտելու բան
չունենք, չէ՞։

Աշխենը բոլորովին խուճապի մատնվեց.

— Ոչինչ չեմ վերցրել ինձ հետ. ախր չգիտեի, որ այսքան
կուշանանք։ Ի՛նչ անշնորհք մայր եմ ես։

— Մա՛մ, ոչինչ, ես կդիմանամ։

Երվանդն իր թաշկինակով սկսեց սրբել Գուրգենի քրտնած
վիզն ու այտերը և առարկություն չվերցնող տոնով ասաց.

— Որպեսզի մայրդ չանհանգստանա, հիմա մենք կգնանք
այս մոտիկ խորտկարանը և մի բան կուտենք. չե՞ս առարկում,
Գուրգեն։

— Ես լրիվ համաձայն եմ։ Մամ, գնա՞նք։

— Դե, եթե դու ուզում ես...

թվայնացրել է 1915.info կայքը

Երկար նստեցին ճաշասեղանի շուրջ։ Այնպես հաճելի էր, խաղաղ, եվ հաճախորդներն էին քիչ, մի քանի զույգ միայն, իսկ խորովածն ուղղակի հրաշալի էր։ Պակասը լրացրեց տապակած սունկը. իսկապես որ սա պատվավոր ճաշատեսակ է։ Միայն ինչո՞ւ Երվանդը կարգին ուտել չէր կարողանում, նույնիսկ մի բաժակ շամպայն խմելուց հետո էլ։ Նրա վիրավոր ախորժակի վրա ասես մուայլ ամպ էր չոքել։

Իսկ արևն արդեն թեքվում էր դեպի մայրամուտ։ Ջորի մեջքը գրկած Ջանգուն ավելի շատախոս էր դարձել։ Ջրի առանձին հատվածներ, արևի թեք հայացքից, պղնձի հալոցքի տեսք էին ստացել։ Ու գնալով քամին սանձակոտոր էր լինում. դեղնակարմիր տերևների խրձերն իր ուսերին առած՝ աջ ու ձախ էր թռչում, մեկ մաքրում, մեկ տերևաթափ սարքում ճանապարհների ու ջրերի վրա։

Ջանձրույթի մի անկոչ բեռ եկավ ու ծանրացավ Գուրգենի ուսերին։ Դե՛, առողջ ու կուշտ երեխան ինչքա՞ն կարող է նստած մնալ, այն էլ մեծերի շրջապատում։ Դիմացի անկյան մոտ դրված սեղանի շուրջ երեք հոգի են նստած, հավանաբար՝ հայր, մայր ու դպրոցական մի տղա, երևի Գուրգենից մի փոքր մեծ, է՛, իրենք էլ են երեքով, ինչո՞ւ հոր, մոր ու երեխայի փոխհարաբերություն չկա...

Երեխաները նախ հայացքով իրար գտան։ Հետո այն մեկը մոտեցավ Գուրգենին, երևի նա ավելի համարձակն էր։

— Քեռի և մորաքույր, բարև ձեզ։ Թույլ կտա՞ք ձեր տղայի հետ խաղալ։ Իմ անունը Վարդան է։ Այստեղ մոտիկ կմնանք, այգուց դուրս չենք գա։

Մոր դեմքին բեկվեց Գուրգենի հարցական հայացքը։

— Կարելի է, Վարդան ջան. Գուրգենն էլ էր ձանձրանում։ Միայն զգույշ, խնդրում եմ։

— Օղակ, մորաքույր, մենք խելոք կխաղանք։ Գուրգեն, գնացինք։

Ու տղաները, ձեռք-ձեռքի տված, դուրս վազեցին։

Երվանդը նոր գլանակ վառեց։

— Ինձ թվում է, թե դու այսօր չափից ավելի շատ ես ծխում, Երվանդ։ Դժվար էր որոշել՝ Աշխենի խոսքի մեջ հանդիմանությո՞ւնն է շատ թե՞ խղճահարությունը։

— Այս չնչին հաճույքն էլ ինձ համար շատ ես համարում։

թվայնացրել է 1915.info կայքը

— Սթև լմանայիր, թե ես ինչպես հիմա տանել չեմ կարող այդ ծխախոտի հոտը, շատ է տհաճ։

— Իմ պատճառած բազում տհաճությունների մեջ փորձիր հանդուրժել նաև այս մեկը։

— Դու ների՞ց ես սկսում։

— Իսկ ես ե՞րբ եմ վերջացրել...

Մախրամանի կողին սեղմելով Երվանդը խեղդամահ արեց կիսամաշ գլանակը, մի բաժակ էլ հանքային ջուր խմեց, պատուհանից նայեց ծառերի տակ խաղացող տղաներին ու կամաց ասաց.

— Աշխեն Գուրգենովնա, որպեսզի ինձ հետ շատ չձանձրանաս, թույլ տուր քեզ մի փոքրիկ պատմություն անել։ Հորիցս եմ լսել, երևի մի քսան տարի առաջ։

— Ես սիրով լսում եմ քեզ։

— Շնորհակալ եմ, դուք շատ ուշադիր եք։

Աշխենը տխուր ժպտում էր։

— Այդ օրը հյուրեր կային մեր տանը, հարևաններ, հորս ընկերներից երեք հոգի։ Ուտել-խմելուց հետո անցան զրույցի։ Ջգիտեմ ինչ առիթով, հայրս պատմեց իր ռազմաճակատային ընկերներից մեկի տխուր սիրո մասին։ Շնորհակալ եմ, իմ ներկայությունից չխորշեց— երևի արդեն մեծ տղա էր համարում ինձ։ Ուրեմն իր ղինվոր ընկերներից մեկը...

— Սպասիր, Երվանդ, հո իմ հոր մասին չի՞ եղել այդ խոսքը։

— Ո՛չ, Ուրալից՝ Ուկրաինայի տափաստանները հասած մի ռուս տղայի մասին էր, որի անունը, որքան հիշում եմ, Բոգդան է լինում։ Տասնութ տարեկան մի տղա և՝ խենթի նման սիրահարված։ Ու սա սովորություն է ունենում իր ընկերներին պատմելու սիրած աղջկա մասին, նրա գեղեցկությունն ու մարդկային արժանիքներն է գովում, բոլորին հարսանիքի է հրավիրում, որ պիտի կատարի պատերազմից անմիջապես հետո։ Այսպես ամեն օր խոսում է, պատմում է իր Լաուրայի մասին, նամակ է գրում նրան կամ նամակ է ստանում։ Հետո, ինչպես և լինում, աղջկա նամակներն ընդհատվում են. ինքը գրում է առաջվա նման, պատասխան չկա։ Ու օր-օրի վրա այդ խոսքաշեն տղան դառնում է լռակյաց։ Ծեցնում է մի ամիս, երկու ամիս, Բոգդանի հասցեով մի նամակ է ստացվում միայն, այն էլ՝ հարևանի աղջկանից։ Եվ սա գրում է, որ այդ Լաուրան անպետք աղջիկ դուրս եկավ, արդեն մտերմացել է բանակից չգիտես ինչ հնարքով ազատված

թվայնացրել է 1915.info կայքը

մնկի հետ, շուտով ամուսնանալու են։ Բոգդանն այնպես է ազդ-
վում այդ անսպասելի հարվածից, որ մի քանի օր շարունակ
նրա ձայնը չեն լսում. լուռ մտածում է ու ծխում, ծխում է ու
մտածում։ Ընկերների մխիթարական խոսքերն անզոր են լի-
նում նրա վիրավոր սիրտն ապաքինելու։

Երրորդ թե չորրորդ օրն այդ նամակից հետո սրանց զորա-
մասը հարձակման է գնում, եվ Բոգդանն սպանվում է այդ մար-
տում։ Հայրս ցավով պատմում էր, թե ինչքան անզգույշ էր նա
այդ օրը, հրացանն առած առաջ էր վազում. կրակում էր ու վա-
զում, երբ պետք էր պառկել, նա նորից ոտքի վրա էր։ Կարծես
մահ էր փնտրում այդ տանտուքամյա պատանին։ Եվ անողոք
մահը գտնում է նրան... ընկերները ծանր են տանում Բոգդանի
սպանության փաստը։ Եվ օրեր հետո որոշում են նամակ գրել
լատերային։ Հասցեն ունենում են. Բոգդանի գրպանում կոմե-
րիտական տոմսի հետ միասին, մնացած է լինում այդ աղջկա
հասցեով գրված ու չուղարկված վերջին նամակը։

Գրում են երկար և ափերից դուրս եկած մի նամակ։ Ջեն
հավանում, պատռում են ու նորից են գրում։ Ընկերներից մեկն
առաջարկում է հրաժարվել այդ մտքից, գտնելով, որ դավաճան
աղջիկն արժանի չէ նման ուշադրության։ Չի անցնում այդ
առջարկությունը։ Ուղարկում են նամակը, ընդամենը երեք տո-
ղից բաղկացած մի անողոք դատավճիռ։ «Ձեր դավաճանական
քայլի լուրն առնելուց երեք օր հետո, հերոսի մահով ընկավ մեր
հրաշալի ընկեր Բոգդան Սմիռնովը։ Սեր սպանող մարդասպան,
ինչպե՞ս պիտի ապրեք այս աշխարհում»...

Երվանդը շտապ գլանակ վառեց. մոռացե՞լ էր իր խոստումը
թե՞ չդիմացավ պահի լարվածությանը։ Զգեց մի երկու ան-
գամ, հետո մեղավորի տոնով դիմեց Աշխենին.

— Ներիր, խնդրում եմ, ես պարզապես... ուզում էր հանգցնել
գլանակը։ Աշխենը չթողեց։

— Չխիր, խնդրում եմ։ Թե այդ շնորհքն ունենայի, հիմա
ես էլ չէի հրաժարվի...

Լուռթյունը երկարեց։ Արևի վերջին ճառագայթները փշրվեցին
Ջանգվի ձորի ժայռակոփ ու կանաչապատ կողերին։ Լսվում էր
հուզված քամու սվսվոցը։

— Ծանր պատմություն էր։ Եվ կարո՞ղ էր այդ մի խումբ
ընկերների մեջ նաև իմ հայրը լինել։

— Հնարավոր է. ուրիշ կլինի, հորս կհարցնենք։

թվայնացրել է 1915.info կայքը

— Միայն չգիտեմ, Երվանդ, թե ինչո՞ւ արեցիր այդ պատմությունը։

— Ազնիվ խոսք՝ չգիտեմ, այնպես, հանկարծ հիշեցի. թե ինչո՞ւ հենց այսօր, դժվարանում եմ ասել։

— Գուցե ուզում ես ինչ-որ զուգահե՞ռ անցկացնել, ժամանակակից երա՞նգ տալ այդ Լաուրա կոչվածի շավաճանական քայլին։

Երվանդն արդեն վեր էր կացել աթոռից, մոտեցավ ապակեծածկ պատին ու նայում էր աշնան շապիկներ հագած տերևների խենթ վազվզոցին։ Անպատասխան մնաց Աշխենի վերջին հարցը, գուցե լսե՞ց Երվանդը...

48.

Այսքան էլ անսպասելի զանգ։ Եվ ձայնն է անծանոթ։ Ո՞վ է, ի՞նչ է ուզում։ Իսկ ինչո՞ւ ես անհանգստանում. քո ականջն այնքան սովոր է նման զանգերի։ Հենց քիչ առաջ չէր, մի երիտասարդ կին խնդրում էր հեռախոսով՝ քաշել այսինչի կապը, որն, իբր թե, իր ամուսնուն ճանապարհից դուրս բերելու վորձեր է անում։ Երբ փորձեց առարկել, պատճառաբանելով անկարողությունն այդ հարցում, կինը հարձակման անցավ.— Բա դուք գլխավոր ինժեներ եք չէ՞, և մի՞թե ընտանիքի ու բարոյականության հարցերը այդքան խորթ են ձեզ... Հիմա էլ ահա այս զանգը. թե՞ սա էլ բարոյախոսական ճառի իր բաժինն է մատուցելու։

— Լսում եմ ձեզ. ո՞ւմ հետ պատիվ ունեմ խոսելու։

— Հրանտ Արշակովիչ, ե՛ս եմ, Քնարիկը, Սենո կոչվածի կինը։

Ա՛յ, սա իսկապես որ անսպասելի զանգ է։ Այնքան քիչ են հանդիպել, ձայնն էլ չի հիշում։ Ի՞նչ է պատահել, մի՞թե Սենոյի մոտ ջրերը նորից պղտորվել են։

— Քնարիկ, ձեր ձայնն էլ մի տեսակ է, հո վատ բան չի՞ պատահել։ Կարո՞ղ է Սենոյի գործերը նորից...

— Պատահածի դառնությունն իմ ուսերին է ծանրացել և նոր բան չի, դժբախտաբար... Սենոյին ի՞նչ կա, նա ապահովագրված երջանիկներից է։

Խոսակցի ձայնը խզվեց միանգամից, ասես ճանապարհին

թվայնացրել է 1915.info կայքը

դար ու փոսի հանդիպեց. քե՞ հեռախոսալարը ծալվեծալ եղավ։ Այդ ի՞նչ է, մեջը նաև հեկեկո՞ց կա. չեղա՞վ։

— Քնարի՛կ, խնդրում եմ հանգիստ պահեք ձեզ. ես այդպես էլ չիմացա ձեր հուզմունքի պատճառը։

— Գիտեք ինչ, Հրանտ, երևի իսկական մեղավորը ես եմ, որ այսքան տարի հանդուրժել եմ այդ հրեշին... Վերջնականապես համոզվում եմ, որ հիմարի մեկն եմ ես... Անընդհատ մտածել եմ, թե մեղք են երեխաներս, Թող անհայր չմնան։ Սևը ներս եմ արել, ժպտացել մարդկանց, իբր թե ամեն ինչ լավ է, ես երջանիկ եմ։ Թե ո՜ւմն էր պետք այդ սուտ դերասանությունը, չգիտեմ։ Նաև մլամիտ-միամիտ մտածում էի, թե ուշքի կգա, ուշացումով գոնե կգնահատի իմ նվիրվածությունը։ Իսկ նա գնալով ավելի լկտիացավ, ոտնահարեց բոլոր սահմանները։ Առանց ամոթի զգացման քարշ է գալիս վարքից զուրկ կանանց հետ. նա ի՞նչ մարդ է... ,

Զայնը նորից քարքարոտ կածան մտավ. տաքացան արդեւլակները։

Ի՞նչ ասի, ինչպե՞ս մխիթարի։ Հո չի խոստովանի, որ ինքը քանի անգամ փորձել է քաշել Սենոյի ականջը. ավա՞ղ, արդյունքի չի հասել։ Ով, ընդհանրապես, պե՞տք է, որ Քնարիկը իմանա, թե ինքը ծանոթ է նրա ամուսնու վարքագծին։

— Քնարի՛կ, գուցե դուք սխալվո՞ւմ եք, ախր, Սենոն այդքան էլ...

— Այստեղ սխալ լինել չի կարող, Հրանտ, դրանում դուք էլ համոզված եք։

Հրանտի ականջները տաքացան միանգամից։ Սատանան տանի, ոտքը դրել է լպրծուն ճանապարհի վրա, մի՞թե գլորվելն ավելի մարդկային չէր։ Ա՜խ, այդ Սենոն, մի ձեռքն ընկներ հիմա։

— Քնարի՛կ, այնուամենայնիվ...

— Հրա՛նտ, ձեզ զանգելով՝ ես իմ ասածների իսկությունն ստուգելու կարիքը չունեի։ Պարզապես ուզում եմ ասել ու խընդրել, որ եթե ես նրան դուրն վռնդեմ տնից, դուք և՛ չզարմանաք, և՛ ինձ մեղադրելու փորձ չանեք։ Համբերությանս բաժակն այնպես է լցվել, ո՛չ, վաղուց թափվում է. այս աստիճան ողորմելի կինն ո՜ւմ է պետք... երեխաներս մեծացել են, փառք աստծո, կապրեն առանց ծնողների էլ։ Նրանք էլ գիտեն ամեն ինչ, և իրենց հոր երեսին նայել անգամ չեն ուզում։ Ով ճիշտ են անում, որ ինձ են մեղադրում առաջին հերթին։ Այսօր մեծ

թվայնացրել է 1915.info կայքը

աղջիկս ասում է՝ մամա, մի՞թե դու ինքնասիրություն չունես։ Դրանից հետո էր, որ այլևս չդիմացա, որոշեցի զանգել ձեզ։ Նա որպես աշխատող էլ մի բան չէ. այսինքն՝ վատ մարդը լավ աշխատող լինել չի կարող, ես դրանում համոզված եմ։ Ապրում է՝ մարդկանց աչքերին թոզ փչելով։ Ինչպես էլ պահում են դրան, դեռ առա՛ջ էլ են քաշում... Վերջին անգամ վերջապես աչքը պիտի հանեին, էլի դուրս պրծավ։ Որ իմանաք, թե ի՛նչ գումարներ ծախսանց... Մի խոսքով, ես չեմ նախանձում, որ այդպիսի ընկեր ունեք։ Ներեցեք, խնդրում եմ, որ այսքան զբաղեցրի ձեզ. և շնորհակալ եմ, որ համբերատար լսեցիք ինձ։ Այսքան։

Հեռախոսափողը վաղուց է ցած դրել, բայց զրույցն ասես դեռ շարունակվում է։ Ի՛նչ զրույց, իսկական մեղադրական ճառ, նաև՝ իր հասցեին. մարդու, ընկերոջ, ընկերության հասցեին։ Ի՞նչ անի, չզանգի՞ այդ աննամուս Սենոյին ու ինչպես պետքն է... Իսկ դա կրակին յուղ լցնել չի՞ նշանակի։ Ա՜խ, Սենո, Սենո։ Ուսանողական տարիներին էլ մի բան չէիր. բայց ինչպե՞ս օրօրի վրա ձախ գնացիր. և տես որտեղ ես հասել դու հիմա, որ ինքնասեր ու զուսպ կինդ բողոքի նոտա է ներկայացնում քո ընկերոջը։ Հանկարծ որտեղից որտեղ իր հիշողության պատուհանի տակ կանգնեց Ֆաուստով Անդրեն, ավելի ճիշտ՝ իրենց մի հանդիպումը երեքով, ակտիվի ժողովի նախասրահում։ Անդրեն ողբերգություն էր ապրում, կինը նրան դուրս էր արել տնից՝ դավաճանության մեղադրանքով։ Սենոն էլ իր հերթին մեղադրում էր ընկերոջը, և ի՛նչ տարօրինակ տրամաբանությամբ։ Նախ, ասում էր, դու ընդհատակյա աշխատանքի փորձ չունես, կինդ ինչո՞ւ պիտի իմանա, թե ուր ես գնում դու, ում մոտ։ Հետո, քնդ մոտ, ասում է, դաստիարակչական աշխատանքի պակաս կա։ Տղամարդու ազատությունն անսահման է, կնոջ լեզուն պետք է կարճ պահել։ Մի անգամ էլ, այդ մեկն արդեն սրճարանում էր, հրճվանքով ասում էր՝ դիտե՞ս, սոցիոլոգները պարզել են, որ հինգ բաժանված տղամարդուց չորսը նորից է ամուսնանում, իսկ կանանց վիճակը շատ է տխուր, հինգից մեկին է հաջողվում նոր ընտանիք կազմել. խելոք կանայք, ասում է, չեն կարող հաշվի չնստել այս փաստի հետ։ Այսպես է, գողն իր փիլիսոփայությունն ունի, կաշառակերն իրենը, անառակն էլ ինչո՛ւ պիտի ետ մնա նրանցից... Մի ահավոր բան էլ ասաց տիկին Քնարիկը, որ իմանաս ի՛նչ ծախսերով դուրս պրծավ անցյալ անգամ։ Դու էլ միամիտ անճարակի դիմակ ես հագնում, իբր թե քո մտքով չի

թվայնացրել է 1915.info կայքը

անցել այդ կասկածը, ավելի ճիշտ՝ համոզված չես եղել դրանում։ Եվ ի՞նչ։ Ցավալի է պարզապես, ուրիշ ոչինչ։ Շատ մեղմ չի՞ ասված։ Իսկ որ գոռա, կուրծք ծեծի, դրանից մի բան կփոխվի՞...

Հիշեց իր հանգուցյալ պապին։ Հաղթանդամ մարդ էր, զարմանալի արտահայտիչ աչքերով ու ճերմակ թելերից հյուսված փարթամ մորուքով, իսկական սուրբ, ինչպես մայրն էր որակում իր հորը։ Այնքան խիստ էր նամուսի հարցերում։ Հիմա դա որակվում է որպես հետամնաց հայացք։ Բարոյական խնդիրներում կապիտուլյացիան է առաջադեմ համարվում։ Եվ ինչպե՞ս կնոջ հարցը գիտեր պապը։ Տան ծուխն է, ասում էր, օղուշաղը, ուզենա օջախդ վառ կպահի, ուզենա, կհանգցնի։ Եվ ինչպե՞ս էր դատապարտում ուրիշի կնոջ վրա աչք դնող տղամարդուն։ Օղուշաղի պատիվն, ասում էր, տան տղամարդը որ չպահեց, ուրիշ էլ ո՞վ կպահի, աննամուս մարդու վզից պետք է մի ծանր քար կապես և գցես գետի խոր տեղը... Իսկ հիմա այնքան էժանացել է այդ նամուս կոչվածը, իսկական ղալբ ապրանք. սա էլ պապի խոսքն է։ Եվ Սենոյի նմաններըը ծաղրում են «մի դրույքով աշխատող» ամուսիններին, նրանց անճարակ ու ապաշնորհ են կոչում, ա՛յս է վիրավորականը։

Հանկարծ մի այնպիսի չորություն զգաց կոկորդում, ասես ծարավից տապակվում էր։ Ինչո՞ւ հիմա միայն գլխի ընկավ։ Կանչեց քարտուղարուհուն։

— Ամալյա, ինձ կարո՞ղ ես մի բաժակ սառը ջուր տալ։

— Հրանտ Արշակովիչ, գուցե թե՞յ կխմեիք, պատրաստ է։

— Ջուր եմ ուզում, Ամալյա։ Հո չի ասելու թե ջիգյարս վառվում է։ Նաև դեղ պիտի խմի. պապավերինի հերթական հաբը։ Սիրտն աշխատում է ընդմիջումներով։ Արդե՞ն, ժամանակից շուտ չի՞ հոգնել։ Պապն այս հարցում էլ պահպանողական էր։ Դե՞ղս որն է, ասում էր, դա ի՞նչ տղամարդու գործ է։ Բարձրացիր սարը, կամ մի աման սառը մածուն կեր, տես ոնց քեֆդ տեղը կգա։

Այսքան հաճույքով ջուր վաղուց չէր խմել։ Իսկապես որ անմահական է մեր Երևանի ջուրը, միայն ափսոս, որ քիչ է, ժամով են տալիս... Իսկ Ամալյան դեռ կանգնած է դռան մոտ. բա՞ն ունի ասելու։ Բայց նախ պապի բառերով պետք է օրհնել աղջկան.

— Կյանքդ երկար լինի ջրի նման, Ամա՛լյա, շատ էր համով։

— Շնորհակալություն, Հրանտ Արշակովիչ։ Հեռախոսափողը վերցրեք, խնդրում եմ, ձեզ են ուզում։

Սենոն է։ Այս ինչ է, մարդ ու կին խոսքները մե՞կ են արել։

թվայնացրել է 1915.info կայքը

— Հրանտ, վատ չէր լինի, եթե հանդիպեինք խոսելիք ունեմ։

— Գուցե հեռախոսո՞վ կասեիր. վախենում եմ ժամանակ չգտնեմ հանդիպման համար։ Իր կամքից անկախ ձայնը փշռա-ված էր։

— Ա՛յ տղա, մի ծիծաղելի բան է կատարվում ինձ հետ. վայ թե Անդրեի աննծքը ինձ էլ բռնեց։ Էդ առևտրական սրիկայի...

— Հիմա էլ դո՞ւ ես ֆասոններ թափում։ Ի՞նչ է պատահել, բան ասա, հասկանամ։

— Իմ սուսիկ-փուսիկ, ուրբաթախոս կինս ըմբոստացել է, պատկերացնո՞ւմ ես, այն աստիճան, որ փորձում է ինձ դուրս անել տնից։ Վա՛յ աշխարհ...

— Ով քո կարծիքով տիկին Քնարիկը լուրջ պատճառներ չունի՞ դրա համար, անարդա՞ր է վարվում։

— Ա՛յ տղա, դու նորի՞ց սկսեցիր հեքիաթ պատմել։ Ի՞նչ արդարության մասին է խոսքը. նոր ոչինչ չկա, հին բաներ են, շարունակվում են։

— Իսկ քո կարծիքով հին հիվանդությունները չե՞ն կարող մարդուն մահվան դուռը հասցնել։

— Վերջ տուր, ի սեր աստծո, ես կուշտ եմ այդ դատարկ կրա-կոցներից։

— Դե՛, ուրեմն, շարունակիր ապրել քո լիքը կյանքով, նա շիրոկուցու նոգու, ինչպես դու սիրում ես կրկնել։

— Լսիր, ընկեր Հրանտ Ստեփանյան, այսօր քեզ ի՞նչ է պատահել։

— Ինձ՝ ոչինչ. ես ցավով տեսնում եմ, որ պատահածը քո գլխին է իջել։

— Եթե իսկապես ցավով ես տեսնում, էլ ո՞ւր ես մեղադրա-կան ճառ ասում, ինչ է, ես դատապարտվա՞ծ եմ քո կարծիքով։ Ընկեր ես, ոչ բարով, պանգեցի, որ մի քիչ խոսեմ, թեթևանամ, իսկ դու...

— Սենո, քեզ քանի անգամ կլինեմ ասած, որ վատ ճանա-պարհի վրա ես, որ սեփական կնոջն այդքան ստորացնել չի կարելի, որ նրա համբերությունն էլ սահման ունի։

— Ա՛յ, այդ մեկը ճիշտ ես ասում, մտքովս անգամ չէր անց-նում, թե նա կարող է այդքան վճռական լինել։ Երեխաներս էլ նրա հետ են։ Ես լրիվ մենակ եմ մնացել, ա՛յս է վատը։ Երկու օր է, տուն չեմ գնում։

— Այսինքն՝ քեզ տանը չեն ընդունում։

թվայնացրել է 1915.info կայքը

— Մոտավորապես։

— Իսկ ես ինչո՞վ կարող եմ քեզ օգնել։

— Այդ ֆնարիկին զանգիր և ասա՝ հիմարություններ չանի. նա քեզ շատ հարգում է, կլսի։

— Չեմ կարող, դա իմ ուժերից վեր է։

— Ա՛յ տղա, ես այդպես էլ չիմացա՝ դու ի՞մ կողմից ես, թե՞ նրա ջրաղացին ջուր լցնողներից ես։

— Ես, ընկեր Սեննեքերիմ, արդարության ու բարոյականության կողմից եմ, և իմ խղճի դեմ ոչ մի քայլ չեմ անի։

— Եվ դու դա համարում ես ընկերություն։

— Իսկ քո կարծիքով ընկերությունը բարոյական սրբություններին ոտնահարո՞ւմ է ենթադրում. շա՞տ ես սխալվում, Սեննեքերիմ Կիրակոսովիչ։

— Իսկ ես, մեղմ ասած, թքել եմ քո այդ արդարության էլ, գովական բարոյախոսության վրա էլ, հասկացա՞ր...

Ու լավեց թափով լծակին իջած հեռախոսափողի տհաճ ընդհոցը։ Ու խաղաղվեց միանգամից, տիրեց մի ծանր լռություն։

49.

Մայրն այնքան էր անհանգստացել, որ նույնիսկ լաց եղավ, չնայած քանի անգամ ասել էր, թե ուրախ առիթը լաց չի սիրում։

— Հրանտ, բա սա բա՞ն է, որ դու անում ես. աչքս ջուր կտրեց, հազար ու մի բան անցավ մտքովս, մտածում եմ, որ էսքան ուշացավ, ով գիտի...

— Ամեն ինչ կարգին է, մա՛մ, և հարսդ է առողջ, և թոռդ։— մոտեցավ, փաթաթվեց մորը, համբուրեց այտերը։

Լուսիկ մայրիկն իր զարմանքը թաքցնել չկարողացավ.

— Տղա ջան, խեր լինի, դու ինձ վաղուց չես համբուրել, հիմա ի՞նչ պատահեց։

— Մա՛մ, ես Նվարդի հանձնարարությունն եմ կատարում. կարգադրել է՝ շնորհավորել քեզ, համբուրել երկու անգամ և հայտնել, որ թոռնիկիդ անունը Լուսիկ ենք դրել։

Լուսիկ մայրիկը թաշկինակը տարավ խոնավացող աչքերին։

— Հիմա որ ես լաց լինեմ, մեղավո՞ր եմ։ Էս ինչ բախտավորություն էր. ես նրանց ցա՞վը տանեմ... Հրանտ, ես, իհարկե, շատ եմ շնորհակալ ձեր որոշման համար, բայց այսօր ո՞վ է իր աղջկա անունը Լուսիկ դնում։ Վախենում եմ, թոռնիկս որ մե-

թվայնացրել է 1915.info կայքը

ծանա, կասի՝ էս հին ու մաշված անու՞նը որտեղից ճարեցին, ու կանիծի ինձ։ Գուցե ուրիշ բա՞ն կմտածեք։

— Մեր որոշումը վերջնական է, մա՛մ, արի այդ մասին այլևս չխոսենք։

Հետո կանչեց դաս պարապող տղային։

— Արշակ, գիտես, չէ՞, որ դու քույրիկ ես ունեցել։

— Գիտեմ, պապ, իսկ ե՞րբ տուն կգա։

— Մի քանի օրից հետո։ Անունն էլ ի՞նչ դրած լինենք, որ լավ լինի։

— Լուսիկ,— առանց տարակուսելու պատասխանեց տղան։— Նոր լսեցի, որ դու ասացիր՝ մամայի հետ որոշել եք։ Ես էլ եմ համաձայն, պա՛պ, Լուսիկը լավ անուն է։

Լուսիկ մայրիկն այլևս չդիմացավ, թաշկինակի մեջ լալիս էր անձայն։

— Մա՛մ, վաղը երևի մեր տուն գա Գարեգին Վահանիչը, ուզում է քեզ անձամբ շնորհավորել։

— Շատ ապրի Գարեգինը։ Գլխիս վրա տեղ ունի, թող գա։

— Իսկ հյուրին պատվելու բան կունենա՞նք։

— Էդ ո՞ր հյուրն է դժգոհ գնացել մեր տնից։ Դու իզուր ես անհանգստանում, տղաս, ես քեզ ու իմ Նվարդին սևերես չեմ անի...

Թանձր երեկոն, իր ոտքերը մեկնել, գիշերվա դռանն է հասցրել։ Իսկ Հրանտն ու Լուսիկ մայրիկը դեռ զրուցում են։ Արշակն էլ չի քնել, մի անկյուն քաշված՝ հեքիաթներ է կարդում։ Ով նրա ուշ քնելը չի անհանգստացնում տնեցիներին. վաղը կիրակի է, շուտ վեր կենալու անհրաժեշտությունը չկա։ Մեկ էլ երեխան ծալեց ձեռքի գիրքը, մի կողմ դրեց ու դարձավ մեծերին.

— Քունս տարավ, ես գնամ քնելու։ Բարի գիշեր։ Մոտեցավ, հերթով փաթաթվեց-համբուրեց հորն ու տատիկին։

Լուսիկ մայրիկն առանձնապես երկար պահեց Թոռանն իր գրկում. համբուրում էր, նայում հիացմունքով, նորից համբուրում, ու հետո էլ շշնջում էր հազիվ լսելի.

— Ես քո հոտի՞ն մատաղ...

Արշակն իր զարմանքը թաքցնել չկարողացավ.

— Տա՛տ, այնպես ես կարոտել, կարծես թե վաղուց չես տեսել։

— Բա չեմ կարոտե՞լ, մատա՞ղ քեզ...

Ինչո՞ւ այդ տեսարանը նաև Հրանտի սրտի վրա ծանրացավ,

թվայնացրել է 1915.info կայքը

չգիտի։ Շտապ ելավ տեղից, անջատեց հեռուստացույցը. հետո անաղմուկ ծածկեց երեխայիննջարանի դուռը ու նորից եկավ նստեց մոր դիմաց։

— Վաղն ի՞նչ կարելի է տանել Նվարդին, մա՛մ։

— Ես կպատրաստեմ, ինչ պետք է, դու մի անհանգստանա։ Ջոքանչիդ էլ բան կտանես։ Նրա մոտ եղե՞լ ես էսօր, հիվանդ կին է, ուշադիր եղիր։

— Ջհասցրի, մամ, զանգահարել եմ։

— Զանգից բան դուրս չի գա, վաղն անպայման ժամանակ գտիր. շուկա կմտնես, միրգ կառնես։

— Լավ, մայրիկ, կաշխատեմ։

— Նվարդիս էլ լավ կնայես, տղաս. հիմա նա երկու երեխայի մայր է, ավելի շատ կարիք կունենա քո օգնությանը։ Ուշադիր կլինես, նա լավ մարդ է...

— Մա՛մ, այսօր զարմանալի բաներ ես ասում, խեր լինի։ Մենք Նվարդին նո՞ր պիտի ճանաչենք կամ մի՞թե ես նրա նկատմամբ...

— Էդ չեմ ասում, Հրանտ, փառք աստծո, դա անցել է... Ուղղակի կաշխատես ավելի շատ լինել նրա մոտ, մենակ չթողնես։ Շուկա է, տուն է, դպրոց ու դաս է, մենակ չի հասցնի։

Հրանտը փորձեց մոր այդ խոսքը կատակի գրպանը գցել։

— Իսկ ինչ է, սիրելի մայրիկ, դու որոշել ես մեզ մենա՞կ թողնել, հրաժարվում ես թոռներ մեծացնելո՞ւց։

— Է՛, տղաս, ինձ սխալ մի հասկանա։ Քանի ես կամ, իհարկե, կաշխատեմ, կօգնեմ։ Բայց դե, ջահել չեմ արդեն, ով գիտի, մեկ էլ՝ տեսար... Հայրդ էլ էնտեղ է մենակ...

Հրանտը լրջորեն ըմբոստացավ։

— Մայրի՛կ, բա քեզ սազո՞ւմ է տխուր բաների մասին մտածել, այն էլ այսօր, երբ մեր տանը մի լուսիկ էլ է ավելացել։

— Բան չեմ ասում, Հրանտ ջան, բայց դե աշխարհ է, կյանք է... Իսկ էդ նորածին լուսիկի եկած ճամփին ես մատա՞ղ լինեմ. մի նրա աչքերը տեսնեմ, էլ դարդ չունեմ։ Տեսնես ո՞ւմ է նման։

— Դեռ չգիտեմ, հարսդ բան չի գրել։ Մա՛մ, դու էլ ես հոգնած, արի վերջացնենք այս խոսակցությունը, վաղն անելիք շատ ունենք։

— Լավ ես ասում, տղա ջան։ Մի նայիր, տես Արշակս հո բաց չի՞ պահել։

թվայնացրել է 1915.info կայքը

— Դե՛, բարի գիշեր,— մոտեցավ, համբուրեց մոր ճակատը։

— Բարին քեզ հետ, տղա ջան,— ձգվեց անկողնում, կուշտ-կուշտ համբուրեց տղայի այտերը։

Այդ ինչ է, արցունքնե՞ր են ծվարել մոր աչքերում։ Ջնկատելուն տվեց։ Շտապ անցավ Արշակի ննջասենյակը, ծածկեց երեխային։ Հետո, չգիտես ինչու, ծխելու մի անդիմադրելի ցանկություն սկսեց նրան նեղել։ Դուրս եկավ պատշգամբ։ Եվ նրան անընդհատ թվում էր, թե մոր հայացքը փարվել է իր թիկունքին ու բաց չի թողնում...

Աստղազարդ գիշեր էր։ Ու սառն էր օդը։ Եվ ի՞նչ լայն են բացվում թոքերիդ դռները, ու այնպես հեշտ է շնչելը։ Իսկ աստղերի կայծկլտոցին վերջ չկա։ Ասես քաղաքի վրա մի անծայրածիր, բայց և ժպտածիծաղ գորգ են փռել՝ մեծ ու փոքր աստղերից հյուսված, լուսինն էլ, գունատ գեղեցկուհու մնան, ճեմում է այդ հրաշք գորգի վրա, աստղերի գլխաքանակը պարզել է ուզում։ Կարո՞ղ է։ Ասում են տիեզերքի անհունության մեջ ավելի քան հարյուր հիսուն միլիարդ աստղ կա. հավատալու բա՞ն է։ Ու իբր թե ամեն մի ապրող մարդ իր աստղն ունի։ Իսկ նորածինների համար էլ բաժին կա՞, ասենք փոքրիկ Լուսիկի աստղը ո՞ր մեկն է։ Ու տեսնես բախտավոր աստղի տա՞կ է ծնվել նա... Իսկ մա՞յրն ինչու էր մի տեսակ խոսում, նա ե՞րբ է այդքան հոռետես եղել. գուցե այս քանի օրվա հիվանդությո՞ւնն է նրան խեղճացրել։ Բայց արդեն ապաքինվել է, մի քանի օրից, հույս ունի, որ ծննդատուն կգնա, հարսին ուտելիք կտանի։ Չէ՞, արդեն կարգին ընտանիք են դառնում, և տղա ունեն, և աղջիկ, մայրը թող բարի լինի պահել-շահել իր թոռնիկներին, նրանց մի մասի ուրախությունը գոնե տեսնել։ Շուտով Սիրուշի աղջկա հարսանիքը կլինի, գոնե մի թոռ ամուսնացնի, ծոռ տեսնի։ Իր պապն ինչպես էր հպարտանում, որ յոթ ծոռ ունի, մայրն էլ նրա աղջիկն է, չէ՞, անհարմար է ետ մնալ...

Իսկ երկնքով մեկ ցիրուցան աստղերը մեկ ժպտում են ամոթխած, մեկ լուսածիր պոչը ձգած՝ թռչում անշտապ։ Ասում են՝ եթե աստղ ընկավ, ուրեմն կտրվեց մեկի կյանքի թելը։ Ահա, այն մեկն այնքան հեռու թռավ, և ետևից ձգված գիծն է երկար։ Գուցե դա յուրաքանչյուրիս անցած ճանապա՞րհն է խորհրդանշում։ Բայց այդ աստղագիծը շատ է լուսավոր և ուղիղ, իսկ մարդու ճանապարհին և լույսն է աղոտ, և կեռմաններն են անպակաս։ Ու, միևնույն է, տիեզերքով մեկ փռված աստղագորգն ավելի

թվայնացրել է 1915.info կայքը

ջատ ժպտում է քեզ, քան աստղեր է թողնում անփույթ ու անտարբեր։

Ամեն մեկն, ասում են, իր աստղն ունի երկնքում։ Դե, փորձիր պարզել, թե այդ միլիարդների մեջ ո՞րն է քո բաժին աստղը, ու ե՞րբ կհասնի նրա թռիչքի, թե՞ վայրէջքի ժամը...

Առավոտյան շուտ արթնացավ Հրանտը։ Ջանգահարեց ծնողների հերթապահ բժշկուհուն. պրոֆեսոր Սավոյանն էր ծանոթացրել։ Համակրելի կին էր Դոնարա Կարապովնան։ Տեսնես հիշո՞ւմ է Արշակին վերցնելու պահը։ Քանի տարի է անցել։

— Ես ուրախ եմ ձեզ համար, ընկեր Ստեփանյան. տղա ունեիք, հիմա էլ աղջիկ ծնվեց, շնորհավորում եմ։ Ձեր կնոջ վիճակը բավարար է, ցավերը մեղմացել են։ Իսկ երեխան լրիվ առողջ է։

Հրանտն ուզում էր մտնել մոր սենյակը, հայտնել նրան այս հաճելի խոսակցության մասին։ Որոշեց հետաձգել։ Նախաճաշ կպատրաստի, նոր կարթնացնի նրան։ Երեխան թող քնի, նրան առանձին կկերակրի։ Իսկ ի՞նչ ես պատրաստելու։ Հիմա կարտոֆիլ կբերի, կմաքրի ու կլցնի ջեռոցի մեջ։ Հետո այդ կարմրաթշիկ կարտոֆիլները կճմռի հալած յուղի մեջ, վրան սոխ կկտրի, բիբար կցանի, և առանձնապես մոր համար հաճելի նախաճաշը պատրաստ է։ Դե՛, իհարկե, թեյ էլ կդնի։ Գուցե մեկական էլ ձո՞ւ խաշի, տանը լավաշ ու կանաչի կա։ Ու խոհանոցից բարձր կանչեց մորը.

— Մայրի՛կ, շուտով պատրաստ կլինի նախաճաշը, խնդրում եմ շտապել։ Մտածում էր՝ սեղանի շուրջն էլ կհայտնի Դոնարա Կարապովնայի հետ ունեցած իր խոսակցության մասին։

Սեղանը համարյա պատրաստ էր։ Իսկ ո՞ւր են սեղանակիցները։ Ավելի բարձր կանչեց մորը։ Ով՝ ոչ մի արձագանք։ Այս ի՛նչ բան է, նրա քունը միշտ էլ թեթև է եղել, և ե՞րբ է նա այսքան ուշ վեր կացել։ Մի՞թե նորից հիվանդացավ։ Հանկարծ պատուհաքաղն ընկավ ձեռքից. շտապելուց հողաթափերից մեկն էլ դուրս փախավ ոտքից։ Իսկ սի՞րտն ինչու է այսպես ճմլվում, ախր ի՞նչ է պատահել, ինչո՞ւ այդպես խուճապի մատնվեցիր։ Հասավ մոր մահճակալին։ Ու թեթևացած շունչ քաշեց։ Հանգիստ քնած է մեջքի վրա. նույնիսկ իրեն թվաց, թե մի թեթև ժպիտ կա մոր դեմքին։ Միայն անհասկանալի է թե ինչո՞ւ են ձեռքերը կրծքի վրա խաչվածե Պատուհանից ներս սողոսկած արևի թույլ

թվայնացրել է 1915.info կայքը

շողերը նրա դեմքն ու անհնազանդ մազերը ասես թե ներկել են հալած մոմի սադափով։

Վախ մի ահավոր ղգացում սկսեց ճանկռտել Հրանտի սիրտը։ Ձեռքն անհամարձակ տարավ մոր ճակատին։ Ուժեղ այրոց ղգաց՝ սառնությունից։ Ու խենթի նման դուռաց սենյակով մեկ.

— Մայրի՜կ...

60.

Քանի անգամ կլինի ուրիշ մայրերի հուղարկավորությանը մասնակցած, ու միշտ նրան թվացել է, թե այդ ուղտն իրենց դռանը չի չոքելու, կամ, վատագույն դեպքում, շա՜տ հեռու է այդ տխուր պահը։ Մի անգամ միայն հիշում է, զուգահեռ գծեր երևացին Ռոզա Պավլովնայի մոր թաղման ժամանակ։ Ու արագ էլ վանեց այդ միտքն իրենից. դեռ այնքան հեռու է, արժե՞ մտածել այդ մասին... Հիմա մոտեցել է այդ հեռուն, ջա՜տ է մոտեցել։ Ով՝ ինչո՞ւ այսպես արագ ու անսպասելի։ Այո՜, այս աշխարհում ոչինչ հավիտենական չկա, ուրեմն՝ ծնողը նույնպես։ Միայն կյանքն է հավերժական, մարդկային կյանքը, բայց ոչ՝ մարդու։ Իսկապես որ «մենք ամենքս հյուր ենք կյանքում...»։ Ով ինչպե՞ս է, որ այդ ամբողջ երեկոյի ընթացքում մայրը խոսում էր այս աշխարհից գնալու մասին, կարծես թե հրաժեշտ էր տալիս հարազատներին։ Նույնիսկ մի թեթև ասաց.— Ախոս, որ Սիրուշիս ու Նվարդիս չտեսա։ Մի՞թե կանխազգում էր։ Ով ինչպե՞ս կարողացել էր ձեռքերը խաչել կրծքին, այս ի՞նչ հանելուկ է։ Այնպես էր խուճապի մատնվել, նույնիսկ լաց լինել չկարողացավ։ Հարևաններին կանչեց, ախր մենակ շա՜տ էր դժվար։ Զանգահարեց քրոջը, ասաց, որ մայրիկը ծանր հիվանդ է, շտապ արի։ Այդ ի՞նչ ահավոր գիշեր էր, ի՞նչ ողբ ու լաց, մանավանդ Սիրուշի գալուց հետո։ Իսկ իր սիրան ասես քարացել է, արցունքները՝ ցամաքել. բութ հայացքով նայում է մեկ մորը, մեկ հավաքվածներին. սիրտը պայթում է, բայց դատարկել չի կարող։ Միայն գիշերը, երբ տանը հարազատներն էին մնացել, հանկարծ բացվեց լացի հունը։ Ընկել է մոր կրծքին, համբուրում է նրա պաղ այտերն ու ձեռքերը, համբուրում ու լաց է լինում, ո՜չ, հեծկլտում է այնպես ծանր ու հոգեմաշ, ասես հիմա սիրտը դուրս է պրծնելու կրծքավանդակից ու մորթվելու է ոտքերի տակ...

Հիմա լուսիկ մայրիկի թաղումն է։

թվայնացրել է 1915.info կայքը

Այդ գիշեր թեթև ձյուն է եկել ու բարակ շերտով նստել տանիքներին, մերկացող ծառերի ուսերին։ Քաղաքի վրա ասես օսլայած սավան են փռել, որը սակայն առանձին տեղերում փոնթեր է տվել, և համատարած այդ ճերմակությունը անդամահատվածի տեսք է ստացել։ Ու պատված այդ սավանի միջով ձգվում է Հրանտենց բակին հարող փողոցը։ Ձյուն այլևս չի տեղում, ու նստածն էլ ամոթխած կապում է իր քոչը։ Ամռան շնչից կուչ եկած և ուժասպառ արևը պահմտոցի է խաղում քաղաքի վրա ծանրացած ամպ-մառախուղի գրկում։

Դագաղն իջեցրել են բակ, դրել մի գորգածածկ սեղանի վրա։ Հանգուցյալն այստեղից է սկսում իր վերջին ճանապարհը. էլ ետդարձ չկա՞...

Հրանտը հատուկ խնդրել է քրոջը՝ զուսպ պահել իրեն, լաց լինել առանց խոսքի։ Ու, միևնույն է, Սիրուշի խեղդված մղկտոցը հաճախ է վերածվում ցավոտ հառաչանքի, որի ճեղքերից մեկ-մեկ պոռթկում է.

— Ես քո ցավը տանեմ, մամա՛, էս ի՞նչ արեցիր...

Իսկ Սիրուհի մորաքրոջը կարո՞ղ ես լռեցնել. ամենաբարձրը հնչում է նրա ողբը, որն ավելի շատ խոսքի երանգ ունի. ու հարյա հանգուցյալի անցած ամբողջ ճանապարհի համառոտագրությունն է։ Ով նրա ծնողներին է հիշում, և ամուսնուն, որոնց մոտ գնալու բախտին է հիմա նա արժանացել։ Մորմոքվում էր մորմոքվում, հետո ավելի բարձր ձայնով կանչում.

— Լուսիկ, անաստվա՛ծ, էս ինչ արեցիր...— Հետո դարձավ ու մղկտաց քրոջ հարսի ու նորածին թոռան անունից։

— Բա քո նվարդին մնաս բարով չասած ո՞ւր ես գնում, ա՛յ իմ թառլան քույրիկ, բա քո նոր ծնված թոռնիկին չտեսած ո՞նց ես գնում, ա՛յ անխիղճ։— Հետո ձայնն իջեցրեց ու խոսում էր հանգիստ,— շնորհակալ եմ, երեխի անունը Լուսիկ են դրել, ուրեմն էս տանը Լուսիկը կա, փառքդ շատ լինի, աստվա՛ծ...

Հրանտի կողքին կանգնել ու իր լուռ ներկայությամբ ասես նրան մխիթարում է Գարեգին Սավոյանը։ Ու մեկ-մեկ խոսում է կամաց, միայն Հրանտին լսելի ձայնով.

— Ինչպե՛ս ես չհասցրի շնորհավորել Լուսիկին, վերջին անգամ նրան կենդանի տեսնելու, նրա պատմաստած թեյը խմելու բախտը չունեցա. այսպիսին է կյանքը, քաղցր-դառնությունների՛ն, առեղծվածային, անսպասելի. մենք էլ պարտավոր ենք հաշտվել այս անխուսափելի իրողության հետ։ Դու, ապրես,

թվայնացրել է 1915.info կայքը

Հրանտ, քեզ տղամարդու նման ես պահում։ Հայրդ էլ այդպես էր, ասում էր՝ Թաթան տղամարդու չեմ սիրում... Ծննդատանն զգուշացրել եմ բոլորին, Նվարդն առայժմ չի իմանա այս տխուր դեպքի մասին, մինչև տեսնենք։ Իր վիճակն էլ, ոչինչ, դեռ մի փոքր ջերմություն ունի, բայց երեխային կերակրել կարողանում է, և կաթ ունի, այս է կարևորը... Այս ժողովրդի մեծ մասը երևի ձեր գործարանից են։ Մարդաշատ թաղում է. պատվավոր կին էր Լուսիկը, նա արժանի է այս հարգանքին...

Սրբուհի մորաքույրը շարունակում էր իր ողբ-ճառը և հա՛մարյա իրեն չէր կրկնում, այս էր զարմանալին։

Արանքում շատ աղոտ լսվում էր Սիրուշի խզված ձայնը.

— Ցավդ տանեմ, մամա՛...

Բա մայրը կթողնի՞, որ զավակներն իր ցավը տանեն. ինքն է հիմա գնում՝ բոլորի ցավն իր մեծ սրտի մեջ առած։ Գնում է իր հավիտենական հանգստավայրը։ Ու դագաղի մեջ էլ սիրուն է մայրիկը, միայն ինչո՞ւ է դեմքն այդպես մութ ստվեր հագել, ճերմակ մազերն էլ մետաքսից գործած գլխաշոր ասես, հազիվ նկատելի շարժվում են թեթև քամուց։

Հրանտի միտքը նորից փախեփախ էր անում. տնից ծննդատուն ու նորից հետ։ Երկու օր է հարևանուհին է գնում Նվարդի մոտ. նաև երկտող է ուղարկում.— լավ ենք, սպասում ենք ձեզ։ Իսկ Նվարդը իր զարմանքը թաքցնել չի կարող.— Հրանտ, ինչո՞ւ են նամակներդ այդպես չորացել, գուցե մայրիկը դեռ հիվա՞նդ է։ Անտրամադիր ես երևում, և ես պատճառը չգիտեմ։ Գիշերն էլ վատ երազ եմ տեսել... Բարևիր մայրիկին, իմ կողմից համբուրիր նրան էլ, Արշակին էլ։ Քիչ է մնացել, շուտով տուն կգամ և ամեն ինչ լավ կլինի։ Այս երկու օրը պրոֆեսոր Սավոյանն էլ չի երևում, ասացին մրսել է մի թեթև։ Մնամ ձեզ կարոտով սպասող... Հույս ունեմ, որ այսօր գոնե մի քառատող կգրես ինձ համար։ Հիշո՞ւմ ես.

Կարոտներս լամ ու թեթևանամ՝
Ինչպես ամպերը անձրևից հետո։
Համբույրի կարոտ վարդերս բանամ՝
Ինչպես մայիսը անձրևից հետո։
Բացված վարդերով հետու գիրկդ գամ՝
Ինչպես արևը անձրևից հետո։

Նվարդը կգա կարոտած, և մայրիկը տանը չի լինի։ Ու չի լինելու այլևս Երբե՛ք։

թվայնացրել է 1915.info կայքը

Լացի նոպան նորից բռնեց Հրանտի կոկորդը, ի՛նչ անի, հո փողոցում չի՞ ողբալու ծեծված երեխայի նման, ի՞նչ կասեն գործարանի ընկերները, մանավանդ՝ կանայք, Ամալյան էլ այստեղ է... իսկ ինչ է, մոր համար լաց լինելն ամո՞թ է։ Դե, հանգուցյալ հայրը կասեր՝ տղամարդուն չի սազում։ Ճիմ գցեց լացի ակունքին, փակեց հունը։ Բայց ի՞նչ դժվարությամբ։

Թափորը դուրս եկավ փողոց։ Ու մարդկային գետն սկսեց հոսել։ Ովքե՞ր են տանում դագաղը. ինչ էլ բա՜րձր են բռնել։ Գործարանի տղաներն են՝ Սմբատի գլխավորությամբ։ Նա՛ է այստեղ կարգադրողը։ Ինչո՞ւ միայն այստեղ, գերեզմաններում և տեղի հարցն է լուծել, և նվագախմբի, և մեքենաների։ Հոգեկան ահավոր տառապանքից բացի ինչքան էլ դժվարություններ կան, և առանց օգնության մարդ կճզմվի այդ ծանրության տակ։ Իսկ ուտելիքի, սեղան պատրաստելու հա՞րցը. ահա մի ավելորդ, անիմաստ, բայց և անխուսափելի արարողություն։ Լավ էր, կարողացավ համոզել քրոջն ու փեսային, որ հրաժարվեն ճաշ պատրաստելուց։ Որոշվեց սեղանին դնել միայն թխվածք ու սուրճ։

Լավ էր, այս դեպքում էլ իր թիկունքում կանգնեց Գարեգին վահանիչը։ Սեղանի հոգսն ամբողջովին ծանրացավ Համբարձումի ուսերին։ Ու զարմանալի էր նաև, որ այս հարցերում չհանդիպեցին Սրբուհի մորաքրոջ լուրջ դիմադրությանը։ Ճիշտ է, մի պահ ըմբոստացավ նա.

— Ո՞նց թե, առանց ճաշի սեղան կլինի՞։— Բայց հենց որ դեմ առավ Հրանտի վճռական առարկությանը, նահանջեց անվստահ.

— Դե՛, որ դու էդպես ես ուզում... Միայն կոնյակն էն լավից լինի, հա՞, հանքային ջուրն էլ չմոռանաք։

Թափորն անցնում էր ծննդատան մոտով։ Ճիշտ է, նվագը լռել էր, բայց Հրանտի անհանգստությունը նոր ուժով բորբոքվեց. իսկ եթե Նվարդը նայի ու տեսնի՞ պատուհանից։ Հետո հիշեց, որ նրա պալատի պատուհանները բացվում են բակի վրա, ուրեմն մայրիկի թաղումը Նվարդից թաքուն՝ տխուր իրողություն է։ Ու հետաքրքիր է նաև, տարիներ հետո, երբ մեծացած լինի այս փոքրիկ հուսիկը, երևի զարմանքով կհիմանա, որ իր տատի թաղման օրը ինքն ընդամենը երեք օրական է եղել։

Իսկ գերեզմանատանը ո՞վ պիտի խոսք ասի։ Սա էլ հնուց եկող սովորություն է, որը միշտ թարմ է հնչում։ Հարգանքի տուրք, հրաժեշտի խոսք հանգուցյալին. լավ է, պետք է։ Հիշում

թվայնացրել է 1915.info կայքը

է, մասնակցում էր իր ծանոթներից մեկի թաղման արարողությանը։ Խոսք ասողների մեջ նաև հանգուցյալի ընկերներից մեկն էր, սրամիտ ու կատակասեր Կարոն։ Սրա ըրույցները լսելիս հնարավոր չէ ծիծաղը զսպել։ Եվ ահա այդ օյինբաղ Կարոն լուրջ-լուրջ խոսում է ընկերոջ դագաղի մոտ կանգնած, իր ցավն ու ափսոսանքն է արտահայտում։ Հիշողության մեջ մնացել է հատկապես այս խոսքը,— առաջին անգամն է, որ ես խոսում եմ իմ այս լավ ընկերոջ ներկայությամբ, և նա անտարբեր է, չի արձագանքում։ Անզոր է արդեն. ա՛յս է սարսափելին...

Այսօր մայրը գնում է այս աշխարհից, և իր որբությունը դառնում է տխուր փաստ. ի՞նչ կարող է լինել ավելի ծանր ու անողոք։ Եվ ինչո՞ւ այսպես մեծ, մի տեսակ ծերացած է զգում իրեն. մի՞թե դա էլ կապված է որբ մնալու հեռանկարի հետ։ Կամ էլ ի՞նչ հեռանկար, երբ մարդկային այս հոսանք-գետի վրա մի դագաղ-նավակ է լողում և այդ դագաղի մեջ քո մայրն է պառկած։ Ու դու նրան տեսնում ես վերջին անգամ։ Քիչ հետո մութ ու խոնավ փոսի կողքին կանգնած դու կլսես ջերմ խոսքեր, որոնք, ավա՛ղ, մորդ սառույց հագած մարմինը տաքացնել չեն կարող։ Դե, հասկանալի է, որ այդ խոսքերն էլ, թեկուզև հանգուցյալի պատվին, բայց ապրողների համար են։ Այս է տխուր ճշմարտությունը։ Իսկ, որքան լսել է ականջի ծայրով, խոսք պիտի ասեն գործարանի դիրեկտորը և Գարեգին վահանվիչը։ Եվ դա կլինի պրոֆեսոր Սավոյանի երկրորդ ելույթը այդ նույն գերեզմանի մոտ։ Տարիներ առաջ ընկերոջն է ճանապարհել, հիմա էլ՝ նրա կնոջը։ Մինչև կհասնի իր հերթը։

Քանի անգամ է մայրն ասել՝ հայրդ լավ մարդ էր, ես նրանից շատ եմ շնորհակալ։ Իսկ ե՞րբ էր, որ այդ խոսքին ավելացրեց նաև՝ ինչքան ժամանակ է, մենակ է էնտեղ. ես շատ ուշացա, սա էլ մի բան չի... Հոր գերեզմանն այնքան համեստ են կահավորել։ Նույն քարի վրա նաև մոր անունն է գրելու, ծննդյան ու մահվան տարեթվերը։ Թող այդ քարի մեջ էլ հավերժանա նրանց անմոռաց հիշատակը։ Միայն երկու ծառ պետք է տնկել, կարմիր ու սպիտակ յասամանի. մայրը շատ էր սիրում։

Մահվան թափորը ծառաշատ այգու մոտով թեքվեց ու մտավ մի սակավամարդ փողոց։ Աշխենն ու Գուրգենը մնացին հաստատուն ծառի տակ կանգնած։ Նրանք վաղուց են այդտեղ, հետևում են ամեն մի շարժման, միայն՝ հեռվից։

թվայնացրել է 1915.info կայքը

— Գուրգենս, դու հիշո՞ւմ ես այն ճերմակ մազերով տատիկին, որի մոտ մենք գնացինք մի անգամ։

— Սիրուն տատիկ էր, մա՛մ, ինձ էլ շատ համբուրեց. բայց ոնց չեմ հիշում։

— Ահա այդ տատիկն է մահացել, այսօր նրա թաղումն էր։

— Մա՛մ, իսկ ինչո՞ւ չենք մոտենում։ Ես ուզում եմ նրան նորից տեսնել։

— Հետևից տես, բալիկս, մոտենալ պետք չէ։ Ու երբեք չմոռանաս այդ հուսիկ տատիկին, նա շատ լավ կին էր։ Արշակ անունով թոռնիկ ունի, որի հետ դու մի օր խաղացել ես. էլի թոռնիկներ ունի, մեկն էլ բոլորովին վերջերս է ծնվել։

— Մա՛մ, իսկ ինչի՞ց է մահացել այդ տատիկը։

— Քնել է ու վեր չի կացել.— հրաշալի մահ, մանավանդ տարիքն առած մարդու համար։

— Մա՛մ, դու այնպես ես կանգնել ծառի ետևը, ասես թե թաքնվում ես, ախր ումի՞ց։ Ու չես ուզում, որ մոտենանք։

— Հետո, տղա ջան, որ մեծանաս կարգին, նոր ես կպատասխանեմ քո այդ հարցին. իսկ հիմա գնանք տուն, հոգնեցինք։ Ով տես, նաև ձյուն է գալիս, չմրսես, հա՛։

Ձյան փաթիլներն իջնում են անշտապ ու հուշիկ քայլերով, ճերմակ են ներկում բակ ու փողոց, տեսքը կորցրած սավանի փոնթերն են հարթում։

Մայր ու տղա դանդաղ քայլում են դեպի մոտիկ կանգառը։ Թափորն անցել է արդեն, չի երևում, բայց միևնույն է, Աշխենին թվում է, թե ինքն էլ հուղարկավորների մեջ է, Հրանտի կողքին և մի հեռու աշխարհ է ճանապարհում Լուսիկ մայրիկին...

51.

Երկաթուղային կայարանի կամարների տակ ծանոթ եռուզեռն է թևածում։ Այնքան մարդաշատ է կառամատույցը. ահել ու ջահել, կին ու երեխա, և՝ բոլորը շարժման մեջ։ Տեսնես եկողնե՞րն են շատ թե՝ մեկնողները։ Կամ՝ ի՞նչ պատկեր կունենա ճանապարհողների և դիմավորողների թվաբանությունը, ո՞վ ում կարող է պարտք մնալ...

Հրանտի հյուրն արդեն վագոն է բարձրացել։ Մոսկվայից է եկել, երկու օրով, իրենց մինիստրության բաժնի վարիչներից է. հին մտերիմներ են։ Ով առանձնապես նրանով զբաղվել չկա-

թվայնացրել է 1915.info կայքը

րողացավ. ոչ ժամանակ ուներ, ոչ, մանավանդ, տրամադրություն։

Մեկ անգամ էլ ձեռքի թափահարումով բարի ճանապարհ մաղթեց ընկերոջը ու գլխիկոր քայլեց դեպի ելքի դուռը։ Մտամոլոր է, կենտրոնանալ չի կարողանում։

Այնքան վաղուց չի եղել այս կայարանում։ Դե՛, հիմա գնացքով ոչ գնում է, ոչ էլ գալիս։ Ինքնաթիռն իր ձեռքն է վերցրել հեռու տեղ տանել-բերելու մենաշնորհը։ Ավ, այնուամենայնիվ, գնացքը մնում է տրանսպորտի ամենալավ տեսակը՝ և հարմարավետության, և ապահովության իմաստով։ Հիշում է, իր ընկերներից մեկը միայն գնացքով է ճանապարհորդում և երբ նրան մեղադրում ես վախկոտության մեջ, կատակով պաշտպանվում է.— Երեխաներս դեռ փոքր են, որ մեծանան, նոր կթեքվեմ ինքնաթիռի կողմը։ Մի ուրիշն էլ ինքնաթիռի սիրահար է, բայց ամբողջ ընտանիքով նույն ինքնաթիռը չի նստի. անպայման կիսվում են, ինքն ու աղջիկն այսօր, կինն ու տղան՝ հաջորդ օրը։ Սրա նշանաբանն է՝ «զգուշությին լավ պահի»... Իսկապես գնացքով լավ է հեռու տեղ գնալ, երբ ընկերներով եք։ Ամենակարևորը, երբ տրամադրությունդ դուրս չի եկել գծից...

Նվարդը դեռ հիվանդանոցում է և ոչինչ չգիտի մայրիկի մասին, շարունակում է բարևներ ու համբույրներ ուղարկել։ Իսկ յոթն արդեն կատարել են։ Ուրեմն առաջիկա օրերին ինքն ակնատես կլինի մի ծանր տեսարանի ևս։ Ճիշտ է, անընդհատ «զղոցում է» կնոջ ականջը, գրում է մայրիկի աստիճանաբար ծանրացող հիվանդության մասին, բայց և, ինքն իր գրածից վախենալով, անմիջապես ավելացնում է,— մայրիկը շատ-շատ բարևներ է ուղարկում քեզ էլ, փոքրիկ Լուսիկին էլ... Թող մի քանի օր էլ անցնի, տուն բերելուց հետո կասի, ու կփորձի նաև մխիթարել. իսկ ինքն ավելի կարիք չունի՞ մխիթարվելու... լավ է, որ թեթևացել է Նվարդի մոր վիճակը, արդեն ոտքի է կանգնել, իրեն յոլա է տանում։ Բայց նրա առողջությունն էլ մի կարգին վիճակում չէ. ինչ երկարություն կունենա նրա օրերի շղթան, դժվար է կռահել։ Երկու ընտանիքում՝ մի մայր միայն։ Իսկ Նվա՞րդը, նա մայր չէ՞։ Դե՛, նրա բանն ուրի՞շ։ Մի անփոխարինելի հարստություն է, երբ մոր ու հոր գլխին կանգնած են սրանց ծնողները։ Գոնե մայրը մնար։ Վերջնականապես որբացավ։ Հիմա դու պարտավոր ես այնպես անել, որ այդ տխուր ստատը ժամանակից շուտ չլրքի քո երեխաների դրանը։ Այո՛, երեխաների, վերջապես հոգնակիի բախտին արժանացան։ Եվ

թվայնացրել է 1915.info կայքը

ի՞նչ լավ է, որ Նվարդը Լուսիկին կարողանում է կրծքով կերակրել, իր սուրբ ու կարոտած կրծքով... Հիշում է, պապի ամենաչարչ անեծքն էր, երբ ջղայնանում էր մեկի վրա.— Ա՛յ, հարամ լինի էն կաթը, որ միրդ տվել է քեզ։ Իհարկե, նաև օրհնել դիտեր, և՝ ավելի մեծ բավականությամբ.— Մորդ կաթի պես քեզ հալալ լինի։ Իսկ հիմա երեխաների մեծ մասին անծանոթ է մոր կաթի համը, նրանցը «Մալյուտկան» է, «Մալիշը» կամ «Դետոլակտը»։ Ուրեմն ի՞նչ, վերևի օրհնանքը կամ անեծքը սրանց չի՞ բռնելու... Ել հիմնական պատճառն, ասում են, մայրերի մոտ կաթի պակասն է, կամ՝ իսպառ բացակայությունը։ Ինչո՞ւ, ի՞նչ եղավ նրանց, ի՞նչ չար ուժերի սադրանքով ցամաքեցին կաթի աղբյուրները. երա՞շտ է, անբերրի տարի՞... Անհարմար չինի ասելը, կովերի մոտ բարձրանում է կաթնատվությունը, տարին տարվա վրա, իսկ, ահա, սերունդ տվող ու աճեցնող մայրերի մոտ... Տխուր թվաբանություն է, մանավանդ հետևանքների իմաստով։ Իսկ Նվարդը շատ ապրի նաև այս հարցում։ Մի նամակում գրել էր՝ չես կարող պատկերացնել, թե ի՞նչ երանություն եմ ապրում ես, երբ երեխային կերակրում եմ... ինչպե՞ս է ասել Մաքսիմ Գորկին.— Այն ամենը, ինչ գեղեցիկ է մարդու մեջ, դա մոր կաթից է և արևի ճառագայթներից։ Հրաշալի է ասված։ Ով գնալով խախտվում է մոր կաթի և արևի ճառագայթների համամասնությունը. մի ոտքի վրա մնալու վտանգն է ծիկրակում, հետո՞... Ամենազոր գիտությունը նաև արհեստական սիրտ է պատրաստում։ Ուրեմն՝ ոչ մոր կաթ, ոչ սեփական սիրտ, ինչպիսի՞ն կլինի այդպիսի մարդը։

Հանկարծ, որտեղից-որտեղ, հիշեց վագոնի պատուհանում մննակ ու տխուր կանգնած այն կնոջը։ Տարիներ են անցել, բայց, զարմանք բան, մոռանալ չի կարողանում։ Հիմա էլ ասես տեսնում է նրա ճակատից վեր ձգվող արծաթե առվակը, որ խոխոջում էր ասես մութ անտառի փեշերին։ Տեսնես ո՞վ էր, ո՞ւր գնաց, ի՞նչ եղավ։ Ով ինչո՞ւ այդ անծանոթ կինը նրա մտքի տեսադաշտում Աշխենի պատկերը գծագրեց։ Ինչքան ժամանակ է չեն հանդիպել. ո՛չ, իրավացի չես, մի քանի օր առաջ լաբորատորիայի ընկերների հետ քեզ մոտ մտավ, ցավակցեց։ Նույնիսկ կարծեմ դու նրա աչքերում արցունքներ նկատեցիր։ Շատ կամաց, հազիվ քեզ լսելի ձայնով ասաց նաև, որ ինքն էլ է մասնակցել մայրիկի հուղարկավորությանը, միայն՝ հեռվից...։

Այդ ինչ է, դիմացից Աշխե՞նն է գալիս, և մենակ չէ, մի ան-

թվայնացրել է 1915.info կայքը

Ծանոթ տղա է նրան ուղեկցում։ Ո՞վ է։ Տո քե՜զ ինչ։ Դե՛, այնուամենայնիվ, ես հենց այնպես...

Մոտեցան իրար։ Եվ առաջինն Աշխենը նախահարձակ եղավ.

— Բարև ձեզ, Հրանտ Արշակովիչ։

— Բարև, Աշխեն Գուրգենովնա։

— Ծանոթացեք, խնդրում եմ, իմ ընկերներից է, Երվանդ Սահակյան. Հրանտ Ստեփանյանն էլ մեր գործարանի գլխավոր ինժեներն է։

Տղամարդիկ սեղմեցին իրար ձեռք։

— Ես գիտեմ Հրանտ Արշակովիչին, մի քանի անգամ հանդիպել եմ ժողովներում, նրա մի ելույթն եմ լսել։

— Ձեր դեմքն էլ ինձ ծանոթ է թվում, միայն չգիտեմ, թե որտեղ եք աշխատում։

— Ինժեներ եմ, ձեր հարևան գործարանից։

— Ուրախ եմ ծանոթանալու համար։

Աշխենին թվաց, թե Հրանտի այդ խոսքի մեջ պակասում էր անկեղծության չափը։ Եվ, իհարկե, բոլորովին ուրիշ բան ասաց.

— Մարդ էինք ճանապարհում Ռոստով. Երվանդի ուսանողական տարիների ընկերներից էր։

Անհարմար լիներ, կհարցներ,— ասենք թե այս Երվանդի ընկերն է, իսկ քո՞ ինչն է։ Բայց իր խոսքն էլ ուրիշ ճանապարհով տարավ։

— Ես էլ մեկին Մոսկվա ճանապարհեցի։

Մի պահ լռեցին, երևի սպառվեց ասելիքը։

Աշխենը հարկ համարեց ձգել այդ ծանր լռության ականջը.

— Հրանտ Արշակովիչ, նորից ընդունեցեք իմ խորին ցավակցությունը. լուսիկ մայրիկը շատ հարգարժան կին էր, ափսո՜ս։

— Շնորհակալ եմ, Աշխեն։

— Ընդունեցեք նաև իմ ցավակցությունը, Հրանտ Արշակովիչ։

— Զգացված եմ, Երվանդ...

— Սահակի.— օգնության հասավ Աշխենը.— իմ հոր մարտական ընկերն է քեռի Սահակը, միասին են կռվել, նրա մոտ է սպանվել...

Ափսոս, որ չի կարող հարցնել՝ հորդ ընկերոջ տղան ի՞նչ կորկոտ ունի քեզ մոտ ծեծելու...

Իսկ Աշխենի գլխում ուրիշ մտքեր են բռնցքամարտի բռնվել.— հնար լիներ, ասեր Երվանդին՝ ուզում էիր այդ երջանիկ

թվայնացրել է 1915.info կայքը

սիրո տիրոջ երեսին նետել՝ բա դու խիղճ չունե՞ս. խնդրեմ, հիմա կարող ես ընթացք տալ քո սպառնալիքին:..

Միայն Երվանդն է այս խմբի մեջ անտարբեր ու զուսպ, թե՞ այդպես թվում է:

— Դե՛, ինձ կներեք, շտապում եմ, եթե մեքենայի կարիք ունեք, խնդրեմ, ես մենակ եմ:

— Շնորհակալություն, Հրանտ Արշակովիչ, մենք կայարանում դեռ գործ ունենք, կուշանանք:

Հրանտն ուզում է, բայց նորից հարցնել չի կարող՝ իսկ մեր գուրգենին ո՞ւմ մոտ ես թողել, այդ ինչպե՞ս ես ուշանում:

Երվանդի գլխում, անողոք մեխի նման, մի տարօրինակ միտք է ցցվել,— այս Հրանտ Ստեփանյանի աչքերն ինչո՞ւ են իրեն այդքան ծանոթ, քիթն էլ կարծես թե հիշեցնում է մեկին, ո՞ւմն է նրան նմանեցնում: Իսկ Դարվինն ասել է, թե բնության մեջ երկու տերև չկա՝ բացարձակ նման: Դե, հայացք է, միտք է, թափառում են անարգել. կարող են. նաև սխալ դուռ ծեծել...

— Դե, մնացեք խաղաղությամբ:

— Ցտեսություն, Հրանտ Արշակովիչ:

Երվանդը չհասցրեց բերանը բացել, թե՞ չուզեց: Հրանտ Ստեփանյանն արդեն հեռանում էր արագ քայլերով, ասես փախչում էր մեկից, ինչո՞ւ, և՝ ումի՞ց...

Աշխենն ու Երվանդը երկար ժամանակ կառամատույցում ետ ու առաջ էին քայլում. ոչ մեկը խոսելու տրամադրություն չուներ: Բայց ինչքա՞ն կարելի է լռել:

— Ափսոս, որ մի հարմար բարձրախոս չկա այստեղ, գոնե ուրիշի խոսքը կլսեինք:— Աշխենի ձայնը այս անգամ էլ հնչեց տխուր հեգնանքով: Իսկ Երվանդն անցավ դրա կողքով:

— Այդ Հրանտ Ստեփանյանի մասին լավ բաներ եմ լսել, ասում են՝ կարգին մարդ է:

— Եվ, մանավանդ, լավ աշխատող:

— Իսկ դու նրա մո՞րը որտեղից գիտես:

Միամիտ հարց է, բայց ինչո՞ւ Աշխենի շնչառությունը նոր թափ ստացավ:

— Ծանոթ եմ, հանդիպել եմ մի երկու անգամ: Իսկական տատիկ էր, այսինքն՝ լավ մայր...— Հիմա էլ ականջները կարմրեցին, ինչո՞ւ:

— Բոլոր մայրերն էլ լավն են, ա՛յ, միշտ չէ, որ այդ մայրերից ծնված աղջիկները...

թվայնացրել է 1915.info կայքը

— Դու նորից քարկոծում ես իմ բոստանը, և ես չեմ նեղանում։

— Ավելի վատ ինձ համար, ուրեմն իմ խոսքը շարքից դուրս եկած փողի նման, բոլորովին արժեքազրկվել է։

— Ա՛յ, հիմա արդեն կնեղանամ, որովհետև հոգուդ մեղք ես անում։ Դու շատ լավ էլ գիտես, համենայնդեպս, պիտի համանաս, որ ես հարգում եմ քո խոսքը, և ոչ միայն...

— Այո, խոսքը՝ խոսքով միայն։

— Երևանդ, լավ չէ, աստված վկա. դու շարունակում ես հին դարմանը քամուն տալ, իսկ ես կարծում էի, թե ներողացածության գգացումը քեզ մոտ մղվել է նորին պլանի վրա։

— Գուցե դիպուկ կլիներ վիրավորվածության գգացում կոչե՞լը։

— Բոլոր դեպքերում հիշաչար լինելը քեզ չի սազում։

— Դու իրավացի ես. ինձ սազում է ինքնասիրությունից զուրկ լինելը։

— Սխալվում ես չարաչար, ինքնասիրություն չունեցող մարդուն ես տանել չեմ կարող։

— Գիտեմ, դրա համար էլ ինձ հանդուրժում ես մի կերպ։

— Հիմա ավելի շատ ես սխալվում։

— Ուզում ես ասել՝ ինձ բոլորովին չե՞ս հանդուրժում։

— Դե՛, եթե ուզում ես, հենց այդպես էլ կա։— Աշխենը թափով ետ տվեց ճակատին ընկած մազափունջը ու առաջ անցավ Երվանդից. վախենում էր, որ նա կարող է իր աչքերում արցունքի կաթիլները նկատել։

Տևական ընդմիջումից հետո Երվանդը խոսեց բոլորովին փոխված ձայնով։

— Ջեմ թաքցնում, ես այնպես էի վիրավորվել քո տարօրինակ մերժումից, որ մի քանի օր շարունակ մտմտում էի մեր այս աննորմալ հարաբերություններին վերջակետ դնելու մասին, և, բարեբախտաբար, թե՛ դժբախտաբար, չկարողացա, չստացվեց։

— Եվ գիտե՞ս թե ինչու չկարողացար, որովհետև այդ հարցերի լուծման ամենազոր բանալին սրտի ձեռքին է, քո սիրտն էլ ավելի խելոք է գտնվել, հասկացել է, որ դա մերժում չէ։

Կանգ առան մի պահ, իրար երեսի նայեցին ու ժպտացին։

— Եթե իսկապես գոնե իմ սիրտը խելոքության դուռը ծեծել կարողանար...

— Համենայնդեպս ես միանգամայն դրական կարծիք ունեմ

թվայնացրել է 1915.info կայքը

քո սրտի մասին... Գիտե՞ս, Երվանդ, երեկոյան ես մի գիրք էի կարդում, ավելի ճիշտ՝ թերթում էի։ Մի ընկերոջ ջանքերով ինձ մոտ էլ առանձնահատուկ սեր է առաջացել լավ բանաստեղծության նկատմամբ։ Ահա այդ գրքում այսպիսի տողեր կային.

«Դու ինձ կինարիս, երբ ես չեմ լինի՝
Կանդնած ամեն օր քո ճամփի վրա,
Երբ մենակության լալկան ուռենին
Կթևերի մի օր քո ճամփի վրա»։

Երվանդն իր արտնեղությունը թաքցնել չկարողացավ.

— Ցավալի է, որ հենց այդ մռայլ ճշմարտությունն է մնացել քո հիշողության մեջ։

— Այո, մռայլ, բայց և՝ ճշմարտություն։ Կյանքն այնքան անողոք է և ապարդյուն է թաքնվելու ամեն մի փորձ։

Աշխենը մազերի անհնազանդ փունջը ետ տարավ ճակատից։

— Դուցե ես ավելի՞ հիմք ունեմ այդ խոսքը քեզ ասելու։

— Հնարավոր է։— Թևանցեց տղային,— և, ցավոք, այսպիսին է մարդու ճակատագիրը. ամբողջ կյանքում փնտրում ենք իրար։

Երվանդը կամաց լրացրեց նրան։

— Եվ միշտ չէ, որ գտնում ենք։

— Հայտնի էլ չէ, ավելի շատ՝ գտնո՞ւմ եք թե՞ կորցնում...

Հանկարծ մի խենթ որոտ ճայթեց, և երկնքում բազմած ամպերի բարավանը, որ ոչխարի հոտի էր նման, քամու բերանն ընկած քշվեց, գնաց-միացավ բաշերը տնկած ձիեր հիշեցնող հարևան ամպ-երամակին։ Հետո այդ գորշ զանգվածի ուսերին թիզ առ թիզ ծանրացավ գիշեր հագած մի սավան, և ամպբլուրների խառնուրդը սառցավ դաշտում անհանգիստ արածող գոմեշների նախրի կերպարանք։ Իսկ արևը շարունակում էր ժպտալ ամոթխած։ Որոտի ու կայծակի անզուսպ հարայհրոցից սասո քանդվեցին երկնքի փորատակի կարերը. սկսեց մանր անձրև ուղալ, արևով ողողված անձրևափոշի։ Արևի մեջ՝ անձրև, սակս տաք արցունքներ են թափվում լացակումած երկնքից։ Անձրևի մեջ՝ արև, որը ժպտածիծաղ գորգի պես փռվել-տարածվել է մարդկանց սրտերի վրա։ Ու գնալով անձրևի ոգևորությունը բարձրանում, արևինն՝ իջնում էր։

Իսկ Աշխենի ու Երվանդի հոգու ծալքերում արևո՞ն էր շատ, թե՞ անձրևը...

թվայնացրել է 1915.info կայքը

Գրիգոր Գրիգորի Բալասանյան

ՄԻԱՅՆ ԹԵ ԼՈՒՅՍԸ ՉՄԱՐԻ

ՎԵՊ

Григор Григорьевич Баласанян

ТОЛЬКО БЫ НЕ ПОГАС СВЕТ

Роман

(На армянском языке)

Издательство «Советакан грох»

Ереван, 1987

Խմբագիր՝ Ռ. Բ. Բաբաջանյան

Նկարիչ՝ Հ. Մխիթարյան

Գեղ. խմբագիր՝ Գ. Խ. Գյուլամիրյան

Տեխ. խմբագիր՝ Վ. Գ. Ավագյան

Վերատուգող սրբագրիչ՝ Ն. Ն. Միճասյան

ИБ 5622 ՎՖ 01207

Հանձնված է շարվածքի 26. 05. 1987 թ.: Ստորագրված է տպագրության 6. 08. 87: Ֆորմատ 84×108 1/32: Թուղթ տպագրական № 2: Տառատեսակ՝ «Գրական» սովորական»: Տպագրություն՝ բարձր: 13,86 պայմ. տպագր. մամ., 13,3 հրատ. մամ.: Տպաքանակ՝ 15000: Պատվեր՝ 1029: Գինը՝ 1 ռ.:

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91:

Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան-10, Ալավերդյան փող. № 65:

Типография № 1 Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР,

Ереван-10, ул. Алавердяна 65.